


ՀԱՅԱՍՏԱՆ

ԴՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԺՈՂՈՎՐԴԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա





Я. А. Манандян

**КРИТИЧЕСКИЙ ОБЗОР
ИСТОРИИ
АРМЯНСКОГО НАРОДА
ТОМ I**


**С древнейших времен до воцарения Аршакидов
в Армении (66 г. н. э.)**

ЕРЕВАН

АРМГИЗ

МСМXLIV

5-24.



ՀԱԿՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆ


ՅՏՈՒԳՎՍԻ Է 1951 Ն.

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՀԱՏՈՐ

Ա

ՍԿԶԲԻԾ ԻՐԱԶԵՎ ԱՐԸԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (66 Ք.Մ.Հ.)



ԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Ռ.Զ.Խ.Դ.

6626
A $\frac{\pi}{33776}$

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա աշխատության նպատակն է լուսաբանել սկզբնաղբյուրների մանրաքնին ուսումնասիրության հիման վրա հայ ժողովրդի պատմությունը՝ վեցերորդ դարից սկսած մեր թվականությունից առաջ մինչև տասնվեցերորդ դարը մեր թվականությունից հետո (այսինքն՝ մինչև Սեֆյան դինաստիայի հաստատումը Իրանում)։ Աշխատությանս հիմքը կազմում են իմ Նրեանի Պետական-Համալսարանում 1920—1930 թ. թ. կարդացած դասախոսությունները, որոնք հիմնովին վերամշակված են ու խիստ ընդարձակված համաձայն պատմագիտական հետազա իմ երկասիրությունների նոր տվյալների ու եզրակացությունների։

«Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» իմ աշխատությունը բաղկացած է լինելու երեք հատորից։ Առաջին հատորի նյութն է հայ ժողովրդի հնագույն պատմությունը՝ սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66 թ. մեր թվ. հ.)։ Երկրորդ հատորը պարունակելու է իր մեջ չին Հայաստանի պատմությունը Արշակունիների թագավորության հիմնումից մինչև Բագրատունիների թագավորության անկումը (XI դ. մեր թվ. հ.)։ Իսկ երրորդ հատորը ամփոփում է իր մեջ թուրք-թաթարական ժամանակների պատմությունը՝ Սելջուկյան շրջանից մինչև Սեֆյանների հաստատումը Իրանում (XVI դ. մեր թվ. հ.)։

Ինչպես տեսնում է ընթերցողը, իմ երեքհատորյակի մեջ Հայոց պատմությունը սկսվում է ոչ թե բարե դարից, ինչպես այդ ընդունված է դասագրքերից շատերում, այլ այն ժամանակաշրջանից, երբ արմենները, հաստատվելով Հայկական լեռնաշխարհում (VII դ. կամ VI դ. մեր թվ. առաջ) և միաձուլվելով հետգհետե տեղական հին ժողովուրդների հետ՝ սկիզբ դրին հայ ժողովրդի կազմավորման։ Շատ պարզ է, իհարկե, որ Հայկական բարձրավանդակի հեռավոր անցյալի լուսաբա-

նության համար կարևոր ու անհրաժեշտ խնդիր է նաև նրա նյութական կուլտուրայի հուշարձանների ուսումնասիրութիւնը ոչ միայն պատմական, այլև նախապատմական շրջանի։ Բայց այդ հերթական մի խնդիր է, որ պետք է պարզաբանեն հնագետները։

Ներկա իմ աշխատության մեջ տեղ չէ տրված նաև ուրարտացիների պատմությանը, թեև հայ ժողովրդի պատմական անցյալի ու կուլտուրայի լուսաբանության համար նրանց պատմության գիտական ուսումնասիրութիւնն ունի անհազին նշանակութիւն։ Ինչպես ցույց են տալիս արևելագիտական նորագույն հետազոտութիւնները, արմեններին նախորդող ու նրանց հետ ձուլված խուրրիական, խառտական և խալդական ժողովուրդները, որոնք ունեցել են բարձր կուլտուրա ու նաև գիր և գրականութիւն՝ մեծ ազդեցութիւն են ունեցել հայ ժողովրդի և լեզվի և կուլտուրայի վրա։ Սակայն հին Արևելքի ժողովուրդների պատմական անցյալի նկարագրութիւնը, որ ներածական նախաբանն է կազմելու հայ ժողովրդի պատմության՝ պետք է տան, հիմնվելով բեեռագիր և պատկերագիր արձանագրութիւնների նորագույն հետազոտութիւնների վրա՝ արևելագետ և խալդագետ պատմաբան մասնագետները։

«Քննական տեսութիւնն հայ ժողովրդի պատմության» երեքհատորյակը նախատեսված է իբրև ծեռնարկ մասնագետների, ուսուցիչների և ուսանողության համար, բայց կարող է օգտակար լինել և կրթված ու պատրաստված լայն հասարակության համար, որը ցանկանում է ծանոթանալ հայ ժողովրդի պատմությանը մասնավոր ընթերցմամբ։

Բավարարելու համար բարձրագույն դպրոցների պահանջները՝ ամեն մի հատորում տրված է ամփոփ տեսութիւն օգտագործված հայ և օտար աղբյուրների, իսկ առաջին հատորի վերջում, հատուկ հավելվածում, թարգմանաբար մեջ են բերված Քսենոփոնի «Անաբասիս»-ի և «Կյուրոպեդիա»-յի Արմենիային ու արմեններին վերաբերող հատվածները, որոնք ամենակարևոր սկզբնաղբյուրն են հայ ժողովրդի հնագույն պատմության։

ԱՐՄԵՆՆԵՐԻ ԳԱՂԹԸ ԵՎ ԻՐԱՆՅ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Նախաամենակցն Ուրարայան քագավորությունը և նրա կույսուրան.—
 2. Ուրարաուի բուլացումը կիմմերական ու սկյութական արեալանքների ժամանակ.—
 3. Տեղեկություններ հայերի ծագման մասին հայ պատմագիրների երկերում.—
 —Ազգն Թորգոմայա և Վասանադյան ազգն.— Հայկի ու Բելի առասպելը.—
 4. Հայերի ծագման մասին հունական տղբուրների տեղեկությունները.—
 —Ըստ Հերոդոտոսի և Նվոպոսոսի արմենները համարվում են ազգային փոխուղի-
 ացիներին.—
 —Ըստ Կիրսիլոսի և Մեղիոսի արմենները գաղթել են Թեսսալիայից.—
 Մարկվարտի դրական կարծիքն այդ մասին: 5. Արմենները հնդեվրոպական լեզու էր.—
 6. Արմենների գաղթը Նվոպայից Փոքր Ասիա և այդ գաղթի ժամանակաօրացումը.—
 7. Արմենների լեզուն և մարդաբանական թիպը զգալի փոփոխություններ են կրել Փոքր Ասիայում:—
 8. Մարկվարտի կարծիքով՝ արմենները Հոմերոսի Իլիականի մեջ հիշատակված արմեններ են.—
 Զեքսի և Տյուփոնի կողմն արմենների երկում.—
 Իլիականի հորինման ժամանակ (IX—VIII դ. մեր թվ. առաջ) արմեններն ապրել են Արգայոս լեռնի մոտ՝ այժմյան Կեսաբիայի օջախում.—
 Միտենի ժողովուրդը Մեցուաթի արձանագրության մեջ, հավանորեն, արիմեեր կամ արմեններ են:—
 9. Զեքսի և Տյուփոնի կողմի մի ուշագրավ փոփոխակր հորինացու պատմության մեջ:

7/6—3-րդ դարերը մեր թվականությունից առաջ հայ ժողովրդի պատմական անցյալում կազմում են մի շատ կարևոր շրջան: Այս ժամանակներում հետզհետե կաղմավորվել է հայ ցեղը և ստեղծվել է նախկին Ուրարայան թագավորության երկրամասերում պատմական Հին Հայաստանը,

19-րդ դարում կատարված գիտական ուսումնասիրությունների ու մեծ դյուտների շնորհիվ արդեն անմիջական կերպով պարզարանված է, որ այժմյան հայերի նախահայրերը հնդեվրոպական արմեններն են, որոնք Փոքր Ասիայից գաղթել են Հայաստան, Հավանորեն, յոթերորդ դարում կամ վեցերորդ դարի սկիզբներում մեր թվականությունից առաջ: Բենեագիրը արձանագրությունների ընթերցումից ևս հայտնի է մեզ, որ Հայաս-

տանում արմեններից առաջ ապրել են այլ ժողովուրդներ, որոնք
դառնալով են խալդ-ուրարտացիների իշխանության տակ: Ինչպես
հայտնի է, ուրարտական ժամանակաշրջանից մեր երկրում
մնացել են բերդերի ու տաճարների ավերակներ, ժայռերի մեջ
փորված շինություններ, ջրանցքներ ու ջրաբաշխական կառուց-
վածքներ, կավից ու մետաղից պատրաստված դանդաղ, իրեր ու
նաև բեկուազիւր արձանադրություններ: Այս արձանադրություն-
ների մեջ Ուրարտուի թագավորները տալիս են տեղեկություններ
իրենց արչավանքների, հաղթությունների և իրենց շինարարա-
կան դործերի մասին ու հիշատակում են իրենց շինած քաղաք-
ները, բերդերը, արհեստական ջրանցքները և իրենց տնկած խա-
ղողի ու պտղատու ծառերի այգիները: Նրանց կառուցած արհես-
տական լճերը և հոյակապ ջրանցքները պահպանվել են մասամբ
մինչև մեր օրերը: Ուրարտական Մենուաս թագավորի (810—778
թ. մեր թվ. առաջ) ավելի քան 70 կիրմետր երկարություն
ունեցող Վանի մեծ ջրանցքը, որն այժմ անվանվում է Շամիրամի
առու, հիմա էլ, ինչպես և մեր թվականությունից մոտ 8 դար
առաջ, ջուր է մատակարարում Վան քաղաքին ու նրա դաշտե-
րին:

Ուրարտացիների թողած փառահեղ հուշարձանները և պե-
ղումների ժամանակ հայտաբերված իրերը ցույց են տալիս, որ
շինարարական տեխնիկան ու, հատկապես, քարակտրությունը,
ինչպես և մետաղագործական ու կավագործական արհեստները,
արդեն այդ հնադրւյն ժամանակներում դառնալով են զարգացման
բարձր աստիճանի վրա: Զարգացած են եղել այդ ժամանակ նաև
երկրագործությունը և այգեգործությունը:

Իններորդ դարի երկրորդ կեսում (մեր թվ. ա.), Ասորեստա-
նի Սալմանասար Բ-ի ժամանակ (860—825 նախքան մեր թվ.),
Ուրարտական թագավորությունը խիստ զորեղացել էր և ենթար-
կել էր իր իշխանությանը սահմանակից երկիրները: Նա դառել էր
լայնատարած ու հզոր պետություն և վտանգավոր ախոյան էր
հանդիսանում ու մրցակից հզոր Ասորեստանին: Ուրարտուի
հզորացման ու նրա իշխանության ծալքման հետ համընթաց
զորեղացել ու ճոխացել էր նաև նրա կուլտուրան, որը մեծ չափով
ենթարկվել էր խեթական ու ասուրական կուլտուրաների ազդեցո-
ւթյան: Իններորդ դարի վերջերում Ուրարտուի թագավոր Սար-
գուրը Վանի միջնաբերդի արձանադրություններում գործ է ա-
ծում ասորեստանյան բեկուազերի և ասուրերեն լեզու: Սակայն

նրանից հետո արձանադրությունները դրված են տեղական լեզ-
վով: Այս հանգամանքը ինքնին արդեն մի նշան է, որ ուրաբա-
ցիները մոտ շորեղացել էր այդ ժամանակ նրանց ցեղային պի-
տակցությունն ու անկախությունը: Ուրարտական կուլտուրայի
մնացորդները վկայում են նմանապես, որ այդ կուլտուրան, որը
չափ կոթմերով մոտենում է խեթական ու ասուրա-բարեղոնական
կուլտուրաներին, հարուստ է նաև տեղական յուրահատուկ դը-
ծերով:

Տ—Դրդ դարերում Ուրարտուն ենթարկվեց հյուսիսից Հարա-
վային Ռուսաստանից եկող կիմմերների արշավանքներին, որոնք
տակնուվրա արին Ուրարտուն, Ասորեստանը և սամաղջ Փոքր
Ասիան: Այս ահալոր արշավանքներին Դրդ դարում հետևեցին
սկյութացիների զարհուրելի հարձակումները, որոնք նորից ափի-
րածության ենթարկեցին Անդրկովկասը և սրա հարևան երկիր-
ները մինչև Եգիպտոսի սահմանները:

Այս արշավանքների հետևանքն այն եղավ, որ Անդրկովկա-
սում ու Փոքր Ասիայում տեղի ունեցան տեղահան արված զանա-
զան ցեղերի տեղաշարժումներ և ազգացեղական վերախմբու-
վորումներ: Պետական հին միությունների՝ Ասորեստանի, Բա-
բելոնի և Ուրարտուի փոխարեն հրապարակ եկան նոր միու-
թյուններ՝ նախ Մեդիան և ապա Պարսկաստանը:

Ահա այս մեծ անցքերի ու տեղաշարժումների ժամանակ,
յոթերորդ դարում կամ վեցերորդ դարի սկիզբներում (նախքան
մեր թվ.), կարելի է ենթադրել հայերի հնդեւրոպական նախնիք-
ների՝ արմենների գաղթը Հայաստան, որոնք, հաստատվելով
Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան դաշտերում ու լեռնա-
հովիտներում՝ հետզհետե տեր դարձան Ուրարտուի երկիրներին:



Ինչպես հայտնի է, հին պարսիկները, հույները, հռոմայե-
ցիները և բոլոր մյուս ազգերը հայերին անվանում են «արմե-
նեք» (հայրս. arminiya, հուն. ἀρμένιοι), իսկ նրանց երկիրը՝
«Արմենիա» (հայրս. Armina, հուն. Ἀρμενία), և իրենք հայերն
են միայն, որ իրենց անվանում են «հայեր», իսկ իրենց երկիրը՝
«Հայաստան» կամ «Հայք»: Ինչպես և մյուս ժողովուրդներից
չատերը, նույնպես և հայերը՝ իրենց ծաղման ու հնադույն չոր-
ջանի պատմական անցյալի մասին չեն պահպանել պարզ ու որոշ

Հիշողութիւններ: Նրանք իրենց համարել են Հայաստանի բնիկ ժողովուրդը և կամ իրենց գաղթած են համարել աշտարակաւի նութիւնից հետո Բաբելոնից, որը նրանք ենթադրել են ըստ Հին Կտակարանի համայն մարդկության, որորանը:

Հինգերորդ դարի հայ պատմագիրները՝ Փավստոսը, Ագաթանգեղոսը և Կորյունը, իբրև քրիստոնեական ժամանակաշրջանի հեղինակներ, գտնվում են, բնականաբար, Հին Կտակարանի և եկեղեցական հին պատմագիրների ազդեցութեան տակ և համաձայն այդ սկզբնաղբյուրների հայերին սերած են համարում Հաբեթի սերունդից և Թորգոմի կամ Ասքանազի տոհմերից¹: Փավստոսի ու Ագաթանգեղոսի մոտ հին հայերը համարվում են «որդիք» կամ «ազգն» և «տունն Թորգոմայ»², իսկ Կորյունի մոտ նրանք անվանված են «Ասքանազեան ազգն»³:

Փավստոսից և Ագաթանգեղոսից դեռ առաջ հայերի նախահայր էին համարում Հին Կտակարանի եբրայական բնագրի «Թոգարմա»-յին նաև Յրդ և Էրդ դարերի եկեղեցական մատենագիրները՝ Հիպոլիտոսը և Նվսեբիոս Կեսարացին:

Հ. Կիպերտը ենթադրում է⁴, որ «Թոգարմա»-ն Հայաստանի արևմտյան կամ հարավ-արևմտյան մասի անունն է, իսկ Թոգելիչը կարծում է⁵, որ «Թոգարմա»-ն կարող է համապատասխան լինել րևեռադիր արձանագրութիւնների մեջ Հիշատակվող Տիլգարիմում բերդի անվանը, որը գտնվում էր Հայաստանի սահմանակից հին Մեկիտենեի (Մալաթիայի) շրջանում: Հենց այս երկրին են վերաբերում, նրանց կարծիքով, Նդեկիեի մարզաբեի հետևյալ վկայութիւնները.

1 Գլ. ԻԷ, 14՝ «և ի տանէ Թորգոմայ ձիովք և հեֆելովք և ջորովք լցին զվաճառս քո» [Մուր քաղաքի].

2 Գլ. ԼԸ, 6՝ «Գոմեր և ամենեքին, որ շուրջ են զնովաւ, և տունն Թորգոմայ ի ծագացն Հիւսիսոյ»:

Հին Կտակարանի վերոհիշյալ «Գոմեր» կամ «Գոմեր» անվան

1 Տե՛ս Մն. գլ. Ժ, 2—3 և Ա. Մնաց. գլ. Ա, 5—6 «Որդիք Թաբեթի՝ Գամեր... և որդիք Գամերայ՝ Ասքանազ և Ռիբաթ և Թորգոմայ»:

2 Փավստոս, Վենետիկ, 1832, էջ 1, 189 ևն. Ագաթանգեղոս, գլ. ՃԷ և ՃԺԲ.

3 Կորյուն, Վենետիկ, 1894, էջ 7.

4 Monatsberichte d. Königl. Preuss. Akad. d. Wiss. zu Berlin, 1859, էջ 201 և հետ., նույնը, 1869, էջ 221 և հետ.: Համեմատե՛ս նույն հեղինակի «Lehrbuch der alten Geographie», Berlin, 1878, էջ 75—76 և էջ 91.

5 Տե՛ս Fr. Delitzsch, «Wo lag das Paradies?» Leipzig, 1891, էջ 246.

ասակ, որի որդին էր Թորգոմը, Կիպերաի և Դելիլի կարծիքով, պետք է հասկանալ կիմմերներին, որոնք Ասորեստանի արձանագրութիւններում անվանվում են Գիմիրի (Gimirri):

Ինչպես տեսնում ենք այս դիտողութիւններից, Փաւստոսի և Ալաթանգեղոսի վկայութիւնները, որոնց մեջ համաձայն եկեղեցական հին մասանագիրների հայերի նախահայր համարվում է Թորգոմը՝ հաստատուն որևէ հիմք չունեն:

Նույնը պետք է ասել նաև Կորյունի վերոհիշյալ վկայության մասին, ըստ որի հայերն անվանված են «Ասքանաղեսն ազգն»: Այս ավանդութիւնը ևս պարզապես հիմնված է Երեմիա մարգարեի վկայության վրա, որը Բաբելոնի դեմ օգնության էր կանչում՝ Արարատյան թաղալորութիւնը և Ասքանաղյան գունդը:

«Առէք զնշան ի վերայ երկրիդ, —ասված է այդ վկայության մեջ՝,— քող հարէք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցէ՛ք ի վերայ զորա [Բաբելոնի] գունդս. պատուէր տուք յինչն Արարատեան թաղալորութեանցն և Ասքանաղեան զնդին. կանգնեցէ՛ք զնովաւ նետակալս. ելէ՛ք ի վերայ» (եբր. բնագրում ասված է՝ «Կոչեցէ՛ք ի վերայ նորա ղթաղալորութիւնս Արարատայ, Միննեայ եւ Ասքենաղայ», ասորականում՝ «Կոչեցէ՛ք ի վերայ նորա ղթաղալորութիւնս Արարատայ և Արմինայ եւ Ասքենաղայ»):

Այս վկայության մեջ հիշատակված Ասքանաղյան գունդը, ինչպես միանգամայն ճիշտ բացատրել է Ֆր. Դելիլը², նույնն է բեռնադիր արձանագրութիւնների «Աչգուզա»-յի (Ašgûza) հետ, որ պարզապես հյուսիսից արևելյան Անդրկովկաս արշավող օկուլթացիների անունն է:

Հայերի ծագման մասին մի ուրիշ ավանդութիւն էլ մեջ է բերված Մար Աբասի և Մովսես Խորենացու պատմական երկերում: Ըստ այդ ավանդության, հայ ազգի նախահայր համարվում է Հայկ նահապետը, վերոհիշյալ Թորգոմի որդին, որը, չկամենալով հնազանդվել Բաբելոնի Բել արքային՝ ղաղթել էր Հայաստան:

Այս Հայկը, ասում է Խորենացին (դիրք Ա., դւ. 10), դեպի Կապադոքիա և անձնյա, քաջազանդուր, խայտալին և հաստաբազուկ, որ քաջ և երեւելի էր հսկաների մեջ՝ դեմ կեցավ ամենքին, որոնք ձեռք էին բարձրացնում, որովհաղի իշխեն բոլոր հսկաների

¹ Տես Նրեմիա, գլ. ԾԱ, 27.

² Franz Delitzsch, „Neuer Kommentar über die Genesis“, Leipzig, 1887, էջ 204.

ու դժուրացներն ի վրա: Սա խորհրտալու ընդդիմացավ նաև Բելին և իր բոլոր տունն ու տեղով ղնաց դեպի Արարատյան երկիրը: Ճանապարհին նա եկավ բնակվեց մի սարի (Քարդու-Արարադի) ստորոտի մոտ դռնվող դաշտավայրում, շինեց այստեղ բնակության տեղեր և տվեց իբրև ժառանգութուն իր թոռին՝ Կադմոսին, Արմենակի որդուն: Իսկ ինքը, ձանապարհը շարունակելով՝ ղնաց Հյուսիսային արևմտյան կողմերը և իր նոր բնակութունը հաստատեց մի բարձր դաշտավայրի մեջ և այդ լեռնադաշտի անունը, որը գտնվում էր Նեխ-Մասիսի մոտ՝ դրեց Հայք:

Հայաբնիկներից շատերը, օրինակ՝ Գ. Խալաթյանցը, Ա. Գաբազյանը և Հ. Գեյցերը՝ այս ավանդութունը ևս համարում են հնարված ու անարժեք:

«Ինչ որ, — ասում է Գեյցերը², — աղբյուրն պատմագիրներ՝ Մար Աբաս Կատինա և Մովսէս Խորենացի հնագոյն պատմութեան մասին կաւանդեն, մեծաւ մասամբ և ոչ իսկ պատմական արժէք մ ունին, այլ դիտնական կարկառանք են»:

Հայաբնիկների այս և նման եղբակացությունները, ինչպես կտեսնենք ներքև, ընդունելի չեն: Մար Աբասի և Մովսէս Խորենացու առասպելական հին ավանդությունների մեջ, ինչպես այժմ պարզված է, պահպանված են աղոտ հիշողություններ հին պատմական անցքերի մասին:



Արդի արևելագետներն ու հայաբնիկների մեծապես մասը ընդունում են, որ հայերի նախահայրեր արմենները թրակափուլուդիական ցեղերի հետ միասին զաղթել են Փոքր Ասիա Եվրոպայից Հելլեսպոնտոսի վրայով: Այդ եղբակացությունը նրանք անում են, հիմնվելով հունական աղբյուրների հաղորդած վկայությունների և համեմատական լեզվաբանության նորապես ցուցումների վրա:

Հինգերորդ դարի հույն պատմադիր Հերոդոտոսը (484-425թ. նախքան մեր թվ.) պարզ կերպով վկայում է, որ արմենները Հա-

1 Ску Г. Халатъяны, Армянский эпос в истории Арменни Моисей Хоренский, Москва, 1896, էջ 106—125. Ա. Մ. Գաբազյան, Քննական պատմություն հայոց, Մասն Ա., Կոստանդնուպոլիս, 1880, էջ 136 են.:

2 Հ. Գեյցեր, Համառոտ պատմութիւն հայոց, Թարգմ. Գալեմյարյանի, Վիեննա, 1887, էջ 5.

ն են եկել փոյուզիայից, այսինքն՝ արեմտյան փոքր Ասի-
Հոլյն-պարսկական կոիվները ժամանակ, ասում է Հերո-
լ, փոյուզիացիները դաշն էին կապել Պարսից Քսերքսես
վորի հետ և արմեններն այդ ժամանակ զտնվում էին նը-
հեա Պարսից լանակում: Վերջիններս զինված էին փոյուզի-
րի նման և այս երկու ժողովուրդների հրամանատարն էր
հի փեսան՝ Արտոքմեալ:

Երոդոտոսի այս վկայութունը, որ խիստ կարևոր է, մեջ
երում բառացի թարգմանությամբ հունարենից:

Հերոդոտոս, գլ. VII, զլ. 73՝ «Փոյուզիացիները, ինչ-
պես մակեդոնացիներն են ասում, անվանվում էին բուդներ,
երբ Եվրոպայումն էին գտնվում և մակեդոնացիներին
հարևան էին: Անցնելով Ասիա՝ երկրի հեա միասին նրանք
փոխեցին և իրենց անունը (փոյուզներ): Արմենները զին-
ված էին փոյուզիացիների նման և փոյուզիացիների գա-
ղութներն էին (αποικιοι): Սրանց երկուսի առաջնորդն
էր Արտոքմեալ, որն ամուսնացած էր Դարեհի աղջկա հետ»:
Նման անդեկությունն է հաղորդում նաև չորրորդ դարի
(մեր թվ. առ.) աշխարհագիր Եվդոքասը:

«Իսկ արմենները, — ասում է նա՝ — ծագումով փոյու-
զիայից են և նրանց լեզվում շատ բան փոյուզերենից է»:

Իրոնիսիոս Հալիկարնասցին ևս (I դար մեր թվ. առ.) ար-
մեններին ու փոյուզիացիներին համարում է համալեզու:

Հոլյն մատենագիրների այս վերջին տեղեկութունը փոյու-
զերեն ու արմեններեն լեզուների մերձավոր ազգակցության մա-
սին, դժբախտաբար, դժվար է ստուգել, որովհետև փոյու-
զերեն լեզվի առանձնահատկութունները մանրամասն մեզ հայտ-
նի չեն և նրա բառամթերքից շատ քիչ բան է պահպանվել:
Արմեններեն և փոյուզերեն լեզուների մոտ ազգակցութունն ըն-
դունում է գերմանական գիտնական Կրեյմերը², սակայն Մարկ-
վարտը իրավացի կերպով առարկում է, որ փոյուզերեն լեզվից
մնացած սակավաթիվ բառերը դեռևս չեն կարող հիմք
ծառայել նման ենթադրության: Պարզ է միայն այն, որ այդ

¹ S^{ku} Steph. Byz. մոտ 'Αρμενία = Eustath. Comment ad Dyonyssi Perle-
gesin, V, 694, C. Müller, Geogr. graeci minores, t. II, էջ 341.

² S^{ku} Paul Kretschmer, Einleitung in die Geschichte der griechischen
Sprache, Göttingen, 1896, էջ 208 և հետ.: Համեմատել նաև W. Tomaschek, Die
alten Thraker, I—II, Wien, 1893—1894.

երկու լեզուն էլ պատկանում են հնդեւրոպական լեզուների
եվրոպական ճյուղին և ունեն մի քանի բնորոշ ու նման առանձ-
նահատուկթյուններ:

Վերահիշյալ հույն հեղինակների վկայութիւնները, որ
խիստ թանգարժեք են, որովհետեւ Հերոդոտոսը ժամանակակից
էր հինդեւրոպէ գարի անցքերին՝ պարզ ցույց են տալիս, որ
արմենները Հայաստան են եկել Փոքր Ասիայից և որ նրանց
նախնիքները հարեան են եղել թրակա-փոյուզիական ցեղերի:

Արմենների գաղթն արեւմուտքից հաստատուած է նաև հու-
նական մի այլ ավանդությամբ, որ մեջ է բերված Ստրաբոնի
աշխարհագրության մեջ, Այդ ավանդության մեջ ցույց է տըր-
ված նաև արմենների նախնական հայրենիքը Եվրոպայում, որ-
տեղից նրանք գաղթել են Փոքր Ասիա և ապա Հայաստան:

Ստրաբոնի երկու վկայութիւնները մեջ ենք բերում բառացի
թարգմանությամբ հունարենից:

1. Ստրաբոն, գլ. XI, գլ. 4, 8 (503)՝

«Պատմում են, որ դեպի Կողքիս նաւարկման ժամանակ Յա-
սոնը գնացել էր թեսսալացի Արմենոսի հետ մինչև Կասպից
ծովը և անցել Իբերիան, Ալբանիան և մեծագույն մասն
Արմենիայի ու Մեդիայի, ինչպես այդ վկայում են Յասոնի-
նի վրիված սրբավայրերը և ուրիշ բազմաթիւ հիշատակարան-
ներ: Պատմում են նաև, որ Արմենոսը Արմենիոն քաղաքիցն
էր, որն այն վայրերից մեկն էր, որոնք գտնվում էին
Բոյբեյիս լճի շուրջը Փերեի ու Լարիսայի միջև, և որ նրա
ուղեկիցները բնակվել էին Ակիլիսենում և Սիսպիրիտիսում
մինչև Կալաքեն և Ադիարեն: Եվ պատմում են նմանապես,
որ երկիրն Արմենիա էր անվանվել Արմենոսի անունով:

2. Նույնը, գլ. XI, գլ. 14, 12 (530)՝

«Հին պատմութիւնն այդ ժողովրդի [արմենների] մասին
հետևյալն է: Ինչպես որ ասվեց, Արմենոսը թեսսալական
Արմենիոն քաղաքիցն էր, որը գտնվում է Փերեի և Լարի-
սայի միջև Բոյբեյիս լճի մոտ, և նա Յասոնի հետ արշավել
էր Արմենիա: Կիրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին
ու նրանց հետ եղողները, որ մասնակցում էին Աղեքսանդրի
արշավանքին՝ ասում են, որ երկիրը կոչվել էր Արմենիա:

1 Markwart J., Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1910, էջ 4—5,

Արմենոսի անունով: Սրա ուղեկիցներէց ոմանք բնակութիւն էին հաստատել Ակիլիսենում, որն առաջ ենթարկված էր Մոփէի իշխանութեան, իսկ ոմանք՝ Սիսալիի տիտիւմ մինչև Կալաքեն և Ագիւարեն, որ գտնվում էին Հայկական լեռնաշխարհից դուրս: Ասում են դարձյալ, որ արմենական հողումը թեսասական է, ինչպես օրինակ, երկար ներքնազգեստները, որ թեսասական են կոչվում տրաքեդիաներում և գոտեորվում են կրծքի վրա, նմանապես և ներքնազգեստները, որ գործ են ածում թեսասացիներ ներկայացնելիս տրաքիկական դերասանները:

Ստրաբոնի հաղորդած հունական այս ավանդութիւնը, ինչպես տեսնում ենք, ո՛չ միայն չէ հակասում Հերոդոտոսի վերոհիշյալ վկայութեանը, այլև իր հերթին հաստատում է, որ արմենները ևս, ինչպես և «բոիգ» կամ «վոյուգ» ժողովուրդը, գաղթել էին Փոքր Ասիա Եվրոպայից:

Հունական բոլոր վերև մատնանշված տեղեկութիւնները արմենների ծագման մասին վերջերս մանրամասն քննութեան են ենթարկված Մարկվարտի Ֆրանսերեն լեզվով գրված հոգևածում՝ «Հայերի որոհանք» վերնագրով: Նրա կարծիքով, հունական առասպելախառն վերոհիշյալ ավանդութիւնն արմենների գաղթի մասին թեսասլիայից, ըստ երևույթին, ունի որոշ պատմական հիմք: Նա մատնացույց է անում հայերեն դրաքար լեզվի մեջ մի քանի բառեր, օրինակ՝ «մանր» և «սուին», որոնք գրեթե նույն արտասանութեամբ (manu և sibyna) ու միևնույն նշանակութեամբ գործ են ածվել թեսասլիային սահմանակից Իլլիրիայում և Աթամանիայում: Այս բաղդատութիւնները Մարկվարտին հիմք են ծառայում ենթադրելու, որ հայերի հնդեւրոպական նախահայրերը, արմենները, երբեմն հարևան են եղել Իլլիրիայի ու Աթամանիայի ազգաբնակչության և բնակվելիս են եղել, հավանորեն, թեսասլիայում:

Մարկվարտի նոր հզրակացութիւնը թեև կարելի է մասնա-

1 Sém. J. Markwart, Le berceau des Arméniens, Revue des Études arméniennes, Paris, 1928, t. VIII, fasc. 2, էջ 211—232.

2 Ուշագրավ է, որ հայերի գաղթը թեսասլիայից մատնանշված է Սուքրյանի հրատարակած Աշխարհացոյցի մեջ (և զմեծ թեսագիտ, յորմէ Հայք, ահա Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ, Վենետիկ, 1881, էջ 17)։ Ինչ թվում է, որ այս վկայութեան հիմք է ծառայել վերոհիշյալ հունական ավանդութիւնը։

վոր կետերում վիճելի համարել ու կարոտ ավելի հիմնավոր ապացուցման, սակայն միանգամայն պատմական, ու ճիշտ պետք է համարել այն, որ արմենները երբեմն ապրել են, իրապես, հյուսիսարևելյան Հունաստանում կամ Բալկանյան թերակղզում, այնտեղից թրակա-փոյուղիական ցեղերի մեծ ընտանիքի հետ դադարել են ու հաստատվել Փոքր Ասիայում և ապա, ըստ երևույթի, կրմմեբական ու սկյութական արչականքների ժամանակ (7-րդ դ.) տեղահան են եղել և բնակություն են հաստատել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասերում:

Որ արմենները, իրապես, կապ ունեն թրակա-փոյուղիական ցեղերի հետ՝ այդ մատնանշել է նաև Ն. Մառը: Իր ուշադրավ հոգևածներից մեկում («Вопросъ о происхожденіи армянъ», Изв. Императорскаго Наук., 1911, էջ 759—774) նա սլարզ կերպով ցույց է տրվել, որ հայերեն աստված բառը, որի ծագումը պետք է համարել արմենական, կասարեբլապես համապատասխանում է փոյուղիական Սարածիոսին, որը գլխավոր աստվածն էր թրակա-փոյուղիական աշխարհում: Այս խիստ կարևոր ցուցումը ևս, ինչպես տեսնում ենք, հաստատում է Հերոդոտոսի ու մյուս հույն հեղինակների վկայություններն արմենների ու փոյուղիացիների առնչության և հարևանության մասին:



Եվրոպայից Փոքր Ասիա գաղթած արմենների լեզուն, ինչպես արդեն ապացուցել են լեզվագետները, պատկանելով հնդեվրոպական լեզուների խմբին՝ իր առանձնահատկություններով մոտ ազգակից է եղել այդ խմբի եվրոպական ճյուղին և ունի որոշ առնչություն նաև արբիական ու սլավոնական լեզուների հետ: Հնչյունական տեսակետից նրա տեղը, ինչպես մատնացուց է անում Մարկվարտը, որոշվում է սլավոնական-լիտվական ու

1 Ոմանք կարծում են (տես Լեո, Հայոց պատմություն, էջ 321, Morgan, Histoire du peuple arménien, էջ 37 և ուրիշները), որ արմենների ազգական կապի մասին թրակա-փոյուղիական ցեղերի հետ ուշադրավ մի հիշողություն պահպանվել է Հովհաննես կաթողիկոսի մոտ (Թիֆլիս, 1912, էջ 13), որը Հայկ նահապետի պապին, Թիրասին, նախահայր է համարում թրակացիների Հովհաննես կաթողիկոսի հազորդած տեղեկությունը հիմնված է, ըստ երևույթի, ոչ թե մոզովրդական ավանդության, այլ, հավանորեն, ինչ նտակարանի մեկնիչների վկայությունների վրա:

ալբանական լեզուների միջև, իսկ ըստ բառապաշարի նա, ինչպես և փոյուգներնը, աչքի ընկնող նմանություններ ունի հունարենի հետ։ Այս հանգամանքը, Մարկվարտի կարծիքով, հանգեցնում է անհրաժեշտորեն այն եզրակացության, որ արմենների նախահայրերն ապրել են երբեմն Եվրոպայում, հավանորեն, հույների ու թրակացիների նախնիքների մոտերքում։

Ինչպես հայանի է, մի շարք աշխատություններում ժրխավում է վերջերս այն մեծ ծառայությունը, որ հնդեւրոպական լեզվաբանությունը մատուցել է հայազիտության և, մասնավորապես, նաև պատմազիտության։ Սակայն այդ, իհարկե, ճիշտ է, թեև համեմատական լեզվաբանությունն ունի որոշ բացեր ու թերություններ, սակայն հնդեւրոպական լեզուների հայտնաբերումն ու ուսումնասիրությունը, անտարակույս, 19-րդ դարի ամենախոշոր դուռերից մեկն էր։

Արմենների գաղթը Բալկանյան թերակղզու վրայով Փոքր Ասիա և այդ գաղթի մոտավոր ժամանակը նորագույն ուսումնասիրություններում ենթադրվում է մոտավորապես 13-րդ դարի վերջերում կամ 12-րդ դարի սկիզբներում մեր թվականությունից առաջ։ Հենց այդ ժամանակ, ինչպես ենթադրում են, տեղի էր ունեցել Հելլենսպոնտոսի վրայով ներխուժումը Եվրոպայից Փոքր Ասիա թրակափոյուգիական ցեղերի, որոնք թուռն ու երկարատե դրոհներով հետզհետե կործանեցին ինթական մեծ պետությունը, ըստ երևույթին սրանց հետ եկել էին Փոքր Ասիա նաև նրանց ազգակից արմենները։

Բանասիրական ու պատմազիտական բազմաթիվ աշխատություններում արմենների գաղթը Եվրոպայից Փոքր Ասիա սուլորաբար ենթադրվել է կամ երրորդ հազարամյակում² և կամ 8—7-րդ դարերում³ մեր թվականությունից առաջ։ Այս ենթադրությունները համարվում են այժմ անհավանական։

Նորագույն ուսումնասիրություններում ենթադրվում է

¹ Markwart, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, էջ 5.

² Համեմատեա Hübischmann, Armenische Grammatik, Leipzig, 1897, էջ 399. Kretschmer, Einleitung in die Geschichte der griechischen Sprache, էջ 181. Տաթլեմ, «Լուսուսն դասական հայերեն լեզուի», Վիեննա, 1920, էջ 18 և ուրիշ։

³ Ску Халатянц, Очерк истории Армении, Москва, 1910, էջ 11. В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Москва, 1918, էջ 19 և ուրիշ։

նուշնայես, որ արմենները, նախքան նրանց գալը իրենց նոր հայրենիքը, Հայկական լեռնաշխարհը՝ ապրել են Փոքր Ասիայում մոտավորապես վեցհարյուր տարի՝ 12-րդ դարից մինչև 6-րդ դարը մեր թվականությունից առաջ: Այդ երկար գարերի ընթացքում նրանք, անշուշտ, ենթարկված կարող էին լինել նոր շրջապատի ազդեցությանը: Եվ իրավի, ինչպես հետզհետե պարզվում է, հնդեւրոպական արմենների թե մարդաբանական տիպը և թե լեզուն զգալի փոփոխություններ են կրել նրանց Հայաստան ժամանելուց առաջ արդեն Փոքր Ասիայում:

Այն լեզվա-ցեղային ու կուլտուրական միջավայրը, որը մեծ ազդեցություն էր գործել արմենների վրա՝ վերջերս արգեն հաջող կերպով ուսումնասիրվում ու լուսաբանվում է շնորհիվ խեթագիտության փայլուն նվաճումներին ու խեթական բեւեռագիր ու պատկերագիր արձանագրությունների ընթերցման: Վերջին ժամանակներում երևան են հանվել փոքրասիական մի քանի նոր ժողովուրդներ ու լեզուներ, որոնցից ամենանշանավորն են Հրոզնու կողմից հնդեւրոպական համարված նեսիտ-խեթերը կամ կափխները ու լուշիները և ո՛չ հնդեւրոպական նախախեթերը, որ անվանվում են նաև խոտտեր, և խուրրինները կամ խարրինները, որոնք անվանվում են նաև սուբարիններ:

Ինչպես նորագույն ուսումնասիրություններից պարզվում է, հնդեւրոպական արմենները, ըստ երևույթին, խառնվել են Փոքր Ասիայում, գլխավորապես, նեսիտ-խեթերի և նախախեթերի հետ: Նրանք ժառանգել են սրանցից, ինչպես ցույց է տվել մարդաբանական գիտությունը, իրենց ուրույն տիպը, որը հայերը պահպանել են մինչև մեր օրերը: Խեթյան ժամանակաշրջանի որմաքանդակային նկարները ու պեղածո զանգերը իրենց բնորոշ հատկանիշներով կազմում են, ինչպես հայտնի է, բրախիկեֆալ (կարճագլուխ) կոչվող հասուկ մի խումբ, որը կատարելապես համապատասխանում է այսօրվա հայերի ֆիզիքական տիպին: Այս հանգամանքը հիմք է ծառայել այդ տիրապետող փոքրասիական տիպը կոչելու արմենոյիդ:

Լեզվագիտական նորագույն ուսումնասիրությունները նմանապես ցույց են տալիս, որ արմեններեն լեզուն ևս ենթարկվել է

1 В. Грозный, Die Sprache der Hethiter, Leipzig, 1916—1917. проф. Б. Грозный, Хеттские народы и языки, Вест. древ. истории № 2, 1933, էջ 18—33.

խեթերենի ազդեցությանը, որ այժմ հեազհետե ուսումնասիրվում ու լուսարանվում է:

Պետք է ասել, որ խեթագիտությունը դեռևս երիտասարդ դիտություն է: Բողազքոյում գտնված խեթական թագավորական արխիվի տաանյակ հազարավոր կավե սեպագիր տախտակները, ինչպես և Փոքր Ասիայում ու Ասորիքում եղած խեթական պատկերազիր արձանադրությունները դեռևս բոլորը չեն կարդացված ու մեկնված: Յուրաքանչյուր տարի նոր ու նոր արձանադրությունների ընթերցմամբ հեազհետե ճշտվում են լեզվական ու պատմական վիճելի հարցեր: Միանգամայն հնարավոր է, ուրեմն, որ հետագա ուսումնասիրությունները կկարողանան, հավանորեն, նոր լույս սփռել նաև Փոքր Ասիա գաղթած արմենների պատմության վրա:



Արմենների հնագույն անցյալի մասին Փոքր Ասիայում մենք ունենք առայժմ Մարկվարտի ուշադրավ մի ենթադրությունը¹, որը սակայն դեռ կարոտ է ստուգման ու ապացուցման նոր ու ավելի անվիճելի փաստերով: Մարկվարտը մատնանշում է, որ իրեն հաջողվել է Հոմերոսի Իլիականում գտնել արմենների մասին ամենահին տեղեկությունը: Հոմերոսի մոտ հիշատակված է արիմներ (*Ἀριμοι*) անունով մի ժողովուրդ, որը կարելի է, նրա կարծիքով, նույնացնել արմենների հետ:

Նկարագրելով Ջելսի ու Տյուփոնի կռիվը² Հոմերոսը, հիշատակելով արիմներին՝ մատնանշում է, որ նրանց երկրում է գտնվել Տյուփոնի բնակատեղին (Իլիական, B, 783): Տյուփոնը, ինչպես հայտնի է, դիցաբանական մի հսկա էր և անձնավորումն էր հրաբղխի ու հրաբղխային երևույթների: Նրա հայրենիքը, որն ըստ Հոմերոսի արիմների երկրումն էր գանձվում՝ հունական մատենագիրները, Պինդարոսը և ուրիշները, ենթադրում են Կիլիկիայում: Հիմնվելով այդ ցուցումների վրա՝ գերմանական գիտնական Պարչը համոզիչ կերպով լուսարանել է³, որ հունական աղբյուրների ավնարկած հրաբուխը, որը

¹ S. J. Maskear, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, էջ 66—68 և Le berceau des Arméniens, էջ 216—225:

² S. Jos. Partsch, Geologie und Mythologie in Kleinasien, Berlin, 1888, էջ 105 ևն.:

գտնվել է արիմների երկրում Կիլիկիայում, պարզապես Արգայոս (այժմ Երջիյաս) լեռն է Կեսարիայի շրջանի, որը հնագույն ժամանակներում գտնվում էր, իրապես, Կիլիկիայի թագավորութան սահմանում, իսկ հետո, Գրդ դարում մեր թվականում թյուրքներից առաջ, միացվել էր Կապպադոկիային:

Հունական մատենագիր Պոսեյդոնիոսը, և նրան հետևելով նաև Պարչը, արիմներին նույնացնում են արամայեցիների հետ, «սկայն Մարկվարտը, մերժելով այդ հին կարծիքը, հնարավոր է համարում նույնացնել արիմներին հայերի նախահայրերի՝ արմենների հետ: Մարկվարտի ասելով՝ հնագույն այդ ժամանակներում սեմական ասորիներն ապրում էին ո՛չ թե Կիլիկիայում կամ հարավային Կապպադոկիայում, այլ Պոնտոսի հյուսիսակողմում: Արմենների գաղթը կարելի է, նրա կարծիքով, ենթադրել փոյուզիայից, հատկապես, այժմյան Անգորայի շրջանից՝ Հալլուս գետի միջին հոսանքով դեպի Արգայոս լեռան մոտակայքը, ուր և նրանք հիշատակված են իլիականում, Հետագայում արմենները հարկադրված են եղել Կիլիկիայի հյուսիսային այս շրջանից դնալ դեպի Հալլուս գետի աղբերակունքը, որը գտնվում էր Փոքր Հայքում, և ապա այստեղից ևս դեպի Հայկական լեռնաշխարհը:

Մարկվարտը ենթադրում է նաև, որ հայերի նախահայրերի «արմեն» անունը (հայոս. arminiya, հուն. ἀρμένιοι) կազմված է arm ալիլի ճիշտ՝ ar(i)m՝ կամ ar(u)m՝ աղմատից և ուրարտական -ini (կամ -ina) վերջավորութունից (համեմատեալ Chaldini, Musk-ini ևն): Անշեշտ վանկի մեջ i հնչյունի սղումը Մարկվարտը կանոնավոր է համարում թե հայերենում և թե իսլադերենում:

Բացի այդ, Մարկվարտն անհնարին չէ համարում, որ Urmeni ժողովուրդը, որը Մենուասի (810—778 թ. մեր թվ. ա.) արձանագրութուններից մեկում հիշատակված է հյուսիսային Կիլիկիայի (հետագա Կապպադոկիայի) մոտակայքում, կարող է, իրապես, ինչպես ենթադրել է Լեման-Հաուպտը, նույնացվել արիմներ-արմենների հետ, որոնք հենց նույն այս շրջաններումն էին ապրում իլիականի հորինման ժամանակ 9—8-րդ դարերում (նախքան մեր թվ.):

Իլիականի վկայութան նոր լուսաբանությունը, Մարկվար-

տի կարծիքով, հաստատվում է նաև նրանով, որ Մովսես Խորենացին ևս, որի մոտ պահպանվել է Զևսի ու Տյուփոնի կովի մի այլ փոփոխակը՝ նկարագրել է հայերի նախահոր՝ Արամի զիցարանական կռիվը Պապայիս Բաղյանի հետ և կովի վայրը մատնանշել է նույնպես Արդայոս հրաբխային լեռան մոտ Մաթաքկեսարիայի շրջանում։ Տիտանյան Պապայիս Բաղյանը, ըստ երևույթին, տիտան Տյուփոնն է, իսկ Արամը, որ փոխարինում է Զևսին, հավանորեն հայերի նախահայր արիմներն են։

Մովսես Խորենացու համապատասխան վկայությունը, որ խիստ կարևոր է ու արժանի հասուկ ուշադրության՝ մեջ եմ դնում ամբողջությամբ առանց կրճատումների։

Խորենացի, դիրք Ա, գլ. ԺԴ, էջ 46—47 (Տպիչի 1913)՝ «Բայց ինչ քաջության դուրծ որ սա [Արամը] գործել է արևմտյան կողմը Տիտանյանների դեմ՝ մենք դեռ պատմելու ենք։ Սա քառասուն հազար հետևակներով և երկու հազար հեծելազորքով դեպի արևմուտք նրանց դեմ դնալով՝ հասավ Կապապոլովկիայի կողմերը, մի տեղ, որն այժմ Կեսարիա է կոչվում։ Եվ որովհետև նա արևելյան ու հարավային կողմերը նվաճել էր և հանձնել էր այս երկու ցեղերին, արևելքը Սիսակյաններին և Ասորեստանը Կադոսի տան շառավիղներին՝ այնուհետև ոչ մի տեղից չունեի որևէ չփոթի կասկած։ Ուստի և նա երկար ժամանակ մնաց արևմուտքում և այստեղ նրա դեմ դուրս եկավ պատերազմի Տիտանյան Պապայիս Բաղյանը², որը տիրապետել էր երկու մեծամեծ ծովերին՝ Պոնտոսի և Ուկկիանոսի միջև դտնված ամբողջ երկրին։ Հարձակվելով վերջինիս վրա՝ Արամը նրան փախուստի մատնեց ու քչեց ասիական ծովի մի կղզի։ Եվ թողնելով իր ազդեցից Մշակ անունով մեկին տասը հազար զորքով իբրև այս աշխարհի վերակացու՝ ինքը վերադարձավ Հայաստան։

Բայց նա հրամայեց այդ աշխարհի բնակիչներին սովորել հայկական լեզուն և խոսել հայերեն. այս պատճառով հույները մինչև այսօր այդ երկիրը կոչում են Պոտի Արմենիա, որ թարգմանաբար նշանակում է Առաջին Հայք։ Իսկ այն դաստակերտը, որ շինեց Արամի տեղակալ Մշակը և կոչեց իր

¹ S. Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, էջ 67։ Համեմատե՛ն նաև Le berceau des Arméniens, էջ 221—223։

² «Պապայիս Բաղեայն» ուղղել ենք համաձայն Մարկվարտի Էնթադրություն «Պապայիս Բաղյան»։

անուանով ու պատեց փոքր պարիսպով՝ երկրի հին բնակիչները, չկարողանալով ուղիղ արտասանել, անվանում էին Մաժաք։ Իսկ հետո ուրիշներն ընդարձակեցին և անվանեցին Կեսարիա։ Միևնույն կերպով նաև այդ տեղերից մինչև իր բուն երկրի սահմանները շատ անբնակ աշխարհներ Արամը բնակիչներով լցրեց, որ անվանվեցին Երկրորդ և Երրորդ, նաև Չորրորդ Հայք։ Այս է առաջին և ճշմարիտ պատճառը, որ մեր արևմտյան կողմը անվանվեց Առաջին և Երկրորդ, այլև Երրորդ ու Չորրորդ Հայք։ Իսկ ինչ որ ուրիշներն այս մասին ասում են հուսկան կողմերում՝ մեզ հաճո չէ, ուրիշներն ինչպես կամենան։

Այնքան հզոր ու անվանի դարձավ Արամը, որ մինչև այսօր, ինչպես ամենքին հայտնի է, բոլոր շրջակա ազգերը մեզ անվանում են սրա անունով։

[«Այլ որ ինչ յարևմուտս կոյս ընդ Տիասնեանսն է սորա գործ քաջութեան՝ ասել կայ մեզ առաջի։ Աստ յարևմուտս չարժեալ ի վերայ առաջնոյն չորիւք բիւրովք հետևակազօրու և երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկացուց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա։ Այլ քանդի զարևելեանն և զհարաւայինն նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ, Սիսականեացն զարևելս, և որք ի Կապմեայ տանէն՝ զԱսորեստանին՝ ոչ ինչ այնուհետև կասկած չփոթից ուստեք ունէր, Վասն որոյ յերկարեալ ժամանակս լինել յարևմուտս՝ պատահէ նմա Պայապիս Քաադեայն Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտոն և զՈվկիանու։ Որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով ի կղզի ինչ ասիական ծովուն։ Այլ իւր թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ և բիւր մի ի զօրացն ի վերայ աշխարհին, և ինքն դառնայ ի Հայս։

Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զբեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զԿիլիկայն դայն Պոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք։ Այլ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւք սլարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա։ Ըստ նմին

օրինակի ի անդեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանսն, դբագում անքնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ: Այս է առաջին և ճմարիտ պատճառն վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք: Իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանան՝ մեղ ոչ է հաճոյ. այլոց որչափ կամք իցեն:

Արդ սա այսպէս հզօր և անուանի եղեալ՝ յանուն սորա մինչև ցայսօր, որպէս ամենեցուն յայտնի է, որ չուրջ դմեօք աղդք զաշխարհս մեր անուանեն»]:

Խորենացու այս հատվածում, որը քաղված է, հավանորեն, Մար-Աբասյան աղբյուրից և ենթարկվել է գրական մշակու-թյան, կարող են, իրապես, ինչպես տեսնում ենք, պահպանված լինել հայ ժողովրդի աղոտ հիշողություններն իր ամենահին անցյալի մասին. հավանական կարելի է համարել ըստ իս, որ Արամի մասին այս պատմության մեջ արձագանք են գտել ո՛չ միայն Ուրարտուի հին բնակիչների ավանդությունները, այլև եկվոր արմենների:

Եթե ճիշտ համարվեն վերոհիշյալ գիտողությունները՝ կա-րելի է ընդունել, որ Մարկվարտի կարծիքը արիմների ու ար-մենների նույնության մասին զուրկ չէ որոշ հիմքերից: Այդ ենթադրությունը կարոտ է սակայն դեռ հաստատման նաև փաստական նոր տվյալների օգնությամբ:

Պետք է ասել, որ թեև վերոհիշյալ մեր հետևություններին ու ենթադրություններին մեջ կարող են լինել վիճելի կետեր, սակայն առարկություններն այդ կետերի դեմ բնավ չեն կարող խախտել արմենների ծագման մասին մեր ստացած հիմնական եզրակացությունը: Պարզված ու վերջնական կարելի է համարել ըստ իս արմենների լեզվի հնդեւրոպական լինելը, նրանց սերտ կապը թրակա-փոյուղիական ցեղերի հետ, նրանց գաղթը արև-մուտքից ու մուտքը Ուրարտուի հարավ-արևմտյան շրջանները Կասպպոդովկիայի և հետագա փոքր Հայքի վրայով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐՄԵՆՆԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԻ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՆԱԳՈՒՑՆ .ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

1.—Արմենների ճեղքադրի ուղիների մասին հին ու նոր կարծիքները:—
 2. Արմենների հնագույն գաղթավայրերը՝ Փոքր Հայքը, Ակիլիսները և Սուպիդիսիսը:—Աղձնիք է, մասնավորապես, այժմյան Սասունը մաս էր մեծ Հայքի:—3. Արմենների նոր գաղթավայրերի ստեղծագրական կառուցումը:—4. Հայկի ու Երուսաղեմի գաղթը ու ճարտարապետական մասերը:—Արմենների ավանդույթները ու խոսքերը:—5. Արմենների զինվորական ծառայությունները:—6. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—7. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—8. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—9. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—10. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—11. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—12. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—13. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—14. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—15. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—16. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—17. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—18. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—19. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—20. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—21. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—22. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—23. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—24. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—25. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—26. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—27. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—28. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—29. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—30. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—31. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—32. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—33. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—34. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—35. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—36. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—37. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—38. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—39. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—40. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—41. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—42. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—43. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—44. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—45. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—46. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—47. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—48. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—49. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—50. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—51. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—52. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—53. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—54. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—55. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—56. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—57. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—58. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—59. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—60. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—61. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—62. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—63. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—64. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—65. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—66. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—67. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—68. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—69. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—70. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—71. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—72. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—73. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—74. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—75. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—76. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—77. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—78. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—79. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—80. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—81. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—82. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—83. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—84. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—85. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—86. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—87. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—88. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—89. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—90. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—91. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—92. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—93. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—94. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—95. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—96. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—97. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—98. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—99. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—100. Արմենների գաղթը և նրանց կյանքը:—

Երբ էին արմենները մտել այժմյան Հայկական լեռնաշխարհը, որը դառնալու էր նրանց նոր հայրենիքը՝ այդ դեռևս հաստատուն կերպով որոշված չէ: Ենթադրում են սովորաբար, որ այդ կարող էր տեղի ունեցած լինել յոթերորդ դարի (նախքան մեր թվ.) մեծ իրարանցումների ու տեղահան գաղթումների ընթացքում, որոնք հետևանք էին կիմմերական ու սկյուրական արշավանքների, Սակայն այս ենթադրությունը, որ հավանական է թվում, դեռևս չէ հաստատված պատմական աղբյուրների փաստական տեղեկություններով:

Համեմատաբար ավելի հաստատուն կերպով են որոշված այն ճանապարհները, որոնցով արմենները մտել էին իրենց նոր հայրենիքը և տարածվել հետզհետե դեպի Արարատյան դաշտը և Հայաստանի մյուս շրջանները:

Հայադեռ պատմաբաններն ու բանասերները բոլորն էլ համաձայն են, որ արմենների առաջին հիմնական կայանը մինչև Ուրարտուի շրջանները մտնելը եղել է պատմական Կապադոկիա—

կիայի հյուսիս-արևելյան լեռնային երկիրը, որը դառել էր հե-
աադայում առանձին արմենական թագավորություն և նրանց
անունով կոչվում էր Փոքր Արմենիա կամ Փոքր Հայք։ Սակայն
տարբեր կարծիքներ են հայտնված արմենների տարածման մա-
սին այստեղից դեպի Այրարատ։

Գերմանական գիտնական Տոմաշեկը և, նրան հետևելով նաև
Հյուբշմանը, Խալաթյանցը, Տաշյանը և ուրիշները՝ արմենների
առաջխաղացությունը Փոքր Հայքից ենթադրում են Գալլ գետի
հովիտներով այժմյան Աստաղ և այստեղից դեպի վերին Նիփրա-
տի կողմերը և այնուհետև դեպի Այրարատ¹։ Ճիշտ պետք է հա-
մարել, ինչպես ներքև կտեսնենք, ո՛չ թե ընդունված ու դերիշ-
խող այս հին կարծիքը, այլ Մարկվարտի նոր բացատրությու-
նը², որը արմենների նվաճողական առաջադիմումը ենթադրում է
Աղձնիքից ու Տարոնից դեպի Արածանիի վերին հովիտները ու
այնտեղից դեպի Այրարատ։ Վերոհիշյալ գիտնականները, որոնք
արմենների ներընթացը դեպի Արարատյան դաշտը ենթադրել
են այժմյան Էրզրումի շրջանից՝ պարզապես աչքաթող են արել,
որ Գերշանը և Կարնո շրջանը, ինչպես վկայում է Ստրաբոնը
(XI, 14, 5), Արտաշես Ա-ը դրավել էր խալյուքներից ու
մոսսինոյկներից երկրորդ դարի առաջին կեսում մեր թվականու-
թյունից առաջ։ Ուրեմն, կարելի է ենթադրել, որ արմենների
նվաճողական տարածումը, ինչպես երևում է Ստրաբոնի վկայու-
թյունից, տեղի էր ունեցել ո՛չ թե Բարձր Հայքից դեպի Այրա-
րատ, այլ Այրարատից դեպի Բարձր Հայք։

Արմենների հնագույն գաղթավայրերը Հայկական լեռնաշ-
խարհում մատնանշված են Աղեքսանդր Մեծի ուղեկիցների՝
Կիրսիլոս Փարսալացու և Մեղիոս Լարիսացու վերև մեջ բերված
վկայություններում։ Նրանց հաղորդած տեղեկություններից
(տե՛ս Ստրաբոն, XI, 4, 8 և XI, 14, 12) երևում է, որ արմեն-
ները մտել էին իրենց նոր երկիրը Կապպադոկիայից ու Փոքր
Հայքից երկու ուղղությամբ։ Մի խումբը Փոքր Հայքից գնացել
էր Նիփրատ գետի հոսանքով դեպի վեր և բնակություն էր հաս-
տատել Ակիլիսոսում (Նկեղյաց դավառում), որն առաջ ենթարկ-

¹ S^{ts} Tomaszek, Die alten Thraker, 1893, I, էջ 4. Hübischmann, Armeni-
sche Grammatik, էջ 400. Халатянц, Очерк истории Армении, էջ 76. См.—
յան, «Ուսու՞նք դասական հայերէն լեզուի», էջ 18 և ուրիշ։

² S^{ts} Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, էջ 16։

ված էր Մոփքի իշխանության, իսկ մյուս խումբը, անցնելով Եփրատ գետն այժմյան Մալաթիայի արևելակողմում՝ մտել էր Խարբերդի դաշտը և հետզհետե տարածվել Արածանիի ու վերին Տիգրիսի լեռնահովիտներում։ Երկրորդ այս խումբը հաստատվել էր, գլխավորապես, ինչպես վկայում են Կիրսիլոսը և Մեղիոսը, «Միսպիրիտիս»-ում (ἐν τῇ Συσπριτίδοι, ասորեստ. արձան. šupria = Σουσπριτίς) մինչև Կալաբեն (Calacene) և Ադիաբեն (Adiabene)։

Միսպիրիտիսը գտնվում էր ըստ Մարկվարտի՝ հին Աղձնիքում, այժմյան Սաաունի արևմտակողմում, ուր նշանավոր կենտրոնավայրեր էին ասորեստանյան արձանագրություններում հիշատակված Կուլիմերին և Ուպումուն (բյուզանդական ժամանակաշրջանի Գղիմարը և Ափումը)։ Կալաբենի տեղը ենթադրում են այժմյան Խարուր-սուի հարավարևելքում, սրա և Մեծ Ջավ գետի միջև, իսկ Ադիաբենը գտնվում էր Կալաբենից հարավ՝ հյուսիսային Ասորեստանում։

Կիրսիլոսի և Մեղիոսի կարևոր տեղեկությունները, ինչպես ներքև կտեսնենք, հաստատվում են նաև Հերոդոտոսի ու Քսենոփոնի վկայություններով։ Այդ տեղեկությունները, որ միանգամայն արժանահավատ են, ցույց են տալիս, որ արմենական գաղթականությունը գրավել էր Եփրատ ու Տիգրիս գետերի մոտ իրարից անջատ երկրամասեր, Կապպադոկիայի հյուսիս-արևելքում և Հայաստանի հյուսիս-արևմուտքում՝ Փոքր Հայքը և Ակիլիսենը, իսկ Հայաստանի հարավում՝ Մոփքի, Աղձնիքի ու հին Կորճալքի առանձին շրջանները։

Հետաքրքիր է առանձնապես այն, որ արմենների այս դաղթավայրերը գտնվում էին միջազգային նշանակություն ունեցող երեք մեծ ճանապարհների վրա իշխող ու վերահսկող շրջաններում։

1. Ակիլիսենի միջով կամ մոտով էին անցնում Պոնտոսից Բարձր Հայք տանող ճանապարհները։

2. Մոփքը և Աղձնիքը իշխում էին ու վերահսկում Պարսից ծոցից Փոքր Ասիա գնացող հին արքայական մեծ ճանապարհի վրա։

3. Կալաբենը ևս ռազմական մեծ նշանակություն ուներ, որովհետև նրա մոտով էին անցնում Ուրարտուից Ասորեստան, Բաբելոն և Մեդիա գնացող հին ճանապարհները։

1 S. Markwart, Eranschahr Berlin, 1901, էջ 159 և Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, էջ 18.

ինկատի ունենալով արմենների գրաված դադթավայրերի ստրատեգիական բացառիկ կարևորությունը, ինձ թվում է, հավանական կարելի է համարել, որ արմենները վերոհիշյալ շրջաններում հաստատվել էին, ինչպես ուղիղ ենթադրել է Մարկվարտը¹, իբրև մեղացիների դաշնակից զինվորական դադութներ այս վերջինների համաձայնությունով:

Արմենական վերոհիշյալ դադութներից առանձին ուշադրության արժանի է ըստիս Աղձնիքում հաստատված դադթականությունը: Հին Աղձնիքը և, մասնավորապես, այժմյան Սասունը, ինչպես մատնանշված է իմ «Տիգրան Ներկորդը և Հոռոմ» աշխատության մեջ (էջ 98), գտնվել է ամենահին ժամանակներից սկսած ո՛չ թե Ծոփաց երկրի մեջ, ինչպես այդ կարծում են Հյուբշմանը և Մարկվարտը², այլ եղել է առանձին շրջան և գտնվել է Մեծ Հայքում: Այդպեղից էր, գլխավորապես, արմենական դադթականությունը տարածվել դեպի Հյուսիս, իջել Տարոնի դաշտը և, առաջ շարժվելով Արածանի գետի հովիտներով՝ անցել էր այժմյան Աղբի-Դաղ լեռնաշղթան ու դրավել նաև Արարատյան դաշտը:

Ուշադրավ է առանձնապես այն, որ հայերի նախահայրերի դադթի ու տարածման ուղին ցույց է տրված նաև Մար Աբասի ու Պորենացու մոտ Վանա լճի ու Տավրոսյան լեռների հարավակողմից դեպի Հյուսիս՝ դեպի Տարոն ու Հարթ և այնտեղից դեպի Այրարատ: Արդ՝ ինկատի ունենալով, որ այս խնդրում հայկական աղբյուրների վկայությունները հիմնականում համապատասխանում են Ստրաբոնի հաղորդած վերոհիշյալ տեղեկություններին՝ կարելի է ըստիս հավանական համարել, որ Հայկի ու նրա հաջորդների մասին առաստելական, հին ավանդությունը ունի պատմական որոշ հիմքեր:

Այդ ավանդությունը կարևոր եմ համարում մեջ բերել համաձայն Պորենացու տված ընդարձակ վկայության:

Պորենացի, գիրք Ա, գլ. Ժ և ԺԲ, էջ 33 և 37—38 (Տփղիս, 1913)՝

«Հայկը, չկամենալով հնազանդել նրան [Բեկին]՝ իր Արմանյակ որդու Բաբելոնում ծնվելուց հետո, չվում

¹ Տե՛ս Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation՝ էջ 14—16:

² Տե՛ս Հյուբշման, «Հին Հայոց տեղւոյ անունները», Վիեննա, 1907, էջ 77. Markwart, Eranschahr, Berlin, 1901, էջ 178:

գնում է Արարատի երկիրը¹, որը գտնվում էր Հյուսիսային կողմերում՝ իր որդիների, դուստրների և որդիների որդիների հետ, որոնք զորավոր մարդիկ էին՝ թվով մոտ երեք հարյուր հոգի, ու նաև այլ ընդոժինների ու իրեն միացած մարդկանց հետ և բոլոր իր տունուտեղով։ Նա գնում բռնակվում է լեռան մի ստորոտի մոտ դաշտավայր տեղում, ուր արդեն հաստատվել ու ապրում էին սակավաթիվ մարդիկ, որոնք տարածվել էին այստեղ նրանից առաջ։ Հայկը սրանց հնազանդեցնում է իրեն ու այնտեղ շինում է բնակության, ու կալվածների տեղեր և իբրև ժառանգություն տալիս է Արամանեկի որդուն՝ Կադմոսին»։ Այս արգարացնում է հիշատակված անդիր հին զրույցները։

Բայց ինքը, ասում է [Մար Աբասը], մյուս տեսցիների հետ գնում է դեպի Հյուսիս-արևմուտք և դալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտի մեջ և լեռնադաշտի անունը կոչում է Հարք, ցույց տալով դրանով, որ այստեղ բնակվողները հայրերն են Թորգոմի տան սերունդի, Շինում է նաև մի դյուղ և կոչում է իր անունով Հայկաչեն։ Հիշվում է և այստեղ [Մար Աբասի] պատմության մեջ՝ թե այս դաշտի հարավային կողմում մի երկայնանիստ լեռան մոտ դեռ առաջուց բնակվում էին սակավաթիվ մարդիկ, որոնք ինքնակամ հնազանդվեցին դյուցազնին։ Արգարացնում է և այս հիշատակված անգիր զրույցները։ Սրանից հետո [Հայկը], ապրելով դարձյալ բավական տարիներ՝ մեռնում է և հանձնում ամբողջ տոհմը իր Արամանեկ որդուն։ Իսկ Արամանեկը, վերցնելով բոլոր բաղմությունը՝ գնում է Հյուսիս-արևելք և դալիս իջնում է բարձրագագաթ լեռներով շրջապատված մի խոր դաշտավայր, որի միջով արևմուտքից անցնում էր կարկաջասահ մի գետ»։

[«Որում ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի Կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհարիւր, և այլովք

¹ Այս վկայության մեջ հիշատակված «երկիրն Արարադայ», ինչպես Մայանի է, գտնվում էր Կորդվաց աշխարհում. Համեմատե Fr. Murad, Ararat und Masis, Heibelberg, 1901, էջ 26—30։

ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղիւիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ չինէ անդառն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ: Այս արդարացուցանէ զանգիր ասացեալ զրոյցս:

«Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղիւիւն ընդ արեւմուտս Հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ: Եինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն»: Յիշի և աստանօր ի պատմութեանս՝ ի հարաւոյ կողմանէ դաշտին այսորիկ, առ երկայնանստիւ միով լեռամբ, բնակեալ յառաջագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդեալ դիւցազինն: Արդարացուցանէ և այս դասացեալ զրոյցս անգիրս: ...Յետ որոյ կեցեալ և այլ ևս ամս ոչ սակաւ՝ մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազնն Արամանեկայ որդւոյ իւրում: ...Իսկ Արամանեկայ ստեալ զամենայն բազմութիւնն՝ խաղայ յարեւելս Հիւսիսոյ, և երթեալ իջանէ ի խորին դաշտավայր մի, ի բարձրադաշտանց պարսպեալ լեռանց, դետոյ կարկաջասահի յարեւմտից ընդ մեջ անցանելով»:

Խորենացու այս վկայության մեջ հայ ժողովրդի նախահայրերի հնագույն գաղթավայրերը ցույց են տրված, ինչպես տեսնում ենք, երեք մեծ լեռների ստորոտներում, որոնք համարվել են Նոյի տապանի լեռներ և անվանվել են Արարատ կամ Մասիս, Այդ հին գաղթավայրերն են հաջորդական կարգով.

1. Տավրոսյան լեռնաշղթայի հարավ-արեւելքում գտնվող Քարդու-Արարադ լեռան ստորոտի մոտ դաշտավայրը.
2. Սիփան կամ Նեխ-Մասիք լեռան մոտ բարձրավանդակ լեռնադաշտը, որ կոչվում է Հարք.
3. Մեծ Մասիս լեռան ստորոտի մոտ գտնվող Արարատյան դաշտավայրը:

Մար-Արասյան ավանդության մեջ կա մի հետաքրքիր կետ ևս, որ ուշադրության քննարկելի: Ըստ այդ ավանդության Արարատյան դաշտը գաղթել ու գրավել էր ո՛չ թե ինքը Հայկ

1 Համեմատե Fr, Murad, Ararat und Masis, էջ 30 ևն. և Markwart, Südarmenten und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 202—232.

նահապետը, այլ նրա որդին՝ Արմենակը հոր մահից հետո: Շատ պարզ է, ուրեմն, որ Հայկի անունով Հայք են նախապես կոչվել: Վանա լճի շուրջը գտնվող այն շրջանները, ուր բնակություն էր հաստատել ինքը Հայկ նահապետը իր առհմով: Այդ միանգամայն պարզ է Մար-Աբասյան աղբյուրից քաղված Սեբեոսի Պատմության առաջին գլխի հետևյալ վկայությունից:

Սեբեոս, գլ. Ա, էջ 3 (Երևան, 1939)՝

«Եվ ապա Հայկը տվեց այն [Քարդու-Արարազի երկիրը] իբրև կալված ժառանգության իր Կաղմոս թոռին՝ Արամենակի որդուն: Եվ ինքը չվեց դնաց այնտեղից ևս դեպի հյուսիսակողմը ու բնակություն հաստատեց մի բարձրավանդակ դաշտավայրի մեջ և այդ դաշտի անունը կոչվեց Հարք՝ հարանց անունով: Իսկ երկրի անունը նույն պատճառով կոչվեց Հայք, որովհետև նրա մեջ էին ապրում հայազգիները»:

[«Եւ ապա ետ զնա Հայկն կալուած ժառանգութեան Կաղմեայ թոռին իւրում որդւոյն Արամենակայ: Եւ ինքն չըւեաց զնաց անտի ևս ի հիւսիսակողմն և չոգաւ բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միով. և կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք, յանուն Հարցն: Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայազամբք հանդերձ»]:

Որ իսկական Հայք համարվել է ըստ Մար-Աբասյան ալանդության, գլխավորապես, Հարքը¹, Տարոնը և Աղձնիքը, որոնք, իրապես, արմենական գաղթականության հնագույն գաղթավայրերն էին՝ այդ խիստ կարևոր մի նշումն է, որովհետև, ինչպես այժմ արևելագիտական նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, հենց ճշտվ Վանա լճի շուրջը գտնվող այդ շրջանները հիմնական մասերն էին՝ խեթական արձանագրությունների մեջ հիշատակված Հայասա (Hayasa) երկրի: Թեև արևելագետներից շատերը Հայասայի տեղը ենթադրում են Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում գտնվող Բարձր Հայքում², սակայն խեթական համապատասխան արձանագրու-

¹ Էին Հայաստանի գլխավոր ճանապարհները՝ իմ աշխատության մեջ (էջ 108—112) ես ցույց էի տվել, որ հայերի հին գաղթավայր համարված Հարքը համապատասխանում է Պլինիուսի հիշատակած Archene երկրին, որի մեջ գտնվել է Պեղտինդերյան քարտեզի Arachia կայարանը:

² Ed. Meyer, Geschichte des Altertums, II, I Abt., էջ 459. A. Захаров, Хетты и хеттская культура, стр. 106 և ուրիշ:

թյունների վկայութուններէց, որ մեջ են բերված Ֆորրերի մոտ՝ դժվար չէ հետեցնել, որ Հայասա է անվանվել, գլխավորապէս, Վանա լճի արևմտակողմում ու հյուսիսակողմում գտնվող երկիրը։ Խեթերի Թագավոր Մուրշիլ Բ-ը, ինչպէս մատնանշել է հենց ինքը Ֆորրերը¹, երբ 1335 թվին (մեր թվ. ա.) արշավանք էր սկսել Հայասա-Աղզիի դեմ՝ իր զորքերի համար հավաքավայր էր նշանակել Ենգալավան (համանորին, Ingilena, հուն. Ἰγγληνί, հայ. Անգեղ, այժմյան Էգիլ) և այստեղից Ալզի—Աղձնիքի վրայով դնացել էր գետի Վանա լիճը, որի ափին գտնվում էր Հայասա—Աղզիի² առաջին քաղաքը։

Հիմնվելով խեթագիտության նոր տվյալների վրա՝ գերմանական գիտնական Կրեյմերը մատնացոյց է արել, որ Հայքը պարզապէս նույնն է, ինչ որ Հայասան և որ հայ ժողովրդի անունը նախարմենական այն ցեղի անունն է, որը ժամանակի ընթացքում ձուլվել էր Հայասա—Հայք դադարած հնդեւրոպական արմենների հետ։ Հայ ժողովրդի նախահայրերն են, ուրեմն, ո՛չ միայն արմենները, այլև ոչ-հնդեւրոպական այդ ցեղը, որը հաստատվել էր Հայաստանի վերոհիշյալ շրջաններում խալդուերարտացիներից առաջ, Կրեյմերի բացատրությամբ, Հայասանվան —սա վերջապետությունը ծանոթ է իբրև փոքրասիական ածանց և «Հայա-սա»-ն նշանակում է, ինչպէս և «Հայա-ստան»-ը պարսկական ՍՈՒՄՈՒ ածանցով՝ «հայերի երկիր»։ Հայասայի արմատն է ըստ Կրեյմերի հայա- կամ սվելի ճիշտ հայո՝ (Հայք, հայոց), որ նախարմենական վերոհիշյալ ցեղի անունն է և համապատասխանում է հունական պատմագիրների հիշատակած Choi, Chai, Chaoi ժողովրդի անվան (տե՛ս Հեկատեյոս՝ Ստեփանոս Բյուզանդացու աշխարհագրական բառարանում և Դիոդորոս, XIV, 29)³։

Կրեյմերի ենթադրությունը Հայք, Հայաստան ու Հայասա

¹ Տե՛ս Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 41—42; Համեմատեա Forrer E. und Ungar, Alzi, Reallex. der Assyriologie, I, 1928, էջ 89։

² Ըստ Götze-ի Աղզին մի մասն էր Հայասայի, տե՛ս Խաչատրյան, էջ 42; Աղզին, ըստ երևութիւն, համապատասխանում է ասորեստանյան և ուրարտական արձանագրութունների Ալզի—Ալզիի-ին, այսինքն՝ հին Աղձնիքին։

³ Տե՛ս Paul Kratschmer, Der nationale Name der Armenier Haikh, Abzeiger der Akademie der Wissenschaften in Wien, philos.-hist. Klasse, 1932 № I—VII, էջ 1—9. Համեմատեա նաև «Հանդէս ամսօրեայ», 1933, հուլիս-օգոստոս, էջ 429—432։

անունների նույնության մասին, որ համապատասխանում է Մար-Աբասյան վերոհիշյալ ավանդությանը՝ կարելի է ըստիս համարել հավանական¹ :

Պարզվում է ըստ այսմ, որ հայ ժողովրդի կազմավորման ընթացքում եկվոր արմենների հետ համաձուլվել են ո՛չ միայն խաղճերը, ինչպես սովորաբար ենթադրվել է, այլև Հայկական լեռնաշխարհի նախախաղճյան հնազույն ցեղերը և, գլխավորապես, Հայաստյի ո՛չ-հնդերոպական բնակիչները, որոնցից արմենները ժառանգել են իրենց ու իրենց երկրի հայ ու Հայաստան անունները :

Հին Հայաստանի ու հարեան երկիրների նախախաղճյան ցեղերի ու լեզուների խնդիրը այժմ, ինչպես վերև ասացինք, հետզհետե լուսաբանվում է խեթագիտական նոր ուսումնասիրություններում : Բացի խաղճերից, որոնք հնդերոպական ծագում չունեն, Մերձավոր Արևելքում ապրել են, ինչպես այժմ պարզվում է, երկու հին նույնպես ոչ-հնդերոպական ժողովուրդներ՝ խատտերը կամ նախախեթերը և խուրրիները (խարրիները) կամ սուբարիները : Այս հին ժողովուրդների լեզուները ըստ Ն. Մառի տեղի խաբանության պատկանում են հաբեթական լեզվախմբին, որ համարվում է ազգակից հինկովկասյան լեզուներին :

Հայերը և հայերեն լեզուն, ինչպես երևում է նորագույն ուսումնասիրություններից, պատմական, բավական բարդ անցյալ ունեն : Արմենների Հայաստա—Հայաստան գաղթելուց հետո նրանց մարդաբանական տիպը և լեզուն չարոնակել են, անտարակույս, այստեղ ևս փոփոխություն կրել միաձուլման ընթացքում տեղական հին բնակչության հետ, որը պահպանել է, գլխավորապես, խատտական, խուրրիական և խաղճական ցեղախմբերին : Այս ազգացեղական շերտերի ճշգրիտ ու հաստատուն լուսաբանումը, կարելի է հուսալ, որ մոտ ապագայի խնդիր է : Օրավուր գաղափարը խեթագիտությունը հնարավորության կտա, հավանորեն, ո՛չ միայն որոշելու Հայկական լեռնաշխարհի հնազույն բնակչության զանազան ցեղախմբերը, այլև պարզելու նրանց լեզուները, կուլտուրան ու պատմությունը :

Արմենական գաղթականության և Ուրարտական երկիրների տեղական բնակչության միաձուլումը տեղի էր ունեցել, իհար-

¹ Հայք և Հայաստ անունների նույնությունը Կրեյմերից գեա ուսմ. մասնաշի է գերմանական գիտնական Կադ Ռաբբ, տեա նրա հոդվածը „Die Bedeutung des armenischen“, «Հանգէս ամսօրեայ», 1927, Թ. 11—12, էջ 743 :

կէ, աստիճանաբար, երկար դարերի ընթացքում, Այդ ձուլման միջոցին եկվոր արմենների հնդերոպական լեզուն, բնականաբար, ինչպես ասացինք, ենթարկվել էր տեղական լեզուների ազդեցութեանը: Ուշադրաւ է սակայն, որ արմեններեն լեզվի վրա, ինչպես ցույց են տալիս լեզվագիտական նորադույն աշխատութիւնները, խիստ մեծ է եղել ոչ այնքան խալդական, որքան նեսիտ-խեթերենի և հին նախախեթական լեզուների ազդեցութիւնը¹: Մատնանշում են, բացի այդ, որ եկվոր արմենները, որոնք կուլտուրապես ավելի ցածր մակարդակի վրա էին կանգնած, քան տեղացիները, ենթարկվել են սրանց զորեղ ու զերազանց կուլտուրայի ազդեցութեանը: Արմենները ժառանգել էին տեղացիներից, ինչպես ենթադրում է Ն. Մառը, նրանց խաղաղ կուլտուրան՝ երկրագործութիւնը, մետաղագործութիւնը, արհեստները, առևտրի հիմնական տարրերը և կրոնական պաշտամունքները²: Պատկանյանը, Նիկոլսկին և Ադոնցը ցույց են տվել նմանապես, որ Հայկի, Բելի, Արամի, Արա Գեղեցկի, Շամիրամի և Անդեղ Տորքի դյուցազնական առասպելները, որոնք պահպանվել են Մար-Աբասից քաղված Մովսես Խորենացու Պատմութեան մեջ՝ նախաարմենական ծագում ունեն, պատկանում են մասամբ Ուրարտուի բնակչութեան կրոնա-առասպելական ավանդութիւնների շարքին, մասամբ էլ իրենց մեջ պահպանել են աղոտ ու հեռավոր հիշողութիւններ Ուրարտուի պատմական անցյալի³:

Մեր այս դիտողութիւններից երևում է, որ արմենների թե լեզվի և թե կուլտուրայի վրա խիստ մեծ է եղել Հայկական լեռնաշխարհի նախաարմենական բնակչութեան ազդեցութիւնը և որ այժմյան հայերի նախահայրերն են՝ ո՛չ միայն հնդերոպական արմենները, այլև խալդերը և Ուրարտուի տեղական այլ հնադույն ցեղերը:

¹ Տես Գր. Ղափանցյացի աշխատութիւնները՝ Chetto-argumenta, Երևան, 1931—33, «К происхождению национального термина Kharthveli». Գիտական աշխատութիւններ Երևանի Պետ. Համալսարանի, հատոր XI, 1939 և ուրիշ⁴:

² Տես Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, Петроград, 1916, էջ 30:

³ К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб. 1881, М. Никольский, Клинообразные надписи Ванских царей, Москва, 1893, Ն. Ադոնց, «Տորք աստված հին հայոց», Հուշարձան, Վիեննա, 1911, էջ 389—394:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐՄԵՆԻԱՆ ԻՐԻՎ ԴԱՇՆԱԳԻՑ ՄԵԴԱՑԻՆԵՐԻ

1. Արժանազատ աղբյուրներն այս ժամանակաօրջանի պատճառով,—
2 Մեղացիները և նրանց գործադուր Կիսաբարի ժամանակ,—3. Մեղական մեծ
թագավորությունը իբրև ցեղերի ու երկրների դաժնակցությունը:—4. Արմեններն
իբրև մեղացիների դաժնակիցներ:—5. Քսենոփոնի Եվրոպայից դուրս
բնակությունը Արմենիայի ու նրա թագավորի մասին,—Արմենիան վասսալ ու դա-
ժնակից Ադրասակի և ապա Կիսաբարի,—Տիգրան և Սաբարիս,—Արմենների քա-
ղավորի գեթիորական ուժը և դրամական հարստությունը,—Արմենների յեթակաց
կռիվները խալդայների հետ,—Նրանց դաժնային ու յեթնային երկամասերի զոհ-
ածական կայր,—Արմենների ու խալդայների կենթ դաժնությունը,—Նրանց միաձու-
լումը:—6. Դավթի բանաստեղծական երկը Եմսրաց և հայոց պատմության մա-
սին:—7. Արմենների գրաված տերիտորիան այս ժամանակաօրջանում,—Նախկին
սխալ կառնիքներն այդ մասին:—7. Արմենների հնագույն թագավորությունը,—
Ինդո Տիգրան և Սաբարիս անունները իրանական են,—Իրանական աղբյուրնու-
նը արմենների լեզվի ու կուլթուրայի վրա սկսվել էր արդեն հնագույն այս օր-
ջանում:

Հայ ժողովրդի պատմությունը սկսվում է հնդեւրոպական
արմենների Հայաստանում, իրենց նոր հայրենիքում, հաստատ-
վելուց հետո Դրդ կամ Երդ դարերում մեր թվականությունից
առաջ: Նրա պատմության ամենահին շրջանը մնում է առայժմ
մութ ու գրեթե անհայտ:

Բանասիրական քննադատությունը պարզել է արդեն, որ
Մովսես Խորենացու մոտ Մար-Արասյան աղբյուրից քաղված
հայ ժողովրդի նախնական պատմությունը կարելի է առաջադնել
ընդունել իբրև առասպելախառն մի ավանդություն, որը չարա-
դրված է քրիստոնեական դարերում: Ուստի և միակ արժանա-
հավատ աղբյուրը այդ ժամանակաշրջանի պատմության մնում
են այն աղբյուրիկ ու հատուկոր տեղեկությունները, որ գրա-
նվում են Հերոդոտոսի ու Քսենոփոնի երկերում և պարսկական
բեկազիր արձանագրություններում:

Դրդ դարում մեր Թվականությունից առաջ, կիմմերների ու սկյութացիների արշավանքների հետևանքով, ինչպես վերև ասացինք, Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում տեղի ունեցան մեծ փոփոխություններ: Ջախջախված ու ուժասպառ եղած հին մեծ պետություններին հաջորդեցին նոր պետություններ և միաժամանակ տեղի ունեցան դանազան ժողովուրդների տեղադարձումներ ու գաղթումներ և էթնիքական նոր վերախմբավորումներ:

Հենց այս մեծ անցքերի ժամանակ հետզհետե կազմակերպվեց ու ակսեց ուժեղանալ յոթերորդ դարում Մեդական հզոր Թագավորությունը:

Մեդական ցեղերը, որոնք ապրում էին իրանական ըրարձրավանդակի հյուսիս-արևմուտքում՝ ասորեստանյան բևեռագիր արձանագրություններում հիշատակվում են սկսած իններորդ դարից (նախքան մեր թվ.): Այդ մանր ու բաժան ցեղերը, ինչպես վկայում է Հերոդոտոսը (I, 100—102), յոթերորդ դարի սկիզբներում համախմբեց ու կազմակերպեց իրրև ցեղերի դաշնակցություն Դեյոկեսը: Դաշնակցության կենտրոն դառավ Եկրատանան՝ այժմյան Համադանը:

Յոթերորդ դարի վերջին քառորդում (նախքան մեր թվ.), Կիաքսարի իշխանության ժամանակ, Մեդիան այն աստիճան զորեղացավ, որ վտանգավոր ախոյան դառավ հզոր Ասորեստանի: 605 թվին Կիաքսարը Բաբելոնիայի օգնությամբ վերջ դրեց Ասորեստանի Թագավորության, գրավելով նրա արևմտյան չորջանները և նրա վերջին ապաստանը՝ Կարքեմիշ քաղաքը: Ասորեստանի Նինուե մայրաքաղաքը դաշնակից զորքերը հիմնահատակ քանդել էին և հավասարեցրել էին հողի հետ արդեն 612 թվին: Ասորեստանի նվաճումից հետո, վեցերորդ դարի սկիզբներին (նախքան մեր թվ.), մեղացիները, հարձակվելով նաև Մւրարտուի վրա՝ հիմնովին կործանեցին նրա Տուշպա մայրաքաղաքը (Տոսպ=Վան): և հպատակեցրին իրենց նույնպես և այս Թագավորությունը: Մոտավորապես 590 թվին նրանք արդեն կարողացել էին մտնել Փոքր Ասիա և ուղում էին դրավել նաև ամբողջ Փոքր Ասիան: Բայց այստեղ նրանց համառ դիմադրություն ցույց տվեց լյուդիացիների հզոր պետությունը, որը քաղվել էր Հայիս գետի արևմտակողմում և խիստ ուժեղացել

1 СЕ В. В. Пиотровский, Урарту, Ленинград, 1939, էջ 36.

էր յոթերորդ դարում: Մեծ ճակատամարտը երկու մեծ թագա-
վորութիւնների միջև անդի ունեցած Հայիս գետի մոտ: Սակայն
արևել խաղաղման պատճառով (28 մայ. 585 թ.) ճակատամար-
տը ընդհատվեց և միջնորդութամբ Կիլիկիայի ու Բարեւոնիայի
թագավորների հաշտութիւն կնքվեց, որի համաձայն Մեդիայի
ու Լիուդիայի սահման դառաւ Հայիս գետը:

Ինչպես տեսնում ենք, վեցերորդ դարի առաջին կիսում
(մինչև մեր թվ.) Մեդիան դառել էր լայնածավալ մեծ թագա-
վորութիւն: Նրա կազմի ու ազդեցութեան շրջանի մեջ էին
մտնում Իրանի մեծագույն մասը Պարսքի հետ միասին, բուն
Ասորեստանը, Ուրարտուն և Փոքր Ասիայի արևելյան շրջանները
մինչև Հայիս գետը:

Մեդական թագավորութիւնը կենտրոնացած ու միասնական
պետութիւն չէր, այլ, պարզապէս, համադաշնակցութիւն էր
նվաճված ու հպատակեցված ցեղերի ու երկիրների, որոնք պար-
տաւոր էին իրենց նոր տերերին տուրք վճարել և նրանց զորք
տալ պատերազմների ժամանակ: Մեդացիների գերիշխանութիւնը
ենթարկված ժողովուրդներն ու երկիրները պահպանում էին
իրենց կրոնը, լեզուն, օրենքները և իրենց ներքին ինքնուրույն
կազմակերպութիւնը:

Ըստ երևույթին, երբ Մեդիայի Կիաքսար թագավորը արշա-
վել ու գրաւել էր Ուրարտուն և Փոքր Ասիայի արևելյան մա-
սերը՝ հնդեւրոպական արմենները Փոքր Հայքից ու Կապպադով-
կիայից արդեն եկած են եղել Արածանիի ու Տիգրիս գետի հո-
վիտները, Վեցերորդ դարի հենց առաջին կիսում նրանք հիշա-
տակված են Քսենոփոնի մոտ իբրև խալդ-ուրարտացիների հարե-
ւմաներ և իբրև հպատակ ու դաշնակից ժողովուրդ Մեդական
թագավորութեան: Այս տեղեկութիւնները հաղորդված են սա-
կայն ո՛չ թե Քսենոփոնի պատմական կամ աշխարհագրական եր-
կերում, այլ նրա «Կյուրոսի կրթութիւնը» (Κύρου παιδεία)
քաղաքական վեպում¹ (տես գիրք II, գլ. 4 և գք. III, գլ. 1—3),
որի մեջ Կյուրոս Մեծը դուրս է բերված որպէս արդար ու բարի
իշխանավորի տիպար:

Պատմաբաններից ոմանք ոչ մի արժեք չեն տալիս այս վե-
պին իբրև պատմութեան աղբյուրի: Սակայն անտիտեղի է ըստ-
իս, որ նրա մեջ հատկապէս արմեններին վերաբերյալ տեղեկու-

¹ Գրաբար թարգմանել է Հ. Հ. Գաբրելյանը - «Քսենոփոնական Կիւրո-
սի խրատու պատմութիւնը», Վիեննա, 1843.

Թյունները չեն կարող լինել մտացածին ու հնարովի և իրենց մեջ որոշ չափով արտացոլում են պատմական իրականությունը:

Քսենոփոնի այդ երկում արմենների մասին տեղեկությունները վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Մեդական թագավորությունը հարկադրված էր ղեջել իր գերիշխանությունն Անշանի թաղավոր Կյուրոսին (558—550 թ. նախքան մեր թվ.), որը առաջ մեղացիների վասսալն էր: Քսենոփոնն իր վեպի մեջ պատմում է, որ մեղացիների Աթահակ թագավորը մեռել էր խաղաղ մահով և նրան հաջորդել էր որդին՝ Կիաքսար Բ-ը, իսկ սրանից հետո իբր թե Մեդական թագավորությունը խաղաղ կերպով ժառանգել էր Աքեմենյան Կյուրոսը: Այս տեղեկությունը, ինչպես հայտնի է, ճիշտ չէ: Բաբելոնական ժամանակագրական մի արձանագրությունից, Նաբունիդի դշաններից, հայտնի է, որ Կյուրոսը պատերազմել էր Աթահակի դեմ և սրան հաղթել էր մեդական զորքի ապստամբության պատճառով, որը կալանավորել էր Աթահակին և նրան հանձնել էր Կյուրոսին (550 թ. մեր թվ. առ.): Այնուհետև մեղացիները հենց իրենք մտել էին կամովին պարսկամեդական նոր դաշնակցության կազմի մեջ և պարսիկների հետ միասին դառել էին իշխող ժողովուրդ:

Քսենոփոնը իր վերոհիշյալ վեպի մեջ պատմում է, որ Կիաքսար Բ-ի և Կյուրոս Մեծի ժամանակ Արմենիան եղել է առանձին փոքր թագավորություն՝ դաշնակից մեղացիների ու պարսիկների, Նա հիշում է նույնիսկ արմենների թագավորի երկու որդիների անունները, — մեծի անունը՝ Տիգրան և փոքրինը՝ Սաբարիս [Σάβρις, հավանորեն, Շավարշ]: Քսենոփոնի ասելով, արմենների դեմ պատերազմ էր վարել Կիաքսարի հայրը՝ Աթահակը: Սա՝ հաղթելով արմենների թագավորին՝ պարտաշնորհել էր նրան, որ իրեն տուրք տա ու զորք և շինեն ամրություններ: Արմենների թագավորի ղինվորական ուժը, պատմում է Քսենոփոնը, քառասուն հազար հետևազոր էր և ութը հազար հեծելազոր: Իսկ նրա կարողությունը՝ այն խնայողությունների հետ, որ ստացել էր իր հորից՝ ավելի քան 3000 տաղանդ էր, հաշված արծաթ դրամով (ըստ բյուզանդական-պարսկական տաղանդի կշիռը մոտ 32 կիլոգրամ էր, իսկ ատոլիկականինը՝ մոտ 26 կիլոգրամ)¹:

¹ Ընդունելով բարեյոնական-պարսկական տաղանդի արծաթի կշիռը մոտ 32 կիլ. 640 գր.՝ արմենների թագավորի հարստությունը իր կշռով

Արմեններէ թալալորը, ինչպես պատմում է Քսենոփոնը, լսելով որ Մեդիայի ու Բարեկոնիայի միջև պատերազմ է ծագել՝ ինքը ևս սկսում է սլատերաղմի պատրաստութիւն տեսնել մեղացիների դեմ և հակառակ դաշնադրութեան մերժում է տուրք տալ և օգնական զորք մեղացիների թալալորին, Այնուհետև Կյուրոսը՝ Կիաքսարի զորքերի ղեկավար հրամանատարը, որ արմենների թալալորի Տիգրան որդու մոտ ընկերն էր ու որսակիցը՝ ուղարկվում է հեծյալ ու հետևակ զորքով Արմենիա, որպեսզի հնազանդեցնէ այդ ապստամբ երկիրը և արմեններից պահանջն զորք և փող:

Քսենոփոնը վիպական հատուկ ոճով մանրամասն նկարագրում է, թե ինչպես Կյուրոսը մտնում է Արմենիա, գերում է թալալորի ընտանիքը և ստիպում նրանց անձնատուր լինել: Բայց արքայորդի Տիգրանի խնդիրքով նա նորից արմենների թալալորի հետ բարեկամութիւն է հաստատում և պատերազմի համար վերցնում է նրա զորքի կեսը՝ չորս հազար ձիավոր և քսան հազար հետևակ: Զորքի մյուս կեսը նա թողնում է երկրում, որովհետև արմենները չարունակ պատերազմ էին մղում հարեան խալդերի դեմ, որոնք Քսենոփոնի վեպում անվանված են խալդայնէր (Χαλδαῖοι):

Քսենոփոնի «Կյուրոպեդիա» վեպի այս տեղեկութիւնները միակ հիմնական վկայութիւններն են արմենների հնապույն անցյալի մասին վեցերորդ դարի առաջին կիսում (մեր թվ. առ.): Տեղեկութիւնների ոճից ու բովանդակութիւնից երեւում է, որ վեպի այս մասում Քսենոփոնին կարող էին աղբյուր ծառայած լինել տեղական ավանդութիւնները և հիշողութիւնները, որոնց նա հնարավորութիւն ունէր ծանոթանալու իր ու հույն զորքերի հայտնի նահանջի ժամանակ Արմենիայի միջով 401—400 թ. (նախքան մեր թվ.):

Որքան էլ կասկածանքով վերաբերվենք վերոհիշյալ վկայութիւնների մանրամասնութիւններին՝ ստույգ ու պատմական կարող ենք համարել այն, որ վեցերորդ դարի ոկիդոններին արմենները, որոնք դաշնակից էին ու հպատակ մեղացիներին թալալորին՝ արդեն անցած են եղել Եփրատ գետը և գտնվել են

հավասար կլինի $3000 \times 32,640 = 97.920$ կիլ. արծաթ դրամի: Իսկ եթե արծաթի և ոսկու հարաբերութիւնը ենթադրենք այդ ժամանակ 1:10, որ հավանական է, այդ հարստութեան դրամական արժեքը համապատասխան կլինի մոտ 12 միլիոն ոսկի ոտրլոն:

պատմական Հայաստանի հարավ-արևմուտքում: Կարելի է նմանապես ենթադրել, որ նրանք արդեն միացած են եղել և ունեցել են իրենց ցեղապետ-առաջնորդը, որին Քսենոփոնն անվանում է Թազավոր (թαυλαύς):

Միանգամայն պատմական պետք է համարել և առանձնապես հետաքրքրական Քսենոփոնի հաղորդած տեղեկություններն այն տնտեսական կապի մասին, որ գոյություն է ունեցել արմենների նոր երկրում դաշտային բնակավայրերի և լեռնային արոտատեղերի մեջ: Քսենոփոնը վկայում է, որ դաշտային շրջաններում ապրող արմենները խիստ շահադրուված էին, որպեսզի խալդեերը նրանց թույլ տան օգտվելու լեռնային արոտավայրերից: Իսկ չքավոր ու սակավահող խալդեերը, որոնք ապրում էին լեռներում՝ կարիք ունեին այն անմշակ ու արգավանդ հողերի, որոնք գտնվում էին դաշտավայրերում, որ գրավել էին արմենները:

Քսենոփոնի վկայություններից երևում է, որ մեղացիները և պարսիկները, օգտվելով երկրի ներքին այդ երկպառակություններից՝ առանց մեծ դժվարություն կարողացել էին հաստատել աթոսեղ իրենց իշխանությունը և այնուհետև ապահովել էին նախկին բնակիչների և եկվոր նորաբնակների խաղաղ համակցությունը: Եվ նրանք, պատմում է Քսենոփոնը, դաշինք կապեցին և համաձայնություն կան, որ իրաւունք ունենան իրար հետ խնամիրանալու ու իրար աղջիկ տալու, մշակելու միմյանց հողերը, օգտվելու միմյանց արոտատեղերից և ընդհանուր ուժերով պաշտպանվելու թշնամիներից, եթե իրենցից մեկը վտանգի ենթարկվեր:

Քսենոփոնի հաղորդած տեղեկությունները հարևան արմենների ու խալդեերի կենակցության ու հաշտության մասին այնքան կարևոր են ու հետաքրքիր, որ կարևոր եմ համարում թարգմանաբար մեջ բերել ամբողջությունը:

Քսենոփոն, «Կյուրոպեդիա», գիրք III, գլ 2, 17—24՝

«Իսկ խալդայները եկան և խնդրեցին Կյուրոսին, որ իրենց հետ հաշտություն կնքե: Եվ Կյուրոսը հարցրեց նրանց. «Արդդե ճիշտ չէ՞, ով խալդայներ, որ դուք այժմ նրա համար եք խաղաղություն ցանկանում, որովհետև կարծում եք, որ այլևի անսխալ կարելի է ապրել խաղաղության դեպքում, քան պատերազմի, քանի որ մեր ձեռքն են դրուելով բարձունքները. խալդայները դրական պատասխան

տվին: Եվ նա ասաց. «Ի՞նչ կասե՞ք, եթե խաղաղության պատճառով դուք ստանա՞ք և այլ բարիքներ»: «Ավելի ես,— ասացին,— կուրախանանք»: «Արդ՝ ճիշտ չէ՞,— ասաց Կյուրոսը,— որ դուք այժմ աղքատ եք, ինչպես ինքներդ գիտեք, լավ հողերի կարիք ունենալու պատճառով»: Նրանք հաստատեցին և այդ: «Արդյոք չէ՞իք ցանկալ,— ասաց Կյուրոսը,— որ դուք ևս վճարեի՞ք նույնը, ինչ որ մյուս արմենները, և թույլտվութիւն ստանայի՞ք մշակելու Արմենիայի հողերը, որքան որ կամենայիք»: «Եթե մենք համատարացած լինեինք,— ասացին խաղաղաները,— որ նրանք մեզ չեն նեղացնելու»:

«Իսկ դու, ո՞վ արմենների թագավոր,— ասաց Կյուրոսը,— չէ՞իր ցանկալ, որ քո այժմյան անմշակ հողերը դառնային պաղարեր, եթե մշակողները համաձայնեին վճարել քեզ մոտ ընդունված տուրքերը»: «Այդ,— ասաց արմենների թագավորը,— շատ մեծ արժեք կունենար, որովհետև խիստ կալիւլանար եկամուտը»:

«Իսկ դուք,— ո՞վ խաղաղաներ,— որ լավ սաբեր ունեք, արդյոք չէ՞իք թույլ տա, որ արմեններն օգտվեն նրանցից իբրև արոտատեղերից, եթե արածացնողները ձեզ համաձայնեն վճարել արդար տուրքը»: «Մեծ օգուտ կստանայինք,— ասացին խաղաղաները,— առանց աշխատելու»:

«Իսկ դու,— ասաց Կյուրոսը,— ո՞վ արմենների թագավոր,— արդյոք չէ՞իր ցանկալ օգտվել այս արոտներից, եթե խաղաղաներին մի փոքր օգուտ տալով՝ ինքդ ավելի մեծ օգուտ ստանայիր»: «Իհարկե, կցանկայի,— ասաց արմենների թագավորը,— եթե գիտենայի, որ կարելի է անվտանգ կերպով արոտներից օգտվել»: «Զէ՞ որ դուք անվտանգ կերպով արոտատեղերից կօգտվեք,— ասաց Կյուրոսը,— եթե դադարները լինեն ձեզ դաշնակիցը»: «Այդպես է», ասաց արմենների թագավորը: «Այլ վկա է աստված,— ասացին խաղաղաները,— որ մենք անվտանգ կերպով չենք կարողանա մշակել ոչ միայն նրանց, այլև մեր հողերը, եթե դադարները լինեն նրանցը»: «Իսկ եթե,— ասաց Կյուրոսը,— դադարները լինեն ձե՞ր դաշնակիցը»: «Այդպես,— ասացին նրանք,— իհարկե, մեզ համար լավ կլինի»: «Այլ վկա է աստված,— ասաց արմենների թագավորը,— մեզ համար»:

լալ չի լինի, եթե սրանք նորից դադաթները ստանան, մանավանդ եթե դրանք լինեն ամրացված», Եվ Կյուրոսն առաջ «Ուրեմն ես հետևյալ կերպ կանեմ՝ ձեզանից և ոչ մեկին դադաթները ես չեմ տա, այլ մենք կպահանջ նրանց մեր ձեռին, և եթե որևէ մեկը ձեզանից անարդարություն դործե՝ մենք անարդարություն կրողների կողմը կլինենք»:

Երբ երկու կողմն էլ այդ լսեցին՝ հավանություն տվին և ասացին, որ խաղաղությունը կարող է հաստատուն մնալ միայն այդ ձևով: Այնուհետև բոլորն էլ իրար հավատարմության խոստում տվին և համաձայնության եկան, որ երկու կողմն էլ իրար հանդեպ կպահպանեն իրենց ազատությունը. նրանք իրավունք կունենան փոխադարձ ամուսնության, իրար հողերի ու արոտատեղերի օգտագործման և կաշապանեն իրար ընդհանուր ուժերով, եթե իրենցից որևէ մեկին անարդարություն արվի: Արդ՝ այսպես կարգադրվեց այն ժամանակ ու նաև այժմ խաղաղների և Արմենիայի իշխանավորների միջև կնքված այն դաշինքը գեո մնում է անխախտ: Այս համաձայնությունը կնքելուց հետո՝ երկու կողմն էլ հոգարությամբ շինեցին իսկույն ամրությունը, որը լինելու էր ընդհանուր, և բերին այնտեղ պաշարեղեն»:

Արմենների և խաղաղ համակեցության հետևանքն այն եղավ, որ խաղերը և տեղական այլ ժողովուրդները հետզհետե միաձուլվեցին եկվոր արմենների հետ և հետագա դարերի ընթացքում գոյացավ այժմյան հայ ժողովուրդը:

Հետաքրքիր է ու ուշադրության արժանի, որ Ափահակի ու Կյուրոսի ժամանակակից Տիգրանի մասին, ինչպես դժվար չէ եզրակացնել Թրակացու քերականության Անանդուն հեղինակի (Պողոս մեկնիչի), ինչպես և Խորենացու վկայություններից՝ դոյություն է ունեցել բանաստեղծական մի երկ, որն Անանունի մոտ անվանված է «Դաւթեան քերթութիւն որ յաղագս Տիգրանայ» և կամ Դաւթի շարագրություն «մարաց և հայոց» պատերազմի մասին, իսկ Խորենացու մոտ, որին վերջինս աղբյուր է ծառայել՝ «Զորս հազներգութիւնք, զարգասաւորին ի բանս և դիմաստնոյն իսկ և ի մէջ իմաստնոց իմասանադունին»¹: Անա-

¹ Տե՛ս իմ աշխատությունը՝ «Յունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928, էջ 9 և 221—222. համեմատե՛նաև Ն. Աղոնց, Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին», Պետրոգրադ,

նունի քերականության մեկնության մեջ «Դաւթեան քերթութիւնից» բերված են հետևյալ երեք տողերը՝

«Եւ արդ ներգործող ի միտս երեւիւր առ խորհուրդս
փողարին

Մեծողոյ Տիւրանայ դեղանին Տիւրանունհի

Իւր ներածեալ կողաբաղ նաև ողջամիա աշխարհածուի»:

Դաւթի բանաստեղծական այս երկի մեջ, որը հիմնված է եղել հայ ժողովրդական երգերի վրա, ինչպես և Մովսես Խորենացու մոտ, Լուկուլլոսի ժամանակակից Տիւրան Մեծը չլիթված է Կյուրոսին ժամանակակից «Երվանդյան» կամ «Հայկազանց» Տիւրանի հետ: Բայց ուշագրավ է, որ այս հին հեղինակներին ևս հայտնի է եղել Քսենոփոնի հիշատակած Կյուրոսին ժամանակակից Տիւրանը ու նաև արմենական կամ «Հայկազանց» թաղավորության դոյությունը հնագույն այս ժամանակաշրջանում:

Ընդունելով, որ արմենները, լինելով մեղացիների ու խալդերի հարեան՝ արդեն Յ-րդ դարի առաջին կիսում (նախքան մեր թվ.) կարևոր դեր են կատարել իբրև Մեդական թաղավորության դաշնակիցներ՝ անհրաժեշտ է որոշել նաև արմենների զբաղված այն տերրիտորիան, որը Քսենոփոնի մոտ անվանված է Արմենիա: Վերև մենք արդեն ասանք, որ արմենների հնագույն դաղթավայրերը պատմական Հայաստանում Սարգոնի մոտ մեջ բերված Կիրսիլոսի և Մեդիոսի վկայություններում ցույց են տրված Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և հարավ-արևմուտքում՝ Ակիլիսենում և Սիսպիլիտիս-Շուպրիայում (մինչև Կալաբեն ու Ադիաբեն), որը դրսևում էր հին Աղձնիքում: Հին Մուրքում, Աղձնիքում և Վանա լճի հարավ-կողմում է մասնանշված արմենների երկիրը, ինչպես ներքև կրտեսենք, նաև Հերոդոտոսի պատմության ու Քսենոփոնի «Անարասիս»-ի կամ «Նահանջ բերուց» երկի մեջ: Սակայն, հակասակ հունական հին աղբյուրների այս վկայություններին պատմաբանական ու բանասիրական մի շարք երկերում¹, Խորենացու Պատմության հետևություններ, «Հայկազանց թաղավորության» կենտրոնական շրջանը մատնացույց է արվում Արարատյան դաշ-

1915, էջ 128—129, 138. Նաև «Մովսիսի Խորենացույ, Պատմութիւն Հայոց» Տիգրիս, 1913, I, գլ. ԻԱ, էջ 65:

1 S. K. Kevork Aslan, Études historiques sur le peuple arménien, Paris, 1909, էջ 67. Н. О. Эман, Армянск. см. Исследования и статьи, Москва, 1896, էջ 134 և ուրիշ:

տում՝ իսկ նրա մայրաքաղաքը՝ Արմավիրում։ Նույն կարծիքին են-
 եղել մինչև իսկ Ա. Գաբազաշյանը և Գր. Ոսկաթյանը, որոնք
 թեև ամենախիստ քննադատության են ենթարկել խորենացու
 Պատմության հայկազուններին վերաբերող մասը, բայց նույն-
 պես ընդունում են արմենների «Արարատյան թագավորության»
 գոյությունը մեզական-պարսկական ժամանակաշրջանում։ Այս-
 չփոթությանը, ըստ երևույթին, որոշ չափով առիթ է ծառայել
 այն, որ Նքեմիա մարգարեի (7-րդ դ. մեր թվ. առ.) հիշած
 «Այրարատեան թագավորութիւն»-ը (գլ. ԾԱ, 27) մեր հին պատ-
 մագիրները¹, և նրանց հետևությամբ նաև արդի հայագետներից
 չատերը՝ նույնն են համարել արմենների թագավորության հետ
 մինչդեռ այդ վիպական մեջ մատնացույց է արված ո՛չ թե
 արմեններին, այլ ուրարտացիների թագավորությունը։

Մեզական տիրապետության ժամանակ Արմենական թագա-
 վորությունը չէր կարող գտնվել Արարատյան գաղտում, որով-
 հետև այս հասգույն ժամանակաշրջանում արմենական դադթա-
 կանությունը դեռ նոր էր տեղավորվել Ծոփքում, Աղձնիքում,
 մասամբ նաև Կորճալքում։

Քսենոփոնի «Եյուրոպեդիա»-յի վերոհիշյալ տեղեկություն-
 ների մեջ առանձնապես հետաքրքիր է և այն, որ արմենների
 թագավորի որդիների անունները՝ Տիգրան և Սաբարիս (= Շա-
 վարշ)՝ իրանական են՝ և սչ արմենական։ Էմինը, հենվելով
 այս փաստի վրա և մատնանշելով նաև, որ խորենացու մոտ հայ-
 կազյան Տիգրանի որդու ու մյուս հաջորդների անունները ևս
 (Վահագն, Ներսեհ, Զարեհ ևն), մեծ մասամբ, պարսկական են՝
 ենթադրել է, որ այս ամբողջ դինաստիան, ըստ երևույթին,
 արմենական չէ, այլ պարսկական է⁴։

Այս ենթադրությունը չէ կարող ըստիա ճիշտ լինել, որով-
 հետև Քսենոփոնը, որը չորրորդ դարումն էր գրել (նախքան
 մեր թվ.) իր «Եյուրոպեդիա»-ն, խորենացու Պատմության հա-
 մեմատ, պարզ կերպով վկայում է, որ Տիգրանը, Սաբարիս—
 Շավարշը և նրանց հայրը եղել են արմեններ։

¹ Տե՛ս Գաբազաշյան, «Քննական պատմութիւն Հայոց», Ա., Թիֆլիս,
 1895, էջ 53, 54, 183, 189. Халатянц, Очерк истории Армении, Москва,
 1910, էջ 77:

² Համեմատե՛ս Խոսեմցի, I, գլ. ԻԲ, էջ 67 (Տիգրիս, 1913):

³ Տե՛ս Hübischmann, Armenische Grammatik, Leipzig, 1895, էջ 61 և 87:

⁴ Н. Эпик, Династический список Хайкидов. Москва, 1884, էջ 24—31:

Տիգրանի ու Սաբարիս—Շավարշի իրանական անունները
կարելի է այլ կերպ բացատրել: Ինչպես հայտնի է աղբյուրների
վկայութուններից, ցեղերի ու ժողովուրդների միավորումը
Մեդական թագավորության շուրջը կատարվում էր, մեծ մա-
սամբ, դաշնակցութամբ ու խնամությամբ: Ուստի միանգամայն
հավանական կարելի է համարել, որ մեդական ու պարսկական
թագավորական տոհմերը իրենց ու արմենների դաշնակցութունը
ամրացնելու համար աշխատել են կապվել նրանց հետ խնամեա-
կան կապերով և ամուսնացրել են արմենական թագավորների ու
թագավորազուհիների հետ իրենց ազնիվներին: Նման խնամու-
թյունների մասին վկայութուններ ունեն ո՛չ միայն Հերոդոտո-
սը և Քսենոփոնը, այլև Խորենացին, որի մոզ հիշատակված է
Երվանդյան Տիգրանի Տիգրանուհի քրոջ ամուսնությունը մեդա-
ցիների Աժդահակ թագավորի հետ:

Ընդունելով Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-յի վերոհիշյալ
վկայութուններն ըստ էության պատմական՝ կարելի է ըստիս
նույն աղբյուր վկայութուններից հետևել, որ արդեն վեցերորդ
դարի առաջին կեսում (մեր թվ. առ.) արմենները, կապված
լինելով մեդացիների հետ դաշնակցութամբ ու խնամությամբ՝
սկսել էին որոշ չափով ենթարկվել իրանական մշակույթի ու
պենցաղի ազդեցության:

ԱՐՄԵՆԵՐԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

1. Կյուրոս Մեծը և պարսկական աթաբեգությունը հիմնումը.—Արմենները դառնակեց Կյուրոս Մեծի։—2. Ապասամբությունները Պարսկաստանում Դարեն Ա-ի ժամանակ.—Արմենների ապասամբությունը.—Արմենների ազատությունը ըստ «Կյուրոպեղիա»-յի.—Բենիսուրի արձանագրության վկայություններն արմենների և արմեն Արախայի ապասամբությունների մասին։—3. Կոփների ընթացքը և վաղերը։—4. Պարսկաստանի պեռական վերակազմությունը Դարեն Ա-ի ժամանակ.—Սասանյանությունները, զորքը, առևտրի զարգացումը, դրամական ուժը և ճանապարհների կանոնավորումը։—5. Արմենները Դարեն Ա-ի հաջորդների ժամանակ.—Արմենիում Պարսից 13-րդ սասանյանության յի մասը.—Պարսկաստանի մեծ զորքի դրամական ու բնական հարկերը։—6. Արմենների օժանդակ զորամասի մոտակցությունը Դարեն Ա-ի ու Երա հաջորդների վաղած պատերազմներին։—Արմենների սպառազինությունը ըստ Հերոդոտոսի։—7. 18-րդ սասանյանությունը ըստ Հերոդոտոսի.—Նրա ցուցմունքներն արմենների հերի սահմանների ու թեղադրության մասին.—Արմենիայի միջով անցնող բաժանական ճանապարհը։—8. Հերոդոտոսի վկայությունը առևտրի մասին Արմենիայի ու Բաբելոնի միջև։

Մեղացիների տիրապետությունն Առաջավոր Ասիայում երկար չտևեց։ Արդեն 550 թվին (նախքան մեր թվ.), երեք տարվա կռիվներից հետո, Պարսից Կյուրոս թագավորը զբաղեց Նիքատանա մայրաքաղաքը և այնուհետև Մեդական թագավորության գերիշխանությունն տակ դրանովը երկիրները, նրանց թվում նաև Արմենիան, ճանաչեցին Կյուրոս Մեծի (550—524) գերիշխանությունը։ Քսենոփոնի «Կյուրոպեղիա»-յի վկայություններից կարելի է հետևել, որ Արմենական թագավորությունը դառնել էր այդ ժամանակ դաշնակից ու վասսալ Կյուրոս Մեծի, որին նա սրբաբարձր էր տալ տուրք և զորք։

Կյուրոս Մեծը, շարունակելով Կիաքսարի քաղաքականությունը՝ շուտով ինքը ևս անչափ ընդարձակեց պարսկական-մեդական թագավորությունը, 546 թվին նա ծանր պարտություն մատնեց լյուդիացիների Կրեսոս թագավորին և նվաճեց

Փոքր Ասիան մինչև Էգեյան ծովը: Իսկ 539 թվին նա դարձեց Բաբելոն քաղաքը և աիրեց նաև Բաբելոնական Թադավորությանը: Այս մեծ պատերազմներին մասնակցել էին, ինչպես իր «Կյուրոպեդիա»-յում հաղորդում է Քսենոփոնը, արմենների հեծելազորը և հետևազորը՝ Տիգրանի և Նմբասի սուաջնորդությամբ:

Կյուրոսին հաջորդեց նրա որդին՝ Կամբյուսը (529—522 թ. մեր թվ. առ.), որը նվաճեց նաև Եգիպտոսը: Սրա բացակայության ժամանակ, 522 թվին, Աքեմենյան Պարսկաստանի Թադավոր հայտարարեց իրեն մեղացի Գառմատա մոգը և հայտնեց, որ ինքը Կյուրոսի Բարդիյա որդին է: Նույն 522 թվին, Եգիպտոսից վերադառնալիս, վախճանվեց Կամբյուսը, իսկ Գառմատային գահազուրկ արեց և սպանեց Աքեմենյան Դարեհը պարսկական աղնավական տոհմերի մի քանի ներկայացուցիչների տղայացու թյամբ:

Այս խռովահույզ անցքերից հետո՝ Պարսից նոր Թադավոր Դարեհ Ա-ի (522—486 թ.) իշխանության հենց առաջին տարում, ապստամբեցին սրա դեմ և իրենց անկախ հայտարարեցին նախ Շոշաստանը և Բաբելոնիան ու ապա նաև Մեդիան, Արմենիան և այլ երկիրներ:

Արմենների 521—520 թթ. ապստամբությունը մանրամասն նկարագրված է Բեհիստունի բարձր ժայռի վրա (Քիրմանշահի մոտ) քանդակված Գարեհ Ա-ի թևեռազիր արձանագրության վկայություններով, որ զրված են երեք լեզվով՝ հին պարսկական, էլամական և բաբելոնական: Արմենիան, որ այդ արձանագրության մեջ հիշատակված է իբրև երկրի անուն՝ անվանված է «Արմինա», իսկ արմենները՝ «արմինիյա»:

Թե Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-յի և թե այս արձանագրության վկայություններից երևում է, որ արմենները եղել են ռազմիկ ժողովուրդ, ձգտել են ազատ ու անկախ լինել և, օգտվելով բարեհաջող հանդամանքներից, պարբերաբար ապստամբել են և աշխատել են թոթափել օտար տիրապետության լուծը: Հետաքրքիր է այս տեսակետից Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-յի մեջ Կյուրոսի ու արմենների Թադավորի հետևյալ խոսակցությունը:

Քսենոփոն, «Կյուրոպեդիա», դիրք III, գլ. 1, 10՝

«Ասա՛ ինձ,— հարցնում է Կյուրոսը,— պատերազմո՞ւ է իբր դու առաջ իմ պապի՝ Աստյուադեսի և մյուս մեղացիների

դեմ»։ «Այո», — ասում է նա։ «Հաղթված լինելով նրանից, համաձայնե՞լ էիր հարկ վճարել նրան, պատերազմի դնալ միասին, ուր որ հրամայե, և ամբողջներ չկառուցեի»։ «Այդպես է»։ «Արդ՝ ինչո՞ւ համար ո՛չ հարկ էիր տալիս, ո՛չ զորք էիր ուղարկում և կառուցում էիր ամբողջներ»։ «Որովհետև ես աղատության էի ձգտում. ինձ թվում էր՝ լավ կլինի որ և ինքս ազատ լինեմ և զավակներին և աղատություն թողնեմ»։

Արմենների խելագրության և ռազմունակության մի պարզ ցուցանիշ է նաև այն, որ նրանց ապստամբությունը Դարեհ Ա-ի զորավարները կարողացել էին ճնշել միայն հինգ ճակատամարտից հետո, որ տեղի էին ունեցել 521—520 թվերին։

Բեհիստունի արձանագրության արմեններին վերաբերող մասը, որ հայ ժողովրդի հնագույն պատմության կարևորագույն աղբյուրներից մեկն է՝ մեջ եմ բերում ամբողջությամբ։

«Դարեհ Թագաւորն ասում է. — Երբ ես Բաբելոնի մեջ էի գտնվում, ինձ դեմ ապստամբեցին հետևյալ երկիրները՝ Պարսկաստան, Շոշաստան, Մեդիա, Ասորիք, Նգիպտոս, [«Արմինա»?], Պարթևստան, Մարգիանա, Սատտագուշ (= Պենջար), Սագաստան»։

«Եւ [«Արմինա»?], ին ասում է. — Արդ՝ Արմենիա [«Արմինա»] ուղարկեցի մի արմեն [«արմինիյա»]՝ իմ Դադարշիշ անունով ծառային, և այսպես պատվիրեցի. — «Գնա և նվաճե այդ ապստամբ զորքը, որ ինձ չէ հպատակվում»։ Դադարշիշը դնաց Արմենիան նվաճելու։ Երբ նա եկավ Արմենիա՝ ապստամբները դուրս ելան Դադարշիշի դեմ նրան ճակատամարտ տալու համար։ Դադարշիշը ճակատամարտն ընդունեց։ Արմենիայի մեջ Զուզա [Zūza] անունով մի ավան վա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ։ Արամազդն ինձ օգնեց։ Շեդրհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թշնամու բանակից։ Թուրավահարա ամսի 8-ն էր [լուս Թուստիի՝ 19 ապրիլի 521 թ.², իսկ ըստ Կյոնիգի՝ 21

¹ Օգտվել եմ, գլխավորապես, Բամաշյանի հայերեն Թարգմանությունից, որը համեմատել եմ այլ Թարգմանությունների հետ. աես Կ. Բամաշյան, «Դարեհի արշաւանքն ի Հայաստան», Բանասեր, հատ. Ա., Պարիս, 1899, էջ 6—45. Դ. Халатович, Очерк истории Армении, էջ 95—98. Fr. W. König, Relief und Inschrift des Königs Darelös I, Leiden, 1939.

² Ամսաթվերը, որ կարող են վեճել լինել, մեջ ենք բերել ըստ Յուստ-

մայիսի 521 թ.], երբ ճակատամարտը տեղի ունեցավ: «Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երկրորդ անգամ հավաքեցին իրենց ուժերը և նորից դուրս ելան Դադարշիհի դեմ պատերազմի: Արմենիայի մեջ Տիգրա անունով մի բերդ կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդեն ինձ օգնեց: Շնորհիվ Արամազդի իմ բանակը թըշնամու բանակը հալածեց: Թուրավահարա ամսի 18 էր [ըստ Յուստիի՝ 29 ապրիլի 521 թ., իսկ ըստ Կյոնիգի՝ 31 մայ. 521 թ.], երբ ճակատամարտը տեղի ունեցավ»:

[Բաբելոնական բնագրի մեջ նշանակված են արմենների կորուստները՝ «թշնամին 546 սպանված թողեց պատերազմի զաշտում և Դադարշիհը 520 հոգի գերի վերցրեց»]:

«Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երրորդ անգամ հավաքվեցին և դուրս ելան Դադարշիհի դեմ պատերազմի: Արմենիայի մեջ Ուհյամա [ըստ Յուստիի՝ Uhyāma, ըստ Կյոնիգի՝ Hujawā]¹ անունով մի բերդ կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդեն ինձ օգնեց: Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ կոտորեց թըշնամի բանակից: Թադարաչի ամսի 9-ն էր [ըստ Յուստիի՝ 20 մայ. 521 թ., ըստ Կյոնիգի՝ 21 հունիսի 521 թ.], երբ ճակատամարտը տեղի ունեցավ: Հետո Դադարշիհը, հնազանդվելով իմ հրամանին՝ մնաց Արմենիայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի դեպի Մեդիա»:

«Դարեհ թագավորն ասում է.— այնուհետև Արմենիա ուղարկեցի Վահուսիսա անունով մի պարսկի, իմ ծառային, և այսպես պատվիրեցի.— «գնա՛, նվաճե՛ այդ ապստամբ զորքը, որ ինձ չէ հնազանդվում»։ Վահուսիսան [ըստ Կյոնիգի՝ Wōmisa] դնաց Արմենիան նվաճելու: Ապստամբները հավաքվեցին և դուրս ելան՝ Վահուսիսայի դեմ պատերազմի: Ասորեստանի մեջ իզալա [ըստ Յուստիի՝ Izāla, իսկ ըստ Կյոնիգի՝ Izalā]² անունով մի երկիր

տի և Կյոնիգի հայկումների. տես F. Justi, Geschichte Irans, Grundriss der Iranischen Philologie, Bd. II, 5 Lief., Strassburg, 1903, էջ 429. König, Reile und Inschrift des Königs Dareios I, էջ 43—5:

¹ Բերդի Ուհյամա անունը, որ ջարդված է պարսկական և բաբելոնական բնագրերի մեջ՝ պահված է էլամական բնագրում:

² Իզալա անունը անեղծ պահպանված է միմիայն էլամական բնագրի

1 կա. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արամազդն
1 ինձ օգնեց, Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ մարդ
սպանեց ապստամբների բանակից: Անամակա ամսի 13-ն էր
[ըստ Յուստինի՝ 18 հունվարի 520 թ., իսկ ըստ Կյոնիգի՝
31 դեկտ. 522 թ.], երբ ճակատամարտը տեղի ունեցավ:
[Բաբելոնական բնագրում մեջ է բերված նաև արմեն-
ների կորուստը՝ 2024 սպանված]:

«Դարեհ թագավորն ասում է.— Ապստամբները երկրորդ
անգամ հավաքվեցին և դուրս ելան Վահուսիսայի գետ պա-
տերազմի: Արմենիայի մեջ Աուտիյարա [ըստ Յուստինի
Autiyara, իսկ ըստ Կյոնիգի՝ Օտյարա] անունով մի
դավառ կա: Ծակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Արա-
մազդն ինձ օգնեց, Շնորհիվ Արամազդի իմ բանակը շատ
մարդ կոտորեց թշնամի բանակից: Թուրավահարա ամսի
վերջն էր [ըստ Յուստինի՝ 1 հունիսի 520 թ., իսկ ըստ Կյո-
նիգի՝ 12 հունիսի 521 թ.], երբ ճակատամարտը տեղի ու-
նեցավ: Հետո Դադարչիչը, հնազանդվելով իմ հրամանին,
մնաց Արմենիայում, մինչդեռ ես իմ նիզակը ուղղում էի
դեպի Մեդիա»:

[Բաբելոնական բնագրում ցույց է տրված նաև արմեն-
ների կորուստը՝ «նրանցից սպանված էին 2045 մարդ. և
դերի էին վերցված 2559 հոգի»]:

Ինչպես ենթադրում են Մարկվարտը, Խալաթյանը¹ և ուրիշ-
ները, արմենների այս ապստամբությունը կարող էր կապ ունե-
ցած լինել Բաբելոնիայի ապստամբության հետ, ուր Բաբելոնա-
կան թագավորական գահի թեկնածու էր համարում իրեն Արախա
անունով մի արմեն, Հալդիտայի որդին:

Բեհիստունի արձանագրության համապատասխան աղբյուր
վածքը ևս մեջ եմ բերում ընդարձակ բովանդակությանը.

«Դարեհ թագավորն ասում է.— Իմ Պարսկաստան ու
Մեդիա գտնված ժամանակ բաբելոնացիները երկրորդ ան-
գամ ապստամբեցին ինձ դեմ: Ապստամբեց Արախա անգա-

մեջ, Վալսրախը և Բանգը նույն տեղանունը կարդում են Իգիտուն. տես
F. Weissbach und W. Bang, Die altpersischen Keilschriften, Leipzig, 1893, էջ
18—19:

¹ Տես J. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, Zweites
Heft, Leipzig, 1905, էջ 166—167. Халатян, Очерк истории Армении, էջ
85 և ուրիշ:

նով մի մարդ՝ արմեն, Հալիլտայի որդին: Բաբելոնիայի մեջ Դուբայա անունով մի երկիր կա. այնտեղ ապստամբեց: Այսպես խոսեց և ստեց. «Ես Նարուզուդուրոսսորն եմ, Նարոնիդի որդին»: Բաբելոնացիներն ապստամբեցին ինձ դեմ և բռնեցին այս Արախայի կողմը, որը Բաբելոնը դրավեց և դառավ Բաբելոնի թագավոր»:

«Դարեհ թագավորն ասում է. — Ուստի Բաբելոն ուղարկեցի մի բանակ, որի հրամանատար կարգեցի Վինդաֆրոս անունով մի մեղացու, իմ ծառային: Այսպես պատվիրեցի նրան, — «Գնա՛ Բաբելոն և կոտորի՛ր այն ապստամբ բանակը, որ ինձ չէ ճանաչում»: Վինդաֆրոս դնաց զորաբանակի հետ Բաբելոնի: Արամադդն ինձ օգնեց, Շնորհիվ Արամադդի Վինդաֆրոսն նվաճեց բաբելոնացիներին և [նրանց] դևրի վեբցրեց»:

[«Մարկագանա ամսի 22-րդ օրն էր [ըստ Կյոնիլի՝ 2 նոյ. 521 թ.], հրե այս Արախան, որ ասել էր — «Ես Նարուզուդուրոսսորն եմ»՝ ձերբակալվից իր դավալիցների հետ միասին: Նրանք ինձ մոտ բերվեցին: Այնուհետև ես այսպես յճոնցի՝ Արախան և դիւսավոր իր դործակիցները պետք է Բաբելոնի մեջ ցից հանվեն: Ահա այսպես մեռան»] 1:

Այս արձանագրության մեջ մատնանշված են, ինչպես տեսնում ենք, Դարեհի զորավարների անընդհատ հաղթությունները: Սակայն այդ հավանական ու համոզիչ չէ: Ուշադրավ է նախ և առաջ, որ ապստամբների դեմ անհրաժեշտ է եղել վարել հինգ ճակատամարտ և նրանց հետ պատերազմել ավելի քան մեկ տարի: Բացի այդ, արձանագրությունից ընամ չէ երևում, որ առաջին երեք մարտերում Դադարշիչը հաղթած լինեք արմեններին: Ընդհակառակը, արմենները, ըստ երևույթին, իրենք էին հաղթել թշնամուն, Այդ հաջողություն է եղել, հավանորեն, պատճառը, որ Դարեհը հարկադրված է եղել նոր զորավար ու նոր բանակ ուղարկել արմենների դեմ, որոնք առաջացել էին մինչև Ասորեստան:

Արմենները, որոնք ձգտում էին ազատություն ձեռք բերել, ինչպես ենթադրում են պատմագետները², որոշ դաշնավորու-

1 Փակագծերի մեջ դրված հատվածը, որը պարսկական բնագրի մեջ ջարդված է, ավելացված է համաձայն էյամական և բաբելոնական բնագրերի:

2 Համեմատե K. Aslan, Études historiques sur le peuple armenien, Paris, 1909, էջ 71. Hübischmann, Armenische Grammatik, Leipzig, 1895, էջ 9 և ուրիշ:

Թյուն էին կաղմել Բաբելոնիայի և Թերեւս նաև Մեդիայի հետ։ Բայց ապստամբած երկիրներէց և ոչ մէկը չկարողացաւ թոթափել պարսկական լուծը և վերջնական հաղթությունը մնաց Դարեհի կողմը։

Ինհիստունի արձանագրութեան մէջ առանձին կարեորություն ունեն աշխարհաւրտկան այն վայրերի հիշատակումները, ուր տեղի էին ունեցել վերահիշյալ մարտերը։

Արմենների առաջին երեք կռիւները պարսից դեմ տեղի էին ունեցել, ինչպես տեսանք, Արմենիայի սահմաններում՝ Զուգա ավանի և Տիգրա ու Ուհյամա կամ Հոլյամա բերդերի մոտ։ չորրորդ կռիւի առիւթ էր ունեցել Արմենիայի սահմաններից շուրս՝ Ասորեստանի իզալա (կարգում են նաև Իզգիլա և Իզի-տու) երկրում, իսկ հինգերորդը՝ նորից Արմենիայի Աուտիյարա կամ Օտիյարա դավառում։

Մատնանշված այս հինգ պատմական հին վայրերի անունների ու տեղադրութեան ճշտամբ կորոշվի հարկաւ, թե ո՛րտեղ էր դառնում ապստամբած արմենների այն նոր հայրենիքը, ուր Դարեհ Ա-ի արձանագրութեան մէջ կոչվում է «Արմինա»։

Գերմանական գիտնական Ֆերդինանդ Յուստին իր «Իրանի պատմութեան» մէջ¹ Զուգա ավանի անունը զուգադրում է քուրդական այժմյան Զոդանի հետ և մատնացուցց է անում, որ նման անուն ունեցող մի տեղ գտնվում է նաև այժմյան Ջեղիբի մոտ։ Տիգրա բերդը նա նույնն է համարում այժմյան Տիլլ ամբուրութեան հետ Տիգրիս դետի ափին։ Իսկ Աուտիյարա կամ Օտիյարա դավառը համարում է այժմյան Գուրդիստանի Տիյարի շրջանը, որ գտնվում է Վերին Չաք գետի հովտում՝ Զուլամեր-կի ու Ռեանդուզի միջև։ Յուստինի այս ենթադրութիւններն քննողների են համարվել և մեջ են բերվում պատմագիտական ու այլ երկերում²։

Ուշադրութեան արժանի են Իզալայի և Աուտիյարայի մասին նաև Մարկվարտի և Սանտալճյանի բացատրութիւնները³, իզալա երկրի անունը Մարկվարտի ենթադրութեամբ համապատասխանում է Իզրլա (Izāla) լեռների անվան (այժմյան Տուր-

¹ *Seu Grundriss der Iranischen Philologie*, Bd. II, 5, էջ 426։

² Համեմատե *Χαρακτηρις*, Օթթը, էջ 86—88։ Դոլնս և Խաչ, *Պատմութիւն հին հայերի*, պր. 2, Թիֆլիս, 1909, էջ 84—85 և ուրիշ։

³ *See Markwart*, *Untersuchungen zur Geschichte von Eran*, II, էջ 167. *J. Sandaljian*, *Histoire documentaire de l'Arménie*, II, Rome, 1917.

Արդիին (լեռներին)։ Իսկ Առաքիյարա գավառի անունը Սանաա-
ճյանը համապատասխան է համարում Խորենացու Աշխարհա-
ցույցի Արտվանք («Այառուանք», «Ատրուանք»)՝ զավառի անվան,
որը դրոշմվում էր պատմական Հայաստանի Կործայք նահանգում։

Տեղանունների վերահիշյալ համեմատություններն ու նույ-
նացումները չէ կարելի ըստիս համարել հաստատուն և վերջ-
նական, Մեջ բերված ենթադրությունները կարող են դեռ ապա-
ցուցման նոր ու ավելի համոզիչ տվյալների օգնությամբ։ Սա-
կայն, ինձ թվում է, որ միանգամայն անվիճելի կարելի է ըն-
դունել, որ Զուղա, Տիգրա, Ուհյամա, Իգալա և Առաքիյարա
աշխարհագրական տեղերը և երկիրները գտնվել են Հին Ատրես-
տանի հյուսիսակողմում՝ պատմական Հայաստանի Աղձնիքում ու
Կործայքում և կամ նրանց հարևան շրջաններում, ուր, ինչպես
տեսանք, Հին Հունական աղբյուրները և հայկական ավանդու-
թյունը մատնացույց են անում հայ ժողովրդի նախահայրերի
հնազույն գաղթավայրերը։

Հին պարսիկների իշխանությունը, որ հաստատվել էր Ար-
մենիայում Կյուրոս Մեծի ժամանակ (550—529 թ. նախքան
մեր թվ.)՝ շարունակվեց այստեղ մոտ երկու հարյուր տարի
մինչև Աքեմենյանների թագավորության անկումը 330 թվին։

Դարեհ Ա-ի ժամանակ (522—486 թ. մեր թվ. առ.) Աքեմեն-
յան Պարսկաստանի բոլոր երկիրները, նրանց թվում նաև Ար-
մենիան, որոնք Դարեհի թագավորելուց առաջ, մեծ մասամբ,
ավելի անկախ էին ու ինքնուրույն՝ ենթարկվեցին սկսական ու
վարչական վերակազմության։ 522—519 թվերի ապստամբու-
թյուններից հետո Դարեհ Ա-ը հասկացել էր, որ թուլակապ ու
ասպակենտրոնացած Պարսկաստանն անհրաժեշտ է դարձնել կենտ-
րոնացած ու սերտ միացած պետություն, Ուստի նա ամբողջ
պարսկական պետությունը բաժանեց, ինչպես վկայում է Հերո-
դոտոսը, 20 մեծ շրջանների, որոնց կառավարությունը հանձնեց
հատուկ պաշտոնյաների, որ անվանվում էին սատրապներ (Հին
պարսկ. «խշաթրապա» = հաթր. «աշխարհապահ»)։ Սատրապ-
ները ենթարկված էին անմիջապես Դարեհի բարձրագույն իշխա-
նությանը։ Նրանք ունեին իրենց շրջաններում վարչական ու
դատական իշխանություն և նրանց ղյուսավոր պարտականու-
թյուններին մեկն էր նաև հարկերի հավաքումը։

1 Տես Ջուրբախ, «Հին Հայոց տեղւոյ անունները», Թարգմ. Պիեդիկ-
նյանի, Վիեննա, 1907, էջ 205։

Աղբյուրների վկայութուններից երևում է, որ շատ տեղե-
քում և, ըստ երևույթին, նաև Արմենիայում, նախկին տեղական
իշխանավորները, ենթարկված լինելով սատրապների վերահս-
կողությանը՝ պաշտանել էին իրենց նախկին որոշ իրավունքները
և իրենց կապը բնակչության հետ:

Զինվորական իշխանութունը Դարեհը հանձնարարել էր
հատուկ զորապետների, որ անկախ էին սատրապներից և ունեին
իրենց տրամադրության տակ սլաքակալան, տեղական ու վարձ-
կան զորքեր:

Աքեմենյան Պարսկաստանի տիրապետութունն Առաջավոր
Ասիայում տնտեսագիտական նորադույն երկերում՝ համարվում է
տնտեսական կանգնածի ու անշարժության մի ժամանակա-
շրջան: Բայց այդ, ինչպես ցույց ենք տվել «Հայաստանի առե-
տրի ու քաղաքների մասին» ուսերեն մեր աշխատության մեջ,
անտարակույս, սխալ է:

Պատմական աղբյուրների վկայութուններից պարզ երևում
է, որ բաժան ու թշնամի արևելյան մեծ պետութունների՝
Ասորեստանի, Բաբելոնիայի, Լյուդիայի և Եգիպտոսի՝ միավո-
րումը մեծապես նպաստել էր առևտրի ու փողային տնտեսու-
թյան զարգացման:

Աքեմենյանների ժամանակ արդեն դոյութուն ունեին առև-
տրական հարաբերութուններ ցամաքով ու ծովով Հնդկաստանի
հետ: Դարեհ Ա-ի հրամանով Նեղոս գետը Կարմիր ծովի հետ
միացնելու համար վերականգնել էին հին ջրանցքը, որը կառու-
յել էին Եգիպտոսի փարավոնները:

Փոխանակության ու առևտրի զարգացմանը մեծ չափով
աջակցած պետք է լինեին Դարեհ Ա-ի դրամական ռեֆորմը և
դրամների կշռի ու որակի բարելավումը, Առանձին հոյատարու-
թյամբ կանոնավորվել ու բարեկարգվել էր Դարեհ Ա-ի ժամա-
նակ ցամաքային հաղորդակցութունը ու ալպահովել էր նաև
ճանապարհների անվտանգութունը:

Աքեմենյան Պարսկաստանի տնտեսական այս զարգացումը,
որ առանձնապես նշանակալի էր Բաբելոնիայի և հին կուլտուրա-
կան երկիրների առևտրական ու արդյունաբերական կենտրոննե-
րում՝ չպետք է, իհարկե, դերադնահատել: Մեծադույն մասը

¹ Համեմատե *Макс Вебер, Аграрная история древнего мира, пере-
вод под редакцией А. М. Петрушевского, Москва, 1924.*

² Տե՛ս «О торговле и городах Армении в связи с мировой тор-
говлей древних времен», Ереван, 1930, էջ 5—8.

մյուս երկիրների ապրում էին դեռ առանձնացած և զրեթե մասնակից չէին անանասական այդ զարգացմանը: Ուստի և, ինչպես մանրամասն ցույց եմ տվել վերոհիշյալ իմ աշխատության մեջ¹, Աքեմենյան Պարսկաստանի տնտեսակարգը կարելի է բնորոշել, ընդհանրապես, իբրև ինական տնտեսություն:

Արմենիայի ու արմենների պատմական անցյալի մասին Դարեհ Ա-ի և նրա հաջորդների ժամանակ կարևոր տեղեկություններ հաղորդում են մեզ պատմության հայր համարվող Հերոդոտոսը (484—425 թ. մեր թվ. առ.) ու նաև Քսենոփոնը (մոտ 430—354 թ. մեր թվ. առ.):

Արմենների պատմաբանությունը, ինչպես տեսանք, պարսկեցիները վերջնականապես ճնշել էին 520 թվին: Արմենիան այնուհետև դառավ պարսկական սատրապություն և նրա կառավարությունը հանձնվում էր կամ պարսկական բարձր ազնվականության և կամ թալավորի մերձավոր ազնվականներին:

Հերոդոտոսը, Պարսկաստանի հարկատու շրջանները թվելիս (գիրք III, գլ. 93)² Արմենիան համարում է Պարսից տասերեք-ձորոգ սատրապության մի մասը:

«Պակտյուեիկեից, արմեններից և նրանց հարևաններից մինչև Եվֆրատյան ծովը, — առում է Հերոդոտոսը, — [Պարսկաստանը հարկ էր ստանում] 400 տաղանդ, 13-րդ շրջանն էր այս»:

Մատենաշված այս հարկը, ընդունելով պարսկական տաղանդի արծաթի կշիռը մոտ 32 կիլո 640 գր.³ այժմյան կշռով հավասար կլինի մոտ 13·056 կիլոգրամ արծաթ դրամի: Հուլյը պարսկական մեկ տաղանդ արծաթի դրամական արժեքը համապատասխան է համարում 6048 ոսկի մարկի [մոտ 3024 ոսկի ուլբրու]⁴: Ուրեմն՝ 400 տաղանդ հարկը հավասար կլինի մոտ 2·419·200 ոսկի մարկի կամ 1·209·600 ոսկի ուլբրու: Այս հարկագումարը, ինչպես վկայում է Հերոդոտոսը, վճարել են ո՛չ միայն արմենները, այլև Պակտյուեիկե երկիրը⁵ ու նաև արմենների մյուս հարևանները:

¹ Նույնը, էջ 7—8:

² S. H. Hultsch, Griechische und römische Metrologie, Berlin, 1882, 12 492—493:

³ Պակտյուեիկե երկրի տեղը ենթադրում են Վանա լճի հարավում, այժմյան Բոհոտանում. տես H. Kiepert, Lehrbuch der alten Geographie, Berlin, 1878, էջ 80: Այս ենթադրությունը, ինչ թվում է, չէ կարելի համարել հաստատուն ու վերջնական: Պակտյուեիկե տեղադրության ու անվան խնդիրը ջնդես որոշ չէ:

Բացի դրամական հարկադոււմարից Արմենիան պարտավոր է եղել ուղարկել Պարսից թաղավորին յուրաքանչյուր տարի 20·000 քուռակ:

«Երկիրը [Արմենիան],— ասում է Ստրաբոնը (XI, 14, 9),— ունի ձիերի համար շատ արոտներ, որոնք մեղականներից վատ չեն. այնպես որ նեսեական ձիերը, որ դործում էին Պարսից թաղավորները, այստեղ էլ էին անուցսւնվում, և Արմենիայի սատրապը Պարսից թաղավորին ուղարկում էր տարեկան 20·000 քուռակ Միթրայի տոնի համար»: Ինչպես և Դարեհ Ա-ի նախորդների ժամանակ, արմենները 519 թվից հետո ևս տալիս էին Պարսկաստանին հետևակ ու ձիավոր զորք: Արմենական օժանդակ այս դորամասը, ինչպես կարելի է եզրակացնել աղբյուրների վկայություններից, մասնակցել է, հավանորեն, այն բոլոր պատերազմներին, որ վարում էին Դարեհ Ա-ը և նրա հաջորդները սկյութացիների, հույների ու եգիպտացիների դեմ: Արմենները հիշատակված են, օրինակ, Քսերքսեսի զորաբանակի շարքերում, որն արշավելու էր Հունաստան (480 թ. նախքան մեր թվ.): Հերոդոտոսը վկայում է (VII, 73), որ այս արշավանքին մասնակցող արմենները լինված են եղել փոյուղիացիների նման և վերջինների հետ դառնում են Դարեհի փեսա Արաքսեսի հրամանատարության տակ: Նրանք ունեցել են իբրև զենք ու հանդերձանք՝ հյուսված սաղավարտներ, փոքր վահաններ, կարճ նիդակներ, տեղեր, սրեր և բարձր ձուլավոր կոշիկներ:

Ուշագրավ է առանձնապես, որ Հերոդոտոսի ցուցումները լիովին հաստատում են վերոհիշյալ մեր եզրակացությունը նախնական Արմենիա—Արմինայի տեղադրության մասին և արմենների գաղթավայրերը պարզ կերպով մատնանշում են բացի Փոքր Հայքից, հատկապես, Ծոփքում և Աղձնիքում: Հերոդոտոսի վկայություններից երևում է, որ նրա ժամանակ արմենները դրաված են եղել Հայկական լեռնաշխարհի միմիայն հարավային ու, դիտարկելով, հարավ-արևմտյան շրջանները, իսկ Արարատյան դաշտում այդ ժամանակ ապրել են սասպեյրները և ուրարտացիները: Այս վերջինները նրա մոտ անվանված են ալարոդներ:

«Մատթենները, սասպեյրները և ալարոդները,— ասում է

1 Տե՛ս Հեռոդ., VII, 73:

նա (III, 94), — հարկ էին վճարում 200 տաղանդ: Նրանք
կազմում էին 18-րդ սատրապությունը»:

Այս վկայությունն իրավամբ մի պարզ ապացույց է համար-
վում, որ պատմական Հայաստանի հյուսիսային շրջանները՝
Սպերը, Այրարատը և Ատրպատականը 5-րդ դարում մեր թվա-
կանությունից առաջ դառնում են Արմենիայի սահմաններից դուրս
և համարվել են առանձին սատրապություն:

Արմենների երկրի տեղադրության վերաբերող Հերոդոտոսի
կարեւոր վկայությունները, որ Հայաստանի պատմական աշխարհ-
հազրության համար ունեն խոշոր նշանակություն՝ թարգմանա-
բար մեջ եմ բերում դրեթե առանց կրճատումների:

1. Հերոդոտոս, Պատմություն, I, 72՝

«Մեդական և Լյուդիական թաղապետությունների մեջ սա-
ման էր Հալիս գետը, որը հոսում էր Արմենների լեռից
Կիլիկեցիների միջով»:

2. Նույնը, I, 180՝

«Նրա [Բաբելոն քաղաքի] միջով անցնում է մի մեծ և խոր-
ու արագ գետ, որի անունն է Եփրատ. նա հոսում է արմեն-
ների կողմից ու թափվում է էրյութրեական ծովը»:

3. Նույնը, V, 49՝

«Փոյուպիացիներին հարևան են կապադոքիացիները, որոնց
մեջ անվանում ենք սյուերիացիներ, սրանց հարևան են
կիլիկեցիները... Կիլիկեցիներին սահմանակից են արմենները,
և սրանք հարուստ են անասուններով, իսկ արմեններին՝
հարևան են մատինները»:

4. Նույնը, V, 52՝

«Կիլիկիայի և Արմենիայի սահմանը կազմում է նավարկելի-
մի գետ, որի անունն է Եփրատ: Արմենիայում դառնում են
15 կայարան հանդստյան տեղերով 56½ փարսախ տարածու-
թյան վրա. այնտեղ կա և մի բերդ: Արմենիայից Մատինեն
անցնելուց հետո այստեղ ևս դառնում են 3½ կայարաններ
137 փարսախ տարածության վրա»:

Այս վկայություններից առաջինը, որի մեջ մատնանշված է,
որ Հալիս գետը հոսում է Արմենների լեռից՝ վերաբերում է
Փոքր Հայքին, իսկ երրորդ և չորրորդ վկայությունները պարզ-
կերպով որոշում են Արմենիայի սահմանները, որը դառնում էր
Եփրատի արևելակողմում:

Հերոդոտոսի մոտ հին Կապադոքիայի արևելյան մասը

այսինքն՝ Մեկլտենեի (այժմյան Մալաթիայի) շրջանը՝ համարվում է Կիլիկիայի մաս։ Սրա ու հարավ-արևմտյան Արմենիայի միջև իբրև սահման ցույց է տրված Եփրատ գետը։ Այս գետի մոտից, ինչպես երևում է չորրորդ վկայությունից, 56½ փարսախ (մոտ 300—350 կիլոմետր) տարածության վրա Արմենիայի միջով անցել է Սարգեսից Շուշ դնացող Պարսից «արքայական» կոչվող մեծ ճանապարհը, որի ուղղությունը պետք է ենթադրել այժմյան Մալաթիայից Խարբերդի դաշտի միջով դեպի Տիգրիս գետն Ամիդ—Դիարբեքիի մոտ և այստեղից դեպի այժմյան Զեզիրե, որը գտնվել է, հավանորեն, մատիենների երկրում։

Ինչպես տեսնում ենք, Եփրատի արևելակողմում գտնվող Արմենիայի տեղադրությունը Հերոդոտոսի մոտ ևս ցույց է տրված Ստորին Արածանիի և Վերին Տիգրիսի շրջաններում՝ հին Մոփքում ու Աղմնիքում։

Առանձնապես կարևոր է ու հետաքրքիր Հերոդոտոսի մոտ նաև նրա մանրամասն վկայությունը առևտրի մասին, որը Եփրատ գետի հոսանքով տեղի էր ունենում Արմենիայի ու Բաբելոնի միջև։


Հերոդոտոս, Պատմություն, գիրք I, 194՝

«Այժմ ևս կալատմա, Թե ի՞նչն է, իմ կարծիքով, ամենից զարմանալին իրեն քաղաքից [Բաբելոնից] հետո սրանց մոտ։ Նրանց [ասորեստանցիների] նավերը, որոնք դետի վրայով զալիս են Բաբելոն՝ կլոր են և բոլորը կաշիապատ են։ Արմենների երկրում, որոնք բնակում են ասորեստանցիներից վերև՝ սրանք կտրում են ուռիներ, չինում նավի կողերը և պատում են սյուղ կաշվե ծածկով, տալով հատակի ձև. և ո՛չ նավի ետևի կողմն են ընդարձակում, ո՛չ էլ նրա առջևի կողմը նեղացնում, այլ տալիս են նրան վահանի նման կլոր ձև. լցնում են ամբողջ նավը ծղոտով, բեռնում են և թողնում, որ ի՞նչն դետն ի վայր։ Մեծ մասամբ նավերով տանում են գինիով լիքը արմավենի տակառներ, նավը վարում են երկու ղեկի օգնությամբ երկու կանգնած մարդ՝ մեկը նրանցից ղեկը քաշում է դեպի իրեն, մյուսը հրում է իրենից։ Այդ նավերը լինում են և շատ մեծ և ավելի փոքր։ Նրանցից ամենամեծերը տանում են հինգ հազար տաղանդ բեռ։ Ամեն

¹ Համեմատե իմ նախորդ աշխատությունները՝ «О торговле и городах Армении», էջ 14—16 և «Տիգրան Երկրորդը և Հռոմը», էջ 97 և 99:

մի նավում գտնվում է մեկ էջ, իսկ մեծ նավերում մի քանիսը: Բարևոյն հասնելուց և բնուր ծախելուց հետո՝ նրանք [ասորեստանցիները] վաճառում են նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշին բարձում են էջերի վրա և նորից գնում արմենների երկիրը, Որովհետև դեռևս ի վեր անկարելի է նավել զետի արապության պատճառով՝ ուստի և նրանք նավերը պարաստում են ո՛չ թե վայտից, այլ կաշվից: Իսկ երբ նրանք, էջերը քչելով, ետ են դառնում արմենների երկիրը, նույն եղանակով պատրաստում են ուրիշ նավեր: Այսպես են նրանց նավերը:

Հույն պատմագրի ուշագրավ այս վկայությունը, ինչպես մատնանել են հայաստանի առևտրի ու քաղաքների մասին



Ասորեստանյոց Եգիպտոսի գետի վրա

ուսերեն իմ աշխատության մեջ, սխալ է հասկացվել պատմագրիական զրեթե բոլոր նորագույն երկերում: Հիմնվելով այս վկայության վրա՝ պատմագետները կարծել են, որ առևտրի միջնորդներն Արմենիայի ու Բաբելոնի միջև, որը նկարագրված է Հերոդոտոսի մոտ, եղել են արմենները, Բայց, իրապես, Հերոդոտոսի բնավում պարզ ասված է, որ ապրանք էին փոխադրում Արմենիայից Բաբելոն ո՛չ թե արմենները, այլ ասորեստանցիները: Այս հնագույն ժամանակաշրջանում, ինչպես ցույց է տրված նույն իմ աշխատության մեջ՝ սոցիալական

¹ Տես «О торговле и городах Армении», էջ 10—11:

ՀերտաՎորումը դեռևս չատ թուլյլ էր արմենների մոտ և առևտուրը կենտրոնացած էր այդ ժամանակ, ղլխավորապես, սեմական ժողովուրդների ձեռքում:

Ինչպես ներքև կտեսնենք, արմենների տնտեսության հիմքը Հերոդոտոսի ու Քսենոփոնի ժամանակ անասնապահությունն էր՝ միացած նստակյաց հողագործության հետ:

ԿԼՈՒՍ ԶԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՐՄԵՆԻԱՆ ԸՍՏ ՔՍԵՆՈՓՈՆԻ

1. Հույն գործի նահանգի նահապարհն Արմենիայի միջով.— նորապիսի
նորապիսիություններն այդ մասին: 2.— Կենտրոնի գետը՝ սահման հարավ-արևելյան
Արմենիայի.— 3. Արմենիայի սահմանը էր Օրոնցապար:— 4. Արևմտյան Արմենիայի
կառավարիչն էր Տիրիֆազը:— 5. Արևելյան և Արևմտյան Արմենիայի նեղադու-
րյունը.— քրդահանգած սխալ նորապիսիություններն այդ մասին.— արմենները դեռ-
ևս չէին մեկ Արտաշատի դառն:— 6. Հայկական լեռնաշխարհում ապրող ար-
մենների հարևան ճին ցեղերը.— կարգուխմերը.— խալդայները.— մարդերը.— իսլա-
յուրները.— ռադիսները, փասիսները և այլ ցեղերը:

Արմենիաների ու նրանց երկրի մասին Ալեքսանդրի Պարսկաստա-
նի ժամանակաշրջանում միակ ու ամենակարևոր աղբյուրը Քսե-
նոփոնի «Անաբասիս»-ն է (=«Արշավանքը»), որի մեջ նկարա-
դրված է Քսենոփոնի ու Տասը հազար հույն զորքի վերադարձը
Խաբեղունի մոտից Արմենիայի ու Տրապիզոնի վրայով Հունաստան
(401—400 թթ. նախքան մեր թվ.): Հունական զորքն օղնու-
թյան էր զնացել Կրտսեր Կյուրոսին, որն ապստամբել էր իր
հորը՝ Արտաքսերքսես Բ-ի դեմ (404—358 թ. մեր թվ. առ.),
և վերադառնում էր հայրենիք Կունաքսայի մոտ տեղի ունեցած
անաջող ճակատամարտից հետո: Քսենոփոնի հաղորդած տեղե-
կություններն Արմենիայի մասին միանշանակաբար արժանահավատ
են ու վստահելի, որովհետև նա ինքն անձամբ եղել է Արմենիա-
յում և նկարագրել է այս երկիրն իբրև ականատես:

Այդ տեղեկությունները վերաբերում են Արմենիայի այն
չրջաններին, որոնց միջով անցել էին հույները: Ուստի և կարե-
վոր է, ամենից առաջ, որոշել Քսենոփոնի և հույն զորքերի
նահանջի ճանապարհն Արմենիայի վրայով:

Նահանջի այդ ճանապարհը, ղեքախտաբար, դեռևս վիճա-
քանությունների առարկա է և վերջնականապես դեռ չէ պարզված:
Պատմական ու աշխարհագրական հին ու նոր երկերում այդ

մասին հաղորդվում են տարբեր, մեծ մասամբ, չփոթ ու հակասական տեղեկություններ, և այս կարևոր խնդիրը կարոտ է դեռ նոր ու լուրջ ուսումնասիրության:

Մինչ այդ՝ մեջ ենք բերում եվրոպական պատմագետների ու աշխարհագրագետների նորագույն ենթադրություններն այդ մասին, որ համարվում են հավանական:

Ըստ Քսենոփոնի՝ նահանջող հելլեն զորքը մտել էր Արմենիա, անցնելով Կենտրիտես դետը, այժմյան Բոհտան-սուն, որը Արմենիան բաժանում էր կարդուխների երկրից: Լեման-ձառուպտը, որը հենվելով Քսենոփոնի հաղորդած տեղեկությունների վրա՝ նահանջի ճանապարհը մանրամասն ուսումնասիրել է տեղում, — ենթադրում է¹, որ հույները Կենտրիտես դետն անցել էին այժմյան Թիլի հյուսիսակողմում գտնվող Քանիմիրի դյուղի մոտ:

Հավանական է համարվում, բացի այդ, որ Կենտրիտես դետը անցնելուց հետո հույները դնացել էին դեպի հյուսիս և Տավրոսյան լեռներով իջել էին Մշո դաշտը ու հասել մինչև Տելեբոաս դետը, որը Մարի-լարաբ համապատասխան է համարում հին Մեդ (այժմյան Կարասու) գետին²:

Շարունակելով իրենց ճանապարհը Տելեբոաս գետի մոտից՝ նրանք դնացել էին վեց օրվա ճանապարհ, 30 փարսախ, և հասել մինչև Նփրատ դետը, որն անցել էին, թրջվելով մինչև պորտ: Հույները լսած են եղել, որ այդ տեղից հեռու չեն Նփրատի ակունքները:

Գերմանական գիտնականները, որ մանրամասն ուսումնասիրել են հույն զորքի նահանջի ճանապարհը, ենթադրել են, որ Քսենոփոնի մոտ հիշատակված Նփրատն Արևելյան Նփրատն է՝ հին Արածանին: Գիտնականների մի մասի կարծիքով, Մշո դաշտից հույները շարունակել էին իրենց ճանապարհը դեպի հյուսիս կամ հյուսիս-արևելք և, անցնելով Նփրատ—Արածանին՝ ուղղվել էին դեպի Ունուսի դաշտը և այստեղից Կարնո շրջանը, իսկ մյուս մասի կարծիքով՝ հույները Մշո դաշտից մտել էին Մանազկերտի շրջանը, դնացել էին այստեղից դեպի հյուսիս և

¹ S. C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Bd. I, Berlin, 1910, էջ 340—352.

² S. Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, Philologus-X, Heft 1, էջ 236.

Ֆիբրատ—Արածանին անցել էին այժմյան Ղարաքլիսի մոտ ու Ղուբս եկել Ալաշկերտի դաշտը:

Հռոմեական հին աշխարհագրագետի ուսումնասիրությունն ինձ հիմք էր ծառայել ենթադրելու, որ հույները Մանազկերտի շրջանից գնացել էին ո՛չ թե դեպի Ղարաքլիս, այլ քարտեզում նշանակված Ծումբ—Դիդեմ հաղորդակցությունից դուրս դեպի Դիադին—Բագավանի շրջանը, որը, հավանորեն, կազմում էր այդ ժամանակ Արմենիայի հյուսիս-արևելյան սահմանը:

Նահանջող հույն զորքի ճանապարհը Բագավանի կողմերից մինչև Տրապիզոն լուսարանված է իմ «Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին» նորագույն աշխատության մեջ¹: Նրանց ճանապարհի շարունակությունը ես ենթադրել էի այստեղից հետևյալ ուղղությամբ,— Ալաշկերտի դաշտի և Դելիբաբայի վրայով դեպի Պասինսու գետը, որը Քսենոփոնի մոտ անվանված է Փասիս, այստեղից դեպի Օլթիի շրջանը, ուր գտնվում էր տառիսների երկիրը, և այնուհետև Սարիղամիշի շրջանով և Կարսի հարավակողմով դեպի Կաղզվանի կողմերը և Հարբաղոս գետը՝ այժմյան Արաքս—Արազը:

Հարբաղոսի նույնացումը Արազ գետի հետ հնարավորություն էր տվել ինձ Քսենոփոնի մոտ հիշատակված «մեծ, հարուստ և բազմամարդ» Գյումնիաս քաղաքի տեղադրությունը որոշելու սկյուլթենների երկրում՝ այժմյան Գյումրի—Լենինականում: Այստեղից հույների ճանապարհը մինչև Տրապիզոն որոշվում է միանգամայն բավարար ճշտությամբ: Լենինական—Գյումրիի մոտից նրանք գնացել էին՝ Զարիշատի շրջանի միջով և Արգահանի հարավակողմով դեպի Ճորոխ գետը և այնտեղից մակրոնների ու կոլխերի երկիրների միջով ու դժվարանցանքի լեռնային տեղերով դեպի Տրապիզոն:

Քսենոփոնն Արմենիան անվանում է ընդարձակ ու բարեկեցիկ երկիր: Նրա ժամանակ Արմենիայի սատրապն է եղել Օրոնտասը (Ὀρόντας=«Երուանդ»): Սա ծագում էր, ինչպես երևում է Ստրաբոնի մի վկայությունից (XI, 14, 15)՝ պարսկական բարձր ազնվականության Վիդարնայի սերունդից, որը դա՛հ էր բարձրացրել Դարեհ Ա-ին:

¹ Տես «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», Երևան, 1936, էջ 37—40:

² Երևան, 1944 թ.:

«կարդուները երկիրն անցնելուց հետո, — վկայում է Քսենոփոնը¹, — ասում էին, որ [հույները] կզան Արմենիա, որը մեծ է ու հարուստ և զտնվում է Օրոնտասի իշխանության տակ»:

Թեև պատմագիտական բոլոր դերքե երկերում մատնանշվում է, որ Արմենիան Քսենոփոնի ժամանակ ունեցել է երկու սատրապ², սակայն մեջ բերված այս վկայությունից կարելի է թերևս հետևցնել, որ ինչպես Հերոդոտոսի, նույնպես և Քսենոփոնի ժամանակ, Արմենիան ունեցել է, հավանորեն, միայն մեկ սատրապ:

Վերահիշյալ երկերի մեջ բերված հետևություններից է ծառայել, անշուշտ, այն, որ բացի սատրապ Օրոնտասից Քսենոփոնի մոտ հիշատակված է նաև Արեմսյան Արմենիայի—Տավրոսյան լեռների հյուսիսակողմում զտնվող արմենական շրջանների—առանձին կառավարիչը, Տիրերադը, որին համարել են Արմենիայի այս մասի սատրապ: Կարելի է սահայն ենթադրել, որ այս Տիրերադը, որը Քսենոփոնի մոտ (IV, 4, 4) անվանված է Արեմսյան Արմենիայի «հյուպարքոս» (ὑπαρχος), այսինքն՝ փոխկառավարիչ, եղել է, հավանաբար, Օրոնտաս սատրապի օգնականը: Ինչպես վկայում է Քսենոփոնը, Տիրերադը Պարսից Թադալոր Արտաքսերքսես Բ-ի բարեկամն էր և ուներ Պարսից Թադալորին ձի նստեցնելու հատուկ արտոնություն (IV, 4, 4)³: Նույն այս Տիրերադը, ասում է Քսենոփոնը «Անաբասիս»-ի վերջաբանում (VII, 8, 25), կուսակալն էր Փասիանների և Հեսպերիտների:

Ենթադրելով որ Քսենոփոնի ժամանակ Արմենիան վարչականապես բաժանված է եղել երկու մասերի՝ արևելյան և արևմտյան, պատմագետները, իմ կարծիքով, սխալ են որոշել արանց տեղերը: Առնցքը, օրինակ, կարծում է, որ Քսենոփոնի

¹ «Անաբասիս», գր. III, գլ. 5, 17:

² Տես Գաբազաբյան, «Քննական պատմություն Հայոց», Ա, էջ 67. Хачатрян, Очерк истории Армении, էջ 92. Լ. Կիլցեր, «Համառոտ պատմություն Հայոց», Թարգմ. Գալեմարյանի, էջ 7. Tournebise, Histoire politique et religieuse de l'Arménie, էջ 760 և ուրիշ: Որ Արմենիան Քսենոփոնի ժամանակ ունեցել է միայն մեկ սատրապ՝ այդ մատնանշված է նաև Լեոյի մոտ՝ «Հայոց պատմություն», հատ. Ա., Թիֆլիս, 1917, էջ 331:

³ Քսենոփոնի վկայությունները Օրոնտասի և Տիրերադի մասին շփոթված են ու սխալ են մեկնված պատմագիտական մի շարք երկերում: Վիդարայի սերունդից էր ծագում ունեցող Տիրերադը, ինչպես մատնանշում են Գաբազաբյանը, Մալաթյանը և ուրիշները, այլ Օրոնտասը:

հիշատակած Արմենիայի արեւելյան ու արեւմտյան մասերը համապատասխանում են, իսկապես, Աքեմենյան ժամանակաշրջանի վերոհիշյալ 13-րդ և 18-րդ սատրապություններին¹։ Այդ, իհարկե, ճիշտ է։ Հերոդոտոսի ժամանակից հետո մինչև Քսենոփոնը սասպեյրներին, ալարոդներին և մատիեններին երկիրը չէր կարող, սնչուչւտ, դառած լինել Արեւելյան Արմենիա։ Վերջինս, ինչպես շեփար չէ կռահել Քսենոփոնի վկայություններից, ըստ երևույթին, գտնվում էր այդ ժամանակ Տավրոսյան լեռների ու Վանա լճի հարավակողմում։ Սխալ է, անտարակույս, նաև Լևոյի ենթադրությունը², որ իբր թե Արեւելյան Արմենիան պարունակում էր իր մեջ Արածանիի վերին հովիտը (Ալաշկերտը, Դիադինը)։ Ճիշտ չէ ըստիս նաև Գեորգ Ասլանի ենթադրությունը, որը Արեւելյան Արմենիա է համարում Արաքս գետի ավազանի շրջանները, իսկ Արեւմայան Արմենիա՝ Եփրատ գետինը³։

Ինկատի ունենալով արմենների վերև մատնանշված դադթավայրերը, ինձ թվում է, կարելի է ենթադրել, որ Քսենոփոնի ժամանակ Արեւելյան Արմենիա է համարվել, հավանորեն, Տավրոսյան լեռների ու Վանա լճի հարավակողմում գտնվող արմենական երկիրը, իսկ Արեւմտյան Արմենիա՝ նույն լեռների հյուսիսակողմում գտնվող Արածանիի հովիտները և Մշո դաշտը մինչև Փոքր Հայք ու Սև ծով։

Արմեններն այս ժամանակաշրջանում դեռևս չէին անցել Արարատյան դաշտը և այնտեղ դեռ ապրում էին սասպեյրները, ալարոդները և հին բնիկ ցեղերը։ Արմենների երկիրը, ըստ երկվույթին, հասնում էր հյուսիս-արևելքում մինչև Բագրևանդ ու Ծաղկոտն։

Քսենոփոնի ժամանակ Հայկական լեռնաշխարհի դանադան կողմերում բացի արմեններից ապրել են այլևայլ ցեղեր, որոնց մի մասը հիշատակված է Հերոդոտոսի ու Քսենոփոնի երկերում։ Պատմադիտական ուսումնասիրություններում այս ցեղերի մասին հաճախ տրվում են սխալ լուսարանություններ, ուստի և այս խնդիրը կարոտ է հատուկ ու ընդարձակ քննության։

¹ Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 390։ Համեմատե՛ նաև К. Аслан, Études historiques sur le peuple arménien, Paris, 1909, էջ 71 և ուրիշ²։

² Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Ա., էջ 331։ Համեմատե՛ նաև Хачатрян, Очерк истории Армении, էջ 92, որը Արեւելյան Արմենիայի մայրաքաղաք է համարում Շահապիվանը։

³ Տե՛ս К. Аслан, Études historiques, էջ 71։

Արմեններին հարեան էին հարավում կարգութենքը, որոնք դառնում էին, ինչպես տեսանք, Կենարիտես դետի (այժմյան Բոհտան-սուի) հարավում: Քսենոփոնի նկարագրած կարգութենքի երկիրը համապատասխանում է հին հայ պատմիչների մոտ հիշատակված «Կորդուք»-ին, «Կորդուկաց աշխարհ»-ին: Քսենոփոնի ժամանակ կարգութենքի քաջ ու ռազմիկ ցեղը եղել է անկախ և ենթարկված չէ եղել Պարսից իշխանության: Կարգութենքի ու արմենների միջև դոյություն է ունեցել այդ ժամանակ անհաշտ թշնամություն: Կենարիտես գետի աջ ափի մոտ, մոտավորապես այժմյան Սդերտի շրջանում, Քսենոփոնի ասելով՝ արմենների դուռեր չկային պատերազմների պատճառով կարգութենքի հետ:

Պատմադիտական երկերում, մեծ մասամբ, ենթադրում են, որ կարգութենքն այժմյան քուրդերի նախահայրերն են: Այդ ենթադրությունը համարվում է այժմ սխալ և անընդունելի: Քսենոփոնի վկայություններից երևում է, որ կարգութենքը նստակյաց ժողովուրդ էին և ունեին համեմատաբար բարձր մշակույթ: Հեղինակն զորքերը, որ բանակել էին նրանց լքված դյուղերում՝ կարգութենքի գեղեցիկ տներում, որ կահավորված էին մեծ քանակությամբ պղնձի ամաններով՝ գտել էին պարենի առատ պաշարներ ու նաև շատ դիմի, որ նրանք պահում էին ծեփված հորերում (IV, 2, 22): Առանձնապես հետաքրքիր է նաև Ստրաբոնի վկայությունը (XVI, 1, 24), որը մատնանշում է, որ կարգութենքը համարվում էին նշանավոր ճարտարապետներ և փորձառու էին քաղաքների ու բերդերի պաշարման աշխատանքներում: Իբրև զենք նրանք դործ էին անում, ինչպես վկայում է Քսենոփոնը («Անաբասիս», IV, 2, 28), աղեղներ ու պարաստիկներ: Աղեղներն ունեին մոտավորապես երեք կանգուն, այսինքն, մոտ 12/3 մետր երկարություն, իսկ նետերն՝

¹ Կարգութենքի մասին վերահիշյալ տեղեկությունները տալիս է Քսենոփոնը «Անաբասիս»-ի երրորդ ու չորրորդ գրքերում՝ III, 5, 16, IV, 4, 1, Արմեններին ու նրանց հարեաններին վերաբերող «Կուրուպեդիա»-յի ու «Անաբասիս»-ի համապատասխան հատվածները, որ թարգմանել եմ հունարենից, տպագրված են սույն գրքի վերջում՝ հատուկ հավելվածում:

² *See Justi, Geschichte Irans, Grundriss der Iranischen Philologie, II, 5, էջ 464. H. Kiepert, Lehrbuch der alten Geographie, Berlin, 1878, էջ 80. Morgan J. Histoire du peuple arménien, Paris, 1919, էջ 24. Լեո, Հայոց պատմություն, հատ. Ա., Թիֆլիս, 1917, էջ 330 և ուրիշ:*

ավելի քան երկու կանգուն՝ այսինքն՝ ավելի քան 1 մետր երկարություը (*Անաբասիս*», IV, 2, 27—28):

Նստակյաց և երկրազոր՝ այս հին ժողովուրդը, ինչպես երևում է մեջ բերված վկայություններից, չէ կարող լինել այժմյան խաչնարած ու թափառակյաց քուրդերի նախահայրը: Պրոֆ. Մարկվարտը ենթադրում է¹, որ իրենց լեզվով ու բարքերով կարողութենքը, հավանորեն, ցեղակից էին խալդ-ուրարտացիներին: Բայց այս ենթադրությունը ևս, որը հիմնավորված չէ փաստական տվյալներով՝ չէ կարող համոզիչ լինել ու ընդունելի: Ուստի և կարդուխների ազգակցության խնդիրը փոքրասիրական այս կամ այն ցեղի հետ մնում է դեռևս մուլթ և անորոշ:

Ինչպես հաղորդում է Քսենոփոնը (*Անաբասիս*», IV, 3, 4), Կենտրիտես գետի մոտ Օրոնտասի գորգի մեջ բացի արմեններից կային նաև մարդեր և խալդայներ (*χάλδαῖοι* վարձկան: «Ասում էին, — պատմում է Քսենոփոնը, — որ խալդայներն ազատ են ու ուսումնակ: Իբրև զենք գործ են ածում երկար վահաններ ու նիզակներ») (IV, 3, 4):

Որ խալդայներն ինքնուրույն են եղել և չեն եղել հպատակված Պարսից թագավորին՝ այդ Քսենոփոնի մոտ մատնանշված է նաև երկու այլ վկայությունների մեջ:

«Իսկ կարդուխներին, տաոխներին և խալդայներին, — ասում է Քսենոփոնը, — որոնք չէին հպատակված թագավորին ու նաև խիստ երկյուղալի թշնամիներ էին՝ մեզ հնազանդեցրինք, որովհետև պետք է վերցնեինք կենսամթերքներ, որ նրանք չէին ուզում մեզ մատակարարել» (*Անաբասիս*», V, 5, 17):

Պրոֆ. Մարկվարտը ենթադրում է, որ Օրոնտասի գորգի մեջ եղած վարձկան խալդայները, հավանորեն, հարավային Արմենիայի խալդ-ուրարտացիներն էին, իսկ երկրորդ վկայության մեջ տաոխների հետ նշված խալդայները, որոնք հիշատակված են իբրև անկախ ժողովուրդ խալլուքների ու մակրոնների միջև նաև *«Անաբասիս»*-ի վերջաբանում (VII, 8, 25), ըստ երևույթի, խալլուքների հարևան Հյուսիսային խալդ-ուրարտացիներն են²:

¹ Markionri, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, էջ 31:

² Markionri, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 239—230:

Մարկվարտի կարծիքով, որ ինձ ևս հավանական է թվում՝ Օրոնտասի զորքի մեջ եղած խաղաղյաները հին Աղձնիքի և, դրվ խալդրապես, Սասունի ու Խուլթ լեռան խաղդերն էին, որոնք հիշատակված են նաև Թրդ. դարի (նախքան մեր թվ.) հույն պատմագիր Հեկատայոսի մոտ¹ :

Վերոհիշյալ վկայութուններից, որ վերաբերում են խալդայնիին, կարելի է, ինչպես ասեսում ենք, հետեցնել, որ մինչև իսկ 401—400 թվերին մեր թվականութունից առաջ խալդ-ուրարտացիները, որ հարեան էին հնդերոպական եկվոր արմեններին, որոշ շրջաններում պահպանել էին իրենց անկախութունն ու ինքնուրույնութունը։ Դժվար չէ Քսենոփոնի վկայութուններից նաև հետեցնել, որ Աքեմենյան Պարսկաստանի իշխանութունը հեղված է եղել Արմենիայում, գլխավորապես, արմենների ռազմական ուժի վրա, որը, հավանորեն, հիմնական մասն էր կազմում Օրոնտաս սատրապի զորքերի² :

Բացի արմեններից ու վարձկան խալդայնիներից Օրոնտասի զորքի շարքերում հիշատակված են նաև մարդերը։ Քսենոփոնի վկայութունից, դժբախտաբար, պարզ չէ, թե արդյոք միայն խալդայնիներն էին վարձկան, թե նաև մարդերը։

«Սրանք [ձիավորները և հետևակները], — ասում է Քսենոփոնը, — էին Օրոնտասի և Արտուխասի արմենների և մարդերը և խալդայնիները վարձկան» («Անաբասիս», IV, 3, 4) :

Մարկվարտը ենթադրում է, որ այս հատվածում «վարձկան» բառը վերաբերում է ո'չ միայն խալդայնիներին, այլև մարդերին³։ Եթե ընդունենք, իրոք, որ մարդերը ևս վարձկաններ էին՝ այդ դեպքում հավանական կարելի է համարել, որ նրանք ևս եղել են ազատ ու անկախ, ինչպես և խալդայնիները։

Հերոդոտոսը իր պատմության մեջ մարդերին համարում է իրանական նոմադ ժողովուրդ (գլ. I, դլ. 125)։ Բայց Մարկվարտի ասելով՝ մինչև այժմ դեռ պարզ չէ, թե արդյոք մարդերն ի ընե իրանական նոմադներ էին, թե՛ նախարիական

¹ Տես նույնը, էջ 229, Համեմատն նաև Մարկվարտի նախորդ աշխատությունները — „Untersuchungen zur Geschichte von Eran“, I, Göttingen, 1896, էջ 65—66 և „Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation“, Berlin, 1910, էջ 17.

² Տես „Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation“, էջ 24:

նոմադ ցեղ էին, որ ժամանակի ընթացքում խառնվել էր իրան-
յանների հետ և իրանացել¹:

Մարկվարտը Հավանական է Համարում, որ մարդերն այժ-
մյան քուրդերի նախնիներն են: Նրա կարծիքով, այդ ակնարկ-
ված է տասերորդ դարի արաբ մատենագիր Մասուդիի մոտ,
որը քուրդ ազգաբաններից իմացել էր, որ քուրդերի նախահայ-
րը, Քուրդը, Մարդի որդին էր²: Մասուդիի այս վկայությունը,
իրապես, ուշադրավ է, որովհետև Հայ մատենագրության մեջ
ևս քուրդերն անվանվում են «ազգն մարաց»:

Մարդերը, ինչպես ենթադրում են, ապրել են պատմական
Հայաստանի երկու հին դավառներում, որոնք նրանց անունով
կոչվել են Մարդաստան և Մարդաղի: Այս դավառներից առա-
ջինը, Մարդաստանը, գտնվել է ո՛չ թե Արճակ լճի արևելակող-
մում կամ Հյուսիս-արևելակողմում, ինչպես ենթադրել են
Հյուբշմանը և Ադոնցը³, այլ հին Արտաղ դավառի և այժմյան
Մակուի արևմտակողմում⁴: Իսկ Մարդաղին գտնվել է այժմյան
Բինդյուլի Հյուսիսակողմում՝ Կարինի շրջանից դեպի հարավ:
Ադոնցը ենթադրում է, որ այս դավառի մարդերը հետնորդներն
էին, Հավանորեն, Քսենոփոնի հիշած մարդերի, որոնք, նրա
կարծիքով, կարող էին դաղթած լինել Հյուսիս հարավից⁵:

Քսենոփոնի ժամանակ, ինչպես մատնանշում է Մարկվարտը,
Օրոնտասի դորքի մեջ եղած մարդերը, նաև արմեններն ու խա-
ղալները, ըստ երևույթին, Արևելյան Արմենիայի կամ նաև նրա
սահմանակից շրջանների բնակիչներն էին: Այս մարդերի բնա-
կության վայրը Մարկվարտը, հիմնվելով հոռմենական աղբյուր-
ների վրա՝ մատնացույց է անում Աշխարհնի ու Կալաքենի Հյուս-
սիսակողմում, Վասպուրականի Անձալացիք դավառում, որը
գտնվում էր Կենտրիտես գետի (այժմյան Բոհտան-սուլի) վերին
շտանքի կողմերում⁶:

¹ Նույնը, էջ 213

² Նույնը, էջ 223

³ S. Hübischmann, Die altarmenischen Ortsnamen, Indogermanische
Forschungen, Bd. 16, 1904, էջ 239 և Adoncy, Армения в эпоху Юстиниана,
էջ 316.

⁴ S. Ա. Խաչատրյան, «Արիական խավը նախուրարտյան Հայաստա-
նում», Տեղեկ. Գիտ. և Արվ. Ինստ., № 4 (1930), էջ 25 և իմ աշխատությունը՝
«Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 158—159.

⁵ Adoncy, Армения в эпоху Юстиниана, էջ 417, ծան. 5:

⁶ S. Markwart, Die Entstehung und Wiederherstellung der armeni-
schen Nation, էջ 23—26:

Հյուսիս-արևմտյան կողմից արմեններին հարևան էին խալ-
յուրները: Սրանք, ինչպես և տառիները, հիշատակվում են
Քսենոփոնի «Անաբասիս»-ի մեջ իբրև վարձկան զինվորներ Տիրի-
րադի զորքի շարքերում (IV, 4, 18):¹ Խալյուրների երկրի միջով
հեյլեններն անցել էին յոթը օրվա ճանապարհ, մոտ 50 փար-
սախ՝ ավելի քան 250 կիլոմետր: Քսենոփոնը սրանց համարում
է ամենառազմիկ ժողովուրդն այն բոլոր ցեղերից, որոնց հետ
կռիվներ էին ունեցել հելլենները (IV, 7, 15): Քսենոփոնի և
Ստրաբոնի վկայություններից հայտնի է նմանապես, որ խալ-
յուրների մի մասը, որն ապրում էր պոնտական լեռներում՝
զբաղվում էր երկաթագործությամբ («Անաբասիս», V, 5, 1 և
Ստրաբոն, XIV, 3, 19):

Ուշադրով է այն, որ Քսենոփոնի հիշատակած պոնտական
խալյուրները Ստրաբոնի մոտ (XII, 3, 8) անվանված են խալ-
դալներ: Ինկատի առնելով Ստրաբոնի այս վկայությունը, նաև
այն, որ խալյուրները դառնում էին ըստ Քսենոփոնի կուլտու-
րական զարգացման համեմատաբար բարձր աստիճանի վրա՝
գիտնականներից չափերը ենթադրում են, որ նրանք ցեղակից
էին խալդ-ուրարտացիներին:

Խալյուրների բարձրի, զենքերի ու ամրությունների հետա-
քերի նկարագրությունը տալիս է Քսենոփոնը հետևյալ իր
վկայության մեջ:

Քսենոփոն, «Անաբասիս», IV, 7, 15—17՝

«Սրանք [խալյուրները] բոլոր ժողովուրդներից, որոնց մի-
ջով անցել էին հելլենները, ամենաքաջն էին և մարտի էին
բռնվում: Նրանք ունեին վուշից պատրաստված դրահներ
մինչև փորը, իսկ զրահածայրերի փոխարեն՝ հաստ հյուս-
ված քուղեր, Ունեին նաև ոռնապաններ և սաղավարաններ ու
գոտիների մոտ դաշույն՝ նման լակեզեմոնական կեռ փռք
դանակի, որով սպանում էին, ում որ կարողանում էին
հաղթել, և, կտրելով ու վերցնելով գլուխները՝ մեկնում
էին: Նրանք երգում և պարում էին, երբ թշնամիները կա-
րողանում էին իրենց տեսնել: Ունեին նաև նիզակ, որը ու-
ներ մեկ ծայր մոտ տասնհինգ կանգուն երկարությամբ:
Նրանք պաշտպանվում էին քաղաքավայրերում և, երբ

¹ S. S. Feist, Kultur, Ausbreitung und Herkunft der Indogermanen, Berlin, 1913, էջ 403. Markwart, Südarmanien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 230 և ուրիշ:

հեյլենները մոտով անցնում էին՝ հետապնդում էին և պատ-
րաստ էին միշտ կռվելու։ Ապրում էին ամուր տեղերում,
որոնց մեջ հավաքված էր նաև պաշարեղենը. այնպես որ
հեյլենները ոչինչ չկարողացան վերցնել այստեղից, այլ սըն-
վում էին այն կենսամթերքներով, որ վերցրել էին տառխնե-
րից։

Որպես վարձկաններ Տիրերազի զորքի շարքերում Քսենոփո-
նի մոտ հիշատակված են, բացի խալլուքներից, նաև տառխնե-
րը։ Սրանց երկրի միջով հեյլեններն անցել էին հինգ օրվա ճա-
նապարհ՝ մոտ 30 փարսախ՝ (=մոտավորապես 150 կիլոմետր)։
Սրանք, ըստ երևույթի, հարևան են եղել խալլուքներին ու փա-
սիաններին և միասին դիմադրել էին հեյլեններին, երբ սրանք
փասխ—Պասինսու դետի ավազանից անցել էին մոտակա լու-
նանցքը։ Տառխների ու փասիանների անուններից, ինչպես
հայտնի է, ծագել են պատմական Հայաստանի «Տայք» և «Քա-
սյան» գավառների անունները։

Բացի վերոհիշյալ ժողովուրդներից՝ Հայկական լեռնաշ-
խարհի թե արևմտյան և թե հյուսիսային ու արևելյան մասե-
րում բնակվում էին նաև զանազան այլ ցեղեր, որոնք մասամբ
հիշատակված են Հերոդոտոսի, Քսենոփոնի և հունա-հռոմեա-
կան այլ երկերում։

Քսենոփոնի վկայություններից դիտենք, որ նահանջող
հեյլենները Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան
կողմերում՝ Արաքս, Արփա-չայ և Ճորոխ գետերի ուղղությամբ
և ավելի արևմուտք դեպի Տրապիզոն՝ անցել էին սկյութների,
մակրոնների, կոլխերի, տիբարենների և մոսսինոյկների երկր-
ներով, որոնք բոլորը աղատ են եղել և Պարսից թագավորու-
թյունից միանգամայն անկախ։ Նույն կողմերում ապրել են
հեսպերիոնները և փասիանները, որոնք սակայն գտնվել են Տիրե-
րազի իշխանության տակ։

«Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի
պրոբլեմների մասին» իմ աշխատության մեջ ես մանրամասն
ցույց եմ տվել, որ դեռևս ութերորդ դարում մեր թվականու-
թյունից առաջ Հայկական լեռնաշխարհի հյուսիսում հաստատվել
էին հարավային Ռուսաստանից գաղթած կիմերական-սկյութա-

1 «Անարասիս», IV, 7, 1:

կան ցեղեր, որոնց մի մասը հունա-հուսթական աղբյուրներում անվանված են սարապարաներ¹, սակասաձևեր² և այնիաններ³։

Հերոդոտոսի վկայութիւններից ևս հայտնի է, որ նրա ժամանակ (մոտավ. 484—425 մեր թվ. առաջ) Կողքիսից սկսած մինչև Մեդական երկիրը (հավանորեն, այժմյան Եփեսոսի կողմերը)՝ ապրել են սկյութական ցեղեր, որ նրա մոտ անվանված են սասպեյրներ։ Նույն այս ցեղերը, որոնք Տասը հազարի նահանջի ժամանակ (401—400 մեր թվ. առաջ) գտնվել են այժմյան Կարս—Լենինականի շրջաններում և Արարատյան դաշտում՝ Քսենոփոնի մոտ՝ անվանված են սկյութներ։

Հուլյն գործերի նահանջից հետո, ինչպես ցույց է տրված նույնպես վերոհիշյալ իմ աշխատութեան մեջ, Անդրկովկաս էին արշավել և բնակութիւն էին հաստատել պատմական Հայաստանի հյուսիսում սարմատական ցեղեր, գլխավորապես, սիրակները և, հավանորեն, նաև գոգերը, որոնց անունն են կրում Հին Հայաստանի Ծիրակ դավառը և Գուգարք նահանգը։

Կիմմերական, սկյութական և սարմատական ցեղերի գաղթը և հաստատումը Հայաստանի հյուսիսում պատմական կարևոր մի նոր փաստ է, որ պետք է այսուհետև նկատի ունենան ո՛չ միայն պատմագետները, որ լուսաբանում են հայ ժողովրդի եթնիկական ծագումը և կազմավորումը, այլև լեզվաբաններն ու հնագետները, որոնք ուսումնասիրում են հայերեն լեզուն, Հին Հայաստանի տեղանունները ու նաև նրա նյութական կուլտուրան։

Բացի վերոհիշյալ ժողովուրդներից՝ իբրև Հայկական լեռնաշխարհի բնակիչներ աղբյուրների մեջ հիշատակված են նաև մոսխեր, ուտիներ, պակտիներ և ուրիշ ցեղեր։

Այս բազմազան ցեղերը, որոնց մեծագույն մասը հետագա դարերում ձուլվել էր արմենների հետ՝ Ալեքսանյան Պարսկաստանի տիրապետութեան ժամանակ եղել են առանձին ժողովուրդներ՝ յուրաքանչյուրը իր սեփական լեզվով կամ բարբառով։ Նրանք գտնվել են, ինչպես երևում է աղբյուրների վկայութիւններից, կուլտուրական ու սոցիալական զարգացման տարբեր աստիճանների վրա։

¹ Strabo, XI, 14, 14։

² Plin., Nat. Hist., VI, 11, I (հրատ. Lütté-ի)։

³ Strabo Herod., I, 104 և 110, IV, 37 և 40. III, 94։

Xenoph., Anabasis, IV, 7, 18։

Դժվար չէ, ուրեմն, եզրակացնել, որ հայ ժողովուրդի պատմութեան հնագույն այս ժամանակաշրջանում դեռևս չէր կազմվել մի՛ ժողովուրդ և մի՛ երկիր՝ հայ և Հայաստան, և որ հայութեան ու պատմական Հայաստանի կազմավորման ընթացքում մեծ դեր են կատարել, բացի խեթերից ու խալդեերից, նաև չերև հիշատակված մյուս ժողովուրդները:

ԳԼՈՒԽ ՎՆՑԵՐՈՐԴ

ԱՐՄԵՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՐԱԿԱՅԻՆ ԿՆՆՑԱՂԸ ԸՍՑ ՔՍԵՆՈՓՈՆԻ

1. Արմենիայի բարեկեցիկ վիճակը.—Առարայամիսս գյուղը Աղեթի կամ Դեղվանի ռաջանում.—Տելեբոաս գետը։—2. Գյուղերի առաս պաշարեղենը Տելեբոաս գետի արևելակողմում։—3. Արմենական գյուղերը Նփրաս գետի ակունքների մոտ.—գետնափոր ճեղքը.—գարուց պատասպած խմիչքը.—հույների կերուխումը։—4. Արմենական ձիերը։—5. Արմենների ճեղքաբերության հիմքը—Սասնայից հողագործությունը՝ միացած անասնապահության հետ։—6. Կուլտուրական ու կենցաղային տարբերությունները Արմենիայի գոյնագան ռաջաններում։—7. Արմենիայի սոցիալական ու ճեղքաբերական վիճակը.—տոհմային կենցաղը.—գյուղապետները կամ կոմսիսները.—բաղաճների բացակայությունը.—բնական ճեղքաբերությունը։—8. Տոհմագեղների համախմբումը բասիլիսկա-արալի իսխանության ժամ.—բասիլիսկի գործը և դրամական հարստությունը.—տոհմային հարաբերությունների բեկումը և տոհմագեղների իսխանության գործողությունը։—9. Արմենական ամբողջ ժողովուրդը զորք էր.—հին վրացիներն «էրի», որ ճեղքանում է ժողովուրդը և զորք։—10. Արմենները ուրախ զինվորական գաղութականներ և իբրև ռազմական դեմոկրատներ։—ճամբը կազմակերպությունը մեղացիների ու հին պարսիկների։—11. Դաճակից այս ժողովուրդների համագործակցությունը և Հին Արեւելի մեծ ոլորտությունների կործանումը.—Մառի կարծիքն այդ մասին։

Խիստ հետաքրքրական են, մասնավորապես, Քսենոփոնի տված տեղեկությունները արմենների տնտեսական կյանքի և ներքին կենցաղի մասին։ Արմենիան նա անվանում է «ընդարձակ ու բարեկեցիկ երկիր»։ Եվ, իրավի, Քսենոփոնի նկարագրություններից պարզ երևում է և Արմենիայի բարեկեցիկ վիճակը և, մասնավորապես, արմենների գյուղերի լիությունն ու պաշարեղենի առատությունը։

Հույները, ինչպես վերև ասացինք, մտել էին Արմենիա Կորդուքի կողմից, անցնելով Կենտրիտես (Բոհտան-սու) գետը,

¹ Տես «Անարասի», գիրք IV, գլ. 3, 4 և 5.

որը բաժանում էր Արևելյան Արմենիան կարդուխների Երկրից։ Այս դեպի մոտ, աջ ափի վրա, Քսենոփոնի ասելով, դյուղեր չեն եղել կարդուխների հետ կռիվների պատճառով։ Գետից 5 փարսախ կամ մոտավորապես 25 կիլոմետր հեռավորության վրա, այժմյան Սղերտի կամ Ռեզվանի շրջանում, հույները մտել էին մի մեծ գյուղ, ուր տները մեծամասնությամբ վրա եղել են աշտարակներ։ Այս գյուղն ունեցել է սատրապի բնակության համար ապարանք-ամրոց, ինչպես առանձնապես մատնանշում է Քսենոփոնը, հույները կարողացել էին ձեռք բերել այստեղ կենսամթերքների առատ պաշարներ։

Շարժվելով այստեղից դեպի հյուսիս և անցնելով 25 փարսախ կամ մոտ 125 կիլոմետր՝ հույներն իջել էին Մչո դաշտը և հասել մինչև Տելեբոաս դետը, որը, ինչպես ասացինք, Մարկվարտը համապատասխան է համարում հին Մեղ գետին (այժմ՝ Կարասու)։ Այս շրջանը համարվել է Արևմտյան Արմենիայի մասը և գտնվել է, ինչպես տեսանք, հյուսիսարևոտ Տիրիբազի իշխանության տակ։

«Տելեբոաս դետը, — ասում է Քսենոփոնը, — գեղեցիկ էր, բայց ոչ մեծ։ Գետի շուրջը կային բազմաթիվ դյուղեր» («Անաբասիս», գլ. IV, գլ. 4, 3)։

Այստեղ Տիրիբազը ձիավորների ուղեկցությամբ մոտեցել էր հույներին և, ուղարկելով մի թարգման, հայտնել էր, որ ցանկանում է բանակցել նրանց հետ։ Բանակցությունների ընթացքում պայման կապվեց, որ հույները չպիտի այրեն արմենների դյուղերն ու տները, իսկ պաշար կարող են վերցնել՝ որքան որ իրենց հարկավոր է։

Տելեբոաս դետի մոտից հույները գնացել էին երեք օրվա ճանապարհ դաշտի միջով, ընդամենը՝ 15 փարսախ կամ մոտ 75 կիլոմետր դեպի արևելք և հասել էին ապարանք-ամրոցի մոտ, որի շուրջը եղել են դարձյալ բազմաթիվ դյուղեր, լիքը պաշարեղենով։ Այստեղ նրանք գտել էին մտացու առաստաններ, հաց, հին անուշահոտ գինիներ, չամիչ, դանազան ընդեզեններ, նաև խոդի ճարպ, քնժութ, դառն նշի և բևեկնի յուղ ու սրանցից պատրաստված անուշահոտ յուղ։

Քսենոփոնի ասելով, հույն զինավորներից ոմանք, հակառակ Տիրիբազի հետ կապված պայմանի, համարադաճանաբար այրել էին այս դյուղերում տների մի մասը։

Շարունակելով իրենց ճանապարհը՝ հույները բարձրացել

էին այնուհետեւ լեռները և հարձակվել էին լեռնանցքում Տիրի-բաղի բանակի վրա: Նրանք գրավել էին Տիրիբաղի վրանը և վը-րանի մեջ արծաթի ու արծաթե զինքներ ու ըմպանակներ և դերի էին վերցրել նրա հացարարներին ու մատուցակներին:

Անցնելով լեռան կատարը՝ նրանք զնացել էին անմարդա-բնակ վայրերով երեք օրվա ճանապարհ, 15 փարսախ կամ մոտ 75 կիլոմետր, մինչև Նփրատ գետը և, առաջ շարժվելով այս-տեղից ու դնալով դաշտի միջով 5 փարսախ կամ մոտ 25 կիլո-մետր՝ իջևանել էին արմենների գյուղերում, որոնց նկարագիրն առանձնապես հետաքրքրական է:

Նրանց առաջապահ դուռնը, հասնելով մի դյուղ, աղբյուրի մոտ պատնեշի տեղև հանդիպել էր ջուր տանող գյուղացի կա-նանց ու աղջիկներին: Սրանք հարցնում են հույներին, թե ո՞վ-քեր են: Իսկ վերջիններս, թագցնելով իրենց ու լինելը՝ պարտ-կախոս թարգմտնի միջոցով ասում են, որ իրենք թագավորի կողմից դնում են սատրապի մոտ: Կանայք հայտնում են, որ սատրապն այստեղից մի փարսախ հեռու է, Հույները, որով-հետև արդեն ուշ էր, կանանց հետ մտնում են ամրություն, ուր դնելով էր գյուղապետը, և տեղավորվում այնտեղ:

Նրբ մյուս զորավարները ևս իրենց զորքերով հասնում են այդ գյուղը, ուր իջևանել էր առաջապահ դուռնը՝ իրենց մեջ բաժանում են շրջակա գյուղերը: Քսենոփոնը պատմում է, որ իր զորքի մի մասը արագ վազում է այն գյուղը, որը ստացել էր ինքը վիճակակարկուլթյամբ, և

«ձերբակալում է այնտեղ ներսում գտնվող բոլոր գյուղացի-ներին, գյուղապետին և 17 ձիաբուռակ, որ սնվում էին իրրև տուրք թագավորին, նաև գյուղապետի աղջկանը, որն իններորդ օրն էր որ ամուսնացած էր. իսկ նրա մարդը զնացել էր նապաստակ որսալու և չէր ձերբակալվել գյու-ղերում»¹:

Այս շրջանի գյուղերում, — ասում է Քսենոփոնը՝

«տները գետնափոր էին, մուտքը ջրհորի բերնի նման, իսկ ներքեւը ընդարձակ: Կենդանիների համար հատուկ մուտք կար փորված, իսկ մարդիկ իջնում էին ցած սանդուխնե-րով, Տների մեջ կային այծեր, ոչխարներ, եզներ, կովեր, հավեր ու սրանց ճուտերը: Բոլոր կենդանիները կերակրը-

¹ «Անաբասիս», գլ. IV, գլ. 5, § 24:

վում էին ներսում խոտով: Կար այնպեղ նաև ցորեն, գարի, ընդեղեններ և կարասներում՝ դարուց պատրաստված խմիչք: Գարու հատիկները և իրենք լողում էին կարասների բերաններում: Մեջերը դրված էին մեծ և փոքր եղեգներ, որոնք ծունկեր չունեին: Երբ մեկն ուզեմար խմել՝ պետք է այս եղեգները բերնին գներ ու ծծեր: Եվ չատ թունդ էր, եթե ջուր չխառնեին. բայց սովոր մարգու համար խիստ ախորժելի խմիչք էր¹:

Հուլները, որ տեղավորվել էին գյուղերից փախած կամ կալանավորված գյուղացիների տներում՝ յոթը օր մնացին այստեղ և, ունենալով առատությամբ պաշարեղեն՝ կերուխում էին անում և փոխադարձաբար իրար հյուրասիրում: Պատմագիտական երկերում ընդունված ենթադրությունը, որ իբր թե նահանջող հույն զորքը արմենների գյուղերում հյուրասիրվում էր իրենց գյուղացիների կողմից՝ սխալ մի կարծիք է, որ չէ համապատասխանում իրականության:

Վէտեկյալ օրը, — պատմում է Քսենոփոնը, — ինքը, վերցնելով գյուղապետին՝ զնաց ինքիսոփոսի մոտ: Ուր որ նա գյուղ էր մտնում՝ գնում էր գյուղերում եղողների մոտ և ամեն տեղ գտնում էր նրանց կերուխում անելիս և ուրախ: Եվ ոչ մի տեղից չէին բաց թողնում, մինչև նրանց չմատուցանեին սոմենալնտի կերակուրը: Չկար մի տեղ, ուր չգնեին նույն սեղանի վրա ոչխարի, այծի, խոզի, հորթի և հավի միս ու մեծ քանակությամբ դարու և ցորենի հաց: Երբ մեկը մտերմաբար կամենում էր մի ուրիշի կենացը խմել՝ քարշ էր տալիս նրան կարասի մոտ, և այնտեղ պետք էր խմել՝ կռանալով ու ծծելով եղան նման: Գյուղապետին ևս թույլ տվին վերցնել ինչ որ կամենում էր: Իսկ նա ոչինչ չէր վերցնում, այլ երբ որևէ տեղ տեսնում էր ազգակիցներից մեկին՝ տանում էր միշտ իր մոտ: Երբ նրանք եկան ինքիսոփոսի մոտ՝ սրանց ևս գտան կերուխում անելիս՝ պատկված չոր խոտե պատկներով: Սպասավորում էին արմենների երեխաները բարբարոսական զգեստներով և նրանք երեխաներին ցույց էին տալիս, իբրև մոնջերի, թե ինչ պիտի անել: Երբ ինքիսոփոսը և Քսենոփոնն իրար ողջունեցին՝ սկսեցին միասին հարցուփորձ անել:

¹ «Անարասիս», գիրք IV, գլ. 5, §§ 25—27:

դյուղապետին պարսկերեն խոսող Թարգմանի միջոցով, թե ինչ երկիր է այս: Եվ նա ասաց, որ Արմենիան է: Եվ դարձյալ հարցրին, թե ո՞ւմ համար են սնվում ձիերը: Եվ նա ասաց, որ Թադալոթի համար իբրև տուրք: Հարևան երկիրը, ասաց, խալդուներն են և ցույց տվեց, թե ո՞րն է ճանապարհը¹:

Քսենոփոնը մի քանի անգամ հիշում է արմենների ձիերը և առանձնապես շեշտում է, որ Արմենիայի ձիերը թեև պարսկական ձիերից փոքր են, բայց շատ ավելի կայտառ են: Նա վրկայում է, բացի այդ, որ ձիերը, ինչպես ինքը լսել է, զոհ են բերում այստեղ արևին: Այս լսած լինելով՝ Քսենոփոնն իր ծերացած ձին տալիս է դյուղապետին, որպեսդի սա կերակրե, պարարտացնե նրան ու զոհ բերե արևին, իսկ փոխարենը վերցնում է ձիաքուղակներից մեկը:

Քսենոփոնի հաղորդած վերոհիշյալ տեղեկությունների վրա մենք մանրամասն կանգ առանք, որովհետև դրանք են, գլխավորապես, աղոտ կերպով արտացոլում Աքեմենյան ժամանակաշրջանի Արմենիայի տնտեսական զրությունը և հասարակային կենցաղը:

Քսենոփոնի վկայություններից պարզ երևում է, որ արմենները եղել են նսաակյաց ու հողագործ ժողովուրդ և երկրագործական մշակույթի տեսակետից կանգնած են եղել համեմատաբար բարձր աստիճանի վրա:

Վերոհիշյալ վկայություններում, ինչպես տեսանք, բացի ցորենի, դարու և ընդեղենների առատ պաշարներից, որ դռնվում էին արմենների դյուղերում, և բացի չամիչից ու անուշահոտ գինիներից, որ պարզ ակնարկ են այգեգործության զարգացման՝ հիշատակվում են նաև քնջութ, դառն նշի և բեկնիյուղ ու սրանցից պատրաստված անուշահոտ յուղ:

Արմենիայում զարգացած է եղել ո՛չ միայն երկրագործությունը, այլև անասնապահությունը: Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-յի մեջ, ինչպես վերև տեսանք, մատնանշված է, որ արմենները, որոնք զբաղվել էին իրենց նոր երկրի դաշտային պտղատու մասերը՝ անասնապահության համար մեծ կարիք էին զգում լեռնային արոտատեղերի, որ դռնվում էին լեռներն ապաստանած խաղայների ձեռին: Ստրաբոնի վկայությունից

¹ Նույնը, գիրք IV, գլ. 5, §§ 30-34:

ևս մեզ հայտնի է, որ Արմենիան շատ հարուստ է եղել ձիա-
քուծական արոտներով և որ Արմենիայի սատրապը Պարսից
թագավորին ուղարկում էր, ինչպես վերև ևս հիշեցինք, տարե-
կան 20․000 քուռակ: Իսկ Հերոդոտոսը արմեններին անվանում
է πούστροβοι, այսինքն՝ «հարուստ անասուններով», և այս
վկայությունը դարձյալ մի պարզ ցուցումն է, որ նրանք զբաղ-
վել են և խաշնարածությամբ²: Ուրեմն վերոհիշյալ վկայու-
թյուններից երևում է, որ Քսենոփոնի ժամանակաշրջանի ար-
մենների տնտեսության հիմքը եղել է նստակյաց հողագործու-
թյունը՝ միացած անասնապահության հետ:

Քսենոփոնի հաղորդած տեղեկությունները «կյուրոպեգիա»-
յում ու «Անաբասիս»-ում ուշադրաւ են, ի միջի այլոց, այն
տեսակետից, որ ցուլց են տալիս կուլտուրական ու կենցաղային
տարբերություններն Արմենիայում ու նրա հարևան այլևայլ
շրջաններում: Մենք տեսանք վերև, որ Հայկական լեռնաշխարհի
նախարարմենական տիրող հին ժողովուրդը, խալդոււրարացի-
ները, ունեցել է բավական բարձր քաղաքակրթութուն: Արեմե-
նյան Պարսկաստանի տիրապետության շրջանում ևս կուլտուրա-
կան զարգացման համեմատաբար բարձր աստիճանի վրա էին
դառնում, ինչպես տեսանք, կարդուխները և խալլուբները:

Ուշադրաւ է, բացի այդ, որ մինչև իսկ իրեն Արմենիայի
որոշ շրջանները, որ նկարագրված են Քսենոփոնի «Անաբասիս»-
ում, կուլտուրական իրենց կենցաղով որոշակի տարբերվում էին
իրարից: Կենտրիտես գետի մոտ գյուղերում տների մեծադուլն
մասը, ինչպես տեսանք, ունեցել են աշտարակներ, իսկ Նիբրատ
գետի ակունքների մոտ արմենական գյուղերի տները, որոնց
նկարագրությունը մեջ էինք բերել վերև՝ եղել են գետնափոր:

Կենցաղային ու կուլտուրական այդ տարբերությունները մի
ակնարկ են, անշուշտ, որ Հայկական լեռնաշխարհում և, մաս-
նավորապես, նաև Արևելյան ու Արեւմտյան Արմենիայում, միա-
կերպ չէր կարող լինել նաև սոցիալական կենցաղը ցեղային զա-
նազան խմբավորումներում:

Այս տեսակետից Արեմենյան ժամանակաշրջանի Արմենիայի
սոցիալական-տնտեսական կենցաղի քննությունն ու լուսաբանու-
մը հայոց ներքին կյանքի ամենադժվար ուսումնասիրելի խնդ-
րերներից մեկն է: Եվ այդ բացատրվում է ո՛չ միայն աղբյուրների

¹ Տես Ստրաբոն, գիրք XI, գլուխ 14, § 9.

² Հերոդ., գիրք V, գլ. 49:

ու Նյուլթերի աղքատությամբ, այլև, գլխավորապես, նրանով, որ այս ժամանակաշրջանում հասարակային հարաբերությունների զարգացումը Արմենիայում տեղի էր ունենում նոր եկվոր ժողովրդի և Ուրարտական թագավորության հին ժողովուրդների հասարակական կարգերի ու կենցաղի բախման ու փոխհարաբերության բարդ պայմաններում:

Հատկապես արմենների հասարակակարգը, ինչպես միանգամայն ճիշտ ենթադրել է Ն. Ադոնցը, հենվելով Քսենոփոնի վկայությունների վրա՝ բնորոշվում է իբրև տոհմատիրական: Այդ երևում է, իրապես, Քսենոփոնի վերոհիշյալ վկայություններից, որոնց մեջ նկարագրված է արմենների գյուղական կենցաղը:

Արմենները, ինչպես վերև տեսանք, համաձայն Քսենոփոնի նկարագրության, ապրում էին իրար մոտ խմբված գյուղերում, որոնք արտաքին հարձակումներից պաշտպանվելու համար դրոշմվում էին ամրոցների շուրջը և շրջապատված էին պատնեշներով, ճյուղերի գլուխ կանգնած էին գյուղապետները, որ Քսենոփոնի մոտ անվանված են կոմարխներ (χωμαρχῆς կամ ἄρχων τῆς χωρῆς): Սրանք սատրապների հետ միասին իշխանության ու կառավարության ներկայացուցիչներն էին: Արմենական գյուղերի նահապետական պատկերը՝ հատուկ պատնեշները, որոնցով շրջապատված են եղել գյուղերը, ստորերկրյա նախնական տները, որոնց մեջ մարդկանց հետ միասին ապրել են նաև նրանց անասունները՝ որոշ ակնարկներ են հարկավ, որ արմենների մոտ հասարակական կենցաղը ունեցել է տոհմային հիմքեր: Քսենոփոնի պատմելով՝ ձերբակալված գյուղապետին, որ ուղեկցում էր հույներին՝ սրանք առաջարկում էին վերցնել, ինչ որ կամենում էր. սակայն նա հրաժարվում էր և «երբ որևէ տեղ տեսնում էր ազգակիցներից մեկին՝ տանում էր միշտ իր մոտ»: Ադոնցի կարծիքով՝ գյուղապետի այս հայրական վերաբերմունքը և հոգատարությունը իր ազգակիցների հանդեպ բնորոշ մի հատկանիշ է դարձյալ տոհմային կենցաղի:

Արմենների գյուղերից մեկում հույները խլել ու իրենց էին վերցրել 17 ձիաքուռակ, որ իբրև տուրք սնվում էին, ինչպես տեսանք, Պարսից թագավորի համար: Գյուղերի հարկատվության նաև այս կոլլեկտիվ բնույթն ուղադրության արժանի է և

¹ См. Адонц, Армения в эпоху Юстиниана, т. 2 380—392.

կարծես թե մի նշան է դյուղերի համայնական-տոհմական կազմակերպության:

Քսենոփոնի հաղորդած տիդեկությունները, ինչպես հայանի է, վերաբերում են միմիայն դյուղերին: Արմենիայի միջով նահանջող հունական զորքը տեսել էր ճանապարհին միմիայն դյուղեր ու ամրոցներ, սակայն չէր տեսել և ոչ մի քաղաք: Որ քաղաքներ, իբրև առևտրի ու արհեստագործության կենտրոններ, Արմենիայում դոյություն չունեին Քսենոփոնի ժամանակ՝ այդ ավելի քան հավանական է, որովհետև, ինչպես տեսանք, Արմենիայի սատրապի նստավայրը գտնվում էր ո՛չ թե քաղաքում, այլ մեծ դյուղում Կենտրիտես դետի մոտ՝ հատուկ ասպարանք-ամրոցում:

Քաղաքների բացակայությունը, ինչպես և երկրի նահապետական դրությունը, թույլ են տալիս կարծելու, որ ժողովրդի դասակարգային շերտավորումը գտնվել է՝ դեռևս սաղմային վիճակի մեջ: Իսկ պաշարեղենի առատությունը դյուղերում, ինչպես և արմենների տնային կենցաղը, կարող են նույնպես անուղղակի մի նշան համարվել, որ Քսենոփոնի ժամանակ Արմենիան գտնվել է բնական տնտեսության զարգացման շրջանում:

Ընդունելով որ Քսենոփոնի նկարագրած Արմենիայում հասարակակարգը հղել է տոհմային՝ պետք է ինկատի ունենալ և այն, որ արդեն այս հնադույն շրջանում կարելի է ենթադրել տոհմային հարաբերությունների որոշ բեկում և տոհմապետների ու առաջնորդների իշխանության ու հեղինակության ուժեղացում:

Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-յի վկայություններից, որ աղոտ կերպով ուրվագծում են Արմենիայի քաղաքական վիճակը մեղա-սլարսկական տիրապետության հնադույն շրջանում՝ կարելի է հետևեցնել, որ արմենների առանձին տոհմերը համախմբված են եղել և կազմել են արդեն տոհմացեղային միություններ, որոնք գտնվել են բասիլևս-արքայի իշխանության տակ: «Կյուրոպեդիա»-յի մեջ, ինչպես տեսանք, հիշատակված են Կյուրոս Մեծի ժամանակակից արմենների արքան և նրա երկու որդիները: Արմենների արքան ունեցել է ըստ Քսենոփոնի 40·000 հետևակ զորք և 8·000 հեծելազոր, իսկ զրամ 3·000 տաղանդից ավելի:

Կարևոր այս վկայություններից, որոնց հիմքը, ըստ երեւույթի, Քսենոփոնի լսած տեղական ավանդություններն էին՝

կարելի է հետևեցնել, որ Աքեմենյան տիրապետության դեռ
սկզբնական շրջանում, արդեն Գ-րդ դարում, արմենները ունե-
ցած պիտի լինեին տոհմապետներ ու առաջնորդներ, որոնք են-
թարկվում էին իրենցից ավելի հզոր բասիլևս-արքայի իշխանու-
թյան: Այսպիսի առաջնորդներ էին, հավանորեն, Բահիատունի
արձանագրության մեջ հիշատակված Դարեհ Ա-ի ղորավար Դա-
դարչիչը, որը պատերազմել էր ապստամբած արմենների դեմ,
և Արախան, որը տիրել էր Բարեկունին և այնտեղ իրեն հռչակել
էր թագավոր:

Արմենների տոհմապետներն ու առաջնորդները, ըստ
երևույթին, արդեն այս ժամանակաշրջանում հետզհետե դառ-
նում էին տոհմակալ իշխաններ: Նոր երկիրների դրավումը, տե-
ղական ցեղերի նվաճումը. և նրանց ենթարկումը նվաճողների
իշխանության՝ չէին կարող չթողնել իրենց ազդեցությունը
տոհմային հարաբերությունների վրա և նպաստելու էին, ան-
սարակույս, արմենների մոտ ևս տոհմապետների ու ցեղապե-
սների իրավունքների ընդարձակման: Միևնույն ժամանակ տըն-
տեսական անհավասարությունը, որ ստեղծվում էր հաղթված
ժողովուրդների ստորադրմամբ նվաճողներին, հավանորեն,
արմենների տիրապետության հնազույն նույնիսկ այս շրջանում
սկսել էր վերածվել քաղաքական ու իրավական անհավասարու-
թյան և նպաստում էր հետզհետե դասերի ու դասակարգային
հասարակության կազմակերպման:

Քսենոփոնի հաղորդած վերոհիշյալ վկայություններից հա-
տուկ ուշադրության արժանի է նրա տված տեղեկությունը, որ
արմեններն օղնական զորք էին տալիս Պարսկաստանին՝ 40.000
հետևազոր և 8.000 հեծելազոր:

Զորքի այս մեծ թիվը արմենների, որոնք այդ ժամանակ
դրավել էին Հայկական լեռնաշխարհի միայն մի փոքր մասը՝
որոշ հիմք է տալիս ըստիս ենթադրելու, որ արմենական համե-
մատաբար փոքրածիվ դաղթականները բոլորն էլ եղել են, հա-
վանորեն, ղեկավորներ:

Նման կարծիք հայտնել է հին վրացական ցեղերի մասին
ակադ. Ի. Զավախիչվիլին: Հիմնվելով Ստրաբոնի վկայության
վրա Իբերիայի ազատ բնակչության մասին, որը խաղաղ ժամա-
նակ զբաղվում էր երկրագործությամբ, իսկ պատերազմի ժամա-
նակ դուրս էր գալիս կռվի՝ Զավախիչվիլին մատնանշում է, որ
հնազույն այդ ժամանակաշրջանում Իբերիայում, ինչպես և

Աղվանքում, ամբողջ ժողովուրդը դառնում էր վտանգի ժամանակ զորք: Հենց այդ է պատճառը, ենթացրում է Ջավախիչվիլին, որ հին վրացերենում «էրի» նշանակում է և ժողովուրդ և զորք¹:

Ըստ երևույթին, ճիշտ պետք է լինի ըստ այսմ նաև Մարկվարտի վերոհիշյալ կարծիքը, որ մեղացիները, Ուրարտուն նվաճելուց հետո, նրա անհանդիստ ժողովուրդների դեմ պայքարելիս՝ հենվում էին դաշնակից արմենների վրա: Վերջինները, Մարկվարտի կարծիքով, օգտադործվում էին որպես զինվորական գաղութականներ, և հենց այդ պատճառով մեղացիները, ինչպես վերև տեսանք, նրանց բնակեցրել էին Հայկական լեռնաշխարհի սարատեգիական ամենակարևոր շրջաններում:

Ընդունելով, որ արմենների հասարակակարգի հիմքը Աբեմենյան տիրապետության ժամանակ կազմում էր տոհմական կենցաղը, որի մեջ սկսվել էր արդեն որո շրջկում, և, ինկատի առնելով աղբյուրների տվյալներն արմենների բասիլև-արքայի, սազմառաջնորդների և մեծաթիվ ու ընդհանուր աշխարհագրորի մասին՝ կարելի է ըստիս եզրակացնել, որ հին արմենները, ինչպես և 6—7-րդ դ. (մեր թվ. հ.) հին սլավոնները, դառնում էին «ռազմական դեմոկրատիայի» այն ընթացաշրջանում, որը հիշատակված է Էնգելսի մոտ²:

Հասարակական զարգացման նման ընթացաշրջանում դառնում են, ինչպես դժվար չէ համոզվել, ուշադիր կերպով քննելով դասական հեղինակների վկայությունները՝ նաև մեղացիների ու հին պարսիկների տոհմացեղային միությունները: Հին պարսիկների ներքին կենցաղը մանրամասն նկարագրված է Քսենոփոնի «Կյուլոպեդիա»-յում³, որը թեև միտումնավոր գրական երկ է, սակայն հիմնականում ճիշտ է արտացոլում սրանց հասարակակարգի էական կողմերը: Քսենոփոնի մոտ մանրամասն նկարագրված է ինչպես այս ռազմիկ ժողովրդի դեմոկրատական կազմակերպությունը, մասնավորապես, նրա հատուկ համայնաժողովը, նույնպես և մասնացույց է արված և նրա ժողովուրդ-զորք լինելը:

¹ См. II. Джавახишвили, Государственный строй древней Грузии и древней Армении, СПб. 1908, էջ 62—63:

² Энгельс, Происхождение семьи, частной собственности и государства, Москва, 1932, էջ 187:

³ См. Анону, Армения в эпоху Юстиниана, էջ 373—383.

Հիմնվելով ուշադրավ ու կարևոր այս դիտողությունների վրա, ինձ թվում է, որ ավելի քան հավանական պետք է համարել, որ այստեղ Արևելքում ևս, ինչպես և միջին դարերում Արևմուտքում, հին կուլտուրական մեծ պետությունների կործանման դրծում վճռական դեր էին կատարել քարաքոս կոչվող նոր ժողովուրդները, գլխավորապես, մեղացիները, պարսիկները և արմենները, «որոնց համար այն ժամանակ,— ինչպես ասում է Էնդելսը,— պատերազմը և կազմակերպումը պատերազմի համար ժողովրդական կյանքի կանոնավոր ֆունկցիաներն էին»¹։

Նման կարծիք հայտնել է, հատկապես, արմենների մասին, ակադ. Մառը իր «Անի» աշխատություն մեջ։

«Եվ ահա երևան են գալիս,— ասում է Մառը,— մեկը մյուսի հետևից ռազմատենչ արիական ցեղեր, ճիշտ այնպես, ինչպես ավելի ուշ շրջանում ներգաղթող թուրքերի հոծ լազմությունը։ Այս արիական ցեղերը, որոնք այդ ժամանակ, անկասկած, վայրենիներ էին համեմատած տեղական բնակչության հետ, սակայն ուժեղ էին իրենց ռազմական կազմակերպության պատճառով՝ հպատակեցնում են կուլտուրապես ավելի զարդացած ոսսան, խառնվում են նրա հետ և ստեղծում են մի նոր աշխարհ»։

Որ արմեններն այս շրջանում դաշնակից կամ համադործակից էին դառել մեղացիներին ու պարսիկներին՝ այդ բացատրվում է, ըստ երևույթին, մասամբ նրանով, որ այս երեք ժողովուրդները դանդաղ էին այդ ժամանակ հասարակական զարգացման նման ընթացաշրջանում, որը բնորոշվում է իբրև «ռազմական դեմոկրատիա»-յի հասարակակարգ։

¹ Նույնը, էջ 163։

Н. Я. Марр, Ани, Ленинград, 1934, էջ 5—6։

ԳԼՈՒԽ ՏՈՒՆԵՐՈՐԴ

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

1. Ամենեայն Պառակասանի րուպցումը. — հույների ձղջումը նվաճելու Պարսկասանը. — 2. Աղեքսանդր Մակեդոնացու հաղթական աւաւանքը և մակեդոնական իշխանության հաստատումը Արևելքում. — Աղեքսանդր Մեծի միացյալ մեծ պետության մասնատումը՝ նա իւր ժամանակը. — 3. Առաջագոյն Ասիայի սեպտական ու կուլլուրական տարզ վերելքը և նկլլենիսական հաղաւորութեան ճարձումը Արևելքում. — 4. Ինքնավար հաղաւորների նիւնումը և առևտրի առևտրների ու արդյունաբերութեան զարգացումը. — առևտրի համաշխարհային բնույթը. — վիտիսնակուրյունը և վիտային սեպտուրյունը. — 5. Արմենական երկրները մակեդոնական տիրապետության շրջանում. — արմենների մասնակցութեան մեծ կրկներկը. — Մենքի անշուք արեւմտեան Սպարտը. — Միքսիքս կուսակալի առաւումը Փոքր Հայք. — Արմենիայի տեղական իշխանների ինքնուրույնութեանը. — 6. Կապիտալիզմի նվաճումը և հանձնումը իրի ստորապարտութեան նկլլենիսին. — 7. Նեոպոլիտոնը՝ կուսակալ Փոքր Հայքի. — 8. Բանասերների սխալ կարծիքը Փրասակաւանի առաւումը մասին Հայաստան. — 9. Նրաւարդանների իշխանութեանը Արմենիայի մեծագոյն մասում. — 10. Կապիտալիզմի տգիտութեանը արմենների Արդաստի քաղաքի զարմիքի օգնութեամբ. — 11. Պոնտական քաղաքների նիւնումը:

Քսենոփոնի ժամանակից հարկուր տարի չանցած՝ Առաջավոր Ասիայի պատմութեան համար սկսվեց մի նոր դարաշրջան:

Չորրորդ դարում մեր թվականութեանից առաջ Պարսից մեծ պետութեանը աստիճանաբար ղնում էր դեպի անկում: Պետական կենտրոնացման այն հզոր կաղմակերպութեանը, որ ստեղծել էր Դարեհ Ա-ը՝ սրա հաջորդների ժամանակ սկսել էր հետզհետե թուլանալ, Սատրապները, որոնք միացրել էին իրենց ձեռքում ղինլորական ու քաղաքական իշխանութեանը՝ չափազանց զորեղացել էին և դառել էին դրեթե անկախ դերապետներ: Կենտրոնական իշխանութեանը հարկադրված էր լինում պարբերաբար կռիվ մղել ապստամբած սատրապների ու անկախութեան ձղտող

ժողովուրդները դեմ: Աքեմենյան Պարսկաստանի քաղաքական այս վատթար կացութիւնը շատ լավ հայտնի էր հույներին, որոնք իբրեւ վարձկան զինվորներ կատարում էին այստեղ նույն դերը: Ինչ որ պերմանացիները Հոռմեական կայսրութեան անկման շրջանում:

Հույները վաղուց արդեն ձգտում ունեին նվաճելու այս մեծ երկիրը և պարսկելու նրա հարստութիւնները: Դեռևս Սպարտայի թագավոր Աղեղիլաոսը փորձ էր արել սարչավելու Պարսկաստան և, Սարգեսի մոտ պարտութեան մատնելով պարսիկներին՝ հասել էր մինչև Կապպադոկիա (395 թ. մեր թվ. առաջ): Սակայն նա հարկադրված եղավ ետ նահանջել, որովհետև պարսիկներին հաջողվել էր Սպարտայի դեմ ոտքի հանել նրա հակառակորդներին բուն Հունաստանում:

Մակեդոնիայի Փիլիպպոս թագավորը (359—336 թ. մեր թվ. առաջ), որը կարողացել էր միացնել իր իշխանութեան տակ ամբողջ Հունաստանը՝ սպանւեց 336 թվին, երբ նա պատրաստվում էր հարձակվելու Պարսկաստանի վրա և հայտարարելու էր նրան պատերազմ: Սրա մահից հետո այդ մեծ ծրարը իրաւորձեց նրա որդին:

Աղեքսանդր Մակեդոնացին (336—323 թ. մեր թվ. առաջ) երեք մեծ ճակատամարտից հետո— 334 թվին Դրանիշ գետի մոտ, 333 թվին Կիլիկիայի Իսսոս հարթավայրի շրջանում և 331 թվին Նինիվեի ավերակների մոտ դանդաղ Դավաճմեայի ու Արբելայի շրջակայքում— վերջնականապես ջախջախեց ու ոչնչացրեց Պարսկաստանի ռադմական ուժը, նվաճեց Դարեհ III Կոդոմանտոսի՝ աշխարհածավալ պետութիւնը ու Հնդկաստանի մի մասը և հայտարարեց իրեն մակեդոնական-պարսկական միացյալ պետութեան ինքնակալ:

Այսպիսով 331 թվից սկսած պարսից տիրապետութիւնը փոխարինւեց Առաջավոր Ասիայում հունական-մակեդոնական տիրապետութեամբ, Նոր վիթխարի պետութեան կենտրոնը դառավ Բաբելոն քաղաքը:

Աղեքսանդր Մակեդոնացին մտադիր էր նոր արշավանք սկսել դեպի արեւմուտք և մտադիր էր նվաճել նաև ամբողջ Հյուսիսային Աֆրիկան ու Իտալիան, սակայն նա 323 թվին անակնկալ

1 Այս Դարեհ Կոդոմանտոս թագավոր զոհնալուց առաջ, ինչպես հաղորդում է Յուստինոսը, կղել է Արմենիայի սատրապ, տես Յ. Justinus Justinus, Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, X, 3, 4—5:

կերպով վախճանվեց համեմատաբար երիտասարդ հասակում (նա ծնվել էր 356 թվին) :

Աղեքսանդր Մակեդոնացու մահից հետո մակեդոնական ղուրավարների մեջ, որոնք փորձում էին ժառանգել ու տեր դառնալ մեծ աշխարհակալի նվաճած երկիրներին՝ ծաղեցին կատաղի ու երկարատև կռիվներ : Վերջ ի վերջո Աղեքսանդրի միապետությունը բաժան-բաժան եղավ, և ստեղծվեցին երեք խոշոր ու մի քանի փոքր թագավորություններ :

Առանձին խոշոր ու անկախ պետություն դառավ Մակեդոնական թագավորությունը, որը պարունակում էր իր մեջ Հունաստանը և Մակեդոնիան, Ասիական նվաճումների մեծագույն մասը ժառանգեց Սելևկոս զորավարը, որը հիմնադրել էր Սելևկյան մեծ պետության : Այս զորավարը, որն անվանվում է Սելևկոս Նիկատոր (Νικάτωρ = «հաղթող», 312—281 մեր թվ. առաջ)՝ իրեն մայրաքաղաք էր ընտրել նախ Բաբելոնը, հետո իր կառուցած Սելևկիա քաղաքը, որը դառնում էր Տիգրիս գետի վրա, և այդ իր հիմնած Անտիոք քաղաքը, որը գտնվում էր Ասորիքում Օրոնտես գետի վրա : Երրորդ մեծ պետությունն էր Նեպոտական թագավորությունը, որի հիմնադիրը եղավ Պաուսանյոս զորավարը : Բացի այս խոշոր պետություններից՝ հիմնվեցին փոքր Ասիայում նաև մանր թագավորություններ՝ Բյութանիան, Պերգամոնը և ուրիշներ :

Աղեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տիրապետությունը Առաջավոր Ասիայի պատմության համար սկիզբն եղավ սրա տնտեսական մեծ դարդացման ու արագ վերելքի և մինչև իսկ սրա տոցիալական կերպափոխման :

Մակեդոնական տիրապետությունն այստեղ արտակարգ միջընթաց դառավ առևտրի, արհեստների ու արդյունադրողության բուռն բարդավաճման, բաղմաթիվ հունական դադուկների ու քաղաքների հիմնարկման և հելլենիստական քաղաքային կուլտուրայի առաջացման, որով միանգամայն նոր ընթացք տրվեց Մերձավոր Արևելքի հետագա զարգացման :

Աղեքսանդր Մակեդոնացին, որ հանճարեղ Արիստոտելի աշակերտն էր, իրեն նպատակ էր դրել մերձեցնել իրար ու հասցնել Արևմուտքն ու Արևելքը, որոնք ըստ իրենց հասարակական կազմակերպության և կուլտուրական կենցաղի առանձին ու տարբեր աշխարհներ էին : Այդ հսկայական ծրագիրն իրագործելու համար Աղեքսանդրը աշխատում էր հելլենական ոգով քաղա-

քաղերթել արեւելցիներին, որոնք հուլիսի և մակեդոնացի մտավորականների աչքում համարվում էին արդեն բարեկիրթ օտար ժողովուրդներ: Արեւելքի հելլենացման համար նա դիմում էր արմատական ու կտրուկ միջոցների: Արեւելցիներին նա խումբ-խումբ փոխադրում էր Եվրոպա, իսկ Եվրոպայից գաղթեցնում էր Ասիա հուլիսներ ու մակեդոնացիներ: Նա հիմնել էր Արեւելքում բազմաթիվ ինքնավար քաղաքներ, որոնց բնակչութան հիմնական մասը կազմում էին հունական և մակեդոնական ղեկավարական զաղուկները: Նա ամեն կերպ խրախուսում էր խառն ամուսնությունները և, օրինակ տալու համար իր հպատակներին՝ հենց ինքը ամուսնացել էր բակտրուհի Ռոքսաննի հետ:

Հելլենացման նույն քաղաքականութունը շարունակվել էր Աղեքսանդր Մակեդոնացու հաջորդների և, մասնավորապես, Սելևկյանների ժամանակ, որոնք բազմաթիվ քաղաքներ էին հիմնել, դիվանավորապես, Հայաստանին սահմանակից երկիրներում՝ Միջագետքում և Ասորիքում:

Այսպիսով Աղեքսանդր Մակեդոնացու նվաճումների շնորհիվ հունական կուլտուրան տարածվեց Առաջավոր Ասիայում: Նա խառնվեց այստեղ տեղական արեւելյան կուլտուրաների հետ և այդ միացումից ծագեց հունական-արեւելյան խառն կուլտուրան, որն անվանվում է հելլենիստական:

Առաջավոր Ասիայի վերահիշյալ նոր պետութայններում, որոնք կաղմվել էին Աղեքսանդր Մակեդոնացու հաջորդների ժամանակ, մեծ չափով հարգված էին ու տարածված հունարեն լեզուն, հունական դրականութայնը, դիտութայնը և փիլիսոփայութայնը:

Նվաճելով Մերձավոր Արեւելքը և հիմնելով այստեղ աշխարհակալ մի մեծ պետութայն, որը տարածվում էր մինչև Հիբուկական օվկիանոսը և իրանի հյուսիս-արեւելյան շրջանները՝ հելլենական արեւմուտքը, ինչպես ասացինք, ամենամեծ չափով աշխատել էր զարկ տալ այստեղ առևտրի, արհեստների և արդյունադործութայն դարդացման, Աղեքսանդր Մակեդոնացին և նրա հաջորդները բարեկարգեցին և ապահովեցին Եվրոպայի ու Առաջավոր Ասիայի հաղորդակցութայնը Միջին Ասիայի ու Հնդկաստանի հետ: Առևտուրը ստացավ նրանց ժամանակ համաշխարհային բնույթ և նրա դիվանավոր կենտրոնները դառան եզրիպտոսում Աղեքսանդրիա քաղաքը, իսկ Մերձավոր Արեւելքում՝ Սելևկիան ու Անտիոքը:

Նոր քաղաքները, մեծ մասամբ, հիմնվում էին առևտրական մեծ ճանապարհների վրա: Այդ քաղաքներն ինքնավար էին և իրենց ներքին էությունով միանգամայն տարբեր էին Արևելքի գյուղաքաղաքներից: Լինելով խոշոր համաշխարհային առևտրի միջնորդներ՝ նրանք աներևակայելի արադուլթյամբ բարդավաճում ու հարստանում էին և, ընականաբար, դեպի Արևելք էին դրավում Հունաստանի առևտրական կապիտալը, միաժամանակ նաև նրա ժողովրդի ձեռներեց ու ընդունակ տարրերը: Փոխանակության ու շրջային տնտեսության զարգացմանը մեծապես նպաստում էին Աղեքսանդր Մակեդոնացու դրաված ոսկի ու արծաթ դրամի այն հսկայական հարստությունները, որ մինչ այդ անօգտաբար կիտված էին Պարսից թագավորի դանձապահեստներում:

Ինքն ըստ ինքյան հասկանալի է, որ համաշխարհային մեծ առևտրի հետ միասին հելլենիստական քաղաքներում կենտրոնացավ նաև հելլենիստական համատարած կուլտուրան՝ արվեստը, կրթությունը և դիտությունը: Որքան մոտ լինեք այդ քաղաքներից որևէ երկիր՝ այնքան նա ալիելի էր ենթարկվում հելլենիզմի ազդեցությանը: Իսկ որովհետև առևտրական մեծ ճանապարհները գտնվում էին Առաջավոր Ասիայի հարավային կողմերում և Միջերկրական ծովափնյա երկիրներն ամենամեծ նշանակություն ունեին առևտրական հաղորդակցության համար՝ ուստի և հելլենիզմը ամենից շատ տարածվեց Ասորիքում, Միջադեռքում, Երևալոսում և Փոքր Ասիայի արևմտյան մասերում, ուր և գտնվում էին մակեդոնական ու սելևկյան քաղաքների մեծագույն մասը:

Ալեքսանդրյան Պարսկաստանի նվաճումը և Աղեքսանդր Մակեդոնացու աշխարհակալության ու Սելևկյանների հելլենիստական մեծ պետության հաստատումը Առաջավոր Ասիայում Հայաստանի պատմության և նրա քաղաքական ու տնտեսական զարգացման համար սկիզբն են համարվում նոր դարաշրջանի, որը տևեց մինչև Զարեհյան ու Արտաշեսյան թագավորությունների հիմնադրումը Մոսկոսում ու Մեծ Հայաստանում (330—190 մեր թվ. առաջ):

Հայ ժողովրդի անցյալի այս հարյուր քառասուն տարվա պատմությունը, դժբախտաբար, մեզ որոշ հայտնի է: Հայկական հին աղբյուրները չեն տալիս այս դարաշրջանի անցքերի մասին ոչ մի տեղեկություն: Ուստի անհրաժեշտ է դիմել բա-

ցառապես օտար աղբյուրների օգնության, որոնք թեև Հայաստանի մասին ունեն կցկտուր միայն ու պատահական վկայություններ, բայց և այնպես փոքր ի չատե լույս են սփռում նրա բաղադրական դրության վրա այս ժամանակաշրջանում:

Պետք է ասել, որ այդ մութ ու աղոտ տեղեկությունները խառնաչիփոված ու հաճախ սխալ են լուսարանված պատմական դրեթն բոլոր Հայկական երկերում:

Հռոմեական-հունական աղբյուրները—Արրիանի և Կուրտիուս Ռուֆուսի—վկայություններից մեղ Հայտնի է, որ արմենները պարսիկների հետ միասին մարտնչել էին Աղեքսանդր Մակեդոնացու դեմ Գավլամեւայի ճակատամարտում¹: Արմենական զորքի թիվը Կուրտիուս Ռուֆուսի մոտ ցույց է տրված 40·000 հետևազոր և 7·000 հեծելազոր²: Գավլամեւայի ճակատամարտում, ինչպես վկայում է նույն այս հեղինակը, պարսկական լանակի ձախ թևում դտնվել են փոքր Հայքի արմենները, իսկ աջ թևում՝ Մեծ Հայքի զորքերը³: Արրիանի վկայությամբ՝ արմենական այս զորքերի առաջնորդներն են եղել Օրոնտեսը և Միթրաուստեսը (*Ὀρόντης καὶ Μιθράστης*)⁴:

Մեջ բերված այս փաստական տեղեկությունները ըստիս կարևոր են ու ուշադրավ, որովհետև չորրորդ դարի երկրորդ կիսում մեր թվականությունից առաջ նրանք հիշատակում են իրեն երկու առանձին երկիրներ ո՛չ թե Արևելյան ու Արևմտյան Հայաստանը, ինչպես այդ մատնանշված է Քսենոփոնի «Անաբասիս»-ում, այլ Մեծ Հայքը և Փոքր Հայքը:

Ինչպես Հայտնի է, Աղեքսանդր Մակեդոնացին արշավել էր Արևելք Փոքր Ասիայի հարավային շրջաններով և Կիլիկիայի ու հյուսիսային Միջագետքի վրայով անցել էր դեպի Բաբելոն, Սուդա և Պերսեպոլիս: Նա Հայաստան ինքը բնավ չէր մտել, ուստի և թե Հայաստանը և թե Փոքր Ասիայի լեռնային հյուսիսային շրջանները նրա արշավանքի ժամանակ չէին ենթարկվել հարձակումների:

Սուրարոներ վկայում է սակայն, որ Պարսկաստանի նվաճումից հետո Աղեքսանդրի կողմից Մենոնի առաջնորդությամբ առանձին զորամաս է ուղարկված եղել Հայկական լեռնաշխարհը

¹ Arriani, De expeditione Alexandri, III, 11, 7. Curtius Rufus, Historiae Alexandri Magni, IV, 19, 10:

² Curtius Rufus, III, 2, 6:

³ Նույնը, IV, 12, 12:

⁴ Arriani, III, 8, 5:

գրավելու համար Հյուսպիրատիսի՝ չրջանում (Սպեր գավառում)՝
գտնվող ոսկու հանքերը:

«Հյուսպիրատիսի մեջ Կաբալլայի մոտ, — ասում է
Ստրաբոնը, — գտնվում են ոսկու հանքեր և Աղեքսանդրը
ուղարկեց այնտեղ Մենոնին զորքով, սակայն սա խեղդամահ
արվեց տեղացիների կողմից»:

Արրիանի և Կուրտիուս Ռուֆուսի մի այլ թուղթիկ ու անո-
րոշ վկայութունից հայտնի է դարձյալ, որ Գավղամեկայի ճա-
կատամարտից հետո Աղեքսանդր Մակեդոնացին ուղարկած է
ևղել Հայաստան պարսիկ Միթրինես սատրապին, որը դավա-
ճախաբար հանձնել էր իրեն Սարգեսի ամրոցը:

«Նվ նա ուղարկեց Արմենիա, — վկայում է Արրիանը, —
Միթրինես սատրապին, որը Աղեքսանդրին հանձնել էր
Սարգեսում ամրոցը»:

Մեջ բերված այս անորոշ վկայութունը հիմք է ծառայել
բանասերներին ու պատմագետներին ենթադրելու, որ արդեն
Աղեքսանդր Մակեդոնացու կենդանության ժամանակ արմենա-
կան երկիրները ենթարկվել էին մակեդոնական իշխանության և
կառավարվում էին նրա կուսակալների ձեռքով, Գիտնականնե-
րից ոմանք էլ, ինչպես, օրինակ, Բաբելոնը և նրան հետևելով
նաև ուրիշները, ենթադրում են, որ Միթրինեսը կուսակալ էր
նշանակվել միայն Փոքր Հայքի¹:

Այս ենթադրութունները պարզապես չհիմնավորված կոա-
հումներ են, որ չեն կարող հաստատուն համարվի: Ավելի հա-
վանական է, հարկավ, դերմանական դիտնական Բելլոսի կարծի-
քը², որը մատնացույց է անում, որ Միթրինեսին չէր հաջողվել,
ըստ երևույթին, տիրել Հայաստանին, որովհետև 317 թվին³

¹ Հունարեն ձեռագիրն ունի Հյուսպիրատիս (ἐν τῇ Ὑσπάρτιδι), որին
Մարկվարտը համապատասխան է համարում Հերոդոտոսի Σάοπειρος-ը (III, 94)
և Քսենոֆոնի Ἐσπερίται-ը (Anab. VII, 8, 26). տես Eranschahr, Berlin, 1901,
էջ 159:

² Strabo, XI, 14, 9:

³ Տես Arrian, III, 16, 5 և Curtius Rufus, V, 1, 44 — Արմենիան տրվել
էր Միթրինին (Mithreni), Սարգեսի դավաճանին. համեմատե նաև Diodori,
Bibliotheca historica, XVII, 64, 6:

⁴ Տես M. Ernest Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Comma-
gène, Paris, 1890, էջ CXCI:

⁵ Beloch R. J., Griechische Geschichte, III Band, 2 Abteilung, Strass-
burg, 1904, էջ 245:

(մեր թվ. ա.) իբրև բուն Հայաստանի կառավարիչ հիշատակվում է աղբյուրների մեջ Օրոնասա—Երվանդը, որը, ինչպես տեսանք, արմենական զորքի առաջնորդն էր Գավգամելայի ճակատամարտում:

Կուրախուս Ռուֆուսի մոտ (VI, 3, 3) մեջ է բերված Աղեքսանդր Մակեդոնացու Պարթևստանում արտասանած ճառը, որի մեջ Մերձավոր Արևելքի հյուսիսային շրջանները՝ Կասպագոգովիան, Պարթևստանի և Արմենիան՝ մատնացույց են արված որպես նվաճված երկիրներ: Սակայն այս վկայությունը ևս, որը հակասում է հնագույն աղբյուրների արժանահավատ ցուցումներին՝ իրավացի կերպով համարվում է անվստահելի:

Աղեքսանդր Մակեդոնացու մահից հետո (323 թ. մ. թվ. առաջ) նրա նվաճած երկիրները, ինչպես հայտնի է, իրենց մեջ բաժանեցին նրա զորավարները: Այդ բաժանումը տեղի էր ունեցել մի քանի անգամ՝ 323 թվին Բաբելոնում, 321 թվին Տրիպարադեսում և 315 թվին Պերսեպոլիսում: Բաժանման ցուցակները մեզ հայտնի են: Սակայն ուշադրով է, որ բաժանման ենթարկված երկիրների շարքում ցուցակներից և ոչ մեկում չէ հիշատակված Արմենիան՝ ո՛չ Մեծ Հայքը, ո՛չ էլ Փոքր Հայքը:

Որ Հայաստանը, իրոք, չէր դառել մակեդոնական կամ սելևկյան սատրապական նահանգ, այլ կառավարվում էր գրեթե միշտ բնիկ իշխանների ձեռքով (իշխանական պարսկական տոհմերը, հավանորեն, ձուլվել էին արդեն արմենականների հետ)՝ այդ պարզ կերպով մատնանշված է Յուստինոսի մոտ՝ Միհրդատ Եվպատորին վերադրված ճառի մեջ:

«Որ նա ինքը,— ասել էր իր ճառի մեջ Միհրդատը,— այնպիսի երկիրների թաղավոր է, որոնք ոչ միայն հավասար են Հռոմեական պետությանը, այլև կարող են դեմ-հանդիման կանգնել նույնպես և Մակեդոնականին: Իր հպատակ ժողովուրդներից և ոչ մեկը չէ կրել օտար իշխանություն. նրանք միշտ հնազանդվել են տեղական իրենց միայն թաղավորներին, Եթե ուզում են՝ թող քննության առնեն Կասպագոգովիան կամ Պարթևստան, Պոնտոսը կամ Բյութանիան, նմանապես և Մեծ Հայքը կամ Փոքր Հայքը. այդ ժողովուրդներից և ոչ մեկին ձեռք չէին տվել ո՛չ ինքը Աղեք-

սանդը, որ նվաճել էր ամբողջ Ասիան, ո՛չ էլ որևէ մեկը նրա հաջորդներից կամ հետնորդներից¹։

Մակեդոնական-պարսկական երկիրների առաջին բաժանման ժամանակ, որ տեղի էր ունեցել Բաբելոնում 323 թվին՝ զորավարների ժողովում որոշում էր ընդունվել նվաճել Հայաստանի հարևան Կապպադովկիան, — ուր այդ ժամանակ իր իշխանությունը էր հաստատել պարսկական սատրապ Արիարաթը, — նաև Պարթևական ու Սև ծովի մոտակա շրջանները մինչև Տրապիզոն և այդ երկիրները տալ իրրև առանձին սատրապություն Ադեքսանդր Մակեդոնացու քարտուղար Եվմենեսին²։ Համաձայն այդ որոշման ինքը մակեդոնական զորքերի հրամանատար Պերտիկասը, որը Բաբելոնի ժողովում ընտրվել էր պետութայն խնամակալ՝ եկալ նվաճելու Կապպադովկիան։ Արիարաթը ծանր պարտություն կրեց ու մահվան դատապարտվեց (322 թ. մեր թվ. սոսալ) և Կապպադովկիայում հաստատվեց իբրև սատրապ Եվմենեսը,

Շատ պարզ է, որ Եվմենեսի նորանվաճ այս սատրապությունը, որի սահմանը հասնելու էր մինչև Տրապիզոն, վտանգավոր հարևան էր դառնում Փոքր Հայքի համար, որը դառնվում էր անմիջապես հարավային Մեծ Կապպադովկիայի և ծովեզրյա Պոնտական Կապպադովկիայի միջև։ Կապպադովկիան նվաճելուց հետո Պերտիկասի զորադուխները աշխատելու էին, բնականաբար, տիրել և Փոքր Հայքին։ Եվ, իրապես, արդեն 322 թվին ուղարկված է եղել Փոքր Հայք զորապետ Նեոստոլեմոսը, որը պետք է նվաճեր այդ երկիրը։

Սկզբնաղբյուրների որոշ ակնարկներից դժվար չէ կռահել, որ Փոքր Հայքը ոչ թե առանձին սատրապություն էր, ինչպես այդ սովորաբար ենթադրվում է պատմադիտական նորադույն երկերում, այլ նա արևելյան մասն էր Եվմենեսին տրված Կապպադովկյան սատրապության, և Նեոստոլեմոսին էին հանձնարարել գրավել այդ շրջանը։

Ինչպես վկայում է Պլուտարքոսը, Նեոստոլեմոսը, որը չափից դուրս հպարտ էր ու կամակոր՝ խիստ գրգռել էր Փոքր Հայքի բնակչութունը և առջացրել էր այնտեղ խռնակություններ ու ապստամբություն։ Այնուհետև Եվմենեսի միայն

¹ *SEu Justin, Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogl.* XXXVIII, 7.

² *SEu Plutar., Eumenes, III, 3.*

միջամտությամբ, որը վարում էր մեղմ ու հաշտ քաղաքականություն, հաջողվել էր Փոքր Հայքը խաղաղացնել ու հնադանդեցնել:

«[Պերտիկկասը] Կիլիկիայից ուղարկեց Եվմենեսին, — պատմում է Պլուտարքոսը¹, — երևութապես նրա սեփական ստորապուլթյունը, բայց, իրական, որպեսզի նա իր ձեռքում պահե սահմանակից Արմենիան, որը Նեոպտոլեմոսը հասցրել էր ապստամբական դրության: Արդ՝ Եվմենեսը փորձում էր սրան [Նեոպտոլեմոսին], որը մեծամոլությամբ ու սնոտի հպարտությամբ էր տառապում՝ զսպել բարեկամական հորդորներով»:

Որ Փոքր Հայքն այնուհետև նորից հպատակվել էր մակեդոնացիներին՝ այդ պարզ երևում է դարձյալ Պլուտարքոսի վկայությունից:

«Երբ Կրատերոսը և Անտիպատրոսը, — ասում է Պլուտարքոսը², — հույներին հաղթելուց հետո անցել էին Ասիա, որպեսզի զրկեն Պերտիկկասին իշխանությունից, և երբ արդեն լուր էր սաացվել, որ նրանք մաադիր են ներխուժել Կապպադոկիա՝ Պերտիկկասը, որը ինքը ռադմերթի էր ելել Պտղեմայոսի դեմ՝ նշանակել էր Եվմենեսին բարձրագույն հրամանատար Արմենիայում և Կապպադոկիայում դանվոդ զորքերի և այդ մասին նամակներ էր գրել Ալկեասին և Նեոպտոլեմոսին ու հրամայել, որ նրանք հնադանդվեն Եվմենեսին, որին իրավունք է արված Վործերը վարել ըստ իր բարեհայեցողության»:

Այս վկայության մեջ հիշատակված Արմենիան, անտարակույս, Փոքր Հայքն է, որ 321 թվի քաղաքացիական կռիվի ժամանակ, ինչպես տեսնում ենք, դառնվել է մակեդոնական իշխանության տակ:

Նույն այս 321 թվին Եվմենեսը հաղթել էր Կրատերոսին և սպանել էր ճակատամարտում Նեոպտոլեմոսին, որն անցել էր դավաճանաբար վերջինիս կողմը: Ասկայն Եվմենեսի այս հաղթությունն այլևս ապարդյուն էր, որովհետև միևնույն թվին (321 թ. մեր թվ. ա.) եգիպտական վերահիշյալ արշավանքի ժամանակ մակեդոնական զորքը սպանել էր Պերտիկկասին և

¹ S⁸u Plut., Eumenes, IV, 1—2.

² Նույնը, V, 1.

պետութեան խնամակալութեան պաշտօնը հանձնվել էր այնուհետև Անտիպատրոսին:

Իր հաղթութիւնից հետո Եւթիմենեսը դեռ մի քանի տարի կարողացաւ դիմադրութիւն ցույց տալ հակառակորդ խմբի զորավարներին և այդ ժամանակաշրջանում, հաւանաբար, նա պահել էր իր իշխանութեան տակ ո՛չ միայն Կապպադովկիան, այլև Փոքր Հայքը¹:

Պետք է ասել, որ հայոց պատմութեան վերաբերյալ նորադասին երկերում պատմական անցքերն այս ժամանակաշրջանի խառնաշփոթված են ու սխալ են մեկնված, գլխավորապես, այն պատճառով, որ ի նկատի չէ առնված, որ Պլուտարքոսի վերոհիշյալ վկայութիւնները վերաբերում են ո՛չ թե բուն Հայաստանին, այլ Կապպադովկիային հարևան Փոքր Հայքին: Այս բերդատեղի արմենական երկիրները, բուն Հայաստանը, մակեդոնացիներից նվաճված չէ եղել և նրանք կառավարվել են տեղական իշխանների ձեռքով:

Եվ, իրավի, Իիոդորոսի և Պուլիենոսի մոտ՝ մոտավորապես 317 թվին (մեր թվ. ա.) հիշատակված է իբրև բուն Արմենիայի սատրապ Օրոնտաս—Երվանդը, որը եղել է Պարսկաստանի Պերսիս նահանգի սատրապ՝ մակեդոնացի Պեվկեստասի մոտ բարեկամը: Իբրև Արմենիայի սատրապ՝ մի այլ Օրոնտաս—Երվանդ, ինչպես տեսանք, հիշատակված էր 401/400 թվին (մեր թվ. ա.) Գսենոփոնի «Անաբասիս»-ում: Նույն այս Օրոնտասների կամ Երվանդների առհմից է եղել, անշուշտ, այն Օրոնտասը, որն արմենական զորքերի առաջնորդներից մեկն էր Գալգամիայի ճակատամարտում: Ըստ Երևույթին, հենց այս Օրոնտասը շարունա-

¹ Պատմական նորադասին աշխատութիւններում հիշատակվում է հաճախ, որ իբրև Հայաստանի սատրապ Պերսիկկասը ուղարկած է եղել նաև Փրասպիեոնեսին: Առաջին անգամ այս տեղեկութիւնը, որքան ինձ հայտնի է, մեջ է բերել Չամչյանը («Պատմութիւն Հայոց», հատ. Ա., Վենետիկ, 1784, էջ 127), հիմք ընդունելով Յուստինոսի վկայութիւնը (գիրք III, գլ. 4): Հետեւելով նրան նույնը կրկնել են նաև Գալգամիայի պատմութիւնը, Ա., էջ 81), Բասմաջյանը («Բնական պատմութիւն Հայոց», Պոլիս, 1914, էջ 141—142), Morgan-ը («Histoire du peuple arménien», էջ 62) և ուրիշները: Այդ տեղեկութիւնը միանգամայն սխալ է: Յուստինոսի մոտ (III, 4, 23) Փրասպիեոնեսը հիշատակված է իբրև սատրապ ոչ թե Հայաստանի, այլ Հյուրկանիայի:

² Տես Diodoros, գր. XIX, գլ. 23, § 3 և Polyenos, Strategematicon, IV, 8, 3:

Քիւլէր անընդհատաբար իշխել Մեծ Հայքում նաև 331 թվից հետո՝ մակեդոնացիների կռիւների խառն ու խռովահուշ ժամանակաշրջանում :

Երվանդյանների ժառանգական իշխանութիւնը, որ Հայաստանի մեծագոյն մասում հաստատվել էր Աքեմենյան Պարսկաստանի տիրապետութեան ժամանակ և մնացել էր անխախտ նաև Աղեքսանդր Մակեդոնացու ու նրա հաջորդների շրջանում՝ հնարավոր էր դարձրել, ինչպես չատ ճիշտ նկատել է Դրոյզոնը¹, ճիշտ անկախ պետութիւնների—Կապադոքովկիայի և Պոնտոսի հիմնումը Փոքր Ասիայում, որոնց քաղաքական ուղղեցութեանը չուտով զղալի էր դառնալու հելլենիստական Արևելքում :

Հատկապէս Կապադոքովկիայի աղատադրման մասին արմենական զորքերի օղնութեամբ հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում Դիոդորոս Միլիթիացին, որ ավելորդ չեմ համարում թելք բերել ամբողջութեամբ :

«Եվ այդ ժամանակները, — պատմում է Դիոդորոսը, — Աղեքսանդր Մակեդոնացին հաղթում է պարսիկներին և հետո մեռնում է : Եվ Պերսիկասը, որն այդ ժամանակ պետութեան առաջնորդն էր՝ Կապադոքովկիայի զորապետ ուղարկում է եմվանեսին : Երբ Արիարաթն այստեղ հաղթվեց և ճակատամարտում ընկավ՝ Կապադոքովկիան՝ թե ինքը և թե սահմանակից երկիրները՝ անցան մակեդոնական իշխանութեան տակ : Իսկ Արիարաթը, նախկին թաղավորի որդին, հուսահատութեան հասնելով այս անցքերի պատճառով՝ փախչում է քչերի հետ Արմենիա : Մի քանի ժամանակից հետո, երբ Եմվանեսը, Պերսիկասը և նրանց համախոհները վախճանվել էին՝ իսկ Անտիդոնոսն ու Սելևկոսն այլ գործերով էին զբաղված՝ նա [Արիարաթը], վերցնելով արմենների թաղավոր Արդոատեսից զորք՝ սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և տեր դառավ իր հայրենի իշխանութեանը² :

Դիոդորոսի այս վկայութեամբ, մեջ հիշատակված «արմենների թաղավոր Արդոատեսը»-ը համարվելու է, ամենայն հավանականութեամբ, ոչ թե Փոքր Հայքի թաղավոր, ինչպես այդ ենթա-

1 Տե՛ս J. G. Droysen, Histoire de l'Hellénisme, III, Paris, էջ 80 :

2 Տե՛ս Diodori, Bibl. hist., գր. XXXI, գլ. 19, § 4—6 :

դրել են Ռեյնաքը¹ և ուրիշները, ալ Մեծ Հայքի Սանտալճյանը շատ ճիշտ մատնացույց է արել, որ Արդոտատեսը, որը չէր վախեցել հզոր մակեդոնացիներից՝ պետք է եղած լիներ հեռավոր ու մեծ երկրի թագավոր և պետք է ունեցած լիներ բավական մեծ զորք²։ Կապպադովկիայի հարևան Փոքր Հայքը, որը, ինչպես տեսանք, ինքը ևս Արիարաթ Ա-ի սպանությունից հետո ենթարկվեց մակեդոնացիների իշխանության՝ չէր կարող, իհարկե, ապահով ապաստարան ծառայել Արիարաթ Բ-ին։

Արմենիների թագավորի Արդոտատես ('Αρδοάτης) անունը, որ համարվում է աղճատված՝ Ռեյնաքը³ և հայագետ բանասերների մեծագույն մասը կարդում են Արտավազդ (= 'Αρτασιδανός), Ավելի հավանական է, իմ կարծիքով, Մարկվարտի Լեթադերությունը, որը 'Αρδοάτης աղճատված անունը առաջարկում է ուղղել և կարդալ 'Αρτοάδης (= 'Ορόντης, «Երուսաղիմ»)։

Հիմնվելով մեջ բերված Դիոդորոսի վկայության վրա և նրա մեջ հիշված Ամյունտասին համարելով Անտիգոնոսի զորապետ՝ Ռեյնաքը ենթադրել է, որ Արիարաթ Բ-ը արմենական զորքերի օգնությամբ տիրել էր Կապպադովկիային Սելևկյանների տիրապետության առաջին տարիներում, հավանորեն, 301/300 թվերին (մեր թվ. ա.)։ Նույն այդ ժամանակ, նրա կարծիքով, Պոնտական Կապպադովկիայում ապստամբել էր Միհրդատ Ա-ը և հիմք էր դրել նախնայես Պոնտական թագավորությանը։

Այս բացատրությունը, հատկապես, Կապպադովկիայի ազատագրման և Արիարաթ Բ-ի թագավորության ժամանակի մասին՝ դերմանական պատմագետ Բելոխը համարում է վիճելի և անհավանական։ Դիոդորոսի վկայության մանրազնին քննությանը Բելոխից դեռ առաջ Մարկվարտը հանգել էր այն եզրակացությանը, որ Դիոդորոսի մոտ կամ, ավելի ճիշտ, նրա օգտագործած սկզբնաղբյուրների մեջ՝ Կապպադովկիայի թագավորա-

¹ S^{Eu} Reinach, Mithridate Eupator roi de Pont, Paris, 1890, էջ 31, ծան. 6։

² J. Sandalgian, Histoire documentaire de l'Arménie, II, Rome, 1917, էջ 409։

³ S^{Eu} Mithridate Eupator, էջ 31, ծան. 6։

⁴ S^{Eu} Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, Heft I, Göttingen, 1896, էջ 27, ծան. 123։ Համեմատե նաև Droysen, Histoire de l'Hellénisme, II, էջ 134։

⁵ S^{Eu} Reinach, Mithridate Eupator, էջ 30—31։

⁶ Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, I, էջ 5—28։

կան տան ճյուղագրութիւնը դիտավորյալ կերպով՝ աղավաղ-
ված է: Բելոկի կարծիքով, Արիարաթ Բ-ը, որը չէր կարող լի-
նել Արիարաթ Ա-ի որդին, Կապպադովկիայի Թագավորու-
թիւնը հիմնած պիտի լիներ Արդոատես Թագավորից սուացած
ղորգերի օգնութեամբ մոտավորապէս 270 կամ 260 թվին:
(մեր թվ. ա.):¹

Ինկատի ունենալով, որ Փոքր Հայքը դառնում էր Կապ-
պադովկիայի ու Պոնտոսի միջև՝ կարելի է վստահորեն հետեցնել,
որ տեղական Թագավորութիւնների հաստատումից հետո այս-
երկու խրկիրներում՝ նպաստավոր պայմաններ էին ստեղծվեր
ինքնաբերաբար նաև Փոքր Հայքի քաղաքական ազատ սերման և
հետագա ինքնուրույն զարգացման համար:

¹ *Sten J. Beloch, Griechische Geschichte, Dritter Band, Erste Abteilung*
էջ 693, և *Zweite Abteilung*, էջ 166-168.

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՄԵՍ ՀԱՅԳԸ, ԺՈՓԳԸ ԵՎ ՓՈՓՐ ՀԱՅԳԸ ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Սելեվկոս Նիկասոսի տիրապետության հաստատումը Միջագետքում և Ստորինում.—Մեզ մեզմ ու զիջող քաղաքականությունը.—2. Մեծ Հայքի և Մովսիսի ենթարկումը Սելեվկոսի գերիշխանության.—այս գերիշխանության անվանական բնույթը.—3. Այսրեփրատյան Արմենիան սելեվկյան ժամանակաշրջանում.—Մեծ Հայքի և Մովսիսի.—4. Օրոնդաս—Նովանդ քաղաքների հիմնադրությունը Արմավիրի հունարեն արձանագրության մեջ.—Արմավիրը՝ կենտրոն Նովանդյան քաղաքությունը.—5. Ասորպատեսը և Ասորպատեանի իշխանությունը.—Աղվանի որոշ քաղաքներ և հասկապես, Ուսիքը՝ իբրև մաս այս իշխանության.—6. Ասորպատեանը Արաքսազանքի ժամանակ (մոտավորապես 220 թ. մեր թվ. առաջ).—Այրարատը՝ որպես մաս Արաքսազանքի իշխանության (ըստ Պոլիբիոսի).—Պոլիբիոսի վկայության անհավանականությունը.—7. Մեմոնի և Պոլիբիոսի վկայությունները արմենական երկրների քաղաքների մասին.—8. Անտիոս Ի-ի ռազմական արավանը Արամասա քաղաքի քաղաքը Քսեփոսի դեմ.—Արամ և Քսեփոս.—Արասես և Ջարեն.—9. Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Մովսիսներից ինքնավարությունը.—հելլենիզմի ազդեցությունը.—Մովսիս առևտրական նպաստավոր դրությունը.—10. Արամասա և Կարկաթիոկես քաղաքները.—Մուսց թեղադրությունը.—առևտրի ու դրամական քաղաքականության զարգացումը.—սոցիալական տեսությունը ու ժողովրդի

Սելեվկյան. քաղաքականության հիմնադիրը, Սելեվկոս զորավարը, մակեդոնական-պարսկական մեծ պետության երկրորդ ռաթանման ժամանակ, որ տեղի էր ունեցել Տրիպարադիզոն 321 թվին, կարգվել էր Բաբելոնիայի սատրապ։ Իր այս սատրապության մեջ նա վերջնականապես հաստատվել էր միայն 312 թվին և այս թիվը սկզբնական տարին է համարվում Սելեվկյանների իշխանության ու նաև սելեվկյան հատուկ տոմարի։

Բայց այս թվից հետո ևս ներքին կռիվները մակեդոնական զորավարների մեջ շարունակվեցին գրեթե առանց ընդհատումների մինչև չորրորդ դարի վերջը (մեր թվ. ա.)։ Միայն Իպսոսի

301 Թվի վճռական ճակատամարտը և միահեծան իշխանության ձգտող Անտիգոնոսի մահը վերջ դրին Առաջավոր Ասիայում մահեղոնական զորավարների անլերջ պատերազմներին:

Նոր համաձայնությամբ Սելևկոս Նիկատորը (312—281 մեր թվ. ա.), որը արդեն 305/4 թվին իրեն հայտարարել էր թագավոր՝ ստացավ Անտիգոնոսին պատկանող Սաուրիքը և Միջագետքը: Այնուհետև Սելևկյանները հետզհետե հիմնադիր եղան մի մեծ աշխարհակալության, որը տարածվում էր Հնդկաստանից մինչև Հելլենադոնոս: Նոր այս աշխարհակալությունը, ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, Սելևկոս Նիկատորը կարողացել էր հաստատուն դարձնել, դիտավորապես, շնորհիվ իր մեղմ ու ղիջող քաղաքականության: Աղբյուրների վկայություններից մեզ հայտնի է, որ Արևելքում մեծապես հարգում էին այս Սելևկոսին ու Մեծ Հայքի սատրապ Օրոնտաս—Նոյանդի բարեկամ վերոհիշյալ Պեկեստասին, որոնք խոհեմ հետևողներ էին Աղեքսանդր Մակեդոնացու քաղաքականության և չէին անարդու ու արհամարհում հպատակված ժողովուրդների կրոնը, լեզուն ու կուլտուրական առանձնահատկությունները:

Արմենական երկիրների մասին Սելևկյանների ժամանակ մեր ունեցած տեղեկությունները, ինչպես և նախորդ շրջանի համար, դարձյալ կցկաուր են ու պատահական:

Ապպիանոսի կարևոր մի վկայությունից հայտնի է մեզ, որ Արմենիան, ամենայն հավանականությամբ, Մեծ Հայքը և Մուսիքը՝ ենթարկված են եղել Սելևկոս Նիկատորի ղերապույն իշխանությանը:

«Ճակատամարտում Անտիգոնոսի ընկնելուց հետո,—ասում է Ապպիանոսը,— այն թագավորները, որոնք Սելևկոսի հետ միասին հաղթել էին նրան՝ Անտիգոնոսի երկիրը բաժանեցին իրենց մեջ: Եվ որոշվեց այդ ժամանակ, որ Սելևկոսը տևր լինի Ասորիքին Եփրատ դետից դեպի ծով և միջերկրական փոյուղիային: Աչալուրջ կերպով հսկելով ռաբունակ մերձակա ժողովուրդներին՝ Սելևկոսը, որը հարավորություն ուներ բռնություն դործ դնել և վստահ էր, որ կկարողանա նրանց իր կողմը դրավել՝ տիրել էր Միջագետքին, Արմենիային, Կասպագետիկային, որն անվանվում էր Սելևկյան, Պարսկաստանին, Պարթևստանին, Բակտրիային, Արարական երկիրներին, Տաբարստանին, Սոլդերաններին, Արախոսիային, Վրկանին և բոլոր այլ հարակից ժողովուրդը:

ներին մինչև ինդոս դետը, որ նվաճել էր Աղեքսանդրոսը՝
այնպես որ Աղեքսանդրոսից հետո նրան էր, հատկապես,
բաժին ընկել մեծադուլն մասը Ասիայի՝:

Նույնը վկայում է նաև Սարաբոնը և մատնացույց անում, որ
«Արմենիային տիրել էին պարսիկները և մակեդոնացիները,
իսկ նրանցից հետո Սելևկյանները, որ նվաճել էին Ասորիքը
և Մեդիան»:

Այս վկայությունները, ինչպես առաջինը, վերաբերում են,
առհասարակ հավանականությունամբ, ո՛չ թե Փոքր Հայքին, այլ Մեծ
Հայքին և Ծոփքին: Մեջ բերված Ապպիանոսի հենց վկայությու-
նից երևում է, որ Սելևկոս Նիկատորին հաջողվել էր դրավել
արևելյան Փոքր Ասիայում միմիայն հարավային Կապպադոկիա-
յի մի մասը, որն Ապպիանոսն անվանում է Սելևկյան Կապպադոկի-
ա: Ինձ թվում է, որ այլևի քան հավանական կարելի է հա-
մարել, որ Պոնտոսի և Կապպադոկիայի ազատագրվելուց հետո
Փոքր Հայքը ևս կարողացել էր երրորդ դարում (մեր թվ. ա-
ռաջ) կազմակերպվել սրանց նման որպես անկախ թագավորու-
թյուն:

Պետք է ասել, որ Սելևկյանների իշխանությունը չէր կարո-
ղացել հիմնավորապես հաստատվել նաև արմենական այսրեիրա-
տյան երկիրներում: Նրանց դերիշխանությունն այս լեռնային ու
դժվարամատչելի երկրում, ընդհանրապես, ավելի անվանական
էր, քան իրական: Զանաչելով Սելևկյան թագավորներին իբրև
դերագուլն պես՝ Մեծ Հայքը, ըստ երևույթին, նաև Ծոփքը՝
պահպանել էին իրենց ներքին ինքնուրույնությունը և կառա-
վարվում էին բնիկ իշխանների ձեռքով, որոնք սկզբնաղբյուր-
ների մեջ անվանվում են երբեմն թագավորներ: Ըստ երևույթին,
սրանք վճարում էին Սելևկյաններին որոշ տուրք և պատերազմի
ժամանակ օգնում էին նրանց իրենց զորքով: Օպովելով սակայն
Սելևկյանների ներքին երկպառակություններից՝ արմենական
կառավարիչները ձգտում էին հաճախ անկախ լինել և աշխատում
էին խուսափել վասսալական այդ պարտավորություններից:

Մեծ Հայք և Ծոփք առեկով՝ չպետք է, իհարկե, հասկանալ
Հայկական լեռնաշխարհի ամբողջ տարածությունը: Պատմական
Հայաստանի աշխարհադրական կազմը եղել է, հարկավ, խիստ
տարբեր պատմական զանազան դարաշրջաններում: Հայերի

¹ S^{ku} Appiani, Syriaca, 36:

² S^{ku} Strabo, XI, 14, 15 (531):

հնդեւրոպական նախահայրերը, ինչպես տեսանք, դաղթել էին Հայաստան կապալադովկիայի ու Փոքր Հայքի կողմից: Եփրատ գետն անցնելուց հետո նրանց հարավային ճյուղը հաստատվել էր Արածանի գետի հովիտներում և այդտեղից տարածվել դեպի հյուսիս-արևելք և հարավ-արևելք: Քսենոփոնի ժամանակ արմ. նահան նոր դաղթավայրերը իրենց տարածությամբ գեոևս փոքր շրջաններ էին և արմենները շրջապատված էին ամեն կողմից զանազան բնիկ ցեղերով: Գերմանացի հայագետ Հյուբշմանը, հիմնվելով, գլխավորապես, Ստրաբոնի վկայությունների վրա՝ ենթադրում է, որ մակեդոնական-սելևկյան շրջանում անգամ, մինչև հրկրորդ դար մեր թվականությունից առաջ, այսրեփրատյան բուն Արմենիան պարունակում էր իր մեջ իր հետագա 15 նահանգներից հազիվ չորսը՝ «Չորրորդ Հայքը, Աղձնիքը, Տուրուբերանը և Այրարատը»¹:

Հյուբշմանի այս ենթադրությունը ըստիս մոտավորապես ճիշտ է, բայց կարոտ է որոշ ուղղման: Արմենները, ինչպես վերև ասացինք, գեոևս հնադույն ժամանակներում գրաված են եղել, հավանորեն, նաև մի քանի շրջաններ վանա ընի հարավում և հարավ-արևելքում: Իսկ Այրարատ նահանգը նրանք գրավել էին այդ ժամանակ ոչ ամբողջությամբ:

Լինելով իր տարածությամբ համեմատաբար փոքր մի երկիր, հայերի ապագա մեծ հայրենիքի հազիվ մեկ քառորդը՝ բուն այս արմենական երկիրը Սելևկյանների ժամանակ, որքան մեզ հայտնի է սկզբնաղբյուրներից, բաժանված է եղել երկու ինքնիշխան ու քաղաքականապես անջատ մասերի՝ Մեծ Հայք և Ծոփք: Վերջինս գտնվում էր Եփրատ գետի ձախ ափին և պարունակում էր իր մեջ վերին Տիգրիսի և ստորին Արածանիի վրա գտնվող երկրամասերը:

Սելևկյան շրջանի Հայաստանի պատմությունն ուսումնասիրելիս՝ պետք է միշտ աչքի առաջ ունենալ նաև քաղաքական այս բաժանումը: Երրորդ դարից սկսած (մեր թվ. առաջ) աղբյուրների վկայությունները վերաբերում են, ուրեմն, բացի Փոքր Հայքից ու Մեծ Հայքից նաև Ծոփքին:

Այս երեք երկիրների մասին Սելևկյանների տիրապետության ժամանակ, ինչպես ասացինք, աղբյուրների մեջ կան միայն աղքատիկ ու պատահական տեղեկություններ:

¹ Տես և, Հյուբշման, «Էին Հայոց տեղւոյ անունները», Թարգմ. Պիլեզիկյանի, Վիեննա, 1907, էջ 16:

Ուստի կարևոր են առանձնապես Մեծ Հայքի հնադրային պատմության համար հունարեն արձանագրությունները, որ 1911 և 1927 թվերին դրսևում էին Արմավիրում¹։ Սակայն, դժբախտաբար, այդ արձանագրությունները դեռևս հրատարակված չեն։

Ինձ հայտնի է այդ արձանագրություններից միայն մեկը՝ Միթրաս թագավորի նամակը Օրոնտոսա—Երվանդ թագավորին², որը ունի, անտարակույս, պատմական բացառիկ մեծ կարևորություն։ Սեւեկյան շրջանի այս արձանագրությունը, որի թվականը վերջնականապես դեռ որոշված չէ՝ ինքը հենց, անկախ իր ընդանդակությունից, մի պարզ ապացույց է, որ Սեւեկյանների ժամանակ հելլենիզմի ազդեցությունը թափանցել էր մինչև խոլ Մեծ Հայքի հեռավոր այս շրջանը։ Ուշադրության արժանի է այն, որ Օրոնտոսա—Երվանդը, հավանորեն, Մեծ Հայքի տիրակալը՝ արձանագրության մեջ անվանված է թագավոր։ Կարելի է, բացի այդ, կոահել, որ արմենները Երվանդյանների առաջնորդությամբ, որոնք, հավանորեն, մերվել էին արդեն նրանց հետ, դեռևս երրորդ դարում մեր թվականությունից առաջ դրավել էին Արարատյան դաշտը և Արմավիրը դառել էր այստեղ Երվանդյան թագավորության աթոռանիստ կենտրոնը։ Ըստ երևույթին, հենց այս թագավորությունն է այն հին Արարատյան թագավորությունը, որի մասին աղոտ և խառնաշփոխված հիշողություններ պահպանված են Պոբենացու պատմության մեջ³։ Սեւեկյան շրջանի արմենական այս երկիրը պարզապես այն կորիզն է, որից հետզհետե աճեց ու զարգացավ հետապայում անկախ ու հզոր Մեծ Հայաստանը։

Ընդունելով որ Այրարատում դեռ երրորդ դարում (մեր թվ. առաջ) թագավորում էր Օրոնտիդների կամ Երվանդյանների իշխանական տոհմը, ինձ թվում է, դժվար կլինի համաձայնել, որ իբր թե երրորդ դարի երկրորդ կեսում Մեծ Հայքի այս շրջանը և Արմավիրը դսնվել են Ատրպատականի թագավոր Արաա-

¹ Տե՛ս С. Тор-Аветисян, Археологическое обследование городища и крепости древний Армавир, Научный сборник Армфана, Ереван, 1941, էջ 61—62։

² Տե՛ս Նյութերի չին Հայաստանի պատմության², Երևան, 1935, էջ 145—150 (Ս. Տեր-Հովորյան, «Արմավիրի երկրորդ նորագույն արձանագրությունը»)։

³ Տե՛ս հրատ. Մ. Աբեղյանի և Ս. Հառոյանցյանի, Տիգրիս, 1913, էջ 66—69 (1, ԻԲ)։

բաղանեսի իշխանության տակ, ինչպես այդ ենթադրուում է պատմադիտական զրեթե բոլոր երկերում¹ :

Այս ենթադրության վրա, որ ընդհանուր հավանության է արժանացել՝ հարկադր է կանգ առնել հանգամանորեն :

Ինչպես հայտնի է, Աղեքսանդր Մակեդոնացին դեռ իր կենդանության ժամանակ Մեծ Հայքի հարևան Հյուսիսային Մեդիան տվել էր պարսիկ իշխան Ատրոպատեսին (328 թվին մեր թվառաջ), որը Պերտիկկաս զորավարի աներն էր : Այնուհետև Մեդիայի այդ մասը, որն այս Ատրոպատեսի անունով կոչվեց Ատրոպատյան Մեդիա, Ատրոպատենն կամ Ատրպատական, իբրև անկախ պետություն մնաց նրա հաջորդներին իշխանության տակ : Ինչպես վկայում է Արբիանը (III, 8, 4)՝

«Մեդացիներին առաջնորդում էր [Գավգամելայի կռուվում] Ատրոպատեսը, և մեդացիների հետ մարտակարգով շարված են եղել կադուսիները, ադվանները և շակաչենցիները (Σακαχηνι)»² :

Արբիանի այս վկայությունից երևում է, որ հին Ալվանքը կամ նրա որոշ մասը և, մասնավորապես, նաև Ուտիքը, որի մեջ էր Շակաչենը՝ ըստ երևույթին, դանիել են Ատրոպատեսի իշխանության տակ և, հավանորեն, միացված են եղել Ատրպատականին :

Ենթադրում են, որ Ատրպատականն ավելի ևս ընդարձակված է եղել մոտավորապես 220 թվին Արտաբաղանեսի իշխանության ժամանակ, որը իբր թե նվաճած է եղել Ատրպատականի հարևան երկրամասերը մինչև Սև ծովի կողմերը Փասիս գետից վերև, այսինքն՝ մինչև Կողքիս³ : Հասկանալով Փասիս գետի տակ Արաքս գետը՝ կարծում են, բնականաբար, որ Արտաբաղանեսը տիրած է եղել նաև Արարատյան դաշտին ու միջին և վերին Արաքսի հովիտներին :

Այս ենթադրությունները հիմնված են Պոլիբիոսի վկայությունների վրա : Ինչպիսի պատմում է Պոլիբիոսը⁴, Սելևկյան թագավոր Անտիոքոս Գ-ը, Մեդիայի կուսակալ Մոլոնի ապրս-

¹ See Markwart, Eranschahr, Berlin, 1901, էջ 108. Халатян, Очерк истории Арменин, Москва, 1910, էջ 128. Sandalagian, Histoire documentaire de l'Arménie, II, էջ 414 և ուրիշները :

² Համեմատե նաև Arrian, III, 11, 4 :

³ See Markwart, Eranschahr, էջ 108 :

⁴ Polyb., V, 49 - 55 :

տամբութիւնը ճնշելուց հետո, 220 թվին ռազմի էր ելել նաև Արտաբազանեսի դեմ, որը աջակցել էր Մոլոնին: Սակայն Ասոր-պատականի այս իշխանը խուսափել էր պատերազմից և ընդու-նել էր Անտիոքոսի առաջադրած պայմանները:

Նկարագրելով Անտիոքոս Գ-ի այս արշավանքը՝ Պոլիբիոսը հարևանցի կերպով տեղեկութիւն է տալիս Ատրպատականի աշխարհադրական դիրքի մասին և հենց այդ վկայութեան վրա է հիմնված վերոհիշյալ ենթադրութիւնը Արտաբազանեսի մեծ նվաճումների մասին:

«[Անտիոքոս Գ-ի] զորքերը, — ասում է Պոլիբիոսը՝ — անցան Ջադրոս լեռները և ներս խուժեցին Արտաբազանեսի երկիրը, որը սահմանակից է Մեդիային և բաժանվում է արանից միայն միջակա լեռներով: Նրա որոշ մասերը, որոնք գտնվում են Փասիսից վերև, իշխում են Պոնտոսի վրա և երկիրը հասնում է մինչև Վրկանի ծովը»:

Ահա այս վկայութեան վրա հիմնվելով, որի մեջ մատնա-նշված է, որ Փասիսից վերև բնակվող պոնտական ժողովուրդնե-րը սահմանակից են եղել Արտաբազանեսի երկրին՝ դերմանական դիտանական Գուռլմիդը², ինչպես և Մարկվարտն ու Ուրբիշները, եզրակացրել են, որ Արտաբազանեսը նվաճած է եղել Այրարատը և նրա արևմտակողմում գտնվող շրջանները:

Գարեռը ու արժանահավատ համարելով Պոլիբիոսի վկայու-թիւնը՝ պատմադատները նկատի չեն առել ըստիս, որ Սելև-կյան շրջանի հունա-հռոմեական հին հեղինակները սխալ ու խառ-նաբիւծ դադափար են ունեցել Անդրկովկասի աշխարհադրական քարտեզի մասին: Հատկապես Պոլիբիոսի մոտ, որը երկրորդ դարի հեղինակ է (մեր թվ. առաջ), այդ սխալ պատկերացումը որոշակի երևում է նաև նրա պատմութեան հետևյալ հատված-ներին:

1. Պոլիբիոս, V, 44՝

«Իր արեմտյան մասերով Մեդիան հարում է այսպես կոչ-վող Ատրպատականներին, իսկ այս վերջինները հեռու չեն ապրում այն ժողովուրդներից, որոնք սահմանամերձ են Եվֆրատյան Պոնտոսին [= Սև ծովին]: Մեդիայի դեպի հյուսիս նայող մասերը, որ շրջապատում են ելլումայները, անարիակները ու նաև կադուսիները և մատինները՝ գըր-

¹ Նույնը, V, 55:

² S. A. von Gutschmid, Geschichte Irans, Tübingen, 1888, էջ 36:

նշում են Պոնտոսի այն մասերի վերևում, որոնք սահմանակից են Մալոուխին [=արդի Աղովյան ծովին]»:

2. Պոլիբիոս, X, 27

«Այս վերջին քաղաքը [Եկրատանան] գտնվում է Մեդիայի հյուսիսային մասում և իշխում է Ասիայի երկիրների վրա, որոնք հարում են Մալոուխին և Եվֆրատյան Պոնտոսին»:

Ինչպես տեսնում ենք, Պոլիբիոսի այս վկայությունները և, մասնավորապես, նրա վերև մեջ բերված հաղորդագրությունն Ատրպատականի տեղագրության մասին՝ արդյունք են ակներև թյուրիմացության և չեն կարող հիմք ծառայել աշխարհագրական կամ պատմական հեռուստությունների:

Հին Այրարատը և Արմավիրը, ամենայն հավանականությամբ, գտնվել են Երրորդ դարի երկրորդ կիսում (մեր թվառաջ)՝ ո՛չ թե Ատրպատականի իշխան Արտաբազանեսի, այլ Երվանդյանների իշխանության տակ:

Բացի Երվանդյաններից, որոնք Սելեկյանների ժամանակ Մեծ Հայքի անկախ կամ կիսանկախ իշխաններն էին՝ հույն հեղինակները միջանկյալ կերպով հիշում են նաև Փոքր Հայքի և Մոփքի տեղական իշխաններին, որոնց նրանք նույնպես անվանում են թագավորներ:

Հերակլեացի պատմադիր Մեմնոնը իր հայրենի քաղաքի մասին պատմության մեջ հաղորդում է¹, որ Բիթանիայի Նիկոմեդես թագավորի որդին, Ջիաեկասը, մոտավորապես 260 թվին լիախել էր Արմենիայի թագավորի մոտ, որի անունը չէ հիշված: Սանտալճյանը միանգամայն իրավացի կարծում է², որ «Արմենիայի թագավոր»-ը, հավանորեն, թագավոր էր Փոքր Հայքի, որը համեմատաբար մոտ էր գտնվում Բիթանիային: Ջիաեկասը, ոչնչություն ստանալով դրսից, գուցե և արմեններից, կարողացել էր ստանալ Բիթանիայի թագավորական դահլը (250—228 մեր թվ. առաջ):

Երկրորդ դարի (մեր թվ. հետո) հույն հեղինակ Պոլիենոսը, որը հատուկ պիտք է դրել նշանավոր ղորապարների մեծագործությունների մասին՝ իր այդ երկում հաղորդում է, որ Սելեկյան Անտիոքոս Հիերաքսը, Սելեկոս Կալլինիկոս թագավորի եղբայրը, որը ապստամբել էր սրա դեմ՝ մոտավորապես 230 թվին

¹ Տե՛ս Memnonis, Historiae Heracleae Ponti, ed. C. Orellius, Lipsiae, 1816, էջ 33:

² Տե՛ս Sandaljian, Histoire documentaire de l'Arménie, II, էջ 436:

(մեր թվ. առաջ) մտել էր Միջագետքից Արմենիա և պատասպար-
վել Արսաբեսի մոտ ('Αρσάβης), որի հետ բարեկամ էր¹։
Պոլիենոսի մոտ նկարագրված են կռիվները, որ տեղի էին ունե-
ցել Հայաստանի այս մասում, հավանորեն, Ծոփքում՝ Սելեկոսի
զորավարների ու Անտիոքոսի միջև։ Պոլիենոսի հիշատակած
Արսաբեսը, ինչպես ենթադրում են պմտագետները, կարող է
լինել Ծոփքի Արշամ թագավորը, Արշամաշատ քաղաքի հիմնա-
դիրը, որից մնացել են դրամներ «թագավորի Արշամայ»
(Βασιλέως 'Αρσάμου) վերնագրով²։

Բացի Պոլիենոսի հաղորդած վերոհիշյալ տեղեկությունից՝
Ծոփքի մասին կարևոր ու հետաքրքիր է նաև Պոլիբիոսի հետև-
վյալ ընդարձակ մի վկայությունը, որի մեջ նկարագրված է
Սելեկյան Անտիոքոսի ռազմական արշավանքը Արշամաշատ քա-
ղաքի Քսերքեսսի դեմ։

«Քսերքեսսի թագավորության ժամանակ Արշամաշատ
(քնադրում՝ 'Αρσάσατα փխ. 'Αρσαμόσατα) քաղաքում, — պատ-
մում է Պոլիբիոսը, — որը գտնվում էր այսպես կոչվող
Գեղեցիկ դաշտում Եփրատի ու Տիգրիսի միջև՝ Անտիոքոս
թագավորը մտադրվել էր պաշարել ու առնել այդ քաղաքը
և բանակել էր նրա մոտ, Տեսնելով թագավորի պատրաս-
տությունները՝ Քսերքեսսը սկզբում ուղեց փրկվել ու
գլխից փախուստի, սակայն հետո, վախենալով որ մայ-
րաքաղաքը թշնամու ձեռն ընկնելուց հետո կարող է
կորցնել իր թագավորության նաև մնացած մասը՝ չա փոշ-
մանեց, ուղարկեց դեսպաններ Անտիոքոսի մոտ և հայտնեց,
որ ցանկանում է բանակցության մեջ մտնել նրա հետ։
Անտիոքոսի մոտիկ բարեկամները խորհուրդ էին տալիս
նրան բաց թողնել ձեռքից երիտասարդին և համոզում էին,
որ նա քաղաքն առնե և իշխանությունը հանձնե Միհրդա-
տին, որը նրա հարազատ քրոջ որդին էր։ Բայց թագավորը
չհետևեց բարեկամների խորհուրդներին, կանչեց երիտա-
սարդին իր մոտ, հաշտվեց նրա հետ և մինչև իսկ նրան զի-

¹ S^{es} Polyani, Strategematon libri octo, IV, 17.

² S^{es} M. Ernest Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Comma-
gène, Paris, 1880, էջ CXCIII.

Յեց տուրքի մեծագույն մասը, որ մերժել էր իրեն վճարել Քսերքսեսի հայրը: Այնուհետև նա վերցրեց Քսերքսեսից 300 տաղանդ, 1000 ձի և նույնքան ջուր իրենց լծասարքով, վերադարձրեց նրան ամբողջ իշխանությունը և ամուսնացրեց նրան իր Անտիոքիս քրոջ հետ: Այսպիսով՝ Անտիոքոսը իր արքայական վեհանձնությամբ, որ հայտարարել էր ներկա դեպքում՝ ձեռք բերեց երկրի բոլոր բնակիչների բարեկամությունն ու երախտիքը¹:

Ընդունելով որ Քսերքսեսի դեմ ողորմելի Սելևկյան այս թալափորը Անտիոքոս Գ-ն էր (222—186 մեր թվ. առաջ), ինչպես այդ վկայում է բյուզանդական ժամանակաշրջանի մատենագիր Հովհաննես Անտիոքացին², և ենթադրելով որ այդ արշավանքը տեղի էր ունեցել 212 թվին (մեր թվ. առաջ)՝ պատմադետներեց շատերը, օրինակ, Բելոխը, Սանտալճյանը և ուրիշները՝ հավանական են համարում, որ Արշամաշատ քաղաքի թալափոր Քսերքսեսը կարող է լինել վերոհիշյալ Արշամ թալափորի որդին, որի մոտ 230 թվի մոտերքը ապաստարան էր դտել Անտիոքոս Հիերաքսը³:

Հիմնվելով Պոլիբիոսի նույն այս վկայության վրա՝ Բելոխը ենթադրում է նաև, որ Արշամը, Քսերքսեսի հայրը, օգտվելով, հավանորեն, ներքին պատերազմից երկու եղբայրների՝ Սելևկոս Բ-ի և Անտիոքոս Հիերաքսի միջև, իր երկիրը, ըստ երևույթին, հայտարարած է եղել անկախ պետություն:

Քսերքսեսի մասին կարևոր մի տեղեկություն բացի Պոլիբիոսից տալիս է նաև Հովհաննես Անտիոքացին: Սա Քսերքսեսին տնվանում է «արմենների բռնակալ» և վկայում է նմանապես (fr. 53), որ կարճ ժամանակից հետո Սելևկյան նույն Անտիոքոս Գ-ի սպարանքով, որը, ինչպես տեսանք, վեհանձնարար հաշտություն էր կնքել երիտասարդ թալափորի հետ՝ սպանել էր Քսերքսեսին նրա կին Անտիոքիսը⁴:

¹ Տես Polyb., VIII, 25.

² Տես Joh. Ant., fr. 53, Müller, Fragm. hist. graec., IV, էջ 557.

³ Տես Beloch, Griechische Geschichte, III, 2, էջ 295. Sandalagian, Histoire documentaire de l'Arménie, II:

⁴ Պետք է ասել, որ Քսերքսեսի մասին այս հետևությունները Բարեյոնը համարում է վիճելի, նա դեռ 1890 թվին մատնացույց էր արել, որ Քսերքսեսի դեմ պատերազմող Սելևկյան թալափորը, հավանորեն, Անտիոքոս Գ. Եպիփանեսն էր (175—164 մեր թվ. ա.) և ոչ Անտիոքոս Գ-ը: Բարեյոնի կարծիքով, Քսերքսեսը թալափոր էր Արշամաշատի, իսկ Մոփքի սատ-

Գերմանական պատմագետ Էդուարդ Մեյերը կարծում է, որ այս սպանութիւնից հետո Անտիոքոս Գ-ը Արմենիան բաժանել էր երկու մասի և արևելյան մասի վրա սատրապ էր կարգել Արտաշեսին, իսկ արևմտյան մասի վրա՝ Ջարեհին¹։ Բայց շուտով Անտիոքոս Մեծի Մազնեսիայի մոտ կրած պարտութիւնը (190 թ. մեր թվ. առաջ) անկախության ընդհանուր շարժան ազդանշան եղավ ո՛չ միայն Փոքր Ասիայում, այլև Հայկական լեռնաշխարհում։ Այդ պարտութիւնից հետո, ինչպես կտեսնենք, Արտաշեսը և Ջարեհը ինքնիշխան տիրեցին իրենց երկիրներին իբրև անկախ թագավորներ։

Սկզբնաղբյուրների վերոհիշյալ վկայութիւններից երևում է, որ արմենական երկիրները— Փոքր Հայքը, Մեծ Հայքը և Ծոփքը—Սելեկյանների ժամանակ պահպանել էին իրենց ներքին ինքնուրույնութիւնը դեռ երրորդ դարում (նախ քան մեր թվ.)։ Նրանք չէին կազմում Սելեկյան պետության երկրամասը, չէին բնակեցրած Հռոմեական գաղթականներով և չէին դառել բնակա-նարար, գաղութացման շրջան։ Սակայն ինքն ըստ ինքյան հասկանալի է, որ տնտեսական ու կուլտուրական մեծ հեղաշրջումն Առաջավոր Ասիայում անխուսափելի կերպով խոր հետքեր էր թողնելու նաև այս երկիրների վրա։

Տեղական կուլտուրան այստեղ, որն ուներ Հաբեթական-արմենական արմատներ և կրել էր նաև իրանական կուլտուրայի ազդեցութիւնը՝ արդեն այս հնագույն շրջանում սկսել էր ենթարկվել հելլենիզմի ազդեցութեանը, որն ավելի ու ավելի դորեղացավ հետագա դարերում։

Հելլենական ազդեցութիւնը մեծ էր այստեղ, ամենից առաջ, տեղական իշխանավորների և բնակչութեան բարձր խավերի վրա։ Փոքր Հայքի և Ծոփքի գահակալները հելլենացած էին իրենց կրթութեամբ, գլխավորապես, շնորհիվ Սելեկյանների հետ ունեցած խնամեական կապերի։ Այս ժամանակաշրջանի արմենական երկիրների դրամները, որոնց վրայի արձանագրու-

րապ ու հետո թագավոր էր նրա կամ գուցե նրա հոր ժամանակ Ջարիագրե-սը (տես Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, էջ CXCIV—CXCVII)։ Բաբելոնի այս կարծիքը պատմագետները համարում են անհավա-նական։

1 Տես Eduard Meyer, Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin, 1926, էջ 60—61, Համեմատե նաև Markwart, Die Genealogie der Bagratiden, Caucasica, Fasc. 6, 2 Teil, Leipzig, 1930, էջ 28.

թյունները հունարեն են, նմանապես և Արմավիրի նորադյուտ հունարեն արձանագրությունները՝ պարզ կերպով ցույց են առել, որ այստեղ ևս հունարենն ամենուրեք սկսել էր դործածվել որպես պաշտոնական լեզու:

Հատկապես, Փոքր Հայքը և Ծոփքը, որոնք գտնվում էին Հայաստանի արևմտյան ու հարավարևմտյան չրջանում և իրենց աշխարհագրական տեղադրությամբ հեռու չէին հելլենիստական քաղաքներից ու դադթավայրերից, բնականաբար, ավելի մեծ չփում ունեցան հելլենիստական քաղաքակրթության հետ և ավելի մեծ չափով ենթարկվեցին նրա ազդեցությանը, քան Մեծ Հայքը:

Մասնավորապես Ծոփքը, որ հարավից սահմանակից էր Սելևկյան Միջագետքին և գտնվում էր այդ շրջանի միջով անցնող Մծբին—Եղեսա—Անտիոք առևտրական համաշխարհային ճանապարհի մոտ՝ ուներ ամենանպաստավոր պայմանները նաև տնտեսական դարգացման համար: Ինչպես հաղորդում է Հերոդոտոսը, Ծոփքի և Բաբելոնիայի միջև առևտրական երթևեկությունը տեղի էր ունենում Եփրատ գետի վրայով դեռ նրա ժամանակ: Այս առևտուրը, որը հին ժամանակ կենտրոնացված էր, գլխավորապես, սեմական ժողովուրդների ձեռքում՝ շարունակվում էր, անշուշտ, և Սելևկյանների ժամանակ:

Ծոփքի միջով, ինչպես մանրամասն մատնացույց եմ արել Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ուսուերեն իմ աշխատության մեջ¹, անցնում էր մի զգալի մասը պարսկական հին Արքայական ճանապարհի և այդ ճանապարհի վրա, Եփրատ գետի ձախ ափին, գտնվում էր նշանավոր Տոմիսա ամրությունը, որը կայան էր կարավանների, որոնք դնում էին Բաբելոնիա կամ Փոքր Առիա:

Ծոփքի առևտրական նպաստավոր այս դրությամբ պետք է, անշուշտ, բացատրել, որ Հին Հայաստանի առաջին քաղաքները հիմնվել են Ծոփքում և ո՛չ Մեծ կամ Փոքր Հայքում՝ Հունահռոմեական հին հեղինակների մոտ հիշատակված են Արշամաշատ և Կարկաթիոկերտ քաղաքները, որոնք կառուցվել էին այստեղ Սելևկյան շրջանում և աթոռանիստ կենտրոններ էին տեղական թագավորների:

Արշամաշատ քաղաքի հիմնումը, ինչպես վերև տեսանք,

¹ Herod., I, 104.

² S. Զ. «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен», Ереван, 1930, էջ 14—16 և 27.

Վերադրում են Արշամ Թագավորին, որը 230 թվի մոտերքը (մեր թվ. առաջ) օգնություն էր ցույց տվել Անտիոքոս Հիւրաքսին ընդդէմ Սելևկոս Կալլինիկոսի: Այս քաղաքը, ինչպէս վկայում է Պոլեբիոսը¹, դանդաղ էր «այսպէս կոչվող Գեղեցիկ դաշտում Եփրատի ու Տիգրիսի միջև»: Պլինիոսը նրա տեղը մատնացույց է անում Եփրատ—Արածանիի մոտ (Armosata Euphrati proximum)²: Արշամաշատի ավերակների տեղը ամերիկացի աշխարհագիր Հունտինգտոնը որոշել է այժմյան Խարաբա ու Նաջարան գոյւղերի միջև³:

Ծովիքի մյուս Կարկաթիոկերտ քաղաքը հիշատակված է Ստրաբոնի և Պլինիոսի մոտ: Ստրաբոնը հաղորդում է, որ Ծովիքի Թագավորանիստ քաղաքն էր Կարկաթիոկերտը⁴, իսկ Պլինիոսը վկայում է, որ այդ քաղաքը գտնվում էր Տիգրիսի գետի մոտերքը⁵: Կարկաթիոկերտի տեղը դեռ հաստատուն կերպով որոշված չէ:

Ստրաբոնի վկայութեան մեջ *Καραβιόχαστα* ընթերցվածը Մարկվարտը համարում է աղավաղված և առաջարկում է ուղղել *Ἀρχαβιόχαστα*⁶ Արկաթիակերտ, ենթադրելով, որ այս քաղաքի հիմնադիրն էր, հավանորեն, Ծովիքի Ջարիագրես Թագավորի որդին՝ Արկաթիասը: Արկաթիակերտի տեղը Մարկվարտը ենթադրում է Անգեղ բերդի ավերակների վայրում, այժմյան էկիլի մոտ⁷, որը գտնվում էր Տիգրիսի աղբյուրագետի Արդանասուի վրայ:

Գտնվելով Փոքր Ասիայի ու Հյուսիսային Միջագետքի սուևտրական ճանապարհների մոտ՝ Հայաստանի հնագույն այս քաղաքները, ըստ երևույթին, հելլենիստական տիպի քաղաքներ էին և կենտրոններ էին սուևտրի ու արհեստների: Դժվար չէ, սուրբմէ, կուհել, որ եթէ Քսենոփոնի ժամանակաշրջանը բնորոշվում է Հայաստանում արտադրողական ուժերի համեմատաբար ցածր մակարդակով, Սելևկյանների ժամանակ սկիզբ էր դրվել,

¹ Polyb., VIII, 25:

² Plin., Nat. Hist., VI, 10 (հրատ. Lüttre-ի):

³ Տես Markwart, Südarmanien und die Tigrisquellen, էջ 240—241:

⁴ Strabo, XI, 14, 2 (527):

⁵ Plin., Nat. Hist., VI, 10 (հրատ. Lüttre-ի):

⁶ Տես Markwart, Südarmanien und die Tigrisquellen, էջ 34—35:

⁷ Տես Հյուբսման, «Հին Հայոց տեղւոյ անունները», Թարգմ. Պիլեզիկ-Եյսմի, Վիեննա, 1907, էջ 157:

զլխալորապես, հարավ-արեւմտյան Հայաստանում արտադրողական ուժերի զգալի սնման շնորհիվ վերահիշյալ քաղաքների առաջացման: Տնտեսական առաջադիմութեան պարզ նշաններ են, հարկավ, այստեղ կտրված դրամները, որոնք նպաստելու էին, անշուշտ, իտիանակութեան ու դրամական շրջանառութեան զարգացման:

Հեյլենիստական տիպի քաղաքների հիմնադրումը Ծովքում, ինչպես մատնանշված է իմ նախորդ աշխատութեաններից մեկում¹, կարևոր մի փաստ է, որ ցույց է տալիս սոցիալական շերտավորման ուժեղացումը արմենական այս երկրում: Առևտրի ու դրամական շրջանառութեան զարգացման շնորհիվ հետզհետե նշանակութիւն էր ստանում, բնականաբար, գրամական կապիտալը: Այս նոր ուժը, եթե անգամ նրա դերը երկրորդական ու մակերեութային համարենք Հին Հայաստանի էկոնոմիկայի բընական տնտեսական հիմքերի նկատմամբ, անխուսափելի կերպով պետք է որոշ չափով ազդէր սոցիալական հարաբերութեանների վրա և արագացներ տոհմային հասարակութեան քայքայումը, որ սկսվել էր արդեն նախընթաց շրջանում:

Հեյլենիստական շրջանի տնտեսական հեղաշրջումը Առաջադիր Ասիայում, ինչպես տեսնում ենք, արդեն երրորդ դարում մեր թվականութիւնից առաջ սկսել էր իր ազդեցութիւնը գործել նաև Հին Հայաստանի տնտեսական զարգացման վրա:

¹ Տե՛ս Ֆեոդոլիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 250—251:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԵՎ ԶԱՐԵԼՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Սելեվկյան պետության քուլագումը:—2. Պարթևական քաղաքությունը հիմնումը և Հռոմի առևտրահալայական ծավալումը.—Անեիոֆոս Մեծի պարսությունը Մագնեսիայի մոտ (190 թ. մեր թվ. ա.):—3. Արաաեսայան և Զարեհյան քաղաքությունների հիմնումը:—4. Արաաեսի և Զարեհի նվաճումներից ըստ Սառաթոնի վկայությամբ.—այստեղիցս պահանջարկով չալասասանը ըստ Հյուբեմանի ենթադրության.—հայերենը իբրև այս ամբողջ երկրում գերիշխող լեզու:—5. Փոքր Հայքի հզորացումը և ընդարձակումը:—6. Արմենների երեխանց քաղաքությունները և նրանց անվախությունը.—միասնական պետության ստեղծման խոչընդոտները:—7. Արաաեսա քաղաքի հիմնումը.—նրա տեղադրությունը ու ամրությունները.—քաղաքական ազդեցությունը:—8. Արաաեսա Ա-ի մասնակցությունը Փոքր Ասիայի հինգ քաղաքների դաշինքին.—Պոլիբիոսի վկայությունը այդ մասին:—9. Անեիոֆոս Նախապետի արաաեսանը չալասասան և Արաաեսա Ա-ի դաշնակցությունը Սելեվկյանների ստեղծած Տիմարտոսի հետ:—10. Ժողովրդական վեպի վկայություններն Արաաեսա Ա-ի մասին.—Արաաեսաի հիմնումը ըստ հույների.—Արաաեսա Ա-ի պատերազմը Օրոնեսա—Նովանդի դեմ.—Սառաթոնի վկայությունը այս Օրոնեսա—Նովանդի մասին:—11. Նովանդեսա քաղաքի հիմնումը ըստ հույների վկայության.—խալաթյանցի սիսակ կառնիս այս վկայության մասին:—12. Հիեոդություններ Արաաեսա Ա-ի պետական և կուլտուրական գործունեության մասին.—նրա հրամանով կառնված ստեղծարարներն արաաեսա արձանագրություններով:—13. Արաաեսա Ա-ի ուղիները՝ Արաաեսա, Տիրոն և Զարեհ.—Զարեհի մասին Քաթրիս-Յիսակիայի վկայությունը.—Զարեհես և Զարեհական քաղաքների հիմնումը:—14. Պարթևների գերիշխումը և նրանց պատերազմը Արաաեսա Ա-ի դեմ.—հայերի պարսությունը և Տիգրանի պատերազմը:—Արաաեսա Ա-ի հաջորդներն ըստ օսար և հայ աղբյուրների:

Երրորդ դարի ընթացքում (մեր թվ. առաջ) Սելևկյան պետությունը հետզհետե թուլանում էր շնորհիվ մշտական պատերազմների և ներքին երկպառակությունների ու ապստամբությունների: Նրանից շարունակ անջատվում էին նոր և նոր շերտեր:

Մոտավորապես 305 թվին Սելեկյանները կորցրին նախ և առաջ իրենց հնդկական դավառները: Այնուհետև մոտ 255 թվին Սելեկյան Անտիոքոս Բ. Թագավորի դեմ ապստամբեց Բակտրիայի և Առգշիանների նրա կուսակալը՝ Դիոդորոսը, որը հիմնեց այնտեղ իր սեփական Թագավորությունը, Դեռ ավելի առաջ, ինչպես վերև տեսանք, կարողացել էին պահպանել իրենց անկախությունը կամ ինքնուրույնությունը Կասպագետիկիան, Պոնտոսը, Հայաստանը և Ատրպատականը:

Այնուհետև երրորդ ու երկրորդ դարերում (մեր թվ. առաջ) Սելեկյանների դեմ հանդես եկան նրանց նոր հզոր ախոյանները՝ Պարթև Արշակունիները և Հռոմը: Այս երկու մեծ պետությունները ժառանգելով էին հեադհետե նրանց ամբողջ Թագավորությունը:

Պարթևական Թագավորության հիմնադիրն է համարվում Արշակ Ա-ը, ծագումով պարթևներին ազգակից ապարն կամ պարն Թափառական ցեղից: Մոտավորապես 250 թվին (մեր թվ. առաջ) սա ապստամբել էր իր ցեղակիցների հետ Սելեկյանների դեմ և սպանել էր նրանց սատրապին: 249/248 թվվ Արշակունի Թագավորության հիմնադրման պաշտոնական տարեթիվն է:

Արշակ Ա-ից հետո նրա եղբայրը և հաջորդը, Տրդատը կամ Արշակ Բ-ը, հաղթելով Սելեկոս Բ. Կալլինիկոսին (248—210 մեր թվ. ա.)՝ վերջնականապես հաստատվեց Պարթևստանում և նրվաճեց շուտով նաև հարևան Վրկանը, որի կենտրոնն էր Զադրակարտա քաղաքը՝ այժմյան Ասդրապատը:

Հենց նույն այս երրորդ դարում, երբ պարթևները տեր էին գառնում Սելեկյանների արևելյան երկիրներին՝ արևմուտքում հելլենական մանր պետությունների և ապա Սելեկյան Թագավորության դեմ հանդես եկավ Հռոմը: Վերջինս մտել էր Հուլ-նաստան և զբաղվել էր այնտեղ Լպիդատմոսը և Կորկյուրան դեռևս 229/8 թվին մեր թվականությունից առաջ: Մակայն նրա անվկանդ ծավալումը Միջերկրական ծովի արևելյան երկիրներում արագ կերպով շարունակվեց փունիկյան երկրորդ պատերազմից հետո (218—201 մեր թվ. ա.):

Անտիոքոս Մեծի Մաղնեսիայի մոտ կրած վճռական ու ծանր պարտությունը 190 թվին հռոմայեցիներին հնարավորություն տվեց ամրացնելու իրենց ազդեցությունը Փոքր Ասիայի մանր պետությունների վրա: Ինչպես Հունաստանում, նույնպես և այստեղ՝ Հռոմը հրապարակ եկավ սկզբում՝ իբրև ազատարար

ու. հովանավոր մանր պետութիւնների ու ճնշված ժողովուրդների: Սակայն, իրապես, նրա քաղաքականութեան նպատակն էր զրգոել ու թշնամացնել իրար դեմ բարեկամ այդ պետութիւնները և, ուժասպառ անելով բոլորին՝ հաստատել ամենուրեք իր տիրապետութիւնը:

Ստրաբոնի վկայութեամբ՝ Անտիոքոս Մեծի (223—187 մեր թվ. առաջ) Արտաքսիաս և Ջարիագրիս ստրատեգները կամ զորավարները, որոնք Արմենիայի կառավարիչներն էին և իշխում էին այնտեղ նրա հանձնարարութեամբ, օգտվելով Անտիոքոս Գ-ի Մագնեսիայի մոտ հռոմայեցիներից կրած պարտութիւնից՝ անցան հաղթող հռոմայեցիների կողմը և հայտարարեցին իրենց անկախ թագավորներ (189 մեր թվ. առաջ):

Այսպիսով երկրորդ դարի առաջին կեսում արմենական երկիրները դարձյալ մնացին բաժանված անջատ մասերի, որոնք ունեին իրենց առանձին թագավորները: Այս թագավորութիւններից ամենագլուխն ու ամենաընդարձակը, ինչպես երևում է Պոլիբիոսի ուշագրաւ մի վկայութիւնից, Արտաշեսի թագավորութիւնն էր՝ Մեծ Հայքը: Արտաշեսին Պոլիբիոսն անվանում է «Արմենիայի մեծագույն մասի» կառավարիչ: Նույնը հաստատում է նաև Ստրաբոնը հետևյալ իր վկայութեան մեջ:

«Պատմում են, — ասում է Ստրաբոնը, — որ Արմենիան եղել է առաջ փոքր և մեծացել է Արտաքսիասի (Արտաշեսի) և Ջարիագրիսի (Ջարեհի) ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն (στρατηγοί) էին և նրա անկումից հետո թագավորեցին՝ մեկը Ծոփքի, Ալիսանեսի, Օդոմանտիսի և մի քանի այլ գավառների վրա, իսկ մյուսը՝ Արտաշատի շուրջը գտնվող երկրի վրա, Սրանք ընդարձակեցին իրենց երկիրների սահմանները և զբաղեցին շրջակա ժողովուրդներից հետևյալ շրջանները. մեղացիներից՝ Կասպիանեն, Փամբակտիսը և Բասորոպեդան, իրերներից՝ Պարիագրեսի լեռնալանջերը, Խորզենեն և Գոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալլուքներից և մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատաոններից՝ Ալիլիսենեն և Անտիտալլոսի կողմերը գտնվող երկիրը և ասորիներից՝ Տամորիտիսը. այնպես որ բոլորը միակեղու եղան»:

1 Տէս Ptolemy, XXV, 2, 12:

2 Տէս Strabo, VI, 14, 5 (528):

Այլ բերված այս վկայություններից երևում է, որ Արտաշեսը չբավեւ էր Կասպյան երկիրը կամ Փայտակարանը (=Κασπιανή), Վասպուրականը (=Γαυδοπεδία), Փայնիտիսը (*)¹, Պարիադրեսի բունականը, այսինքն՝ Տայքը, Խորձանը (=Χορδανή), Գուգարքը (=Γαυγαρηνή), Կարնո դավառը (=Καρνηνίς), Դերջանը (Δερβηνή) և Տմորիքը (Ταμωρις)², իսկ Ջարեհը՝ Եկեղյայց դավառը (Αχιλίστην) և Անտիտավրոսի կողմերը զանիող երկիրը։

Սարաբոնի հիշատակված Տորձնի՝ երկիրը, որը զբաղված էր իրերներից՝ աշխարհադրական ու սպառնական նորագույն երկերում, ինչպես և իմ նախորդ աշխատություններում, համապատասխան է համարված այժմյան Կղարջին։ Ենթադրել են, որ Տորձնի՝ ընթերցվածը աղճատված է և պետք է ուղղել Χαλδονի կամ Καλδονί, որը հիշատակված է Պտղմեոսի աշխարհադրության մեջ (հրատ. Կ. Մյունխեն, Փարիզ, 1901, էջ 937)։ Այդ ենթադրությունը, ինչպես մանրամասն ցույց է տրված իմ վերջին հոդվածներից մեկում, ճիշտ չէ։ Տորձնի-ն պարզապես հին Խորձանի դավառն է, որը զանվել է այժմյան Արշահանի կողմում։

Սարաբոնի հաղորդած աեղեկությունները հնարավորություն են տալիս մեզ որոշելու պատմական Հայաստանի ընդարձակությունը երկրորդ դարի սկիզբներում մեր թվահանությունից առաջ։ Նահանգների հնազույն ժամանակների անունները զործածելով՝ Հյուսիսային ենթադրում է, որ Արտաշեսի և Ջարեհի ժամանակ այսբեհրատյան ընդարձակված Հայաստանը, հավանորեն, իր մեջ բովանդակում էր Փայտակարանը, Սյունիքը, Վասպուրականը, Այրարատը, Գուգարքը, Տայքը, Բարձր Հայքը,

¹ Հյուսիսային «Փայնիտիս»-ը (=Φαινίτις) առաջարկում է ուղղել Σοονίτις և նույնացնել Սյունիքի հետ, իսկ Βασσοπεδία-յի նույնությունը Վասպուրականի հետ համարում է անընդունելի. տես Վին Հայոց տեղւոյ անունները, էջ 17—18։

² Սարաբոնի հուշարեն ընագրում գրված է Ταμωρίτιν փոխ. Ταμωρίτις։ Տոմաշևիի և Մարկիարովի կարծիքով, այս երկիրը հիշվել է «Տարոնի» է, ինչպես ենթադրել է Հ. Կիսլյակը, այլ՝ Տմորիքն է. տես Monatsberichte der K. Akad. d. Wiss. zu Berlin, 1873, էջ 173, Տոմաշևի, Մասուն և Տիգրիսի աղբերակ սահմանները, Վիեննա, 1894, էջ 11—12. Markwart, Eransdahr, էջ 170, ծան։

³ Տես իմ հոդվածը «Маршруты Понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду», Вестник древней истории, 3—4, Москва, 1940, էջ 98—100։

Տուրուբերանը, Զորորդ շալքը, Աղմիքը, Մոկքը, Կորճալքի մեծ մասը և թերևս նաև Ուտին ու Արցախը, այսինքն՝ հետևադույն Հայաստանի 15 նահանգներից 13-ը¹ :

Մինչև Արտաշեսյան և Զարեհյան թագավորությունների հիմնումը հայ ժողովրդի նախկին ավելի քան չորսհարյուր տարվա պատմությունը, ինչպես տեսնում ենք, կարելի է համարել Հայաստանի ներքին աճման ու ընդարձակման շրջան։ Արածանիի ու Տիգրիս գետի հովիտներում հաստատվելուց հետո՝ հնդեւրոպական արմենները պետք է իրենց ամբողջ ուժն ու հռանդը լարեին ու մաքառեին տեղական բնիկ ժողովուրդների հետ։ Աճելով ու տարածվելով, քայլ առ քայլ նվաճելով նախկին Ուրարտուի լճափն ու ռազմիկ ցեղերը՝ նրանք միայն մոտ չորսհարյուր տարվա համառ պայքարից հետո կարողացել էին հետզհետե տեր դառնալ պատմական Հայաստանին վերահիշյալ լայնատարած սահմաններում :

Վերև մեջ բերված վկայության մեջ Ստրաբոնը հաղորդում է նաև, որ ընդարձակված Արմենիայում նրա ժամանակ բոլորը համալեզու էին, այսինքն՝ խոսում էին հայերեն, Ստրաբոնի այս վկայությունը կարելի է ընդունել որոշ, իհարկե, վերապահությամբ։ Ինչպես հայտնի է, Հայաստանի զանազան շրջաններում հույներից Սասանյանների ժամանակ և ահպամ նրանց տիրապետությունից հետո կային օտարալեզու ցեղեր։ Ուրեմն՝ Ստրաբոնի վկայությունը պետք է, ըստ երևույթին, բացատրել այն լմաստով, որ նրա ժամանակ տարածված և դերվիշոզ լեզուն եղել է Հայաստանում հայերենը։ Կարելի է նաև ենթադրել, որ Արտաշեսն ու Զարեհը Հայաստանին քաղաքականապես միացրել էին այն ծայրագավառները, որոնց մեջ նախորդ դարերի ընթացքում արմենական գաղթականությունը արդեն որոշ դիրք էր գրավել և տեղական ժողովուրդները ենթարկել էր որոշ չափով հայերեն լիզվի ազդեցությանը :

Արտաշեսի և Զարեհի թագավորության ժամանակ արմենները, հայմադրեն, ո՛չ միայն տարածվել ու հաստատվել էին Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ շրջաններում, այլև ղգալի չափով արդեն հայացել էին այդ երկիրները։ Հնդեւրոպական արմենների միաձուլումը տեղական ժողովուրդների հետ և հայ ժողովրդի էթնիկական կազմավորումը, ինչպես տեսնում ենք,

¹ Հյուբուման, «Հին Հայոց տեղւոյ անունները», էջ 22—23.

մոտ է եղել իր ավարտման արդեն Արտաշեսյան թագավորության հիմնադրման ժամանակ:

Ընդարձակվել էր նույն այս երկրորդ դարում մեր թվական-նությունից առաջ րացի Մեծ Հայքից ու Մոփքից նաև Փոքր Հայքը, որը նվաճել էր արևմտյան Պարիադրեսի և Հյուսիս-արեւելյան Պոնտոսի ծովափնյա շրջանները և հասցրել էր իր սահմանները մինչև Սև ծովը:

«Փոքր Հայքը,— ասում է Ստրաբոնը,— բավական պտղաբեր երկիր է: Այսպեղ ևս, ինչպես և Մոփքում, միշտ կառավարում էին երկիրը սեփական իշխանները, որոնք կամ յարեկամ ու դաշնակից էին մյուս արմեններին և կամ իրենց զործերը մարում էին առանձին ու անկախ: Փոքր Հայքն իրեն հպատակեցրել էր խալդայններին և տիբարեններին, այնպես որ նրա իշխանութունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»¹:

Հայաստանում և Կապպադոկիայի Հյուսիս-արևելքում կաղմվիլ էին, ինչպես տեսնում ենք, փոխանակ միահար ու միաձուլվ մեծ պետության՝ երեք անկախ արմենական թագավորություններ: Այս երեք հզոր թագավորությունների առաջացումը քաղաքական տեսակետից կաղմում է հայ ժողովրդի պատմական անցյալում մի նոր դարադրուի:

Այս երեք թագավորություններից ամենաուժեղը և տարածությամբ էլ ամենամեծը Արաաշեսի թագավորությունն էր՝ Մեծ Հայաստանը: Դառնալով իր ընդարձակված նոր սահմանների մեջ մեծ ու անկախ պետություն՝ Մեծ Հայաստանը, ինչպես կտեսնենք, այնքան զորեղացավ, որ պատմության բեմ դուրս եկավ որպես մրցակից Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունների:

Սակայն հայախոս երկիրների պետական կաղմավորումն ու քաղաքական հզորացումն ունեւր մի շատ թույլ կողմ: Նրանք հենց սկզբից չկաղմակերպվեցին իբրև պետական միահար մի ամբողջություն, այլ բաժանվեցին արևմտյան, հարավ-արևմտյան և Հյուսիս-արևելյան ինքնիշխան մասերի, որոնք հաճախ իրար դեմ կռիվներ էին մղում: Այս երեք թագավորություններից յուրաքանչյուրն ունեւր իր սեփական կենտրոն-մայրաքաղաքը, իր տեղական ավանդությունները և իր տնտեսական ու

¹ Strabo, XII, 3, 28 (353).

քաղաքական առանձին շահերը: Եւ միանգամայն հասկանալի է իհարկե, որ արմենների ցրվածութիւնն ու այս բաժանումը արդեւք էին հանդիսանալու նրանց ընդհանուր ու համերաշխ դործակցութեան:

Արմենական երկիրների միացման կարևորութիւնը, հաւանորեն, դիտակցվել է առավելապէս նրանց քաղաքական վերելքի այս շրջանում: Հայտնի է, որ Արտաշէս Ա-ը, որը, ինչպէս տեսանք, անչափ ընդարձակել էր Մեծ Հայքը՝ ուղեցել էր նվաճել հարևան Ծովքը: Սակայն Մեծ Հայքի դորեղացումը և արմենական երկիրների միացումը ցանկալի ու հանդուրժելի չէին Կապադոքիոյի ու Պոնտոսի համար: Փոքր Հայքն ու Ծովքը, որոնց անկախութեանը Արտաշէսյան հզոր թաղաւորութեան կողմից վասնդ էր սպառնում՝ սերտ կերպով հարեցին այս պետութիւններին և ապավինեցին նրանց օգնութեան:

Դիողորոս Սիկիլիացին վկայում է՝, որ Արտաշէսին չհաջողվեց իր թաղաւորութեանը միացնել Ծովքը շնորհիւ Կապադոքիոյի Արիարաթ Ե. թաղաւորի միջամտութեան: Այս վերջինի օգնութեամբ ստացավ իր հայրենի թագաւորութիւնը Ջարեհի որդին, Մերոստանը, որն Արտաշէսի հարձակման ժամանակ փախել էր Կապադոքիոյի:

Արտաշէսյան Մեծ Հայաստանի մասին մատենաւորական աղբյուրները տալիս են, դժբախտաբար, միայն պատահական ու կցկտուր տեղեկութիւններ: Այդ տեղեկութիւններից առանձնապէս կարևոր են Ստրաբոնի և Պլուտարքոսի վկայութիւնները Արտաշատ մայրաքաղաքի մասին, որը հիմնել էր Արտաշէս Ա-ը, հավանորեն, 166 թվին մեր թվականութիւնից առաջ:

«Հայաստանի քաղաքներն են, — ասում է Ստրաբոնը, — Արտաքսատան (որն անվանում են նաև Արտաքսասատու և որը հիմնել էր Աննիբալն Արտաշէսի համար) և Արքսատան: Երկու քաղաքն էլ գտնվում են Արաքսի վրա՝ Արքսատան Ատրպատականի սահմանների մոտ, իսկ Արտաքսատան՝ Արաքսյան գաւտի մոտ: Այս վերջինը գեղեցիկ է շինված և երկրի թագաւորանիստ քաղաքն է: Նա գտնվում է դետածոցում, որը նման է թերակղզու, և նրա շուրջը, բացի պարա-

¹ *Str. Diod.*, fr. XXXI, 32 և *Polymb.*, XXXI, 15 (a):

² *Str. Fabricius*, Theophanes von Mitylene und Q. Dellius als Quellen der Geographie des Strabons, Strassburg, 1888, էջ 32 և 131:

նոցի մասից՝ դետի առջև ձգվում է պարիսպը, իսկ սլարա-
նոցը փակված է խրամով և պատվարով¹:

Որ Արաաչատը շինված էր Աննիրայի խորհրդով և նրա
ցուցմունքներով՝ այդ մանրամասն հաղորդում է Պլուտարքոսը
հետևյալ իր վկայութան մեջ:

«Պատմում են, — ասում է Պլուտարքոսը, — որ երբ
Անաիոքոսը պարտութուն կրեց հռոմայեցիներին՝ կարժա-
դենացի Աննիրայը եկավ Արտաշես Արմենի մոտ և հրահան-
դիչ ու խորհրդատու դառավ բաղձաթիվ օգնավետ պործե-
րում: Նկատելով, բացի այդ, այս երկրում չօղտադործված
ու անտես արված հարմարություն ու խիստ հաճելի մի-
վայր՝ նա այդ տեղում ուղիղեց քաղաքի հատակադիր:
Աննիրայը տարավ Արտաշեսին, ցույց տվեց հատակադիրը և
համոզեց հիմնել այդ տեղում քաղաք: Թագավորն ուրախու-
թյամբ համաձայնեց և խնդրեց, որ նա իր վրա վերցնե ուղ-
դործի ղեկավարությունը: Այսպիսով կառուցվեց մեծ ու
խիստ դեղեցիկ քաղաք, որն անվանվեց Թագավորի անունով
և հայտարարվեց Հայաստանի մայրաքաղաք»²:

Պատմադեմքերից շատերը կասկածելի են համարում թե
Արաաչատի հիմնումն Աննիրայի խորհրդով և թե Աննիրայի ղա-
խուսաը Հայաստան: Սակայն, այնուամենայնիվ, վերոհիշյալ
վկայությունները խիստ կարևոր են, որովհետև նրանք պարզ ու
որոշ հաստատում են, որ Արտաշատը հիմնված է եղել երկրորդ
դարում Արաաչես Ա-ի ժամանակ:

Առանձնապես հետաքրքիր են և կարևոր Արաաչատի տեղա-
դրության ու ամրությունների մասին Սարաբոնի հաղորդած տե-
ղեկությունները: Ուշադրալ է նաև այն, որ Մեծ Հայաստանի
այս մայրաքաղաքը, ինչպես երևում է Պլուտարքոսի վկայու-
թյունից, արևմտյան երկիրներում համարել են «մեծ ու խիստ
դեղեցիկ քաղաք»:

Արտաշատի հիմնումն Արարատյան դաշտում կարելի է հա-
մարել Արտաշես Ա-ի կարևորագույն դործերից մեկը: Այս դաշտն
այնուհետև դառավ Հայաստանի քաղաքական ու կուլտուրական
միավորման կենտրոնը:

Քաղաքավայրի ընտրությունն աջող էր կատարված թե ուղ-
մական և թե տնտեսական տեսակետներից: Գտնվելով Հայկական

¹ Strabo, XI, 14, 6 (528);

² Plut., Lucullus, XXXI, 5,

լեռնաշխարհի կենտրոնում՝ Արարատյան դաշտն ավելի էր պաշտպանված արշավող թշնամիներից, քան լեռնաշխարհի սահմաններում գտնվող չրջանները: Բացի այդ, նրա միջով էր անցնում տարանցիկ ճանապարհը, որը դալիս էր Միջին Ասիայի ու Զինաստանի կողմերից և Արտաշատի մոտով գնում էր դեպի Սև ծովի նավահանգիստները:

Ինչպես տեսնում ենք, Արտաշեսյան դինաստիայի հիմնադիրը եռանդուն կազմակերպողն էր պատմական Մեծ Հայաստանի, և ընդարձակված այս պետությունն արդեն նրա ժամանակ համաքյա ամփոփվել էր իր բնական սահմանների մեջ և տարածվում էր Հյուսիսային Միջագետքից մինչև Կուր գետը և Ատրպատականից մինչև Ծոփքը և Փոքր Հայքը:

Այս մեծ թագավորությունը, որը դառել էր Առաջավոր Ասիայի ուժեղ պետություններից մեկը՝ այժմ հաշվի էր առնվում և որոշ դեր էր կատարում միջպետական հարաբերություններում: Պոլեբիոսը, որն իր պատմության մեջ մանրամասն հիշատակել է Փառնակ Պոնապոս և Փոքր Հայքի Միհրդատ սատրապի 180 թվի կոնիլն ընդդեմ Պերգամոնի, Կապպադոկիայի և Բիթանիայի թագավորների՝ մեջ է բերում սրանց ստորագրած խաղաղության դաշինքը և վկայում է, որ այդ դաշնադրությանը մասնակից է եղել «Արմենիայի մեծադուլն մասի կառավարիչ Արտաշեսը»¹:

Պատերազմը սկսել էին միացյալ ուժերով Փառնակը և Միհրդատը, որպեսզի դրավեն իրենց հարևանների, գլխավորապես, Կապպադոկիայի և Պափլագոնիայի երկրամասերը: Սակայն չուտով նրանց դեմ ռազմերթի ելան Կապպադոկիայի և Պերգամոնի թագավորները, Արիարաթ Դ-ը և Նվմենես Բ-ը, և պատերազմը Հռոմի միջամտության պատճառով իսկույն դադարեցվեց և կնքվեց դաշինք (179 մեր թվ. առաջ):

Պոլեբիոսի վկայությունն այդ դաշինքի մասին, որին մասնակից էին Փոքր Հայքը և Մեծ Հայքը, հարկ եմ համարում բեռնել ընդարձակ բովանդակությամբ:

«Հանկարծակիի եկած, — պատմում է Պոլեբիոսը², — թշնամիների դաժան հարձակման պատճառով՝ Փառնակը պատրաստ էր ընդունել հաշտության յուրաքանչյուր պայման, ինչ որ նրան առաջարկեին հակառակորդները. դրա

¹ S⁸ս Polyb., XXV, 2, 12:

² Նույնը, XXV, 2, 1—12:

Համար նա ուղարկեց դեսպաններ, Եվմենեսի և Արիարաթի մոտ: Մերզ՝ որովհետև Եվմենեսը և Արիարաթը ընդունել էին նրա դեսպաններին և իրենք ևս իսկույն ուղարկել էին Փառնակի մոտ իրենց դեսպաններին, ուստի և՛ դեսպանությունները Հաճախակի փոխանակումից հետո՝ Հաշտութուն կնքվեց հեռեկալ պայմաններով:— Թո՛ղ մշտնջենապես խաղաղութուն լինի, մի կողմից՝ Եվմենեսի, Պրուսիասի և Արիարաթի, մյուս կողմից՝ Փառնակի և Միհրդատի միջև: Փառնակը և ո՛չ մի պատրվակով չպիտի ռազմերթի ելնե Գալատիայի դեմ և նրա բոլոր նախկին պայմանագրերը պատահելի հետ համարվելու են անվավեր: Նա պետք է նաև դատարկե Պափլագոնիան, իսկ ընկալիչներին, որ այնտեղից դաղթեցրել է՝ պետք է ետ ուղարկե. նրանց հետ միասին պետք է վերադարձնե զենքերը, նետոդական մեքենաները և այլ ռազմական զործիքները, որ նա վերցրել է: Նա պարապլոր է նույնպես Արիարաթին վերադարձնել նրանից վերցված բոլոր տեղերը և նրանց վրա դռնվող կառուցվածքները, նաև պատանդներին. նմանապես և Տիոս քաղաքը, որը դռնվում է Պոնտոսի մոտ՝ այն քաղաքը, որը փոքր ինչ հետո Եվմենեսը զիջեց Պրուսիային, կատարելով նրա խնդիրքը, և Պրուսիասը դրա համար մեծապես նրան երախտապարտ էր: Որոշված էր նմանապես, որ Փառնակը պետք է վերադարձնե առանց փրկանքի բոլոր ռազմազերիններին և բոլոր փախստականներին: Բացի այդ, այն դանձբերից ու փողից, որ վերցրել էր Մորգիայից [Պափլագոնիայի Թագավորից] և Արիարաթից՝ նա պետք է այս Թագավորներին վճարեր 900 տաղանդ, և 300 տաղանդ էլ Եվմենեսին ի հատուցումն պատերազմական ծախսերի: Որոշված էր նույնպես, որ Արմենիայի սատրապ Միհրդատը¹, որը հակառակ Եվմենեսի հետ կնքած դաշինքի պատերազմի էր ելել Արիարաթի դեմ՝ պետք է վճարեր սրան 300 տաղանդ: Պայմանագրին մասնակից էին արվել Ասիայի իշխաններից՝ Արտաշե-

1 Պոլիբիոսի մոտ Փոքր Հայքի այս Միհրդատը, ինչպես տեսնում ենք, անվանված է սատրապ, այսինքն՝ կուսակալ: Այս վկայությունից կարելի է թերևս հետևել, որ Միհրդատը 180 թվի պատերազմի ժամանակ չէ եղել ասիական Թագավոր, այլ հպատակված է եղել, հավանորեն, Պոնտոսի կամ գուցե մի այլ հարևան Թագավորի զերագույն իշխանությունը:

սը, որը Արմենիայի մեծադույն մասի կառավարիչն էր, և Ակուսելութը»:

Արտաշեսյան անկախ Մեծ Հայաստանի գորեղացումը վրտանդավոր համարեց Սելեկյան թագավորությունը, որ արմենական այս երկրի նախկին սյուզերենն էր: Ինչպես վկայում են Դիոդորոս Սիկիլիացին և Ապպիանոս¹, մոտավորապես 165 թվին (մեր թվ. առաջ) Հայաստան էր արշավել Անտիոքոս Դ. Եպիփանեսը (175—164 մեր թվ. ա.): Սակայն Արտաշեսը, թեև պարտութուն էր կրել՝ կարողացել էր շուտով վերականգնել իր հին իրավունքները:

Դիոդորոս Սիկիլիացու մի այլ վկայությունից² հայտնի է դարձյալ, որ Սելեկյանների սատրապ Տիմարքոսը, որն ասլուտամբել էր և հայտարարել իրեն Մեծ Մեդիայի թագավոր (161 մեր թվ. առաջ)՝ դաշն էր կնքել Արտաշես Ա-ի հետ և սրա օգնությամբ ընդարձակել էր իր թագավորության սահմանները մինչև Սելեկիա և Զեզմա, Այս վկայությունից, ինչպես տեսնում ենք, պարզ երևում է, որ Արտաշես Ա-ը թագավորել էր Մեծ Հայաստանում ամենաքիչը մինչև 160 թիվը մեր թվականությունից առաջ:

Աղբյուրների աղքատիկ ու պատահական այս տեղեկությունները չեն տալիս, իհարկե, պարզ ու լրիվ պատկեր այն մեծ շրջադարձի, որ տեղի էր ունեցել Արտաշես Ա-ի ժամանակ: Սակայն վերոհիշյալ կցկտուր հիշատակություններն անգամ ցույց են տալիս, որ Արտաշեսյան անկախ ու հզոր Հայաստանի կազմակերպումը սկիզբն էր Հին Հայաստանի պատմության նոր դարաշրջանի:

Միանգամայն բնական է ու հասկանալի, որ Արտաշեսյան այս շրջանի պատմական մեծ անցքերը նյութ էին դառել վիսպական հին երդերի ու ավանդությունների, որոնցից օգտվել էր Մովսես Խորենացին:

Արտաշես Ա-ին է վերաբերում, անշուշտ, Խորենացու վկայությունն Արտաշատ քաղաքի շինության մասին, որ հայտնի է եղել Խորենացուն, ինչպես ինքն է վկայում, «ի վիսպասանացն, որ պատմին ի Գողթան»³:

«Արտաշեսը, — պատմում է Խորենացին, — դնում է այն

¹ Str. Müller, Fragm. histor. graec., II, էջ X և Appianos, Syr., 43 և 44:

² Müller, F. H. G., II, էջ XI:

Str. II, գլ. 49:

տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը իրար էին խառնվում, և, հավանելով բլրին՝ շինում է քաղաք և իր անունով կոչում է Արտաշատ: Նրան օգնում է և Երասխը անտառների փայտով. ուստի և նա առանց դժվարության ու արագ շինում է քաղաքը և կանգնեցնում է նրա մեջ մեհեանք¹:

[«Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամոր, և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: Զեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ կանգնէ ի նմա մեհեանք»]¹:

Ինչպես հայտնի է, ինքը խորենացին վիպասանքի այս Արտաշեսին, որը, անտարակույս, Արաաշատի հիմնադիր Արտաշես Ա-ն է՝ շփոթել է իր ենթադրած Արաաշես Բ-ի հետ, որին նա համաձայն իր սխալ ժամանակագրության ժամանակակից է համարում հռոմեական Դոմետիանոս (81—96 մեր թվ. հ.), Ներվաս, Տրայանոս և Ադրիանոս (117—138 մեր թվ. հ.) կայսրների: Բայց, իրապես, խորենացու օգտագործած Արտաշեսյան վիպի կենտրոնը կազմում է, ինչպես մանրամասն ցույց է տրվում ձեռքի վրա Արեղյանի «Հայ ժողովրդական առասպելները» ուսումնասիրության մեջ², վերոհիշյալ Արտաշես Ա. Թագավորը, թեև նրա մեջ որոշ տարրեր ընդունվել են նաև հետագա մյուս Արտաշեսներից, Տրդատ Ա-ից և պատմական այլ նշանավոր դեպքերից:

Հատկապես նաև Հին Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին իմ աշխատության մեջ ցույց էր տրված³, որ խորենացու մոտ պահպանված են որոշ հիշողություններ պատմական այն անցքերի ու պատերազմների մասին, որոնք տեղի էին ունեցել Հայաստանում ո՛չ թե Հրադամիդդի (ըստ խորենացու՝ Երվանդի) և Տրդատ Ա-ի (ըստ խորենացու՝ Արտաշես Բ-ի) ժամանակ, ինչպես ենթադրել են Գաբազաշյանը և Արևդյանը⁴, այլ Որոնտաս—Երվանդի և Արտաշես Ա-ի ժամանակաշրջանում: Այդ կարելի էր տեղեկությունները ևս խորենացուն հայտնի են եղել, հավանորեն, վիպասանքից կամ հին զրույցներից:

¹ Տե՛ս «Մովսիսի Խորենացու», *Պատմութիւն Հայոց», աշխատ. Մ. Արեղյանի և Ս. Հաբուքյունյանի, Տփղիս, 1913, էջ 176—177 (II, 49).*

² Տե՛ս «Հայ ժողովրդական առասպելները», *Վաղարշապատ, 1901, էջ 315—326.*

³ Տե՛ս «О торговле и городах Армени», էջ 97.

⁴ Տե՛ս Գաբազաշյան, «Գնահատական պատմութիւն», մասն Գ, էջ 276—293. Արևդյան, *Հայ ժողովրդական առասպելները, էջ 286—289.*

Զրույցների և երգերի մեջ, ըստ երևույթին, պատմվում էին Արտաշեսի այն պատերազմները, որոնց միջոցով նա վերջ էր դրել Երվանդյանների իշխանությանը և նվաճել էր Արարատյան դաշտը ու նրանց աթոռանիստ կենտրոն Երվանդաշատը:

Ստրաբոնի կարևոր մի վկայությունից մեզ հայտնի է, որ Երվանդյաններից վերջին իշխողն է եղել Օրոնտաս—Երվանդը, որից հետո հաստատվել էին Անտիոքոս Մեծի Արտաքսիաս¹ և Զարիադրիս ստրատեգներ-կուսակալները: Խորենացին մեզ միջոց է տալիս կռահելու, որ Երվանդյանների ղեկնաստիայի յոթանակումն Արտաշեսյան նոր ղեկնաստիայով տեղի է ունեցել համառ կռիվներից հետո:

Ստրաբոնի միջադեպում Օրոնտաս—Երվանդի (Ὀρόντας) մասին, որին հաջորդել էր Արտաշես Ա-ը՝ անհրաժեշտ եմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ:

«[Արմենիայի մասին] հին ավանդությունը,— ասում է Ստրաբոնը,— այդ է, իսկ ավելի նորը, սկսած պարսկական տիրապետությունից և հաջորդաբար մինչև մեր ժամանակները՝ հարկ է պատմել համառոտակի մինչև այժմ, Արմենիային նախ տիրեցին պարսիկները և մակեդոնացիները, հետո Սելևկյանները, որ նվաճել էին Ասորիքը և Մեդիան: Վերջին իշխողն էր Օրոնտասը՝ շառավիղը Հյուսիսարևելի, որը մեկն էր յոթը պարսիկներից: Այնուհետև երկիրը բաժանեցին երկու մասի Արտաքսիասը և Զարիադրիսը, որոնք ստրատեգներն էին Անտիոքոս Մեծի, որը պատերազմել էր Հռոմայեցիների դեմ: Սրանք իշխում էին նախ Թադավորի հանձնարարությամբ, բայց սրա պարտությունից հետո, հարելով Հռոմայեցիներին՝ իշխեցին իրենք առանձին և հայտարարվեցին Թադավորներ²:

Ահա այս Երվանդն է ըստիս հիշատակված Խորենացու Պատմության մեջ (դիրք II, գլ. 15—16): Բայց մեր պատմահայրը, օգտվելով, հավանորեն, բացի վիպասանքից նաև այլ մեղանհայտ աղբյուրներից՝ Երվանդի ու Արտաշեսի ընդարձակ պատմությունը հերյուրել է և շարադրել, բնականաբար, ըստ իր ընթանման ու ժամանակադրության, չփոթելով Օրոնտաս—Երվանդին Եդեսիայի Արգարի և Թադավորի որդու՝ Արբանդեսի

¹ Strabo, XI, 14, 15 (531):

(ἸΑρβανδης) հետ¹, որը ժամանակակից էր Տրայանոս կայսեր (98—117 մեր թվ. հ.) :

Հիմնվելով այս նոր լուսաբանության վրա՝ նախորդ իմ աշխատություններից մեկում ես հավանական էի համարել², որ ինքնացու մոտ պահպանված են կարևոր հիշողություններ ոչ միայն Արտաշես Ա-ի հիմնած Արտաշատ քաղաքի, այլև Երվանդյանների հիմնած Երվանդաշատ քաղաքի մասին :

«Սրա [Երվանդի] ժամանակ, — պատմում է ինքնացին, — արքունիքը Արմավիր կոչված բլրից տեղափոխվում է, որովհետև Երասխ գետը հեռացել էր և, ձմեռն երկարելիս, երբ հյուսիսային ցուրտ քամիներ էին փչում՝ վտակը բոլորովին սառչում էր և չէր կարելի քաղական ջուր ունենալ թաղավորանիստ անդի համար : Նեղվելով սրանից, նաև ավելի ամուր տեղ փնտրելով՝ Երվանդը տեղափոխում է արքունիքը դեպի արևմուտք, ապառաժոտ մի բլրի վրա, որի շուրջը պատում էր Երասխը, իսկ դեմից հոսում էր Ախուրյան գետը : Նա պարսպապատում է բլուրը, իսկ պարսպից ներս շատ տեղերում կտրում է քարերը մինչև բլուրի հատակը գետին հավասար, որպես զի գետի ջրերը հոսեն փորված տեղերը և խմելու ջուր հայթայթեն» :

[«Յառուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ . քանզի էր հեռացեալ գետն Երասխ, և ի յերկարել ձմերայնոյն, և ի դառնահոտ փչմանէ հիւսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն՝ ոչ ուստեք արբուցումն բաւական թաղաւորականին դաանէր տեղւոյ : Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրադունի ևս տեղւոյ ելեալ ի խնդիր՝ փոխէ դարձունիսն յարեմուտս կոյս, ի քարակտուր մի բլուր, ղորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ : Պարսպէ գբլուրն, և ի ներքսադոյն քան զպարիսպն ընդ բաղում տեղիս կտրեալ դքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար դետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն...»]³ :

Խալաթյանցը կարծում է, որ մեջ բերված այս ամբողջ

¹ Տես Χαλατήρι, Армянский эпос, Москва, 1896, էջ 219 և 226 :

² Տես «О торговле и городах Армении», էջ 96—98 :

³ «Մովսիսի Խոռենացու, Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 165 :

վկայութիւնը սարքել է ինքը խորենացին¹։ Այդ կարծիքը, իհարկե, ընդունելի չէ։ Վերև մենք տեսանք, որ դեռևս երրորդ դարում մեր թվականութիւնից առաջ Երվանդայաներն իշխում էին Այրարատում և Արմավիրն այնտեղ նրանց աթոռանիստ կենտրոնն էր։ Ավելի քան հավանական է, ուրեմն, որ երրորդ դարի վերջում Երվանդի արքունիքը կարող էր լինել, ինչպես հաղորդում է խորենացին, Արմավիրում։ Իսկ որ Երվանդաշատի հիմնադիրը պետք է լիներ, իրապես, Երվանդը՝ այդ պարզ երևում է այս քաղաքի Երվանդաշատ անունից։

Այսպիսով՝ անտես առնելով խորենացու վերոհիշյալ վկայութիւնների մեջ ժամանակագրական նրա սխալ կռահումները՝ կարող ենք ենթադրել, որ Երվանդաշատը, հավանորեն, հիմնել էր երրորդ դարի վերջում կամ երկրորդ դարի սկզբում մեր թվականութիւնից առաջ Արտաշես Ա-ի նախորդը, Օրոնտաս—Երվանդը², որի մասին պատմական ստույգ տեղեկութիւններ պահպանվել են Ստրաբոնի և խորենացու մոտ, և կամ դուցե սրան նախորդող Երվանդներից մեկը։

խորենացու պատմութիւնն մեջ, ինչպես նորերս պարզվեց, սրահված են պատմական կարևոր հիշողութիւններ նաև Արտաշես Ա-ի պետական և կուլտուրական գործունեութիւնն մասին։

Արտաշեսյան թագավորութիւնն հիմնադրին են վերաբերում, ինչպես վերջերս ցույց տվեց Լենինգրադի էրմիտաժի դիւանական աշխատակից պրոֆ. Ա. Բորիսովը՝ Սեանի լճի մոտ դառնված երկու արամեական արձանագրութիւնները³, որոնց վրա կարդացված են Արտաշես թագավորի և նրա հոր՝ Չարեհի անունները։ Ակադ. Օրբելու կարծիքով, այդ քառանիստ աշտարակաձև արձանագրված քարերը հաստատում են խորենացու հաղորդած տեղեկութիւնը քառակուսի սահմանաքարերի մասին, զորոնք կրում էին Արտաշեսի անունը⁴։

«Բոլոր իր առաքինի արարքներից և ուղղադատ գործե-

¹ Տե՛ս Хачатурянц, Армянский эпос, էջ 215—218.

² Ինչպես հայտնի է, խորենացին նույն այս Երվանդին է վերագրում նաև Երվանդակերտի շինութիւնը (II, 108) և Ծննդոց կոչված անտառի տընջումը (II, 108)։ Գարող են ըստիս ստույգ լինել և պատմական խորենացու և այս տեղեկութիւնները։

³ Համեմատե՛ւ լեյութեր Հին Հայաստանի պատմութիւն, Երևան, 1935, էջ 207—214.

⁴ Տե՛ս Օրբելու հոդվածը «Расшифровка древних надписей», Известия оргар, 31 հունվ. 1941 թ.,

որից հետո,— վկայում է խորենացին,— Արտաշեսը հրամայում է գլուղների և ագարակների սահմանները որոշել, որովհետև նա բազմամարդացրել էր Հայոց աշխարհը, դրոժից բերելով շատ ժողովուրդներ, որոնց բնակեցրել էր լեռներում, հովիտներում ու գաղտերում: Եվ սահմանների համար նա հաստատում է նշաններ այսպես. հրամայում է տաշել քառակուսի քարերը, փորել մեջերը փոսեր պնակի նմանությամբ և թաղել դետնի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել



Արտաշես Ա-ի արամեասառ արձանագրությունները

քառակուսի աշտարակներ՝ դետնից քիչ բարձր: Սրա վրա նախանձնելով՝ հրամայում է Սասանի որդի Արաաշիբը նույնը անել և Պարսից աշխարհում ու իր անունով կոչել, որպեսզի Արաաշեսի անունը այլևս չհիշվի: Բայց ասում են, որ Արաաշեսի ժամանակ Հայոց աշխարհում անմշակ հող չկար, ո՛չ լեռնային և ո՛չ գաղսային, որովհետև երկիրը դառել էր շեն:

[«Յեա ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի՝ հրամայէ զսահմանս գլուղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկա-

մուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերե-
նրս և ի հովիտս և ի դաշաս. Եւ նշանս սահմանացն հաստա-
տեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս,
և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և չորեքկու-
սիս ի վերայ յաբուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրա-
գոյն յերկրէ: Ընդ որ նախանձնալ Արտաշէր որդւոյ Սասա-
նայ՝ զնոյն նման հրամայէ առնել և ի Պարսից աշխարհին և
յիւր անունն անուանել, զի մի՛ ևս յիշեսցի անունն Արտա-
շիսի:

Բայց ասի, ի ժամանակս Արաաշիսի ոչ դառնել երկիր
անգործ յաշխարհիս Հայոց, ո՛չ լեռնային և ոչ դաշտային,
յաղազս շինութեան երկրիս»¹:

Խորենացու այս վկայութիւնն Արաաշիսի հրամանով կանգ-
նեցված սահմանաքարերի մասին, որոնց վրայի արձանադրու-
թիւնները, ինչպես պարզվում է այժմ, գրված են եղել հին
արամեերեն գրերով՝ բացառիկ կերպով կարևոր է ու հետաքրքիր:
Արձանադրված արամեատառ այդ քարերը, ինչպես շատ ճիշտ
մատնանշել է Ա. Բորիսովը, պարզ ցույց են տալիս, որ մինչև
հայկական գրերի գյուտը հինդերոդդ դարում (մեր թվ. հետո)
դեռևս Արտաշես Ա-ի ժամանակ Հայաստանում գործածվել են
հին արամեական տառեր:

Խորենացին, ինչպես տեսնում ենք, իր հաղորդած տեղեկու-
թիւններն Արաաշիս Ա-ի մասին քաղել է, մեծ մասամբ, կարե-
վոր ու արժանահավատ աղբյուրներից: Ուստի և կարող ենք,
ըստ էութեան, հավանական համարել նաև նրա այն վկայու-
թիւնը (II, ԾԹ), որի մեջ մատնացույց է արված, որ հայերը,
որոնք «մեծամեծ արուեստից և գիտութեանց ունայնացեալք»
էին՝ սկսել էին կուլտուրապես ավելի արագ զարգանալ չնորհիմ
Արաաշիս Ա-ի սկսական վերանորոգչական գործունեութեան:

Մեր այս ընդարձակ քննութիւնից հետևում է, որ Արաա-
շիս Ա-ը, որը հավաքել, միավորել ու կուլտուրապես բարեկեր-
գել էր Մեծ Հայաստանը՝ Առաջավոր Ասիայի խոշորագույն
պատմական զեմքերից մեկն է:

Արաաշիս Ա-ից հետո օտար աղբյուրների մեջ մենք գրեթե
տեղեկութիւններ չունենք Մեծ Հայաստանի և արմենական
մյուս թագավորութիւնների մասին մինչև Տիգրան Բ-ը (95—55

¹ Տես Խորենացի, Տփղիս, 1913, էջ 186 (II, ԾԶ):

մեր թվ. առաջ) : Միմիայն Արաաչես Ա-ի որդիները մասին պատմական աղոտ հիշողություններ պահված են խորենացու պատմություն, մեջ :

Արաաչես Ա-ը, ինչպես վկայում է խորենացին, ունեցել է հինգ որդի՝ Վրոյր, Մաթան, Արտավազդ, Տիրան և Զարեհ : Մրանցից վերջին երեքը, իմ կարծիքով, հաստատապես կարող են համարվել Արաաչես Ա-ի որդիներ :

Զարեհը, որը կրում է արամեաառաւ արձանագրության մեջ հիշված Արաաչես Ա-ի հոր՝ իր պապի անունը, հիշատակված է ոչ միայն խորենացու պատմություն, այլև վրաց ժամանակադրություն՝ Քարթլի-Յիսուրբայի մեջ :

1. Մովսես խորենացի, II, գլ. ԾԳ, էջ 184 (Տիղիս, 1913)՝

«Եվ Զարեհ խորխա մարդ էր, երեւելի որսի մեջ անվեհեր, բայց պատերազմների մեջ վախկոտ և տատանվող : Մի ոմն Քարձամ, վրաց թագավորը, փորձով դիտենալով այդ՝ ապստամբեցնում է իր երկիրը և թռնելով Զարեհին՝ բանտարկում է Կովկասում : Բայց Արտավազդը և Տիրանը Սմբատի հետ միասին, պատերազմելով նրա դեմ՝ ետ են դարձնում իրենց եղբորը խիստ տղմոտ տեղից» :

. [«Եւ Զարեհ էր այր սէդ և յորս երէոց նահատակ, իսկ առ պատերազմունս վատ և տաղտուկ . զորոյ զփորձ առեալ Քարձամայ ուրումն արքայի վրաց՝ ապստամբեցուցանէ զերկիրն, և կախալ զԶարեհ, ի բանտի դնէ ի Կաւկաս : Ընդ որում պատերազմեալ Արտաւազդայ և Տիրանայ հանդերձ Սմբատաւ՝ դարձուցանեն զեղբայրն ի մեծէ կարակմէ»] :

2. Քարթլի-Յիսուրբայ, տե՛ս I. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա., Երևան, 1934, էջ 158—160՝

«Ապա հայոց թագավոր Արաաչեսն (Արտաշանն) իր ամբողջ զորքով և նրա սպարապետ Սմբատ Բյուրատյանը շարժվեցին Ղեպի Քարթլի : Իսկ վրացիներն ամրացրին բերդերն ու քաղաքները և, բերելով զորք Օսեթից, յորին բերդերն ու քաղաքները : Եկան հայերն ու նստեցին Մցխեթում, և կռվում էին հինգ ամիս և ամենայն օր տեղի ունեւ կտրիճների ընդհարում : Ապա վրացիներն ու օսերը, նեղ տեղն ընկնելով՝ խնդրեցին հաշտություն, արյուն ու հատուցումն չփնտռելով, Հայերի թագավորն ունկնդիր եղավ նրանց աղերսին,

և դրվեց ուխտ ու երգումն. և հայերի թագավորը, ստորկացնելով վրացիներին ու օսերին՝ գնաց:

Անցավ մի քանի տարի և հայերից ավերված Քարթլին վերաշինվեց: Այդ ժամանակ հայերը զբաղված էին, — նրանք պատերազմ էին սկսել պարսիկների և հույների հետ: Ապա վրացիները և օսերը բարեսլատեհ ժամանակ գտան և սկսեցին ճնշել հայերին, քանի որ հայերի ամբողջ զորքը և թագավորի երկու որդիները Սմբատի հետ միասին պատերազմում էին [ընդդեմ] պարսիկների, իսկ երբ վրացիներն ու օսերը սաստկացրին պայքարը հայերի հետ, նաև նրանց տառապանքը՝ այն ժամանակ Արտաշես թագավորը զօրք ժողովեց [ներանցից], որոնք տանն էին մնացել և, տալով իր Ջարեհ որդուն՝ ուղարկեց վրացիների դեմ: իսկ վրացիներն ու օսերը, ժողովվելով՝ դիմեցին Ջավախքի կողմը, հաղթեցին ու փախուստի մատնեցին հայոց թագավորի որդի Ջարեհին և խորտակեցին նրա ամբողջ զորքը, որին հետամուտ եղան մինչև Հայքի (Սոմխեթի) սահմանները. և բանտարկեցին թագավորազն Ջարեհին լճի ափին, որ ծել է կոչվում և ետ բերին: իսկ օսերն ուղում էին Ջարեհին սպանել իրենց թագավորների արյան փոխարեն, ռապայն վրացիները կենդանի թողին, որպեսզի իրենց սահմաններն առնեն, և կալանավորեցին Դարիալանի բերդում: Հայերը չկարողացան նրան փնտռել, քանի որ զբաղված էին Պարսից [պատերազմով]:

Ապա երրորդ տարին եկան Սմբատ Բյուրատյանը և թագավորի որդիները, Աբտավազդն ու Տիգրանը, հայկական ամբողջ զորքով: Ապա վրաց (Քարթլիի) թագավորները հրամայեցին իրենց ամբողջ երկիրներին փախչել դեպի բերդերն ու քաղաքները, և լեռնաստանցիները (մթիուկները) ամրացրին բերդերն ու քաղաքները: իսկ հայերը եկան և կանգ առան Թոեղքում: Հանդես եկան նրանց մեջ ղեսպանները և հաշտվեցին: Վրացիները վերադարձրին թագավորի որդուն, որը կալանավորված էր, և օգնություն խոստացան այսպես ասելով. «Եթե երևան գա որևէ թշնամի և պատերազմի ձեզ հետ, մենք երկոթյան թագավորներս անձամբ և մեր զորքով ձեզ հետ կլինենք և կօգնենք, իսկ եթե որևէ մեկի դեմ պատերազմեք՝ մենք տասը հազար սպառազեններով կօգնենք ձեզ: Եվ վրացական այս քաղաքում կկտրենք

դրամ Արտաշես Թադավորի պատկերով: Այս պատճառով հայերը վերադարձրին Վրաց (Քարթլի) սահմանները՝ Մունդա քաղաքը և Դեմոթի բերդը, Ջավախքն ու Արդահանը: Եվ այնուհետև համերաշխ էին հայերը, վրացիները և օսերը, և երեք [տողովուրդն] էլ միասին կռվում էին թուրքերի դեմ:՝

Մարկվարտը ենթադրաբար այս վկայությունների մեջ հիշատակված Ջարեհին է վերադրում Ջարիչատ քաղաքի և Ջարեհավանի շինությունը: Բայց նա, մեջ բերելով Պորենացու վերահիշյալ վկայությունը՝ կարծում է սխալմամբ, որ նրա մեջ հիշատակված Ջարեհը կամ Տիգրան Բ-ի մեծ որդին է, որը Վալերիուս Մաքսիմուսի մոտ (IX, 11) անվանված է Sariastr, և կամ ժամանակակից է Տրդատ Ա-ին: Ավելի հավանական է բուսիս, որ Ջարիչատը և Ջարեհավանը ես, ինչպես և Արշտմաշատը, Կարկաթիոկերտը, Երվանդաշատը և Արտաշատը՝ կարող են հիմնված լինել Առաջավոր Ասիայի տնտեսական մեծ հեղաշրջման ժամանակ III—II դարերում մեր թվականությունից առաջ և նրանց հիմնադիրը, ըստ երևույթին, Արտավազդի և Տիրանի եղբայր Ջարեհն էր՝ Արտաշես Ա-ի որդին:

Արտաշես Ա-ի հաջորդների ժամանակ խիստ յորեղացավ Պարթևական Թադավորությունը: Պարթևները, օգտվելով Սելևկյանների ներքին երկպառակություններից՝ Միհրդատ Ա-ի թագավորության ընթացքում (171—138 մեր թվ. առաջ) նվաճեցին արանց երկիրները հնդկական Կովկասից մինչև Հյուսիսային Միջագետքը և Եփրատ գետը: Երանց ուշխարհակալական ծավալումը շարունակվեց նաև Միհրդատ Բ-ի ժամանակ (123—88 մեր թվ. առաջ):

Յուստինոսի կարևոր մի վկայությունից հայտնի է, որ Պարթևական մեծ պետությունը, որը նվաճել էր հետզհետե Հայաստանի ռազմականից երկիրները՝ պատերազմ էր մղել նաև Հայոց Արտավազդ Թադավորի դեմ: Այս Արտավազդը, հայտ-

1 Համեմատե նաև «Համառոտ պատմություն վրաց ընծայեալ Զուալեկի պատմիչի, Վենետիկ, 1884, էջ 33—34 (չլ. 6): Քարթլի-Ցխովրդիայի վկայությունները, որ կարող են դեռ լուրջ քննության, թվում է, որ Ջարեհին վերաբերող մասում կարող են լինել արժանահավատ:

2 S. Markwart, Die Genealogie der Bagratiden, Caucasica, Fasc. 6, 2 Teil, Leipzig, 1930, էջ 21—23:

նորեն, այն Արտավազդն է, որը հայկական վեպի մեջ հիշատակված է իբրև որդի և հաջորդ Արաաշես Ա-ի¹:

Վերև մատնանշված վկայության մեջ Յուստինոսը հաղորդում է, որ

«Արտավանին հաջորդեց նրա որդին՝ Միհրդատը, որն իր դործերի համար կոչվեց Մեծ:... Սա մեծ քաջությամբ վարեց հարևանների հետ ռազմաթիվ պատերազմներ և Պարթևական թագավորությանը միացրեց շատ ժողովուրդներ: Նույնպես և սկյութացիների հետ նա մի քանի անդամ աջողությամբ պատերազմեց և վրեժխնդիր եղավ նախորդների վիրավորանքների համար: Վերջը կռվեց արմենների թագավոր Արտավազդի հետ»²:

Ո՛չ միայն այս, այլև մատենադրական և ուրիշ վկայություններից հայտնի է, որ հենց Միհրդատ Բ. Մեծի ժամանակ (123—88 մեր թվ. առաջ) պարթևները կարողացել էին վերջնականապես նվաճել Միջագետքի երկիրները և Ատրպատականը: Կարելի է, ուրեմն, վստահորեն ենթադրել, որ նրա արշավանքն Արտավազդի դեմ տեղի էր ունեցել Հայաստանի հարևան երկիրների նվաճումից հետո, ըստ երևույթին, Ատրպատականի կողմից և, ինչպես ենթադրել է Մարկվարտը, դաշնակից ու վասսալ Ատրպատականի թագավորի մասնակցությամբ³:

Հայ-պարթևական այս պատերազմի ժամանակ, թեև ուտրթևներին չէր աջողվել նվաճել Հայաստանը, սակայն, հայանորեն, նրանք պարտության էին մատնել հայերին և, ինչպես վկայում են Յուստինոսը և Ստրաբոնը, պատանդ էին վերցրել Տիգրան Բ-ին⁴:

Որ Հայաստանը նվաճված չէ եղել Միհրդատ Մեծի արշավանքի ժամանակ՝ այդ երևում է դարձյալ Ստրաբոնի հետևյալ վկայությունից:

«Պարթևները, — ասում է Ատրաբոնը, — տիրեցին մեղացիների և լաթելոնացիների երկիրներին, բայց ո՛չ Արմենիային: Թեև հարձակումներ հաճախ տեղի ունեցան, սակայն երկիրն ուժով չնվաճվեց, Ընդհակառակը, Տիգրանը զորեղ

¹ Տես Խորենացի, I, գլ. Լ և II, գլ. Ծ—ԾԳ, ԾԵ, ԿԱ և ԿԲ.

² Տես Just., Epit. XLII, 2, 3—6.

³ Տես Markwart, Eranschahr, էջ 109.

⁴ Տես Justin., XXXVIII, 3, 1 և Strabo, XI, 14, 16 (532).

կերպով դիմադրեց ու հաղթեց նրանց, ինչպես մենք ասացինք Արմենիայի մասում¹։

Պատմադ վերցված Տիգրանի մասին կարևոր են Ապպիանոսի և Ստրաբոնի վկայությունները։ Ապպիանոսի ասելով՝ Տիգրան Բ-ը որդին էր ու՛չ թե Արտավազդի, այլ Տիգրանի²։ Իսկ Ստրաբոնը, խոսելով Արտաշեսի և Ջարեհի մասին՝ վկայում է, որ Տիգրան Բ-ը Արտաշես Ա-ի սերնդիցն էր³։

Պատմական ու բանասիրական նորագույն երկերում Արտաշես Ա-ի հաջորդների և Արտավազդի ու Տիգրան Բ-ի ազգակցության մասին հայտնվել են հակասական կարծիքներ։ Այդ կարծիքներից հավանական է ըստիս Ռեյնաքի ենթադրությունը, որը Տիգրան Բ-ին համարում է համաձայն Ապպիանոսի վկայության Տիգրան Ա-ի որդին, իսկ Արտավազդին՝ եղբայր այս վերջինի⁴։

Պատմագետների ու բանասերների ուշադրությունից վրիպել է, որ Ապպիանոսի հաղորդած տեղեկությունը հաստատվում է խորենացու պատմության ուշադիր քննությամբ⁵։ Խորենացու մոտ, ինչպես վերև ասացինք, Արաաշեսյան առհմի առաջին թագավորների մասին պահպանվել են ուշագրավ պատմական հիշողություններ, որոնք հայտնի են եղել նրան վիպասանքից կամ հին զրույցներից։ Հենվելով այդ զրույցների վրա՝ Խորենացին վկայում է, որ Արտաշեսի որդին ու հաջորդը, Արաավադդը, դավակ չէ ունեցել և որ Արտավազդից հետո Հայաստանում թագավորել է նրա եղբայրը՝ Տիրանը⁶։ Պատմահոր հաղորդած կարևոր այս տեղեկությունները, ինչպես տեսնում ենք, համապատասխանում են Ապպիանոսի վերոհիշյալ վկայության։

Կարող ենք ըստիս, համաձայն այդ տեղեկությունների, հավանական համարել, որ Արտաշես Ա-ին հաջորդել էր նրա որդին, Արտավազդ Ա-ը, և ապա սրա եղբայրը՝ Տիգրան Ա-ը, որից հետո թագավորել էր այս վերջինի որդին՝ Տիգրան Բ-ը։

1 *Strabo*, XVI, 1, 19 (745)։

2 *Strabo App.*, Syr., 48։

3 *Strabo*, XI, 14, 15 (532)։

4 *Reinach*, *Mithridate Eupator*, էջ 104 և *Markwart*, *Eranschahr*, էջ 173։

5 Խորենացու վկայություններից հիշտ հետևություն է արել Սանտալ-ճյանը, տես *Histoire documentaire de l'Arménie*, II, էջ 441։

6 *Strabo* Խորենացի, II, գլ. 5Ա։

ՏԻԳՐԱՆ Բ-Ը ԵՎ ՀԱՅ-ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ

1. Պատանդ Տիգրանի վերադարձը և գահակալությունը:— 2. Ծովի միացումը Սև ձայասանին:— 3. Փոքր Հայքի միացումը Պոնտոսին:— 4. Քաղաքական կացությունը Փոքր Ասիայում.— Հռոմը, Պոնտոսը և Կապպադոկիան առաջին դարի սկիզբներում (մեր թվ. առաջ):— 5. Կապպադոկիայի հարցը:— 6. Տիգրանի և Միհրդատի դաժնությունը:— 7. Հայերի հարձակումները Կապպադոկիայի վրա.— Արտաբանդան Ա. և Նիկոմեդես Գ.— Յուստինոսի կառավարելի վկայությունը.— Եվրոպական պատմագետների անհավաստի լուսաբանությունը այս ժամանակաշրջանի անցման:— 8. Փոքր Հայքի մասնակցությունը Միհրդատյան առաջին պատերազմին.— Դարդանոսի բանավոր դաժնությունը:— 9. Հիստորիկոսներ Միհրդատյան առաջին պատերազմի մասին հաճախակի անհամաձայնությունները:— 10. Ելլադայից Հայաստան բերված հունական կուռքեր:

Մեծ Հայաստանի մասին, ինչպես առաջինը, մենք ունենք մանրամասն տեղեկություններ Տիգրան Բ-ից սկսած:

Տիգրան Բ-ը, որը պատանդ էր պարթևների մոտ՝ դա՛ էր բարձրացել 95 թվին (մեր թվ. առաջ): Գահակալության այս թվականը հայտնի է մեզ Պլուտարքոսի վկայությունից: 70 թվին, երբ Ապպիոս Կլավդիոսը եկել էր նրա մոտ իբրև դեսպան՝ նա, ինչպես վկայում է Պլուտարքոսը¹, արդեն 25 տարեկան թագավոր էր: Պատանդությունից ազատվելու և իր հայրենի թագավորությունը ստանալու համար նա, ինչպես վկայում է Ստրաբոնը², պարթևներին, իրական էր տվել յոթանասուն հովիտներ, որոնք Մարկվարտի կարծիքով³, այն շրջաններն էին, որ Ատրպատականի կողմերում գրավել էր Արտաշես Ա-ը:

Երբ Տիգրանն ազատվեց ու վերադարձավ իր հայրենի երկիրը՝ նա արքայական իր թագը կապեց, ինչպես վկայում է

¹ *Strab. Plut. Lucullus, 21, 7:*

² *Strabo, XI, 14, 15 (532):*

³ *Eranschahr, էջ 109:*

Ապպիանոսը¹, Հայաստանի այն վայրում, ուր ինքը հիմնել էր հետո Տիգրանակերտ քաղաքը: Այս վիայությունից երևում է, որ հին Աղձնիքը, որի մեջ այժմյան Ֆարկինում որոշված է վերջերս հին Տիգրանակերտ քաղաքի տեղը՝ գտնվել է ո՛չ թե Մոփքում, այլ Արտաշեսյան թագավորության մեջ՝ Մեծ Հայքում²:

Գա՛ թարձրանալուց հետո Տիգրան Բ-ի առաջին դորժը եղավ հարևան Մոփքի միացումն իր թագավորությանը: Կապպադոկիան, որը հագիլ էր հռոմայեցիների օղնությամբ պահպանում իր անվանական անկախությունը՝ անկարող եղավ պաշտպանել իր հին դաշնակցին ու բարեկամին: Տիգրան Բ-ը հարձակվեց Մոփքի վերջին թագավոր Արտանեսի վրա (94 մեր թվ. առաջ) և նրա երկիրը կցեց Մեծ Հայաստանին:

«Արտաշեսի սերնդիցն էր, — ասում է Սարաբոնը, — Տիգրանը. նա իշխում էր այսպես կոչված բուն Արմենիայում, որը սահմանակից էր Մեդիային, Աղվանքին, Իբերիային մինչև Կողքին և Սև ծովի մոտ դտնվող Կապպադոկիային: Իսկ Ջարեհի սերնդիցն էր Մոփքաց երկրի Արտանեսը, որն իշխում էր Արմենիայի հարավային և, դիտավորապես, արևմտյան մասերում: Տիգրանը սրան հաղթեց և դառավ ինքը տեր բոլոր այդ երկիրներին»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Տիգրան Բ-ի իշխանության տակ միացան Մեծ Հայքը, Մոփքը, որոնք Սելևկյանների ժամանակ առանձին ու ինքնիշխան երկիրներ էին: Արմենական երրորդ թագավորությունը, Փոքր Հայքը, որը Հայկական լեռնաշխարհի բնական սահմաններից դուրս էր դտնվում՝ Մոփքի նվաճումից առաջ, դեռ երկրորդ դարի վերջերում, նվաճել ու միացրել էր իր թագավորությանը Միհրդատ Գոնտացին (111—63 մեր թվ. առ.):

«Երբ զորեղացավ, — վկայում է Ստրաբոնը, — Միհրդատ Եվպատորը՝ նա տիրեց Կողքիսին և այն բոլոր երկիրներին [Փոքր Հայքին, Խաղտիքին և Տիրարեններին], որ նրան հանձնել էր Անտիպատրոսը, Միաիդի ողդին»⁴:

Մոփքի միացումից հետո Տիգրան Բ-ի հղոր ու ընդարձակ թագավորությունը սահմանակից էր զառնում արևմուտքում

¹ App., Mithrid., 67:

² Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien 1930, էջ 163:

³ Str. Str., XI, 14, 15 (532):

⁴ Str. Strabo, XII, 3, 28 (555):

աացի Պոնտոսից նաև Կապպադովկիային: Հարավում և արևելքում Մեծ Հայաստանին, հարևան ու սահմանակից էին սլարթեաներ՝ դերիշխանության տակ գտնվող մանր պետութիւնները՝ Ոսրոն, Կորդուքը, Աշիարեներ և Ատրպատականը, իսկ հյուսիսում Աղվանքը և Իբերիան:

Տիգրան Բ-ի դահակալութիւնից դեռ առաջ Հոռմը, Հունաստանն ու Մակեդոնիան նվաճելուց հետո՝ 133 թվին ոտք էր դրել Փոքր Ասիա որպէս նվաճող և հաստատել էր իր իշխանութիւնը Պերդամոնում, որը դառնալով հռոմեական նահանգ՝ տնայնակում էր այնուհետև «պրովինցիա Ասիա»:

Հոռմի այս մուտքն Ասիա սկիզբն էր այն մեծ ավերածութիւնը ու աղետի, որն իր հետևանքներով ահալոր ու կործանարար եղավ հելլենիստական Արևելքի տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացման համար:

Ինչպէս վերև տեսանք, հելլենական աշխարհակալները ևս նվաճել էին Արևելքը շահագործման նպատակով, սակայն նրանք, ինչպէս ասացինք, հիմնելով այստեղ հարյուրավոր քաղաքներ ու դադուիթներ և ստեղծելով բարեհաջող պայմաններ առևտրի, արհեստների և արդյունադործութիւնի աճման ու զարգացման համար՝ մեծապէս նպաստել էին նրա առաջադիմութիւն: Մինչդեռ հռոմեական հանրապետութիւնի տիրապետութիւնն առաջին դարում (մեր թվ. առ.) աղետալի մի դարաշրջան եղավ արևելյան երկիրների տնտեսական ու կուլտուրական հետադիմութիւն, անհաշիվ հարստութիւնների և անթիվ ստրուկների փոխադրման Արևելքից Արևմուտք և, ընդհանրապէս, տեղական հելլենիստական պետութիւնների ու քաղաքների կողոպտման ու կործանման:

Դառնալով տեր ու տնօրեն պրովինցիա Ասիայի՝ Հոռմը, որի հլու ու հնազանդ դաշնակիցները դառան զաւատները և Բիթանիայի ու Կապպադովկիայի թագավորութիւնները՝ ձգտում էր իր տիրապետութիւնը տարածել դեպի Արևելք: Եւ չուտով սկսվեց Արևելքում Հոռմի ու Պոնտոսի երկաքառու ու համառ պայքարը, որին մասնակից եղավ նաև Մեծ Հայաստանը:

Պոնտական թագավորութիւնը գտնվում էր Սև ծովի հարավային կողմում՝ Բիթանիայի, Գալատիայի, Կապպադովկիայի և Փոքր Հայքի միջև: Աբմենյան Պարսկաստանի տիրապետութեան ժամանակ այս երկիրը, որի մեջ ապրում էին սեմական, արիական և բնիկ փոքրասիական ցեղեր, մեծ չափով ենթարկվել էր

իրանական կենցաղի ու կուլտուրայի ազդեցութեան: Նրա ծովափնայա շրջաններում՝ Սինոպում, Ամիսոսում, Տրապիզոնում և մյուս քաղաքներում՝ հաստատվել էին դեռ Աքեմենյաններէ աւերապետութիւննից առաջ հունական գաղութներ, որոնք զորեղ նեցուկներ էին հելլենական քաղաքակրթութեան ու լեզվի տարածման: Պարսկական աղնականութիւնը, որը դրավել էր այստեղ հողեր ու կալվածներ, կաղմում էր զգալի մասը իշխող դասի: Պարսկական աղնական ամենաբարձր տոհմից էր նաև Միհրդատ Ա-ը, որը, ինչպես տեսանք, հիմնադիր է համարվում Պոնտական թագավորութեան:

Այս թագավորութիւնն իր հզորութեան ու փառքի դադարանակետին հասաւ առաջին դարի սկիզբներում (մեր թվ. առաջ) Միհրդատ Եւպատորի թագավորութեան ընթացքում (111—63 թ.), որին անվանում են նաև Միհրդատ Մեծ: Պոնտոսի այս հզոր թագավորը կարճ ժամանակում նվաճել էր Կողքիսը մինչև Դիոսկուրիա և այժմյան Սուրամը, նաև այժմյան հարավային Ռուսաստանում՝ Տավրիկյան իներսոնտը ու նրա հարևան սկյութական երկիրները, և Պոնտոսի հարավարևելքում, ինչպես ասացինք, Փոքր Հայքը, որը նվաճումից առաջ ատանձին թագավորութիւն էր: Այս մեծ նվաճումներից հետո Պոնտոսը մեծաւոյն պետութիւնն էր դառնել Փոքր Ասիայում և ամենահզոր հակառակորդը Հռոմի:

Պոնտոսի և Փոքր Հայքի հարավում գտնվում էր Կապպադովկիան, որը սահմանակից էր հայկական հին Ծովքին և տարածվում էր հարավում մինչև Կիլիկիա, արևմուտքում՝ մինչև Լիկաոնիա և հյուսիս-արևմուտքում՝ մինչև Գալատիա: Այստեղ ևս, ինչպես վերև տեսանք, Սելևկյան տիրապետութեան սկզբնական շրջանում կաղմակեցւել էր ատանձին թագավորութիւն, որի հիմնադիրն էր Արիարաթ Բ-ը: Կապպադովկիայում ևս, ինչպես և Պոնտոսում, իշխող դասակարգը բաղկացած էր, մեծ մասամբ, կալվածատեր պարսիկ աղնականներից և երկիրն Աքեմենյան տիրապետութեան ժամանակ ենթարկվել էր իրանական տնտեսականութեան և իրանական կուլտուրայի ազդեցութեան: Սակայն նաև այստեղ հելլենականութիւնը հաստատվել էր քաղաքներում և նրա ազդեցութիւնը զորեղ էր, չլիսավորապես, ժողովրդի բարձր խավերում:

Պոնտոսը, որն Աքեմենյանների ժամանակ միացած էր այս բոլոր Կապպադովկիայի հետ՝ ունէր այս վերջինի հետ կուլտու-

րական ու կրօնական և մասամբ նաև ցեղային որոշ կապեր Գոնտոսի համար հարևան Կապպադովկիան ուներ, բացի այդ, տորատեզիական մեծ նշանակութիւն, որովհետև սրա հյուսիս-արևելյան ընդարձակ սահմանները տարածվում էին մինչև Փոքր Հայքը և գրեթե մինչև Գոնտոսի թիկունքը: Հասկանալի է ուրեմն, որ Միհրդատ Եվպատորը, որն անչափ ընդարձակել էր իր Թագավորութեան սահմանները՝ աշխատելու էր ցեղակից ու կրօնակից այս երկիրը միացնել իր մեծ Թագավորութեանը:

Կապպադովկիայի փաստական նվաճումը Միհրդատը հաջողեցրել էր 99 թվին (մեր թվ. առաջ) և Թադալոր դրել այստեղ իր ութնամյա որդուն՝ Արիարաթ Թ-ին: Սակայն շուտով, 95 թվին, Հռոմեական ծերակույտի կարգադրութեամբ պոնտական զորքերը հաղկադրված եղան մաքրել այդ երկիրը և Կապպադովկիայի Թագավոր ընտրվեց Արիոբարզան Ա. Հռոմեառները:

Հռոմայեցիների հենց այս բարեկամի Թագավորութեան ժամանակ Տիգրան Բ-ը դրավել էր 94 թվին Ծոփքը, որը, ինչպես ասացինք, սահմանակից էր Կապպադովկիային և հին դաշնակիցն էր ու բարեկամը Արիարաթների Թագավորութեան: Իբրև նախկին պաշտպանն ու հովանավորը Ծոփաց Ջարեհյան Թագավորութեան՝ Կապպադովկիան, այժմ, բնականաբար, վտանգավոր հարևան էր համարվելու Մեծ Հայաստանի, Հասկանալի է նույնպես, որ Արիոբարզան Ա-ը, Հռոմեական քաղաքականութեան հրու և հնազանդ սպասավորը, խոչընդոտ էր դառնում և պոնտական քաղաքականութեան վերահիշյալ ձգտումների իրագործման, որոնցից չէր կարող հրաժարվել Միհրդատ Եվպատորը:

Ինչպես տեսնում ենք, առաջին դարի սկիզբներին Կապպադովկիան ընդհանուր թշնամի էին համարելու և Տիգրանը և Միհրդատը, և միանգամայն բնական է, որ նրանք աշխատեցին միանալ իրար հետ ընդդեմ հարևան այդ Թագավորութեան: Բացի այդ, ինչպես շատ ճիշտ մատնանշել է Ռեյնաքը, սրանց բարեկամութիւնն ունեցել է, հավանորեն, նաև տնտեսական դրդապատճառներ: Ռեյնաքի կարծիքով¹ պոնտական Թագավորների և հատկապես Միհրդատ Եվպատորի բարեկամական քաղաքականութիւնը Հայաստանի, Ատրպատականի և Վրաստանի հանդեպ րացատրվում է պոնտական մեծ առևտրի շահերով:

Այս երկիրների բարեկամութիւնը խոշոր նշանակութիւն

¹ Տե՛ս Reinach, Mithridate Eupator, էջ 78 և 234:

ուներ Պոնտոսի համար, որովհետև նրա մեծ նախահանգիստները հավաքաբար էին և հանգուցակետեր համալսարհային մեծ առևտրի և միջազգային տարանցիկ ճանապարհները, որոնք դալիս էին Հեռավոր Արևելքից ու Միջին Ասիայից և Եկրատաճայի ու Արտաշատի վրայով գնում էին, դլխավորապես, պոնտական Ամիսոս և Մինուլ քաղաքները:

Բարեկամական այս հարաբերությունները, որ գոյություն ունեին Պոնտոսի և Մեծ Հայաստանի միջև, Տիգրան Բ-ի ժամանակ դառել էին ավելի սերտ ու մտերիմ: Աչքի առաջ ունենալով իրենց երկիրների կենսական շահերը՝ Տիգրան Բ-ը և Միհրդատ Եվպատորը 95 կամ 94 թվին կնքեցին հատուկ դաշնագրություն, որի նպատակն էր Տիգրան Բ-ի ռազմական անկեղծությունը Միհրդատին ընդդեմ հարևան Կապպադոկիայի: Կնքված դաշինքի համաձայն, որն ամրապնդել էին Տիգրանի ամուսնուլթյամբ Միհրդատի աղջկա՝ Կեոպատրայի հետ՝ երկու թագավորները պաշմանավորվել էին, որ նախկին քաղաքներն ու շրջանները պատկանելու են Միհրդատին, իսկ գերիներն ու շարժական գույքը՝ Տիգրանին:

93 թվին (մեր թվ. առաջ), Ծոփքի միացումից անմիջապես հետո, Տիգրան Բ-ը Միհրդատի հորդորմամբ հարձակվեց Կապպադոկիայի վրա, գրավեց ամբողջ երկիրը և Արիոբարզան Ա-ը փախավ Հռոմ: Վերջինիս փոխարեն, նույն 93 թվին, վերահաստատվեց այստեղ իբրև թագավոր Միհրդատի փոքրահասակ որդին Արիարաթը, որի խնամակալն էր Գորդիոսը:

Շուտով Հռոմեական ծերակույտի հրամանով, ինչպես հայտնի է Պլուտարքոսից¹, Կապպադոկիա եկավ Կելիկիայի փոխպրետորը՝ Սուլլան, Սա պարտություն մատնեց Գորդիոսի և Տիգրանի զորքերը և նորից հաստատեց Կապպադոկիայի գահի վրա դաշնակից Արիոբարզան Ա-ին: Երբ Սուլլան դառնում էր Եփրատ գետի մոտ՝ նրա մոտ եկել էր այստեղ (92 մեր թվ. առ.) Պարթևների թագավոր Միհրդատ Բ-ի ղեկավարը, Օրոբազոսը, որը, ինչպես հաղորդում են աղբյուրները², բարեկամական բանակցություններ էր վարել Սուլլայի հետ և առաջարկել էր, որ Եփրատ գետը լինի սահման երկու պետությունների միջև:

91 թվին՝ Սուլլայի հեռանալուց անմիջապես հետո՝ Միհրդատը և Բագաոսը, որոնք, ըստ երևույթին, Տիգրան Բ-ի ղո-

¹ S⁸u Sylla, 5:

² Plu., Sylla, 5, Appianos, Mithrid., 57 և Florus, 70:

րավարներն էին՝ նորից հարձակվեցին ու զբաղեցին Կապադոկի-
կիան։ Արիոբարդանն այս անգամ ևս փախաւ Հռոմ և նրա գահը
նորից տրվեց Միհրդատի Արիարաթ որդուն¹։

Նույն 91 թվին, Նիկոմեդես Բ-ի մահից հետո, Երկպառա-
կություններ էին ծագել նաև Բիթանիայում։ Հռոմն այստեղ
թագավոր էր հաստատել Նիկոմեդես Բ-ի մեծ որդուն՝ Նիկոմե-
դես Գ-ին։ Մակայն նրա կրտսեր որդին, Սոկրատեսը, ապավինե-
լով Միհրդատ Եվպատորին և ստանալով սրանից պոնտական
զորքեր՝ կարողացավ ինքը զբաղել Բիթանիան, Իհարկե, առանց
Հռոմի համաձայնության։

Ներու հալածված թագավորները՝ Արիոբարդան Ա-ը և Նիկո-
մեդես Գ-ը եկան Հռոմ և օգնություն խնդրեցին հռոմայեցիներ-
ից։ Հռոմեական ծերակույտն այս անգամ ուղարկեց Արևելք
Մանիոս Ակվիլիոսին և Մանլիոս Մալթինոսին, որոնք 89 թվին,
առանց կռիվի ու որևէ հակառակության, վերահաստատեցին նը-
րանց իրենց թագավորություններում։

Եվրոպական պատմաագետները, ինչպես մանրամասն ցույց է
տրված իմ «Տիգրան Բ-ը և Հռոմը» աշխատության մեջ², հա-
վատ են ընծայել Յուստինոսի խառնաշփոթ ու կասկածելի վկա-
յությանը³ և Տիգրան Բ-ի մասնակցությանը 93—84 թվերի անց-
քերին տվել են միանգամայն վիճելի ու անհավաստի լուսաբա-
նություն։ Բավականաչափ հիմնավորված չէ ըստիս, նախ և
առաջ, ընդհանրացած այն կարծիքը, որ իբր թե Տիգրանը հլու
և անխոս մի գործիք է եղել Միհրդատ Եվպատորի քաղաքական
նպատակների իրագործման։ Տիգրանի մասնակցությունը 93 թվի
Կապադոկիայի նվաճմանը, ինչպես վերև ասացինք, բացատր-
վում է պարզապես նրանով, որ Մոփքի միացումից հետո այդ
երկիրը վտանգավոր հարևան էր դառել Մեծ Հայաստանի արև-
մտյան սահմանում։ Դժվար չէ նաև կռահել⁴ որ 91 թվի արշա-
վանքը նույնպես կարևոր նշանակութուն ուներ Հայաստանի
համար, որովհետև պարթևների բարեկամական բանակցություն-
ներին Սուլլայի հետ (92 թվ.) մասնակցել էր, ինչպես հաղոր-
դում է Պլուտարքոսը⁵, նաև Կապադոկիայի թագավոր Արիո-
բարդա, Ա. Հռոմեաները։ Իսկ պարթևների, Հռոմի և Կապադ-

¹ Appianos, Mithrid., 10:

² Տես էջ 31—36:

³ Տես Just., XXXVIII, 3, 1—5:

⁴ Sylla, 5:

դովկիայի բարեկամական համաձայնությունը չէր կարող, իհարկե, ցանկալի լինել Տիգրան Բ-ին: Եվ հասկանալի է, որ նա, համեմելով Կապպադովկիայի թագավորությունն Արիարաթին և Գորդիոսին՝ ապահովում էր իր թիկունքն արևմուտքում և ամրացնում էր իր քաղաքական դիրքերը հայ-պարթևական կոնֆլիկտների համար:

Մի մեծ թյուրիմացություն է, բացի այդ, Մոմզենի, Մորզանի և ուրիշների կարծիքը¹, որ իբր թե Տիգրան Բ-ի և Միհրդատ Եվպատորի դաշնադրությունը վերաբերել է ո՛չ միայն Կապպադովկիայի, այլև հռոմեական-պոնտական 88—84 թվերի մեծ պատերազմին, որ նախապատրաստում էին վաղօրոք Միհրդատը և Տիգրանը: Իրապես, իննսնական թվականների վերջերում (մեր թվ. առաջ) ո՛չ Միհրդատը և ո՛չ էլ Տիգրանը չէին մտածում պատերազմել հռոմայեցիների դեմ: Միանգամայն անհավանական է, անշուշտ, որ հայ-պարթևական կոնֆլիկտից առաջ Տիգրան Բ-ը համաձայնած լիներ անմիտ ու արկածախնդրական մեծ պատերազմ սկսելու ընդդեմ հզոր Հռոմի: Վերոհիշյալ դաշինքով նա պարտավորություններ էր հանձն առել ո՛չ թե հռոմեական-պոնտական պատերազմի, այլ միմիայն Կապպադովկիայի նկատմամբ:

Ենթադրելով որ հայ-պոնտական դաշինքը կնքված է ևլել ընդդեմ Հռոմի՝ եվրոպական պատմաագետներից ոմանք, օրինակ, Շպիգելը և Մոմզենը՝ Միհրդատյան առաջին պատերազմին (88—84 մեր թվ. ա.) սխալմամբ մասնակից են դարձրել նաև Տիգրանյան Մեծ Հայաստանը: Մոմզենը նմանապես ենթադրում է, որ իբր թե պատերազմից առաջ Միհրդատը ստացել էր Տիգրանից օժանդակ զորաբանակ²:

Այս ենթադրությունը ևս, ինչպես մատնացույց է արել իր հոդվածներից մեկում Ռեյնալդը՝ ճիշտ չէ:

Արմենների զորագունդը, որը մասնակցել էր այս պատերազմին և բաղկացած էր 10.000 հոգուց՝ հիշատակված է՝ իրոք, Ապսիանոսի մոտ³:

¹ S^{են} Mommsen, Римская история, т. II, Москва 1887, էջ 286. J. Morgan, Histoire du peuple arménien, Paris, 1919, էջ 70:

² S^{են} F. Spiegel, Iranische Alterthumskunde, Leipzig, 1878, Bd. III, էջ 92 և Mommsen, Римская история, т. II, Москва, 1887, էջ 286 և 287:

³ S^{են} Revue des études grecques, II, էջ 384:

⁴ App., Mithrid., 17:

Վերջինս բացի Միհրդատի բուն զորքից՝ առանձնապես մատնանշում է նաև Փոքր Հայքի օգնական 10.000 հեծելազորը (συμπαρχια), Այս այրումին, ինչպես հայտնի է աղբյուրների վկայություններից՝ մասնակցել էր Միհրդատի որդու՝ Արիարաթի և, հավանորեն, Նեմանես կամ Նայմանես արմեն զորավարի առաջնորդությամբ հաղթական երկու մեծ կռիվներին Ամնիաս ցեղի և Պրոտոպալքիոնի մոտ։ Բայց այս զորքը ո՛չ թե Տիգրանի ուղարկած օժանդակ զորաբանակն էր, այլ հեծելազունըն էր Փոքր Հայքի, որն այդ ժամանակ, հավանորեն, միացված էր Արիարաթի Կապպադովկիայի Թագավորության¹։



Միհրդատ Եվպատոր

88 թվին Միհրդատն ամենակարճ ժամանակում նվաճեց ամբողջ գրեթե Փոքր Ասիան։ Կեղեքված փոքրասիական բնակչությունն ընդունում էր նրան գրկադաց և պատվում էր նրան՝ թրքև ազատարարի։ Նրան համարում էին Աղեքսանդր Մակեդոնացու նման հելլենական-ասիական մի նոր ալիսարհակալության հիմնադիր։

88 թվի վերջերում պոնտական զորքերը, Միհրդատի որդու՝

¹ S. Reinach, Mithridate Eupator, էջ 122, ծան. 2:

Արևարածի առաջնորդութեամբ, անցան Եվրոպա և գրավեցին Թրակիան ու Մակեդոնիայի մի մասը: Այս Արևարածի հետ, որը Կապպադոկիայի և, ըստ երևույթին, նաև Փոքր Հայքի թաղավորն էր՝ այստեղ ևս կոխմիներին մասնակցել էր արմենական վերահիշյալ հեծելազորը:

Միհրդատյան առաջին պատերազմը, ինչպես հայտնի է, վերջացավ Սուլլայի հաղթական հակահարձակումներից հետո և ՏԱ թվին համաձայն Դարդանոսում ընդունված բանալոր դաշինքի պայմաններին Միհրդատը հրաժարվեց իր բոլոր նվաճումներից և պարտավորվեց վճարել Սուլլային 2000 տաղանդ ոսկեմետղ և հանձնել նրան 70 կամ 80 ոսկեմանավ:

Վերահիշյալ պատմագետները, ենթադրած լինելով որ Տիգրան Բ-ը մասնակցած է եղել այս պատերազմին՝ անհասկանալի են համարում և տարօրինակ, որ Դարդանոսի դաշնադրութեան մեջ չէ հիշատակվում Մեծ Հայաստանը: Նրանց այս դիտողութիւնը դարձյալ թյուրբեմացութեան արդյունք է: Տիգրանը, ինչպես վերև տեսանք, չէր մասնակցել և սրբաբավորութիւններ չէր ստանձնել մասնակցելու այս պատերազմին, ուստի և միանդամայն հասկանալի է, որ հռոմայեցիները հիմք չունեին մասնակից դարձնելու նրան Դարդանոսի դաշնադրութեան:

Ուշագրավ է ու հետաքրքիր, որ այս պատերազմի մասին աղոտ հիշողութիւններ պահպանված են Պորենացու պատմութեան և աշխարհագրութեան մեջ: Կարևոր այդ վկայութիւնները հարկ եմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակութեամբ:

1. Խորենացի, II, գլ. ԺԲ, էջ 123 (Տիգրիս, 1913):

«Բայց Արտաշեսը, նվաճելով երկու ծովերի միջև եղած ցամաքը՝ լցնում է օվկիանոսը նաւերի բազմութեամբ, կամ մենալով իրեն ծառայեցնել բոլոր Արևմուտքը: Եվ որովհետև Հռոմում մեծ խռովութիւնն ու շփոթութիւնն էր՝ ոչ ոք նրան ուժեղ դիմադրութիւն ցույց չտվեց: Բայց ես չեմ կարող ճիշտը ասել, թե ինչ պատճառով ահագին աղմուկ ու շփոթութիւնն էր ծագել և զորքերի բազմութիւնը իրար սկսել էին կոտորել: Իսկ Արտաշեսը փախչելիս մեռնում է, ինչպես ասում են՝ իր զորքերից, թազավորելով քսան և հինգ տարի:

Եվ նա Ելլադայում, վերցնելով Դիոսի, Արտեմիդեի, Աթենասի, Հեփեստոսի և Ափրոդիտեի արձանները՝ ուղարկում է Հայաստան. և բերողները դեռ մեր երկրի ներսերը

չհասած՝ լսում են Արտաշեսի մահվան բոթը և արձանները փախցնում տանում են Անի ամրոցը: Իսկ քուրմերը, արձանների հեռակից դնալով՝ մնում են նրանց մոտ»:

[«Բայց Արտաշիսի նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն՝ երկոցունց՝ ընու զՈւլկիանոս բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արևմուտս: Քանզի մեծ յոյդք խռովութեանց եղեալ ի Հռովմ՝ ոչ ոք ընդդիմանայ նմա հզօրապէս, Այլ ո՛չ դիտեմ ասել յորպիսի ազգմանէ, ահագին իմն աղմուկ լեալ շփոթից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ. իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրացն, Թագաւորեալ ամս քսաչ և հինգ»:

Բայց և յԵրազայ առեալ պատկերս գրիոսի, զԱրտեմիդեայ, զԱթենայ, զՀեփեստու, զԱփրոգիտեայ՝ տայ բերել ի Հայս. որք ոչ ժամանեալ միջամուխ լինել յաշխարհ՝ լսեն զբոթ մահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի. և քուրմք զնոցին զհետ լինելով դադարեն առ նոսալ»]:

2. Խորենացի, II, գլ. ԺԳ, էջ 124՝

«Եւ նախքան Ասիա հասնելը՝ Ատտիկէի դղյակում նա [Արտաշեսը] հռչակեց»:

[«Եւ յառաջ քան յԱսիայ հասանելն՝ յԱտտիկէ դղեկին քարոզեցաւ»]:

3. Խորենացի, «Աշխարհացոյց», հրտր. Սուքրյանի, Վենետիկ, 1881, էջ 17՝

«Եւ մեան մեծ կղզի է և Ատալանտը փոքրիկ կղզյակ է մեջտեղում. սրա մասին ասում են, որ Հայոց արքա Արտաշեսի զորքերն էին դուրս, որպեսզի չուշանան պարեհ հայ թայթող նավերը, քանի դեռ պաշարված էր դղյակը՝ Ջարմանալին. որովհետեւ ջրերն այնտեղ առանց պատճառի այսու և այն կողմն էին հոսում, և ասում են, որ Արտաշես այնտեղ է մեռել»:

[«Եւ բոլր մեծ կղզի և Ատալանտ փոքրիկ կղզեակ ի մէջն՝ զոր ասեն դուրս զօրացն Արտաշեսի Հայոց արքայի, զի մի՛ նաւք ոռհկացն յամիցեն, մինչև պաշարեալն էր դղեալ կըն Ջարմանալի, զի ջուրք յանպատճառս այսր անդր հոսէին և պսնն անդ մեռեալ Արտաշեսի»]:

Այս վերալուծյունների մեջ Ջարմանալի դղյակը, ինչպե՛ս

ուղիղ նկատել է Մարկվարտը՝ Աթենքն է, որը պաշարել էր Մուլլան, իսկ Եվբեա մեծ կղզին գրավել էին, իրապես, Միհրդատի դորքերը: Միանգամայն ճիշտ է նմանապես, որ 88 թվին՝ Թրակիայի, Մակեդոնիայի և Ելլադայի նվաճման ժամանակ՝ Հռոմը չկարողացավ «հղօրապէս ընդգլխմանալ» պոնտական զորքերին ներքին մեծ խռովությունների պատճառով:

Սակայն իորենացին, որին ծանոթ չեն եղել Միհրդատյան պատերազմներին վերաբերող հռոմեական և հունական աղբյուրները՝ չէ կարողացել, բնականաբար, տալ պատմական այս շրջանի ճշգրիտ պատմությունը և, չփոթելով դեպքերը, ենթադրել է ինքը, որ վերոհիշյալ անցքերը կարող էին տեղի ունեցած լինել Կրեսոս թագավորի և Արտաշես Աշխարհակալի ժամանակ:

Վերև մեջ բերված առաջին հատվածի վերջում ուշադրաւ է խորենացու վկայությունը, որ Ելլադայից Հայաստան էին բերվել Դիոսի, Արամիդեի, Աթենասի, Հեփեստոսի և Ափրոդիտի արձանները: Այդ արձանների մասին Փրանսական գիտնական Ա. Կարիերը կարծիք էր հայտնել, որ հունական կուռքերի Հայաստան մուծվելը ո՛չ թե իրական որևէ մի դեպքի է համապատասխանում, այլ արդյունք է խորհրդածող երեւակայության¹:

Կարիերի այս պնդումը, ինձ թվում է, ավելի քան վիճելի է: Ագաթանդեղոսի և խորենացու վկայություններից մեզ հայտնի է, որ Դիոսի, Արտամիդեի, Աթենասի և Հեփեստոսի արձանները գտնվում էին Անի-Կամախում, Երեզում, Թիլում և Բագառիճում, որոնք Միհրդատյան պատերազմի ժամանակ դեռ չէին կցվել Հայաստանին և պատկանում էին Միհրդատի պոնտական թագավորության²: Միանգամայն հնարավոր է ըստիս, որ այդ արձանները կարող էին բերված լինել, ինչպես վկայում է իորենացին, Հունաստանից Միհրդատյան առաջին պատերազմի ժամանակ, որի մասին խորենացու մոտ պահպանվել են նաև վերոհիշյալ պատմական հիշողությունները:

¹ Eranschahr, Berlin, 1901, էջ 4:

² Տե՛ս «Հեթանոս Հայաստանի ութ մեհաններն Ագաթանդեղոսի և Մ. խորենացու համեմատ», Թարգմ. Հ. Վ. Տաշյանի, Վիեննա, 1899, էջ 38:

³ Տե՛ս Markwart, Die Genealogie der Bagratiden, Caucasica, Fasc. 6, 2 Teil, էջ 63:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. Պատերազմ պարբերների դեմ:—2. Յարանասուն հովիտների և Աղբալի ու Աղիաբենի գրավումը:—Աղիաբենի արմենական ընկալությունը:—3. Տիգրանի արեւմտեւ դեպի Եկրասանա:—Աղիաբենի, Կորդուհի և Ասրպատականի բազմաթիւ զորքեր՝ վաստակեց Տիգրան Բ-ի:—Միգդոնիայի և Օսրոյենի ենթարկումը Տիգրանի իօխանութին:—բախառական արաբների գաղթեցումը Օսրոյեն:—Հայպարեանական կռիւների մոտավոր բնութագրերը:—4. Ասորիի, Դաւթայի Կիլիկիայի և Կամագենի նվաճումը:—5. Սելեւկյան Ասորիի՝ հայկական կուսակալությունը Բաղարաթի իօխանության հակա—կռիւները Փյունիկիայում:—6. Նոր հարձակումը Կապադովկիայի վրա:—հելլենիստական քաղաքների ընկալության գաղթեցումը Հայաստան:—7. Պարթևների քաղաքների նվաճումը:—8. Տիգրանի ընդհանրական պետության սահմանները:—9. Հռոմի չեզոքության պահանջները:—10. Տիգրանի պետության ներքին կազմակերպությունը:—վաստակական քաղաքությունների պարսավորությունները:—կալվածաձեռք հայ ազնվականությունը:—11. Տիգրան Բ-ի հաջորդությունները—հեռանալ հայ ժողովրդի անմահ ու երկրի սեփական գործընթացին:—12. Հայաստանի քաղաքները կամ քաղաքացիները:—չորս բնակիչները:—13. Հայաստանի հասարակական Տիգրան Բ-ի ժամանակաշրջանը:

Իննանական թվականների վերջերում (մեր թվ. առաջ), ինչպես վերև տեսանք, Տիգրան Բ-ը դաշն էր կնքել և բարեկամութուն հաստատել Միհրդատ Նիսապորի հետ և ապահովել էր իր թիկունքն արևմուտքում:

Այս դաշնադրութունից և Կապադովկիայի 93 և 91 թվականների արշավանքներից հետո Միհրդատն օգտվեց ներքին խռնակութուններից, որոնք ծագել էին Միհրդատ Բ-ի մահից հետո (90 կամ 88 թվ. մեր թվ. առաջ) Պարթևական թաղավորության մեջ, և սկսեց իր հաղթական կռիւներն ընդդեմ Թըշնամի ու մրցակից սլարթև Արշակունիների: Այս կռիւների, ինչ-

1 Գուրտ չեզարդը կարծում է, որ Տիգրան Բ-ի կռիւները պարթևների դեմ և Միջագետքի ու պարթևական մասեր վաստակ պետութունների միա-

պես և Տիգրանի հետագա մեծ նվաճումների՝ ճշգրիտ թվականները և նրանց ժամանակագրական հաջորդականությունը պատմադիտական ու բանասիրական երկերում հաճախ խառնաշփոթված և սխալ են որոշված:

Պատերազմ սկսելով պարթևների դեմ՝ Տիգրանը, նախ և առաջ, ետ վերցրեց այն յոթանասուն հովիտները, որ նա իբրև փրկանք տվել էր Միհրդատ Բ Մեծին պատանդությունից ազատվելու համար: Մարկիարտի կարծիքով, այս հովիտներն այն շրջաններն էին, որ գրավել էր Արտաշէս Ա-ը Ատրպատականի կողմերում¹: Ստրաբոնի ուշադրով մի վկայությունից երևում է, որ Տիգրանը նվաճել էր այժմ բացի յոթանասուն հովիտներից նաև Մեծ Աղբակ դավառը, այսինքն՝ այժմյան Բաջալէի շուրջը գտնվող երկիրը, որը հետո ասոր-պատականցիները ետ առան հայերից 33 թվին (մեր թվ. առաջ)²: Ստրաբոնի համապատասխան վկայության մեջ Σοῦβαχτ, աղավաղված ընթերցվածը Մարկիարտն առաջարկում է ուղղել և կարդալ 'Αλβάχτ:

Ասորպատյան Մեդիայի հզոր հարևաններն են, — ասում է Ատրաբոնը³, — արմենները և պարթևները, որոնք հաճախ հափշտակում էին նրա երկրամասերը: Սակայն սա դիմադրում էր և ես էր առնում խլիվածը. հենց այդպես նա ետ էր վերցրել հռոմեական իշխանութեան տակ գտնվող ա. Կեններից Աղբակը = Σοῦβαχτ փխ. 'Αλβάχτ] և բարեկ. ություն էր հաստատել ինքը Կեսարի հետ⁴:

Հավա որեն, Աղբակի դրավումից հետո էր տեղի ունեցել Տիգրանի արշավանքը Ադիարեն, ուր նա ավերածության էր ենթարկել Նինուեի և Արբելայի շրջանները⁵: Հետագրքի է ու ուշադրաւ, որ մինչև իսկ այս հեռավոր երկրում, ինչպես վկա-

ցումը Հայաստանին տեղի էին ունեցել 92 թվից առաջ (տես K. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. IX, 4, էջ 403): Այս կարծիքը, իհարկե, ճիշտ չէ: Մենք տեսանք վերև, որ 92 թվին Միհրդատ Բ-ի դեսպան Օրոբազոսը եփրատ գետի ակերի մոտ բանակցություն էր վարել Սուլլայի հետ, և նրանք համաձայնել էին, որ եփրատ գետը լինի սահման հռոմի և Պարթևական թագավորության միջև:

¹ Տես Eranschahr, էջ 109:

² Տես նույնը, էջ 109:

³ Տես Strabo, XI, 13, 2 (523):

⁴ Տես Str., XI, 14, 15 (532):

յում է Ստրաբոնը, բնակութիւնն էին հաստատել արմենները, որոնք կազմում էին այստեղ բնակչութեան մի սովոր մասը:

«Աղիարենի մեծագույն մասը — ասում է Ստրաբոնը, — դաշտային է: Լինելով Բաբելոնիայի մասը՝ սա ունի իր սեփական կառավարիչը. բայց երբեմն միացված է եղել և Արմենիային: Մեղացիները, արմենները և երրորդ՝ բաբելոնացիները, որոնք ամենամեծ թիվը կազմող ժողովուրդներն էին միշտ այստեղ՝ սկզբից հենց այնքան էին իրար հակառակ, որ հարմար դեպքում հարձակվում էին միմյանց վրա ու նորից հաշտվում»¹:

Մենք վերև մատնացույց էինք արել, որ արմենական զաղթականութեան մի մասը գեոևս հնագույն ժամանակներում բռնակել էր Կալաբենի լեռնային շրջանում, որը գտնվում էր Աղիարենի հյուսիսակողմում: Արմենների արևելյան այս հատվածը, որ, մեծ մասամբ, աչքաթող է արված պատմական երկերում, ինչպես տեսնում ենք, խիստ աճել էր այստեղ և հետագա դարերում կարևոր դեր էր կատարում Աղիարենի քաղաքական կյանքում:

Աղիարենը և Ատրպատականը նվաճելուց և իր իշխանութեանը ենթարկելուց հետո՝ Տիգրանը հարավ-արևելքում կարողացավ հասնել մինչև պարթև Արշակունիների ամառնային նստավայր Եկրատանա մայրաքաղաքը և այրեց այստեղ նրանց Աղրաբանան ամրոցը, որը Եկրատանայից գտնվում էր մոտ 10 կիլոմետր հեռավորութեան վրա²:

Պարթևների պարտութիւնն ունեցավ, բնականաբար, այն հետևանքը, որ Հայաստանի բոլոր հարևան պետութիւնները, որոնք մինչ այդ վասսալներն էին պարթև Արշակունիների՝ հարկադրված եղան ընդունել Տիգրանի դերիշխանութիւնը: Հայաստանի սահմանակից երկիրներին՝ Աղիարենի, Կորդուքի, Ատրպատականի թագավորները ենթարկվեցին այնուհետև Տիգրանի իշխանութեան և, ըստ երևույթին, պարտավոր էին նրան վճարել հարկ և օշնել ղորքով պատերազմի ժամանակ: Կասսիոս Դիոնը վկայում է նույնպես, որ Ատրպատականի Միհրդատ թագավորն ամուսնացել էր Տիգրանի աղջկա հետ³:

Հաղթված և պարտված պարթևները ո՛չ միայն հաշտվեցին

¹ Strabo, XVI, 1, 10 (745):

² S. Isidorus Charac., Müller, Geogr. graeci min., 1885, I, § 6, p. 250:

³ S. Cas. Dio, XXXVI, 14:

այս բողոքի հետ, այլ նաև ստիպված եղան Տիգրանին տալ ամբողջ Միջագետքը և նրա մեջ գտնվող Միդգոնիա, և Օսրոյենը, Միենուլյն ժամանակ, ինչպես դժվար չէ հետևեցնել Յուստինիանի վկայությունից¹ նրանք կնքեցին նրա հետ դաշնակցություն հաստիքի պայմանագիր և հրաժարվեցին «Թագավորների թագավոր» տիտղոսից, որը կրելու էր այնուհետև Տիգրան Բ-ը:

Տեր դառնալով Հայաստանի հարավային սահմանների մոտ գտնվող Միջագետքին՝ Տիգրանը փոխադրեց հարավային Միջագետքից և բնակեցրեց Օսրոյեն—Եդեսայի շրջաններում արարական քաղաքական ցեղեր: Սրանց նա հանձնարարեց, ինչպես վկայում են Պլուտարքոսը և Պլինիոսը², տրանզիտային առևտրական ճանապարհների վերահսկողությունը: Տիգրանի համար նրանք մաքս էին դանձելու, դիտավորապես, Եփրատ գետի անցքի մոտ, որը գտնվում էր Զեդայի արևմտակողմում Օսրոյենի հարևան Միդգոնիան, որի մեջ ստրատեգիական մեծ կարևորություն ունեւր Մծբինը՝ Տիգրանը կազմակերպել էր, ըստ երևոյթին, իբրև առանձին իշխանություն, որի վերահսկողությունը նա հանձնել էր իր Գուրաս եղբորը:

Ինչպես երևում է աղբյուրների ուշագիր քննությունից՝ Հայ-պարթևական կռիվները և Տիգրանի վերոհիշյալ նվաճումները տեղի էին ունեցել, մեծ մասամբ, Միհրդատյան առաջին պատերազմի տարիներում, մոտավորապես, 89—85 թվականներին: Սկսել է, անտարակույս, Աստուրյանի ենթադրությունը, որը պարթևական երկիրների նվաճումը դնում է Ասորիքի միացումից և 84 թվից հետո: Գուտշմիդը շատ ուղիղ մատնանշել է, որ Ասորիքը, որը սահմանակից չէր Հայաստանին՝ կարելի էր զրավել նախապես պարթևներին հաղթելուց և Միջագետքը նվաճելուց հետո:

Հայ-պարթևական կռիվներից հետո, մոտավորապես 84 կամ 83 թվին (մեր թվ. առաջ), Տիգրան Բ-ը կարողացավ նաև տիրել ամբողջ վերին Ասորիքին բացի Անտիոքի մոտ գտնվող Սե-

¹ Just., XL, 3;

² Str. Hist., Lucul., 21 և Plin., VI, 28, 142;

³ Տես Բագդադական վերաբերություններ ընդմէջ Հայաստանի և Հռոմ-մայ, Վենետիկ. 1912, էջ 39:

⁴ A. Guttschmid, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne, Petersb., 1887, էջ 20, ծան. 4:

վեկիա քաղաքից: Ասորիքի դրամման մասին առանձնապես ուշագրավ է Յուստինոսի հետևյալ վկայութիւնը:

«Նորք եղբայրների,— ասում է Յուստինոսը,— փոխադարձ ատելութեան և ծնողների թշնամութիւնների պատճառով, որ շարունակում էին նաև որդիները՝ Ասորիքի և՛ թագավորները և թագավորութիւնը ուժասուղառ եղան համառ կռիվներում, ժողովուրդն ապավինեց դրսի օգնութեան և սկսեց փնտրել իր համար օտարերկրյա թագավորներ: Արդ՝ ժողովրդի մի մասը կարծում էր, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մի մասն էլ՝ Եգիպտոսից Պտղեմալոսին, իսկ ոմանք աւարկում էին, որ Միհրդատը խճճվել է հոռմեական սլատերազմի մեջ և որ Պտղեմալոսը միշտ թշնամի է եղել Ասորիքին. բոլորը սակայն համաձայնութեան եկան Հայաստանի Տիգրան թագավորի նկատմամբ, որն ուներ իր սեփական ուժերը և միաժամանակ պարթևների դաշնակիցն էր և Միհրդատի փեսան էր»¹:

Ասորիքի և Փյունիկիայի մասին կարևոր է նաև Ստրաբոնի վկայութիւնը, որը հակառակ Յուստինոսի տեղեկութեան մատնանշում է, որ այդ երկիրները Տիգրանը գրավել էր ո՛չ թե խաղաղ կերպով, այլ դեմքի ուժով:

«Իսկ նրա [Տիգրանի] բախտը,— ասում է Ստրաբոնը,— եղել է փոփոխական. սկզբում նա պարթևների մոտ սլատանդ էր. հետո նրան հաջողվեց վերադառնալ հայրենիք, տալով նրանց յոթանասուն հովիտ Հայաստանում: Նա այնուհետև զորացավ և ո՛չ միայն ետ վերցրեց այդ հովիտները, այլև ավերեց նրանց երկիրը Նինուեի և Արբելայի շուրջը: Նա հպատակեցրեց իրեն Ատրպատականը և Կորդուքը և սրանց հետ միասին նաև Միջագետքի մնացած մասը: Բացի այդ, անցնելով Եփրատ գետը՝ նա նվաճեց բոնութեամբ Ասորիքը և Փյունիկիան»²:

Ինչպես տեսնում ենք, Ստրաբոնի հաղորդած այս տեղեկութիւնը հակասում է Յուստինոսի վկայութեանը, որը պարզ ու որոշ ասում է, որ Տիգրանն Ասորիքին տիրել էր բնակիչների հոժարակամ առաջարկութեամբ: Այս հակասութեան մասին միանշանակաբար հատկանշական կարելի է համարել Աստուրյանի բացատրութիւնը: Նրա կարծիքով՝ վերոհիշյալ երկու վկայու-

¹ Just., XI, 1, 1—3;

² Strabo, XI, 14, 15 (832):

թյունն էլ կարող են ուղիղ լինել, որովհետև Տիգրանը՝ հրավիրված լինելով որոշ կուսակցության կողմից՝ պետք է իրեն հպատակեցրած լիներ զենքով մյուս կուսակցությունը¹ :

Հավանորեն, Տիգրանի կողմնակիցներն են եղել Անտիոք քաղաքը և միջադճային տարանցիկ առևտրի հետ կապված վաճառականները, Ասորիքի միացումը Հայաստանին նրանց համար կարևոր տնտեսական նշանակություն ուներ, որովհետև, Միջագետքի նվաճումից հետո, Զեզմայի վրայով անցնող համալսարհային դիվանավոր ճանապարհը գտնվում էր Տիգրանի ձեռքում :

Հյուսիսային Ասորիքը գրավելուց հետո՝ Տիգրանն այնուհետև նվաճեց նաև արևելյան Դաշտային Կիլիկիան (Cilicia Pedias), որը Սեւեկյան պետության հյուսիս-արևմտյան մասն էր, և, բացի այդ, նույնպես և Կոմագենի փոքր թագավորությունը, որը զտնվում էր Դաշտային Կիլիկիայի արևելակողմում :

Այսպիսով նա իր պետության արևմտյան սահմանում անմիջական հարևանը դառավ հռոմայեցիների, որոնք 102 թվին (մեր թվ. առաջ) գրավել էին արևմտյան Լեոնային Կիլիկիան (Cilicia Tracheia) :

Անտիոքը, որը Սեւեկյանների մայրաքաղաքն էր և ուներ մոտ կես միլիոն բնակչություն՝ դառավ հարավում Տիգրանի դիվանավոր զահանիստ քաղաքը և այստեղ նրա անուանով ու պատկերով տպվում էին այն դեղեցիկ դրամները, որոնք մեծ քանակությամբ պահպանվում են այժմ թանգարաններում : Իսկ Սեւեկյան Ասորիքը նա զարժրեց առանձին կուսակալություն և այնտեղ կառավարիչ նշանակեց, ինչպես վկայում է Ապսիանոսը², իր Բագարատ (Μαγαδάτης=Βαγαδάτης) զորավարին : Մարկվարտի կարծիքով՝ հայկական ավանդությունը, որը պահպանված է Մար Աբասի մոտ՝ Բաղրատունիների նախարարական տոհմի նախահայր է համարում հենց այս Բագարատին³ :

Սուլլայի և Միհրդատի դաշնադրության հետևյալ տարին, ուրեմն՝ արդեն 83 թվականին, ասորական տարեգրերը, ինչպես մատնանշում է Մոմզենը⁴, Տիգրանին համարում են տեր իրենց ամբողջ երկրի և Կիլիկիան ու Ասորիքը հիշատակում են՝ որպիսի հայկական սատրապություն Բագարատի իշխանության տակ :

¹ Տե՛ս Ասուրյան, «Թագաքական վերաբերութիւններ», էջ 34, ծան. 2 :

² Syr. 48 :

³ Տե՛ս Eranschahr, էջ 174 :

⁴ Տե՛ս Римская история, т. III, перевод А. Веселовского, Москва, 1887, էջ 40 :

Ասորիքում հաստատված հայկական տիրապետութեան մասին հետաքրքիր է Ռեյնաքի հետեյալ գիտողութունը¹ :

«Ասորիքը, — ասում է նա, — ազատ շունչ քաշեց. և թեպետ ենթարկվեց նվաստացուցիչ օտար իշխանութեան, սակայն տասնչորս տարվա ընթացքում² նա ունեցավ խաղաղութուն, ապահովութուն և բարեկեցութուն» :

Աղբյուրների պատահական ու կցկտուր տեղեկութիւններից երևում է, որ Ասորիքին 84/83 թվերին տրեւուց հետո Տիգրան Բ-ը երկար ժամանակ կռիւներ էր վարել արեւելյան Փոքր Ասիայում և Փյունիկիայում, դիտավորապես, ամուր ու անառիկ քաղաքների դեմ : Փյունիկիայում և հարավային Ասորիքում դիմադրութունը կազմակերպել էր նրա դեմ Սելեւկյան Կլեոպատրա կամ Սելենե թագուհին : Եւ ավելի քան հաւանական է, որ Ասորիքի այս մասերը և Փյունիկիայի ծովափնյա քաղաքները նա զրաւել էր հետզհետե համառ ու երկարատե կռիւներից հետո :

Սուլլայի մահից հետո (78 թ.) և Միհրդատյան երրորդ պատերազմից առաջ (74—71 մեր թվ. առաջ) Տիգրանը նորից էր արշավել Կապպադովկիա, ըստ երեւոյթին, դարձյալ իր աներոջ՝ Միհրդատի սաղրանքով : Այս անգամ Կապպադովկիան, ինչպես մատնանշում է Ապպիանոսը³, ընկել էր իբր ցանցի մեջ՝ նա այժմ շրջապատւած էր հայկական նոր զրաււած երկրներով ու՛չ միայն Մոփքի, այլև Կոմադենի ու Դաշտային Կիլիկիայի կողմերից : Տիգրանին հաջողվեց զրաւել այս արշաւանքի ժամանակ Կապպադովկիայի Մաժաք մայրաքաղաքը և բազմաթիւ նաև այլ հելլենիստական քաղաքներ, որոնց բնակիչներին՝ մոտ 300·000 հոգի՝ նա փոխադրեց իր նորակառուց Տիգրանակերտ քաղաքը⁴ :

Անհամեմատական պետք է համարել սակայն Մոմդենի կաթմբը, որ իբր թե, դեռևս այս արշաւանքից առաջ՝ Տիգրանը միա-

¹ Mithridate Eupator, էջ 312:

² 83—69 թ., տես App. Syr., 48, Համաձայն Յուստինոսի (XL, 1, 4)՝ Տիգրանի տիրապետութունը տեւել է Ասորիքում 17 տարի Նիզին կաթմում է, որ Յուստինոսի տված XVII թիվը կարող է լինել վրիպակ (XVII թիւ. XIII-ի), տես Нусе, Очерк римской история и источниковедения, СПб. 1910, էջ 288: Ռեյնաքի կարծիքով՝ հայկական տիրապետութունը Յուստինոսի ցույց է տվել մինչև Տիգրանի վերջնական պարտութունը 66 թվին, տես Mithridate Eupator, էջ 312, ծան. 6:

³ Sks App., Mithr., 67:

⁴ Sks նույնը, 67. Համեմատե նաև Strabo, XII, 2, 9 (539):

ցրել էր Ծովփէին Մելիտենէն քաղաքը և ամբողջ այդ շրջանը¹։ Այս ենթադրութիւնը, որն ընդունելի են համարել նաև Խալաթ-յանցը² և ուրիշները, չէ կարող ճիշտ լինել, որովհետև Սալլուստիոսի և Տակիտոսի վկայութիւններից հայտնի է, որ 69 թվի Լուկուլլոսի արշավանքի ժամանակ՝ Եփրատ դետի արևմտակողմը և Մելիտենէն քաղաքը գտնվում էին ո՛չ թե Տիգրանի, այլ Կարպատովհիայի թագավորութեան սահմաններում³։

Բացի կապադովհիական քաղաքների բնակչութիւնից Տիգրանակերտ ու Հայաստան էին բերվել նաև Դաշտային Կիլիկիայի քաղաքների և, մասնավորապես, Ծովափնյա Սուրի քաղաքի բնակիչները⁴։

Տիգրան Բ-ի կռիւները Փյունիկիայում և, հատկապես, Պտղոմայիդ քաղաքի նվաճումը հիշատակված են Հովսեպոս Փլալիոսի մոտ։ Պտղոմայիդի նվաճումը տեղի էր ունեցել ո՛չ թե 74 թվին, ինչպես մատնացույց է արել Մոմդենը⁵, այլ Լուկուլլոսի Հայաստան արշավելուց առաջ՝ 70 թվին (մեր թվառ.)⁶։

Հովսեպոսի համապատասխան վկայութիւնը մեջ եմ բերում ամբողջութեամբ։

«Այդ ժամանակ լուր ստացվեց, — ասում է Հովսեպոսը, — որ Հայոց Տիգրան թագավորը 300.000 զորքով ներս է մտել Ասորիք և դալու է նաև Հրեաստան։ Տեղեկանալով այս մասին՝ սարապիահար եղան, բնականաբար, Հրեաստանի թագուհին և ժողովուրդը։ Նրանք ուղարկեցին Տիգրանի մոտ, որը սլաշարել էր Պտղոմայիդը, դեսպաններ բաղձաքանակ ու արժանաւայել ընծաներով։ Իսկ Սելենն թագուհին, որի անունն էր նաև Կլեոպատրա և որն իշխում էր Ասորիքում՝ դրդուում էր բնակիչներին, որ դիմադրեն Տիգրանին։ Դեսպանները եկան նրա մոտ և աղաչեցին, որ բարի ու ողորմած լինի դեպի իրենց թագուհին և ժողովուրդը։ Եւ այդ ժամանակվանից Տիգրանը հոգատար վերաբերմունք ունեցավ նրանց նկատմամբ և քաջալերեց նրանց ու հուսա-

¹ S^{tr} „Римская история“, III, Москва, 1887, էջ 39;

² S^{tr} Очерк истории Армении, Москва, 1910, էջ 160.

³ S^{tr} Sal., IV, frg., 69 և Tac., Annales, XV, 27;

⁴ Plut., Pomp. XXVIII, 4. համեմատե նաև Cas. Dio. XXXVI, 37;

⁵ „Римская история“, III, էջ 40;

⁶ Plut., Lucul., XXI, 2;

դրեց: Երբ Տիգրանն արդեն վերցրել էր Պատմայիդը՝ նրան հայտնեցին, որ Լուկուլլոսը հետապնդելով Միհրդատին՝ չէ կարողացել նրան բռնել և վերջինս փախել է Իբերիա: Նրան նմանապես ազդարարեցին, որ Լուկուլլոսը պաշարել է և ավերում է Հայաստանը: Երբ Տիգրանն այս իմացավ՝ վերադարձավ իր բուն երկիրը¹:

Ինչպես վկայում է նաև Ստրաբոնը, Ասորիքում և Փյունիկիայում տեղի ունեցած այս կռիվների ժամանակ Տիգրանը դերի էր վերցրել Սեյենս—Կրեոպատրա թագուհուն: Վերջինս բանտարկվեց Ջեզմայի դիմաց գտնվող Սելևկիա քաղաքում և դիխառվեց Տիգրանի հրամանով Լուկուլլոսի 69 թվի արշավանքից առաջ²:

Իր քսանհինգ տարվա թաղալորուծյան ընթացքում (95—70 մեր թվ. առ.) Տիգրան Բ-ը, ինչպես տեսնում ենք, կարողացել էր անչափ ընդարձակել իր երկիրը, որն այժմ տարածվում էր Կասպից ծովից և Կուր դեպից մինչև Միջերկրական ծովն ու Եգիպտոսի սահմանները և Մեծ Մեդիայից մինչև հոռմեական Լեոնային Կիլիկիան ու Կապպադովկիան: Թեև Հովսեպոսի վկայություներից երևում է, որ Տիգրանը Պաղեստինի վրա չէր հարձակվել, սակայն այդ երկիրը ևս, ըստ երևույթի, որոշ չափով ընդունել էր նրա դերիշխանությունը: Ուշագրավ է այս տեսակետից Ապպիանոսի հաղորդած տեղեկությունը³, որի համաձայն Տիգրանի դերիշխանությունը ենթարկված է եղել ամբողջ Ասորիքը մինչև Եգիպտոսի սահմանները:

Գրաված լինելով Դաշտային Կիլիկիան ու Կոմադենը՝ Տիգրանն արդեն ոտք էր դրել Փոքր Ասիա և հարևան էր դառել, ինչպես ասացինք, հռոմեական Լեոնային Կիլիկիային, Կապպադովկիան, որը հռոմայեցիների դաշնակիցն էր՝ չքաղաքված էր այժմ Պոնտոսի, Ծոփքի, Կոմադենի և Դաշտային Կիլիկիայի կողմերից ու դրեթե անպաշտպան էր ստրաատիկական աննպաստ իր դրություն պատճառով:

Տիգրանի նվաճումները Միջերկրական ծովի ափերին և, մանավանդ, հռոմի դաշնակից Կապպադովկիայի վերոհիշյալ ավերածությունը, վարկաբեկում էին, քնակաճարար, հռոմեական հանրապետության հեղինակությունն արևելյան երկիրներում:

¹ Տէս Հնախոսություն, XIII, 16, 4. համեմատե նաև Հրեական պատերազմ, I, 5, 3:

² Strabo, XVI, 2, 3 (749):

³ Տէս Տր., 48—49:

Սակայն չնայած դրան՝ Հոռմը չեզոքութիւն պահպանեց և չսալոսպանեց մինչև իսկ իր դաշնակից Կապսաղովկիային:

Հոռմի չեզոքութիւնը միանգամայն հասկանալի է, որովհետև Տիգրանի նվաճումները տեղի էին ունեցել կամ Միհրդատյան պատերազմների ժամանակ և կամ Սուլլայի արշակունիքի զինվորատուրայի ընթացքում, երբ Հոռմը թույլ էր ու անզոր ներքին երկպառակրութիւնների պատճառով: Ինքը Տիգրանը չուներ, իհարկե, որևէ պատճառ պատերազմելու հռոմայեցիների դեմ, քանի որ սրանք չէին միջամտում և չէին խանգարում Հայաստանի աշխարհակալ ընդարձակումը:

Ահա այս բարենպաստ պայմաններն էին պատճառը, որ 95—70 թվերին Հայաստանը հետզհետեւ կարողացավ դառնալ հզոր ու մեծ պետութիւն:

Տիգրան Բ-ի Թագավորության ժամանակ Հայկական լեռնաշխարհի քաղաքականապես միացած արմենական երկիրները, ինչպես տեսնում ենք, հասել էին իրենց քաղաքական հզորության ու փառքի դադարձակետին:

Սակայն Տիգրան Բ-ի իշխանության տակ գտնվող մեծ ու լայնարձակ աշխարհակալութիւնը, որը խայտաբղետ մի խառնուրդ էր ցեղերի ու լեզուների և տարբեր մշակույթների՝ չէ կարող, իհարկե, համարվել միահար կայուն ու ամուր մի պետութիւն: Տիգրանի դերիշխանության տակ միացել էին թե տոհմացեղային նահապետական շրջաններ, թե կիսաֆեոդալական երկիրներ և թե հելլենիստական քաղաքներ, որոնք ունեին իրենց հատուկ կազմակերպութիւնը:

Հայաստանի հարեան Թագավորութիւնները, որոնք ճանաչել էին Ֆթագավորների Թագավոր՝ Տիգրանի դերիշխանութիւնը, ըստ երևույթին, պարտավոր էին նրան աւել քան հարկ իսկ պատերազմի ժամանակ օգնելու էին նրան իրենց զորքով: Վասնալական այս Թագավորութիւնները, ինչպես և բուն Հայաստանի իշխանական ինքնավար երկիրները, պահպանում էին նախկին իրենց հատուկ կարգերը և իրենց ուրույն կազմակերպութիւնը:

Տիգրանի այս հայկական մեծ պետութիւն մեջ առաջնակարգ դեր էր կատարում, անտարակույս, կարլաճատեր հայ ազնվականութիւնը, որը նրա գլխավոր հենարանն էր ինչպես վերոհիշյալ հաղթական կռիւներում, նույնպես և պետական ու կառավարչական գործերում: Եւ իրավի, մենք տեսանք վերև, որ

Մծբինի վերակացությունը նա հանձնել էր իր Գուրաս եղբորը իսկ Անտիոքում կառավարիչ էր նշանակել Բազարատ հայ իշխանին:

Հենց Հայաստանի տիրող կալվածատիրական ու ղինվորական ազնվականության զորեղացմամբ և, ղլխավորապես, Հայաստանի քաղաքական ու տնտեսական անարգել ու առաջընթաց զարգացմամբ՝ քացատրվում են, հավանորեն, Տիգրան Բ-ի ղլխապրտույտ հաջողությունները և նրա աշխարհակալման ձգտումները:

«Տիգրան Մեծի հաջողությունները, — ինչպես միանշանապես ճիշտ մատնանշել է Գր. Պալաթյանցը, — պետք է վերագրել տնտեսական այն կուտակված մեծ ուժերին, որ հավաքվել էին Հայաստանում դարերի ընթացքում — պարսիկների խաղաղ տիրապետության շրջանում, Սելևկյանների ժամանակ և ալեկի ուչ»¹:

«Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին»² ողոսներեն իմ աշխատության մեջ մանրամասն նույնպես ցույց էր տրված, որ հայ ժողովրդի աճման ու տնտեսական զարգացման տեսակետից Հայաստանը խիստ աննպաստ պայմանների մեջ էր դնելում Պոմպեյոսի հաղթությունից հետո (66 թվ. մեր թվ. առաջ), երբ նա դառել էր բուՓեթ պետություն Արևմուտքի և Արևելքի մրցող մեծ պետությունների միջև: Մինչ այդ, Աքեմենյանների խաղաղ տիրապետության, ինչպես և Սելևկյանների ու Տիգրան Բ-ի նախորդների ժամանակ, Հայաստանում քաղաքական պայմանները միանգամայն բարեհաջող են եղել թե ժողովրդի աճման և թե երկրի տնտեսական զորեղացման համար:

Կարելի է, իմ կարծիքով, վստահորեն ենթադրել, որ հայ ժողովրդի թիվն ալեկի մեծ է եղել Արտաշեսյան թագավորության և Տիգրան Բ-ի ժամանակ, քան հետագա դարերում: Եվ, մասնավորապես, Ստրաբոնի վկայությունից ևս մենք գիտենք, որ նրա ժամանակ արմենները ո՛չ միայն դրաված են եղել ամբողջ Հայկական լեռնաշխարհը, այլ մեծ թիվ են կազմել նաև Ադիաբենում և Հյուսիսային Միջագետքում:

Հայաստանի բնակչության այս աճումը ևս, ինչպես և տնտեսական ու քաղաքական նրա խաղաղ զարգացումը նախորդ

¹ Տե՛ս Очерк истории Армении, Москва, 1910, էջ 161:

² «О торговле и городах Армении», էջ 50—53:

³ Տե՛ս Strabo, XVI, 1, 10 և 26 (745, 747):

դարերում՝ մեծապես նպաստել էք, անչուշտ, նրա աշխարհա-
կայական ընդարձակմանը Տիգրանի ժամանակ:

Նախորդ մեր աշխատություններից մեկում մենք, բացի
այդ, հավանական էինք համարել, որ արդեն Արտաշես Ա-ի ժա-
մանակաշրջանում Հին Հայաստանն ունեցել է Ֆեոդալական
կազմակերպությանը հատուկ սաղմերը և առանձին հիմքերը:
Պլինիոսի կարևոր մի վկայությունից հայտնի է, որ Հայաստանը
բաժանված էր նրա ժամանակ (23—79 մեր թվ. հ.) 120 շր-
ջանների, որ նա անվանում է ստրատեգիաներ, այսինքն՝ «զորա-
վարություններ»²: Մեծագույն մասն այս շրջանների, որոնք
գեոլոգիան ունեին, հավանորեն, արգեն Տիգրան Բ-ի ժամանակ՝
համարվելու են, ինչպես այդ մատնանշել է Ադոնցը³, առանձին
շրջաններ, որոնց մեջ, հավանորեն, տնտեսապես և քաղաքակա-
նապես գերակշռող դեր էր կատարում կալվածատեր ազնվակա-
նությունը:

Բացի Պլինիոսի վկայությունից ուշագրավ է նաև Պլուտար-
քոսի հաղորդած տեղեկությունը չորս Թազավորների մասին,
որոնք սպասարկում էին Տիգրանին:

«Շատ Թազավորներ, — ասում է Պլուտարքոսը, — սպասա-
վորում են Տիգրանին, բայց նրանցից չորսը միշտ նրա հետ
էին լինում՝ որպես ուղեկիցներ և թիկնապահներ. և երբ
նա գնում էր ձրով՝ նրանք կարճ խիտոններ հագած՝ վազում
էին առջևից. իսկ երբ նստած էր լինում և պաշտոնական
դորձերով էր ղրաղվում՝ նրանք կանգնած էին լինում նրա
չուրջը՝ իրար ձեռքից բռնած»⁴:

Հիմնվելով Պլուտարքոսի այս հաղորդագրության վրա, որը
չափազանցված մի ծաղրանկար է արևելյան հատուկ հանդիսա-
կարգերի՝ Մարկվարաը կարծում է⁵, որ վերոհիշյալ չորս Թա-
զավորները, հավանորեն, Հայաստանի չորս բղեչիներն են,
որոնց ծագումը հավանական է ենթադրել Տիգրան Բ-ի ժամա-
նակ: Ադոնցը նմանապես հավանական է համարում, որ Ֆեոդա-
լական Հայաստանի չորս բղեչիությունները, որոնց մասին ման-
րամասն տեղեկություններ ունեն Ագաթանգեղոսը, Փավստոսը

1 Տես Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 248—251:

2 Plin., Nat. Hist. VI, 10, 2:

3 Армения в эпоху Юстиниана, СПб. 1908, էջ 392:

4 Plut., Lucullus, XXI, 6:

5 Eranschahr, 171—173:

և Մովսես Խորենացին¹, նախկին փոքր ու ինքնուրույն թագավորությունների միապետներ են, որոնք Տիգրան Բ-ի ժամանակ ճանաչել էին հայ թագավորների քաղաքական իշխանությունը²։

Ինչպես հայտնի է, հայկական Փետդալիզմի ուսումնասիրությունը վերաբերող բոլոր երկերում ենթադրվել է, որ Հին Հայաստանում տոհմային կարգերի կազմավորմամբ, հետ դուգլենթաց աստիճանաբար զարգացել էր սոցիալական շերտավորումը, զարգացել էին հետզհետե Փետդալական հարաբերությունները և կազմակերպվել էին Հայաստանի նախարարությունները։

Սակայն վերջին ժամանակներս լույս տեսան ուսերեն լեզվով գրված դասադրքեր, որոնց մեջ մասնաճյուղ է, որ Տիգրան Բ-ի պետությունն ունեցել է ստրկատիրական հասարակակարգի հիմնական հատկանիշները և որ այստեղ ևս, ինչպես և Հռոմում ու Հունաստանում, արտադրության հիմքը կազմել է ստրկական աշխատանքը։ Այս նոր տեսությունը մանրամասն քննված է իմ վերջին հոդվածներից մեկում «Հասարակակարգի խնդիրը նախարարականության Հայաստանում», որը լույս է տեսնելու Մոսկվայում։

Ընդունելով որ Տիգրան Բ-ի ժամանակ Հայաստանի տնտեսությունը խառնված է եղել, գլխավորապես, ստրկական աշխատանքի շահագործման վրա՝ նոր կոնցեպցիայի կողմնակիցները մասնացույց են անում, որ Հայաստանում այս ժամանակաշրջանում գոյություն են ունեցել բազմաթիվ ազգաբանիքներ—լատիֆոններ, ստրկատիրական դաստակերտ կոչվող կալվածներ, ստրկատիրական տաճարական տնտեսություններ և հելլենիստական տիպի ստրկատիրական քաղաքներ։ Այս պնդումները, ինչպես ցույց է տրված վերոհիշյալ իմ հոդվածում, հիմնված են ոչ թե սկզբնաղբյուրների հաստատուն տեղեկությունների, այլ «ազարակ», «դաստակերտ» և «հիերոդոթ» (ἱερόδοτος) տեքմիկների սխալ մեկնաբանություն վրա և կամ ընդհանուր չհիմնավորված նկատառումների վրա, որոնք չեն կարող համարվել համոզիչ ու ընդունելի։ Ինքն ըստ ինքյան հասկանալի է, որ Արտաշեսյան դարաշրջանի հայ թագավորները, ինչպես և խոշոր հայ կալվածատերերը, պետք է ունեցած լինեին և՛ ազգաբանիք և՛ դաստակերտ-կալվածներ, սակայն այդ տնտեսությունները, ինչպես դժվար չէ կուհել սկզբնաղբյուրների ցու-

¹ Տես իմ աշխատությունը «Փետդալիզմը Հին Հայաստանում», էջ 34—38։

² Տես Армения в эпоху Юстиниана, էջ 283 և 410—411։

ցումներից, դեռևս չէին ներգրավված լայն առևտրի մեջ: Նրանց մեջ արտադրված գյուղատնտեսական մթերքները ո՛չ միայն այս, այլև Արշակունյաց շրջանում՝ սպառվում էին, գլխավորապես, հենց իրենց կալվածների մեջ: Այդ մթերքները չէին վաճառվում մասսայորեն արտաքին շուկաներում և նրանցով առանձնապես չէին կարող չահագրգռված լինել հեղինակապետական պետությունները կամ Հոռմը Հայաստանի հեռավորության և տրանսպորտի մեծ դժվարությունների պատճառով: Ուրեմն, այս նկատառումով ևս ազարակների և դաստակերտների նույնացումը լատիֆունդիաների հետ բոլորովին անհավաստալի է, որովհետև ստրկական աշխատանքի վրա հիմնված լատիֆունդիական տիպի տնտեսությունները, ինչպես հայտնի է, ունեին գյուղատնտեսական խոշոր ձեռնարկությունների բնույթ և աշխատում էին լայն շուկայի համար:

Ստրկությունը, որը համատարած ու ընդհանուր մի երեվույթ էր հին աշխարհում՝ գոյություն ունեւ, իհարկե, և Տիգրանյան Հայաստանում: Սակայն ստրկները չեն եղել այստեղ արտադրության հիմքը: Հայաստանում, ինչպես և ընդհանրապես Արևելքում՝ զարգացած է եղել, գլխավորապես, տնային ստորկությունը: Իսկ արտադրության մեջ գերակշռող դեր էին կատարում ո՛չ թե լատիֆունդիական խոշոր կալվածատիրությունը և մասսայական ստրկությունը, այլ, գլխավորապես, համայնական հողատիրությունը և գյուղացիությունը, որը որոշ չափով կարող էր ճորտացված լինել կալվածատեր իշխանավորների գերեղացման պատճառով:

Ինչպես շատ ճիշտ գիտել է ակադ. Գրեկովը¹, նախարչակունյան Հայաստանի հասարակային զարգացումը, հավանորեն, որոշ նմանություն է ունեցել համապատասխան դարգացման հետ միջնադարյան Ժողովուրդների՝ սկյութների, սլավոնների և գերմանացիների:

Որ այս ենթադրությունն ավելի քան հավանական է՝ այդ, ինչպես մանրամասն մատնացույց է արված իմ վերահիշյալ հոգվածում՝ երևում է հունա-հռոմեական հեղինակների ուշադրություցումներից: Տիգրանյան Հայաստանի հասարակությունը, ինչպես վկայում են այդ հեղինակները՝ բարդացած էր երկու հիմնական սոցիալական շերտից՝ հասարակ Ժողովրդից (plebs) և

¹ С. В. Учительская газета, 29 октября 1940 г.

ազնվական անվազանուց, որը Տակիտոսի մոտ անվանված է nobiles, proceres, proceres gentium, primores և primores gentium: Այս ժամանակաշրջանում նախկին տոհմապետները և ցեղապետները, ինչպես ենթադրում է Ալոնցը¹, դառել էին արդեն իշխանավորներ: Տակիտոսի մոտ առանձնապես հիշատակված են Հայաստանի մեգիստանները (megistanes)²՝ մեծամեծները, որոնք ունեցել են խոշոր կալվածներ և ապրել են սմրոցներում, որ գտնվել են ամենուրեք ինչպես դաշտային տեղերում, նույնպես և բարձունքների վրա: Խաղաղ ժամանակ Հայկական ավազանին, ինչպես և ազնվականությունը սլավոնների ու հին գերմանացիների մոտ, որսի էր դնում կամ անցկացնում էր ժամանակը՝ անձնատուր լինելով գինարբուքի և կերուխումի:

Հրենա-հոռմեական աղբյուրներում, ինչպես տեսնում ենք, միջանկյալ կերպով պատահում են այնպիսի միայն վկայութուններ, որոնք ընդգծում են ո՛չ թե Տիգրանյան Հայաստանի ստրկատիրական հասարակարգը լինելը, այլ նրա ներքին կյանքի պինդ կոզմերը, որ առանձնահատուկ են եղել միջնադարյան բարբարոսական կոչվող պետութուններին:

Աղբյուրների ուշադիր քննությունից, ինձ թվում է, դժվար չէ հետևել, որ Քսենոփոնյան շրջանի տոհմային հասարակությունից զարգացել էր Հայաստանում, ինչպես միանդամային ճիշտ եզրակացրել է Ալոնցը², ո՛չ թե ստրկատիրական, այլ Ֆետդալական կամ ճորտական հասարակարգը:

Տիգրանյան Հայաստանում, հավանորեն, կազմավորվել էին արդեն Ֆետդալական նախարարական կազմակերպությանը հատուկ սաղմերը և առանձին հիմքերը, ուստի և փոխանցման այս շրջանը ես հնարավոր էի համարել իմ աշխատություններում բնորոշել իբրև նախնական Ֆետդալիզմի շրջան³:

¹ Տե՛ս Армения в эпоху Юстиниана, էջ 435:

² Տե՛ս Армения в эпоху Юстиниана, էջ 371—427:

³ Տե՛ս Ֆետդալիզմը Հին Հայաստանում, էջ 304, Տիգրան Բ. և Հռոմը, էջ 571:

ԳԼՈՒԽ ՑԱՄՆԵՐԿԱՌԻՄՈՐԴ

ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՑ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆՈՒՄԸ

1. Տիգրան Բ-ի հելլենիզմի ծառածման հասուկ ֆաղափականությունը:—
2. Հելլենական մեծությունը կապադոկիայում և Պոնոսում:—3. Հելլենիզմի և
իբանիզմի կոլոսուրական մերձեցումը:—4. Վերանորոգչական շարժումը Ծոփ-
բում:—5. Հելլենիստական ֆաղափանքի կոլոսուրայի ծառածումը Հայաստանում
Տիգրան Բ-ի ժամանակ և բռնի գաղթեցումը հելլենիստական ֆաղափանքի բնակ-
չության:—6 Տիգրանակերթ ֆաղափ հիմնումը.—սառ թիպը և առևտրական-ար-
դյունագործական բնույթը.—Տիգրանակերթի տեղադրության խնդիրը.—նրա բնակ
չությունը.—Տիգրանակերթը օրպես կենտրոն հելլենիստական գիտության, արվեստի
ու գրականության:—7. Հելլենիզմի ազդեցությունը Հայաստանում.—կրոնների
մերձեցումը.—նոր հոսանքն ընդդեմ տիրող իրանիզմի.—Տիգրանի վերանորոգչա-
կան մեծ դերը:—8. Մեծ Տիգրանի պատմությունը ժողովրդական ավանդության
և եռերենացու Պատմության մեջ:

*Աղբյուրների թուղթիկ ու պատահական տեղեկությունները,
դժբախտաբար, հնարավորություն չեն տալիս մեզ հանգամանո-
րեն քննություն առնելու Հայաստանի ներքին կյանքը նախալքա-
կունյան այս շրջանում: Մեզ հայտնի է միայն, որ Տիգրան Բ-ի
վերանորոգչական գլխավոր գործերն են եղել Տիգրանակերտի
հիմնումը և հելլենիզմի ու հելլենիստական քաղաքային կուլտու-
րայի տարածման ու զարգացման նրա հատուկ քաղաքականու-
թյունը: Տիգրան Բ-ը հասկացել էր, լուր երևույթին, որ նահապե-
տական, հայ կենցաղի տնտեսական ու կուլտուրական առաջադի-
մությունը կարող էր մեծապես նպաստել հելլենիստական տիպի
քաղաքը, որը կենտրոն էր արհեստների, արդյունաբերության
ու առևտրի զարգացման:*

*Պետք է տեսլ, որ հելլենասիրությունը այդ ժամանակ
ընդհանուր երևույթ էր նաև Հայաստանի հարևան երկիրներում:
Դեռևս երկրորդ դարում Կապադոկիայի Արիարաթ և Թա-*

դավորը (163—130 մեր թվ. առաջ), որը երկար ժամանակ ճանապարհորդել էր Խոալիայում և Հունաստանում՝ հրավիրել էր Կապադոկիա հույն արվեստագետներ ու գրողներ և իր երկրի Մաթաթ ու Տիանա ռելիգիոզ կենտրոնավայրերը դարձրել էր հելլենիստական տիպի ինքնավար քաղաքներ, որոնցից Մաթաթն ընդունել էր ու գործադրում էր, ինչպես վկայում է Ստրաբոնը¹, Խարոնդասի օրենքները:

Հելլենական մշակույթը և հելլենիստական քաղաքների հատուկ վարչակարգը ավելի մեծ չափերով տարածվում էին Պոնտոսում, դլիսավորապես, Միհրդատ Նվապատորի ժամանակ, որին եվրոպական պատմագետները հնարավոր են համարել համեմատել Պետրոս Մեծի հետ:

Այստեղ Պոնտոսում արդեն հնագույն ժամանակներում հելլենական քաղաքակրթության ու լեզվի աարածման գլխավոր նեցուկներն էին հունական ծովափնյա քաղաքները՝ Ամաստրիսը, Սինուպը, Ամիսոսը, Տրապիզոնը և հունական մյուս ավելի փոքր դադուկները: Միհրդատ Նվապատորի ժամանակ այս քաղաքները խիստ մեծացել էին և դառել միջադեպյին մեծ առևտրի նավահանգստային հարուստ կենտրոններ:

Հռոմեական նվաճումից առաջ, ասում է Ռեյնալդը², նրանք ոչ միայն իրենք էին հասել բարեկեցության ու կուլտուրական դարգացման բարձր աստիճանի, այլև, աջակցելով Պոնտոսի և Մեծ Կապադոկիայի տնտեսական առաջադիմությանը՝ սկսել էին հելլենիզմի կենդանարար աղդեցությունը տարածել և այդ երկիրներում:

Շնորհիվ Միհրդատի առատաձեռն ու հոգատար աջակցության պոնտական բոլոր քաղաքներում կառուցվել էին հոյակապ ու դեղեցիկ Նոր շենքեր³, մինչև իսկ ամբողջ Թաղամասեր, և բուն թափով դարդանում էին ամեն տեղ հելլենական գեղարվեստն ու գիտությունը, որոնք վայելում էին Թաղավորի հատուկ հոգատարությունը: Միհրդատ Նվապատորը պարզապես հետզհետե կերպարանափոխում էր իր երկիրը և տարածում ամենուրեք հունական քաղաքակրթությունը: Նրա ժամանակ ո՛չ միայն հին Ամասիա մայրաքաղաքը, այլ նույնիսկ որոշ ավանադյուղեր դառել էին արդեն հելլենիստական քաղաքներ: Հելլենական մշակույթի տարածման ու գորեղացման պարզ ցուցանիշներ են պոն-

¹ Strabo, XII, 2, 9 (539):

² Mithridate Eupator, էջ 246:

տական կոմանա, կաբիրա, Գագիուրա, Պիմուխա և Տալավրա գյուղաքաղաքները, որոնք պղնձադրամներ էին կտրում հունարեն լեզվով և առասպելական հումական պատկերներով:

Ինչպես և Աղեքսանդր Մեծը, ըստ երևույթին, Միհրդատը ևս իրեն նպատակ էր դրել հաշտեցնել իրար հետ և միաձուլել արևելյան իրանական մշակույթը, որի ազդեցությունը մեծ չափերով ենթարկվել էր Պոնտոսը, արևմտյան հելլենական մշակույթի հետ, և սենել էր արդեն վերակառուցել իր երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքն այդ նոր հիմքերի վրա:

Թե որքան զորեղ է եղել իրանիզմի և հելլենիզմի կուլտուրական մերձեցումը՝ այդ ցույց են տալիս, նախ և առաջ, այդ երկու մշակույթների կրոնական հաշտեցումը և պոնտական տեղական աստվածների նույնացումը Արտեմիդեի և Զևս Ստրաստիոսի հետ: Այդ մերձեցման մի սլարդ ապացույց է նաև այն, որ կոմանայում, որը պոնտական ամենահռչակավոր սրբատեղերից մեկն էր՝ Միհրդատի ժամանակ քրմապետ էր նշանակվել Դորիլասը, որը հույն էր:

Որ զուգընթաց կուլտուրական ու կրոնական այս մերձեցման տեղի էր ունենում նաև ցեղային դանադան խմբակցությունների մերձեցումը հույների հետ՝ այդ ևս պարզ երևում է պոնտական Ամասիայում ծնված խոշորադույն աշխարհագրապետ Ստրաբոնի կենսագրությունից (մոտավ. 64 մեր թվ. առ. — 19 մեր թվ. հ.): Սա իր նախնիքների շարքում բացի հույներից հիշում է պարսիկ Մոաիերներսին և պարիադոնացի Տիբրուսին:

Միհրդատ Եվպատորի թագավորության մեջ, ինչպես տեսնում ենք, իրադրվում էր Աղեքսանդր Մակեդոնացու սկսած այն մեծ դործը, որի նպատակն էր ըստ Դիոդորոսի՝ Ասիայի ու Եվրոպայի «միարան համերաշխությունը և լուսմակցական բարեկամությունը»:

Հելլենիստական քաղաքային կուլտուրայի զարգացման և իր երկրի տնտեսական բարեկարգման ու բարգավաճման այդ նույն քաղաքականությունը վարել է նաև Տիգրան Բ-ը Մեծ Հայաստանում:

Վերանորոգչական այս շարժումը, ինչպես մանրամասն մատնացույց էի արել «Հին Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ուսեսերն իմ աշխատության մեջ³ սկսվել էր դեռևս Տիգ-

¹ S^{Str.} Str., XI, 2, 18 (499) և XII, 3, 33 (557):

² S^{Str.} Diod., XVIII, 4, 4:

³ S^{Str.} «О торговле и городах Армении», էջ 25—31:

րանից առաջ, գլխավորապես, Մոսկով, որն անմիջական հարե-
վանն էր Սելեկյանների թաղավորության:

Մոսկովի դարգացմանը մեծ¹ չափով զարկ էր տվել տնտեսական
ու կուլտուրական մեծ հեղաշրջումն Ասորիքում և Միջագետքում:
Եվ Մոսկովն էին հիմնվել, ինչպես հայտնի է, Հին Հայաստանի
հելլենիստական տիպի առաջին քաղաքները՝ Արշամաշատը և
Կարկաթիոկերտը:

Հելլենիզմի աղղկացությունը Մոսկովի և Մեղիայի կողմերից ո՞-
րոշ չափով թափանցած պիտի լիներ, բնականաբար, նաև Մեծ
Հայքի հյուսիսային շրջանները: Այդ աղղկացության պարզ ապա-
ցույց են Արմավիրում դտնված Սելեկյան շրջանի հունարեն ար-
ձանագրությունները: Այստեղ ևս Արարատյան դաշտում Արտա-
շես Ա-ը հիմնել էր, ինչպես տեսանք, Արտաշատ քաղաքը:

Սահայն ալեկի լայն չափերով և ալեկի վճռական կերպով
հելլենիզմի ու հելլենիստական քաղաքային կուլտուրայի տարա-
ծումը անդի ունեցավ Մեծ Հայաստանում Տիգրան Բ-ի ժամա-
նակ:

Վերանորոգչական այս զործը ալեկի դժվար էր, իհարկե,
իրականացնել Հայաստանում, քան Պոնտոսում, որն ուներ արդեն
հելլենական բաղմամբով քաղաքներ: Քաղաքների ու քաղաքային
կուլտուրայի դարգացման համար անհրաժեշտ էր կուլտուրական
հարևան երկիրներից Հայաստան փոխադրել ամբողջ քաղաքներ:
Իսկ այդ հնարավոր էր միմիայն բուն միջոցներով: Ուստի և
Տիգրանը հարկադրված եղավ դադարեցնել դեռից Հայաստան
առևտրականներ, արհեստավորներ և այլ որակյալ աշխատավոր
օտարականներ, որոնք հիմք էին դնելու նրա երկրում հելլենիս-
տական քաղաքային կենցաղի և նեցուկ էին ծառայելու Հայաս-
տանի տնտեսական ու կուլտուրական դարգացման:

Ինչպես վերև տեսանք, հատկապես այդ նպատակով նա բունի
կերպով բնակեցրել էր Հայաստանում Կապադոկիայի, Կիլիկիա-
յի և, հավանորեն, նաև Ասորիքի, Կորդուքի և Ալիարենի² հեյ-
լենիստական այն քաղաքների բնակչուկությունը, որ նա պրավել էր
իր արշավանքների ժամանակ:

Բացի վերև մատնանշված տեղեկություններից՝ այդ դադար-
կանություն մասին կարևոր են ու հետաքրքիր նաև Ստրաբոնի
հետևյալ վկայությունները:

¹ Strab. Geogr., Lucul., XXVI, 2:

1. Ստրաբոն, XI, 14, 15 (532)՝

«Երբ Տիգրանը զորեղացավ մինչ այդ ատիճան՝ նա հիմնեց մի քաղաք... որն անվանեց Տիգրանակերտ, և բերեց այդտեղ իր ավերած 12 հելլենական քաղաքների բնակչութունը»:

2. Նույնը, XII, 2, 9 (539)՝

«Վառ վարովեց Տիգրան Արմենը մաժաքցիների հետ, երբ նա արշավել էր Կապադոկիայ, Նա ամբողջ բնակչութունը քչեց տարավ Միջագետք և նրանց բնակեցրեց մեծ մասամբ Տիգրանակերտում: Սակայն հետագայում, Տիգրանակերտի նվաճումից հետո, ով որ կարող էր՝ վերադարձավ հայրենիք»:

Նույն գաղթականություն մասին, որը բերված է եղել ո՛չ միայն Տիգրանակերտ, այլև Արտաշատ և ուրիշ կենտրոնավայրեր՝ ունեն ուշագրավ վկայություններ նաև փավստոսը և Մովսես Խորենացին¹, որոնց հաղորդած տեղեկությունները մեջ են բերված և քննված են իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության մեջ²:

Տիգրան Բ-ի աշխարհակալական պետության քաղաքական ու կուլտուրական կենտրոնն էր լինելու նրա հիմնած Տիգրանակերտ քաղաքը:

Ո՛չ Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքը, ո՛չ էյ Սեբեկյանների Անտիոք քաղաքը, որոնք գտնվում էին նրա մեծ պետության ծայրամասերում, չէին կարող ծառայել այդ նպատակին: Բացի այդ, ընտրելով Անտիոքն իբրև աթոռանիսա կենտրոն՝ նա կորցնե՞ր իր կապը Հայաստանի հետ, որը գլխավոր նեցուկն էր ու հիմքը նրա ռազմական աջողությունների:

Տիգրանակերտ քաղաքի մասին բավականաչափ տեղեկություններ տալիս են հռոմեական, ու հունական մատենագիրները, որոնք նկարագրել են լուկուլլոսի արշավանքը Հայաստան և Տիգրանակերտի պաշարումն ու առումը:

Համաձայն Ապոլիանոսի վկայությամբ՝³ Տիգրանակերտ քաղաքը շրջապատված էր 50 կանգուն բարձրությամբ պարիսպ

¹ ՏԵՍ Փապսոս, IV, գլ. ԴԴ և ԴԵ, Խորենացի, II, գլ. ԺԶ, ԺԹ, ԽԹ, ԿԵ, III, գլ. ԼԾ:

² ՏԵՍ էջ 216—219:

³ ՏԵՍ App., Mithr., 84:

ներով, որոնք այնքան լայն էին, որ նրանց մեջ շինել էին ձիերի համար ախոռներ և պահեստանոցներ:

Քաղաքի ներսում գտնվում էր ամուր ու անմատչելի միջնաբերդը: Իսկ պարիսպներից դուրս Տիգրանը շինել էր տվել իր փառահեղ պալատը, որի շուրջը գտնվում էին պարտեզներ, դրոսարաններ, որսատեղեր և ձկնավազաններ: Բացի այդ, այս տեղերի մոտ կառուցել էին նաև ամուր ամրոց:

Բռնի կերպով Տիգրանակերտ էին գաղթեցրել ոչ միայն



Ֆարկին—Տիգրանակերտ փաղաք

վերոհիշյալ հելլենիստական քաղաքների բնակիչներին, այլև հայ ազնվականներին ու մեծամեծներին, որոնց գույքը ընդդիմության դեպքում ենթարկում էին բռնազրավման: Պլուտարքոսի վկայությամբ¹ թե այս աղնավանդությունը և թե քաղաքի հասարակ ժողովուրդն աշխատում էին հաճոյանալ թագավորին և աջակցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման:

Մոմղենը² և հայազետ բանասերներից շատերը, որոնք օգտւել են նրա պատմությունից, հին Տիգրանակերտը համեմատել

¹ *See* Plut., Lucul., XXVI, 3:

² *See* „Римская история“, III, Москва, 1885, էջ 41:

են Նինուեի և Բաբելոնի հետ: Լեման-Հաուստը նույնպես կարծում է, որ Տիգրանի հիմնած այս քաղաքն ըստ իր տիպարի ու հասարակազմի նման է եղել ասորեստանյան քաղաքներին¹: Այս դուռադուռը, ինչպես ցույց ենք տվել «Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ուսերեն մեր աշխատության մեջ², ճիշտ չէ: Բաբելոնը և Նինուեն ո՛չ ըստ իրենց տիպի և ո՛չ էլ ըստ իրենց հատակազմի չեն կարող, իհարկե, նման ու համապատասխան համարվել այն քաղաքներին, որոնք հիմնվում էին հելլենիստական պետություններում:

Ինչպես հայտնի է մատենագրական աղբյուրների նկարագրություններից՝ Բաբելոնում և Նինուեում անծայրածիր տափածոթյան վրա և առանձին թաղամասերի միջև սիոված էին վարե-



Հյուսիսսյիև պարսպի ավերակները

լահողեր, մարգագետիններ, այգիներ և մրգատու անտառակներ: Այդ քաղաքների բնակիչների դիխավոր պարապմունքն էր ո՛չ այնքան առևտուրը և արհեստները, որքան դյուղական տնտեսությունը: «Նինուէ,— վկայում է Հովնան մարգարեն,— էր քաղաք մեծ Աստուծոյ՝ իբրև դնացս երից առուրցս ճանապարհի» (Գ, 2): Իսկ Բաբելոնի շրջապատը հավասար էր համաճայն Հերոդոտոսի վկայության³ 480 ստադիոնի (=մոտ 85 կիլոմ.):

Պարզ է, ուրեմն, որ Տիգրանակերպը, որը 69 թվին շրջապատել ու պաշարել էին Լուկուլլոսի համեմատաբար փոքրաթիվ

¹ SEu Armenien einst und jetzt, Berlin, 1910, էջ 396—399:

² SEu „О торговле и городах Армении“, էջ 56:

³ Herod., I, 178:

չորքերը, չէ կարող բաղդաստիւն ու նույնացիւ վերոնիշյալ քաղաքների հետ, այլ նա ըստ իր հատակագծի և առևտրական արդյունադործական ընույթի նման ու համապատասխան կաթող էր լինել հելլենիստական տիպի քաղաքներին:

Տիգրանակերտի տեղագրության մասին պատմագիտական երկերում հայտնված են հակասական կարծիքներ: Նույն անհաշտելի տարաձայնությունները հասուկ են նաև մատենագրական հին աղբյուրներին¹: Այս խնդիրը, որ համարվում էր վիճելի, այժմ կարելի է համարել վերջնականապես լուծված: Հին Տիգրանակերտը գտնվել է, ինչպես մանրամասն պարզել են գերմանական գիտնականներ Լեման-Հաուպտը և Բելլը, Տիգրիս գետի հյուսիսակողմում և այժմյան Փարկին քաղաքի տեղում²: Եվ հետաքրքիր է, որ նույն այս կարծիքը նրանցից առաջ հայտնել էր նաև գերմանական Ֆելդմարշալ Մոլաքեն, ըստ երևույթին, որոշ առաջնագիտական նկատառումներով³:

Որ հին Տիգրանակերտի տեղը եղած պիտի լիներ, իրոք, այժմյան Փարկինում՝ այդ հաստատում են նաև իմ նոր դիստղությունները Պետլնգերյան քարտեզի կայսրանների տեղագրության մասին, որոնք գտնվում էին Տիգրանակերտի հյուսիսակողմում: Ինչպես մատնանշված է «Հայաստանի գլխավոր ճանապարհները» իմ աշխատության մեջ⁴, հռոմեական քարտեզի Cyldiza կոչարանը այժմյան Կիլիկիոն է, որը գտնվում էր Տիգրանակերտից Արառյառ տանող ճանապարհագծում և ճիշտ և ճիշտ 50 հռոմեական մղոն կամ մոտ 75 կիլոմետր հեռավորության վրա Փարկին—Տիգրանակերտից, ինչպես այդ ցույց է տրված Պետլնգերյան քարտեզում:

Տիգրանակերտ քաղաքի համար տեղի այդ ընտրությունը կարելի է համարել աջող ու նպատակահարմար ո՛չ միայն քաղաքական, այլ նաև ստրատեգիական ու տնտեսական տեսանկյուններից: Եվ, իրավի, այժմյան Փարկինը ընկնում է Տիգրանի հիմնած աշխարհակալության ճիշտ մեջտեղում և, գտնվելով Տափ-

¹ Սկզբնաղբյուրների տարաձայնությունները մանրամասն մատնանշված են իմ «Տիգրան Բ-ը և Հոռմը» աշխատության մեջ, էջ 64—66:

² Տես Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, էջ 381—429 և 501—523:

³ Տես Molke H., Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei, 1836—1839, Berlin, էջ 287:

⁴ «Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 90—92:

լուսյան լեռների հարավային ստորոտներում՝ բավականաչափ
սլաշտպանված է և պատռված : Նույն առևտրական հաղորդակ-
ցությունների տեսակետից Տիգրանակերտի տեղադրությունը
խիստ հարմար էր, որովհետև նա գտնվում էր Արեւմտյան



Ֆորկին—առեկյաց պարիսպի ավերակները

Պարսկաստանի արքունական մեծ ճանապարհի մոտ և զանազան
ուղղություններով կապված էր առևտրական խոշոր կենտրոննե-
րի հետ :

Նորավույն մի քանի աշխատություններում մատնանշվում է,
որ վերոհիշյալ հեյլենիստական քաղաքների բնակիչները, որոնց
մեծագույն մասը, ինչպես տեսանք, Տիգրան Բ-ը բռնի կերպով

դադթեցրել էր Տիգրանակերտ՝ օգտագործվել էին այստեղ իբրև արքունի ստրուկներ¹ :

Այդ պնդումը, ինչպես ցույց է տրված իմ «Հասարակակարգի ինդիլը նախարչակունյան Հայաստանում» հոդվածում՝ հակառակ է այդ դադթականութանը վերաբերող անդեկություններին, որ հաղորդում են մեզ հունա-հռոմեական մատենադիրները : Հայկական աղբյուրներից ես մեզ հայտնի է, որ քաղաքներում տեղավորված այս դադթականները, որոնց մեծադույն մասը հրեաներ և ասորիներ էին՝ մեծ դեր էին կատարում հին Հայաստանում՝ որպես առևտրականներ ու որակյալ արհեստավորներ : Եվ միանգամայն պարզ է, որ սրանք հաստատվել էին Հայաստանի քաղաքներում ո՛չ իբրև արքունի ստրուկներ, այլ իբրև քաղաքացիներ, որոնք, հավանորեն, այստեղ ևս, ինչպես և Պոնտոսում, կապվադոմկիայում ու Պարթևական թագավորության մեջ՝ ստացել էին հատուկ իրավունքներ ու արտոնություններ :

Նոր հիմնած Տիգրանակերտ քաղաքը, ըստ երևույթին, կենտրոն էր դառնալու ո՛չ միայն միջաղգային առևտրի, արհեստների ու արդյունագործության, այլև հելլենիստական գիաություն, արվեստի ու գրականության : Հայաստան էր հրավիրված, ինչպես վկայում է Պլուտարքոսը², Աթենքից աքսորված նշանավոր հոետոր Ամիիկրատիսը, որը արհամարհանքով մերժել էր Ալեկյանների հրավերը և ապրում էր Տիգրանի արքունիքում :

Մետրոդորոս Ակապացին³, որը հայտնի դրող էր և փիլիսոփա և որին Պլինիոսն անվանում է ատոդ հռոմայեցիների (misoromaeus)⁴, քաղաքական ականավոր դուրծիչ էր նախ Պոնտոսում և ապա Հայաստանում : Մետրոդորոսը, ինչպես հայանի է, գրած է եղել Տիգրան Բ-ի ընդարձակ պատմությունը, որից, դժբախտաբար, որևէ հետք չէ մնացել : Տիգրանակերտում, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը⁵, կառուցված է եղել հատուկ թատրոն, որի համար զանազան տեղերից հրավիրված են եղել հույն դերասաններ, Պլուտարքոսի ուշադրավ մի վկայությունից


¹ Համեմատե՛ խ. Սամվելյան, Ստրուկությունը Հին Հայաստանում, Տեղեկագիր Պատմության և Գրականության Ինստիտուտի, Գիթրբ II, Երևան, 1937, էջ 95 :

² *Plut.*, *Lucul.*, XXII, 7 :

³ *See Plut.*, *Lucul.*, XXII, 3—6. *Strabo*, XIII, 1, 55 (609) :

⁴ *Plin.*, *Nat. Hist.*, XXXIV, 16, 2 :

⁵ *Plut.*, *Lucul.*, XXIX, 4 :



ԱՐՈՒԿՈՒՆԻ հայ թագավորի արձանագրությունը Ֆարկինի
հյուսիսային պարիսպի վրա

հայտնի է, բացի այդ, որ Տիգրանի որդին՝ Արտաշատը դրած է եղել հունարեն լեզվով ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի քանիսը ծանոթ են եղել հռոմայեցիներին մինչև իսկ Պուտարքոսի ժամանակ:

Հասուի ուշադրության արժանի է նաև այն, որ Հայաստանում ևս, ինչպես և Պոնտոսում ու հելլենիստական այլ երկիրներում, հելլենիզմի աղղեցությունք տեղի էր ունեցել կրոնների մեծացում և հայ հեթանոսական աստվածները միաձուլվել էին հունականների հետ: Արտաշատը համապատասխան էր համարվել Զևսին, Միհրը՝ Հեփեստոսին, Անահիտը՝ Արտեմիդեին, Նանան՝ Աթենասին, Աստղիկը՝ Ափրոդիտեին, Տիրը՝ Ապոլոնին և Վահագնը՝ Հերակլեսին: Կրոնական այս աղղեցությունն այնքան զորեղ էր, որ Տիգրան Բ-ի ժամանակ, ինչպես վերև տեսանք, հայկական մեհյաններում էին զետեղել Հունաստանից և Փոքր Ասիայից բերված հունական աստվածների արձանները:

Բոլոր այս փաստական տեղեկություններից, որ վերաբերում են Տիգրան Բ-ի վերանորոգչական դործունեությանը՝ կարելի է հետևել, որ ո՛չ միայն Կապադոկիայում և Պոնտոսում, այլև սրանց հարևան Հայաստանում հալադիր հոսանք էր սկսվել ընդդեմ տիրող իրանիզմի և հիմք էր դրվել հին կենցաղի հելլենականացման:

Նույն այս փաստերը ցույց են տալիս, որ դժվար է համաձայնել Մոմզենի հետ, որը ինչպես հայ հոմեական, նույնպես և Միհրդատյան կռիվները, բնորոշում է իբրև հետադիմական մի շարժում արևմտյան ժողովուրդների դեմ: Առավել ևս սխալ է, անշուշա, նրա պնդումը, որ իբր թե Միհրդատը եղել է ասիական այդ ուսուցիչայի առաջնորդն ընդդեմ հելլենիզմի:

Ալեյի ճիշտ պետք է համարել Ֆրանսական գիտնական Մորդանի գիտողությունը:

«... Բոլոր այն պետություններից, — ասում է Մորդանը, — որոնք ստեղծվել էին Աղեքսանդրի նվաճումներից հետո, մնացել էին միմիայն փլատակներ ու միմիայն թաղավորիկներ, որոնք անկարող էին զորավիգ լինել հելլենական փառքին, Պոնտոսի և Հայաստանի երկու մեծ թագավորները վերջիններն էին, որոնք կկարողանային վերանորոգել

¹ Plat., Craisus, XXXI, 1.

² Տես «Римская история», II, Москва, 1887, էջ 273—275:

³ Տես J. Morgan, Histoire du peuple arménien, Paris, 1913, էջ 80:

իրենց պետութիւններում Հելլադայի դեղեցիկ քաղաքակրթութիւնը:

Տիգրան Բ-ի թագավորութեան ժամանակը բացառիկ մի շրջան էր Հին Հայաստանի քաղաքական, հղորացման և կուլտուրական ու տնտեսական ներքին զարգացման: Ուստի և հասկանալի է, որ վերահիշյալ պատմական անցքերը նյութ էին դառել անգլիոյ բանահիշատակութեան, պատմիչի ու երգիչի էին Հին Հայաստանում և նրանց հիշողութիւնները պահպանվել էին երկար դարերի ընթացքում:

Տիգրան Բ-ի մասին նույնիսկ Խորենացու ժամանակ դոյութիւն են ունեցել որոշ ավանդութիւններ և բանատտեղծական աւանդին մի գրվածք («Զորս հազներգութիւնք»)¹, որի հեղինակն օգտված է եղել, հավանորեն, պատմական հին երգերից և ավանդութիւններից: Բայց Խորենացին այս աղբյուրների մեջ հիշատակված Տիգրանին, որը, անտարակույս, Արաաշեսյան առճմի Տիգրան Բ-ն է, համաձայն իր սխալ ժամանակագրութեան, համարել է դաշնակից պարսից Կյուրոս թագավորի:

Ինչպես ցույց են տվել Գեղցիըր և Աբեղյանը², Տիգրանի մասին այն ընդարձակ հիշողութիւնները, որ բերված են Խորենացու պատմութեան առաջին զրքի ԻԴ—ԼԱ գլուխներում, մեծ մասամբ, պատմական են և համապատասխանում են օտար աղբյուրների հաղորդած տեղեկութիւններին:

Եվ իրավի, ոչ միայն Մարաց տերութեան նվաճումը, այլև ներքև մեջ բերված վկայութիւնները վերաբերում են պարզապես Տիգրան Բ-ին կամ Մեծին:

1. Խորենացի, I, գլ. ԻԴ՝

«Բայց անցնենք այսուհետև պատմելու ինչ որ կա Տիգրանի ու նրա զործերի մասին: Որովհետև սա մեր բոլոր թագավորներից ամենահզորն էր և ամենախուհեմը, և սրայից, ինչպս և բոլորից՝ ամելի քաջը, նա... տապալեց մարաց իշխանութիւնը և, նվաճելով հույներին՝ ոչ քիչ ժամանակ իրեն հնադանդեցրեց: Եվ նա, ընդարձակելով իր բնակութեան սահմանները՝ հասցրեց մինչև բնակութեայ, մեր վերջին հին ծայրերը: Բոլոր իր ժամանակակիցներին նա նախանձելի

¹ Տէս Խորենացի, I, գլ. ԻԱ և ԻԴ:

² Պրոֆ. Ն. Գեղցի, «Համառօտ պատմութիւն Հայոց», Թարգմ. Ն. Գր. Վ. Գալսեմյանի, Վիեննա, 1897, էջ 8—9 և Մ. Աբեղյան, «Հայ ժողովրդական առասպելներ», Վաղարշապատ, 1901, էջ 448—474:

եղալ, իսկ հետագաներիս ցանկալի են թե ինքը և թե իր ժամանակը»:

[«Բայց անցցուք այսուհետև որ ինչ յաղաքս Տիգրանայ և որ ի նմանէ գործք: Քանզի սա ամենեցունց թաքաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ: Որ և... զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեղերս ծայրից բնակութեան, և ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկենացս ըղձալի ինքն և ժամանակ իւր»]¹:

2. Խորենացի, I, գլ. ԽԴ՝

«Տղամարդկանց գլուխը կանգնելով և ցուլց տալով քաջութուն՝ նա մեր ազգը բարձրացրեց և մեղ, որ լծի տակ էինք՝ դարձրեց շատերի վրա լուծ գնողներ ու հարկապահանջներ: Նա բազմացրեց արագ կերպով կուտակումները ոսկու, արծաթի և պատվական քարերի, նաև զանազան գույնի ու դործվածքի զգեստներին՝ համասարապես աղամարդկանց ու կանանց համար: Դրանով տգեղները գեղեցիկներին նման սքանչելի էին երևում և գեղեցիկները դառնում էին այն ժամանակի հասկացողությամբ, ընդհանրապես, գյուցագուններ: Հետևակ մարտիկները ձիերի վրա բարձրացան, պարսափորները դառան առհասարակ հաջող աղեղնավորներ և շերտավորները զինվեցին սրերով ու նիզակներով, իսկ մերկերը ծածկվեցին վահաններով և երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ դաշին՝ բավական էին նրանց միասին տեսքը և նրանց պահպանակների ու զենքերի փայլումը և շողյունը թշնամիներին փախցնելու համար»:

[«Արանց կացեալ գլուխս և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց և զընդ լծով կացեալսս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. միերս տակոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուլց և պէս պէս գունից և անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց. որովք տգեղագոյնքն իբրև գեղաւորս երևէին սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ

¹ Տես հրատ. Մ. Աբեղյանի և Ս. Հաբոթյունյանի, Տիգրիս, 1913, էջ 71:

դիւցազնացեալք՝ Հետեակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի աէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և գզեստուք երկաթօք պարածածկեալք: Որոց ի մի վայր հասեցոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց վայրմունք և յողինք՝ զթշնամիտն արտահալածել: Խաղաղութեան և շինութեան բերող՝ իւզով ու մեղու զամենայն հասակ պարարեալք]:

3. Նույնը, I, գլ. I՝

«Պատմվում է և այս, թե այս դործերը կատարելուց հետո՝ [Տիգրանը] իր քույր Տիգրանուհուն մեծ բաղմուքյամբ ու թագաւորաւայել կերպով ուղարկում է Հայաստան՝ այն ամանը, որ շինել էր ինքն իր անունով, այսինքն՝ Տիգրանաւերաց:»

[«Պատմի և այս, թե զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ թագաւորապէս գլխիւ իւր Տիգրանուհի մեծաւ ամբողիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանաւերա...»]:»

4. Նույնը, III, իԸ՝

«Եւ հիմքը փորելով՝ քանդեցին տապալեցին [Տիգրանակերտի պարիսպը], որի պատերը պինդ ու հարմար շինել էր Հայկազնյան Տիգրանը»:

[«Եւ նգախարխար արարեալ զայն [զպարիսպն Տիգրանակերտի], որ ի հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին»]:»

5. Նույնը, I, գլ. IԱ՝

«Ինչպես ինձ պատմողիս հաճելի է համաստի կերպով պատմել իմ պատմութեան մեջ, իրօք, բուն և առաջին Տիգրանի՝ ու նրա գործերի մասին այն, ինչ որ Երվանդյան Տիգրանի մասին պատմվում է, նույնպես և քեզ ընթերցողիդ հաճելի պետք է լինեն ինչպես այդ մարդն ու նրա գործերը, նույնպես և այն, որ նրա մասին պատմվում է: Ուստի և ես սիրում եմ ըստ քաջութեան այսպես կոչել — Հայկ, Արամ, Տիգրան. որովհետեւ ըստիս քաջերի սերունդները քաջեր են, իսկ ընդամեջ եղողներին ու ինչպես ուզում է՝ թող կոչե:»

1 Տփղիս, 1913, էջ 72:

2 Տփղիս, 1913, էջ 82—83:

3 Տփղիս, 1913, էջ 290:

Բայց դուք ազնուության մտքով ևս մեր ասածը ճշմարիտ է՝ Ոչ մի Արամազդ չկա, իսկ նրանց համար, որոնք կամենում են, որ Արամազդ լինի՝ մինչև իսկ չորս այլևայլ Արամազդ կոչվողներ կան, որոնցից մեկն է միայն Կոնդ Արամազդը։ Այսպես և շատերն են կոչվում Տիգրան, սակայն սա մեկ և միակն է Հայկազուններից... որ հափշտակեց Մարաց և Պարսից իշխանությունը»։

[«Հաւաստի պատմել Ղըուն և զառաջին Տիգրանն և որ ինչ ի նման է գործք՝ սիրելի, որպէս ինձ պատմողիս ի մէջ իմոց բանից որ ինչ յաղագս Երուանդեանն Տիգրանայ բանք՝ եղիցի և քեզ ընթերցողիդ, որպէս այրն և գործք, այսպէս և զնման է բանք։ Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան— Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ քաջացն աղգք քաջք. իսկ միջոցքն՝ որպէս դէսլ ումեք թուիցի կոչել։ Բայց ըստ դիւցազնութեանն կարծեաց՝ ճշմարիտ է և ասելս մեր։ Ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողսն լսին լինել Արամազդ չորից ես այլոց անուանեցելոց ոմանց Արամազդ. յորոց մի է և Կոնդ Արամազդ։ Այսպէս և րահումք անուանեալք Տիգրան, մի է և միայնակ սա ի Հայկազանցս..... որ գիշխանութիւնն Մարաց և Պարսից ինքն յափշտակեաց»]։

Այս վկայութիւնների առաջինում ճշտութեամբ արտահայտված ու պահված է Տիգրան Բ-ի կարճատև տիրապետությունը Սելեկյան Թագավորության հույների վրա²։ Երկրորդ վկայության մեջ, որն առանձնապես կարևոր է ու հետաքրքիր, մատնացույց է արված հայկական զորաբանակի վերականգնությունը և նկարագրված են նաև Հայաստանի լիառատ ու բարեկեցիկ վիճակը և այն մեծ հարստությունները, որ կային երկրում Տիգրանի ժամանակ։ Երրորդ և չորրորդ վկայությունները ևս միանդամա՞յն ստույգ են և պատմական և վերաբերում են Տիգրանակերտի շինություններին Աղձնիքում³։ Իսկ հինգերորդ վկայության մեջ հիշատակված է նույնպես, որ Տիգրան Բ-ը նվաճել էր Մարաց և Պարսից (այսինքն՝ Պարթևների) տերությունը։

Վերահիշյալ երկրորդ վկայության մեջ, ինչպես մատնանշել էինք նախորդ մեր աշխատություններից մեկում⁴, «իւղով և

¹ Տփղիս, 1913, էջ 85։

² Տես Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 464։

³ Տես Օ торговле и городах Армении, էջ 65—66։

մեղու զհասակս ամենեցուն պարարեալն արաահայտութիւնը հռետորական մի չափազանցութիւն է, որը ճիշտ կարող է լինել, զյխարպորապես, իշխող դասերի նկատմամբ: Միանգամայն սակայն հնարալոր է և հավանական, որ հարստացած ու փառ-թամացած այս դասերի զորեղացման և սրանց իշխանութիւնն ու արտոնութիւնների ընդարձակման հետ միասին կարող էր ծան-րացած լինել իրավական դրութիւնը շինական դասի:

Որ խորենացու մոտ պատմական են ու արժանահավատ նաև վերահիշյալ հիշողութիւնները Հայաստանում կիրոված դրամական ու այլ հարստութիւնների մասին՝ այս հաստատում են, ինչպես կտեսնենք ներքև, Պլուտարքոսի վկայութիւնները հսկայական այն գումարների մասին, որ տարել էին Հայաստանից Լուկու-լոսը և Պոմպեյոսը:

ՄԻՀՐԴԱՏԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՓԱԽՈՒՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՐՏԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ԴԵՄ

1. Միհրդայան երրորդ պատերազմը.—Տիգրանի չեզոքությունը.—Միհրդայանի յաճիհքը Սեռոբիուսի հետ.—պատերազմի պատճառը։—2. Միհրդայանի պարտությունը Բիթանիայում.—օգնության մեծումը և Տիգրանի չեզոքությունը։—3. Միհրդայանի պարտությունը Կաբիրայի մոտ և փախուստը Հայաստան։—4. Լուկուլլոսի պահանջը իրեն հանձնելու Միհրդայանի և Տիգրանի մեծումը.—Պուստաբոսի սխալ թեղեկությունը պատերազմի հայտարարման մասին Տիգրանին.—Ապսիոսի ղալպադրանկան գործունեությունը Հայաստանում։—5. Պատերազմի ավարտումը և Պոնոսի հաղաճության ավերումը ու կողոպտումը։—6. Հայկական պատերազմի նախապատասխանը.—Հռոմեական Ասիայի ճանաչական դրության թերևս-ցումը քիլունիի ապահովման նպատակով։—7. Լուկուլլոսի գաղտնի ու զոդաբարո հաբձակման ղիտավորությունը։—8. Նյուզան Լուկուլլոս-Վայկունի մասին յար հիշատակը Հայաստանում։

Միհրդատյան առաջին պատերազմից հետո Սուլլայի և Միհրդատի միջև կայացել էր միայն բանավոր համաձայնություն և Դարդանոսում կնքված դաշնադրությունն (84 մեր թվ. առ.) ուներ ավելի շուտ ժամանակավոր զինադադարի բնույթ, քան հաստատուն ու տևական խաղաղություն։

Թե ո՞րքան անկայուն էր բանավոր այս հաշտությունը՝ այդ նկատվեց դաշնադրությունից արդեն մեկ տարի հետո։

83 թվին հռոմեական Ասիայի կառավարիչ Մուրեանն, անտես առնելով Դարդանոսի դաշինքը՝ ինքնադուխտ կերպով, առանց հռոմեական ժողովրդի ու ծերակույտի հավանության, վերսկսեց պատերազմը Միհրդատի դեմ։ Միհրդատյան այս երկրորդ պատերազմը, որը տևեց մոտ երեք տարի (83—81 մեր թվ. առ.), դարձրեցվեց Սուլլայի հրամանով միայն այն ժամանակ, երբ հռոմեական պարտված զորքերը հարկադրված էին ետ նահանջել Պոնտոսից։

Այս երկրորդ պատերազմից հետո՝ Միհրդատը, որն՝ անկեղծ կերպով կողմնակից էր խաղաղության՝ ուղարկեց Հռոմ հատուկ դեսպանություններ (79 և 78 թ.) և խնդրեց, որ Դարգանոսի դաշնադրությունը ձևակերպվի դրավոր կերպով և վավերացվի հռոմեական ծերակույտի կողմից։ Եվ երբ նրա այս դիմումները մնացին անհետևանք՝ նա համոզվեց, որ կռիվն անխուսափելի կերպով վերսկսվելու է հակառակ իր ցանկության։

Եթե Միհրդատյան երրորդ պատերազմը բռնկվեց այս բանակցություններից հինգ տարի հետո՝ դրա պատճառն այն էր, որ Սուլլայի մահից հետո (78 մեր թվ. առ.) Հռոմում կառավարության դեմ ոտքի էր կանգնել դեմոկրատական կուսակցությունը և Իսպանիայում վտանգավոր ընթացք էին ընդունել վտարանգի դեմոկրատների կռիվները Սերտորիուսի հանճարեղ ղեկավարությամբ։

Պատմադիտության մեջ տիրող կարծիքը, որ Տիլդանն այս երրորդ պատերազմում ես լքել էր Միհրդատին և խախտել իր կնքած դաշինքը՝ չէ հաստատվում սկզբնաղբյուրների ուշագիյր ու քննական ուսումնասիրությամբ։ Հայ-պոնտական դաշինքը չէ վերաբերել, ինչպես վերև տեսանք, հռոմեա-պոնտական պատերազմներին։ Միհրդատի դաշնակիցը եղել է երրորդ պատերազմում ոչ թե Տիգրանը, որի նոր հիմնած մեծ պետությունն ապահովված չէր պարթևական հարձակումների վտանգից, այլ հռոմեական հեղափոխական դեմոկրատիայի առաջնորդ Սերտորիուսը, որը հավաքել ու կազմակերպել էր Իսպանիայում Հռոմի պահպանողական կառավարության դեմ հզոր մի զորարանակ։ Միհրդատը շատ լավ հասկանում էր, որ վիթխարի ու զորեղ Հռոմը գրեթե անսպարտելի է։ Նա որոշել էր չկռվել այժմ երկու հռոմեական կուսակցությունների հետ միաժամանակ, ինչպես նա այդ արել էր առաջին պատերազմի ընթացքում, նրա գլխավոր հույսն այժմ այն էր, որ նա կկարողանա փրկել մոտալուտ վտանգից իր երկիրը, դաշնակցերով ու համաձայնությյան պայմանագրերով կառավարության հետ ընդդեմ իշխող կառավարության։

Դաշինքը Սերտորիուսի հետ կնքվել էր հետևյալ պայմաններով՝ պրովինցիա Ասիան մնալու էր հռոմայեցիների իշխանության ներքո, իսկ Բիթանիան, Պափլագոնիան և Կապպոդոկիան, որոնք մշտական կռիվախնձոր էին Հռոմի և Պոնտոսի միջև և որոնք Պոնտոսի համար ունեին կենսական նշանակություն՝ ստանալու էր Միհրդատը։

Միհրդատյան երբորդ պատերազմի պատճառ էր ծառայել Բիթանիայի միացումը Հռոմին, որով խախտվում էր Դարդանոսի դաշնադրությամբ հաստատված քաղաքական հավասարակշռութիւնը: Հռոմը, հաստատելով իր տիրապետութիւնը Բիթանիայում՝ ո՛չ միայն դառնում էր Պոնտոսի անմիջական հարևանը, այլև տեր ու տնորենն էր դառնում սևծովյան նեղուցների: Այնուհետև նա, երբ ուզենար՝ կարող էր փակել նեղուցները և քայքայել Պոնտոսի ու Բոսփորի առևտրական մեծ քաղաքների տրեսական բարեկեցութիւնը:

Պատերազմը սկսվեց 73 թվի դարնանը, Պոնտական զորքերի դեմ, որոնք առաջ էին շարժվել դեպի Կապպադովկիա և դեպի Բիթանիա՝ հռոմեական ծերակույտն ուղարկեց Կոստային ու Լուկուլլոսին: Պատերազմի սկզբում Կոստայի զորքը և հռոմեական նավատորմիղը ծանր պարտութիւն կրեցին Քաղկեդոն քաղաքի մոտ և Բոսփորի նեղուցում: Սակայն շուտով Կիլիկիոս քաղաքի մոտ բախտը դավաճանեց Միհրդատին և նա ծանր պարտութիւն կրեց ու հաղիվհաղ կարողացավ նահանջել իր երկիրը: Կովի բեմը դառալ այնուհետև Պոնտոսը, որը ենթարկվեց ավերածության և անխնա կողոպտման Լուկուլլոսի զորքերի կողմից:

Միհրդատը սկսեց իր երկրում հալաքել նոր զորքեր և, ամրանալով իր երկրի լեռնային շրջաններում՝ աշխատեց նախապատրաստել նոր դիմադրութիւն: Միևնույն ժամանակ նա օգնութիւն խնդրեց իր որդուց՝ Մաքարեսից, որը Բոսփորի փոխարքան էր, նաև պարթևներից, սկյութներից ու Տիգրան Բ-ից:

Սակայն նրա նոր նախաձեռնությանը պոնտական զորքերի ծանր անաջողութիւններից հետո այլևս ոչ ոք հավատ չէր ընծայում: Թշնամու կողմն էին անցնում այժմ շատերը մինչև իսկ Պոնտոսի մեծամեծներից: Նրան դավաճանում էին նույնիսկ սևիական իր դեսպանները:

Միհրդատի հարադատ որդին՝ Մաքարեսը ո՛չ միայն չօգնեց հորը, այլ ինքը հարմար առիթի էր սպասում և հռոմայեցիների հետ ուզում էր կնքել անջատ հաշտութիւն:

Տիգրանի մոտ ուղարկած դեսպանության մասին Պլուտարքոսը պատմում է հետևյալը:

«Մետրոդորոսը Միհրդատի կողմից, — ասում է Պլուտարքոսը, — ուղարկված էր Տիգրանի մոտ իբրև դեսպան խնդրելու օգնութիւն հռոմայեցիների դեմ: Սրան հարցրել

էր Տիգրանը՝ «իսկ դու ինքդ, ո՛վ Մետրոդորոս, ի՞նչ խորհուրդ կաաս այս մասին»։ Եվ նա՝ կամ Տիգրանին օգտակար լինելու համար և կամ չցանկանալով որ Միհրդատը փրկվի՝ ասում է՝— «Իրբև դեսպան խորհուրդ եմ տալիս, իսկ Թրբև խորհրդատու՝ խորհուրդ չեմ տալիս»¹։

Միհրդատի դիմումի մասին Տիգրանին ուշադրաւ մի վկայութիւն ունի նաև Մեմնոնը, որն ըստիս ավելի արժանահավատ է, քան Պլուտարքոսի վկայութիւնը։

«Միհրդատը... ուղարկեց, — վկայում է Մեմնոնը, — դեսպաններ Սկյութացոց Թագավորների, Պարթևաց Թագավորի և յուր փեսայի՝ Տիգրան Արմենի մոտ։ Սահայն առաջիններից նա ստացավ մերժում, իսկ Տիգրանը, որին շարունակ անհանգստացնում էր ու աղերսաւից ինքրում Միհրդատի դուստրը՝ վերջ ի վերջո խոստացաւ օգնելը»։

Տիգրանի այս խոստումը մնացել էր, ըստ երևույթին, իբրև սոսկ խոստում։ Սկզբնաղբյուրների մեջ նրա իրական օգնութեան ու աջակցութեան մասին ո՛չ միայն չկան որևէ տեղեկութիւններ, այլ ընդհակառակը՝ կան ակնարկներ նրա չեղոքութեան մասին, որ նրանք համարում են աններելի մի սխալ։

Պատմագիտական նորադույն երկերում ևս Տիգրանի չեղոքութիւնը համարում են քաղաքական մեծ սխալ, որովհետև այժմ վճռվում էր ո՛չ միայն Պոնտոսի, այլև Հայաստանի և Առաջավոր Ասիայի բախտն ու ապագան։

Այս գնահատութիւնը, իհարկե, ուղիղ է, սակայն Տիգրանին դատարարողները պետք է ինկատի ունենան միևնույն ժամանակ նրա դժվար կացութիւնը։ Հանդես գալով հռոմայեցիների դեմ՝ նա հարկադրված պիտի լիներ պատերազմելու ո՛չ միայն սրանց, այլ նաև իր ռիսերիմ՝ Թշնամիների՝ պարթևների հետ։ Գուաշմիդը կարծում է նույնիսկ, որ Տիգրանի վերջին կոխիլ պարթևների դեմ շարունակվում էր նաև յոթանասնական թվականների սկզբներին՝ երբ Միհրդատի դեսպանները եկել էին օգնութիւն ինքրելու նրանից²։ Չպետք է նաև մոռանալ, որ հռոմեական նեղ ու ճարպիկ դիվանագիտութիւնն աշխատել էր իր հերթին, ինչպես դժվար չէ կռահել Պլուտարքոսի վկայութիւնը։

¹ *Str. Plul., Lucul., XXII, 4.*

² *Տէս դր. 48, Lipsiae, 1816, էջ 64.*

³ *Str. Gutschmid, Geschichte Irans, Tübingen, 1888, էջ 82—83.*

ներից¹, տպավորութիւնն ստեղծել իր խաղաղ տրամադրութեան մասին Տիգրանի հանդեպ:

71 թվի գարնանը կռիվը Միհրդատի դեմ վերսկսվեց Պոնտոսի կենտրոնական շրջանում Կաբիրայի մոտ (այժմ Նիկսար կամ Նէոկեփարիա Կելկիդ—Լիկոս գետի ափին): Թեև Կաբիրայի մոտ սկզբում Միհրդատն ունեցավ որոշ աջողութիւններ, սակայն շուտով նրան դավաճանեցին զորավարներից մի քանիսը, որոնց կաշառել էր Լուկուլտը: 71 թվի ամառը պոնտական զորքերը ծանր պարտութիւն կրեցին Կաբիրայի մոտ և Միհրդատը հաղթիվ կարողացավ փախչել փոքրաթիվ զորախմբով նախ Կոմանա և ապա այստեղից Տաւրաւրայի վրայով, որի տեղագրութիւնը դեռևս բավարար կերպով լուսաբանված չէ, եկավ Հայաստան ու խնդրեց իր փեսայից տալ իրեն օգնութիւն և ապաստարան (71 թվի աշնանը):

Հայաստանում նրան տրվեց, իրոք, ապաստարան. սակայն Տիգրանը, կամենալով չեզոքութիւն պահպանել՝ նրան չհրաժիրեց իր մոտ արքունիք, այլ հրամայեց թագավորական պատիւներ մատուցանել աներոջը և պահել նրան իր պետութեան հեռավոր ու սահմանային երկրներից մեկում²:

Պատմագետներից ոմանք, հավատ ընծայելով Պլուտարքոսի անհավաստի տեղեկութիւններին՝ մեղադրում են Տիգրանին, որ նա չէ ուզեցել հանդիպել ու մխիթարել իր դժբախտ ազգականին և որ նա ուղարկել է Միհրդատին վատառողջ ու ճահճային մի վայր³: Նրանք աչքաթող են արել, որ Պլուտարքոսի թե այս և թե այլ նման գունաւորված տեղեկութիւնները, որոնք չեն համապատասխանում մյուս աղբյուրների վկայութիւններին՝ հրեմարովի հերյուրանքներ են և չունեն պատմական նշանակութիւն⁴:

Տիգրանի վարքագիծը պարտված ու իր մոտ փախած Միհրդատի հանդեպ ունեցել է, իրապես, քաղաքական դրդապատճառներ: Տիգրանը ինչպես Միհրդատյան երկրորդ պատերազմի ընթացքում, նույնպես և Միհրդատի վերջնական պարտութիւնից հետո, աշխատել էր պարզապես խույս տալ պատերազմից,

¹ Տես Plut., Lucul., XIV, 4—7:

² Տես Memnon, գլ. 46 և App., Mithrid., 82:

³ Տես Plut., Lucul., XXII, 1:

⁴ Պլուտարքոսի այս անհավաստի վկայութիւններին հավատ են ընծայել Թեյնաքը, Եջարդը և ուրիշները, տես Reinach, Mithridate Eupator, էջ 346 և Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, IX, 4, էջ 402:

հույս ունենալով, որ չեզոքության պահպանմամբ նա կկարողանա պահպանել նաև խաղաղությունը Հոռմի հետ:

71—70 թվի ձմեռը Լուկուլլոսը անցկացրեց իր նոր նվաճած Կաբիրա քաղաքում Հայաստանի փսված Միհրդատի պալատում: Կաբիրայի մոտ անդի ունեցած մեծ կավից հետո, 71 թվի վերջերին, նա ուղարկեց Տիգրանի մոտ իր կնոջ եզրորն՝ Ապպիոս Կլավդիոսին և պահանջեց, որ Տիգրանը հռոմայեցիներին ձեռքը հանձնե պոնտական թագավորին:

Պլուտարքոսի անհավաստի վկայություններն այս դեսպանության մասին, որոնք առանց ստուգման մեջ են բերված գրեթե բոլոր պատմադիտական երկերում՝ մանրամասն քննված են իմ «Տիգրան Բ-ը և Հոռմը» աշխատության մեջ:

Պլուտարքոսի այդ վկայություններից անհավաստի է և հնարովի նրա հաղորդած հիմնական տեղեկությունը, որ իբր թե Ապպիոս Կլավդիոսը, մերժում ստանալով Տիգրանից՝ նրան հայտարարել էր պատերազմ: Այդ չէ կարող ճիշտ լինել, որովհետև, ինչպես հայտնի է, հռոմեական ծերակույտը չէր լիազորվել Լուկուլլոսին պատերազմ հայտնելու Տիգրանին: Միանգամայն անհավանական է, բացի այդ, որ 71 թվի վերջերին Լուկուլլոսը պատերազմ հայտարարած լիներ Տիգրանին, որովհետև նա դեռևս չէր նվաճել պոնտական խոշոր քաղաքները և չէր ապահովել իր թիկունքը: Եվ վերջապես, կարող էր միթե Լուկուլլոսն այնքան անհեռատես ու անզգույշ լինել, որ հայկական իր աղաքավանքը սկսելուց մոտ մեկ ու կես տարի առաջ պատերազմ հայտարարեր Տիգրանին, ժամանակ տալով նրան ու հնարավորություն նախապատրաստելու ռազմական իր ուժերը պատերազմի համար:

Պլուտարքոսի հիշյալ վկայության սխալ լինելն այնքան ակնհայտ է, որ նրա այդ տեղեկությունն անտես է արված ակադեմիկոս պատմադետների երկերում, օրինակ՝ Մոմդենի, Ռեյնալդի և ուրիշների ուսումնասիրություններում:

Ապպիոս Կլավդիոսի ընդունելության մասին Անտիոքում ավելի վստահելի են, անտարակույս, Մեմնոն Հերակլեսացու հաղորդած տեղեկությունները, որովհետև սա, պատկանելով փոքրասիական հույն հեղինակների խմբին՝ Հոռմի հակառակորդների նկատմամբ չունի այն միտումնալիցությունն ու աջառու վերաբերմունքը, որ հատուկ են հռոմեական պատմադիրներին: Եվ ուշադրավ է, որ պատերազմի հայտարարության մասին

Մեմնոնը ոչինչ չգիտե: Բայց նա հանգամանորեն մեջ է բերում Տիգրանի պատասխանն Ապպիոսին, որը միանգամայն հիմնովոր էր ու արդարացի և, հավանորեն, հենց այդ պատճառով չէ հիշատակված Պլուտարքոսի ու հռոմեական պատմագիրների երկերում: Մեմնոնի ասելով, Տիգրանը պատասխանել էր Ապպիոս Կրավդիոսին և հայտնել էր նաև նամակով Լուկուլլոսին, որ բոլոր մարդիկ իրեն կպախարակեն և որ իր ազգականության առջև ևս ինքը խախտառակ կլինի՝ եթե հռոմայեցիների ձեռքը հանձնե իր կնոջ հորը¹:

Ապպիոսը, որն, ըստ երևոյթին, զաղտնի հրահանգ էր ունեցել զբաղելու ու ապստամբեցնելու Տիգրանի դեմ Ասորիքի հունական քաղաքները և Տիգրանին հպատակված օտար ժողովուրդները՝ աջողությամբ էր կատարել Լուկուլլոսի հանձնարարությունները: Նա հռոմայեցիների կողմն էր դրավել գեղոհ իշխաններից ոմանց, որոնց թվումն էր Կորդվաց Ջարբինոս Բադակորը: Իսկ Ասորիքի մի քանի քաղաքներին, որոնք խոստացել էին ապստամբել Տիգրանի դեմ՝ նա խորհուրդ էր տվել սպասել մինչև Լուկուլլոսի դալը:

70 թվի դարնանը հռոմայեցիները երկար պաշարումից հետո կարողացան դրսևել Հերակլեան և Սինոպը, իսկ 70 թվի աշնանը՝ նաև Ամիսոսը: Այս քաղաքների անկումից հետո՝ Հռոմը տեք էր դառնում ամբողջ Պոնտոսի և Եփեսոսի վրա Միհրդատի հետ կարելի էր համարել վերջացած:

Նվաճված երկիրը, մանավանդ, նրա հելլենիստական հարուստ ու չքեղ քաղաքները մատնվեցին անխնա կողոպուտի: Հռոմեական զորքերը հրդեհեցին ու խալառ ավերեցին փարթամ ու հոյակապ Հերակլեա քաղաքը և հուշակավոր ու վեղեցիկ Ամիսոսը, որը համարվում էր Պոնտոսի Աթենքը: Եվ թնորոչ ու հատկանշական է, որ պատմագիտական մեծահռչակ մի քանի երկերի մեջ զորավար Լուկուլլոսը, հռոմայեցի ամենախոշոր ավարառուն և կողոպտիչը, որը քանդել ու հիմնովին կործանել էր հելլենիստական մեծ ու ճոխ կուլտուրան Պոնտոսում՝ համարվում ու անվանվում է պաշտպան հելլենիստական քաղաքակրթության և «հելլենիզմի ջերմ երկրպագուն»:

Քաղաքները նվաճելուց հետո՝ Լուկուլլոսը նույն այս 70

¹ S^{են} Memnon, գլ. XLVI:

² S^{են}, օրինակ, Ферреро, Величие и падение Рима, I, перевод А. Захарова, Москва, 1916, էջ 161 և 184:

Թվին վերադարձել էր Պոնտոսից պրովինցիա Ասիա: Եւ խիստ ուշադրաւ է ու հետաքրքիր, որ նա Հայաստան արշավելուց առաջ անհրաժեշտ էր համարել Թեթևացնել հռոմեական Ասիայի տնտեսական հուսահատական դրութիւնը:

Այս նահանգն առաջին Միհրդատյան պատերազմից հետո (88—84 մեր թվ. առ.) վճարելու էր ի սրատիժ իր անհաւատարմության, բացի հինգ տարւա հարկերից, նաև քսան հազար տալանդ ռադմատուքանք: Նա այժմ կատարելապէս սնանկացել ու արյունաքամ էր եղել, վճարելով հսկայական իր պարտքի վաշխառուական տոկոսները: Հռոմեական Ֆինանսիստները, որոնք դրամական ժողտառութիւն էին տվել աղքատացած այս երկրին՝ իրենց ստանալիք տոկոսների դիմաց բռնագրավում էին այստեղ տները, վարելահողերը, այգիները, հասարակային շէնքերը, հախչտակում ու իտալիա էին տանում արվեստի իրերը, արձանները, պատկերները, տնակահույքը, ոսկեղենն ու արծաթեղենը և վերցնում էին, բացի այդ, նաև պարտապանների երևխանների կամ հենց իրենց պարտապաններին ու որպէս ստրուկ ուղարկում նույնպէս իտալիա: Ձնայած սակախ ամբողջ այս նահանգի կատարյալ սնանկացման՝ նրա սկզբնական քսան հազար տալանդ պարտքը 84 թվից հետո ո՛չ միայն չէր պակասել, այլ դառել էր 70 թվին քառասուն հազար տալանդ (= մոտ 168 միլիոն մարկ կամ 84 միլիոն ոսկի ուլբլի):¹

Վճարել այս հսկայական դումարը և նրա վրա բարդվող տոկոսները հռոմեական Ասիայի ուժերից վեր էր և այլևս հնարավոր չէր: Հարստահարվող ընակչութիւնը չափից դուրս գրգռված էր հռոմայեցիների և ընականաբար, նաև հռոմեական իշխանության դեմ: Լուկուլլոսն անհրաժեշտ համարեց հանդարտեցնել ընակչության այդ դժգոհութիւնը և աշխատեց Թեթևացնել նրա տնտեսական դրութիւնը, որ դառել էր արդեն անտանելի: Մասնավոր պարտքերի համար նա արդելեց վերցնել 12%-ից աւելի, արգելեց նմանապէս ավելագրել չվճարված տոկոսների վրա նոր տոկոսներ և կարգադրեց, որ պահանջվող տոկոսների դումարը չլինի ավելի քան սկզբնական պարտքի դումարը: Եթե պարտապանները չէին վճարում իրենց պարտքերը՝ պարտատերերն իրավունք ունէին վերցնելու նրանց եկամուտի միայն մեկ քառորդ մասը²:

¹ S. E. Plut., Lucul., XX, 3:

² Նույնը, XX, 3:

Որ իր բարենորոգումները և հոռմեական փոքր Ասիայի իս-
ղադացումը Լուկուլլոսը կարևոր ու անհրաժեշտ էր համարել
Հայաստան արշավելուց առաջ՝ այդ ուշադրավ մի փաստ է, որն
ուշադրութան չէ առնվել պատմագիտական երկերում: Շատ
պարզ է, որ նա, որոշած լինելով պատերազմել Տիգրանի դեմ՝
պետք է ասահովներ իր թիկունքը արևմուտքում, որոշ զիջումներ
անելով հոռմեական Փոքր Ասիայի հուսահատված ու հուզված
բնակչությանը:

Պատմագիտական երկերում բնավ չէ լուսաբանված նաև
Լուկուլլոսի Հայաստան արշավելու նենգ ու խորամանկ ծրագի-
րը, որն առանց դժվարութան քողազերծվում ու մերկացվում
է սկզբնալրյուրների ուշադիր քննությամբ:

Տիգրանի դեմ իր արշավանքը Լուկուլլոսը կազմակերպում
էր բոլորովին թաքուն կերպով: Նա աշխատել էր ըստիս քնե-
ցնել Տիգրանի աջալրջությունը և ծրագրել էր հանկարծ ու ան-
սպասելի հարձակվել ու ջախջախել նրան, նախ քան նա հավա-
քած ու նախապատրաստած կլիներ իր ցրված զորամասերը:

Միանգամայն բնական է ու հասկանալի, որ Լուկուլլոսի
այդ հարձակումն առանց պատերազմի հայտարարութան, որով
ոտնահարվում էին միջազգային օրինականության կարգերը, չեն
ուզում բացահայտ կերպով խոստովանել հոռմեական աղբյուր-
ները և, մասնավորապես, Պլուտարքոսը, որը գրել էր Լուկուլ-
լոսի ո՛չ թե անաչառ պատմությունը, այլ ներքողյանը: Ստկայն
պարզ ակնադրվելու կան այդ մասին Ապպիանոսի մոտ, որն իր
պատմությունից, այս մասում օգտվել էր, հավանորեն, ոչ թե հո-
մեական, այլ փոքրասիական չեզոք հույն աղբյուրից:

Ապպիանոսի համապատասխան վկայությունից, որ ամբող-
ջությամբ մեջ ենք բերում, երևում է, որ Լուկուլլոսը՝ վերա-
դառնալով 70 թվին¹ հոռմեական Փոքր Ասիա՝ նախ աշխատել էր
տպավորություն գործել, որ իբր թե պատերազմը վերջացել է,
և ապա շարժվել էր հանկարծ ու արագ իրթերով դեպի Հայաս-
տան:

«Արդ՝ - հենց այսպես, — պատմում է Ապպիանոսը, —

¹ Լուկուլլոսի վերադարձը Փոքր Ասիա պետք է նշադրել ոչ թե Սի-
նայի ու Ամիսոս քաղաքների առումից առաջ 71 թվին, ինչպես Պլուտարքոսի
հաղորդագրության համաձայն կարծում են Ռեյնալդը, Մոմզենը և ուրիշները,
(տես Mithridate Eupator, էջ 152 և «Римская история», III, էջ 52), այլ
այդ քաղաքների առումից հետո 70 թվին, ինչպես վկայում է Ապպիանոսը:

Լուկուլլոսն ավերեց Մինոպը և Ախիոսը: Նա բարեկամություն հաստատեց Միհրդատի որդու՝ Մաքսարեսի հետ, որը Բոսփորի Թազալորն էր և ուղարկել էր իրեն ոսկե սլառի: Այդ նա Տիգրանից պահանջեց Միհրդատին: Իսկ ինքը, վերադառնալով Ասիա, որը դեռ վճարում էր Սուլլայի սահմանած տուգանքները, որոշեց որ վճարեն եկամուտի մեկ քառորդը, և հարկ դրեց նաև աների ու ստորուկների վրա: Այնուհետև նա իր հաղթության առթիվ զոհաբերության հանդիսատեսներ կատարեց, որպես թե պատերազմը աջող կեցւ պով ավարտված է: Եվ զոհաբերություններից հետո նա ռազմի ելավ Տիգրանի դեմ, որը չէր տվել իր ձեռքը Միհրդատին¹:

Որ Լուկուլլոսն արշավել էր Հայաստան ծածկաբար ու հանվարժ՝ այդ, ինչպես կոեսնենք, ակնարկում են նաև Մալլուստիոսը և Մեմնոնը: Եվ ինձ թվում է, որ իր դաղատուկ ու զոդաբարո հենց հարձակման պատճառով Լուկուլլոսը, որի անունն աղճատված ձևով պահվել է հայ ժողովրդական ավանդության մեջ՝ խիստ վատ հիշատակ է թողել Հայաստանում և հիշվում է Վայկուն անունով իբրև «ելուզակ», այսինքն՝ իբրև սպառակ, որը վրդովել էր հայ երկրի խաղաղությունը և հարկադրել էր Տիգրանին վերադառնալ Պտղոմայիդ քաղաքից Հայաստան:

Լուկուլլոս-Վայկունի մասին այդ հին ավանդությունը հիշատակված է Խորենացու պատմության հետևյալ հատվածում:
Խորենացի, II, դ. ԺԴ՝

«Եվ այնուհետև նա [Տիգրանը] դիմում է Պաղեստինացոց աշխարհը վրեժ առնելու Պտղոմայիդում կլեոպատրայից՝ նրա Դիոնիս որդու դործած հանցանքի համար իր հոր դեմ: Նա շատ զերիններ առնելով և հրեաներից՝ պաշարում է Պտղոմայիդ քաղաքը, իսկ հրեաների Աղեքսանդրիա թաղուհին, նույնը և Մեսադիոնա, որը կինն էր Հուդա Մակաբեի Շմափոն եղբոր որդի Հովհաննեսի որդի Աղեքսանդրի և որն այդ ժամանակ կառավարում էր հրեական Թազալորությունը՝ շատ նվերներ տալով Տիգրանին՝ այնտեղից ետ դարձնելու»:

¹ App. Mithrid., 83 և 84.

² Գրիգոր Խալաթյանցի ենթադրությունը (աճառ Armenianes Arshakuni, Москва, 1903, էջ 64 և 375), որ իբր թե Խորենացին կամայական կերպով Լուկուլլոսին դարձրել է Վայկուն ելուզակ՝ հավանական չէ: Խորենացու այդ վկայությունը հիմնված է ըստի ժողովրդական ավանդության վրա:

ձրեց: Որովհետև Տիգրանը նաև լուր էր ստացել, որ Վայկուն անունով ինչ որ մի ավազակ վրդովում է Հայոց երկիրը, գրաված լինելով Ամուր լեռը, որը մինչև այժմ այդ ավազակի անունով կոչվում է Վայկունիք¹:

[«Եւ նոյն հետայն դիմէ [Տիգրան] յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պաղոմայիդ. Կղէոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր իւր յանցանաց: Առեալ զերի բազում և ի Հրէից՝ նստի շուրջ զՊաղոմայիդ քաղաքաւ: Իսկ դշխոյն Հրէից Ագեքսանդրիայ, որ և Մեսաղինայ, որ էր յեալ կին Ադեքսանդրի, որդւոյ Յոհաննու, որդւոյ Շմաւոնի, եղբոր Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զԹադաւոթութիւնն Հրէից, ինչս բազումս տալով՝ դարձոյց զնա անտի: Քանզի էր լուեալ և համար, թէ Վայկուն ռմն անուն յելուզակ խռովէր զերկիրն Հայոց, զլեառն Ամուր կալեալ, որ մինչև ցայժմ յանուն յելուզակին կոչին Վայկունիք»]¹:

Որ Լուկուլոսն արշակել էր Հայաստան հանկարծակի ու առանց պատերազմ հայտարարելու՝ այդ կարելի է համարել, ինչպես կտեսնենք նաև ներքև, անլիճեփ:

¹ Տփղիս, 1918, էջ 128—129.

ԳԼՈՒԽ ՑԾԱՆԸՈՐՍԵՐՈՐԴ

ԼՈՒԳՈՒԼԼՈՍԻ ՍՐՇԵՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՏԻԳՐԱՆԵԿԵՐՏԻ ԱՌՈՒՄԸ

1. Տիգրանի անհոգությունը.— Լուկուլլոսի հանկարծակի հաճակումը.— ամբողջ գործի նախապահի ուղղությունը:— 2. Խուճապը Տիգրանեցիներում և Տիգրանի նահանգը.— Մեհրոսիանի հետոսական դիմադրությունը և մահը:— 3. Տիգրանեցիների համառ դիմադրությունը.— հայկական հեծելազորի ներխուժումը պաշարված Բաղաբ և Տիգրանի կանանցի ու զանձների ազատումը:— 4. Տիգրանի ու Միհրդատի զորքերի խորհուրդը և խորհրդակցությունը:— 5. Տիգրանի վերադարձը.— Միհրդատի դեսպաններին խորհուրդը.— Տիգրանի որոշումը:— 6. Տիգրանեցիների նահապետաբար.— հակառակորդի սեղը.— հռոմեական և հայկական զորքերի թիվը:— 7. Հակառակորդի մասին օտարերկրացիների կարծիքները.— Պլուտարխոսի վկայության անհավաստիությունը.— Ապոլլոնիոսի օտարաշայկ հաղթողությունը.— Սալլուստիոսի վկայությունը:— 8. Տիգրանի գործի կորուստները:— 9. Տիգրանեցիների նահապետաբար ծանր հետևանքները.— Տիգրանեցիների առումը.— Տիգրանի մեծ պետության քայքայումը:

Լուկուլլոսի ծրագրած պատերազմը Տիգրանի դեմ նախապարապատվում էր, ինչպես ասացինք, թաքուն կերպով ու գաղաղաբար:

Տիգրանը չէր սպասում ինչպես ինչ ամենևին չէր նախազգույս իր երկրին սպառնացող մեծ վտանգը: Նա գիտեր, ըստ Երևույթի, որ հռոմեական ծերակույտը չէր լիազորել Լուկուլլոսին նոր պատերազմ սկսելու Հայաստանում: Նրան նաև հայտնի էր, հավանորեն, որ հռոմեական ծերակույտը, վտանգավոր համարելով պատերազմը հզոր Հայաստանի դեմ՝ չէր համաձայնել միջամտել Ասորիքի գործերին և դա՛ քարձրացնել Սելևկյան օրիշնալոր ժողովուրդներին: Ծերակույտի խաղաղասեր այդ հակումները, ինչպես ինչ պատերազմի վերջացման առթիվ Լուկուլլոսի Եփեսոսում կազմակերպած հանդեսները՝ պիտի վստահություններ չնշած լինեին Տիգրանին, որ պատերազմի վտանգը հռոմեացիների հետ կարելի է համարել կանխված: Ոչնչով և նա ոչ միայն չէր նախապատրաստվում պատերազմի, այլ, ընդհակա-

ռազը, անհուգ ու հանգիստ զբաղված էր Տիգրանակերտ քաղաքի շինարարության ավարտման աշխատանքներով:

69 Թվի վարնանը Լուկուլլոսը իր անձնական նախաձեռնութեամբ ու պատասխանատվութեամբ սկսեց հայկական արշավանքը:

Ինչպես հաղորդում է Սալլուստիոսը¹, ամենաարագ երթերով նա անցավ Կապպադոքիկիայի միջով և շտապեց դեպի Նիւրատ գետը, որը բաժանում էր Հայաստանին կցված հին Մոփղը Արիոբարզանի Թագավորութիւնից: Այստեղ Մելիտենի մոտ² Կապպադոքիկիայի Թագավորը ծածկաբար պատրաստել էր տվել ձմեռվա ընթացքում լաստանալներ, որոնցով Լուկուլլոսը հեշտութեամբ անցավ Նիւրատ գետը և դուրս եկավ Մոփղ: Որ Լուկուլլոսը Նիւրատ գետն անցել էր Թաքուն ու անակնկալ կերպով՝ այդ բացի Սալլուստիոսից՝ փկայում է նաև Մենոնը³:

Մեջ բերված այս տեղեկութիւնները, որոնք պատմական են և միանդամայն արժանահավատ՝ լուրթյան են տրված Պլուտարքոսի կողմից, որը պարզապես աշխատել է սքողել այս արշավանքի զաղտադողի ու ելուզակային բնութիւնը: Այս տեղեկութիւնների փոխառնն, որոնք հայանի են եղել իրեն Ասալուստիոսի պատմական երկից՝ Պրուտարքոսը տալիս է հրաշքներով ի հեքիաթական մի պատմութիւն: Նրա պատմելով, երբ Լուկուլլոսը հասավ Նիւրատի ափը՝ հորդացած գետը, խոնարհվելով նրա առջև, ցամաքեց ու ճանապարհ տվեց հռոմեական զորքին:


Նիւրատ գետն անցնելուց հետո հռոմեական զորքն առաջ շարժվեց և դարձյալ արագացրած երթով դնաց Մոփղի միջով դեպի Տիգրիս գետը, նպատակ ունենալով հանկարծակիի բերելու Տիգրանին և անակնկալ կերպով հարձակվելու Տիգրանակերտ քաղաքի վրա: Մոփղի բնակչութիւնը ո՛չ միայն ցույց չէր տվել որևէ դիմադրութիւն, այլ, ըստ երևույթին, ինքը հոգարակամ հնազանդվել էր Լուկուլլոսին և, հայթայթելով հռոմեական բանակին անհրաժեշտ պարեն՝ մեծապես հեշտացրել էր նրա առաջխաղացումը դեպի Տիգրանակերտ:

Արշավող զորքի ճանապարհի ուղղութիւնը Նիւրատ գետից մինչև Տիգրիս գետը որսումագիտական երկերում որոշված է

¹ Sbn fr. IV, 11 (Leipzig, 1855):

² Համեմատե Tacitus, Annales, XV, 26—27:

³ Memnon, 56:



Լուկուլլուսի ճանապարհը Մուսլի վրայով դեպի Տիգրանակերտ

միանգամայն բավարար ճշտությամբ: Լուկուլլոսի երթուղու
այս մասը ենթադրում են այժմյան Պարբերդի դաշտի միջով ու
Արդանայի վերայով գետի Տիգրիս գետն Ամիդ—Դիարբեքիւրի մոտ.
ուրեմն՝ այն հին ճանապարհադժով, որն Աքեմենյան Պարսկաս-
տանի քարքայական ճանապարհին մի մասն էր և համապա-
տասխանում էր Պեվտինգերյան քարտեզում նկարագրված Meli-
tene-ad Tygrem ուղեգծին:

Տիգրիս գետից մինչև Տիգրանակերտը (այժմյան Փարկինը),
ուր շտապում էր հասնել հռոմեական զորքը, ընդամենը միայն
մոտ 150 կիլոմետր էր: Լուկուլլոսի նենդ ու խորամանկ ծրագի-
րը իրականանում էր, ինչպես տեսնում ենք, ամենամեծ աջո-
ղությամբ: Թշնամին կիսով մոտեցել էր Տիգրանակերտին և ահա-
վոր վտանգը կախված էր 'արդեն Հայաստանի դիմին, իսկ Տիգ-
րանը գետ ոչինչ այդ մասին չգիտեր և ո՛չ զորք էր հավաքել
և ո՛չ էլ կարող էր որեւէ կերպ սպառնացող այդ վտանգը կան-
խել:

Հռոմեական զորքի անակնկալ ներխուժման լուրը թվաց
Տիգրանակերտում միանգամայն անհավաալի: Ապպիանոսի վը-
կայությամբ՝ Տիգրանն այդ լուրը տարածողին համարել էր
դրդուիչ ու խռովարար և հրամայել էր կախաղան հանել:

Լրաբերի հաղորդած տեղեկության հաստատումն առաջ բե-
րեց Տիգրանակերտում շփոթություն ու իրարանցում: Տիգրանը,
որը պաաերադմի պատրաստություններ դեռ չէր տեսել՝ ստիպված
եղավ մասնակի կերպով քաղաքը դատարկել և հեռանալ ապա-
հով մի տեղ: Որպեսզի կարողանա ժամանակ շահել՝ նա իր զո-
րավարներից մեկին, Մեհրուժանին, տվեց մի փոքր զորամաս՝
ընդամենը՝ երկու հազար հեծելազոր՝ և հրամայեց, որ նա,
ինչ գնով էլ որ լինի, կանգնեցնե դռնե ժամանակավորապես
թշնամու շարժումը դեպի Տիգրանակերտ:

Մեհրուժանի զորամասի հռոմեական զորքի դեմ ուղարկման
մասին միանգամայն վստահելի ու արժանահավատ տեղեկու-
թյուն է հաղորդում դարձյալ Ապպիանոսը, որն, ինչպես վերև
ասացինք, իր պատմության այս մասում օգտվել էր փոքրասլա-
կան չեղդե աղբյուրից:

1 Տես իմ աշխատությունը «О торговле и городах Армении», 48
14—15:

2 App., Mithrid., 84:

3 Նույնը, 84:

«Երբ Տիգրանը այնուհետև — վկայում է Ասպիանտսը¹, — հաստատ իմացավ [Լուկուլլոսի ներխուժման մասին], նա ուղարկեց Մեհրուստանին երկու հազար հեծելազորով, որ պեսդի նա ուչացնե Լուկուլլոսի դրոշը»:

Պլուտարքոսը տալիս է նաև տեղեկություն Մեհրուստանի հերոսական մահվան մասին հանդուգն ու անհավասար կռվում: Սակայն թեև նրա այս վկայությունների հիմքը պատմական է, բայց որոշ մանրամասնություններ հնարովի ու անհեթեթ հերոսաբանքներ են, որոնց միջոցով նա աշխատում է ըստ իր սովորություն անվանարկել Տիգրանին: Այնքան մի անհեթեթություն է, անշուշտ, Պլուտարքոսի հաղորդած սարքովի տեղեկությունը, որ իբր թե Մեհրուստանի փոքրաթիվ զորքին հրաման էլ տրված կենդանի բռնել Լուկուլլոսին և ոչնչացնել հռոմեական հազարն զորաբանակը:

Լուկուլլոսի սրընթաց շարժումը դեպի Տիգրանակերտ սուղացրել էր այստեղ, ինչպես ասացինք, խուճապ ու չփոթ: Տիգրանի փախուստը քաղաքից կատարվել էր այնքան արագ ու հապճեպ, որ նա չէր կարողացել հետը վերցնել իր կանանոցն ու դանձերը:

Նահանջելով Տավրոսյան լեռներով², հավանորեն, այժմյան Ներջիկի և Շենիկի վրայով դեպի իր թագավորության կենտրոնական ու հյուսիսային շրջանները՝ Տիգրանակերտի պաշտպանությունը Տիգրանը հանձնարարել էր Մանկայոս զորավարին: Սա սխալ է ղեմադրեր ու պահեր քաղաքը, մինչև որ ինքը զանազան կողմերից հիսպալքեր իր զորքերը և կղար նրան օդնություն:

Տիգրանակերտի բերդապահ զորքը բաղկացած էր, ղլխավորապես, հույներից և կիլիկիցիներից: Ըստ երևույթին, այս զորքը կազմված էր Տիգրանակերտի քաղաքացիական իրավունքներ ստացած նորաբնակներից, որոնց այստեղ էր դադթեցրել Տիգրանը Կիրիկիայից և Կապպադոկիայից:

Հռոմայեցիների բոլոր ջանքերը գրավելու քաղաքը զրոհով և պատերազմական մեքենաների օդնությամբ մնացին ասլարդյուն ու անհետևանք: Մանկայոսի ազաջնորդությամբ բերդապահ զորքը համառ ու տոկուն կերպով ղեմադրում էր հռոմայեցիներին, թափելով նրանց ղլխին նետերի տարալու: Իսկ պա-

¹ Նույնը, 84:

² Plut., Lucul., XXV, 7:

չարման մեքենաների վրա պաշարվածները վերևից ածում էին այրվող նավթ, որը ոչնչացնում էր մեքենաները:

Այսպիսով ամիսներ շարունակ Տիգրանակերտը մնաց կանգուն ու անպարտելի մինչև Տիգրանի վերադարձը նոր կազմված զորաբանակով:

Ուշագրավ է ու հետաքրքիր, որ Պլուտարքոսը ավելորդ է համարել մատնանշել հռոմեական զորքի սկզբնական այս անաջողութիւնը: Նա ոչինչ չէ հաղորդում նաև հայկական հեծելազորի աջող ու հաղթական այն դրոշի մասին, որ հանդամա-



Տիգրան Երկրորդ

նորեն հիշատակված է եղել փոքրասիական չեզոք աղբյուրներում, որոնցից լայնորեն օգտվել էին Մեմնոնը և Ապպիանոսը:

Այս արժանահավատ աղբյուրներից հայտնի է¹, որ Տիգրանակերտի պաշարման սկզբներում Տիգրանն այստեղ ուղարկել էր մի ընտիր հեծելազունը, որին հանձնարարել էր պաշարված քաղաքից ազատել իր կանանոցն ու մեծագին գանձերը: Սրանք դալով այնտեղ և, կտրելով նետաձգությամբ հռոմեական ճամբարից դուրս գալու ճանապարհը՝ դուրս բերին քաղաքից գիշե-

¹ See Memnon, 56 և App., Mithrid., 85:

րով Տիգրանի կանանոցն ու թանկագին ամենաարժեքավոր իրերը:

Մեմնոնը և Ասպիանոսը, հենվելով պարզասրեա փոքրասիական չեղոք աղբյուրների վրա՝ հաղորդում են նաև, որ Տիգրանակերտից հեռանալուց հետո, 69 թվի դարնանը և կամ ամառը, Տիգրանը հրավիրել էր իր մոտ Միհրդատին: Չնայած սա-
փայն այս միանշամայն արժանահալատ վկայությանը՝ բոլոր պատմադեպերը դերադասություն են տվել Պլուտարքոսի անդեկություններին, որը հաղորդում է, որ իբր թե Միհրդատի և Տիգրանի հանդիպումը տեղի էր ունեցել դեռ Լուկուլլոսի ար-
շավանքից առաջ և իբր թե նրանք, խորհրդակցելով իրտր հետ՝ որոշել էին Կիլիկիայի և Լիկաոնիայի վրայով ներխուժել հու-
մեական փոքր Ասիա¹:

Պատմադեպերը ուշադրության չեն առել, որ Պլուտարքոսը և կամ նրա սկզբնաղբյուրը դիտավորյալ կերպով խարդախել են պատմական իրական եղելությունը, որպեսզի թաքցնեն Լուկուլլոսի արշավանքի նենդ ու անիրավ բնույթը և ցույց տան, որ Տիգրանն ու Միհրդատը, դեռ Լուկուլլոսի արշավանքը չսկսած՝ իրար հետ դադանի բանակցություններ էին վարել և իրենք հենց նախապատրաստել էին ու սկիզբ դրել պատերազմական դործողություններին:

Որ Տիգրանի ու Միհրդատի տեսակցության մասին մեր նոր րացատրությունը միանշամայն ստույգ է՝ այդ պարզ ցույց է տալիս նաև ներքև մեջ բերված Մեմնոնի մի այլ կարևոր ցուցումը, որը բավարարաչափ քննված ու օգտադործված չէ եղել պատմադիտական նախորդ երկերում:

«Միհրդատը, — պատմում է Մեմնոնը, — մնալով մեկ տա-
րի ու ութն ամիս Հայաստանի կողմերում՝ դեռևս չէր ներկայացել և չէր տեսնվել Տիգրանի հետ: Եվ երբ Տիգրանը խնդրեց, որ Միհրդատը իրեն տեսության դա՝ նա նրան ընդունեց չքով և արժանի համարեց թագավորավայել պատիվ-
ների: Մոտ երեք օր նա դադանի խորհրդակցություն ունեցավ Միհրդատի հետ և ապա բարեկամաբար նրան պարզեց փարթամ զգեստներ, տվեց տասը հազար հեծելազոր և ու-
ղարկեց Պոնտոս»²:

¹ See Plut., Lucul., XXIII, 6:

² Memnon, 55:

Մեմֆոնի այս վկայութեան համաձայն Տիգրանի տեսակցութեանը Միհրդատի հետ տեղի էր ունեցել վերջինիս Հայաստան դալուց քսան ամիս հետո: Արդ՝ վերև մենք տեսանք, որ Միհրդատը Հայաստան եկել էր 71 թվի աշնանը¹, ուրեմն նրա տեսակցութեանը Տիգրանի հետ, համաձայն Մեմֆոնի այդ վկայութեան, պետք է տեղի ունեցած լիներ ոչ թե պատերազմից առաջ, այլ պատերազմը սկսվելուց հետո՝ 69 թվի դարնան վերջերին կամ ամառվա ամիսներին:

Որ Տիգրանը միայն այժմ, մոտ երկու տարուց հետո միայն, թաղավորական շքով ընդունեց Միհրդատին՝ այդ միանգամայն հասկանալի է, որովհետև Լուկուլլոսի անսպասելի արշավանքից և պատերազմը սկսվելուց հետո Տիգրանի դժուշակի որ դուստ դիրքը Հոմֆի հանդեպ, ինչպես և նրա չեղոքութեանը, որով նա մտածում էր պատերազմից խուսափել՝ կորցնում էին այլևս իրենց խմաստը: Եվ բնական է, որ նա միայն այժմ, հասկացած լինելով իր քաղաքական սխալը՝ կարիք ունենա Միհրդատի օգնութեան և դործակցութեան:

Տիգրանակերտ քաղաքը, որը պաշարված էր 69 թվի դարնանը՝ համառորեն դիմադրեց հռոմայեցիներին, սպասելով որ իրեն օգնութեան կպա Տիգրանի նոր կաղմակերպված բանակը: Իսկ այդ ժամանակ Տիգրանը հետզհետե իր զորքերը հավաքեց զանազան շրջաններից, նաև իրեն ստորադրված վասսալական թաղավորություններից և իշխանութիւններից: Նրան օգնութեան եկան, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը², Ատրպատականի ու Ադիաբենի թագավորները, նաև դորամասեր Աղվանքից, Վրաստանից, Արարիայից և ուրից երկրներից:

69 թվի աշնանը Տիգրանը և նրա զորաբանակը ճանապարհ ընկան և Տափրոսյան լեռներով իջան հարավ ազատելու պաշարված Տիգրանակերտը: Տիգրանի այս ճանապարհի էջհարդը հիմադրում է Մշո դաշտից դեպի այժմյան Ներջիկ և այնտեղից դեպի ձախ շեղելով՝ Բատման-սուլի ձախ կողմով մինչև Փարկին-սուլի և Բատման-սուլի գետախառնուրդը³:

Հենց՝ նույն այս ժամանակ Տիգրանի մոտ եկան, ինչպես վկայում են Մեմֆոնը և Պլուտարքոսը, Միհրդատի ուղարկած

¹ Համեմատե հաւ Reinach, Mithridate Eupator, էջ 348:

² Phil., Lucul., XXVI, 6:

³ See Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, B. X, Heft 1, էջ 94:

պատդամափորութիւնը և նրա հմուտ ու փորձված զորավար Տաքսիլեսը։ Սրանք նախազգուշացրին Տիգրանին, որ նա խուսափեւ վճռական պատերազմից, որովհետև հռոմեական մշտական ու մարզված զորքը զրեթե անպարտելի է։ Նրանք խորհուրդ տվին, որ նա արգելեւ, ըստ կարելույն, հռոմեական զորքի պարենավորումը և նրանց մատնեւ սովածութեան։ Սակայն Տիգրանին զփար էր հետեւել այդ խորհուրդներին, որովհետև նա, ըստ երևույթին, չէր ուզում և չէր կարող, երկարացնելով պատերազմը՝ զոհ բերել Տիգրանակերտ քաղաքը, որը կարիք ուներ շտապ ու անհասկաղ օգնութեան։

Հելլենիստական այս նոր քաղաքի կառուցման վրա, որ կուլտուրական մեծ ու հոյակապ մի գործ էր՝ ծախսված էին ու գործադրված հսկայական միջոցներ ու աշխատանք։ Այս քաղաքը, համաձայն Տիգրանի ծրագրի, լինելու էր նրա պետութեան լուսատու կենտրոնը և հետզհետեւ հեղաշրջելու և նորոգելու էր նրա հայրենի երկրի հետամնաց նահապետական կյանքը։

Տիգրանակերտը, ինչպես ասացինք, նպատակու էր նաեւ ասեւտրի ու արդիւնաւործութեան զարգացմանը Հայաստանում և օժանդակելու էր նույնպեւ հելլենիստական քաղաքակրթութեան և հելլենական արվեստի ու գիտութեան տարածմանը։ Պարզ է, ուրեմն, ու հասկանալի, թե ինչո՞ւ Տիգրանը չհետեւեց Միհրդատի ու նրա զորավարի խորհրդին և, օգնութեան շտապելով Տիգրանակերտին՝ ուղեց դադարեցնել նրա պաշարումը։

Ուշագրաւ է, որ Լուկուլլոսն ինքը ևս, ինչպեւ վկայում է Պլուտարքոսը¹, պաշարելով Տիգրանակերտը՝ հասկացել ու նախատեսել էր, որ Տիգրանը չէ կարող այդ հանդուրժել և անպայման դալու է և ճակատամարտ է տալու իր նոր մայրաքաղաքը փրկելու համար։

69 թվի հոկտեմբեր ամսի սկզբներին Տիգրանի զորարանակր մոտեցաւ Տիգրանակերտին, և ընդհարումը հռոմայեցիներին հետ դառաւ անխուսափելի։

Տիգրանակերտի ճակատամարտը տեղի էր ունեցել, ինչպեւ նրեում է սկզբնաղբյուրների վկայութիւններէց՝ Նիկեփորիոն (Ֆարկին-սու) գետի մոտ, որից մոտավորապեւ 750 մետր հեռավորութեան վրա գտնվում էր մի ցած բլրակ։

Հիմնվելով աղբյուրների և, գլխավորապեւ, Պլուտարքոսի

¹ Plut., Lucul., XXVI, 4.

նկարագրութեան ու ցուցումներէ վրա՝ ճակատամարտի տեղը գերմանական զինական Բեյլը որոշել է Ֆարկին քաղաքի հարավ-արեւելքան շրջանում, այժմյան Ֆարկին-սուրի և Բատման-սուրի միավորման մոտ գտնվող ձորադաշտում:

Հռոմեական զորքի թիվը Տիգրանակերտի կռիւում հռոմեական աղբյուրները ցույց են տալիս, ընդամենը՝ մոտ 15000: Իսկ Տիգրանի զորքի թիվը Պլուտարքոսը և Ապպիանոսը հաշվում են մոտ 300·000: Հենվելով այդ թվական տվյալների վրա՝ Մոմզենը, և նրան հետեւելով նաև ուրիշ պատմադետներ՝ Տիգրանի զորքի թիվը համարել են հռոմեական զորքի թվից քսան անգամ ավելի¹:

Սակայն պատմադիտական ավելի նոր ուսումնասիրութուններում, օրինակ, Ռեյնաքի, Ֆեոեոյի, Էջարդի երկերում՝ Պլուտարքոսի վկայութիւնը, հատկապես, Տիգրանի զորքերի թվի մասին համարվում է ակներև մի չափազանցութիւն² և դերադասութիւն է տրվում փոքրասիական չեղոք հեղինակների, Մեմոնի և Փլեգոն Տրալլացու վկայութիւններին, ըստ որոնց հայ բանակի զորաթիվը ցույց է տրված 70·000 կամ 80·000³: Որ այս վերջին թվերը նախընտրելի են, այդ, իհարկե, անտարակուսելի է, որովհետև, ինչպես հայտնի է, հռոմեական զորավարներն իրենց պաշտոնական ղեկուցադրերում թշնամու քանակի մասին տալիս էին միշտ չափազանցված ու սուտ տեղեկութիւններ:

Հռոմեական զորքի թվի նկատմամբ բոլոր պատմադետները համամիտ են և Տիգրանակերտի կռիւին մասնակցողների ընդհանուր թիվը ենթադրում են 14·000—15·000: Սակայն, ինչպես շատ ճիշտ նկատել է Աստուրյանը⁴, պատմաբանները աչքաթող են արել, որ հռոմեական աղբյուրները մատնանշել են միմիայն հռոմեական զորքի թիվը, բայց չեն հիշատակել Հռոմի դաշնակիցների փոքրասիական զորքերը: Իսկ որ այդ օգնական զորքերը դործոն մասնակցութիւն էին ունեցել հայկական

¹ Համեմատե՛ Մоммсен, Римская история, III, էջ 57, Нич, История римской республики, Москва, 1908 և ուրիշները:

² See Reinach, Mithridate Eupator, էջ 360, Ферреро. Величие и падение Рима, I, էջ 182, Eckhardt, Klio, Bd. X, 1, էջ 96—100:

³ Memnon, 57 և Phlegon, fr. 12, Müller, Fr. Hist. gr., III, 606:

⁴ Քաղաքական վերաբերութիւններ ընդէջ Հայաստանի և Հռոմայն, էջ 338—343:

կոնվներին՝ այդ երեւում է հենց իրենց իսկ հռոմեական կամ նաև այլ աղբյուրներից:

Օգնական այդ զորքերը, որոնցից որոշակի հիշատակված են գալատացիները, թրակացիները և բյութանացիները՝ կաղմում էին, ըստ երևույթին, Լուկուլլոսի զորաբանակի նշանաւոր մասը: Ուստի և մենք սխալված չենք լինի, եթե Լուկուլլոսի ամբողջ զորքի թիւն ընդունենք Տիգրանակերտի ճակատամարտում ո՛չ թե մոտ 15·000, այլ ավելի քան 30·000:


Այսպիսով հռոմեական ու հայկական բանակների վերահիշյալ մեկ առ քսան հարաբերութիւնը, ինչպես տեսնում ենք, ակներև մի սխալ է: Ընդունելով, որ օգնական դաշնակից զորամասերի թիւը պակաս չէր լինի հռոմեական զորքի թիւից՝ դժվար չէ համոզվել, որ Տիգրանի զորքը կարող էր Լուկուլլոսի զորքից ավելի լինել ո՛չ թե քսան, այլ առ առավելն երկու անգամ:

Տիգրանակերտի ճակատամարտը տեղի ունեցաւ, ինչպես հայտնի է, 69 թվի հոկտեմբերի 6-ին: Մեծ այդ ճակատամարտի մասին մեր ձեռքը հասել են երկու տարբեր հաղորդագրութիւններ, որոնք հիմնված են երկու տարաձայն ավանդութիւնների վրա՝ հռոմեական և փոքրասիական: Հռոմեական ավանդութիւնը պահպանված է, գլխավորապես, Պլուտարքոսի մոտ, որն օգտվել էր Սալլուստիոսի և Տիտուս Լիւիոսի պատմական երկերից, իսկ փոքրասիականը՝ Ապպիանոսի մոտ, որը Լուկուլլոսի արշավանքներին վերաբերող տեղեկութիւնները քաղել էր, գլխավորապես, փոքրասիական հելլենական որևէ աղբյուրից, թերևս, ինչպես ենթադրում է Ռեյնալդ¹, Նիկողայոս Դամասկացու Պատմութիւնից:

Պլուտարքոսի մոտ ճակատամարտի մանրամասն նկարագրութիւնը համեմված է այնպիսի թատերական ու դրամատիկական միջադէպերով, որոնք ըստիս հայկական ցուցանիշներ են համապատասխան այդ հատվածների անհավաստութիւն: Նման կասկածելի զրույցներից է, իմ կարծիքով, ճակատամարտի նկարագրութիւնը հենց սկզբում տրված նրա հետևյալ տեղեկութիւնը: Ծակատամարտը զեռ չսկսված, պատմում է Պլուտարքոսը², երբ Լուկուլլոսի զորքը բանակ էր դրում գետի մոտ՝ Տիգրանը, տեսնելով փոքրաթիւ այդ զորքը՝ հեղնանքով րացա-

¹ S&u Mithridate Eupator, էջ 443—449:

² Phil., Lucul., XXVII, 4:



Տիգրանակերտի նակասամարքը ըստ Ալպայիանուի:

դանչել էր, — «Եթե դրանք իբրև դեսպաններ են եկել՝ շատ են, իսկ եթե իբրև ղեկավորներ՝ քիչ են»։ Այս վկայութիւնը, իհարկե, չէ կարող ճշտ լինել, որովհետև Պլուտարքոսի մասնաշնչած հռոմեական ու հայկական զորքերի վերահիշյալ թվական հարաբերութիւնը, ինչպես տեսանք, չափազանցված ու սխալ է։

Մյուս օրը լուսաբացին, պատմում է այնուհետև Պլուտարքոսը՝, դետն անցնելուց հետո՝ Լուկուլլոսը հրամայեց թրակական ու դալատական հեծելազորին, որ նա կողքից հարձակվի թշնամու զրահավոր հեծելազորի վրա, որը դառնում էր աջ թևովում։ Իսկ ինքը, իր հետ փերցնելով երկու վաշտ հետևազոր՝ մերկացրած սուրբ ձեռին պնաց թշնամիների դեմ ձեռնակովի։ Բայց տեսնելով, որ Տիգրանի զորքերի թիկունքում դառնում է մի բլուր, որը կարևոր դիրք է՝ շտապեց գրավել այդ բլուրը։ Այստեղից նա ինքը ևս իսկույն հարձակվեց զրահավոր հեծելազորի վրա ետևից։ Եվ ծանրաշարժ այս ձիավորները, չկարողանալով դիմանալ հռոմայեցիների հարձակմանը թիկունքից ու աջ թևից՝ անկարգ կերպով մատնվեցին փախուստի և իրենց ձիերի հետ միասին ընկան խոնաված ու խուճապի մատնված հետևակ զորքի վրա։ Այսպիսով Տիգրանի ամբողջ զորքը սլարութիւն կրեց առանց ճակատամարտ տալու։

Ապպիանոսի թված ճակատամարտի նկարագրութիւնը բոլորովին տարբեր է։ Համաձայն նրա հաղորդած տեղեկութիւնների՝ Լուկուլլոսը ճակատամարտի սկզբում հրամայել էր իր հեծելազորին նեղել թշնամուն ճակատի կողմից և, կեղծորեն ետ փախչելով՝ նրան հեռացնել ու ցրել։ Իսկ ինքը դադարաբար անցել էր իր հետևազորի հետ թշնամու թիկունքը և բարձրացել մոտակա բլուրը, որի ստորոտում դառնում էր թշնամու գրաստադումակը։ Հարձակվելով այդտեղից գրաստադումակի վրա՝ նա փախուստի էր մատնել սրան և ձգել հետևազորի վրա, որը բոլորովին բարոյաւթված ընկել էր իր հերթին հեծելազորի վրա։ Այսպիսով Տիգրանի ամբողջ զորքը սլարութիւն էր առանց մարտի թռնվելու։

Պատմագիրտական երկերում արժանահավատ է ընդունվում Պլուտարքոսի վկայութիւնը։ Մինչդեռ միանգամայն ըստիս հավատալի է ու հնարավոր, որ Լուկուլլոսը կարող էր, իրա-

1 Նույնը, XXVII, 7—9 և XXVIII, 1—9.

2 App., Mithrid., 87.

պէս, Տիգրանին խաբելու համար նրա դեմ ճակատի խողմից՝ ուղարկած լինել միմիայն իր խրադաչարժ հեծելազորը, իսկ ինքը, վերցնելով հռոմեական ամբողջ հետեազորը, դեռ ուղղադաշտ չհասած՝ կարող էր անցած լինել Թշնամու Թիկունքը և հարձակված լինել զրաստադումակի վրա, ինչպես այդ վկայում է Ապպիանոսը: Եթե հռոմեական սկզբնաղբյուրները չեն հիշատակում Տիգրանի զրաստադումակը և Լուկուլլոսի ու հռոմեական ամբողջ հետեազորի հարձակումը գումակի վրա՝ այդ բացատրվում է, հավանորեն, նրանով, որ այդ գործը չէր կարող համարվել քաջարի ու առանձնապես զատվաբեր մի գործ:

Լուկուլլոսի հաղթության բացառիկ ու առանձնահատուկ բնույթը մատնանշված է նաև Սալլուստիոսի հատվածներից մեկում: Միհրդատի Պարթևաց Թագավորին գրած նամակում, որ մանրամասն մեջ է քննված նրա մոտ՝ Տիգրանակերտի ճակատամարտին ևն վերաբերում հետևյալ տողերը:

«Որովհետև թեղի նեղվածությունը, — ասված է Միհրդատին վերադրված այդ նամակում, — զորքի բազմությանն արգելք էր հանդիսանում ճակատամարտ տալու՝ Տիգրանի անխոհեմությունը նրանք [հռոմայեցիները] ցուցադրում են իբրև հաղթութուն»¹:

Տիգրանի զորքերի կորուստների մասին հռոմեական հեղինակների տեղեկությունները հիմնապես հակասում են դարձյալ փոքրասիական չեզոք աղբյուրների վկայություններին: Այդ կորուստների մասին Պլուտարքոսը, հավանորեն, համաձայն Լուկուլլոսի պաշտոնական տեղեկադրի՝ տալիս է միանգամայն սուտ ու չափազանցված թվեր: Նրա ասելով՝ Տիգրանի հետեւազորից կոտորվել էր ավելի քան 100.000 մարդ և հեծելազորից շատ քչերն էին խղատվել. իսկ հռոմայեցիներից վիրավորվել էին 100 մարդ և սպանվել 5 մարդ: Ինչպես հայտնի է, նման սուտ թվեր սովորական էին նաև Սուլլայի պաշտոնական ղեկուցադրերում: Քերոնեսայի 67 թվի ճակատամարտում պոնտական զորքերի կորուստը նա ևս ցույց էր տվել 60.000 մարդ, իսկ հռոմայեցիներին՝ ընդամենը 14 մարդ:

Թե ի՛նչ արժեք ունեն հռոմեական զորավարների ինքնապարծ ու սուտ հաշվետվությունները՝ այդ շատ լավ գիտեն բոլոր պատմագետները: Ուստի և նրանք ևս հավատ չեն ընծայել վերոհիշյալ թվերին:

¹ See Salust., IV, fr. 69:

Ռեյնաքը և նրա հետևողները՝ Գարադաշյանը և ուրիշները՝ գերադասել են Օրոսիուսի տված տեղեկությունը¹, որի համաձայն սպանվածների թիվը հայ զորաբանակից ցույց է տրված ընդամենը 30.000 մարդ։ Սակայն այս տեղեկությունն ևս, որը հիմնված է դարձյալ հռոմեական աղբյուրների, հավանորեն, Տիտուս Լիվիուսի հաղորդագրության վրա՝ չէ ընդունում էջհարդը²։ Սրա կարծիքով, իրականին կարող է համաստատախան լինել ավելի շուտ փլեգոն Տրալլացու վկայությունը, որի մոտ Տիգրանի զորքի ամբողջ կորուստը ցույց է տրված մոտավորապես 5000 մարդ³։ Այս լիռքը թիվն ինձ ևս ավելի ստույգ ու գերադասելի է թվում, որովհետև փլեգոնի տեղեկությունը ակներևաբար քաղված է փոքրասիական չեղոք աղբյուրից։ Մոմզենը⁴ ևս վերոհիշյալ չինձու թվերը թիված ու հերյուրված է համարում Սուլլայի հատուկ ոճով։

Տիգրանի կրած պարտությունը Տիգրանակերտի մոտ, ինչպես թանրամասն մատնանշված է իմ «Տիգրան Բ-ը և Հռոմը» ուսումնասիրության մեջ՝ խիստ չափազանցված է թե հռոմեական աղբյուրներում և թե պատմագիտական նորագույն երկերում։ Այս ճակատամարտը, իրապես, ո՛չ թե իսկական արյունահեղ դիմամարտ էր, այլ խուճառ և փախուստ առանց կռվի։

Խիստ ծանր էին սակայն այս պարտության հետևանքները Տիգրանի նորաստեղծ պետության համար։ Պարտության դրլխավոր հետևանքը եղավ Տիգրանակերտ քաղաքի կորուստը և հայկական մեծ պետության քայքայումը։

Հոկտեմբերի 6-ի ճակատամարտից հետո Լուկուլլոսը, ապահոված յինելով իր թիկունքը՝ կարող էր Տիգրանակերտի պաշարումն աներկյուղ ու համարձակ շարունակել։

Այս քաղաքը, որը Մանկայոսի առաջնորդությամբ մոտ հինգ ամիս արիարար դիմադրել էր հռոմայեցիներին՝ այլևս չէր կարող որևէ օլնություն ակնկալել արքայական բանակից և Ջնայած դրան՝ նա անձնատուր չեղավ և համառորեն շարունակեց կռվել թշնամու դեմ։ Եվ եթե հռոմայեցիներին, այնուա-

¹ Տես Orosius, Historia adversus paganos, VI, 3, 6, նաև Reinach, Mitridate Eupator, էջ 362 և Գարադաշյան, Քննական պատմություն, Բ., էջ 145:

² Տես Klio, Bd. X, 1, .

³ Տես fr. 12, Müller, Fr. Hist. Gr., III, էջ 606:

⁴ Տես Римская история, III, էջ 57:

մենայնիվ, հաջողվեց շուտով Տիգրանակերտը զբաղել առանց արյունահեղ ընդհարումների ու մեծ կորուստների՝ դրա պատճառը, ինչպես միաձայն վկայում են հունահռոմեական աղբյուրները՝ հույն վարձկան ղեկավարների ապստամբութունն էր ու դավաճանութունը։ Հռոմայեցիները, յիշելով Տիգրանակերտ՝ անխնա կողոպտեցին քաղաքը։ Պլուտարքոսի պատմելով՝

«Լուկուլլոսը ինքը զբաղել էր նրա մեջ գտնվող դանձերը, և քաղաքը, որը բացի այլ հարստություններից ուներ նաև ութը հազար տաղանդ զբամով, տվել էր կողոպտելու գին-վորներին։ Բացի այդ, պատերազմական ավարից ևս նա տվել էր նրանցից ամեն մեկին ութհարյուրական զրաքման»։

Այս մեծ դամարները ցույց են տալիս, որ Տիգրանակերտը, չնայած որ նոր էր հիմնված՝ ուներ իր մեջ՝ անչափ մեծ հարստություններ։

Տիգրանակերտում, ինչպես վկայում է դարձյալ Պլուտարքոսը, իր նորակառույց թատրոնի բացման համար Տիգրանը հավաքած է եղել բաղամթիվ հույն դերասաններ։ Սրանք այժմ օդաազործվեցին Լուկուլլոսի հաղթությանը նվիրված հանդեսների և թատերախաղերի համար։

Տիգրանակերտի անկումովը մահացու հարված ստացավ Տիգրանի ծրագրած ու սկսած այն առաջադիմական մեծ դործը, որի նպատակն էր զարգացնել հետամնաց Հայաստանում հելլենական քաղաքային կուլտուրան և հելլենիստական քաղաքակրթութունը։ Լուկուլլոսն իրենց հայրենի քաղաքներն ու երկիրներն ուղարկեց հույներին ու օտարականներին, որոնց, ինչպես վերև տեսանք, վերաբնակեցրել էր Տիգրանն իր նորակառույց մայրաքաղաքում։

Տիգրանի աշխարհակալ մեծ պետության համար Լուկուլլոսի հաղթությունը և Տիգրանակերտի առումն ունեցան քաղաքական խիստ ծանր հետևանքներ։ Տիգրանի նվաճած բոլոր երկիրները, որոնք Տավրոսյան լեռնաշղթայից և Տիգրիս գետից դեպի հարավ էին դնում՝ Հյուսիսային Միջագետքը, Կորդուքը, Կոմագենը, Ասորիքը և Արևելյան Կիլիկիան՝ անջատվեցին Մեծ Հայաստանից և ընդունեցին Հռոմի գերիշխանութունը։ Միայն

1 Plut., Lucul., XXIX, 3: Ութ հազար տաղանդն արժաթ զրամով հավասար է մոտ 34 միլիոն գերմանական ոսկի մարկի, այսինքն՝ մոտ 17 միլիոն ոսկի ուոլբու, իսկ ութը հարյուր զրաքման կամ արծաթ դինարը հավասար է մոտ 660 ոսկի մարկի կամ 280 ոսկի ուոլբու, տես Fr. Hultsch, Griechische und römische Metrologie, Berlin, 1882, էջ 297—299 և 711:

2 Նույնը, XXIX, 4:

Միջադեպերի մի մասը և Մծբին քաղաքը մնացին առժամանակ Տիգրանի եղբոր՝ Գուրասի իշխանության տակ:

Տիգրանակերտի անկումից հետո, 69/68 թվին, լուկուլլոսը և նրա ղորքը ձմեռեցին Կորդուքում: Մենք վերև արդեն տեսանք, որ Կորդուքը դավաճանել էր Տիգրանին և դադարի ներպույ՝ համաձայնության էր եկել Ապպիոս Կլավդիոսի հետ ու անցել հռոմայեցիների կողմը: Տիգրանը, որ դեռ լուկուլլոսի արշավանքից առաջ տեղեկություն էր ստացել Կորդվաց Զարքինոս թագավորի դավաճանության մասին՝ հրամայել էր նրան օրի անցկացնել ընտանիքի հետ միասին: Հռոմեական զորքը կարողացավ այժմ հայերին թշնամացած այս երկրում ո՛չ միայն հանդիստ ու աներկյուղ ձմեռել, այլև ստանալ պարենավորում և օգտվել այստեղ եղած հացի առատ պաշարներից:

68—67 ԹՎԵՐԻ ԿՈՒՎՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԿԱՆՈՍԻ ՆԱՀԱՆՋՐ

1. Տիգրանի և Մինդաթի նոր պատերազմի պատաստությունները.—բանակցություններ պարթևների հետ.—պարթևների չեզոքությունը.—հայկական զորքի վերականգնությունը։—2. Սխալ կարծիքներն այս պատերազմի կրոնական կամ համաստիական բնույթի մասին։—3. Լուկուլլոսի հաղթականությունը.—հայկական զորքի պատերազմելու նոր եղանակը։—4. Կռիվները Մոս դառնում և Վանա լճի հյուսիս-ստեղծում։—5. Հռոմեական զորքի ծանր դրությունը.—Արաժանիի նահապետությունը.—հակառակորդի թեղը.—հակառակորդի մասին Պլուտարխոսի և Իսիդորի վկայությունները։—6. Լուկուլլոսի օարժումը դեպի Արաբաս.—հռոմեական զորքի ապստամբությունը.—ապստամբության պատճառը.—Նահանջը դեպի Միջագետք։—7. Մծբինի առումը։—8. Հաղթանակի Հայաստանի և Արևելյան Պոնտոսի տեղադրությունը։—9. Տրիպոլիսի ծանր պարտությունը Զենայի մոտ.—Տիգրանի և Մինդաթի ներխուժումը Կապպադովկիա ու Ռիթանիա։—10. Խուճապը հռոմեական Փոքր Ասիայում։—Պոմպեյոսը՝ բարձրագույն հրամանատար Ասիայում դիվանագետական լիազորություններով։

Տիգրանակերտի մոտ կրած պարտությունից հետո՝ Տիգրանը և նրա անձնակազմը հեծելապետները կարողացան դուրս գալ մարտադաշտից և պառսպարովեցիներն մոտակա մի ամրոցում։

Մեծ էին ու անսահման հուժանաստությունը և լքումը հայկական արքունիքում։ Տիգրանի լայնածավալ պետությունը, որ նա մոտ քսանհինգ տարվա ընթացքում մեծ դժվարություններ էր համախմբել՝ այժմ արդեն կիսով չափ քանդված էր։ Թադավորների թադավորի ու Հայաստանի դեմ շուտով ոտքի կարող էին ելնել բոլոր թշնամիները և, առաջին հերթին, Պարթևական թագավորությունը, որը Տիգրանը հիմնադրելու քայլերից ու նվաճողություններից էր։

Վատությունն այս ծանր ժամին, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը¹, Մինդաթի Եվպատորը շտապեց պնակ նրա մոտ։

¹ Hist., Lucul., XXIX, 1—2; Μεμνηον, 68.

Միհրդատը Տիգրանին քաջալերեց և նրան հուսադրեց ապագային նկատմամբ և այնուհետև նրանք սկսեցին եռանդուն կերպով պատրաստվել նոր պատերազմի, Համաձայն Մեմնոնի և Ապպիանոսի վկայություններին¹, Տիգրանն ուշադրութեամբ առաջ Միհրդատի մեծ փորձառությունը, որ նա ձեռք էր բերել հռոմեական պատերազմներում, և նրան հանձնարարեց թե առաջիկա պատերազմի նախապատրաստումը և թե, ընդհանրապես, ռազմական գործերի ղեկավարությունը:

Արդ՝ Միհրդատը, որն այժմ Տիգրանի թմենամոտ խորհրդատուն էր՝ աշխատեց, թմենից առաջ, հաշտեցնել իր փեսային նրա ոխերով թշնամիներին՝ պարթևների հետ: 70/69 թվին վախճանվել էր Պարթևների Սանատրուկ թագավորը և նրան հաջորդել էր Հրահատ Գ-ը (70/69—57 մեր թվ. առ.): Տիգրանը սրա մոտ ուղարկեց, Միհրդատի խորհրդով, ղեսպաններ, համաձայնեց զիջել նրան բոլոր երկրները, որ ինքն առել էր պարթևներից՝ Միջագետքը, Ադիաբենը և «մեծ հովիտները»² — և խնդրեց միանալ իր հետ ընդդեմ հռոմայեցիներին: Դեսպանները զգուշացրին Հրահատին, որ եթե հռոմայեցիները Տիգրանին հաղթեն՝ նրանք այնուհետև պատերազմ կսկսեն նաև պարթևների դեմ³:

Այս բանակցությունների առնչությամբ Սալլուստիոսի մոտ բերված է Միհրդատի նամակը՝ Հրահատ Գ-ին, որը թեև, իհարկե, վավերական չէ, սակայն այնուամենայնիվ հետաքրքրական է, որովհետև արտացոլում է իր մեջ քաղաքական տիրող տրամադրությունները և հարաբերությունները: Այդ նամակի մեջ Միհրդատը նկարագրում է հռոմայեցիների անզուսպ ու անկասելի առաջխաղացումը դեպի Արևելք, նրանց մեծ կռիվներն իր հետ, նվաճումների և ավազակային կողոպուտների: Նրանց անհաղ ծարավը, որին անխուսափելիորեն զոհ էին դառնալու նաև պարթևները, և աշխատում է Հրահատին համոզել, որ նա իրեն ու Տիգրանի հետ միանա ընդդեմ ընդհանուր թշնամու:

¹ App. Mithrid., 87; Memnon, 58.

² Strabo, XI, 14, 15 (532).

³ Memnon, 58; App., Mithrid., 87.

⁴ Dio Cass., XXXVI, 1, 1—2.

⁵ Sall., IV, frg. 20, Leipzig, 1858.

Պատերազմող կողմերի համար պարթևները բռնելիք դիրքն ունենալ, անշուշտ, մեծ կարևորութիւն ունի։ Ուստի նաև Լուկուլլոսը, լուր ստանալով հայերի բանակցութիւնների մասին պարթևների հետ՝ ուղարկեց Հրահա Գ-ի մոտ իր նոր դաշնակիցներին և աշխատեց նրան դրավել հռոմայեցիներին կողմը։

Խորամանկ պարթևը չմերժեց Տիգրանի ու Միհրդատի առաջարկը, սակայն միևնույն ժամանակ Լուկուլլոսին պատասխան տվեց, որ նրա հետ պատրաստ է կնքել բարեկամական դաշինք։ Շուտով Լուկուլլոսը դաշնադրութեան կնքման համար Տիգրան ուղարկեց իր Անթատիլիոս անդակալին։ Բայց այս վերջինը, որն ավելի ղլնվորական էր, քան դիվանագետ՝ կասկածներ առաջացրեց, որ եկել է իբրև լրտես և աշխատում է ծանոթանալ պարթևական երկրի ու նրա ռազմական ուժերի հետ։ Հրահա Գ-ը, կորցնելով վստահութիւնը գեպի հռոմայեցիները՝ այլևս չուզեց միանալ ու օգնել հռոմայեցիներին և վճռեց չեղոթութիւն պահպանել։ Նրա կարծիքով, եթե պատերազմը երկու կողմերի միջև տեղի ունենար հավասար ուժերով ու առանց իր մասնակցութեան՝ այդ նպաստավոր ու շահավետ իլլիննի հենց իր անվտանգութեան համար։

Պարթևների թաղավորի այս անակնկալ որոշումն ընդունվեց Հայաստանում մեծ դժուրանկութեամբ։ Տիգրանն այժմ կարող էր ուրոշ չափով հույս ունենալ, որ առաջիկա պատերազմի ընթացքում նրա թիկունքը չէր ենթարկվի հարձակման պարթևների կողմից։

69/68 թվի ամբողջ ձմեռը Տիգրանը և Միհրդատը շտապ կերպով պատերազմի պատրաստութիւններ էին տեսնում։ Ներանք չբռնալ էին ամբողջ երկրում և հավաքում էին նոր զորք։ Նրանք պատրաստել էին տալիս զենքեր և ռազմապիտուկներ և մթերում էին հարմար ու ամուր տեղերում ցորենի ու պարենի պաշարներ։

Այսպիսնոսի ասելով, սկզբում Միհրդատը հրամայել էր զինվորադրել բոլոր երիտասարդ հայերին, բայց հետո զինվորութեան համար նրանցից ընտրել էր ամենաուժեղներին։ Հռոմեական զորքի ձևով նա բաժանել էր նոր բանակը ջոկատների ու վաշտերի և հանձնարարել էր իր հետ եկած պոնտական զինվորականներին, որ այդ բանակը վարժեցնեն ու մարդեն հռո-

մեական լեզեոնների նմանութամբ¹։ Նախկին պատերազմների
փորձը համոզել էր նրան, որ արևելյան զորքերի մեծ բազմու-
թյունը ոչ միայն անօգուտ է, այլև արդեւք է հանդիսանում
ռազմունակ զորամասերի մարտական գործողություններին։

Տիգրանի նոր զորաբանակի մեջ բացի հայերից հիշատակ-
ված են նմանապես դաշնակից իբերները, մարդերը և, հատ-
կապես, նաև մեդաքսները, որոնք կոչվում էին Ատրապատական-
նի Միհրդատ թագավորի առաջնորդութամբ, որը Հայոց թա-
գավորի փեսան էր ու հավատարիմ վասսալը։

68 թվի հռոմեական-հայկական պատերազմը Մոմզենը, ինչ-
պես նաև Ռեյնաքը, բնորոշել են իբրև ազգային և կրոնական
պատերազմ միացյալ Արևելքի ընդդեմ Արևմուտքի²։

«Կարինետային պատերազմը, — ասում է Մոմզենը, —
դառնալու էր այժմ ազգային ասիական պատերազմ։ Ասիայի
թագավորները և ժողովուրդները միանալու էին ընդդեմ ա-
մենագոր ու հանդուգն արևմտյան նվաճողների... Այս պա-
տերազմը դժվար չէր ներկայացնել իրրև ազգային կռիվ
Արևելքի ընդդեմ Արևմուտքի, որովհետև պատերազմն ուներ
հենց, իրապես, այդ բնույթը։ Կարելի էր հեշտութամբ
նրան դարձնել նաև կրոնական և տարածել լուր, որ Լուկուլ-
լոսի արշավանքի նպատակն է պարսկական Նանեայի կամ
Անահիտի տաճարի դրավումը Ելլիմայիսում կամ այժմյան
Լուրիստանում։ Այդ աաճարն ամենից շատ մեծարված և
հարուստ սրբավայրն էր Եփրատ գետի ամբողջ առափնյա
չրջանում։ Ասիացիները խմբերով հավաքվում էին մոտից և
հեռվից թագավորների դրոշների տակ, որոնք նրանց կան-
չել էին պաշտպանելու Արևելքը և նրա աստվածներին
անաստված օտարերկրացիներից»։

Մոմզենի այս կարծիքը, որ ընդունելի է համարվել և
մեջ է բերվում նաև բաղմաթիվ այլ երկերում՝ միայն վերջերս
քննության է ստնված ու մերժված էջհարդի աշխատության
մեջ³։ Էջհարդն իրաւացի կերպով մատնանշում է, որ 68 թվին

¹ *Sku App., Mith., 87; Phlegon, Fragin. Hist. Gr., III, էջ 80Ը; Փլեգոնի*
մոտ հայկական բանակի ուսուցումն ըստ նմանության հռոմեական զորքի
սխալմամբ մատնանշված է Տիգրանակերտի ահատամարտից առաջ։

² *Plut., Lucul., XXXI, 9—11:*

³ *Sku M. M. Meuz., Римская история, III, էջ 58—60 և Reinach, Mithri-*
date Eupator, էջ 365:

⁴ *Sku Klio, Bd. X, 2, էջ 195—197:*

Հայերը պատերազմում էին հռոմայեցիներին դեմ, զլլալորապետս, իրենց սեփական ուժերով և ունեին իրենց հետ համեմատաբար ավելի քիչ զաշնակիցներ, քան 69 թվին Արեւելքի մեծագույն մասը, օրինակ՝ Կորդուքը, Մոսիքը, արարները, պարթևները՝ կամ անցել էին հռոմայեցիներին կողմը, կամ մնացել էին չեզոք։ Բացի այդ, ասիացիների կրոնական միությունը ևս, ինչպես իրավամբ նշում է Էջեարդը, թեև կարող է հարմար ուսեղին լինել Իսլամի սրբազան պատերազմներին նկատմամբ, սակայն բնավ ո'չ հին ժամանակների համար, երբ ամեն մի դավառ ուներ իր սեփական կրոնական կենտրոնավայրը։

68 թվի դարնա՛նը Լուկուլլոսը, տեսնելով որ Հայոց Թապալորը ո'չ նոր ճակատամարտ է տալիս, ո'չ էլ խնդրում է նրանից հաշտութուն՝ պատերազմը վերսկսեց ինքը, հույս ունենալով, որ՝ ներս խուժելով ու ավերելով Հայաստանի Հյուսիսային շրջանները և կամ սպառնալով Արտաշատ մայրաքաղաքին՝ կհարկադրեն Հայերին տալ վճարական ճակատամարտ և կկնքեն նրանց հետ վերջնական հաշտութուն։

68 թվի դարնա՛ն վերջերին հռոմեական զորքը թողեց բարեկամ ու դաշնակից Կորդվաց երկիրը, ուր նա լիառատ ապրեց ու հանգիստ ձմերել էր, և ճանապարհ ընկավ Տիգրանակերտի մոտով և Տավրոսյան լեռներով դեպի Մշո դաշտը և Եփրատ—Արածանիի հովիտները։

Երբ 68 թվի ամառը Լուկուլլոսի զորքն իջավ Տավրոսյան լեռներով այժմյան Մշո դաշտը՝ այստեղ, ինչպես վկայում է Պլուտարքոսը, հացարույսերի ցանքերը դեռևս կանաչ էին, մինչդեռ Կորդվաց երկրում, որտեղից հռոմեական զորքը մեկնել էր մի քանի շաբաթ առաջ՝ արդեն հնձի ժամանակ էր։ Հայկական բարձրավանդակի այս հատուկ երևույթը, որ Լուկուլլոսի համար անակնկալ մի նորութունն էր, նրան մեծ անհանգստութուն պատճառեց, որովհետև մեծապես յփառանում էր նրա բանակի պարենավորման դործը։ Անսպասելի էր Լուկուլլոսի համար և խիստ հուսահատեցուցիչ նաև Միհրդատի ու Տիգրանի մարտավարության նոր եղանակը, որը դործադրվում էր այստեղ փորձված ու հնարամիտ Միհրդատի խորհրդով։

Մենք արդեն տեսանք վերև, որ Միհրդատը, որին հանձնարարված էր նոր հայկական զորքի նախապատրաստումը, ուչա-

1 Sks Plut., Lucul., XXXI, 2, Համեմատե նաև Cass. Dio, XXXVI, 4, 2.

դրության էր առել զորքի ո՛չ թե քանակը, այլ որակը: Դաշնակից թագավորները այժմ ոչ միայն ուժեղացրել էին իրենց հետևադորը, այլև աշխատել էին միաժամանակ, որ իրենց ձիավոր զորքը թվով ու մարտունակությամբ գերազանց լինի հռոմեական հեծելազորից, որը, ինչպես հայտնի է, հռոմեական զորքի համեմատաբար թույլ և տկար մասն էր: Միհրդատի խորհրդով՝ այժմ հիմնովին փոխվել էր նաև հայկական զորքի պատերազմելու եղանակը: Որոշված էր խույս տալ վճռական մեծ ճակատամարտից և վարել լեռնային պաշտպանողական և փոքր պատերազմ: Երկու գաշնակիցները պարզապես ուղղում էին հռոմեական զորքը քաշել երկրի ներսը, դժվարացնել նրա պարենավորումը և հետզհետե նրան ուժասպառ անել իրենց հզոր ու արագաշարժ հեծելազորի հանկարծակի հարձակումներով:

Ռազմական այս ծրագիրն իրագործելու համար դաշնակից թագավորները, ինչպես հաղորդում է Ապպիանոսը¹, բաժանել էին իրենց զորարանակը երկու մասի: Միհրդատը, որին հանձնված էր ամրոցը հետևադորը և հեծելազորի մի փոքր մասը՝ կրնկակոխ հետևում էր հռոմեական զորքին, սակայն՝ բանակ ղենելով ու ամրանալով բլուրների վրա՝ նա համառորեն խուսափում էր վճռական ընդհարումից: Իսկ Տիգրանը հեծելազորի մյուս մասովը սրընթաց հարձակվում էր թշնամու վրա, խանգարում էր ու խափանում նրա պարենավորումը և հասցնում նրան զգալի կորուստներ:

Այսպիսով Լուկուլլոսը և նրա զորքը շարունակ գտնվում էին Միհրդատի և Տիգրանի բանակների արանքում, որոնցից որևէ մեկը նրանց սպառնում էր թիկունքից:

Ուշադրավ է, որ 68 թվի այս կռիվների մասին հռոմեական աղբյուրները, մեծ մասամբ, լուռ են և մոռնջ: Միայն Պլուտարքոսը, որը Լուկուլլոսի փառարանողն է ու գովերգուն, հիշատակել է իր հերոսի մի քանի աննշան հաջողությունները:

«Տակրոսն անցնելուց հետո, — պատմում է Պլուտարքոսը, — Լուկուլլոսը վհատվեց, որովհետև տեսավ, որ արտերը դեռևս կանաչ են (այստեղ ուշանում ան այդքան օդի սառնությունն պատճառով Կնձելու ժամանակները): Սակայն, այնուամենայնիվ, նա ցած իջավ, երկու կամ երեք անգամ ետ մղեց հայերին, որոնք նորից համարձակվել էին նրա դեմ

¹ *See App., Mithr., 87:*

դիւրս դալ, անարգել կերպով ավերեց դուռերը և, դրավելով Տիգրանի 'համար պատրաստված ցորենը՝ հակադարձեց թշնամիներին այն ծանր դրությունը, որից ինքը վախենում էր»¹:

Այս մասնակի աշողությունները չունէին, ինչպես տեսնում ենք, ռազմական խոշոր նշանակութիւն, որովհետեւ ներանք բնավ չէին թուլացնում դաշնակիցների կենդանի ուժը: Սակայն ինքը հռոմեական զորքը, որը հաճախ ենթակա էր Տիգրանի հեծելազորի հարձակումներին, կրում էր, ինչպես դժվար չէ հետեցնել աղբյուրների վկայութիւններից՝ զգալի կորուստներ:


Պլուտարքոսի և Դիոնի պատմելով՝² Լուկուլլոսն աշխարհում էր աջիակել թշնամուն ճակատելու իրեն դեմ, որպեսզի նրա դիմադրական ուժը կարողանա խորտակել վճռական ճակատամարտում: Թշնամու աչքի առջև նա ավերում էր այդ նպատակով նրա երկիրը: Սակայն իզուր՝ թշնամին մնում էր անչարժիր տեղում: Նա պաշարեց այնուհետեւ Միհրդատի ճամբարը և սկսեց նրա շուրջը փորել խրամատներ: Բայց իզուր էր նաև այս փորձը: Միհրդատին անմիջապես օգնութեան հասավ Տիգրանը, սպառնալով հռոմայեցիներին թիկունքից, իսկ Միհրդատը, հավատարիմ մնալով իր ծրարներին՝ այս անդամ ևս տեղից չչարժվեց:

Լուկուլլոսի դժվարին ու ապարդշուն այս արշավանքը, որի ընթացքում նա ավելի ինքն էր կորուստներ կրել, քան թըշնամին՝ տեսել էր Վանա լճի հյուսիսային կողմերում առնվազն մոտ երկու ամիս: Արդեն սկսվել էր աշունը և հռոմեական զորքի դրությունը, որն անսովոր էր Հայաստանի ցուրտ կլիմային՝ հետզհետե դառնում էր ավելի ու ավելի հուսահատական: Եթե Լուկուլլոսն այժմ փոխ նահանջեր, այդ համազոր կլիմայի ամոթալի պարտութեան: Եվ նա միայն այժմ, մոտ երկու ամիս ապարդշուն կորցնելուց հետո, ուղղվեց շտապ դեպի Արտաշատ, ուր գտնվում էին Տիգրանի օրինավոր կանաչք և անչափահաս զավակները: Նա հույս ունեւր, որ հին այդ մայրաքաղաքին վաճառմամբ կկարողանա վերականգնել իր զինավորական մեծ անունը և հեղինակութիւնը, որ սկսել էին արդեն նսեմանալ:

¹ Plut., Lucul., XXXI, 2—3:

² Plut., Lucul., XXXI, 4 և Cass. Dio, XXXVI, 4, 2:

³ Plut., Lucul., XXXI, 4:



Լուկուլլոսի ճանապարհի դեպի Արսուես

հոմեական-հայկական այս նոր պատերազմում: Նա միևնույն ժամանակ կարծում էր, որ Արտաշատին սպառնացող վտանգը Տիգրանին կստիպե իր հետ վճռական կռվի բռնվելու:

Եվ, իրավի, ինչպես որ Լուկուլլոսը մտածում էր՝ այնպես էլ եղավ: Երբ Տիգրանը տեղեկութուն ստացավ, որ Լուկուլլոսն արագացրած երթով գնում է դեպի Արտաշատ՝ նա հասավ չորքորդ օրը, ինչպես վկայում է Պլուտարքոսը¹, հոմեական զորքի ետևից և նրա առաջը կտրեց Արածանիի գետանցքի մոտ՝ դետի աջ ափին: Լուկուլլոսը, որը դեռևս գետը չէր անցել՝ դառնում էր հայկական զորքի գլխաց Արածանիի ձախ կողմում:

Էջարդն իր ընդարձակ ուսումնասիրության մեջ² աշխատել է ճշտել թե Արածանիի ճակատամարտի այս տեղը և թե, ընդհանրապես, այն ճանապարհը, որոնցով եկած պիտի լինեին այդտեղ Լուկուլլոսը և Տիգրանը: Նա իրավացի կերպով չէ ընդունում Ռեյնաքի ենթադրությունը³, ըստ որի վերոհիշյալ գետանցքի տեղը մատնանշված է այժմյան Մանազկերտի մոտ: Արածանին անցնելով այդ տեղում, ինչպես միանգամայն ճիշտ գիտել է Էջարդը, կարելի էր դնալ Բասեն և Հասանդալ, բայց ո՛չ Արտաշատ: Ինքը Էջարդը կարծում է, որ հոմեական զորքը դնացել էր, հավանորեն, Մանազկերտի մոտով դեպի հյուսիս և հասել էր Արածանիի ձախակողմն այժմյան Ղարաքիլիսի մոտ:

Սակայն ինձ ավելի հավանական է թվում, որ Լուկուլլոսի 68 թվի արշավանքի ճանապարհը պետք է ենթադրել Պեկտինդերյան քարտեզում նշանակված Մումբ—Դիդեմ հին հաղորդակցության դժով, որը մանրամասն լուսաբանված է իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» ուսումնասիրության մեջ⁴: Այս նոր ենթադրությամբ՝ Եփրատ—Արածանիի ճակատամարտի տեղը որոշվում է ո՛չ թե ճշտիվ այժմյան Ղարաքիլիսի մոտ, այլ այս գյուղից մոտ 20—30 կիլոմետր դեպի արևելք՝ այժմյան Դիդեմի հյուսիսակողմում:

Արածանիի ճակատամարտի մասին միակ մեր աղբյուրներն

¹ Plut., Lucul., XXXI, 7.

² Klio, Bd. X, 2, էջ 221—226.

³ Mithridate Eupator, էջ 368, մաս. 1.

⁴ Տե՛ս էջ 103—114.

են Պլուտարքոսի և Կասսիուս Դիոնի վկայութիւնները, որոնք հիմնապէս իրար հակասում են:

Ինչպէս պատմում է Պլուտարքոսը, Արածանիի կռուում Տիգրանի հեծեալադուրը չէր դիմացել հռոմեական հետեակազորի հարձակման և մատնվել էր փախուստի: Հետապնդումը շարունակվել էր երկար ժամանակ և հոռմայեցիները ամբողջ գիշերը հալածել, կոտորել ու դերել էին թշնամուն: Իսկ Կասսիուս Դիոնը, ընդհակառակը, հաղորդում է, որ հարձակման ժամանակ հայկական ալրուձին խիստ նեղն էր դրել հռոմեական հեծեալադուրը, բայց խուսափել էր կռվից հռոմեական հետեակների հետ: Ալրուձին ինքը որեւէ վնաս չէր կրել, այլ ետ դառնալով՝ նետեր էր արձակել հետապնդողների վրա և շատերին սպանել էր ու փրկափորել:

Ճիսկ վերջերը, — ասում է Կասսիուս Դիոնը, — ծանր էին և դժվար էին բուժվում, որովհետեւ նետերն ունեին երկու ծայր, որոնք այնպէս էին իրար կցված, որ թե վերջի մեջ մնալով և թե դուրս հանվելով՝ արագ կերպով մահ էին պատճառում: Դրա պատճառն այն էր, որ նետի ծայրերից մեկը, որը ոչ մի կերպ չէր կարելի դուրս հանել՝ մնում էր մարմնի մեջ¹:

Եվրոպական գիտնականներից շատերը, հավատ ընծայելով Պլուտարքոսի վերոհիշյալ վկայութիւններին՝ կարծում են, որ Արածանիի ճակատամարտում Լուկուլիոսը հաղթութիւն էր տարել և Տիգրանը կրել էր ծանր պարտութիւն: Սակայն, ինչպէս դժվար չէ հետեցնել Կասսիուս Դիոնի արժանահավատ վկայութիւնից, Տիգրանը ո՛չ միայն պարտութիւն չէր կրել, այլ, ընդհակառակը, ինքն էր ծանր հարված հասցրել հակառակորդին: Տիգրանի հեծեալադուրի փախուստը պարզապէս կեղծ փախուստ էր, որի միջոցին նրա նեաածիգ արագաչարժ ձիավորները նոր քարը էին տալիս թշնամուն: Կռվելու արեւելյան այդ ձեւը ցործադրել էին, ինչպէս հայտնի է, նաև պարթևները Կրասսոսի դեմ, որը կատարյալ պարտութիւն էր կրել 53 թվին:

Արածանի դեռն անցնելուց հետո Լուկուլիոսն առաջնորդեց

¹ Նույն այս ճակատամարտը համառոտակի հիշատակված է նաև Ստրաբոնի պատմութեան մի հատվածում, տես գր. IV, fragm. 74:

² Str. Plul., Lucul., XXXI, 7—14:

³ Cass. Dio., XXXVI, 4—5:

իր զորքը դեպի Արտաշատ: Սակայն մի քանի օրից հետո, ինչպես վկայում է Պլուտարքոսը, զորքը կտրականապես հրաժարվեց առաջ գնալ և պահանջեց ետ դառնալ: Զորքի մեջ ծաղած այս ապստամբությունը, որ հարկադրել էր Լուկուլլոսին և նահանջի շարժմանը՝ Պլուտարքոսի և Կիկերոնի մոտ՝ տրված են տարբեր բացատրություններ: Պլուտարքոսն ապստամբության պատճառ համարում է այն, որ սեպտեմբեր ամսին, աշնանային դիչերահավասարի ժամանակ, հանկարծակի ձյուն էր եկել և Հայաստանում սկսվել էին անժամանակ ցրտերը: Իսկ Կիկերոնը, որի մոտ զորքի այս ապստամբությունը պարզ կերպով ակնարկված է, բացատրում է, որ հոռմեական զորքը մերժել էր առաջ գնալ, որովհետև նա շատ հեռացել էր երկրից և կարոտել էք հայրենիքին:

Ապպիանոսը և Կասսիուս Դիոնը տեղեկություններ են տալիս միմյանից Լուկուլլոսի նահանջի մասին, առանց հիշելու ապստամբության անպատվաբեր փաստը: Ապպիանոսը նահանջի պատճառ է համարում վրա հասնող ձմեռը, իսկ Դիոնը՝ վիրավորների մեծ թիվը և սննդամթերքների պակասությունը:

Միանգամայն ճիշտ են ըստիս էջևարդի դիտողությունները¹, որը հիմնավորապես պատճառ զինվորական ապստամբության համարում է ո՛չ այնքան անժամանակ ցուրտը, որքան հոռմեական զորքի մեծ կորուստները, վիրավորների շատությունը և սննդամթերքների պակասությունը, ինչպես այդ սլարզ կերպով մատնացույց է արված Դիոնի մոտ: Իրավացի է նույնպես և Աստուրյանը², որը կարծում է, որ նահանջի բուն պատճառը եղել է հոռմեական զորքի բարոյալքումը և վհատությունն իր լուրջ անաջողությունների պատճառով: Եթե միայն ցուրտը լինեք սալստամբության պատճառ՝ հոռմեական զորքը պետք է, ընդհակառակը, ո՛չ թե ետ նահանջեր, այլ առաջ գնար դեպի Արտաշատ, որն արդեն շատ մոտ էր և գտնվում էր մոտ 100 կիլոմետր հեռավորության վրա³ և որը ո՛չ միայն կաղատեր նրանց ցրտից, այլև կտար սպառնալիքական մեծ ավար:

¹ S^cu Plut., Lucul., XXXII, 1—5 և Cicero, De imperio Cn. Pompei, IX, 23—24

² S^cu App., Mithrid., 87 և Cass. Dio, XXXVI, 6, 1

³ Klio, Bd. X, 2, էջ 213—216

⁴ S^cu Վաղարշական վերաբերություններ, էջ 63 և այլն:

⁵ S^cu իմ Վերաբերման Բ-ը և Հոռմե, էջ 158:

Հայաստանից Լուկուլլոսը նահանջեց հարավ և իջավ Միգդոնիա: Հյուսիսային Միջագետքում, ուր Տալրոսյան լեռներից իջել էր Լուկուլլոսը 68 թվի հոկտեմբեր ամսին՝ դեռևս ամառային տաք եղանակներ էին: Հայերի ձեռքին էր դտնվում այստեղ Մծբինը, որը նշանավոր բերդաքաղաք էր և չրջապատված էր կրկնակի՝ արտաքին և ներքին պարիսպներով: Գերագույն իշխանությունը Մծբինում, որն ուներ ռազմական ու ստրատեգիական մեծ նշանակություն, Տիգրանը հանձնարարել էր, ինչպես մերև տեսանք, իր եղբորը՝ Գուրասին:

Արդ՝ ուշադրավ է ու հետաքրքիր, որ հռոմեական զորքը, որն ապստամբել էր և չէր ուզեցել գնալ Արտաշատ՝ աթմ պաշարեց Մծբինն առանց որևէ հակառակության: Սակայն այս պաշարումն առաջին ամիսները չտվեց ոչ մի հետևանք: Քաղաքը, որի փաստական հրամանատարն էր ու պաշտպանը հռչակալիոր հույն ճարտարապետ Կալլիմաքոսը, ցույց տվեց նույնպիսի ուժեղ դիմադրություն, ինչպես և Տիգրանակերտը:

Քաղաքի պաշտպանները, ինչպես վկայում է Դիոնը¹, միանդամայն վստահ էին, որ հռոմայեցիները ստիպված են լինելու հեռանալ:

Բայց անսպասելի կերպով, անձրևային ու փոթորկալից մի մուժ գիշեր, երբ ոչինչ չէր կարելի նկատել կամ լսել՝ հռոմայեցիներին հաջողվեց մոտենալ քաղաքին և տիրել արտաքին պարսպին: Այնուհետև ներքին պարիսպը ևս հնարավոր չեղավ, մթության ու հորդ անձրևի պատճառով, պաշտպանել նետաձուլթյամբ ու այրվող նավթով: Հռոմայեցիները լցրին միջպարիսպային փոսը ցախով և հեշտությամբ մերցրին նաև երկրորդ պարիսպը: Պարիսպների դրամվումից հետո՝ Գուրասը և բերդապահ զորքը, որոնք ամրացել էին միջնաբերդում՝ անձնատուր եղան որոշ պայմանով և աղատ արձակվեցին: Միայն Կալլիմաքոսը, որ Մծբինից առաջ աջողությամբ ղեկավարել էր նաև պաշարված Ամիսոսի պաշտպանությունը՝ համարվեց հանցավոր և չզթայվեց:

Մծբինի առումը Լուկուլլոսի վերջին աջողությունն էր: Այնուհետև նրա աստղը հետզհետե խավարեց:

Մինչ հռոմեական զորքը երկար ու դժվար ճանապարհներով իջնում էր Միջագետք և պաշարել էր ախտեղ Մծբինը՝ Միհր-

¹ Cass. Dio., XXXVI, 6—7:

դատը և Տիգրանը, փոխանակ հուսաբեկ ու բարոյալքված թըշնամուն հալածելու, հարձակվեցին հռոմեական զորամասերի վրա Պոնտոսում և Տիգրիսի հյուսիսակողմում: Նրանք դարձյալ շարունակեցին վարել տեղային մանր կռիվներ, որոնք «ւնեցել էին հաջող հետևանքներ և, ինչպես տեսանք, հյուծել ու անբարոյացրել էին Լուկուլլոսի գլխավոր բանակը:

Միհրդատը, իր հետ վերցնելով ութ հազար զորք, որոնցից շորս հազարը հայեր էին, որ նա ստացել էր Տիգրանից՝ դնաց Պոնտոս, որպեսզի վերագրավել իր թագավորությունը, իսկ Տիգրանն աշխատեց վերանվաճել իր բուն թագավորության հարավային շրջանները: Այստեղ՝ Տիգրիս գետի հյուսիսակողմում, որը Մեծ Հայաստանի հարավամասն էր՝ Տիգրանը վերագրավեց մի շարք շրջաններ: Նույնպես և Միհրդատը, որը մտել էր նախ փոքր Հայքի արևելյան շրջանները, հաբեկելով այստեղ հռոմայեցիների ցրված ու թույլ ուժերը և կոտորելով մաս առ մաս թշնամիներին՝ մեծ արագությամբ գրավել էր իր թագավորության արևելյան մասերը: Այստեղից նա կոչ էր արել իր ժողովրդին զենք առնել ու ապստամբել և խոստացել էր ազատել բոլոր պոնոացիներին, որոնք հռոմայեցիների մոտ աշխատում էին որպես ստրուկներ: Ժողովուրդը, ինչպես վկայում է Դիոնը, գրկաբաց ընդունում էր և օգնում Միհրդատին, որովհետև աստելությամբ լցված էր զենքի հռոմայեցիները ու նրանց դատան ու հարստահարող փշխանավորները:

Լուկուլլոսը, տեղեկություն ստանալով հռոմեական զորքի անաջողությունների մասին՝ վճռեց Պոնտոսը փրկելու համար դուրս տանել իր զորքը Միջագետքից և հրաժարվել անդրեփրատյան իր նվաճումներից: Սակայն նրա լեղեռնները, որոնք ուրախ ու հանգիստ ապրում էին ձմեռվա տաք կայաններում՝ հրաժարվեցին արշավանքի դուրս գալ դարնանից առաջ: Այս արգեն երկրորդ անգամ էր, որ հռոմեական զորքերը չէին հնազանդում իրենց հրամանատարին և ըմբոստաբար ու ինքնադուրս խախտում էին զինվորական կարգապահությունը:

Շնորհիվ իր զորքի ընդդիմադրությունը Լուկուլլոսը ստիպված եղավ մնալ Միջագետքում 68/67 թվի ամբողջ ձմեռը: Միայն 67 թվի գարնան սկզբին նա թողեց Տիգրանակերտն ու Մծբինը և, անցնելով Եփրատի աջ կողմը՝ օգնության չտալեց Պոնտոսին:

¹ SBA App., Mithrid., 88 և Cass. Dio, XXXVI, 8—9;

² Cass. Dio, XXXVI, 9, 2;

Դատարկելով Միջագետքը և հարավային Հայաստանը՝ Լուկուլլոսը, ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել է Մոմգենը՝ հրաժարվում էր, անշուշտ, բոլոր իր յիսյուռն հույսերից, որ կստանա՝ էին հայկական արշավանքի հետ:

Լուկուլլոսը դեռևս կես ճանապարհին էր գտնվում, և րը նա տեղեկացավ, որ հռոմեական Տրիարիոս զորավարը, որին նա օգնության էր գնում՝ ծանր պարտություն էր կրել հայ-պոնտական զորքերից Ջելայի մոտ: Այս պարտությունը, ասում է Կիկերոնը, այնքան մեծ էր, որ դիտարկելով հրամանատարն իմացել էր նրա մասին ո՛չ թե ճակատամարտին մասնակցող լրագրից, այլ ժողովրդի մեջ պտտող լուրերից:

Այդ մեծ պարտությունից հետո Միհրդատը ո՛չ միայն կարողացել էր տիրել իր ամբողջ Թագավորությանը, այլև նրա հեծելազորն արդեն ասպատակում էր Բիթանիայի արևելյան շրջանները, իսկ Տիգրանը, որն անցել էր Եփրատ գետը՝ ներս էր խուժել Կապպադովկիա և իր փեսայի, Ատրպաականի Միհրդատ Թագավորի հետ, նվաճում ու ավերում էր այդ երկիրը:

Այսպիսով՝ Լուկուլլոսի վարած պոնտական ու հայկական պատերազմները, որ նա փայլուն կերպով սկսել էր յոթը տարի առաջ, վերջանում էին բոլորովին անփառունակ կերպով:

«Հենց այսպես, — ասում է Ռենաքը, — յոթը տարվա կատաղի պատերազմից հետո՝ դեպքերը պարզապես հանդիլ էին դարձյալ նույն մեկնակետին: Լուկուլլոսի մեծամեծ հաղթությունները չքանում էին ինչպես մի երազ, Հուսեանյան արծիւները նույնպիսի արագությունով, ինչպես նրանք ղնացել էին առաջ՝ ետ դարձան Եփրատից դեպի Տավրոս և Տավրոսից դեպի Հալիս: Կապպադովկիան արդեն կորցված էր, Բիթանիան անդամատված, պրովինցիա Ասիան վտանգված»:

Թե որքան ծանր զրույթյուն էր ստեղծվել Փոքր Ասիայում՝ 68 թվի վերջերին՝ այդ մանրամասն մատնացույց է արված Կիկերոնի «Պոմպեյոսի հրամանատարության մասին» ճառում: Իր այդ ճառի մեջ՝ Կիկերոնը նշում է, որ Բիթանիայում հրդեհված ու ոչնչացված էին բազմաթիվ գյուղեր և որ հռոմեական ամ.

1 S. Mommien, Römische Geschichte, III, էջ 63.

2 Reinach, Mithridate Eupator, էջ 377.

3 De imperio Cn. Pompeii II, 4—4; V, 13; VI, 16.

որով Ասիան սպասում էր, որ երկու հզոր թագավորները, որոնք Հռոմի ամենաոխերիմ թշնամիներն էին, կներխուժեն շուտով և կալներեն Հռոմեական շրջանները: Վտանգ էր սպառնում, նրա ասելով, Հռոմեական դրամատերերի հարստություններին, որ նրանք զետեղել էին պետական հարկերի հավաքման գործում: Հուսալքվել էին, ասում է նա, բաժնետերերը և վարձակալական ընկերությունների գործակալները, որովհետև նրանք դիտեին, որ թշնամու ձիավոր լիկատների ասպատակները կարող էին իրենց զրկել ամբողջ տարվա եկամուտից: Վախենում էին վարձակալներն անդամ իրենց ստրուկներից, որոնց նրանք պահում էին արտավայրերում ու արտերում, նավահանգիստներում ու պահակակետերում:

67 թվին Հռոմեական հանրապետության դրությունը ծանր ու աղետալի էր դառել ո՛չ միայն Հռոմեական Ասիայում, այլև ծոփի վրա ու նաև բուն Իտալիայում: Չափազանց ուժեղացել էին այդ ժամանակի ծովահենները, որոնք պարզապես տեր թույնօրեն էին դառել Յգեյան ու Միջերկրական ծովերի: Նրանք հարձակվում էին ո՛չ միայն առանձին նավերի, այլ նաև ռազմական նավախմբերի վրա: Նրանք շարունակ կողոպտում էին ծովափնյա շրջանները և գերի էին տանում մինչև իսկ ամենատկանավոր Հռոմեական պաշտոնյաներին ու զինվորականներին: Հազորդակցությունը ծովով չափազանց վտանգավոր էր դառել և Իտալիայում ու առանձնապես Հռոմում, որը հացահատիկ էր ստանում օտար երկիրներից՝ հացի դները խիստ բարձրացել էին և սկսվել էր արդեն ահավոր սովը:

Հռոմում զրացին, որ հանրապետության սովորական պաշտոնեությունը չի կարողանալու դուրս հանել երկիրը ճգնաժամային այդ դրությունից, այլ հարկավոր են արտակարգ իշխանություն ունեցող պաշտոնյաներ, որոնց պետք է տրվեն զիկտատորական լիազորություններ:

Լուկուլլոսի նահանջի հենց ժամանակ, նույն այս 67 թվին, ժողովրդական տրիբուն Գարինիուսն անցկացրեց Հռոմում իր առաջարկը, որով Պոմպեյոսը ստացավ դիկտատորական արտակարգ իրավունքներ, որպեսզի նա ոչնչացնե ծովահեններին և վերականգնե ծովային հաղորդակցության ճանապարհների անվտանգությունը:

Պոմպեյոսը կարողացավ, իրապես, դրավել ծովահենների ամրությունները և, ջախջախելով նրանց ուժերը՝ հարկադրեց

նրանց անձնատուր լինել։ Այնուհետև, 66 թվի սկզբներին, ժողովրդական տրիրուն Մանիլիուսի առաջարկությամբ՝ Պոմպեյոսին տրվեց արտակարգ իշխանություն (imperium majus) արևելյան պատերազմը շարունակելու համար։ Համաձայն այդ օրենքի Պոմպեյոսը, որը Լուկուլլոսի վաղեմի հակառակորդն էր՝ ստացավ, բացի Գաբինիուսի օրենքով իրեն տրված նախկին լիազորություններից, զորքի բարձրագույն հրամանատարությունն առաջիկա կռիվներում ընդդեմ Միհրդատի և Տիգրանի ու նաև բացարձակ իրավունք պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու հռոմեական ժողովրդի անունից։

66 թվին ռազմական գործողությունները վերսկսվեցին Արևելքում Պոմպեյոսի առաջնորդությամբ։

ԳԼՈՒԽ ՑԱՍՆՎԵՏԵՐԱՐԴ

ՊՐԵՍԵՍՈՍԻ ԵՐԾՎԱԾՆՔԸ ԵՎ ՑԻԳՐԱՆԻ ՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՀԵՏ

- 1.—Պոմպեյոսի նոր պատերազմի պատճառությունները.—գործերի համակենցեղնացումը Կիլիկիայում.—յրես Միբրոփաճեսի բանակցությունները Միհրդատի հետ.—Դառիցը Հրահաս Գ-ի հետ։—2. Ներքին խռովությունները Հայաստանում.—Տիգրանի վերադարձը Հայաստան և ապստամբ ուղու փախուստը Տիգրան.—Տիգրան Բ-ը կասկածում էր որ իր ուղուն զբոսողը Միհրդատն է։—3. Պատերազմի վերսկսումը Պոնտոսում.—վճռական ճակատամարտը Գայլ գետի վրա.—Միհրդատի փախուստը Սինոբիա։—4. Տիգրան Բ-ի բանակցությունները Պոմպեյոսի հետ։—5. Պարսկների և կրեսեր Տիգրանի արեւմտեքը Հայաստան.—Տիգրան Բ-ի հաղթությունը։—6. Պոմպեյոսի ռազմերը դեպի Արաբիան և ռազմերի ճանապարհը.—Տիգրանի ու Պոմպեյոսի ծեսակցությունը։—7. Հառությունը Տիգրան Բ-ի հետ։—8. Կրեսեր Տիգրանի ձեռքակալությունը.—Հրահաս Գ-ի բողոքը և Պոմպեյոսի պատասխանը.—Հռոմի հաղթականության փոփոխությունը պարսկների հանդեպ։—9. Պոմպեյոսի արեւմտեքները Իբերիա, Կողքիս և Աղվանք։—10. Կորդոբի հանձնումը Տիգրան Բ-ին.—պարսկների հաճակումը Տիգրան Բ-ի վրա.—միջնորդ դառնալուցների վճիռը։—11. Ապստամբությունը Միհրդատ Պոնտացու դեմ և նրա ինքնասպանությունը.—Պոմպեյոսի նվաճած երկրների հաղթական կազմակերպումը։—12. Տիգրան Բ-ին օրված երկիրները.—Հռոմի վերաբերմունքը դեպի պարսկները։—13. Տիգրան Բ-ի քաղաքագրության վերջին օտրիները.—Տիգրանի սխալ բնութագրերը։—14. Վերջաբան։

Երբ Հռոմում ընդունվում էր Մանիլիուսի վերոհիշյալ օրենքը՝ Պոմպեյոսն ինքը դառնում էր Կիլիկիայում։ Ստանալով տեղեկություն, որ իր վաղեմի հաւյսերը լիովին իրականացել են և որ իրեն է հանձնված պոնտական ու հայկական պատերազմների վարումը՝ իսկույն ևեթ նա սկսեց նախապատրաստվել պատերազմի։ Նա կարգադրեց դաշնակից և ստորադրյալ ասիական իշխանավորներին ու քաղաքներին, որ ուղարկեն իրեն օգնական զորքեր։ Նրան աջողությամբ իր դրոշմների տակ հավաքել մինչև իսկ այն արձակուրդավոր զինվորներին, որոնք Հրաժարվել էին մընալ Լուկուլլուսի բանակում։ Ամենակարճ ժամանակվա ընթացքում նա համակենտրոնացրել էր Կիլիկիայում, բացի այնտեղ

դանձուղ Լրեք լեղեռններէց և ասիական օգնական զորքերէց, ա-
վելի քան հիսուն հազար նոր զորք:

66 Թվի սկզբներին, իր մեծ արշավանքը սկսելուց առաջ,
Պոմպեյոսը նախապես աշխատեց, իրեն հասուկ առանձին զգու-
շավորությամբ, դիվանագիտական պատրաստություններ ևս անս-
նել: Նա ուղարկել էր Միհրդատի մոտ իբր թե բարեկամական
բանակցությունների համար փախստակ Միթրոփանեսին: Սակայն,
իրապես, նրա ուղարկած այս դեսպանը զնացել էր Պոնտոս
պարզապես հեռախօսական ու լրտեսական նպատակներով: Միև-
նույն ժամանակ Պոմպեյոսի մի այլ դեսպանությունը զնացել էր
նաև Տիգրոս բանակցելու Հրահատ Գ-ի հետ և առաջարկելու,
որ նա հռոմայեցիների հետ դաշն կնքե Պոնտոսի ու Հայաստանի
թագավորների դեմ: Այս դաշինքը գլուխ էր եկել նույն այն
սլալմաններով, որ 68 թվին Պարթևաց թագավորին առաջարկել
էին Տիգրանը և Միհրդատը: Հրահատ Գ-ին խոստում էր ար-
ված, որ նա կստանա ամբողջ Միջագետքը մինչև Եփրատ, այ-
սինքն՝ այն երկիրները, որ նրանից գրավել էր հարավում Տիգ-
րանը: Միևնույն ժամանակ առաջարկ էր արված Հրահատին,
որ նա, դործակցելով իբրև դաշնակից՝ հարձակվի հայկական
թագավորության վրա հարավ-արևելքից:

66 թվի սկզբներին քաղաքական դեսպերը դասավորվում էին
«՛չ ի նպաստ դաշնակից թագավորների: Մասնավորապես Միհրդ-
դատը, որի դեմ չուտով արշավանք էր սկսելու Պոմպեյոսը,
այլևս չէր կարող հույս դնել «՛չ պարթևների վրա, «՛չ էլ, ա-
ռանձնապես, Տիգրանի վրա, որի երկրում ծաղկել էին ներքին
խռովություններ և ապստամբություն:

Ինչպես հաջորդում են Ապպիանոսը և Վալերիուս Մաքսի-
մուսը, դավադրությունները Տիգրան Բ-ի դեմ Հայաստանում
տեղի էին ունեցել մի քանի անգամ: Այդ դեսպերը սրանց մոտ
պատմված են այնպիսի վիպական մանրամասնություններով,
որոնք բնական վիճելի են դարձնում նրանց արժանահավատու-
թյունը և որոնք կարող են ընդունվել միայն որոշ վեպապահում-
ներով: Այս հեղինակների վկայություններից երևում է, որ
Տիգրանի արքունիքում, որն ամուսնացել էր Միհրդատի Կլեո-
պատրա դստեր հետ, սովորական էին դառել պալատական խար-
դավանքներն ու արքունահեղ սծրագործությունները, որոնք մեծ

չավերով առանձնահատուկ էին, ինչպես հայտնի է, նաև պոն-
տական, սելևկյան և այլ արևելյան արքունիքներին:

Տիգրանն ուներ Կլեոպատրայից, ինչպես վկայում է Ապ-
ոլիանոսը¹, երեք որդիներ, որոնք բոլորն էլ թագավորական իշ-
խանության էին ձգտում հոր մահից առաջ: Նրանցից մեծը,
Զարեհը, հայ իշխանների հետ, որոնք դժգոհ էին Տիգրանից,
իր հոր դեմ դավադրություն էր կազմել նրան դահճնկեց անելու
նպատակով: Դավաճանությունը սակայն աջողություն չէր ու-
նեցել և Զարեհն ու նրա դավակիցները հաղթվել էին ու սպան-
վել, Կլեոպատրայից ծնված՝ Տիգրանի միջակ որդին, որի անու-
նը չէ պահպանվել, ուղեցել էր Նույնպես գրավել հոր դահճը,
օգտվելով ուրիշ առիթից: Ծերունի Տիգրանը որսի էր գնացել
իր այդ որդու ու կրտսեր Տիգրանի հետ: Որսի ժամանակ նա վայր
էր ընկել ձիուց և ուշաթափվել: Միջակ որդին, թողնելով իր
հորն այդ ծանր վիճակում՝ վերցրել էր նրա թագը և գրել իր
դիվանին, իսկ կրտսերը, մնալով նրա մոտ՝ խնամել էր նրան և
օգնել: Ծերունի թագավորը, ուշքի գալով՝ հրամայել էր միջակ
որդուն մահապատժել, իսկ կրտսերին խոստացել էր տալ իր
թագն ու դահճը: Սակայն, Տիգրանի Կապպադոկիայում դտնը-
ված ժամանակ, ապստամբել էր նաև այս կրտսեր որդին:

66 Թվի սկզբներին Տիգրանը, լուր ստանալով իր որդու
ապստամբությունից մասին, ստիպված եղավ ընդհատել իր հաղ-
թական արշավանքը Կապպադոկիայում և վերադարձավ Հա-
յաստան: Ապստամբ որդին, որ սլաոներազմ էր սկսել իր հոր
դեմ՝ պարտություն կրեց, փախավ դավադիր հայ մեծամեծների
հետ Տիգրան և այնտեղ ամուսնացավ պարթևների թագավոր
Հրահատ Գ-ի դստեր հետ:


Կրտսեր Տիգրանի այս ապստամբությունը Պոմպեյոսի ար-
շավանքի ճիշտ նախօրյակին ո՛չ միայն մեծապես թուլացրեց
դաշնակից թագավորների դիմադրական ուժը, այլև պատճառ
դառավ նրանց բարեկամական հարաբերությունների վատաց-
ման: Ծերունի Տիգրանը, ինչպես վկայում է Դիոնը², կասկա-
ծում էր, որ իր որդուն գրգռողը ու ապստամբության դրդողը
հենց ինքը Միհրդատն է: Նրա կասկածները, իսկապես, որոշ
չիմք ունեին: Տիգրանը, լինելով դաշնակից Միհրդատի, վա-

¹ App., Mithrid., 104:

² Cass. Dio., XXXVI, 60, 1:

րում էր, ինչպես վերև տեսանք, իր սեփական ու ինքնուրույն քաղաքականութունը: Եվ Միհրդատին ձեռնտու էր, իհարկե, հայկական զահի վրա տեսնել իր երկառասարդ Թոռին, որին նա կկարողանար իր ձեռին լսադալիք դարձնել: /

66 Թվի դարնանը վերսկսվեց Պոմպոսում պատերազմը Միհրդատի դեմ: Պոմպեյոսի զինական մեծ ուժերի դեմ Միհրդատը,



Պոմպեյոս

որի երկիրն ավերվել ու ուժասպառ էր եղել լուկուլլոսի արշավանքների ժամանակ, կարողացել էր հավաքել ու գուրս բերել ընդամենը մոտ 30.000 հետևազոր և 2—3000 հեծելազոր: Ուստի և նա վարեց Պոմպեյոսի դեմ պարտիզանական լեռնային պա-

տերազմ: Նա շարունակ ետ էր քաշվում, հարկադրում էր Պոմպեյոսին իրեն հետապնդել, հարձակվում էր հանկարծակի, վրնաս էր հասցնում թշնամուն և, ավերելով իր սեփական երկիրը՝ աշխատում էր դժվարացնել հռոմեական զորքի պարենավորումը: Սակայն նրա այդ դիմադրությունը երկար չտևեց: Պոմպեյոսը, վերջիվերջո, շրջապատեց նրան մի նեղ կիրճում, և Միհրդատը չկարողացավ այլևս խուսափել ճակատամարտից: Վճռական ու վերջին կռիվը տեղի ունեցավ Միհրդատի հետ Գալլ Վետից դեպի հարավ, ինդերեսից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա դտնվող այժմյան Պյուերկի մոտ, ուր հիմնըված էր հետո Նիկոպոլիս քաղաքը:

Հռոմեական զորքը, անցնելով հակառակորդի թիկունքը և զրավելով շրջակա բարձունքները՝ դիչերվա լուռության մեջ հանկարծակի սոսկալի մարասկան աղմուկ բարձրացրեց և չորս կողմից թշնամու վրա թափեց քարեր, նետեր և տեղեր: Այս հռոմայեցիները ցած իջան բարձունքներից և կոտորեցին պոնտական դրեթե ամրոցը ահարեկված խուճապահար զորաբանակը:

Ինքը Միհրդատն այս անգամ ևս կարողացավ թողնել ճակատամարտի դաշտը և իր դիրքի փոքրաթիվ մնացորդներով փախավ Հայաստանի սահմանում դտնվող Սինորիա ամրոցը: Այս անգամ ևս նա հույս ուներ, որ ապաստան կդտնի Հայաստանում և օգնություն կտանա ծերունի Տիգրանից:

Սինորիայում Միհրդատը լաժանեց իր զորքին փող և նվերներ ու Տիգրանի մոտ ուղարկեց սուրհանդակներ խնդրելու ներանից հյուրընկալություն: Սակայն, ինչպես վերև ասացինք, ծերունի Տիգրանը կասկածում էր, և ո՛չ առանց հիմքի, որ իր որդուն դրդողին ու իր դեմ բարձրացրած ապստամբության դրլսավոր դրդիչն ինքը Միհրդատն է: Ուստի և նա ո՛չ միայն մերժեց նրան ընդունել և օգնել, այլև ձեռքակալեց սրա ուղարկած սուրհանդակներին և ուղարկեց նրանց Պոմպեյոսին: Նա ազդարարներով միջոցով հայտարարեց, բացի այդ, որ Միհրդատի դրլսի համար նա սահմանել է 100 տաղանդ դրամավարձ (մոտ 420·000 դերմանական ոսկի մարկ կամ 210·000 ոսկի ուռբլի):

Ֆրանսական դիտնականներ Տուրնեբեզը և Մորդանը, ինչպես և Մոմզենը, միանգամայն իրավացի կերպով ենթադրում են¹, որ Միհրդատի փախուստի հենց ժամանակ Տիգրանը

¹ *See Fr. Tournèize, Histoire politique et religieuse de l'Arménie, էջ 774, Morgan, Histoire du peuple arménien, էջ 78 և Mommsen, История Рима, III, էջ 107:*

սկսել էր արդեն վարել Պոմպեյոսի հետ հաշտության բանակցություններ:

Ըստ երևույթին, Միհրդատը նաև ինքն այլևս հույս չունեւր ընդունելություն դառնելու իր փեսայի մոտ Հայաստանում: Առանց Տիգրանից պատահականի սպասելու՝ նա իր փոքրագլխով դորաբանակով առաջ շարժվեց Սինորիայից դեպի հյուսիս: Նա հույս ուներ, որ, հասնելով Սև ծովի հյուսիսային ափերը՝ կըկարողանա իր Բոսփորյան նախկին թագավորությունից դուրս վտարել իր ապստամբ որդուն, որը հռոմայեցիների հետ արդեն դաշն էր կնքել:

Սինորիայից Միհրդատը, ինչպես մանրամասն ցույց է տրված իմ վերջին հոդվածներից մեկում¹, դնացել էր հյուսիս Շիրատի ափերով մինչև նրա ակունքները և այնտեղից այժմյան Օլթիի ու Արդահանի մոտով ու այնուհետև Արզախի ու Բաթու մի վրայով դեպի Սուխում:

Միհրդատի փախուստից հետո Պոմպեյոսը պատերազմը նրա դեմ համարեց վերջացած և նույն 66 թվին առաջնորդեց իր զորքը դեպի Հայաստան:

Մինչդեռ Պոնտոսում տեղի էին ունեցել վերև հիշատակված անցքերը՝ Հայաստանն իր հերթին ենթարկվել էր հարձակման: Պարթևների թագավոր Հրահա Գ-ը, իր նորափեսա Կրտսեր Տիգրանի խնդիրքով և, հավանորեն, նաև Պոմպեյոսի դրրդմամբ՝ պատերազմ էր սկսել Տիգրան թագավորի դեմ, որը նրա անհաշտ ախոյանն էր ու թշնամին: Տիգրանի ապստամբ որդու և խռովարար հայ մեծամեծների ուղեկցությամբ՝ նա ներս էր խուժել Հայաստան և, նվաճելով նրա հարավ-արևելյան շրջանները՝ հասել էր մինչև Արտաշատ մայրաքաղաքը:

Ծերունի Տիգրանը, որը հանկարծակիի էր բերվել, հարկադրվեց, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը², փախչել իր երկրի լեռնային շրջանները: Սակայն Արտաշատ քաղաքը, հավատարիմ մնալով Տիգրան թագավորին՝ ցույց տվեց համառ դիմադրություն: Եվ պարթևները, որոնք չունեին ամրացված քաղաքների պաշարման փորձ՝ չկարողացան նրան առնել և պաշարումը խիստ երկարեց:

¹ Маршруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в Колхиду, Вестник древней истории, Москва, 1940, № 3—4, էջ 99—100.

² Cass. Dio, XXXVI, 51, 2.

Կասսիուս Դիոնի պատմելով՝¹ երբ Պարթևների թագավորը տեսավ, որ պաշարդամը խիստ երկար է տևելու՝ իր ուժերի մի մասը թողեց Տիգրանի որդուն և վերադարձավ իր երկիրը։ Սակայն հենց որ նա հեռացավ՝ Ծերունի Տիգրանը, որն իր շուրջն էր հավաքել իրեն հավատարիմ մնացած զորական ուժերը, հարձակվեց դավաճան որդու և աստամբած հայ իշխանների վրա, հաղթեց նրանց և հալածեց ու իր իշխանությունը վերահաստատեց ամբողջ իր երկրում։ Կրտսեր Տիգրանը հարկադրված եղավ Հայաստանից փախչել և ուղեց դեպ Միհրդատի մոտ ու ուղևորվեց դեպի Պոնոս, սակայն, իմանալով ճանապարհին, որ իր պապը ծանր պարտություն է կրել և կարոտ է ինքը օղնության՝ փոխեց իր ծրագիրը և դնաց Պոմպեյոսի մոտ։ Նա հույս ուներ, որ, համաձայնության դալով հռոմայեցիների հետ՝ կկարողանա այս նոր դավաճանության դնով ստանալ իր հոր դաճը և թագավորությունը։


Հռոմեական զորավարն ուրախ պիտի լիներ, անշուշտ, որ Տիգրանի ալյստամբ որդին, դավաճանելով իր հորը՝ ապավինում էր հռոմայեցիների հովանավորությանն ու օղնությանը։ Բայց Կրտսեր Տիգրանն արդեն ուշացել էր։ Նրա Պոմպեյոսի մոտ դալուց դեռ առաջ՝ Ծերունի Տիգրանը, տեսնելով որ անկարելի է միաժամանակ պատերազմել թե պարթևների ու իր որդու և թե հռոմայեցիների դեմ՝ սկսել էր, ինչպես վերև տեսանք, հաշտության բանակցություններ վարել Պոմպեյոսի հետ։

Հավանորեն, Պոմպեյոսն ինքը ևս դեմ չէր հաշտության, սակայն նա, օգտվելով Հայաստանում ծագած ներքին խռովություններից՝ ուղում էր, իհարկե, Տիգրանին առաջադրել խաղաղության պայմանները ըստ իր հայեցողության։ Կասսիուս Դիոնի ուշադրավ մի վկայությունից՝ պարզ ու որոշ երևում է, որ այդ բանում Պոմպեյոսին մեծապես օգնել էր Կրտսեր Տիգրանը, որն ամեն կերպ խոչընդոտել ու խանդարել էր սկսված բանակցությունները, Ըստ Դիոնի՝ որդու այս հակառակությունն էր պատճառը, որ Ծերունի Տիգրանը չէր կարողացել դաշն կնքել չափավոր պայմաններով։

Կրտսեր Տիգրանը, հույս ունենալով որ կստանա իր հոր դաճը՝ ուղեցույց դառավ հռոմեական զորքին և առաջնորդեց Պոմպեյոսին ուղիղ Արտաշատի վրա։

¹ Նույնը, XXXVI, 51, 2:

² Նույնը, XXXVI, 52, 1:



Այս արշավանքի ճանապարհը ևս պարզ կերպով որոշվում է Պեվտինգերյան քարտեզի Սատաղ—Բադավան—Արտաշատ հին ուղիքով, որ մանրամասն լուսաբանված է «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխարհագրական իմ ուսումնասիրության մեջ: Հռոմեական բանակը եկել էր Սատաղից Գաղտառի՝ ճիւղայով Գեփրիքեյ և այնուհետև գնացել էր Ալաշկերտի դաշտը և այստեղից Հայկական Պար կամ Աղրի-գաղ լեռնաշղթայի հարավային կողմով ու Կուջաղի լեռնանցքով մտել էր Արարատյան դաշտը:

Երբ Պոմպեյոսի զորաբանակը մոտեցել էր Արտաշատին՝ Տիգրան Բ-ը, տեսնելով որ դիմադրությունն աննպատակ է ու անօգուտ՝ վճռեց, ինչ դնով էլ լինի, համաձայնություն պալ Պոմպեյոսի հետ և գնաց ինքը անձամբ նրա մոտ ու կամավոր կերպով անձնատուր եղավ հռոմայեցիներին: Տիգրանի տեսակցություն մասին Պոմպեյոսի հետ հին աղբյուրները տալիս են խառնաշփոթ տեղեկություններ, որոնք կարևոր մի քանի կետերում իրարից զգալի չտրվող տարբերվում են: Ապպիանոսը, օրինակ, թեև ինքը՝ համապատասխան Կասսիուս Դիոնի և Պլուտարքոսի տեղեկություններին՝ վկայում է, որ Տիգրանի դնալը Պոմպեյոսի մոտ ինքնաբերաբար էր ու հոժարակամ, սակայն միևնույն ժամանակ մատնանշում է, որ ոմանք վկայում են նաև, որ Տիգրանին նախապես հրավերել էր Պոմպեյոսը¹:

Ինձ թվում է, որ այս վերջին տեղեկությունը, որը հիշատակված է Ապպիանոսի մոտ թուուցիկ կերպով և որը պատմությանական երկերում աչքաթող է արված, կարող է ճիշտ լինել, որովհետև Պլուտարքոսի մոտ ևս մատնացույց է արված, որ Տիգրանը, նախքան Պոմպեյոսի մոտ դնալը, ներս էր թողել Սարատաշտ նրա ուղարկած հռոմեական կայազորը: Անհավանական է, ուրեմն, որ Տիգրանը Պոմպեյոսի մոտ գնացել էր, իրոք, ո՛չ թե ինքնաբերաբար, այլ, , հավանորեն, հատուկ հրավերով ու նախնական բանակցություններից ու թերևս որոշ հավաստիացումներից հետո: Հռոմեական աղբյուրներն աշխատել են, ըստ երևույթին, քողարկել նախնական համաձայնություն հավանական այս փաստը և, Պոմպեյոսին մեծարելու համար, կարևոր են համարել առանձնապես շեշտել, որ Տիգրանն ապավինել էր Պոմպեյոսի ղթաարտությունը հրու և անվերապահ կերպով:

¹ Silius Coss. Dio, XXXVI, 52, 1--4; Plut., Pomp., XXXIII, 1--4 և App., Mithrid., 104.

Համաձայն վերոհիշյալ աղբյուրների տված տեղեկութուններին՝ ծերունի Տիգրանը, — որն այդ ժամանակ մոտ 75 ասրեկան էր, — Պոմպեյոսի մոտ եկել էր ձի հեծած, առանց արքայական ծիրանու, բայց գլխին ուներ իր խուլյոն՝ ու ապարոյր: Երբ նա հասել էր հռոմեական զորարանակի մուտքի առջև, նա ուղեցել էր, ինչպես այդ ընդունված էր հայերի մոտ, մտնել ճամբար ձիով: Սակայն Պոմպեյոսի թիկնապաշտների պահանջով նա, համաձայն հռոմեական կարգերի, իջավ ձիուց ցած, տվեց նրանց իր սուրը ու ներս մտավ ոտքով: Մտնելով Պոմպեյոսի մոտ, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը¹, նա դեն գցեց իր խուլյոնը և ուղեց խոնարհվել ու նրան ողջունել, սակայն Պոմպեյոսն իսկույն տեղից վերկացավ, նրան բարձրացրեց և նստեցրեց իր կողքին: Կասսիուս Դիոնի ասելով՝ Պոմպեյոսն այնուհետև Տիգրանին մխիթարեց և հայտնեց, որ նա ո՛չ միայն կմնա Հայաստանի թագավոր, այլև կհամարվի հռոմայեցիների բարեկամ ու դաշնակից: Այսպես, ծերունուն հանգստացնելուց ու քաջալերելուց հետո՝ Պոմպեյոսը նրան հրավիրեց ճաշի: Տիգրանի որդին, որը ներկա էր ու նստած էր Պոմպեյոսի մյուս կողքին և որը շույս ուներ Պոմպեյոսից ստանալու Հայաստանի դաշը, տեսնելով որ ինքը խաբված է՝ խիստ դժգոհ մնաց և Պոմպեյոսի մոտ չղնաց ճաշի, որին չապփրկված էր հոր հետ միասին:)

Պոմպեյոսի ու Տիգրանի այս հանդիպման ժամանակ նրանց մեջ կայացավ հաշտութիւն: Տիգրանը պետք է հրաժարվեր իր բոլոր նվաճումներից, այն է՝ Ասորիքից, արևելյան Կիլիկիայից, Փյունիկիայից, Կապադովկիայից, Կորդուքից ու Մոփքից և մնալու էր միմիայն իր հայրենի երկրի՝ Մեծ Հայաստանի թագավոր: Իսկ նրա որդին, կրտսեր Տիգրանը, ստանալու էր Մոփքը՝ (ըստ Ապպիանոսի² նաև Կորդուքը) և հոր մահից հետո ժառանգելու էր նրա գահը: Ոմանք, հիմնվելով Ապպիանոսի անորոշ մի վկայութան վրա՝³ կարծում են, որ Մոփքի թագավորութիւնը նա ստացել էր զեռ առաջ իր հորից:

Ծերունի Տիգրանը ո՛չ միայն հարկադրված եղավ հրաժարվելու իր նվաճումներից, այլև վճարելու էր Պոմպեյոսին 6000 տալանդ պատերազմական տուգանք, որն անում է այժմյան

¹ Cass. Dio, XXXVI, 52, 3.

² App., Mithrid., 106.

³ Նույնը, 104, ահա նաև Հ. Ասուրյան, «Բագարական վերաբերություններ», էջ 77:

դրամով մոտ 25 միլիոն գերմանական ոսկի մարկ կամ մոտ 121½ միլիոն ռուսական ոսկի ռուբլի: Բացի այդ, նա հռոմեական զորքերին ևս համաձայնել էր տալ առանձին նվեր՝ ամեն մեկ զինվորին 50 դրաքմե (համասար է մոտ 35 ոսկի մարկ կամ մոտ 171½ ոսկի ռուբլու), հարյուրապետներին 100-ական դրաքմե (=350 ոսկի ռուբլի) և զինվորական տրիբուններին 1-ական տազանդ (=2100 ոսկի ռուբլի)¹:

Թեև պատմական երկերում հաճախ մատնանշվում է, որ Պոմպեյոսի վերաբերմունքը դեպի Տիգրանը եղել է արտասովոր կերպով մեղմ, սակայն, ինչպես տեսնում ենք, հաշտության վերահիշյալ պայմանները բավական ծանր էին: Պետք է ասել, որ արտաքին մեղմությունը և արտակարգ ղեկավարությունը եղել են Պոմպեյոսի քաղաքական ու ռազմական դործունեության հիմնական հատկանիշները: Լինելով հռոմեական Ֆինանսիստների ու վաշխառուների կուսակիցը՝ Պոմպեյոսն ինքը ևս, ինչպես հայտնի է, իտալիայի ամենախոշոր վաշխառուներից մեկն էր: Նա գերադասում էր հռոմեական խմբերիալիզմի նպատակներն իրագործել ո՛չ թե ղենքի ուժով, ինչպես Լուկուլլոսը, որը խիղախ զինվորական էր, այլ խաղաղ ճանապարհով և առանց ռիսկի: Հայաստանը, ինչպես տեսնում ենք, նա մեծ հաջողությամբ կարողացել էր ընկճել ու կողոպտել առանց արյունահեղության ու զոհողությունների:

Հաշտության վերահիշյալ պայմաններից չէր կարող, իհարկե, դուր լինել Կրտսեր Տիգրանը: Իբրև վարձ իր դավաճանության՝ նա հույս ուներ ստանալու ո՛չ թե Ծոփաց երկրի թաղավորությունը, որը նա, ինչպես տեսանք, նախքան իր ապստամբությունը, ըստ երևույթին, արդեն ստացել էր հորից, այլ հայկական մեծ ու հզոր պետությունը: Չափազանց ծանր ու անարդար էր նա համարում նաև այն, որ պատերազմական վերահիշյալ տուգանքը վճարվելու էր, գլխավորապես, Ծոփքում գտնվող գանձապահեստներից, այսինքն՝ իր թագավորության միջոցներից:

Կասսիուս Ռիոնի պատմելով՝ Կրտսեր Տիգրանը, որը ըմբոստացել էր և չէր ուզեցել հանձնել իր հորը Ծոփքում գտնվող դանձերը՝ ձեռքակալվել էր Պոմպեյոսի հրամանով²: Պետք է

¹ Silius Strabo, XI, 14, 10 (530), Plut., Pomp., XXXIII, 3—4 և App., Mithrid., 104.

² Cass. Dio., XXXVI, 53, 3—5.

սակաւոյն ասել, որ նրա ձերբակալության մասին հին աղբյուրները տալիս են տարբեր տեղեկութիւններ: Ապպիանոսը, հակառակ Դիոնի, ակնարկում է, որ նա նոր դավադրութիւն էր կազմակերպել իր հոր դեմ: Իսկ Պլուտարքոսը մատնանշում է, որ նա՝ հրավիրված լինելով Պոմպեյոսի մոտ ճաշի՝ հրաժարվել էր դնալ և անարգել ու վիրավորել էր Պոմպեյոսին¹: Ըստիս այս երեք վկայութիւններն էլ կարող են որոշ չափով ճիշտ լինել: Կրտսեր Տիգրանը, որը դժգոհ էր մնացել և թշնամացել էր Պոմպեյոսին՝ կարող էր, իրոք, կոպտաբար վերաբերված լինել սրան, հակառակած լինել իր Թագաւորութեան գանձերի հանձնմանը և, միևնույն ժամանակ, կարող էր նաև դավար նյութած լինել իր հոր դեմ:

Կրտսեր Տիգրանի ձերբակալութիւնը, որը փաստորեն Պոմպեյոսի դաշնակիցն էր՝ բացահայտ բռնութիւն էր և խախտումը միջազգային իրավունքի: Միաժամանակ այդ թշնամանք էր ու վիրավորանք կալանավորի աներոջ՝ պարթևների Թագաւոր Հրահատ Գ-ի նկատմամբ: Ըստ Պլուտարքոսի վկայութեան՝

«Հրահատ Պարթևը մարդ էր ուղարկել [Պոմպեյոսի մոտ] պահանջելու երկաթաարդին, որ իր փեսան էր, նաև պահանջ հայտնելու, որպեսզի իրենց իշխանութիւնների սահմանը լինի Նիքրատ գետը: Պոմպեյոսը պատասխանել էր, որ Տիգրանն ավելի մոտ է իր հորը, քան աներոջը, իսկ սահմանը կլինի այն, որ կհամարվի իրակացի»²:

Հակառակ, ուրեմն, Հրահատ Գ-ի բողոքներին, որը հիշեցնում էր Պոմպեյոսին իր կնքած դաշինքը հռոմայեցիներին հետ՝ կրտսեր Տիգրանը և նրա կիներն ու դուստրը՝ ուղարկվեցին չուսով Հռոմ, որպեսզի մասնակից լինեն Պոմպեյոսի հողթահանդեսի շքերթին:

Պոմպեյոսի վարձագծի այս անակնկալ փոփոխութիւնը պարթեական Թագաւորութեան հանդեպ համապատասխանում էր կատարելապես Հռոմի արտաքին, նենդ ու խարդախ քաղաքականութեանը: Քանի որ պոնտական ու հայկական Թագաւորութիւնները թշնամի էին Հռոմին և պատերազմում էին նրա դեմ՝ վերջինս իրեն ցույց էր տալիս բարեկամ պարթեներին: Հռո-

¹ App., Mithrid., 105:

² Plut., Pomp., XXXIII, 4:

³ Plut., Pomp., XXXIII, 4:

⁴ Տես նույնը, XLV, 4:

մեական զորավարները, ինչպես Սուլլան և Լուկուլլոսը, նույնպես և Պոմպեյոսը՝ կամ բարեկամական բանակցություններ էին վարում նրանց հետ և կամ դաշինք էին կնքում ու խոստանում նրանց թողնել Միջագետքը մինչև Եփրատ գետը։ Բայց այժմ պոնտական թագավորությունն այլևս գոյություն չունեւր, իսկ Տիգրան թագավորը ճանաչված էր իբրև բարեկամ ու դաշնակից Հռոմի։ Ուստի և Հռոմը, որը չէր ուզում ունենալ իր շուրջը հզոր ու մեծ պետություններ՝ հիմա հովանավոր դառավ Տիգրան թագավորի և փոխեց իր վերաբերմունքը դեպի Հրահատ Գըր։ Պարթևական թագավորությունը Հռոմի համար այլևս հանդուրժելի չէր իբրև անկախ ու ուժեղ թագավորություն։ Եվ շուտով, ինչպես կտեսնենք, նրանց նախկին բարեկամությունը վերածվեց անհաշտելի թշնամության։

Դժվար չէ նաև կռահել, թե ինչո՞ւ Պոմպեյոսը Հայաստանի դա՛նը չտվեց Կրասեր Տիգրանին։ Շատ պարզ է, որ ծերունի Տիգրանը, որը պարթևական թագավորության ոխերիմ թշնամին էր՝ Հռոմայեցիների համար ավելի ցանկալի դաշնակից էր, քան Կրասեր Տիգրանը, որը փեսան էր ու բարեկամը Հրահատ Գըրի։

Ներգրավելով Հայաստանը հռոմեական ազդեցության շրջանակի մեջ՝ Պոմպեյոսը, ինչպես վկայում է Պլուտարքոսը¹, թողեց այստեղ իբրև վերահսկիչ Ափրանիուսին, իսկ ինքն առաջնորդեց հռոմեական զորքը դեպի հյուսիս ընդդեմ Միհրդատ Պոնտացու, որը սակավաթիվ իր զորքերով պառսպարվել էր Կողքիսում։

66/65 թվի ձմեռը Պոմպեյոսի զորքերը մնացին Կուր գետի մոտերքում, այժմյան Ախալքալաքի շրջանում։ Այստեղ դեկտեմբերի կեսերին նրանց վրա հարձակվեցին իբերները և աղվանները, բայց այդ հարձակումը, որը չափազանց վտանգավոր կարող էր լինել Պոմպեյոսի զորաբանակի համար՝ չէր հաջողվել։ 65 թվի գարնան սկզբին Պոմպեյոսը արշավեց իբերիա և, հաղթելով իբերների Արտոկես թագավորին ու ապահովելով իր թիկունքը՝ շարունակեց իր արշավանքը Միհրդատ Եվպատորի դեմ։ Այս արշավանքն ապարդյուն անցավ, որովհետև Միհրդատը կարողացել էր Կողքիսից անցնել Ղրիմ և վերանվաճել էր այստեղ իր Բոսփորյան թագավորությունը։ Վերադառնալով Կողքիսից Հայաստան՝ Պոմպեյոսը արշավեց այստեղից Աղվանք, եվ աղվան-

¹ Plut., Pomp., XXXIV, 1.

ների Օրոյզես Թագավորը, հաղթվելով նրանից՝ ճանաչեց, թե՛ պես և իրերիսյի Արտոկես Թագավորը, Հռոմի գերիշխանությունը:

65 Թվի այս երեք արքայանքները մանրամասն նկարագրված են իմ «Տիգրան Բ-ը և Հռոմը» աշխատությունների մեջ¹:

Մինչ Պոմպեյոսը պատերազմ էր վարում իրերների ու ադյանների դեմ՝ պարթևները դրավել էին Միջագետքը, որն, ինչպես տեսանք, համաձայն Պոմպեյոսի հետ կնքած դաշինքի՝ մինչև Եփրատ դեռը պատկանելու էր նրանց: Պարթևները ներխուժել էին նաև Կորդվաց երկիրը, որի տիրապետության համար վեճ էր առաջացել իրենց ու հայերի մեջ: Սակայն Պոմպեյոսը պահանջեց Հրահատ Գ-ից մաքրել Կորդուքը, առարկելով որ այդ երկիրը պատկանում է, իրապես, Տիգրան Բ-ին: Չսպասելով նույնիսկ Հրահատ Գ-ի պատասխանին՝ նա հրամայեց իր օգնականներից մեկին, Ափրանիոսին, գրավել ու հանձնել Կորդուքը Հայոց Թագավորին:

Չնայած Պոմպեյոսի Կորդուքի ոռոգողություններին և դաշնադրության անպատկառ խախտմանը, որի համաձայն հյուսիսային Միջագետքը մինչև Եփրատ գետը ճանաչված էր որպես պարթևներին պատկանող երկիր՝ Հրահատ Գ-ը չհամարձակվեց պատերազմել հռոմայեցիների դեմ: 64 թվի դարնանը նա ղեկեց իր զորքերով Հայաստան և հարձակվեց Տիգրանի վրա, որն օղություն խնդրեց դաշնակից հռոմայեցիներից:

Այս դեպքը Պոմպեյոսի համար մի հարմար առիթ էր ստանալու սկսելու նաև սյարթիների դեմ, ինչպես այդ ցանկանում էին, իրապես, նրա կուսակիցներից ու սպաններից շատերը: Սակայն Պոմպեյոսը, որ խիստ ղզույշ էր և չունեւ Լուկուլլոսի հանդուգն համարձակությունը, չուզեց բախտախաղի դնել իր ձեռք բերած աղողությունները և խուսափեց կռվից: Նա արդարանում էր նրանով, որ հռոմեական ժողովուրդն այդ իրեն չի հանձնարարել և որ դեռևս վերջնականապես զինաթափ չի արվել Միհրդատ Պոնտացին²:

Պատերազմից հռոմայեցիների հետ, ինչպես ասացինք, խույս էր տալիս նաև պարթևների Թագավոր Հրահատ Գ-ը,

¹ Տես էջ 200—206, Համեմատե նաև իմ հոդվածը „Круговой путь Помпея в Закавказье“, Вестник древней истории, 4, Москва, 1939, էջ 70—82:

² Cass. Dio, XXXVII, 7, 1:

որը նույնպես չունեցաւ արիութիւնն ոտքի ելնելու հոռմեական ուխտանենդ ղորաւարի դեմ: Եւ որովհետեւ նա նորից դեռապան ներ էր ուղարկել Պոմպեյոսի մոտ՝ վերջինս հայտնեց նրան, որ կուղարկէ երեք միջնորդ դատաւորներ, որոնք կ'արթննան սահմանների վերաբերյալ նրա ու Տիգրանի վեճը: Հրահատ Գ-ը և Տիգրանը դադարեցրին պատերազմը և համաձայնեցին ընդունել միջնորդների վճիռը:

Այնուհետև ուղարկված դատաւորները քննարկման ենթարկեցին նրանց դանդաղներն ու պահանջները և կայացրին իրենց վճիռը հոգեւտ Տիգրանի: Համաձայն նրանց որոշման Հայոց Թաւափորը ստացաւ ո՛չ միայն Կորդվաց երկիրը, այլև հյուսիսային Միջագետքի մի մասը:

Երբ կատարվում էին այս անցքերը, Միհրդատ Պոնտացին, որը վերահաստատել էր իր իշխանութիւնը Բոսփորյան Թագավորութեան մեջ՝ խաղաղութեան նոր առաջարկութիւններ արեց հռոմայեցիներին և հայտնեց, որ եթէ Պոմպեյոսը համաձայնի վերադարձնել իրեն Պոնտական Թագավորութիւնը՝ ինքը պատրաստ է հպատակվելու Հռոմին որպէս վասսալ և հարկատու: Պոմպեյոսը, ինչպէս և 66 թվին, նրան պատասխանեց նորից, որ նախքան բանակցութիւններ վարելը՝ նա պետք է անձամբ դա և հնազանդի Հռոմին: Հաշտութիւնն այլևս անհնարին էր: Եւ Միհրդատը վճռեց նախապատրաստվել Հռոմի դեմ կռիւի և մշակեց նոր արշավանքի հանդուգն մի ծրագիր: Նա մտադիր էր, դաշն կապելով սկյութների, թրակացիների և կելտերի հետ՝ արշավել Իտալիա Դանուբ գետի հովիտներով և Ալպյան լեռների վրայով, ինչպէս այդ իրենից առաջ արել էր կարթագե-նացի Հաննիբալը: Այդ մեծ արշավանքի համար հարկավոր էին, իհարկե, թե մարդկային և թե նյութական վերջնական ուժեր ու միջոցներ: Եւ 63 թվին, երբ Միհրդատը վերջացնելու վրա էր ռազմական իր պատրաստութիւնները, որոնց ամբողջ ծանրութիւնն ընկնում էր Բոսփորի բնակչութեան ու քաղաքների վրա՝ հանկարծակի նրա դեմ բռնկվեց տարերային կատաղի ապստամբութիւն, որին մասնակից էին ո՛չ միայն գրեթէ բոլոր քաղաքները, այլև նրա ղորքն ու նրա որդին Փարնակը: Մերունի Միհրդատը հասկացաւ, որ իրեն չեն խնայելու և որ այլևս փրկվելու ոչ մի հնար չկա: Պաշարված լինելով Պանտիկապոն (այժմյան Կերչ) քաղաքի իր ամրոցում՝ նա չուղեց անձնատուր

1 Cass. Dio, XXXVII, 7, 3; App., Mithrid., 106 և Plut., Pomp., XXXIX, 31

դինել ապստամբներին և իր կյանքին վերջ տվեց ինքնասպանությամբ (63 թվի զարնանը) :

64 և 63 թվերին Պոմպեյոսը քաղաքականապես կադմակերպեց իր նոր նվաճած երկրները և կարգավորեց նրանց վարչական ներքին գործերը: Դեռևս 64 թվին, երբ նա դռնվում էր դեռ Պոնտոսում, նա դարձրել էր Նիկոմեդեսի նախկին թագավորութունը, Բիթանիան և Միհրդատի պոնտական թագավորության արևմտյան մասը հռոմեական նահանգ: Սելեվկյանների իշխանութունը հայտարարվեց Ասորիքում վերացված, և այս ամբողջ երկիրը վերածվեց հռոմեական նահանգի: Սելեվկյան Անտիոքոսը դառավ Հռոմի վասսալ և փոխանակ Ասորիքի ստացավ Կոմագենի փոքր թագավորութունը, որի կենտրոնն էր Ամոնառ մայրաքաղաքը: Ընդարձակ նոր երկրամասեր ստացան Հռոմի բարեկամ և դաշնակից Կապպադովկիայի Արիորարզանես թագավորը և Գալատիայի Դեյոտարուս իշխանը, որոնք մեծ ծառայություններ էին մատուցել հռոմայեցիներին պոնտական և հայկական պատերազմների ընթացքում: Պոմպեյոսը տվեց Արիորարզանեսին Կիլիկիայից անջատված մի քանի շրջաններ և ամբողջ Մոլիաց թագավորութունը: Սրան էր այժմ պատկանում Բելրատի նշանավոր դետանքը և Տոմիսա ամրոցը: Իսկ Դեյոտարուսը, որը հայտարարվեց թագավոր՝ ստացավ Պոնտական թագավորության արևելյան մասը՝ արևելյան ծովափնյա Պոնտոսը, որի մեջ էին Փոռնակիա և Տրաքիդոն քաղաքները, ու նաև Փոքր Հայքը:

Եկերատ դետի արևելակողմում Հռոմի դերիշխանութունը ճանաչել էին և նրա ազդեցության շրջանակի մեջ էին համարվում ո՛չ միայն Հայաստանը, որը հայտարարված էր բարեկամ ու դաշնակից հռոմեական ժողովրդի, այլև Ասորպատականը, Խեբրեան, Կոդքիսը, Ադլանքը, Օսրոենը և մի քանի այլ արաբական փոքր ցեղեր հյուսիսարևելյան Միջագետքում:

Հայաստանը, որը բարեկամ ու դաշնակից էր հայտարարված Հռոմի և անվանապես ընդունել էր սրա դերիշխանութունը՝ դառավ այժմ հռոմեական աշխարհակալության ռազմական առաջապոստը: Պոմպեյոսը հիմնապես այնուհետև փոխեց իր քաղաքականութունը նրա հանդեպ: Տիգրանը ևս, ինչպես և Արիորարզանեսը և Դեյոտարուսը, ստացավ Պոմպեյոսից և կամ սրա աջակցությամբ ո՛չ միայն Կորդուքը և հյուսիսային Միջա-

գետքը, որոնց միացումը Հայաստանին վերև հիշատակել էինք՝ ալլև, հավանորեն, Կղարջքը, Դերջանը և Ակիլիսենը¹, որն այդ ժամանակ պարունակում էր իր մեջ բացի հին Եկեղյաց գավառից նաև Դարանաղին, Մանանաղին, Աղյունը և Մզուրը։ Այսպիսով Մեծ Հայաստանը, ինչպես տեսնում ենք, Տիգրան Բ-ի ժամանակ ևս իր սահմաններն ընդարձակել էր թե Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան և թե Փոքր Հայքի ու Ծոփաց աշխարհի հարակից շրջաններում։

Պոմպեյոսի սիրաշահական նոր քաղաքանությունը Մեծ Հայաստանի հանդեպ արտահայտվեց նաև նրանով, որ «Թագավորների Թագավոր» պատվանունը, որը մինչև Տիգրանը կրել էին պարթևների թագավորները և ուրը, Տիգրանի աշխարհակալության տապալումից հետո, հռոմայեցիները սկզբում ճանաչել էին իբրև Հրահատ Գ-ի տիտղոս՝ այժմ վերապահվեց միմիայն Տիգրանին, իսկ Հրահատ Գ-ին սկսեցին անվանել լուկ «Թագավոր»։

Պարթևների թագավորը հարկադրված եղավ անտրտունջ կեդրով տանել այդ ակնբերելի փրավորանքներն ու թշնամանքները։ Հռոմի այս խաբված գաշնակիցը այժմ ինքն էր գտնվում երկու կրակի մեջ, ինչպես 66 թվին նրա խոյանը՝ Տիգրանը։ Ատորիքի սահմանում կաղժ և պատրաստ կանգնած էր Պոմպեյոսի մեծ զորաբանակը, իսկ Միջագետքի և Ատրպատականի կողմից սպառնում էին Պարթևներին Հռոմի նոր գաշնակցի՝ Տիգրանի հալկական զորքերը։ Հրահատ Գ-ը հիմա նոր միայն հասկացած կլիներ, որ իր դաշնակցությամբ հռոմայեցիների հետ նա, ինչպես նախադրույալ էր իրեն Միհրդատը՝ կորստյան էր մատնել ո՛չ միայն իր հարևաններին, այլև ինքն իրեն։

Պոմպեյոսի իտալիա վերադառնալուց հետո (61 մեր թվառաջը)՝ Տիգրան Բ-ը խաղաղ ու անվրդով Թագավորեց Հայաստանում մինչև խորին ծերություն, հավանորեն, մինչև 66 կամ 65 թվը։ 66 թվին նա դեռ կենդանի էր և հիշատակված է Կիկերոնի ճառերից մեկում²։ Իսկ Կրասսոսի արշավանքի ժամանակ, 54 թվին, Հայաստանում միանձնորեն Թագավորում էր նրա որդին՝ Արտավազդ Բ-ը։ Լուկիանոսը վկայում է, որ Տիգրանը վախճանվել էր խոր ծերության մեջ 85 տարեկան հասակում³։ Եթե

¹ Տես Markwart, Die Genealogie der Bagratiden, էջ 63 և իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 73 և իմ հոդվածը „Маршруты понтийского похода Помпея“, Вестник древней ист., 3—4, 1940 г., էջ 99»

² Pro Sestis, 27, 69»

³ Տես Lucianus, Makrobiol, Bibl. Teubn.:

այս վկայութիւնը, որը կարող է կասկածելի համարվել, հնա-
բաժնոր լինի հետադայում հաստատել՝ կարելի կլինի Ինթադրել,
որ նա ծնված պիտի լինէր 141 կամ 142 թ. (մեր թվ. առաջ)
և, ուրեմն, մոտ տասը տարով մեծ եղած պիտի լինէր Միհր-
դատ Եփլատորից, որը ծնվել էր, համաձայն Ռեյնաքի, 132
թվին¹ :

Տիգրանի կինը՝ Կլեոպատրան, ըստ երևույթին, թողած է ե-
ղել իր ամուսնուն և հեռացած է եղել իր հոր մոտ, հաճանո-
րեն, Կրտսեր Տիգրանի ապստամբութեան ժամանակ։ 63 թվին,
իւր հոր ինքնասպանութեան ժամանակ, նա ևս, ինչպես հայտնի
է, ղտնվել է իր հոր հետ Պանտիկապոն քաղաքում² :

Տիգրան Բ-ի հեռ վերջանում էր Հայաստանի մեծապետա-
կան վերելքի խիստ կարճատև շրջանը։ Շատ պարզ է, որ այս
հզոր թագավորը, որը Հայաստանը դարձրել էր լայնածավալ
պետութիւն և իրեն նպատակ էր դրել զարգացնել իր երկրում
հելլենիստական քաղաքային կուլտուրան և զուրս հանել հայ
ժողովուրդը հետամնաց կացութիւնից՝ չէ կարող համարվել
միջակ ու սովորական մի դեմք։ Սակայն պատմական խոչոր ու
առաջավոր այս դեմքը, դժբախտաբար, աղավաղված ու խեղա-
թյուրված է պատմագիտական դրեթե բոլոր օտար և հայ եր-
կերում։

Տիգրանի սխալ ընուլթագրերը բոլոր այդ երկերում պետք է
ըստիս անվերապահ կերպով մերժվեն որովհետև զրանք, ինչ-
պես տեսանք, հիմնված են, գլխավորապես, Պլուտարքոսի և
նրա սկզբնաղբյուրների չարամիտ ու հնարովի հերյուրանքների
վրա, որոնք չունեն պատմական նշանակութիւն։

Տիգրան Բ-ը, ինչպես և Միհրդատ Եփլատորը, անտարա-
կույս, հելլենիստական տիպի միապետներ էին, որոնք բուն
թաւրով առաջ էին տանում Ալեքսանդր Մակեդոնացու ու նրա
հաջորդների քաղաքակրթական մեծ գործը։ Թե ինչպիսի խոր
արմատներ էր ունեցել հելլենական կրթութիւնը հայկական ար-
քունիքում՝ այդ երևում է նրանից, որ Տիգրանի որդին՝ Արտա-
վազդը, ինչպես վերև ասացինք, դրած է եղել հունարեն լեզվով
ողբերգութիւններ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի
քանիսը հայտնի են եղել Պլուտարքոսին³ :

¹ Mithridate Eupator, էջ 52:

² Նույնը, էջ 405:

³ Plut., Crassus, XXXIII, 1.

Տիգրանի և Միհրդատի վերանորոգչական ու առաջադիմական գործունեությունը վերջ դրին Լուկուլլոսի և Պոմպեյոսի արշավանքները: Հաղթող ու աշխարհակալորեն առաջ շարժվող Հռոմը ո՛չ միայն ամայացրեց և ավերակների կույտ դարձրեց Պոնտոսի և հարավային Հայաստանի հարուստ ու փարթամ քաղաքները և գյուղերը, այլև, հաստատվելով մշտականապես Ասորիքում՝ հեաղհետե առաջ բերեց ինչպես Հայաստանում, նույնպես և ամբողջ Առաջավոր Ասիայում, հելլենիստական քաղաքակրթության թուլացում և կուլտուրական հետադիմություն: Հատկապես Հայաստանում ու նրա հարևան Պարթևական թագավորության երկրներում հելլենիզմը և հելլենական քաղաքային կուլտուրան հեոգհետե զիջեցին իրենց տեղը իրանական հին կենցաղին ու ավանդություններին, որոնք խոր արմատեր ունեին առանձնապես այս երկրներում:

Հոմեոսական աշխարհակալության հաստատմամբ Եփրատ ու Տիգրիս դետերի մոտ Հին Հայաստանի համար ստեղծվեց քաղաքական ծանր ու տանջալից բուժերական կացություն, որն այնուհետև տևեց երկար դարեր: Գտնվելով երկու հզոր թշնամիների՝ Հռոմի և Իրանի միջև՝ Հայաստանը հարկադրված եղավ, հակառակ հայ ժողովրդի կենսական շահերին, մասնակցել լինել կատաղի ու անվերջ պատերազմներին, որ պարբերաբար վերսկսում էին իրար դեմ հարևան մեծ պետությունները:

Հայկական լեռնաշխարհը հենց ինքը զառալ այնուհետև միջազգային պայքարի ու մրցությունների առարկա և կտտարում էր հաճախ հենարան երկրի ու ռադմադաշտի ծանր դեր: Կռվող պետությունների համար Հայաստանին տիրապետելը խիստ կարևոր էր և պայմանավորված էր ո՛չ միայն այն հանգամանքով, որ նրա մեջ գտնվում էր համաշխարհային առևտրական ճանապարհների հյուսիսային մեծ գլծը, այլ, գլխավորապես, նրա ռադմական ու ստրատեգիական մեծ կարևորությամբ:

Ուստի և քաղաքական մերձեցումը Հայաստանի հետ կամ նրա քոնի նվաճումը այնուհետև ամենահիմնական հարցը եղավ թե Հռոմի և թե Պարթևների արտաքին քաղաքականության:

¹ Տես Eduard Meyer. Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin, 1925, էջ 62 հն.:

ԿՐԱՍՍՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԲԻ ԴԱՇՆԱԳՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԹԵՎՆԵՐԻ ՆՏՏ

1. Ընդարձակված Մեծ Հայաստանը Արևավազի Բ-ի ժամանակ։—2. Խաղաղության լաճագործումն Արևելքում։—պարբերների հաշտարար քաղաքականությունը հայերի հանդեպ։—3. Կրասնոսի պարբերական արժավանքի նպասակը։—արևմտյան Միջագետքի քաղաքների նվաճումը։—Արևավազի գալուստը Ասորի ու Երա առաջացի։—4. Օրոդեսի արժավանքը Հայաստան։—Արևավազի արած նոր նախագործացումը։—5. Հռոմեական զորքի սոսկալի պարությունը։—Օրոդեսի հաճությունը Արևավազի հետ։—6. Պարբերական-հայկական արժավանքներն Ասորիում։—7. Քաղաքացիական պատերազմը Հռոմում և Տափալեսի ու Մեգաբասի հայկական զորամասերի մասնակցությունը այդ պատերազմին։—Պոմպեյոսի սպանությունը և Փառնակի պարությունը Ջելայի մոտ։—8. Պարբերների համաձայնությունը հանրապետականների հետ։—Իսկուրի իսխանության հաստատումն Ասորիում։—9. Հայաստան բերված հրեական գաղթականությունը։—10. Պարբերների պարությունը Ասորիում։—Անտոնինոսի ծագիլը։

Տիգրան Բ-ի որդին, Արաավազը, ինչպես ենթադրում են, դեռևս հոր ծերության օրերին նրա աթոռակիցն էր և նրան հաջորդել էր 56/55 թվերին մեր թվականությանից առաջ։

Իր դրամների վրա, որ պահպանվել են մինչև մեր օրերը՝ Արաավազին անվանում է իրեն «թագավորների թագավոր»։ Նրա ժամանակ Մեծ Հայաստանը, իրապես, հզոր պետություն էր ու զգալի չափով ընդարձակվել էր, որովհետև Տիգրանյան Հայաստանին, ինչպես անսանձ, միացվել էին Կորդուրը, Հյուսիսային Միջագետքը և որոշ երկրամասեր Հայկական լեռնաշխարհի արևմտակողմում։ Մեծ Հայաստանի սահմաններից դուրս էր մնացել միայն Մոփղը, որը Պոմպեյոսը 62 թվին (մեր թվ. առ.) տվել էր Կապադոկիայի Արիորարզանի թագավորին։

Ինչպես հայտնի է, առաջին անգամ միայն Տիգրան Բ-ի ժամանակ Մեծ Հայաստանն այնքան էր ընդարձակվել, որ իր մեջ բովանդակում էր Խորենացու Աշխարհացույցի մեջ հիշատակված 15 նահանգները։

«Հայաստան աշխարհադրական զաղափարը, — ասում է Հյուբշմանը, — հաստատուն կերպով զարգացավ Տիգրանի ժամանակ, որն առաջին անգամ Հայաստանին միացրեց Ծոփքն ու Կորդուքը: Հաջորդ դարերին այս զաղափարը տիրող մնաց հայերի մոտ, թեև քաղաքական հապարհուն-թյունները միշտ նույն զաղափարին չէին համապատասխանում: Եթե հարավային նահանգները պարսիկներին էին անցնում, արևմտյանները՝ հույներին, հյուսիսայինները՝ վրացիներին կամ աղվաններին, և եթե հռոմայեցիներն ու պարսիկները երկիրը իրենց մեջ էին բաժանում՝ Հայաստանը հայերի համար միշտ այն երկիրն էր համարվում, որը — հին բացատրությունը — իր սահմաններն ուներ հարավից Մասիս լեռը (Տավրոսը, որ Հայաստանը բաժանում էր Միջագետքից, Սուրբ., 521, 522, 527), արևելքից՝ Սուրբառանի ու Մեդիանի, հյուսիսից՝ Կասպից ծովի կողմերը գտնվող Պարաքոսթրյան լեռները, Վրաստանը, Աղվանքը և Կովկասը՝ Մոսքոյի, և Կողքիսյան լեռներով, արևմուտքից՝ Պարսիսը և Սիլուդիսսը, Փոքր Հայքն ու Եփրատը (որը Հայաստանը բաժանում էր Կապպադովկիայից և Կոմմագենից)»¹:

Սաղապությունը, որ հաստատվել էր պարթևների հետ Պոմպեյոսի հաղթական կռիվներից հետո, անշուշտ, լուրջ մի ղրնադադար էր Հսոմի համար, որը հարմար ժամանակի էր սպասում, որպեսզի շարունակեր իր նվաճումներն Առաջավոր Ասիայում: 66—62 թվերին (մեր թվ. առաջ) Հռոմեական հանրապետությունը, ինչպես հայտնի է, հենց ինքը ծանր գրություն մեջ էր գտնվում Կատիլինայի դավադրության և քաղաքացիական ներքին պատերազմի պատճառով:

Դավադրության ճնշումից հետո Հռոմում իշխանության գլուխ անցան 60 թվին մեր թվականությունից առաջ Պոմպեյոսը, Յուլիուս Կեսարը և Կրասոսը, որոնք կաղմեցին այսպիսի կոչված ստալին տրիումվիրատը կամ եռապետությունը: 56 թվին (մեր թվ. ա.) սրանք բաժանեցին իրենց մեջ Հռոմեական աշխարհածալալ պետության երկրները, և Ասորիքը բաժին ընկավ Մարկուս Կրասոսին:

Շուտով, Արտավադը Բ-ի թագավորության արդեն սկզբի

¹ Տես Հյուբշման, «Հին հայոց տեղւոյ անունները», Թարգմ., Պիեզիկ-ճյանի, Վիեննա, 1907, էջ 26—27.

տարիններում, խաղաղությունն Արևելքում նորից խախտվեց, ու վերսկսվեց հոռմեական, նվաճողական արշավանքն այս անգամ Պարթևական թագավորության դեմ: Նոր այս պատերազմը բավական հարմար ժամանակ էր նախապատրաստվում, որովհետև Պարթևական թագավորության մեջ սկսվել էին 57 թվին (մեր թվ. ա.) ներքին խռովություններ:

Մոտալորապես հենց այս 57 թվին Հրահատ Գ-ի որդիները, Օրոդեսը և Միհրդատը, ուզենալով դրավել հոր պահը՝ նրան սպանել էին: Թագավորությունն աշուհետև ստացավ Հրահատ Գ-ի մեծ որդին՝ Օրոդեսը: Բայց Միհրդատը, դժգոհ մնալով՝ ապստամբեց և, զահնկեց անելով եղբորը՝ կարճ ժամանակով թագավոր դառավ ինքը (56—55 մեր թվ. ա.)¹: Շուտով սակայն նա՝ պարտվեց և ենթարկվեց մահապատժի:

Մոմդենը և ուրիշ պատմադեմոններ ենթադրում են, որ Հրահատ Գ-ի որդին՝ Միհրդատ Գ-ը 56 թվին պատերազմ էր սկսել Արտավազդ Բ-ի դեմ²: Գերմանական գիտնական Յուստին կարծում է, լացի այդ, որ իբր թե այս պատերազմի ժամանակ պարթևները վերադարձած են եղել Կորդուքը³: Այս ենթադրությունները պարզապես թյուրիմացության արդյունք են և, ըստ երեվոյթին, հիմնված են, դիտավորապես, Յուստինոսի սխալ համակցված վկայության վրա:

Ինչպես մատնացույց է արել Գուտշմիդը, Յուստինոսի համապատասխան վկայությունը (XII, 4,) վերաբերում է, իրապես, ոչ թե Միհրդատ Գ-ին և Արտավազդ Բ-ին, այլ Միհրդատ Բ-ի կռիվներին ընդդեմ Արտավազդ Ա-ի⁴:

Իմ «Տիգրան Բ-ը և Հոռմը» աշխատության մեջ մատնացույց էր արված, որ Հրահատ Գ-ը դեռևս 64 թվին (մեր թվ. ա.) փոխել էր իր թշնամության քաղաքականությունը Հայաստանի հանդեպ և լույսայն համաձայնել էր ղեկել Տիգրանին Կորդուքը և հյուսիսային Միջագետքը: Նա, ըստ երևույթին, հույս ուներ, որ շնորհիվ բարի հարևանական այդ նոր քաղաքականության պարթևներին կհաջողվի հաշտվել հայերի հետ և ստանալ նրանց ցանց օգնություն ընդդեմ հոռմայեցիներին⁵:

¹ *See* Turn, *The Cambridge Ancient History*, vol. IX, 1932, էջ 604 և 613

² *Монкеев*, *Римская история*, III, Москва, 1887, էջ 292:

³ *Justi F.*, *Geschichte Irans, Grundriss der Iranischen Philologie*, If, 5, էջ 498:

⁴ *See* *Gutschmid*, *Geschichte Irans*, էջ 86, ծան. 2:

⁵ *See* «Տիգրան Բ-ը և Հոռմը», էջ 208 և 211:

54 ԹՎԻ սկիզբներին (մեր ԹՎ. առաջ) Եկավ Ասորիք Կրասսոսը, որը ստանձնելու էր այս երկրի կառավարությունը և արդեն սկսել էր պատերազմի պատրաստվել ընդդեմ պարթևների: Ասորիքի այս նոր կուսակալը, որը Հռոմի ամենահարուստ ու ընչաքաղց վաշխառուներից մեկն էր՝ ուղղում էր թե իր բաժինն ստանալ Արևելքի հարստություններից և թե հռչակվել, որպես Լուկուլլոսն ու Պոմպեյոսը, մեծ դորավար: Պլուտարքոսը, որը Կրասսոսի պարթևական արշավանքը նկարագրել է ավելի անաչառ կերպով, քան իր փառաբանած հերոսների, Լուկուլլոսի և Պոմպեյոսի, հայկական արշավանքները՝ նրա այս արշավանքի նպատակի մասին տալիս է հետևյալ տեղեկությունը:

«Այսուհետև, —ասում է Պլուտարքոսը, —նա [Կրասսոսը]՝ անշարի մեծամտած ու կուրացած՝ իր մեծ գործի նպատակ էր դնում ոչ միայն Ասորիքը կամ պարթևներին, այլ, համարելով Լուկուլլոսի արածը Տիգրանի դեմ և Պոմպեյոսինը Միհրդատի դեմ երեսայական սոսկ խաղեր՝ ինքը իրեն խորոսիկ հույսերով հասցնում էր մինչև Բակտրիա, Հնդկաստան և Օվկիանոս»¹:

54 ԹՎԻ ամառը (մեր ԹՎ. առաջ) Կրասսոսը ներխուժեց արևմտյան Միջագետք, որը ենթարկված էր պարթևների իշխանության: Այստեղ նա ի փախուստ դարձրեց պարթևների Սելլակես կուսակալին և դրավեց Նիկեփորիումը ու մի քանի այլ քաղաքներ: Սակայն նա, փոխանակ իր հաջող կերպով սկսած արշավանքը շարունակելու՝ վերադարձավ այնուհետև Ասորիք, Կրասսոսի այս վերադարձն Ասորիք Պլուտարքոսը իրավացի կերպով համարում է նրա ամենամեծ սխալը², որովհետև պարթևները մոտ մեկ տարի ժամանակ վաստակեցին և կարողացան նախապատրաստվել պատերազմի:

Ասորիքում Կրասսոսը հավաքեց ձմեռվա ընթացքում որոշ քանակություն հեծելազոր և, օգտագործելով իր ազատ ժամանակը՝ կողոպտեց Հիերապոլիս-Բամբյունկեի և Նրուսաղեմի տաճարները:

Նույն այս ԹՎԻ Կրասսոսի մոտ եկավ Ասորիք Արտավազդ Բ-ը, որը դաշնակից էր ու բարեկամ Հռոմի: Նա ունեւր իր հետ 6·000 հեծելազոր և խոստանում էր տալ 10·000 զրահավոր հե-

¹ Plut., Crassus, XVI, 2:

² Նույնը, XVII.

ծեւազոր և 30.000 հետեւազոր: Բայց, ի նկատի ունենալով իր սեփական երկրի անվտանգությունն ու տալահովությունը՝ առաջարկեց, որ հռոմեական զորքը արշավէ պարթևների դեմ ո՛չ թէ Միջագետքի հարթավայրերով, այլ Հայաստանի ու Ատրպատականի լեռնային շրջաններով, որակզ չէր կարող աղատ չարժվել ու վտանգավոր լինել պարթևական հեծելազորը: Կրասսոսն այս առաջարկը չընդունեց և որոշեց զնալ Բաբելոն և Սելեւկիա ամենակարճ ճանապարհով:

Այս խորհրդակցության մասին, որ անցի էր ունեցել Ասորիքում, մանրամասն տեղեկություն է ապրիս միայն Պլուտարքոսը, որի կարևոր այդ վկայությունն ավելորդ չեմ համարում մեջ բերել բառացի թարգմանությամբ:

«Մանավանդ նրան [Կրասսոսին] սիրտ ավեց,—պատմում է Պլուտարքոսը,—Արտավազդ Արմենի ժամանումը: Նա եկավ բանակ վեց հազար հեծելազորով: Իսկ սրանք, ինչպես ասում էին, միմիայն թաղավորի թիկնապահներն էին և ուղեկիցները: Նա խոստանում էր, որ կտա տասը հազար այլ զրահավոր հեծերազոր և երեսուն հազար հեռեալոր, որոնց կպարենավորե ինքը: Բայց նա համոզում էր Կրասսոսին, որ նա Պարթևստան արշավե Հայաստանի միջով, որովհետև այնտեղ ո՛չ միայն կունենա զորքն առատ ու շատ, որ ինքը կհաթայթե, այլև նա կզնա աղահով կերպով, պաշտպանված լինելով բազմաթիվ լեռներով, անվերջանալի բլուրներով և դժվար տեղերով հեծելազորի համար, որը պարթևներին միակ ուժն է: Սակայն Կրասսոսը նրա պատրաստակամությունը և փառահեղ օղնությունը առանձին դոհունակություն մը չընդունեց և ասաց, որ ինքը գնալու է Միջագետքի միջով, ուր թողել է բազմաթիվ քաջ հռոմայեցիներ: Արդ՝ հայոց թաղավորն այնուհետև հեռացավ»:

Նրբ Ասորիքում վերոհիշյալ անցքերն էին կատարվում՝ Պարթևական թաղավորության մեջ արդեն վերջանում էր ներքին երկպառակությունը: 54 թվի վերջերին (մեր թվ. ա.) Սրողես թաղավորը գառավ միահեծան տնօրենն ամրոց էրկրի, 53 թվի գարնան սկզբին նա հատուկ զենայանություն ուղարկեց Կրասսոսին մոտ և ուղեց տեղեկություն ստանալ խաղաղության խախտման պատճառների մասին: Կրասսոսը զենապաններին պատաս-

խանեց, որ պատերազմի պատճառը նա կհայտնե Սելեվկիա քաղաքում:

Այս պատասխանը պատերազմի որոշակի հայտարարութիւն էր: Ուստի և Օրոդեսը, որն արդեն նախապատրաստվել էր պատերազմի՝ իսկույն թշնամու դեմ ելավ ռազմերթի: Նա ուղարկեց հռոմայեցիների դեմ իր զորքի մի մասը երիտասարդ ու տաղանդավոր Սուրեն զորավարի առաջնորդութեամբ: Իսկ ինքն արշավեց Հայաստան, որպեսզի խանդարե հայկական հեծելազորին միանալ հռոմեական բանակին: Արտավազդը, բնականաբար, ստիպված եղավ պաշտպանել իր հայրենի երկիրը:

Վերահիշյալ անցքերի մասին գլխավոր մեր աղբյուրներն են Կասսիուս Դիոնի և Պլուտարքոսի վկայութիւնները, որոնք հիմնականում իրար չեն հակասում:

1. Կասսիուս Դիոն, գիրք XL, գլ. 16, 1—3՝

«Երբ Կրասսոսը ներս խուժեց Միջագետք՝ Օրոդեսը, ինչպես ասում են, դեսպաններ ուղարկեց նրա մոտ Ասորիք և, դատապարտելի համարելով ներխուժումը՝ ուպեց իմանալ պատերազմի պատճառը: Նա ուղարկեց զորք Սուրենի առաջնորդութեամբ նվաճված ու անջատված չըջանները, որովհետև ինքը մտադիր էր արշավել Հայաստան, որը մի ժամանակ Տիգրանի երկիրն էր, որպեսզի Տիգրանի որդին, Արտավազդը, որն այնտեղ այդ ժամանակ թագավորում էր, մտահոգված իր սևական երկրի դրութեամբ՝ չուղարկե հռոմայեցիներին որևէ օգնութիւն: Արդ՝ Կրասսոսը պատասխանեց, որ պատերազմի պատճառը կհայտնե նրան Սելեվկիայում: Այս քաղաքը Միջագետքումն էր և նրա բնակչության մեծագույն մասը այժմ էլ հեյլեններն են»:

2. Պլուտարքոս, Կրասսոս, XXI, 3՝

«Արդ՝ Օրոդեսն իսկույն բաժանեց իր զորքը երկու մասի, և ինքն Արտավազդին պատժելու համար ավերում էր Հայաստանը, իսկ Սուրենին ուղարկեց հռոմայեցիների դեմ»:

53 թվ. դարնանը (մեր թվ. ա.) Կրասսոսն իր զորքի հետ, որը բաղկացած էր 7 լեգեոնից, 4.000 հեծելազորից և 4.000 թեթևագններից՝ անցավ Զեվգմայի մոտ Եփրատ գետը և, Օսրոնի Աբգար Բ. թագավորի խորհրդով, հարթավայր ճանապարհներով շարժվեց դեպի Սելեվկիա և Տիգրոն: Ավանդական կարծիքը, որ Աբգար Բ-ը դավաճանաբար նրան առաջնորդել էր անապատներով՝ չէ հաստատվում աղբյուրների վկայութիւն-

ների ուշադիր քննությամբ: Երբ Կրասսոսն արդեն Եփրատն անցել էր և առաջ էր շարժվում արևմտյան Միջագետքի միջով՝ նրա մոտ եկան Արտավազդի ուղարկած սուրհանդակները և նրան զգուշացրին, որ Արտավազդը հռոմայեցիներին չէ կարող թանդակ գործ ուղարկել, որովհետև Հայաստանը ենթարկվել է հարձակման և նա պետք է պաշտպանե իր սևիական երկիրը:

Քեզ այդ ժամանակ, — վկայում է Պլուտարքոսը, — Արտավազդ Արմենի մոտից եկան սուրհանդակներ և Կրասսոսին հայանցին, որ Արտավազդը մեծ պատերազմի է լռնվել Օրոդեսի ներխուժման պատճառով և չէ կարող նրան օգնություն ուղարկել: Նա խորհուրդ է տալիս Կրասսոսին, որ ամենից լավը կլինի, որ ինքը Կրասսոսը կստանա Հայաստան և, միանալով հայերի հետ՝ միասին կովի Օրոդեսի դեմ: Իսկ եթե ո՛չ, թո՛ղ միշտ, ճանապարհ գնալիս և լանակելիս՝ խույս տա այնպիսի տեղերից, որոնցում տեղացիներն հեծելազորի համար, և թող նա մոտ գա լեռնային շրջաններին: Կրասսոսը, բարկացած լինելով և անքաղաքավարի դառնալով՝ Արտավազդին դրավոր պատասխան չուղարկեց, այլ ասաց բերանացի, որ այժմ նա ժամանակ չունի զբաղվելու հայերով, բայց կվերադառնա և կպատժե Արտավազդին դավաճանության համար¹:

Ինչպես Պլուտարքոսի այս վկայությունից երևում է, հռոմեական զոռոզ զորավարը «բարեկամությունն ու զաշնակցությունը» հայերի հետ հասկանում էր առանձնահատուկ իմաստով և կարծում էր, որ Արտավազդ Բ-ը իբրև Հոմի շահերի հիշում հնազանդ սպասավոր՝ պարտավոր էր մտածել միմիայն հռոմեական զենքի հաջողության մասին:

Հասնելով Սառան քաղաքը՝ հռոմեական զորքն այնուհետև զնաց ինչեքի ուղղությամբ և, անցնելով Բալիսոս գետը (այժմյան Բելիքը)² թշնամու հետ շփման մեջ մտավ մայիս ամսի սկզբներին: Շուտով տեղի ունեցավ այստեղ այն մեծ ճակատամարտը, որը վերջացավ Կրասսոսի բանակի սոսկալի պարտությամբ:

Պարթևական զորքը, որ լողկացած էր, դիմապարսպեց, դրահավոր հեծելազորից և ձիավոր նետաձիգներից՝ Միջագետքի հարթավայրերում ուներ մարտավարական խոշոր առավելու-

1 Plut., Crassus, XXII, 2:

թյուններ: Լեռնային խորտուքորտ տեղերում՝ հեծելազորի նշանակութունը երկրորդական էր, իսկ այստեղ նա ազատորեն գործում ու մարտնչում էր, մինչդեռ հռոմեական լեգեոնները չունեին ո՛չ մի ստրատեգիական հենարան: Հռոմեական զորքերի քաղությունն ու կարգապահությունը կորցնում էին այստեղ իրենց նշանակութունը, որովհետև պարթևական շարժուն հեծելազորը անվերապ կոտորում էր հռոմեական հետևակներին, որոնք պատերազմում էին հոծ շարքերով: Գտնվելով այս ծանր պայմաններում՝ հռոմայեցիներն ունեցան, բնականաբար, խիստ մեծ կորուստներ: Կրասսոսի 42—44.000 զորքից սպանվեցին մոտ 20.000 հոգի, մոտ 10.000 էլ դերվեցին ու ուղարկվեցին Մեզի: Պարթևների ձեռքն ընկան հարուստ ավարի հետ հռոմեական արծվակիր դրոշները: Սպանվեց նաև ինքը Կրասսոսը և Սուրենն ուղարկեց նրա զլուխը Օրոդեսին, որը դրնվում էր Հայաստանում:

Պարթևների այս հզոր թաղավորը, որը, ըստ երևույթին, հետևում էր իր հոր հեռատես քաղաքականության և ձգտում էր հաշտվել հայերի հետ՝ կարողացել էր հաշտութուն կնքել նրանց հետ և այդ դաշինքն ամրապնդելու համար իր թաղաժառանգ որդի Բակուրին ամուսնացրել էր Արտավազդ Բ-ի քրոջ հետ: Պլուտարքոսը պատմում է, որ Կրասսոսի զլուխը բերել էին Արտաշատ սրանց հարսանեկան խնջույքի ժամանակ, երբ հույն դերասանների խումբը ներկայացնում էր արքունիքում Եվրիպիդեսի «Բաքոսյաններ» ողբերգությունը: Այս ողբերգության մեջ ցուցադրվում էր Պենթեվսի զլուխը, որ հռոմեյ էին Բաքոսի քրմուհիները: Յասոնը, որ խաղում էր Ալկադեի դերը, դեն դնելով Պենթեվսի դիմակը՝ խլում է ներս բերված Կրասսոսի զլուխը և, հանդիսականներին մեծ հրճվանք պատճառելով՝ բաքոսյան մոլեգնությունաբերում ու կատարում է իր դերը:

Պլուտարքոսի վկայությունը, որի որոշ մանրամասնությունները կարող են դժնաբանությամբ ու վիճելի լինել՝ մեզ և՛ բերում թարգմանաբար ընդարձակ բովանդակություն:

«Երբ այս անցքերը [Սուրենի հաղթությունը և հալթական չքերթը Սելեվկիայում] տեղի էին ունենում՝ Օրոդեսն արդեն հաշտվել էր Արտավազդ Արմենի հետ և նրանք համաձայնել էին, որ Արտավազդի քույրն ամուսնանա Օրոդեսի որդու՝ Բակուրի հետ: Եվ այդ ժամանակ նրանք իրար մոտ խնջույքներ ու կերուխում էին սարքում, ուր կարգացվում

էին բաղձաթիւ հունական քերթիւածներ: Օրոգեսն անտեղյակ չէր հունարեն լիզվի և յրականության, իսկ Արտաւադդը մինչև իսկ դրում էր ոյրերգութուններ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի քանիսը պահպանվել են:

Երբ Կրասսոսի գլուխը բերին յոտն մոտ՝ սեղաններն շարդեն հալաբել էին և ողբերգախաղաց դերասանը, Յասոն անունով Տրալլեսցին, արտասանում էր Եվրիպիդեսի Բաքոսյաններից Աղավիի դերը: Հենց այն ժամանակ, երբ նա աջողություն ուներ, Սիլլակեսը, ներս դալով սեղանատուն, երկրպագեց թագաւորին և մեջ տեղը պցեց Կրասսոսի գլուխը: Պարթևները ծախահարեցին մեծ աղմուկով ու ցնծությամբ և թալալորի հրամանով սպասավորները Սիլլակեսին սեղան նստեցրին: Իսկ Յասոնը իր Պենթելիսի դիմակը տվեց խմբերգիչներից մեկին և, վերցնելով Կրասսոսի գլուխը՝ բաքոսյան մոլեգնությամբ ու խանդավառությամբ արտասանեց երգելով հետևյալ բանատողերը՝—

«Մենք բերում ենք յևներից, տուն վերադառնալով՝ նոր սպանված եղջերուն, բախտավոր մի որս»:—

Եվ այս մեծ հրճվանք պատճառեց բոլորին: Իսկ հետո, երբ նրանք փոխառփոխ խմբի հետ երգում էին՝—

«Ո՛վ սպանեց», «իմն է այդ փառքը»,—

Պոմաքսաթրեսը [Կրասսոսի սպանողը], որը պատահամբ մասնակից էր ինջուլթին՝ վեր թռալ տեղից և գլուխը իւեց, ասելով որ ավելի շուտ ինքը պետք է այդ երգի, քան նա: Թագաւորը, ուրախացած՝ նրան նվեր տվեց ըստ երկրի սովորության և Յասոնին ևս տվեց մեկ տաղանդ: Պատմում են, որ այս էր ավարտման գործողությունը Կրասսոսի արշավանքի, որը վերջացաւ ողբերգության նման¹:

Կրասսոսի 53 թվի պարտությունից հետո Արևելքում քաղաքական զրուլթյունը զգալիորեն փոխվեց, և արևելյան երկրներում վարկարեկվեց Հռոմեական հանրապետության հեղինակությունը: Պարթևները, որ բարեկամացել ու դաշնակցիլ էին հայերի հետ՝ սրանց հետ միացած սպառնում էին հռոմեական Ասորիքին և Կապպադոկիային, իսկ հռոմեական շրջանների կեղծբոված բնակչուլթյունը պատրաստ էր ապստամբելու հռոմեական իշխանության դեմ: Հայերը, ինչպես մատնանշում է Գարազաշյանը²,

¹ Sēn Plut., Crassus, XXXIII, 1—5.

² «Բնական պատմութիւն հայոց», մասն Բ., Թիֆլիս, 1895, ԼՂ 172.

թերես հույս ունեին, որ նորից ձեռք կրերեն Մոփքը և իրենց կորցրած մյուս երկիրները:

Պարթևները Մուրենի առաջնորդությամբ արդեն պատրաստվում էին հարձակվելու Ասորիքի վրա (52 մեր թվ. առաջ), սակայն իրենց մեծ հաղթությունից կարճ ժամանակ հետո կասկածամիտ Օրոդեսը հրամայել էր սպանել հաղթական այս զորավարին, համարելով նրան վտանգավոր թեկնածու իր գահի: Նրանք միայն վերադարձվել էին Միջագետքը մինչև Եփրատ գետը:

Մուրենի սպանությունից հետո արշավող զորքերի առաջնորդ նշանակվեց թագաժառանգ Բակուրը, հայոց թագավորի փեսան, բայց՝ սրա փոքրահասակության պատճառով՝ զորքի հրամանատարն էր, իրապես, Վասակը (Osaces), որին իրավացի կերպով խալաթյանցը ենթադրաբար համարում է հայ զորավար: Ըստ երևույթին, սլարթևների ասորական արշավանքներին մասնակցում էին նաև հայերը, իբրև դաշնակիցներ:

51 թվին (մեր թվ. ա.) պարթևական-հայկական զորքերը Բակուրի առաջնորդությամբ ներխուժեցին Ասորիք, որի հարևանահարված բնակչությունը նրանց ընդունում էր ամենուրեք մեծ համակրությամբ: Հռոմեական զորքի առաջնորդն էր Ասորիքում Կրասսոսի զորավարներից մեկը, Կասսիոսը, որը խույս տալով մարտից՝ ամրացել էր Անտիոք: քաղաքում: Պարթևները, որ հմուտ չէին մեծ քաղաքների պաշարման դործին՝ չկարողացան վերցնել Անտիոքը և ստիպված եղան նահանջել: Նահանջի ժամանակ Անտիգոնիայի մոտ նրանք ծանր կորուստ կրեցին դաբան մտած հռոմայեցիներին, և այստեղ զորավար Վասակը ծանր վերք ստացավ, որից նա շուտով մեռավ:

51/50 թվի ձմեռը պարթևական-հայկական զորաքանակը մնաց Հյուսիսային Ասորիքում, Կիլիկիային սահմանակից Կիրեստիկայում, և ուշագրավ է, որ հենց նույն այս թվին Կիլեբրոնը, որը Կիլիկիայի կուսակալն էր՝ անհրաժեշտ էր համարել դնալ հռոմեական զորքի հետ միասին Կապադոկիա: Կիլեբրոնն իր նամակներում մատնանշում է¹, որ ինքը Կապադոկիա էր եկել, որպեսզի հայոց թագավոր Արտավազդը, որը կարող էր Կապադոկիայի վրա հարձակվել՝ իմանա, որ հռոմեական զորքը դանդաղում է Հայաստանի սահմանների մոտ:

¹ Տե՛ս *Халатини, Очерк истории Армении*, Москва, 1910, էջ 330.

² Տե՛ս *Cicero, Epist. ad familiares*, XV, 2, 3 և *Epist. ad Atticum*, V, 20.

Պարթևական-հայկական զորքերը, որոնք հեռացել էին Ասորիքից 50 թվի դարնանը (մեր թվ. ա.)՝ նորից էին արշավել այստեղ, ինչպես երևում է աղբյուրների տված աղոտ վկայություններից՝ 45 թվին ու ապա նաև 40 թվին (մեր թվ. ա.)։ Միանգամայն սխալ է ըստ այսմ Գարադաշյանի և Գ. Ասլանի ենթադրությունը, որ իբր թե 51 թվի արշավանքից հետո սարթևները զրավել էին Ասորիքը և մնացել էին այստեղ մոտ քսան կամ մոտ տասնհինգ տարի¹։

49 թվի սկզբին (մեր թվ. ա.) քաղաքացիական մեծ պատերազմ սկսվեց Հռոմում Պոմպեյոսի ու Յուլիուս Կեսարի միջև, և հետաքրքրական է, որ այս պատերազմում Արեւելքը, ընհունուր առամաք, համակիր էր ու կողմնակից Պոմպեյոսին, որն արեւելյան ժողովուրդների հանդեպ վարել էր համեմատաբար խաղաղասիրական քաղաքականություն։ Ինչպես վկայում է Ապպիանոսը, հայերն այդ կռիվներին ունեցել էին դործոն մասնակցություն։ Փոքր Հայքը Պոմպեյոսին ուղարկել էր օգնական զորք Տաքսիլեսի հրամանատարությամբ, իսկ Մեծ Հայաստանը՝ առաջնորդությամբ Մեդաբատեսի, որն Արտավազդ թագավորի կուսակալն էր²։ Փոքր Հայքը ղտնվում էր այդ ժամանակ Գալատիայի Դեյոտարուս թագավորի իշխանության տակ, որի հետ Արտավազդ Թ-ը բարեկամություն էր հաստատել, ամուսնացնելով իր դստերը նրա որդու հետ (50 մեր թվ. առաջ)³։

48 թվին (մեր թվ. ա.) Պոմպեյոսը պարտություն կրեց Փարսալուսի մոտ Թեսսալիայում և փախավ Եգիպտոս ու այստեղ սպանվեց։ Կեսարը, որը եկավ նույնպես Եգիպտոս պատերազմելու Պոմպեյոսի կողմնակիցների հետ, հալածեց սրանց և Գտովեյանների գահը տվեց իր սիրուհուն, Կլեոպատրային։ Նա զնաց այստեղից Փոքր Ասիա, ուր Փառնակը, Միհրդատ Եվպատորի որդին, վերանվաճել էր Պոնտոսը, Կապպադովկիան և Փոքր Հայքը ու վերականգնել էր իր հոր թագավորությունը։ Կեսարն այնպիսի արադություն հաղթեց նրան Ջելայի մոտ, որ այդ մասին զրեց Հռոմ միայն երեք բառ՝ «եկա, տեսա, հաղթեցի» (veni, vidi, vici)։ Իր պարտությունից հետո Փառնակը վերադարձավ Բոսփոր և Դեյոտարուսը, որը Փարսալուսի մոտ

¹ Տես Գարադաշյան, «Քննական պատմություն հայոց», Բ., էջ 173 և R. Aslan, Études historiques sur le peuple arménien, Paris, 1909, էջ 112։

² Տես App., De bellis civilibus, II, 71։

³ Տես Cicero, Epist. ad Atticum, V, 21։

մարտնչել էր Կեսարի դեմ՝ կորցրեց իր իշխանության տակ-
դռնվող երկիրների մի մասը։ Նրան սլաոկանոզ Փոքր Հայքը
Կեսարը տվեց Կասպադոսիայի Արիոբարզան Թագավորին։

Ուշագրավ է, որ սլաոթեները ևս Արևելքում որոշ աջակ-
ցություն էին ցույց տվել Պոմպեյոսի կողմնակիցներին ընդդեմ
Կեսարի։ 45 թվին (մեր թվ. ա.) նրանք հանկարծակի նորից ար-
շավեցին Ասորիք և օգնեցին այստեղ Կեկիլիոս Բասսոսին, որն
սպասամբել էր Կեսարի դեմ, Բայց ձմեռվա սկզբին նրանք
դարձյալ թողին Ասորիքը և հեռացան։

Կեսարը արդեն պատրաստվում էր վրեժ առնել սլաոթեներից
թե այդ օգնություն և թե Կրասսոսի սպանություն համար, սա-
կայն 44 թվին (մեր թվ. ա.) նա սպանվեց սենատի նիստի ժա-
մանակ և այնուհետև 43 թվին Անտոնիոսը, Լեպիդոսը և Օկտա-
վիանոսը, որը Կեսարի քրոջ թոռն էր և նրա որդեգիրը՝ կաղմե-
ցին երկրորդ եռապետությունը (տրիումվիրատը)։

Կեսարի սպանությունից հետո հանրապետականները, որ
փախել էին, գլխաւորապես, Հունաստան և Արևելք՝ սկսեցին
եռապետների դեմ պատրաստվել պատերազմի։ Նրանք համա-
ձայնություն էին եկել սլաոթեների հետ և դեռևս 43 թվին ստա-
ցել էին սրանցից օգնական հեծյալ ղորամաս, որը մասնակցել
էր մեծ ճակատամարտին Փիլիպպիի մոտ Թրակիայում (42 մեր
թվ. առաջ)։

40 թվին (մեր թվ. ա.) սլաոթեները, հանրապետականների
դրդմամբ, որոնք պարզապես նրանց ղեկել էին Ասորիքը՝ մեծ
ուժերով արշավեցին այստեղ դարձյալ Բակուրի առաջնորդու-
թյամբ։ Այս անգամ սլաոթեական-հայկական զորքերը կարողա-
ցան նվաճել ո՛չ միայն Ասորիքը, այլ նաև Փյունիկիան ու Պա-
ղեստինը։ Այս երկիրները և նրանց մեջ դառնվող գրեթե բոլոր
քաղաքները ճանաչեցին Օրոդես Թագավորի գահակից Բակուրի
իշխանությունը։ Պարթևների այս ափրապետությունն, Ասորի-
քում ու սրա հարևան երկրներում, ինչպես չեչտվում է աղ-
բյուրների մեջ, շատ ավելի մեղմ ու արդարամիտ էր, քան
Հռոմեական հանրապետության դաժան ու հարստահարիչ պրո-
կոնսուլային իշխանությունը։ Ինքը Բակուրը վայելում էր
Ասորիքի բնակչության վստահությունն ու սերը, իբրև նրանց
ազատարարը հռոմեական ծանր լծից։

Պարթևական-հայկական արշավանքների ու պատերազմների

մասին Ասորիքում և Պաղեստինում աղոտ հիշողություններ պահպանված են Փավստոսի ու Մովսես Որբենացու մոտ¹ :

Պարթևներն իրենց արշավանքների ժամանակ վերցրել էին բաղձաթիվ գերիներ և գերի էին տարել նաև հրեաների Հյուսիս-հարավ քաղաքային տարածքներում : Գերիների մի մասը նրանք, ըստ երևույթի, տվել էին դաշնակից հայերին, որոնք բնակեցրել էին նրանց Հայաստանի քաղաքներում : Փավստոսի ու Որբենացու այս դադարակնությունն վերաբերող վկայությունները քննության են առնված Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ուսման ժամանակ աշխատության մեջ², ուր մանրամասն մատնանշված է, որ բացի Տիգրան Մեծի բերած «առաջին գերություն»-ից եղել է և երկրորդ գերությունը, որը բերված է եղել Հայաստան ո՛չ թե Տիգրան Բ-ի ժամանակ, ինչպես այդ խառնաշփոթ կերպով ակնարկում են Փավստոսը և Որբենացին, այլ նրա որդու՝ Արտավազդ Բ-ի ժամանակ :

Հիմնվելով կարևոր այս լիաստի վրա՝ կարելի է ըստիս ենթադրել, որ հելլենիստական քաղաքային կուլտուրայի տարածման ու զարգացման քաղաքականությունը շարունակվել է Հայաստանում նաև հելլենական կրթությունն ստացած Արտավազդ Բ-ի թագավորության ժամանակ :

Պարթևների իշխանությունը Ասորիքում տևեց մոտ երկու տարի (40—39 մեր թվ. ա.) : Հռոմում հենց այդ ժամանակամիջոցում վերջացել էին ներքին երկպառակությունները եռապետների միջև, և Մ. Անտոնինոսը, որին բաժին էր ընկել Ասորիքը՝ ուղարկեց Փոքր Ասիա նոր զորք Պուբլիոս Վենտիլիոս Բասսոսի հրամանատարությամբ :

39 թվին (մեր թվ. ա.) սա պարտության մատնեց պարթևների զորավար Փրանիպատեսին և մաքրեց Ասորիքը թշնամուց : Իսկ 38 թվին նա սարսափելի ջարդ տվեց պարթևներին Գինդարոսի մոտ հյուսիսային Ասորիքում, ուր սպանվեց նաև զորքի առաջնորդ Բակուրը՝ Արտավազդ Բ-ի փեսան :

Ասորիքի վերադարձումը միայն մի մասն էր Անտոնինոսի մեծ

¹ Տես Փավստոս, IV, գլ. 55 և Որբենացի, II, գլ. ԺԹ, ԿԵ, III, գլ. ԼԵ. Որբենացու Պատմության մեջ պատմական անցքերը, ինչպես ցույց է տվել խալթյանցը, շփոթված են և խեղաթյուրված. աես Армянские Аршакиды, Москва, 1909, էջ 61—68.

² Տես «О торговле в городах Армении», էջ 67—69; Հատկապես նաև Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առևտրականները, էջ 358—363.

Յրագրի, որ նա 39 թվից սկսած հետզհետե իրագործելու էր Արևելքում, Անտոնիոսը ևս, ինչպես և Կրասսոսը, մտադիր էր նվաճել ամբողջ Առաջավոր Ասիան ու վերականգնել Աղեքսանդր Մակեդոնացու մեծ աշխարհակալութիւնը։ Փոքր Ասիայի բարեկամ ու դաշնակից պետութիւնները հռոմայեցիները հանդուրժում էին միայն ժամանակավորապես։ Այս պետութիւնները ժամանակի ընթացքում միացվելու էին Հռոմին իբրև սոսկ նահանգներ, իսկ նրանց հարստութիւնները դառնալու էին, իհարկե, հռոմեական հաղթող ժողովրդի ավարը։

ԱՆՏՈՆԻՍԻ ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ԱՐՏԱՎԱԶԴ Բ-Ի ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԱՀՐ

1. Քաղաքական ընդհանուր դրությունը 38—37 թվերին:—2. Անտոնիոսի նախապատասխանը պատերազմի.—կառնողի ուսի արեւովակը Հայաստան, Վրաստան ու Աղվանք:—3. Պարթեական արեւովակի նոր ծրագիրը.—գործերի հավաքածոյին.—արեւովակի նահապարհը:—4. Փրատսպայի պատերազմը և Սասանիդների գործարարի ոչնչացումը.—Արեւովակի Բ-ի մեկնումը Հայաստան:—5. Հռոմեական գործի նահանջը դեպի Հայաստանի սահմանները:—6. Արեւստանություններ Հայոց քաղաքների մասին.—Ստաբունի վկայության անհավանականությունը:—7. Անտոնիոսի պարտության հետևանքները:—8. Առաջապահների Արեւովակի քաղաքների դաշինքը Անտոնիոսի հետ.—Անտոնիոսի խորհրդի մեկնությունները Հայոց քաղաքների հանդեպ:—9. Արեւովակի կալանավորումը և Հայաստանի նվաճումը:—10. Անտոնիոսի հաղթահանողները.—Արեւստանի Հայոց քաղաքի հայտարարվելը.—Հայաստանի նվաճման առթիվ Անտոնիոսի դրամները:—11. Օկտավիանոսի դժգոհությունը.—Մեծ Աղբակի և Փոքր Հայքի անջատումը Հայաստանից.—Անտոնիոսի պարտությունը Ալեքսանդրի նահապետարանում և ինքնասպանությունը.—Հայոց Արեւովակի քաղաքների ողբերգական մահը:—12. Հայաստանի քաղաքական վաճառքի կառուցումը Արեւովակի Բ-ի ժամանակ.—Արեւովակի Բ-ի ինքնուրույն ու անկախ քաղաքացիությունը.—Արեւովակի Բ-ի սխալ բնութագիրը հռոմեացու Պատմության մեջ:

38—37 թվերին քաղաքական ընդհանուր կացությունը հիմնադրարարի փոխվել էր ի նպաստ Հռոմի և թվում էր, որ Անտոնիոսի Արեւելքի նվաճման հոյակապ ծրագիրը կարող էր հեշտությամբ իրագործվել: Նահապետությունը Հռոմում վերածվել էր այդ ժամանակ երկապետության, Անտոնիոսն ստույգացել էր Օկտավիանոսի Օկտավիա քրոջ հետ և Հռոմեական պետության այս երկու տիրակալներն իրար հետ հաշտ էին ու բարեկամ:

Ընդհակառակը, Պարթևական թագավորությունը մեջ սկսվել էին նոր խռովություններ ու երկպառակություններ: Բաղուրի պարտությունից ու սպանությունից հետո Օրոդես թագավորը, որը խորապես հուզված ու հուսահատված էր իր սիրած որդու

մահվան պատճառով՝ հրաժարվեց գահից և թագավորութիւնը տվեց իր մյուս որդուն՝ Հրահատին: Իսկ սա, հենց որ ստանձնեց թագավորական իշխանութիւնը՝ կոտորեց իր եղբայրներին ու ազնւականներից շատերին և սպանեց նաև հորը, որպեսզի ապահովե իր գահը վտանգավոր թեկնածուներից: Մեծամեծներից ոմանք, նրանց թվում նաև ամենահայտնին, Մոնեսեսը, փախան և ապավինեցին հռոմայեցիների պաշտպանութեան:

Պարթևական թագավորութեան մեջ ներքին այս խառնակութիւնները, ինչպես և վենտիգիտսի հաղթութիւններն Ասորիքում՝ վստահութիւն էին ներշնչում Անտոնիոսին, որ նա կկարողանա վրեժ առնել պարթևներից Կրասսոսի խայտառակ պարտութեան համար:

Ասորիքի վերանվաճումից հետո Անտոնիոսն սկսեց պատրաստվել պատերազմի և աշխատեց ապահովել ու ամրացնել իր թիկունքը (37—38 թ. ձմեռը): Արևելյան Փոքր Ասիայի երկիրների իշխանութիւնը նա տվեց իրեն հավատարիմ մարդկանց, Կոսյոպադովկիայի Արիսարաթ Ժ. Թագավորին, որը 40 թվին անցել էր պարթևների կողմը՝ նա մահվան դատապարտեց և նրա թագավորութիւնը տվեց Արիստատոսին, որը Կոմանա քաղաքի ղրմապետն էր: Իսկ Պոնտոսի թագավոր նա հայտարարեց հույն Պուլխմոնին, որն իր Պյութագորիս թոռան ամուսինն էր:

Դեռևս 38 թվին, պարթևական իր արշավանքը սկսելուց երկու տարի առաջ, Անտոնիոսը ծրագրել էր նվաճել նախ Հայաստանը և դարձնել այս երկիրը հենարան ու ելակետ պարթևական թագավորութեան նվաճման: Սակայն 37 թվին (մեր թվ. ա.) նա փոխեց իր սկզբնական ծրագիրը և, չնայած որ Արտավազդ Բ-ը 33 թվից սկսած պարթևների դաշնակիցն էր, որոշեց ժամանակավորապես հետաձգել Հայաստանի նվաճումը և, ենթարկելով Արտավազդ Բ-ին Հռոմի դերի իշխանութեանը՝ օգտուղործել հայերի ռազմական ուժերը առաջիկա պատերազմում:

37 թվին (մեր թվ. առաջ) Հայաստան եկավ Անտոնիոսի Արևելքի կուսակալը, Պուբլիոս Կանիդիոս Կրասսոսը, և Արտավազդը ստիպված եղավ ընդունել Հռոմի դերի իշխանութիւնը ու նորից դառնալ հռոմայեցիների դաշնակիցը: Ուշագրավ է, որ ինչպիսի Պոմպեյոսի հայկական և կողքիսյան արշավանքների ժամա-

1 S. S. Tarn, The Cambridge Ancient History, vol. X, 1934, էջ 70, ծան. 1:

2 Նույնը, էջ 52—54 և 72:

նակ, նույնպես և այժմ՝ պարթևական արշավանքից առաջ, անհրաժեշտ համարվեց ապահովել հռոմեական զորքի թիկունքը հյուսիսային Անդրկովկասի կողմից: Ուստի և Կանդիսսը հռոմեական զբերչխանությունը տարածվեց նաև Իբերիայի ու Աղվանքի վրա:

«Եվ ձմեռվա մյուս կիսում [37 թվին], — վկայում է Կասսիուս Դիոնը, — Գելլիոսի և Ներվայի հյուպատոսության ժամանակ՝ Պուբլիոս Կանթղիոս Կրասսոսը, արշավելով իբերների դեմ՝ հաղթեց այդ կովում նրանց Փառնաբադ թաղավորին, նրան դաշնակից դարձրեց և, նրա հետ միասին ներխուժելով հարևան Ալբանիան և հաղթելով նաև ալբաններին ու նրանց Ջոբեր թագավորին՝ սրան ևս իր կողմը դրավեց»:

Երբ Կանթղիոսը վերջացրել էր իր արշավանքն Անդրկովկասում՝ Անտոնիոսը որոշեց արշավանքի ելնել ընդդեմ պարթևների: Նա նախօրոք հայրենիք ուղարկեց մեծ իշխան Մոնեսեսին, որին ներում էր շնորհել թագավորը, որպեսդի սա հռոմայեցիների կողմից խաղաղության տուգարկ անե Հրահատ Դ-ին: Անտոնիոսը, ըստ երևույթին, հույս ուներ, որ խաղաղության կհղծ բանակցությունների միջոցով կկարողանա արշավանքից առաջ քնեցնել պարթևների աչալըժությունը:

Հռոմեական նոր արշավանքը պարթևների դեմ դեռևս Կեսարի ժամանակ ծրագրված էր ո՛չ թե Միջագետքի վրայով, որը լավ պաշտպանված էր, այլ Հայաստանի ու Ատրպատականի միջով դեպի Եկբատանա և այնտեղից դեպի Տիլբոն: Արշավանքի միևնույն ծրագիրը, ինչպես վերև տեսանք, Արտավազդ Բ-ը տուգարկել էր Կրասսոսին 33 թվին (մեր թվ. ա.):

36 թվի (մեր թվ. ա.) դարնան վերջերին Անտոնիոսը, բաժանվելով Կլեոպատրա թագուհուց, որի հետ նա 37 թվին ամուսնացել էր՝ արշավանքի ելավ պարթևների դեմ, նա և կալ Շիրակ-տոսից Ասորիք և այստեղից Մելիտենի, Փոքր Հայքի ու Սառազմի վրայով դնաց Հայաստան, ուր Կարնո դաշտում համարվելու էր հռոմեական հարձակվող բանակը:

«Ուղարկելով Կլեոպատրային Եգիպտոս, — ասում է Պլուտարքոսը, — ինքը [Անտոնիոսը] դնում է Արարիայի ու Արմենիայի միջով, ուր հավաքվել էին նրա և դաշնակից թագավորների

1 Cass. Dio XLIX, 24, 1: Համեմատե նաև Plut., Antonius, XXXIV:

2 S. Plut., Antonius, XXXVII:

ղործերը. այս վերջինները շատ էին և հզորագույնն էր բոլորից Հայաստանի Արտավազդ Թագավորը, որը տվել էր 6.000 հեծելազոր և 7.000 հետևազոր: Անտոնիոսն այստեղ ստուգատես կատարեց իր բանակին, որը բաղկացած էր 60.000 հետևազորից, որոնք բոլորը հռոմայեցիներ էին, 10.000 իսպանացի և դադղիացի հեծյալներից, որոնք համախմբված էին հռոմեական դրոշներով տակ, և, բացի այդ, նաև 30.000 մարդ զանազան ժողովուրդներից՝ թե հեծելազոր և թե թև-թևագնները¹:

Հռոմեական զորքը Կարին գավառից պետք և արշավել նախ Ատրպատական, որի Արտավազդ Թագավորը գտնվում էր պարթևական ղերիշխանության տակ: Ըստ երևույթին, Անտոնիոսը հաշիվ էր անում, որ եթե պարթևներն օգնության գային Ատրպատականի թալավորին՝ նա վճռական մարտ կունենար նրանց հետ նպաստավոր տեղում ու պայմաններում, իսկ եթե ո՛չ՝ նվաճված Ատրպատականը հենարան ու հիմք կդառնար նաև պարթևական թագավորության նվաճման:


Հռոմեական զորքի ճանապարհը Բարձր Հայքից Ատրպատական, որը դեռ մինչև այժմ լուսաբանված չէ՝ որոշվում է ըստ իս Պևզոտինդերյան քարտեզի Քյոփրիքյոյ—Ատաք—Բագավան և Օրուսպու—Խոյ—Տասվիթ հին ուղեգծով, որը մանրամասն քննված է «Հին Հայաստանի պլանավոր ճանապարհները» աշխարհագրական իմ աշխատության մեջ²: Հռոմեական բանակը զնացել էր Կարին գավառից դեպի այժմյան Քյոփրիքյոյ, ուր իրար են խառնվում Մուրցը և Արտքսը, ու այնուհետև զնացել էր Ալաշկերտի՝ դաշտը և այստեղից Հայկական Պար կամ Աղրի-դաղ լեռնաշղթայի հարավային կողմով իջել էր այժմյան Խոյ, իսկ Խոյից նա շարունակել էր իր ճանապարհը, հավանորեն, ո՛չ թե այժմյան Մարաղի վրայով, ինչպես այդ ենթադրում են Գուտշմիդը³ և ուրիշները, այլ այժմյան Տասվիթի վրայով ու Ուրմիա լճի արևելյան ափերի երկարությամբ, ինչպես այդ մանրամասն յուսարանված է վերոհիշյալ իմ ուսումնասիրության մեջ:

Արշավող զորքը դնում էր դեպի Ուրմիա լճի հարավ-արևելա-

¹ *Plut.*, Antonius, XXXVII, 2.

² Տես «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», Երևան, 1936, էջ 49—62 և 114—172.

³ *Gutschmid*, Geschichte Irans, էջ 99.



կողմում գտնվող ֆրասսպա—Գանձակ մայրաքաղաքը, որի տեղադրութիւնը ենթադրում են այժմյան Թախտ-ի-Սուլեյմանի մոտ¹։ Իր հետ նա երեք հարյուր սայլի վրա տանում էր, ինչպես վկայում է Պլուտարքոսը, պաշարողական մեքենաներ ու նրանց թվում նախ պարիսպակործան մի խոյ 80 ոտ կամ մոտ 24 մետր երկարությամբ²։ Պլուտարքոսի այս վկայութիւնից կարելի է հետևել, որ Հայաստանի միջով անցնող ռազմական ճանապարհը, հավանորեն, եղել է լայն պողոտա և համեմատաբար դռնվել է բարեկարգ վիճակում։

Կարին դավառից Անտոնիոսի զորքը դուրս էր եկել հունիս ամսին և պաշարողական մեքենաների տեղափոխման դժվարութիւնների պատճառով, ըստ երևույթին, չարժւում էր առաջ րավական դանդաղ։ Ուստի Անտոնիոսը, ինչպես պատմում է Պլուտարքոսը³, սայլերը թողնելով իր կողմում՝ մեքենաների պահպանութիւնն ու ուղեկցողութիւնը հանձնեց Ստատիանոսին, որն ուներ իր հետ երկու լեգեոն, իսկ ինքը գլխավոր ուժերի հետ արադորեն առաջ դնաց ու պաշարեց Փրասսպա—Գանձակը, որի մեջ գտնվում էին Ատրպատականի Արտավադէ Թադավորի կանայք ու երեսները։ Նա շտապում էր պատերազմն Ատրպատականում վերջացնել նախ քան պարթևների դալը։

Բայց օգոստոս ամիսն էր արդեն, իսկ պաշարված մայրաքաղաքն արկաբար ու համառորեն պաշտպանվում էր։ Շուտով օգոստոսի չափով ֆրասսպային Հրահատ Դ-ը, որն ուներ իր հետ մոտ 40.000 պարթևական և 10.000 մեդական հեծելազոր։ Այս զորքի գլխավոր հրամանատարն էր հռոմայեցիների բարեկամ վերահիշյալ Մոնեսեսը, որն, ինչպես հույս ուներ Անտոնիոսը՝ պետք է ներքին խռովութիւններ առաջ բերեր պարթևական թագավորութեան մեջ։

Մոնեսեսը մեծ հեռատեսութեամբ անցավ Անտոնիոսի թիկունքը և չրջապատեց նախ և առաջ Ստատիանոսի երկու լեգեոնը և սայլադումակը, որոնք մեծ բանակին դեռ չէին հասել։ Պարթևական հեծելազորը գլխովին ջարդեց Ստատիանոսի ամբողջ զորքը, որ թվով մոտ 7.500 մարդ էին, և ջարդուժուր արեց նաև պաշարողական մեքենաները։ Բացի այդ, պարթևները այստեղ գերի վերցրին Պոնտոսի Պոլեմոն, Թադավորին։

¹ S^{es} H. Rawlinson, Journ. Geogr. Society, Bd. X:

² S^{es} Plut., Antonius, XXXVIII, 1:

³ Նույնը, Antonius, XXXVIII:

Այս կոտորածը խիստ ծանր մի հարված էր, որ կասկածելի էր դարձնում հռոմեական զորքի ապագա ակնկալությունները։ Արտավազդ Բ-ը, որը կորցրեց իր հավատը դեպի Անտոնիոսի ձեռնարկած արչալանքի աջող վախճանը՝ ետ քաշեց իր զորքերը և վերադարձավ Հայաստան¹։ Կասսիուս Դիոնն առանձնապես ընդգծում է, որ սլարթեները կարողացել էին ոչնչացնել Ստատիանոսի զորամասը, որովհետև հայոց թաղավորը չէր մասնակցել այս ճակատամարտին²։

Ստատիանոսի զորքերի քարգից հետո, որ տեղի ունեցավ օգոստոսի կեսերին (36 մեր թվ. առաջ)՝ Անտոնիոսը շարունակեց Փրասպայի սաշարումը, բայց աջողություն չունեցավ։ Շուտով սկսվեց աշունը, և հռոմեական զորաբանակի զրուխունը խիստ վատացավ ցրտերի ու անդամթերքի սպիասության սլառառով։ Վերջ ի վերջո, Անտոնիոսը ստիպված եղավ բանակցության մեջ մտնել Հրահատ Դ-ի հետ և առաջարկեց նրան հաշտություն՝ այն պայմանով որ ետ տրվեն Կրասսոսի սլարտության ժամանակ դերված գինիորները և հռոմեական արծիվեկիր դրոշները։ Հրահատը համաձայնեց թույլ տալ միայն, որ անարգել կերպով նահանջեն, բայց սահանջեց, որ տնհապաղ վերացնեն Փրասպայի սաշարումը։

36 թվի (մեր թվ. ա.) հոկտեմբեր ամսին Ատրպատականի մայրաքաղաքի սաշարումը վերացվեց և սկսվեց հռոմեական զորքերի նահանջը դեպի Հայաստանի սահմանները, որը չափազանց ծանր եղավ։ Պարթևները, հակառակ Հրահատ թաղավորի խոստման, անընդհատ հարձակվում էին և նրանց մեծ կորուստներ էին պատճառում։ Նրանց մեջ մեծ կոտորած էին դործում, բացի այդ, նաև ցուրտը ու սովը և կարգապահության վերացումը գինիորների մեջ, որ հարկադրել էր Անտոնիոսին դիմել ամենախիստ միջոցների։

Մեծ դժվարություններով ու կորուստներով հռոմեական հոգնած ու բարոյալքված բանակը հասավ Արաքս գետի ափը 27 օր տևող նահանջից հետո։ Նրա վերադարձի ճանապարհը ենթադրում են ո՛չ թե նախկին, այլ նոր ուղղությամբ՝ այժմյան Թալթիզի ու Մարանդի շրջաններով դեպի այժմյան Զուլֆա։ Իր այս աղետալի արչալանքի ընթացքում Անտոնիոսը կորցրել

1 S⁸u Plut, Antonius, XXXIX, 1:

2 Cass. Dio, XLIX, 25, 5—26, 1:

էր ամբողջ իր պաշարողական պարկը և իր ղորքերի գրեթե մեկ քառորդը՝ մոտ 24.000 զինվոր:

Արտավազդը Հայաստանում նրանց ընդունեց բարեկամաբար և գործին հայթայթեց պարենի պաշար, Որ հռոմեական բանակը, անցնելով Արաքս գետը և մտնելով Հայաստան, միանգամայն սխտանդեց գերծ էր ու ապահով՝ այդ հիշատակված է Պլուտարքոսի մոտ:

«Կեցերորդ օրը, — պատմում է Պլուտարքոսը, — վերջին հակառակադրուից հետո՝ նրանք [հռոմայեցիները] հասան Արաքս գետի ափը, որը Մեդիան բաժանում էր Հայաստանից: Թվում էր, որ գետը դժվարանցանելի է իր խորության ու արագության պատճառով: Բացի այդ, լուր էր պտտում, որ հենց այդ տեղերում թշնամին զարան է մտել և իրենց վրա հարձակվելու է գետն անցնելու ժամանակ: Իսկ երբ անխառն կերպով դետն անցան ու մտան Հայաստան՝ կարծես թե այդ երկիրը նրանք տեսնում էին նավահանգստութունից հետո՝ երկրպագեցին նրան ու ուրախությունից լաց եղան ու իրար հետ գրկախառնվեցին»:

Անտոնիոսը չուզեց Հայաստանում ձմերել, որովհետև չտապում էր դնալ իր սիրուհու մոտ Աղեքսանդրիա: Ձմեռվա ցըրտերի ու նաև հիվանդությունների պատճառով հռոմեական զորքը, որը նույնպես չմնաց Հայաստանում՝ ունեցավ մեծ կորուստներ նաև Հայաստանի միջով անցնելիս մոտ 8.000 զինվոր:

Անտոնիոսի անաջող արշավանքը և խայտառակ նահանջը վարկարեկում էին Հռոմի հեղինակությունն Արեւելքում: Հռոմեական զորավարը պետք է, իհարկե, իրեն որևէ կերպ արդարացներ: Եվ նա, ինչպես այդ հռոմայեցիների սովորությունն էր՝ արշավանքի անաջողությունը վերագրեց ո՛չ թե իր արած անթույլատրելի սխալներին, այլ Հայոց Արտավազդ թագավորի դավաճանությանը:

Սակայն այս մեղադրանքը, որը՝ չնայած եվրոպական խոշոր պատմագետների առարկություններին՝ հիմնավոր են համարել գիտնականներից ոմանք՝ հավանական չէ կարող լինել, որովհետև Արտավազդի դավաճանության մասին տղ տեղեկությունը, որը հիմնված է Անտոնիոսի բարեկամ ու զինակից Դելլիուսի կապիածելի հաղորդադրության վրա՝ զգալիորեն տարբերվում է

1 Plut., Antonius, XLIX, 2

ո՛չ միայն Կասսիուս Դիոնի, այլ նաև դեպի Անտոնինուսը բարեհաճ տրամադրված Պլուտարքոսի վկայություններէց:

Ամենակարևորներն այդ վկայություններէց մեջ եւ բերում ենք բառացի Թարգմանութեամբ հունարենից:

1. Պլուտարքոս, Անտոնինոս, I, 1—2՝

«Ապա բոլորովին պարզ եղավ, որ Արտալադդէն էր պատճառը, որ Անտոնինոսն այս պատերազմի վերջը տանուլ տվեց: Եթե Մեդիայից [Ատրպաթականից] տարած Արտալադդի վեց հազար հեծելազորը, որ ղեկաված էր պարթևականի նրման և սովոր էր նրանց դեմ կռիվելու՝ այնտեղ լինէր, այդ դեպքում՝ հրե պարթևներին ճակատամարտի ժամանակ հռոմայեցիներն ի փախուստ էին դարձնում՝ արմենները ևս կհաղթեին փախչող թշնամուն, և պարտվելուց հետո սրանք չէին կարողանա ուղքի գալ և չէին համարձակվի ճակատամարտ տալ ալեքան անգամ: Արդ՝ բոլորը զայրացած էին և զրդում էին Անտոնինոսին վրեժ առնել հայից: Իսկ նա, որովհետև իր զորքն ուժասպառ էր եղել և ծանր դրութեան մեջ էր՝ խոհեմարար նրան չպարսալեց, ոչ էլ փոխեց նրա նկատմամբ սովորական իր բարեկամական վերաբերմունքը ու հարգանքը: Սակայն հետո, ներս խուժելով նորից Հայաստան՝ շատ խոստումներով ու առաջարկներով նրան համոզեց գալ իր մոտ, բոնեց նրան ու շրթալված տարալ Ադեքսանդրիա իր հաղթահանդեսի համար»:

2. Կասսիուս Դիոն, XLIX, 25, 5՝

«Այդ կարողացան նրան [պարթևները] սնել, որ Արտալադդ Արմենի չէր մասնակցել կռիվին. և թեև, ինչպես ասում են ոմանք, կարող էր օղնել հռոմայեցիներին, սակայն ո՛չ այդարեց, ո՛չ էլ ղնաց Անտոնինոսի մոտ, այլ վերադարձավ տուն»:

3. Նույնը, XLIX, 31, 2—3՝

«Իսկ նա [Անտոնինոսը] թեև զայրացած էր Արտալադդ Արմենի վրա, որովհետև նա իրենց թողել էր, ու թեև ցանկանում էր վրեժ առնել նրանից, սակայն նկատել չտվեց այդ, այլ ցույց տվեց հարգանք, որպեսզի նրանցից վերցնե կենսամթերք ու փող. և, բացի այդ, որովհետև ղեկավորները չէին կարող ղեմանալ երկար ճանապարհի, մասնավորապես, ու իզուր պետք է տանջվեին և քանի որ նա կարճ ժամանակից հետո մտադիր էր վերադառնալ Հայաստան՝ նա

չարունակ չողոքորթում էր Թադավորին և անընդհատ խոստումներ էր տալիս, որպեսզի սա նրանց թույլ տար ձմերկել իր երկրում, ասելով որ դարնան սկզբին նա նորից պիտի արչավանքի ելնե պարթևների դեմ»:

4. Ստրաբոն, XI, 13, 4 (524)¹

«Իսկ Անտոնինոսի արչավանքը դժվարին էր դարձրել ո՛չ թե տեղի բնույթը, այլ դավեր նյութող Հայոց Թադավոր Արտավազդը, որին նա իրեն անդիտակցորեն խորհրդատու էր վերցրել և իրազեկ էր արել պատերազմի ծրագրին: Նվ թեև Անտոնինոսը նրանից վրեժ առավ, բայց չատ ուչ, երբ հռոմայեցիներն արդեն չատ չաբիքներ էին կրել, որոնց պատճառն էր բացի Արտավազդից նաև նա, որ հռոմայեցիներին ճանապարհը Եփրատի մոտ գտնվող Զելդմայից մինչև Ատրպատական դարձրել էր 8-000 ստադիոն, այսինքն՝ ուղիղ ճանապարհի կրկնակիից ավելին՝ լեռներով, անանցանելի տեղերով և զարտուղի ճանապարհներով»:

Մեջ բերված այս վկայություններից, ինչպես տեսնում ենք, միայն չորրորդը Անտոնինոսի արչավանքի անաջողությունը վերագրում է Հայոց Արտավազդ Թադավորի կանխամտածված դավաճանություն: Ստրաբոնի այս վկայության ալբյուրը, ինչպես մատնանշել է Մոմզենը, Դեյլիուսն է, որը 36 թվի արչավանքի նկարագրությունը տվել է գունավորված կերպով, հավանորեն, հենց իրեն Անտոնինոսի պատկերով: Այդ հաղորդագրությունը, Մոմզենի կարծիքով, «ողորմելի մի փորձ է ծեծված զորավարի արդարացման»¹: Արչավանքի ծրագրի համար, ասում է իրավացի կերպով Մոմզենը, պատասխանատու էր ո՛չ թե Արտավազդը, այլ ինքը Անտոնինոսը. նմանապես և Մոնեսեսի վրա դրած նրա հույսերի խորտակումը, Ստատիանոսի աղետը, Փրասպայի պաշարման անաջողությունը ո՛չ թե Արտավազդի պատճառով էին առաջացել, այլ արդյունք էին իր սխալների ու անխոհեմության:

Պատմադետներից ոմանք, որոնք հավատ ընծայելով Ստրաբոնին, Արտավազդին մեղադրում են դավաճանության մեջ, օրինակ՝ Տարնը, Գարաբաշյանը և ուրիշները², ենթադրում են

¹ Th. Mommsen, Römische Geschichte, Bd. V, Berlin, 1886, էջ 367: ձանթ. 1:

² S. S. Tarn, Cambridge Ancient History, vol. X, էջ 72—78, Գարաբաշյան, «Բնական պատմություն Հայոց», Բ., էջ 178:

նաև, որ Հայոց թագավորը ծածուկ խոսք է կապած եղել պարթևներին հետ և շարունակ նրանց տեղեկություններ է տվել Անտոնիոսի դժվարությունների և հոսմակալն զորքի տեղաշարժումների մասին: Այս պնդումները դարձյալ անապացույց կոհումներ են, որ բնավ չեն հիմնված սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա, Ինչպես կտեսնենք, Ատրպատակա- նի Արտավազդ թագավորը Հայոց թագավորին համարում էր ո՛չ թե արբանյակ ու գործակից պարթևների, այլ մեղսակից ու մասնակցորդ Անտոնիոսի արշավանքի:

Վերև մեջ բերված վկայություններից ամենի վստահելի են համարում պատմադեպի մեծապույն մասը Կասսիուս Դիոնի և Պլուտարքոսի վկայությունները: Այս երկու հեղինակները, որոնց հաղորդած տեղեկությունները, հավանորեն, ծագում են իրարից անկախ աղբյուրներից, ինչպես վերև տեսանք, մեղադրում են Հայոց թագավորին միայն այն բանում, որ նա չէր ուղեցել մարտնչել պարթևական-մեդական միացյալ ուժերի դեմ և իր զորքերը ետ էր քաշել ու վերադարձել Հայաստան: Այս նահանջը, որի պատճառը թշնամու գերադասնք ուժերն էին, չէ կարելի, իհարկե, բնորոշել իբրև դավաճանություն: Ինչպես շատ ճիշտ մատնանշել է Գուտշմիդը, Արտավազդ թագավորին կարելի է հանդիմանել, գլխավորապես, այն բանի համար, որ նա ցանկություն չէ ունեցել իրեն ու իր զորքը զոհելու հոռմա- յեցիների գործի համար¹:

Պարթևների համար, ասում է Գուտշմիդը, նոր այս հաղթության անուղղակի հետևանքներն ամենի մեծ էին, քան ինքը հաղթությունը: Անտոնիոսի անաջողությունը լրացումն էր Կրատոսի պարտության: Թվում էր ապացուցված, որ պարթևներն իրենց սևիական երկրում անհաղթելի են բոլոր կողմերից, Նվաճելի քան հավանական է, որ առաջին հերթին հենց այդ համոզումն էր պատճառը, որ Պարթևական թագավորությունը մոտ մեկ և կես դար պաշտպանված ու ապահովված մնաց հոռմեական անհաղթությունից և հարձակումներից:

Անտոնիոսի արշավանքի անաջողությունը սկիզբն եղավ նրա հեղինակության անկման: Դիկտատորական իրավունքներ ստացած Հոմմի զորավարները զորքի ու իշխող դասերի համակրանքն էին վայելում միայն այն դեպքում, եթե նրանք, հափշտակողա-

¹ Gutschmid, Geschichte Irans. էջ 101.

կան աջող պատերազմներ վարելով՝ կողոպտված ժողովուրդներէ հարստությունները քշում էին Խալիս և ո՛չ միայն իրենք էին հարստանում, այլև հարստացնում էին իրենց հայրենակիցներին: Հռոմեական զենքի ձախորդությունն Ատրպատականում միաժամանակ և Ֆինանսական ձախորդությունն էր: Արշավանքից վերադառնալուց հետո Անտոնիոսն անկարող եղավ լրիվ բավարարել մինչև իսկ Վր զինվորներին:

Հռոմեական Ասիան, որը բաժին էր ընկել Անտոնիոսին՝ դառնում էր ինքը տնտեսական աղետալի գրության մեջ: Հանրապետականներ Բրուտոսը և Կասսիոսը Յուլիոս Կեսարի սպանողները, Փոքր Ասիան թալանել էին ավելի մեծ չափերով, քան Սուլլան ու նրան հաջորդող զորավարներն ու կուսակալները: Գալատիան, Կապպադովկիան և Պոնտոսը տնտեսապես արդեն հյուծվել էին հռոմեական վարկատուների ու վաշխառուների ցանցում: Հռոմեական գերիշխանության տակ գտնվող մեծ թագավորություններից միում էին միայն երկուսը՝ Եգիպտոսը և Հայաստանը, որոնք դեռևս տնտեսապես արնաքամ չէին եղել և ունեին համեմատաբար մեծ հարստություններ:

Բայց Անտոնիոսի սիրուհին, Եգիպտոսի Կլեոպատրա թագուհին, ո՛չ միայն հրաժարվում էր նրան տրամադրել դրամական միջոցներ, այլ, ընդհակառակը, աշխատում էր բարձրացնել ու հարստացնել իր թագավորությունը Անտոնիոսի իշխանության տակ գտնվող երկիրների հաշվին և ձգտում էր վերականգնել եգիպտական փարավոնների նախկին փառքը: Անտոնիոսի սարթևակաճ արշավանքից հետո Հայաստանը միակ երկիրն էր, որ կարող էր հազուրդ տալ հռոմայեցիների անկշտում ընչաքաղցությանը և Արտավազդի երեսկայական դավաճանությունը, ընականաբար, սոսկ մի պատրվակ էր Հայաստանի նվաճման ու կողոպտման:

Հռոմեական պարտված զորքերի վերադարձից հետո Ատուրպատականի Արտավազդ թագավորի և Հրահատ Դ-ի միջև տարաձայնություններ ու դժգոհություններ էին ծագել պատերազմական սպարի բաժանման պատճառով (35 մեր թվ. առաջ): Արտավազդը, որ վրդովված էր ու զայրացած՝ ազատեց գերի բռնված Պոնտոսի Պոլեմոն թագավորին և, ուղարկելով նրան Անտոնիոսի մոտ՝ առաջարկեց դաշինք կոել իր հետ ընդդեմ պարթևների: Նա մտածում էր վրեժ առնել նաև Հայոց Արտա-

վազը Թաղավորից, որն իր տխերիմ Թշնամին էր և Անտոնիոսին հետ ներխուժել ու ալներել էր Ատրպատականը:

Անտոնիոսը, իհարկե, ուրախությամբ ընդունեց Ատրպատականի Թաղավորի առաջարկը, որովհետև սրա ղորակաճ օգնությունը խիստ կարևոր էր պարթևական նոր ծրարվող արշավանքի համար և, բացի այդ, որովհետև այս դաշնակցությամբ մեկուսացվում ու վտանգվում էր Թիկունքից Հայաստանը, որը նա մտադիր էր նվաճել:

Հայաստանի նվաճումը և կոզոպտումը Անտոնիոսն ախարտեց դուրս բերել նենդ ու խարդախ միջոցներով: Լուկիլլոսին նման սա ևս հաջողությամբ քննեցրեց հայոց Թաղավորի աշարջությունը, որպեսզի կարողանա ներխուժել Հայաստան հանկարծակի ու գողաբարո:

Սկզբում, ինչպես վկայում է Կասսիոս Դիոնը, Արտավադը Թաղավորին Անտոնիոսը խաբեությամբ հրավիրեց Եդիպոսս՝ իբր Թե պարթևական նոր արշավանքի մասին խորհրդակցելու համար: Սակայն Արտավադը Բ-ը չխաբվեց և մերժեց Եդիպոսոս գնալ:

«Իսկ հետևյալ ամառը [35 մեր թվ. առաջ], — պատմում է Կասսիոս Դիոնը, — ևրբ Պոմպեյոսը և Կորնուֆիկոսն էին հյուպատոսներ, Անտոնիոսը պատրաստվեց արշավելու Արտավադը Արմենի դեմ, մեծ հույս դնելով մեղացիների Թաղավորի վրա, որը Թշնամացած էր Հրահատի հետ, որովհետև սա ավարից իրեն չառ մաս չէր տվել և իրեն չէր պատվել որևէ այլ կերպ: Իսկ Արտավադը Արմենից նա կամենում էր վրեժ առնել հռոմայեցիներին իրեն դեմ բերելու համար: Ուստի և նա ուղարկեց Պոլեմոնին Անտոնիոսի մոտ հայցելու բարեկամություն և զինակցություն: Եվ Անտոնիոսը, իհարկե, անչափ ուրախացավ և ո՛չ միայն նրա հետ դաշն կնքեց, այլև Պոլեմոնին ի վարձատրություն սրա միջնորդության տվեց կարճ սամանակից հետո Փոքր Հայքը:

Արդ՝ Արտավադը Արմենին նա նախ հրավիրեց իբրև բարեկամի Եդիպոսոս, որպեսզի նրան առանց դժվարություն ձեռք ձգե այստեղ և սպանե: Իսկ երբ սա, գլխի ընկնելով՝ չընդունեց հրավերը՝ նա մտածեց նրան խաբել որևէ առկերպ: Անտոնիոսն իր զայրույթը նրան ցույց չէր տալիս բացահայտ կերպով, որպեսզի նրա հետ պատերազմ չունենալ:

Պեաք է ասել, որ Կասսիուս Դիոնին նրա պատմութեան Անտոնինոսին վերաբերող մասերում աղբյուր էր ծառայել Տիտուս Լիվիուսը, որը՝ իբրև Օկտավիանոսի բարեկամ՝ անբարեհաճ էր տրամադրված դեպի Անտոնինոսը, Հնարավոր է, ուրեմն, որ նրա վկայութիւններն Անտոնինոսի չարանենգութիւնների մասին Արտավազդի նկատմամբ կարող են մի փոքր զուսավորված լինել։ Սակայն, ըստ էութեան այդ վկայութիւնները, ըստ երևույթին, ստույգ են ու արժանահավատ, որովհետև Պլուտարքոսը ևս, ինչպես վերև տեսանք, վկայում է, որ Անտոնինոսը «չափ խոստովաներով ու առաջարկներով» համոզում էր Արտավազդ Բ-ին դալ իր մոտ¹։

35/34 թվի (մեր թվ. ա.) ձմեռը Անտոնինոսն անցկացրեց Պլեոպաարայի մոտ Եգիպտոսում, բայց, ինչպես հաղորդում է Կասսիուս Դիոնը, նա նորից փորձեց բարձ դնել Արտավազդի դիմի տակ և ուղարկեց նրա մոտ իբրև խնամախոս Դեյլիուսին, առաջարկելով ամուսնացնել իր Աղեքսանդր որդուն Արտավազդի դստեր հետ։ Այնուհետև, 34 թվի դարնան սկզբներին, նա հանկարծ ինքը զորքով եկավ փոքր Հայք ու Արտավազդ Բ-ին հրաժիրեց դարձյալ իր մոտ խորհրդակցութեան։ Բայց որովհետև Արտավազդը դանաղան, պատրվակներով հրաժարվից դնալ նրա մոտ՝ Անտոնինոսն արագ երթերով դիմեց իր զորքով դեպի Արտաշատ։ Այս անգամ նա, դենքի սպառնալիքով ու նաև համոզելով բարեկամների միջոցով, հարկադրեց հայոց Թադավորին դալ իր բանակը։ Հայաստանն այժմ ևս, ինչպես և Լուկուլլոսի արշավանքի ժամանակ, հանկարծակիի բերվեց և, պատրաստված չլինելով պատերազմի, չէր կարող ցույց տալ ղինված դիմադրութիւն։

Պարզված Արտավազդը, որ նենդ ու անվայել միջոցներով ձուլակի մեջ էր դգվել՝ ձերբակալվեց, և նրան, ինչպես պատմում է Կասսիուս Դիոնը՝ Անտոնինոսն իր հետ մամ ածեց Հայաստանի բերդերը, ուր դնում էին արքունական զանձերը, որպեսզի կարողանա բռնադրավել Հայաստանի հարստութիւններն առանց պատերազմի։ Բայց հայ մեծամեծները, Անտոնինոսի նենդագործ արարքներից դրդոված՝ զենքի դիմեցին և Հայաստանի Թադավոր ընտրեցին Արտավազդ Բ-ի մեծ որդուն՝ Արտաշես Բ-ին։ Սակայն տեղի ունեցած ճակատամարտում հայկական

¹ S. P. Plat., Antonius, L. 2:

լինիլած ուժերը, որ չէին նախապատրաստուիլ մեծ պատերազմի՝ հաղթվեցին և Արտաշեսը փախալ պարթևների մոտ:

Այս պարտութիւնից հետո Հայաստանը հայտարարվեց նը-վաճւած երկիր և ենթարկվեց ընդհանուր կողոպուտի հռոմեա-կան լեգեոնների կողմից, Անինա կողոպտվեցին և Հայաստանի հարուստ տաճարները ու նրանց թվում նաև Անահիտի տաճարը Եկեղյաց դավառում, որի մեջ Անահիտ աստվածուհու ոսկեձուլլ արձանը բռնագրավեց ինքը Անտոնիոսը:

34 թվի (մեր թվ. առաջ) ամառվա վերջերին Անտոնիոսը վերադարձալ Եգիպտոս, թողնելով հռոմեական զորքը նվաճված Հայաստանում: Նա իր հետ Եգիպտոս տարալ արծաթե չղթա-ներով կապված Արտավազդ թագավորին, նրա կանանց, նրա Տիգրան ու Արտավազդ որդիներին ու հայ գերիներին: Աղեք-սանգրիայում նա հանդիսավոր կերպով տոնեց իր հաղթութիւն-նը և Հայաստանի նվաճման առթիւ կազմակերպեց չքեղ հաղթա-կան երթ, որը Մոմդենը համարում է կապիտուլյան հաղթահան-դեսների մի ծաղրանկար¹:

Հանդիսավոր երթի ժամանակ Արտավազդը կալանդված էր ոսկե չղթաներով, իսկ Կլեոպատրան նստած էր ոսկեզօծ գահի վրա արծաթադառ բեմում: Հայոց թագավորին ու նրա ընտա-նիքին, ազատության խոստում տալով՝ հորդորում էին դիմել Կլեոպատրային խնդրեցով ու աղերսանքով: Մակայն սրանք չու-ղեցին նրան դիմել աղերսանքով, ո՛չ էլ գլուխ խոնարհեցրին, այլ ցույց տվին, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը, ոգու վեհու-թիւն, որի համար ստացան վեհամիտ անձերի համբալ:

Հունա-հռոմեական աղբյուրների կարևոր տեղեկութիւննե-րը, որ վերաբերում են Արտավազդի կալանավորման, Հայաս-տանի նվաճման ու վերահիշյալ մյուս անցքերին՝ ալելորդ չեմ համարում մեջ բերել բառացի թարգմանությամբ հունարենից ու լատիներենից:

1. Կասսիուս Դիոն, XLIX, 39, 2—6՝

«Որսեցդի կարողանա Արտավազդ Արմենից առանց դժ-վարության վրեժ առնել՝ Անտոնիոսն ուղարկեց նրա մոտ ոմն Կվինտուս Դեյլլուսին, որը երբեմն իր սիրելին էր՝ և խնդրեց նրա ալջկանն ի կնութիւն, իր Աղեքսանդր որդուն և նրան շատ խոստումներ արեց: Եվ, վերջիվերջո, գարնան

¹ See Mommsen, Römische Geschichte. Bd. V, Berlin, 1898, էջ 369.

սկզբին նա հանկարծ եկավ Նիկոպոլիս, որ հիմենել էր Պոմպեյոսը, և նրան այնտեղ հրավիրեց այն պատրվակով, որ իբր թե նրա հետ խորհրդակցելու և համագործակցելու է ընդդեմ պարթևների: Իսկ երբ Արտավազդը, նախատեսելով նրա գիտավորութունը, մոտը չեկավ՝ նա նորից բանակցութիւնների համար ուղարկեց Դիլլիուսին և ինքը ևս շտապեց դնալ Արտաշատ:

Եվ այսպիսով, թե նրան համոզելով բարեկամների միջոցով, թե իր զորքերի երկյուղով և թե, ընդհանրապես, իբրև բարեկամի նրան դրելով ու ամեն տեսակ միջոցներով գիմելով՝ վերջապես, երկար ժամանակից հետո, նրան հարկադրեց գալ բանակ: Եվ ձերբակալելով նրան այնտեղ՝ սկզբում պահեց առանց կապանքների և նրան տարավ իր հետ այն ամրացրած տեղերը, ուր գտնվում էին դանձերը, որպեսզի կարողանա բռնագրավել այն առանց պատերազմի: Նա արդարանում էր, որ թագավորին ձերբակալել է միայն այն պատճառով, որպեսզի հայերից տուրք վերցնեն նրա անձի ու նրա թագավորութայն, փրկության համար: Իսկ երբ դանձերի պահապանները նրան չլսեցին և ղինված ուժերը Արտավազդի փոխարեն թագավոր ընտրեցին սրա որդիներից մեկին, Արտաշեսին, Անտոնիոսն Արտավազդին կապեց արծաթե շղթաներով, որովհետև, ըստ երևույթին, ամոթալի համարեց նրան, որ թագավոր էր եղել՝ կապել երկաթե շղթաներով:

Եվ այնուհետև Անտոնիոսը, ոմանց հոժարակամ նվաճելով, ոմանց էլ բռնությամբ՝ տիրեց ամբողջ Հայաստանին: Իսկ Արտաշեսը, որ պատերազմի բռնվեց ու պարտվեց՝ փախավ պարթևների թագավորի մոտ: Այն անելուց հետո Անտոնիոսը, որպեսզի ավելի մեծ բարեկամութիւն հաստատե մեդացիների թագավորի հետ՝ իր որդուն նշանեց նրա աղջկա հետ, և ապա իր բանակը թողեց Հայաստանում ու վերադարձավ Նեպոսոս, իր հետ տանելով թե այլ մեծ ավար և թե Հայոց թագավորին իր կանանց ու երեխաների հետ:

Ուղարկելով մյուս զբոյնների հետ սրանց իր առջևից Աղեքսանդրիա իբր հաղթահանողեսի երթում՝ նա ինքը ներս մտավ քաղաք մարտակառքով. և բացի այլ ամենից, որ շնորհեց Կլեոպատրային՝ նրան բերեց իր ընտանիքի հետ:

նաև Հայոց Թագավորին, որը կալանդւած էր ոսկե շղթաներով: Իսկ Կլեոպատրան նստած էր բաղմուքյան մեջ ոսկե զօծ դահի վրա արծաթապատ բեմով: Սակայն բարբարոսները, թեև նրանց շատ էին ստիպում և շատ էին հորդորում, տալով աղափության խոստում՝ չդիմեցին նրան աղերսանքով, ոչ էլ զլուխ խոնարհեցրին: Եվ որովհետև միայն նրա անունն էին տալիս՝ նրանք վեհամիտ անձերի համբավ ստացան, բայց և նույն այդ պատճառով ենթարկւեցին անգութ վերաբերմունքի:

2. Պլուտարքոս, Անտոնիոս, I, 2՝

«Սակայն հետո, նորից ներս խուժելով Հայաստան՝ չաա խոստումներով ու առաջարկներով [Անտոնիոսը] համոզեց նրան [Արտավազդին] դալ իր մոտ, բռնեց նրան և շղթայված Աղեքսանդրիա տարավ իր հալթահանդեսի համար»:

3. Ստրաբոն, XI, 14, 15 (532)՝

«Նրան [Տիգրան Բ-ին] հաջորդող Արտավազդը, քանի որ նա հռոմայեցիների բարեկամ էր՝ բարեհաջող զրուգյան մեջ էր գտնվում: Բայց երբ նա դավաճանեց Անտոնիոսին ի նպաստ պարթևների պատերազմի ժամանակ սրանց դեմ՝ ենթարկվեց պատժի: Նա տարվեց Անտոնիոսի հրամանով Աղեքսանդրիա, մահ ածվեց քաղաքի մեջ շղթաներով կալանդված, մնաց մի քանի ժամանակ բանտում, իսկ հետո սպանվեց Ակտիումի կռվի ժամանակ»:

4. Տակիտոս, Տարեդրուգյուններ, II, 3՝

«Երբ Վոնոնը լարտվեց՝ նրան ապաստարան ծառայեց Հայաստանը, որն այդ ժամանակ թագավոր չուներ և որը, գտնվելով պարթևների ու հռոմայեցիների ուժերի միջև՝ անհավատարիմ էր Անտոնիոսի եղեռնադործության պատճառով, որը Արտավազդին, հայերի թագավորին, բարեկամության դիմակի տակ ծուղակի մեջ էր քաշել, իսկ հետո շղթայել էր և սպանել»:

5. Հովսեպոս Փլավիոս, Հնախոսություն, XV, 4, 3՝

«Իսկ Անտոնիոսը, տիրելով Հայաստանին՝ շղթայված Եղիպտոս է ուղարկում Արտավազդին՝ Տիգրանի որդուն, իր որդիների ու մեծամեծների հետ միասին և նվիրում է Կլեոպատրային թե սրանց և թե Արտավազդի թագավորության ամբողջ արդուդարդը, որ նա վերցրել էր այնտեղ»:

Ուշադիր կերպով ծանոթանալով մեջ բերված այս վկայու-

թյուններին՝ մենք դարձյալ տեսնում ենք, որ Անտոնիոսի ու Արտավազդի մասին մեր ձեռքը հասել են իրար հակառակ տարբեր տեղեկություններ: Ստրաբոնի վկայություները, ինչպես վերև ասացինք, հիմնված են Անտոնիոսի մոտ բարեկամ Դելլիուսի հաղորդադրությունների վրա, որոնք ավելի քան կասկածելի են: Եթե Արտավազդը հռոմայեցիներին դավաճանած լինելու նա, անհուշտ, կայանավորվելուց հետո իսկույն մահվան կդատապարտվեր, ինչպես Կապսադոնիայի Արիարաթ Ժ. Թաղալուրը, որին Անտոնիոսը, ինչպես վերև տեսանք, մահապատժի էր խնթարկել դավաճանության համար 37/36 թվի ձմեռը: Ուշադրով է ստեղծվում, որ Արտավազդ Բ-ին չէին սպանել նաև հաղթահանողներից հետո, ինչպես այդ ընդունված էր հռոմայեցիներին մոտ:

Դժվար չէ, ուրեմն, համոզվել, որ վերև մեջ բերված վկայություներին համեմատաբար ավելի վստահելի կարող են համարվել ո՛չ թե Ստրաբոնի, այլ վերոհիշյալ մյուս վկայությունները:

Հայաստանի նվաճումից և վերահիշյալ հաղթահանողներից հետո ժողովրդի մեծ բազմության ներկայությամբ տեղի ունեցավ Աղեքսանդրիայում հանգիստավոր նիստ և այդ նիստում Անտոնիոսը, որ իրեն համարում էր արդեն նոր աշխարհակալության հիմնադիր՝ ըստանեց նվաճված ու նաև դեռ չնվաճված արևելյան երկիրները Կլեոպատրայի ու նրա երեխաների մեջ:

Կլեոպատրան հայտարարվեց «թագավորների թագուհի», իսկ Յուլիուս Կեսարի ու Կլեոպատրայի Պտղոմեոս Կեսարիոն որդին, որը իր մոլոր դահակից էր՝ հայտարարվեց «թագավորների թագավոր», և սրանք ստացան Եգիպտոսն ու Կիպրոսը: Մյուս երկիրները բաժին ստացան Անտոնիոսի և Կլեոպատրայի զավակները: Վեց տարեկան Ալեքսանդրին Անտոնիոսը տվեց Հայաստանը, նաև Միդիան ու Պարթևական թագավորությունը, որ հարկավոր էր դեռ նվաճել: Երկու տարեկան Պտղոմեոս փրկվելուց հետո ստացավ եգիպտական երկրամասերն Ասորիքում և Ֆիլիկիայում, իսկ Կլեոպատրա Սելենեն՝ Լիբիան և Կիրենայիկան:

Բացի իր հաղթության առթիվ հաղթահանողն կատարելուց՝ Անտոնիոսը ի հիշատակ Հայաստանի նվաճման 34 թվին կտրել է տվել հատուկ դրամներ: Այդ դրամների մեկ կողմը դրոշմված է նրա պատկերը, որի շուրջը գրված է՝ «Անտոնիոս

Հայաստանը նվաճված» (Antoni Armenia devicta), իսկ մյուս կողմը դրոշմված է Կլեոպատրայի սլափերը և նրա շուրջը դրված է «Կլեոպատրայի թագավորների թագուհու թագավորների որդիք» (Cleopatrae reginae regum filiorum regum):

Հռոմեական արևելյան երկիրների տալարաշխուժը Կլեոպատրային ու նրա զավակներին, բնականաբար, առաջ բերեց Հռոմում մեծ դժգոհություն: Հռոմայեցի հայրենասերները և, զլխավորապես, Օկտավիանոսը և նրա կուսակիցները, խիստ զրկում էին Անտոնիոսի դեմ, որովհետև նա ոտնատակ էր արել Աղեքսանդրիայում Հռոմեական սեփական շահերը: Անտոնիոսի քաղաքական հակառակորդների համար Հայաստանի կողոպտումը և Արտավազդ թագավորի կալանավորումը պրոպագանդայի միջոցներ էին Անտոնիոսին արատավորելու ու տապալելու համար: Բայց, իրոպես, Օկտավիանոսը, ինչպես երևում է հռոմեական աղբյուրների վկայություններից՝ խիստ զգուշ էր, որ ինքը մաս չէր սաացել Հայաստանի կողոպուտից և որ նվաճված Հայաստանի հողերը չէին բաշխվել հռոմեական զորքին:

33 թվին (մեր թվ. առաջ) Անտոնիոսը նորից եկավ Հայաստան և Արաքս գետի մոտ տեսակցություն ունեցավ Ատրպատականի Արտավազդ թագավորի հետ, որը վախենում էր պարթևական հարձակումից: Պարթևական այս արշավանքը, որը, իրապես, չուտով տեղի ունեցավ՝ ետ էր մղվել, ըստ երևույթին, հռոմեական զորքերի օդնությունից, որոնք զտնվում էին Հայաստանում: Տեսակցության ժամանակ Անտոնիոսի և Արտավազդ Մեղացու դաշնակցությունն ավելի ևս ամրապնդվեց: Մարկվարտը ենթադրում է¹, որ, հավանորեն, նույն այս 33 թվին ատրպատականցիները ետ էին առել հայերից Մեծ Աղթակ դավառը, այսինքն՝ այժմյան Բաշկալեի շուրջը գտնվող երկիրը, որը Ստրաբոնի մոտ անվանված է Σοβακτ² (ըստ Մարկվարտի՝ պեճ է ուղղել և կարդալ 'Αλβακτ):

Ըստ երևույթին, նաև նույն այս 33 թվին (մեր թվ. առաջ) Անտոնիոսը տվել էր Փոքր Հայքը Պոնտոսի թագավոր Պոլեմոնին, որի միջնորդությամբ էր կնքվել վերոհիշյալ դաշինքն Արտավազդ Մեղացու հետ: Այդ մասին ունի վկայություն Կասի-

¹ S. Markwart, Eransdahr, էջ 109.

² Strabo, XI, 13, 2 (523):

ուս Դիոնը, որը պարզ ու որոշ ասում է, որ Անտոնինոսը Պոլեմոնին ի վարձատրությունը սրա միջնորդության տվեց փոքր Հայքը¹: Ոմանք ենթադրում են, որ Փոքր Հայքը 33 թվեց առաջ կցված է եղել Արտավազդ Բ-ի Թագավորությանը և նրանից անջատվել է, ինչպես և Մեծ Աղբակը, Հայաստանի նվաճումից հետո²: Այս խնդիրը, իմ կարծիքով, կարոտ է դնու հատուկ քննության: Միանգամայն ըստիս հնարավոր է, որ Փոքր Հայքը կարող էր միացված լինել Մեծ Հայաստանին Ասորիքի նվաճման և պարթևական-հայկական արշավանքների ժամանակ 40—38 թվերին (մեր թվ. առաջ):

33 թվին (մեր թվ. ա.) Անտոնինոսն այլևս չէր կարող նոր արշավանքի ելնել պարթևների դեմ, որովհետև նրա ու Օկտավիանոսի հարաբերությունները սկսել էին արդեն սրվել, և նա պետք է նախապատրաստվեր պատերազմի իր զլխավոր ոստիկ դեմ:

33 թվի անցքերի մասին ուշադրավ են կասսիուս Դիոնի վկայությունները, որ կարևոր եմ համարում մեջ բերել առանց կրճատումների:

«Իսկ Անտոնինոսը, — պատմում է Դիոնը, — այլ ժամանակ եկավ մինչև Արաքս դետը, իրր թե պատերազմ սկսելու նաև պարթևների դեմ, և նա զոհ մնաց Մեդացու հետ ինքված համաձայնությունից: Նրանք պայմանավորվեցին, որ պետք է իրար օլոնեն պատերազմի ժամանակ, ինքը՝ պարթևների դեմ, իսկ նա՝ Կեսարի [Օկտավիանոսի] դեմ: Եվ այնուհետև նրանք զոխադարձաբար իրար տվին որոշ քանակությամբ զինվորներ. Մեդացին վերցեց նորանվաճ Հայաստանի զորքի մի մասը, իսկ Անտոնինոսն առավ նրա Յոտապե աղջկանն իբրև կին Ալեքսանդրին ու նաև զինվորական զորոնները, որոնք գրավված էին Ստատիանոսի հետ ճակատամարտում: Ապա Անտոնինոսը, ինչպես ասում են, շնորհեց Պոլեմոնին Փոքր Հայքը, իսկ միաժամանակ Լուկիոս Կլուդիոսին, որն իր հետ էր, հյուպատոս նշանակելով և ետ թողնելով՝ ինքը շտաբեց դնալ Յոնիս և Հուսսստան

¹ See Cass. Dio, XLIX, 33, 2: Տարնը Դիոնի այս վկայությունը համարում է սխալ և ենթադրում է, որ Պոլեմոնը Փոքր Հայքը ստացել էր Անտոնինոսից Պոնտոսի հետ միասին 37/36 թվի ձմեռը: Տարնի այս կարծիքն ավելի քան վիճելի է. տես Turn, Cambridge Ancient History, vol. X, էջ 70:

² Համեմատես Хачатурян, Очерк истории Армении, Москва, 1910, էջ 342:

պատերազմելու Կեսարի [Օկտավիանոսի] դեմ: Եվ Մեղա-
ցին, օգտվելով դաշնակից հռոմայեցիներից՝ սկսեց հաղ-
թեց պարթևներին ու Արտաշեսին, որոնք հարձակվել էին իր
վրա, բայց երբ Անտոնիոսն իր զորքերը ետ կանչեց և պա-
հեց, բացի այդ, մոտը և նրա զորքերը՝ նա պարտվեց և
դերի ընկավ. և այսպիսով Հայաստանը Մեգիարյի հետ միա-
սին կորսվեց՝:

32 Թվին (մեր թվ. առաջ) հռոմեական ծերակույտը Օկտա-
վիանոսի առաջարկությամբ զրկեց Անտոնիոսին բոլոր լիազորու-
թյուններից և հայտարարեց հայրենիքի թշնամի: Այնուհետև
31 թվի անանը երկու ամսյանի միջև տեղի ունեցավ Ակտիումի
մոտ Հսկիաստանում վճռական ճակատամարտ, որի հետք սկզբ-
բույժ Եգիպտոս փախավ նախ Կլեոպատրան ու ապա նաև նրա
սիրականը: Իսկ Անտոնիոսի զորքը, մնալով առանց առաջնորդի՝
անձնատուր եղավ Օկտավիանոսին:

Վերադառնալով Աղեքսանդրիա՝ Կլեոպատրան, որպեսզի
հաստատուն դարձնե դաշինքը Արտավազդ Մեղացու հետ՝ գըլ-
խատել տվեց հայոց Արտավազդ Թադավորին և գլուխը ուղար-
կեց Ատրպատականի Թագավորին: Սակայն Կլեոպատրայի հա-
շիվները և հույսերը ի դերն ելան: 30 թվին (մեր թվ. ա.) և
ինքը Կլեոպատրան և Անտոնիոսը ինքնասպանություն դործեցին,
և Եգիպտոսը, որը գրավել էր Օկտավիանոսը՝ դառավ հռոմեա-
կան նահանգ:

Անտոնիոսի մահից հետո երկապետությունը վերացավ, և
այնուհետև Օկտավիանոսն իշխեց միանձնաբար: Հռոմեական
հանրապետությունը վերջնականապես կործանվեց և նրան փո-
խարինեց Հռոմեական կայսրությունը: Իսկ Հայաստանում Ար-
տավազդ Բ-ի որդին, Արտաշես Բ-ը, ինչպես կտեսնենք, վերա-
կանդնեց Արտաշեսյան Թադավորական տոհմի իշխանությունը:

Արտավազդ Բ-ի Թադավորությունը ընթացքում Հայաստանը
ենթարկված էր մահացու վտանգի: Դամոկլյան սուրը սպառնում
էր հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույն գոյությունը: Հռո-
մը, որ անչափ ընդարձակել էր իր տիրապետությունը թե Արև-
մուտքում և թե Արևելքում՝ այս ժամանակաշրջանում անդուսպ
ձգտում ուներ նվաճելու ամբողջ Առաջավոր Ասիան և վերա-
ստեղծելու Աղեքսանդր Մակեդոնացու համաշխարհային արեե-

լյան մեծ պետութիւնը, Եթե Կրասսոսի և Անտոնիոսի պարթևական արշավանքները հաջողութեամբ պսակվեին՝ Հայաստանը կկորցնէր, անուշտ, քաղաքական իր ինքնուրույնութիւնը և կմիացվէր, հավանորեն, ինչպես Արևմուտքում Իսպանիան ու Գալլիան, Հռոմեական պետութեանը՝ իբրև Հռոմեական նահանգ։ Այդ դեպքում հայ ժողովուրդը, ինչպես Պոնտոսի ու փոքր Ասիայի հարևան ժողովուրդները՝ կկորցնէր նաև իր կուլտուրական ինքնուրույնութիւնը և իր լեզուն։

Հայերի քաղաքական ինքնուրույնութիւնը փրկվեց ու պաշտպանվեց հաջորդ դարերում, ինչպես և դերմանացիներինը Արևմուտքում, դիսափորապես, այն պատճառով, որ հռոմայեցիները պարտութիւն կրեցին, Եփրատ և Հոննոս գետերի մոտերքում և դարեր շարունակ կառչած մնացին այս դետերին։

Արտավազդ Բ-ի Թադավորութեան քաղաքական անցքերը լուսաբանելիս պետք է ըստիս աչքի առաջ ունենալ այն վտանգավոր կացութիւնը, որի մեջ դտնվում էր Հայաստանն այս ժամանակաշրջանում։

Գտնվելով պայքարող Երկու հարևանների միջև՝ Արտավազդ Բ-ը չէր ուզեցել լինել անխոս կամակատարը իր հարևանների և աշխատել էր վարել ինքնուրույն ու անկախ քաղաքականութիւն, ի նկատի ունենալով իր սեփական երկրի ու ժողովրդի շահերը։ Կրասսոսի պարթևական արշավանքի ժամանակ նա չհամաձայնեց հլու սպասափորը՝ լինել Հռոմեական շահերի, այլ իր պարտքը համարեց ապահովել Թշնամուց, նախ և առաջ, իր պետութեան անվտանգութիւնը։ Արտավազդ Բ-ի քաղաքական վարքագիծը զուսպ էր և վերապահ նաև Անտոնիոսի պարթևական արշավանքի ժամանակ, որը առանձին ոգևորութիւն չէր կարող ներշնչել ո՛չ նրան, ո՛չ էլ նրա զորքին։ Ինչպես հայտնի է, Անտոնիոսը պարթևական իր արշավանքից առաջ, Կանիդիոս Կրասսոսի անդրկովկասյան հաղթութիւններից հետո, կտրել էր Եվրոպայի դրամ, որի վրա դրոշմված էր հայկական խույրը՝ ի նշան Հայաստանի ընկճման ու հպատակեցման¹։

Արտավազդ Բ-ը, որի ժամանակ դեռ կենդանի էին Տիգրանեյան Հայաստանի հզորութեան հիշողութիւնները, աշխատել էր, ըստ երևույթին, Հայաստանի դերիշխանութեանը ենթարկել հաբեան, փոքր պետութիւնները։ Աղբյուրների ակնարկներից կա-

¹ Տես Tarn, The Cambridge Ancient History, vol. X, էջ 72.

րելի է ըստիս կռահել, որ 40—38 թվերի (մեր թվ. ա.) պարթևական-հայկական հաղթական պատերազմների ժամանակ նա, հավանորեն, միացրած է եղել Մեծ Հայաստանին փոքր Հայքը ու թերևս նաև Ծոփքը: Նա ձգտել է ենթարկել իր դերիշխանությանը նաև հարևան Ատրպատականի թագավորին: Նա շարունակել էր կիրարկել իր հոր տնտեսական քաղաքականությունը և Ասորիքից ու Հրեաստանից Հայաստանի քաղաքներն էր վաղթեցրել առևտրականներ, տրհասավորներ և այլ որսկյալ աշխատավորներ:

Հելլենական կրթություն ստացած այս լուսամիտ թագավորը, որը Մեծն Տիգրանի հաջորդն էր, ինչպես տեսնում ենք, պատմական խոշոր անձնավորություն է: Սակայն Արտաշեսյան տոհմի նշանավոր այս դեմքը, ինչպես և սրա հայր Տիգրան Բ-ը, խեղաթյուրված ու նվաստացված է պատմագիտական նոր երկրում: Տիգրան Մեծի դեմքը, ինչպես ցույց եմ տվել իմ «Տիգրան Բ. և Հոմոմ» աշխատության մեջ, չարամիտ կերպով աղավաղված է Պլուտարքոսի մոտ, իսկ Արտավազդինը՝ անհանդուրժելի կերպով այլանդակված է թյուրիմացաբար խորենացու Պատմության մեջ, որի ազդեցության տակ են դնվում հայ պատմաբաններից շատերը:

Արաավաղ. Բ-ի սխալ բնութագրերը, որ ծագրանկարային ձևով պատկերել է Մովսես խորենացին, ու նաև պատմահոր մյուս կարևոր վկայությունները սրա մասին՝ ավելորդ չեմ համարում մեջ բերել այստեղ ընդարձակ բովանդակությամբ:

1. խորենացի, II, գլ. ԻԲ, էջ 137. (Տիգլիս 1913)՝

«Բայց ուրիշ ո՛չ մի արություն և քաջության դործ ցույց չտվեց [Արտավազդը], այլ անձնատուր էր լինում ուտել լսմելու, չրջում էր ու թախառում ճահճոտ անդերում, եղեգնոտներում և քարափներում, վայրի էշեր ու վարապներ որսալով: Անիույթ լինելով ղեկի իմաստությունը, քաջությունը և բարի հիշատակ թողնելը՝ նա իսկապես ծառա և ստրուկ էր դառել որովայնի և մեծացնում էր աղբանդները: Սա, հանդիմանվելով իր գործերից խիստ ծուլության և սաստիկ որկրամոլության համար, մասնավաճ ուր Անտոնիոսը նրանից առել էր Միջագետքը՝ զայրացած հրաման տվեց Ատրպատական նահանգից հավաքել տասնյակ հազարավոր զորքեր ու հավաքել նաև Կովկաս լեռան ընդհանր

բին Աղվանների ու վրացիների հետ և գնաց իջավ Միջագետք և հալածեց հռոմայեցիների զորքերը»:

[«Բայց այլ ոչ ինչ դործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտելեաց և ըմպելեաց պարտպեալ, մօրից և եղբկնապօրակաց թափառեալ շրջէր և առապարաց, զիջալայրիս և զխոզս արածելով. զիմաստութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անխոյթ արարեալ, ծառայ և ստրուկ որովայնի արդարեւ լինելով՝ զաղբիւս մեծացուցանէր: Սա բասրիւով յիւրոց զօրացն վասն, առաւել պզեղութեանն և սաստիկ որկրամոլութեանն, մահաւանդ զի և զՄիջագետս Անտոնիոսի հանեալ էր ի նմանէ, զայրացեալ՝ հրաման տայր զօր յարուցանել զբերաւորս Ատրպատական նահանգին և զբնակիչս լերինն կաւկասոս հանդերձ Աղուանիւք և Վրօք. խաղայ իջանէ ի Միջագետս, և հալածականս առնէ զգօրս հռոմայեցւոց»]:

2. Խորենացի, II, 41, ԻԳ, էջ 138՝

«Աւուծի նման գաղանաբար մռնչաց Անտոնիոսը, ավելի ևս գրգռվելով Կլետպատրայից, որովհետեւ սա քնն էր պահում իր մամի Տիգրանից կրած չարչարանքների համար: Եվ ոչ միայն հայերին էր նա մահ բերում, այլև ուրիշ շատ թագավորներին, որպեսզի աիրե նրանց իշխանություններին: Ուստի և Անտոնիոսը, շատ թալալորներ ուղարկելով՝ նրանց իշխանությունը հանձնում է Կլետպատրային, բացի Տյուրոսից և Սիւրոնից ու այն երկիրներից, որոնք դոնվում էին Աղառ զեսոի մոտ: Եվ վերցնելով բազմաթիվ զորքեր՝ նա դիմում է Արտավազդի վրա և, անցնելով Միջագետքի միջով՝ սաստիկ ջարդում է հայկական զորքերը և նրանց թագավորին ձերբակալում է: Եվ վերադառնալով Նիկիտոս՝ նա Կլետպատրային է պարդեւում Տիգրանի որդուն, Արտավազդին, պատերազմի կողոպուտից ստացած ուրիշ շատ ավարի հետ»:

[«Մռնչեալ առյուծարար գաղանությամբ Անտոնիոս, առաւել ևս թռնեալ ի Կղէոպատրայ, քանզի քէն պահէր վասն լիկանաց իւրոյ հանոյն, որ ի Տիգրանայ. և ոչ միայն Հայոց, այլ բաղմաց այլոց թագաւորաց լինէր մահաբեր, զի նոցայոցն տիրեցէ իշխանութեանց: Սակս որոյ բազում թագաւորս սպանեալ Անտոնիոս՝ ի Կղէոպատրայ հաւատայ զնոցա իշխանութիւնս, բայց ի Տիւրոսէ և Սիւրովնէ, և որ միանգամ ընդ Աղառ գետովն էին: Եւ առեալ զբազմութիւնս

ղօրացն՝ գլմէ ի վերայ Արտաւազդայ. և անցեալ ընդ Միջագետս՝ կոտորէ անհնարին զղօրս Հայոց, և ձերբակալ առնէ զարքայն նոցա: Եւ վարձեալ յնգիսպոսս՝ պարգևէ Կղէոպատրայ զԱրտաւազդ որդի Տիգրանայ, հանդերձ բաղում ընչիւք յանկածէ պատերազմին»]:

Խորենացու հաղորդած այս տեղեկություններն, Արտավազդ Բ-ի մասին քննութեան են առնված Խալաթյանցի «Հայ Արշակունիները» աշխատութեան մեջ: Տիգրան Բ-ի որդու պատմութեան համար Խորենացու միակ աղբյուրը, ինչպես շատ ճիշտ գիտել է Խալաթյանցը, եբրայեցի հին պատմագիր Հովսեպոս փլավիոսն է, որն իր «Հնախոսութեան» մեջ (XV, 4, 3) վերյուր է, որ Անտոնիոսը, տիրելով Հայաստանին՝ Արտավազդին չղթայել էր և որդիներին, մեծամեծների ու Հայաստանում կողոպտված հարստությունների հետ ուղարկել էր Եգիպտոս և ընծայել էր Կլեոպատրային:

Այս մեծ աղետը Խորենացին վերագրել է, բնականաբար, Արտավազդ Բ-ի թուլութեան, ուստի և, համարելով նրան պարսավանքի արժանի, համաձայն իր սովորութեան, ճարտասանորեն սարքել է ինքը Արտավազդի վերոհիշյալ բացասական քննութադիրը, որը, ինչպես ասանք, չէ համապատասխանում պատմական իրողութեան: Բոլորովին անհիմն է, ինչպես ցույց է տվել Խալաթյանցը¹, նաև Խորենացու երթադրությունը, որ իբր թե Կլեոպատրան հայերի դեմ քնն էր պահում իր մամի կրած չարչարանքների համար:

Իրապես, Ասորիքի Կլեոպատրա-Սելենե թագուհին, որը Տիգրան Բ-ի հրամանով սղանվել էր 69 կամ 68 թվին (մեր թվ. ա.)՝ մայրն էր ո՛չ թե Նդիպտոսի թագուհի Կլեոպատրայի հոր՝ Պաուլեմեոս Դիոնիսոսի, այլ Անտիոքոս Դիոնիսոսի²:

Արտավազդ Բ-ի վերահիշյալ սխալ քննութադիրը, որը Խորենացու ազդեցութեամբ սովորաբար մեջ է բերվում պատմագրտակտն հայ երկերում՝ պետք է, իհարկե, անվերապահ կերպով մերժվի, որովհետև այդ, ինչպես տեսնում ենք, հնարովի հերյուրանք է, որ չունի պատմական արժեք:

¹ Տես Халатян, Армянские Аршакиды, Москва, 1903, էջ 67—68:

² Նույնը, էջ 68:

³ Տես Gutschmid, Ueber die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren, Berichte über d. Verhandlungen d. Königl. Sächs. Gesellschaft der Wissenschaften, 1876, էջ 24:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆԵՐՈՐԴ

ԱՐՏԱՇԵՍ Բ-Ի ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌ ՊԱՅԳԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Արտաշես Բ-ի գահակալությունը և հռոմայեցիների կոտորածը Հայաստանում.—Արտաշես Բ-ը Հայաստանի և Ասորպատկանի թագավոր։—2. Օկսարիսնոս Ասորիի մահը և Կարթակ-հայկական խնդրի լուծման հետաձգումը։—3. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումը.—Արտաշես Բ-ի հաղթանակությունը Հռոմի հեռ։—4. Օգոստոսի արաբիք քաղաքականության լուծումը.—Արտաշեսի Հայաստանի օգնությունը Հռոմի ազդեցությանը հակառակ պայմաններում։—5. Հռոմի արևելյան քաղաքականության կենդանացումը.—Օգոստոսի և Տիրեբիոսի պայքարը Արևելքում.—Արտաշեսի դրոշմների և գերիների հանձնումը հռոմայեցիներին։—6. Արտաշես Բ-ի սպանությունը և Հռոմի գերիշխանության հանաչումը Տիրացու Գ-ի կողմից.—Ասորպատկանի անջատումը Հայաստանից.—Հայաստանի հաղթանակների հետևանքով հռոմեական բանաստեղծների երկերում.—Հայաստանի առթիվ կազմված դրամները։—7. Հայահռոմեական կուսակցությունը Հայաստանում և նրա պարթևական կողմնորոշումը պահպանումը։—8. Հայերի հայահռոմեական քաղաքականությունը Տիրացու Գ-ի թագավորության ժամանակ.—Կարթակների բախակալությունը Հռոմի հեռ։—Հայաստանը դեռևս հզոր պետություն։—9. Արտաշես Գ-ի կարճատև թագավորությունը և Տիրացու Գ-ի վերահաստատումը գահի վրա։—Կայսր Կեսարը Արևելքում.—Կարթակների հաջորդությունը Կայսրի հեռ։—Տիրացու Գ-ի մահը։—10. Հռոմայեցիների նշանակած թագավորները՝ Արտաշեսները, Արտաշես Գ-ը և Տիրացու Ե-ը։—11. Էրազմ և Կեսարիությունը Հայաստանում։—12. Օգոստոսի քաղաքականության ձևափոխումը։

Օկսարիսնոսի դեմ պատերազմի նախապատրաստելիս՝ Արտաշեսն իր հետ Արևելքից Հռոմաստան էր տարել ո՛չ միայն հռոմեական զորքերի մեծագույն մասը, այլև իր ղաջնակից Արտաշատը Մեդաքու հեծելազորը։

Օգոստոսի յայ հանգամանքից՝ Արտաշատը Բ-ի անդրանիկ որդին՝¹ Արտաշեսը, որը 34 թվին (մեր թվ. առաջ) ապաստանվել էր, ինչպես ասացինք, Հրահա Դ-ի քով՝ պարթևներին օգնությամբ հաղթեց Արտաշատականի Արտաշատը թագավորին։

¹ Տե՛ս Jos. Flav., Ant. Jud., XV, 4, 3:

և, նվաճելով իր հայրենի թաղավորությունը՝ վերահաստատվեց Հայաստանի դահլի վրա (30 մեր թվ. առաջ)։ Դեպի հռոմայեցիները Արտաշես Բ-ը լցված էր, բնականաբար, կատաղի ատելությամբ իր հոր եղբունական սպանության պատճառով։ Ուստի և, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը՝ իր անմեղ հոր կալանավորման ու դիվատման համար նա վերեժ առավ և կոտորել սովեց բոլոր հռոմայեցիներին, որոնք մնացել էին Հայաստանում։

Մոմզենը, ինչպես և Տուրնեբիզը, Բասմաջյանը և ուրիշները, ենթադրում են, որ 30 թվին (մեր թվ. առաջ) Արտաշես Բ-ը թաղավոր էր հայտարարվել ո՛չ միայն Հայաստանի, այլ նաև Ատրպատականի։

«Բայց երբ Կեսարի [Օկտավիանոսի] դեմ սպառազինման ընթացքում, — ասում է Մոմզենը, — իր զորքերն Անտոնիոսըն աշխտեղից [Արևելքից] կանչեց՝ պարթևները հաղթող հանգիսացան, պարտության մատնեցին մեղացիներին և Մեդիայում, ինչպես նաև Հայաստանում, թաղավոր դրին Արտաշեսին, որը քինախնդիր լինելով իր հոր դիվատման համար՝ հրամայեց բռնել ու սպանել երկրի մեջ ցրված բոլոր հռոմայեցիներին»։

Արտաշես Բ-ը աշխուհետե թալավորեց (30—20 թ. մեր թվ. առաջ) անկախ Հռոմից, որի դերիշխանությունն այլևս չէր տարածվում ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Ատրպատականի վրա։

Հենց նույն այս 30 թվին (մեր թվ. ա.), երբ Արտաշես Բ-ը վերստին հաստատվել էր իր հոր դահլի վրա՝ Օկտավիանոսը, Եդիպտոսը նվաճելուց հետո, եկավ Ասորիք կարգավորելու համար հռոմեական Ասիայի գործերը։ Քաղաքացիական մեծ կռիվներից հետո նա ուներ իր տրամադրության տակ զինվորական խոշոր ուժեր։ Կարելի էր ենթադրել, որ նա անմիջապես հարձակման կանցնե պարթևների ու հայերի դեմ, վերեժ կառնե Արտաշես Բ-ից հռոմայեցիների կոտորածի համար և կվերականգնե Հայաստանում Հռոմի հեղինակությունն ու դերիշխանությունը։

Բայց, իրապես, Օկտավիանոսը, որը հետևող էր Պոմպեյոսի

¹ S^{eu} Cass. Dio, LI, 16, 2:

² S^{eu} Mommsen, Römische Geschichte, Bd. V, Berlin, 1886 էջ 360. Tournebiez, Histoire politique et religieuse de l' Arménie, էջ 791. Բասմաջյան, Իսկական պատմություն Հայոց, Պոլիս, 1914, էջ 169 և ուրիշ։

խոհեմ քաղաքականութեան և դործում էր զուգարար առանց
ոխսկի՝ խույս տվեց պատերազմից պարթևների և հայերի միա-
ցյալ ուժերի դեմ և ավելի կարևոր համարեց վերակազմել նախ
Հռոմեական հանրապետութիւնը որպէս միապետութիւն ու
ամրացնել միանձնյա իր իշխանութիւնը: Պարթևական և հայ-
կական խնդիրների լուծումը նա պեաք է հետաձգել նաև այն
պատճառով, որովհետև արյունահեղ ու բազմամյա քաղաքա-
ցիական կռիւների սարսափներից ու ծանր զրկանքներից հետո
Հռոմեական հասարակութիւնը և, մանավանդ, դորքը ծայր
աստիճան հոգնել էին և խաղաղութեան ու հանդստի պահանջը
խիստ մեծ էր ու ընդհանուր:

Ապահովելու համար Հռոմի արևելյան սահմանները՝ Օկտա-
վիանոսը դիմեց նեոդ ու խարդավանական միջոցների: Նա օ-
գուտ քաղեց ներքին երկպառակութիւններից Պարթևական
թագավորութեան մեջ և ապաստան տվեց Ասորիքում պարթևա-
կան դահի թեկնածու Արչակունի Տրդատին, որը պարտութիւն
էր կրել Հրահատ Դ-ից և իրանել էր իր մոտ: Հովանավորելով
Տրդատին՝ նա սաստման ու սուղառնալիքի տակ էր պահում Հրա-
հատ Դ-ին:

Գերութիւնից իրանել և Օկտավիանոսի մոտ էր պատսպար-
վել նաև Ատրպատականի Արտավազդ թագավորը, որին նա սի-
րալիք կերպով ընդունել տվեց Փոքր Հայքի իշխանութիւնը,
վերցնելով այս շրջանը Պոնտոսի Պոլեմոն թագավորից: Հռոմի
այս նոր դաշնակիցը, որն Արտաշես Բ-ի ոխերիմ ու կատաղի
թշնամին էր՝ պաշտպանն էր լինելու Հռոմեական սահմանների
ընդդեմ Մեծ Հայաստանի թագավորի, որը թշնամաբար էր
տրամադրված դեպի հռոմայեցիները:

Գարադաշանը, Բրյուսովը և ուրիշ պատմագետներ ենթա-
դրում են¹, որ Արտաշես Բ-ը ձեռնադրեց ճանաչել էր Հռոմի
դերիշխանութիւնը և խաղաղութեան դաշն էր կնքել Օկտավիա-
նոսի հետ 29 թվին մեր թվականութիւնից առաջ: Այս ենթա-
դրութիւնը ճիշտ չէ:

Արտաշես Բ-ը, ինչպես երևում է հռոմեական աղբյուրների
և, գլխավորապէս, Տակիտոսի վկայութիւնից՝ չունեւ որևէ

1 Տե՛ս Գաղաղաշան, «Բնական պատմութիւն Հայոց», Բ., էջ 185,
Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940,
էջ 28. Халатян, Очерк истории Армении, էջ 246 և ուրիշները:

կախում Հոռմից և կատարելապես վերականգնել էր Հայաստանի՝ քաղաքական նախկին անկախությունը, որ ունեցել էր Հայկական թագավորությունը Տիգրան Մեծի ու նրա նախորդների ժամանակ:

«Արա [Արտավազդ Բ-ի] որդին՝ Արտաշեսը, — ասում է Տակիտոսը, — որն իր հոր հետ կապ ունեցող հիշողության պատճառով մեզ [հռոմայեցիներին] թշնամացած էր՝ պաշտպանեց և իր ամձը և իր թագավորությունը Արշակունիներին ուժով»:

Հայաստանի ազատագրումը հռոմեական սլավոնկառատից, նրա դաշնակցությունը պարթևներին հետ, ինչպես և հռոմայեցիներին կոտորածն Արտաշես Բ-ի հրամանով՝ վարկարեկում էին, բնականաբար, Հռոմեական պետության հեղինակությունն արեւելքյան երկիրներում: Այս գրությունը, իհարկե, չէր կարող Օկտավիանոսը հանդուրժելի համարել: Սակայն նա, որպեսզի իր զորքի ու ժողովրդի խիստ տենչացած խաղաղությունն աղա՛հույված լինի՝ Հայաստանի հանդեպ առժամանակ վարեց խաղաղ քաղաքականություն:

Ըստ երեւոյթին, Հայաստանի և Հռոմի միջև դիպլոմատիական հարաբերությունները վերանորոգված են ձգել արդե՛հ, այս ժամանակաշրջանում: Կասսիոս Դիոնի ուշադրով մի վկայությունից հայտնի է², որ 29 թվին (մեր թվ. առաջ) Արտաշես Բ-ը բանակցություններ էր վարել Օկտավիանոսի հետ և խնդրել էր նրանից ուղարկել Հայաստան գերի վերցրած Տիգրան ու Արտավազդ իր եղբայրներին, որոնք 30 թվին Օկտավիանոսի կարգադրությամբ տարվել էին Շգիպտոսից Հռոմ: Օկտավիանոսը մերժել էր այս խնդրիքը, առարկելով որ Արտաշես Բ-ը կոտորել է սովել բոլոր հռոմայեցիներին, որոնք մնացել էին Հայաստանում:

Այս պատասխանից դժվար չէր կուահել, որ Հռոմը մոտ ապագայում աշխատելու է վրեժ առնել Հայոց թագավորից:

29/28 թվերին (մեր թվ. առաջ) Հռոմեական միապետության և Օկտավիանոսի միանձնյա իշխանության հաստատումը հիմնականում ավարտվել էր և 27 թվի հունվար ամսին հռոմեական ծերակույտի հանդիսավոր նիստում կառավարչական

1 Tacitus, Annales, II, 3:

2 Sess Cass. Dio, LI, 16, 2.

յարձրագույն այս հիմնարկի կողմից Օկտավիանոսը ստացավ Օգոստոս (Augustus, «սրբազան») պատվատիտղոսը: Այնուհետև արտաքին քաղաքականության, պատերազմ հայտարարելու և խաղաղություն ու դաշնագիր կնքելու իրավասությունը պատկանում էր միմիայն Օկտավիանոսին, որը 27 թվից սկսած անվանվում էր Օգոստոս:

Եվրոպական պատմագետները սովորաբար ենթադրում են, որ Օգոստոսի արևելյան քաղաքականությունը Յուլիուս Կեսարի և Անտոնիոսի քաղաքականությունից տարբերվել է, գլխավորապես, նրանով, որ այս հեռատես ու ողջամիտ միապետը հրաժարվել էր ագրեսսիայից ու նվաճումներից Արևելքում և, ընդունելով Հռոմեական կայսրությունը իբրև Միջերկրական ծովային պետություն՝ նրա բնական սահմանը համարել էր Եվրատ դետը: Ինձ թվում է, որ այս եզրակացության հետ դժվար է համաձայնել անվերապահ կերպով: Հռոմի նվաճողական առաջխաղացումն Արևելքում Օգոստոսի ժամանակ կանգ էր առել ո՛չ այն պատճառով, որ նա սկզբունքորեն հակառակ էր իր նախորդների քաղաքականության, այլ որով իրանից անկախ օբյեկտիվ պատճառներով: Նրա խաղաղասեր քաղաքականությունը միմիայն ժամանակավոր ու ակամա նահանջ էր, որ բնալ չէր նշանակում սկզբունքային փոփոխում Հռոմի աշխարհակալական քաղաքականության:

Օգոստոսը, որը Արևելքում հռոմեական սուրը հարկադրված էր սլահել պատյանում՝ աշխատեց Արտաշեսյան Հայաստանը և Պարթևական թագավորությունը ենթարկել Հռոմի գերիշխանությանն ու աղղեցությունը ո՛չ թե զենքի ուժով, այլ հռոմեական մարզված ու փորձված ղեկավարների միջոցով:

Արևելյան երկու այս անկախ թագավորությունները, որոնք դանդում էին Ֆեոդալիզմի կադմակերպման շրջանում՝ թույլ էին, ինչպես հայտնի է, շնորհիվ ներքին երկպառակությունների ու ապստամբությունների: Ուստի և հռոմեական ղեկավարման եռուն ու թաքուն աշխատանք սկսեց այս երկիրներում, Վազմակերպեց և ուժեղացրեց նրանց մեջ հռոմեասեր կուսակ-

1 See J. G. C. Anderson, The Cambridge Ancient History, vol. X, 1934, էջ 266—7. Mommsen, Römische Geschichte, Bd. V, էջ 370 և ուրիշները.

2 Համեմատե Histoire Général Գլոցի, Histoire Romaine, T. III, Le Haut Empire par Léon Homo, Paris, 1933, էջ 76:

ցությունը և աշխատեց նրանց թուլացնել ու քայքայել ներքուստ :

Օգոստոսն առաջին հերթին նպատակ դրեց իրեն նախ վերացնել Հայաստանի անկախությունը, որովհետև այս երկիրն ուներ ռազմական ու ստրատեգիական մեծ կարևորություն: Ուստի և հռոմեական դիպլոմատիան սկսեց առանձին եռանդով նախապատրաստել Հայկական Հարցի լուծումը:

Դեռևս Լուկուլլոսի և Պոմպեյոսի արչապատերազմի ժամանակ Հռոմը համոզվել էր, որ Հայաստանին գաշնակից են ու բարեկամ և նրա հետ սերտ կապած են Անդրկովկասի մյուս ժողովուրդները, գլխավորապես, իրերներն ու աղվանները: Նա գիտեր, որ Հայաստանը թուլացնելու ու նվաճելու համար հարկավոր է չեղոքացնել կամ հռոմեական ազդեցությանը ենթարկել ամբողջ հյուսիսային Անդրկովկասը մինչև Կովկասյան լեռները և մինչև Կասպից ծովի արևմտյան ափերը:

Ըմբռնելով Հայաստանի հյուսիսային և արևմտյան թիկունքների մեծ կարևորությունը՝ Օգոստոսը ո՛չ միայն ոտքի հանեց Հռոմի կողմնակիցներին Հայաստանի ներսում, այլև աշխատեց բարեկամություն հաստատել իրերների և աղվանների հետ: Նա աշխատեց հետզհետե օղակել անկախ Հայաստանը Հռոմի ազդեցության տակ դառնող պետություններով: Հենց այս նպատակով, ինչպես վերև տեսանք, նա տվել էր Փոքր Հայքի իշխանությունն Արտավազդ Մեղացուն: Հայտնի է նույնպես, որ Պոլեմոնը, որն Օգոստոսի կողմից վերահաստատվել էր իբրև Պոնտոսի թագավոր և որը բացի Պոնտոսից իշխում էր նաև Հայաստանի հարևան Կողքիսում՝ աչալուրջ նեցուկն էր դառնել հռոմեական քաղաքականության Անդրկովկասում: Արտաշես Բ-ին մեկուսացնելու համար Օգոստոսը կարգադրել էր նրա մանապես վերանորոգել հին պայմանագրերն իրերների ու աղվանների հետ:

Հռոմեական դիպլոմատիայի նախապատրաստական աշխատանքներից հետո Օգոստոսի արևելյան քաղաքականությունն ընդունեց ավելի համարձակ բնույթ:

26—25 թվերին մեր թվականությունից առաջ պարթևական դահի թեկնածու Տրդատը, հավանորեն, Հռոմի թելադրանքով, նոր փորձ արեց գահնկեց անելու Հրահատ Դ-ին, սակայն, անաջողություն կրելով՝ եկավ նորից Ասորիք, իր հետ բերելով պարթևների թագավորի փոքր որդուն, Հրահատակին, որին

գողացել էին ու գերել, Գերված երեխան Հոռմի ձեռին դառալ միջոց չաճալետ սակարկության: Օգոստոսը ետ ուղարկեց Հրահատակին և Հրահատ Դ-ը խոստացալ վերադարձնել հոռմայեցիներին արծվեկիր դրոշներն ու գերիներին, որ պարթևները վերցրել էին Կրասոսի պարտության ժամանակ:

Բայց որովհետև պարթևների թագավորը իր խոստումը չէր կատարում՝ Օգոստոսը որոշեց, որ պետք է ճնշում գործ դնել պարթևների վրա և, դիմելով կտրուկ միջոցների՝ պետք է միաժամանակ կարգավորել նաև Հայկական Հարցը:

20 թվին մեր թվականությունից առաջ Օգոստոսը եկալ Ասորիք և իր, որգեգիր Տիբերիոս Կլավդիոս Ներոնին, որն այդ ժամանակ 21 տարեկան էր՝ մեծ զորքով ուղարկեց Հայաստան և հրամայեց գահընկեց անել Արտաշես Բ-ին և թագավոր պահել նրա եղբայր Տիգրանին, որը, ինչպես տեսանք, Աղեքսանդրիայից տարվել էր Հոռմ և պահվում էր այնտեղ իբրև պատանդ: Հռոմեական դիպլոմատիայի ետևը այժմ կանգնած էր հռոմեական հզոր բանակը, բայց Օգոստոսն այժմ ևս ձգտում էր խույս տալ պատերազմից և աշխատում էր կարգավորել հոռմեական պահանջները խաղաղ ճանապարհով, առանց արյունահեղության:

Օգոստոսի գալն Ասորիք և Տիբերիոսի զորաբանակի առաջ շարժումը դեպի Արևելք, որ նախազգուշացումն էր ու ռազմական մեծ ցույց՝ Հրահատ Դ-ի վրա թողին խոր տպավորություն: Պարթևների թագավորը, վախենալով որ կարող է հարձակման ենթարկվել հոռմայեցիների ու միաժամանակ նաև գահի թեկնածու Տրդատի կողմից՝ որոշեց կատարել Օգոստոսի պահանջը և 20 թվի մայիսի 12-ին հանձնեց հոռմայեցիներին պարթևների վերցրած վերոհիշյալ արծվեկիր դրոշները և գերիներին:

Պարթևների հետ համաձայնությունը հեշտացրեց Տիբերիոսին տրված հանձնարարության իրագործումը: Հռոմեական զորքի հարձակման սպառնալիքը առաջ բերեց Հայաստանում ներքին երկպառակություններ: Հռոմեական կուսակցությունը, որն այժմ այստեղ գերակշռություն ստացալ՝ պատգամավորութուն ուղարկեց Օգոստոսի մոտ և խնդրեց Արտաշես Բ-ի տեղ թագավորեցնել Տիգրանին, Հռոմեական զորքը Հայաստան դեռ չհասած՝ Արտաշես Բ-ը դավաճանությամբ սպանվեց իր ազգա-

կիցներէ կողմից¹, հաւանորեն, հռոմայեցիներէ դըդոււմով, դու-
ցե և ոսկով: Տէրերիոսն այնուհետև առանց դիմադրութեան
հանդիպելու մտաւ Հայաստան և հանդիսապօր կերպով թաղ
գրեց իր լեզբոնների ներկայութեամբ Արտաշես Բ-ի յիշբը եղ-
բայր Տիրդան Գ-ի գլխին² (20 թվիւ մեր թվ. առաջ):

Այսպիսով Հռոմեական կայսրութիւնը հասաւ իր նպատա-
կին առանց պատերազմի, և Հայաստանը, կորցնելով իր անկա-
խութիւնը՝ ընկաւ նրա ազդեցութեան շրջանակի մեջ և ճանա-
չեց նորից Հռոմի գերիշխանութիւնը:

Հայաստանի անկախութեան վերացումից հետո՝ նոր լու-
ծում ստացաւ Ատրպատականի խնդիրը, որը, ինչպես տեսանք,
շտնվում էր Արտաշես Բ-ի իշխանութեան տակ: Այս երկիրը
քաղաքականապես Հայաստանից անջատուցեց, և Օգոստոսը, ինչ-
պես նա վկայում է իր Կտակի մեջ՝ տվեց Ատրպատականին
իրբե թաղաւոր Փոքր Հայքի իշխան Արտավազդ Մեղացու որ-
դուն, Արիոքարդանին³, որը, ինչպես և Տիրդան Գ-ը, ստացել
էր հռոմեական կրթութիւն:

Օգոստոսն իր Կտակի մեջ առանձնապես շեշտում է, որ
Արտաշես Բ-ի սպանութիւնից հետո Հայաստանը նա կտրող էր
դարձնել հռոմեական նահանգ, սակայն չկամեցաւ այդ անել
և, իր նախնիների օրինակին հետեւելով՝ տվեց հայերին թա-
գաւոր⁴: Այս պարծենկոտ հայտարարութիւնը արված է, ան-
շուշտ, հռոմեական հասարակութիւնը բաւարարելու և ոգևո-
րելու համար: Բայց, իրապես, Հայաստանը դժգոհ էր կցել
որպես նահանգ Հռոմեական կայսրութեանը, որովհետև այդ
դեպքում հայ ազնաւականութիւնն ու ժողովուրդը ցույց կտային
համառ ու կատաղի դիմադրութիւն և Օգոստոսը ստիպված
կլինէր ավելացնելու մեծ չափերով հռոմեական զորքերի քա-
նակն Արևելքում ու նաև այդ բանակի ռազմական ծախքերը:

Սակայն, այնուամենայնիւ, Օգոստոսի հաջողութիւնն
Արևելքում, որ ձեռք էր բերվել առանց պատերազմի, չափա-
զանց մեծ էր: Հռոմեական հասարակութեան վրա այդ անցքերը

¹ Հստ Հովսեփոսի վկայութեան (Ant. Jud. XV, 4, 3)՝ Արտաշես Բ-ին
վտարել էին Կապպադովկիայի թագաւոր Արքեդայոսը և Տիրերիոսը:

² S⁸u Res Gestae, 25—28. Cass. Dio, LIV, 94—5. Tac., Annales, II, 3.
Suetonius, Tiberius, IX, 1. Strabo, XVII, 1, 54 (821) և ուրիշ:

³ S⁸u Res Gestae, 28—32:

⁴ Նույնը, V, 25—28:

թողել էին խոր տպավորություն և հռոմեական նշանավոր բանաստեղծները — Վերգիլիոսը, Հորատիոսը և Օվիդիոսը — իրենց երկերում հիշում են Օգոստոսի և Տիբերիոսի մեծ հաղթանակը:

Օվիդիոսը, օրինակ, գրում էր որ «Հայն աղերսում է այժմ խաղաղություն»¹: Վերգիլիոսը էնեասի վահանի վրա հիշատակում է Արաքս գետը, որը խորհրդանշ է Հայաստանի, և ասում՝ որ «Արաքսը զայրույթով լի է դեպի կամուրջը», այսինքն՝ դեպի հռոմեական լուծը²: Իսկ Հորատիոսը, իր Ոստանավոր նամակներից մեկում գրում է, որ «Հային ցած է գցել Կլավդիոս Ներոնի [Տիբերիոսի] ահռելի ուժը»³:

Տիբերիոսի 20 թվի հաղթանակի առթիվ կարված են և պահպանվել են մինչև այժմ մեծ քանակությամբ դրամներ՝ ոսկի և արծաթ: Այդ դրամների մի կողմում դրոշմված է, մեծ մասամբ, Օգոստոսի զլուխը՝ իսկ մյուս կողմում գրված է «Հայաստանն առնված» (Armenia capta) կամ «Հայաստանը վերստին առնված» (Armenia recepta) և քանդակված են այլևայլ պատկերներ, գլխավորապես, իբրև Հայաստանի խորհրդանշներ. օրինակ՝ Հայոց թաղավորի խույրը և կողքին կապարճ ու տղեղ կամ հայ զինվոր, որ աջ ձեռքում բռնած ունի նիզակ, իսկ ձախում՝ աղեղ. երբեմն Հայաստանը ներկայացված է կնոջ կերպարանքով, որ նստած է ծնկաչոք և ձեռքերը կարկառած, կամ ներկայացված է իբրև արինքս, որ նստած է կծկված, և այլ նման նկարներ:

Պարթևների հետ համաձայնությունը և Հայաստանում Հռոմի գերիշխանության վերահաստատումը, ինչպես տեսնում ենք, մեծ խանդավառություն էին առաջ բերել Իտալիայում: Բայց այդ, մեծ մասամբ, ազխտացիա էր և պրոպագանդա հասարակությունը ոգևորելու համար, իրապես, ինչպես շատ ճիշտ նշում է Անդերսոնը⁴, Օգոստոսի հրաժարումը հարձակողական պատերազմից և նոր նվաճումներից Արևելքում այն չէր, ինչ որ նրանից սպասում էին հռոմայեցիները:

Վաղաժամ էին, իրապես, տոնախմբություններն ու ուրախությունները Հռոմում, հատկապես, Հայաստանի հպատակեցման առթիվ, որովհետև Արաքս գետը զայրադին կերպով. չա-

¹ S^{tr} Trist. II, 27—nunc petit Armenius pacem:

² S^{tr} Aen., VIII, 728—Et pontem indignatus Araxes:

³ S^{tr} Epist., I, 12, 28.

⁴ S^{tr} The Cambridge Ancient History, vol. X, 1934, էջ 264.

րունակեց իջիւն հռոմեական կամուրջները նաև 20 թւից հետո : Հայ ժողովուրդը, ինչպես կտեսնենք, կատաղի կերպով պայքարեց հռոմայեցիները դեմ և պաշտպանեց իր երկրի անկախությունը նույնպես և Արաաշես Բ-ի հաջորդների ժամանակ :

Արտաշես Բ-ի սպանությունից հետո հայրենասեր հայ իշխաններն ու ազնվականութիւնը, որոնք լի էին ատելությամբ դեպի Հռոմը և չէին կարող մոռանալ նրա տմարդի արարքները Մեծն Տիգրանի որդու ու թոռան հանդեպ՝ Հայաստանի անկախությունն աշխատեցին վերականգնել պարթևների օգնությամբ : Պատմագիտական երկերում սովորաբար մատնանշում են, որ հայերի համակրութիւնը միշտ եղել է պարթևների կողմը, որովհետև նրանք իրենց ռարքերի, նիստուկացի, կրոնի և քաղաքական ու զինվորական կազմակերպության նմանությամբ մոտ են եղել պարթևներին ու նաև սրանց հետ կապված են եղել խնամեություններով :

Ընդհանուր ընդունված այս կարծիքը, իհարկե, ճիշտ է, բայց դժվար է կռահել, որ հայրենասեր հայերի պարթևական կողմնորոշման պատճառը միայն այդ չէր : Հայ-պարթևական բարեկամության հիմնական պատճառն էր նաև այն, որ պարթևները, իրրե դաշնակիցներ, վտանգավոր չէին Արտաշեսյան Հայաստանի անկախության համար, իսկ Հռոմը, իրրե «բարեկամ ու դաշնակից», թշնամի էր նրա անկախության և աշխատում էր նրան զրկել հնարավորությունից վարելու ինքնուրույն քաղաքականութիւն և հետամուտ լինելու սեփական շահերի¹ : Պարթևական կուսակցութիւնը Հայաստանում շատ լավ լիտեր, որ հռոմայեցիների «բարեկամութիւնը» և ապա պրոտեկտորատը եղել են ամենուրեք աննեքսիայի նախարաններ : Հենց իրեն Օդոստոսի ժամանակաշրջանում Հռոմեական կայսրութեանը միացվել էին, իրրե հատուկ նահանգներ, Հռոմի դաշնակից արեւելյան մի քանի թագավորութիւնները կամ նրանց որոշ երկրամասերը, — Ամյունասի մահից հետո՝ Գալատիան, Արքեղայոսի հրաժարեցումից հետո՝ Հրեաստանը (Հրեաստանը, Սամարիան և Իդումեան), նմանապես և Պոնտոսի թագավորութեան արեւմտյան որոշ շրջանները և Պափլագոնիան² :

¹ Համեմատե Ed. Meyer, Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin, 1925, էջ 63.

² S. Histoire Générale Գրիգի, Histoire Romaine, t. III, Le Haut—Empire par L. Homo, էջ 106—107.

Հասկանալի է, ուրեմն, թե ինչո՞ւ պարթևական կուսակցու-
թյունը Հայաստանում, որ երկրի իրական շահերի ու ձգտում-
ների արտահայտիչն էր, պայքար էր մղում շարունակ Հոռոմի
ու նրա կողմնակիցների դեմ:

Տիգրան Գ-ի մասին, որն իր թագը հանդիսավոր կերպով
ստացել էր Տիբերիոս Կլավդիոս Ներոնից՝ մենք դրեթե տեղե-
կություն չունենք: Տակիտոսի կարևոր մի վկայությունից մեզ
հայտնի է միայն, որ նա թագավորել է կարճ ժամանակ:

«Երբ Արտաշեսը, — ասում է Տակիտոսը, — սպանվեց իր
ազդականների դավադրությամբ՝ Օգոստոսի կողմից Հա-
յաստանին տրվեց իբրև թագավոր Տիգրանը, որին առաջ
նորդեց գեպի իր թագավորությունը Տիբերիոս Ներոնը:
Սակայն երկար չտևեց ո՛չ Տիգրանի և ո՛չ էլ
նրա զավակների իշխանությունը, որոնք
ըստ օտար սովորության իրար հետ ամուսնացած էին և
միասին թագավորում էին»¹:

Ֆրանսական դրամադեստ Բաբելոնն այս Տիգրան Գ-ին է վե-
րագրում մոլորեցավոր Տիգրանի դրամը, որը գտնվում է Փարի-
զի Ազգային թանգարանում²:

Տիգրան Գ-ի մահվան թվականը որոշ չէ: Պետք է ասել, որ
Արտաշես Բ-ից հետո նրա հաջորդներին վերաբերող ժամանա-
կագրության մեջ այնպիսի մեծ խառնակություն է տիրապե-
տում, որ նրանց թագավորության թվականները կարելի է որո-
շել միայն մոտավոր կերպով: Արտաշեսյանների ու նրանց հա-
ջորդների թագավորության ժամանակը մոտավոր, բայց հիմնա-
վորված կերպով, որոշված է Cambridge Ancient History-ի
տասերորդ հատորի համապատասխան գլուխներում և նրա
վերջում դրված հատուկ աղյուսակում, որն ըստիս լավադույնն
է եղած աղյուսակներից: Մեր այս աշխատության մեջ գերա-
դասություն է տրված այս նոր աղյուսակի ժամանակագրությա-
նը³:

Տիգրան Գ-ից հետո, որի մահը տեղի ունեցավ 6 թվից ա-
ռաջ նախ քան մեր թվականը՝ Հայկական Հարցը, որ Օգոստոսը
լուծված էր համարում, նորից ստացավ սուր կերպարանք:

¹ Tac., Annales, II, 3:

² Տե՛ս M. Ernest Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890, էջ CCV:

³ Տե՛ս Cambridge Ancient History, vol. X, էջ 1053.

Տիգրան Գ-ին հաջորդեց նրա որդին, Տիգրան Դ-ը, և սրա հետ թագավորեց նաև քույրը՝ էրատոն, որը նրա կինն էր։ Եղբոր ու խորթ քրոջ ամուսնությունը, որ տարբեր մայրերից էին ծնած, թուլլատրելի էր ո՛չ միայն ըստ դրադաշտական կրոնի, այլև ըստ հունական որոշ օրենսդրությունների։ Տիգրան Գ-ի որդին զահ էր բարձրացել Հայաստանում ընդունված ժառանգական կարգով և, ինչպես երևում է Քսիդիլինոսի վկայություներից¹, որը կասսիրուս Դիոնի պատմության համառոտողն է, նախապես նա չէր ստացել Օգոստոսի համաձայնությունը։ Այդ, իհարկե, խախտումն էր Հռոմի գերիշխանության։ Պարթևական կուսակցությունը Հայաստանում, որը նորից իր ձեռքն էր առել իշխանության դեկը, ըստ երևույթին ուղեցել էր ազատագրել Հայաստանը Հռոմի նվաստացուցիչ խնամակալությունից։

Հայաստանի անկախության համար մաքառող հայերը, խզելով Արտաշեսյան թագավորության վասսալական կապը Հռոմի հետ՝ իրենց հույսը պետք է դնեին ավելի իրենց սեփական ուժերի վրա, քան պարթևական։ Հռոմեական դիպլոմատիան կարողացել էր հենց այդ ժամանակ ուժեղացնել պարթևական արքունիքում Հռոմի ազդեցությունն ու նենգագործությունները մի գեղանի ստրուկ իտալուհու աջակցությամբ, որին Օգոստոսն ընծա էր ուղարկել Հրահաա Դ-ին։

Այս իտալուհու դրդմամբ, որի անունն էր Թեա Ուրանիա Մուսա, Հրահաա Դ-ը, վախենալով դահավալական նոր երկպառակություններից՝ Հռոմ էր ուղարկել իր չորս որդիներին և իր մոտ պահել, որպես թագաժառանգ, միայն օրինավոր թագուհի ճանաչված Թեա Ուրանիայի Հրահաա որդուն (10 կամ 9 թվին մեր թվ. առաջ)։ Հրահաա Դ-ի թագավորության (37—2 մեր թվ. առաջ) վերջին տարիներում պարթևների հարաբերությունները Հռոմի հետ բարեկամական էին և մտերիմ։

Հայաստանը քաղաքական այս աննպաստ պայմաններում ևս ընդդիմություն էր ցույց տալիս Հռոմեական մեծ կայսրությանը։ Նա դեռևս ուժեղ պետություն էր, և նրա մեջ դեռ չէին մտրել Արտաշեսյան թագավորության մեծ անցյալի հիշողությունները։ Այս տեսակետից առանձնապես ուշադրավ է, որ Հռոմեա-

¹ S. Xiphil., Epitome, 55, 10 a, 3—Excerpta sedis incertae, հրատ. Didot-Teubner, հաս. V, էջ 237. համեմատե Sandaljian, Histoire documentaire de l'Arménie, t. II, էջ 497.

կան պատմադիր Սեքստուս (Ֆենտուս) Ռուփուսը, խոսելով հայերի ապստամբության մասին Տիգրան Դ-ի թաղավորության ժամանակ՝ մատնանշում է, որ այս ժամանակ հայերն ավելի հզոր էին, քան պարթևները¹։ Եթե Տիգրան Մեծից հետո պարթևները դերիշխող ու առաջնորդող դեր էին կատարում Առաջավոր Ասիայում՝ դրա պատճառն այն էր, որ Պարթևական թագավորութունը շնորհիվ իր հեռավորության և աշխարհադրական նպաստավոր դրության ավելի էր պաշտպանված ու ասպնջված հռոմեական հարձակումներից, քան Հայաստանը։

Հայերի հակահռոմեական քաղաքականությունը Տիգրան Դ-ի թաղավորության ժամանակ Հռոմը, իհարկե, չէր կարող հանդուրժել։ Օգոստոսն այս անգամ ևս հանձնարարեց իր որդեգիր Տիբերիոսին (6 թվին մեր թ. ա.) դնալ Հայաստան և հայկական դրոճերը, եթե հարկավոր լինի՝ կարգավորել հռոմեական զենքի օգնությամբ։ Սակայն Տիբերիոսը հրաժարվեց կատարել այդ հանձնարարությունը և ընտանեկան դժտությունների պատճառով հեռացավ Հռոմից Հռոդոս։

Ծուռով այնուհետև Հայաստանի վահը կարճ ժամանակով դրավեց հռոմեական զորքի օգնությամբ Արտավազդ Դ-ը, որը, հավանորեն, Արտաշես Բ-ի և Տիգրան Գ-ի եղբայրն էր։

Արտավազդ Գ-ի (մոտավորապես 5—2 մեր թվ. ա.) վահարաճրանալուց հետո Պարթևական թաղավորության մեջ տեղի ունեցավ նոր հեղաշրջում։ Թեա Ուրանիայի որդին, թաղաժառանգ Հրահատուկը, սպանելով մոր սաղրանքով իր հայր Հրահատ Դ-ին՝ թալալորեց նրա տեղը 2 թվին մեր թվականությունից առաջ։ Հայերն այդ ժամանակ ասպստամբել էին հռոմայեցիների ուղարկած Արտավազդ Գ-ի դեմ։ Նրանք օգնություն ստացան պարթևական, նոր թաղավորից և դուրս վտարեցին Հայաստանից թե Արտավազդ Գ-ին և թե պարտության մատնելած հռոմեական զորքը։ Նրանք վերահաստատեցին գահի վրա Տիգրան Դ-ին, որը, ըստ երևույթին, իր քրոջ՝ էրատոյի հետ փախել էր պարթևների մոտ։

Ուշագրավ է, որ իր հտակի մեջ Օգոստոսը չէ հիշատակում ո՛չ հռոմեական զորքի պարտությունը, ո՛չ էլ Արտավազդ Գ-ին։ Սակայն այդ անցքերը, որ պատվաբեր չէին Հռոմեական կայսրության պրեստիժի համար՝ հիշատակված են Տալիտոսի Տարե-

¹ S. Sestus Rufus, Breviarium, XIX:

դրություններում ու մասամբ նաև Վելլեյուս Պատերկուլուսի՝
Հոռմեսիկան պատմութեան մեջ¹ :

«Օգոստոսի հրամանով, — վկայում է Տալիտոսը, — թա-
գաւոր դրվեց Արտավազդը, որը գահընկեց արվեց ո՛չ ա-
ռանց մեր կորուստի»² :

Հոռմի համար, ինչպես տեսնում ենք, այս անգամ ևս Հայ-
կական Հարցի պատճառով ստեղծվեց ծանր ու ամոթաբեր դրու-
թյուն, Օգոստոսը դարձյալ հարկադրվեց զորք ուղարկել, և 1
թվին մեր թվականությունից առաջ Արևելք եկալ Օգոստոսի
թոռը և որդեգիրը, Կայոս Կեսարը, որն այդ ժամանակ քսան
տարեկան էր։ Կայոսը մտալ Ասորիք հռոմեական մեծ զորարա-
նակով և նոր նվաճումների ծրագրերնեով։ Սակայն այս անգամ
ևս, ինչպես և քսան տարի առաջ Տիրերիոսի դարաշարժի ժամա-
նակ, Հոռմի վճռական քաղաքականությունը ու պաաներադմի
պատրաստակամությունն ահարեկող ալդեցություն գործեցին
ինչպես Պարթևստանում, նույնպես և Հայաստանում։ Սորուկ
խտալուհու որդին, Հրահատակ կամ Հրահաա Ե. Թադալորը,
որն իրեն ապահով էր դրում պարթևական վահի վրա՝ իադա-
դության դաշն կնքեց Կայոս Կեսարի հետ և հրաժարվեց Հայաս-
տանի զործերին միջամտելուց։ Այս համաձայնությունը հանդի-
սալոր կերպով կայացալ Հրահատակի և Կայոս Կեսարի ներ-
կայութեամբ Եփրատ դետի մի կղզում, որը համարվեց չեզոք
երկրամաս, 1 թվին մեր թվականությունից հետո։

Ըստ երևույթին, նույն այս թվին, կամ թերես մի փոքր
առաջ, Տիգրան Դ-ը, ինչպես վկայում է Քսիդիլինոսը³, ուղարկել
էր Օգոստոսին նվերներ և իր նամակի մեջ իրեն էր անվանել
Թագաւոր, համաձայնելով այս պատկառիտդոսն, բնդունել նրա-
նից։ Օգոստոսն ստացել էր նվերները և, հուսադրելով նրան՝
կարդադրել էր դնալ Կայոս Կեսարի մոտ Ասորիք։

Բայց չուտով Տիգրան Դ-ը, ինչպես հայտնի է Կասսիուս
Դիոնի վկայությունից⁴, սպանվում է «պատերադմի մեջ բարբա-
րոսների դեմ» (ըստ երևույթին, Կովկասյան լեռնականների
դեմ), իսկ նրա քույրն ու կինը, էրատոն, հրաժարվում է իշ-
խանությունից։ Տիգրան Դ-ը ու էրատոն, ինչպես տեսնում ենք,

¹ *See Tac., Annales, II, 4. Velleius Paterculus, II, 94, 4:*

² *Annales, II, 4:*

³ *Xiphil., Epitome, 55, 100, 3:*

⁴ *Cass. Dio, LV, 10a, 5:*

Թագավորել էին այս երկրորդ անգամ մոտ երեք տարի՝ 2 Թվից (մեր Թվ. ա.) մինչև 1 Թիվը (մեր Թվ. 4.):

Տիգրան Դ-ի անունով, որը Արտաշեսյան տոհմի վերջին Թագավորն էր, պահպանվել է մի դրամ, որ գտնվում է Փարիզի Ազգային գրադարանում: Դրամի մի կողմում դրոշմված է Տիգրան Դ-ի սլաոկերը, որի շուրջը դրված է՝ «Թագավոր Թագավորների Տիգրան» (Βασιλεὺς βασιλέων Τιγράνης), իսկ դրամի մյուս կողմում դրոշմված է հրատո թագունու պատկերը հետևյալ արձանագրությամբ՝ «Էրատո Տիգրան Թագավորի քույր» (Ἐράτω βασιλῆως Τιγράνου ἀδελφή): Հետաքրքիր է ու առանձնապես ուշադրավ, որ Արտաշեսյան տոհմի այս Թագավորները, որոնք Թագավորում էին Հռոմից անկախ՝ դրամների վրա իրենց Տիգրան Մեծի նման անվանում են «Թագավոր Թագավորների», իսկ Հռոմի դերիշխանությունն ընդունած Թագավորներն իրենց անվանում են ո՛չ թե «Թագավոր Թագավորների», այլ «մեծ Թագավոր» (μεγας βασιλεύς):

Տիգրան Դ-ի մահից հետո Արտաշեսյան Թագավորական տոհմից մնացել էր միայն սրա քույրը՝ Էրատոն, և Կայսր Կեսարը Հայաստանի գահի վրա նստեցրեց Ատրպատականի Արիոբարզան Թագավորին, որը Անտոնինոսի բարեկամ Ատրպատականի Արտավազդ Թագավորի որդին էր (2 Թվին մեր Թվ. 4.): Տակիտոսը վկայում է, որ Հայաստանում Արիոբարզանին ընդունել էին իբրև Թագավոր նրա անձնական հատկությունների պատճառով:

«Այդ ժամանակ Հայաստանի գործերը կարգավորելու համար, — ասում է Տակիտոսը, — ընտրվում է Կայսր Կեսարը: Մա հայերի ցանկությունը Թագավոր դրեց Արիոբարզանին, ծագումով մեղացուն, նրա փարթամ կերպարանքի և ազնիվ բնավորության պատճառով»¹:

Անդերսոնի կարծիքով, Արիոբարզանը Հայաստանի Թագավոր էր նշանակվել ո՛չ միայն իր հատկությունների համար, այլ նաև այն պատճառով, որ Ատրպատականի Թագավորական ընտանիքը Արտաշեսյանների հետ կապված էր խնամություններով և որովհետև մի փոքր առաջ այս երկու Թագավորությունները գտնվում էին Արտաշես Բ-ի իշխանության տակ²:

¹ Tac., Annales, II, 4:

² See Cambridge Ancient History, vol. X, էջ 276.

Արիորարդանը Հայաստանի թագավոր էր դառել, ըստ երե-
վույթին, միայն Հռոմի կուսակիցների ցանկությամբ: Իսկ հայ
իշխանների ու ազնվականության հակահռոմեական խումբը,
չնայած որ պարթևներն այլևս իրենց չէին օգնում, ապստամբ-
ցին և ցույց ավին գլխադրություն, որը Կայոս Կեսարը ճնշեց
հռոմեական զինքի ուժով (2 թվին մեր թվ. հ.): Այս ապստամ-
բության ժամանակ, ինչպես վկայում են հունահռոմեական հե-
ղինակները¹, ծանր վերք ստացավ ինքը Կայոս Կեսարը Արտա-
գերք բերդի մոտ, որը գտնվում էր Արշարունյաց գավառում
(Հյուսիս-արևմուտքում այժմյան Կարդվանից), սեպտեմբերի
9-ին 2 թվի մեր թվականությունից հետո:

Կայոս Կեսարը եկել էր Արաագերք բերդի մոտ բանակցելու
նրա հրամանատար Ադդոնի հետ, որն իբր թե ցույց էր տալու
նրան արքունի դանձերի ցուցակը: Եվ երբ Կայոսը ուշադիր կեր-
պով կարդում էր պրությունը՝ Ադդոնը ծանր կերպով նրան
վիրավորեց դաշույնով: Հռոմ վերադառնալիս՝ Կայոսը մեռավ
այդ վերքից Լյուկիայի Լիմիրա նավահանգստում (14 թ.
մեր թվ. հ., փետր. 21-ին): Իսկ հռոմեական զորավարները,
ինչպես հաղորդում է Ստրաբոնը², երկար պաշարումից հետո
զրավեցին բերդը և պարիսպները քանդեցին:

Այս ողբերգական դեպքից մի փոքր հետո, վկայում է
Տակիտոսը³, «Արիորարդանը մահացավ պատահական մահով»
(մոտավորապես 4 թվին մեր թվ. հետո): Հայաստանի թագը
Օգոստոսի համաձայնությամբ այնուհետև արվեց Արիորարդանի
որդուն, Արտավազդին, որը միաժամանակ, ինչպես և իր հայ-
րը, նաև Ատրպատականի թագավոր էր և որը համարվում է
Հայոց Արտավազդ Դ. թագավորը (մոտավորապես 4—6 թ. մեր
թվ. հետո): Սրա թագավորության ժամանակ հայրեն նորից
ապստամբում են և, ինչպես երևում է Օգոստոսի Կտակից ու
Տակիտոսի վկայությունից⁴, սպանում են այս մեղացուն: Նրանք
չէին ուզում, որ Հայաստանում իշխե Արիորարդանի սերունդը:

Արտավազդ Դ-ի սպանությունից հետո Օգոստոսն աշխատեց
ապստամբված հայերին բավարարել և իբրև թագավոր ուղար-
կեց Հայաստան Տիգրան Ե-ին, որին իր Կտակի մեջ նա համա-

¹ Cass. Dio, LV, 10. Vel. Patere., II, 102. Sertus Rufus, XIX. Florus, Epi-
tome, II, 32. Tacitus, I, 3 և ուրիշները:

² Str., XI, 14, 6 (529):

³ Tac., Annales, II, 4:

⁴ Res Gestae Divi Augusti, 27. Tacitus, Annales, II, 4:

րում է չառավիղ Հայոց թագավորական տոհմի: Այս Տիգրան Ե-ը, ինչպես ենթադրում են, որդին էր Հրեաստանի Հերովդես Մեծի Աղեքսանդր որդու ու նրա կնոջ Գլափյուրայի, որի մայրը՝ Կապադոկիայի Արքեդայոս թագավորի առաջին կինը՝ դուստրն է եղել, հավանորեն, Արտաշեսյան տոհմի հայ թագավորի:

Տիգրան Ե-ը, որը հայ թագավորներից վերջինն է որ հիշատակված է Օգոստոսի Կտակի մեջ՝ թագավոր էր դրվել Հայաստանում, ինչպես ենթադրում է Անդերսոնը՝ մոտավորապես 6 թվին մեր թվականությունից հետո¹: Բայց սա ևս դա՛ից մերժվում է կարճատև թագավորությունից հետո:

Այնուհետև հակահռոմեական կուսակցությունը, որը դա՛րնկեց էր արել Տիգրան Ե-ին՝ Հայաստանի դա՛ի վրա նորից է նստեցնում Արտաշեսյան ծագում ունեցող էրատո թագուն: Սա, ինչպես վերև տեսանք, Հայաստանում թագավորել էր իր եղբոր ու ամուսնու՝ Տիգրան Դ-ի հետ: Սակայն էրատոյի թագավորությունը ևս չատ կարճ տևեց: Շուտով սա դա՛ից հեռացվեց, և Հայաստանը մի քանի տարի մնաց, ինչպես վկայում է Տակիտոսը, անտերունջ վիճակում:

«Կնոջ իշխանությունը, — ասում է Տակիտոսը, — որի անունն էր էրատո, փորձելուց և սրան ևս շուտով հեռացնելուց հետո՝ նրանք [հայերը], վարանած ու լքված, դրսնվելով ալիքի շուտ անտերունջ, քան ազատ վիճակում՝ իբրև թագավոր ընդունում են Վոնոնին»²:

Ինչպես էրատոյի, նույնպես և անտերնչության չըջանում՝ Հայաստանը նորից էր իր վրայից թոթափել հռոմեական դերիշխանության լուծը:

Վերև մատնանշված պատմական անցքերը համառոտ կերպով և որոշ նպատակավոր հապավումներով մեջ են բերված Օգոստոսի Կտակի մեջ, որն ամենահիմնական աղբյուրներից մեկն է Օգոստոսյան ժամանակի սլատմության³: Ավելորդ չեմ համա-

¹ Անդերսոնի կարծիքով, Օգոստոսի Կտակի մեջ արտաքին անցքերը հիշված են միայն մինչև 6 թվը (մեր թվ. հ.). տես Cambridge Ancient History, vol. X, էջ 277.

² Tac., Annales, II, 4.

³ Այդ «Գործք հանգուցյալ Օգոստոսի» (Res Gestae Divi Augusti) անունը կրող Կտակը, որն է սլատիվ Օգոստոս կայսեր փորագրված է եղել

րում Կտակի համապատասխան հատվածը մեջ բերել ամբողջությամբ:

«Մեծ Հայաստանը,— ասված է Կտակի մեջ,— թեև ես կարող էի նրա Արտաշես թագավորի սպանությունից հետո դարձնել նահանգ, սակայն ավելի լավ համարեցի, հետևելով մեր նախնիքների օրինակին՝ այդ թագավորությունը տալ Տիգրանին, որն Արտավազդի որդին էր և Տիգրան թագավորի թոռը, հանձնարարելով այդ Տիգրանին ներոնին, որն այն ժամանակ իմ որդեգիրն էր: Այնուհետև, երբ այդ ժողովուրդն ընդվզեց և ապստամբեց՝ նրան նվաճեցի իմ որդու՝ Կայոսի ձեռքով և թագավորական դահլիճով Արիոբարզանին, մեղացիների Արտավազդ թագավորի որդուն, որպեսզի նա երկիրը կառավարե: Իսկ սրա մահից հետո՝ նրա որդուն՝ Արտավազդին՝ երբ սա սպանվեց՝ ուղարկեցի այդ թագավորությունը Տիգրանին, որը Հայոց արքունի տոհմիցն էր»:

Թեև Օգոստոսն իր հաշվետու Կտակի մեջ մատնացույց է անում Հռոմի հաղթանակներն ու հաջողությունները Հայաստանում՝ սակայն, իրապես, նա չէր կարող դո՛հ լինել իր քաղաքականության արդյունքներից Հայկական Հարցում: Արտաշես Բ-ի սպանությունից հետո մինչև Տիգրան Ե-ը, մոտ քանհինգ տարվա կարճ ժամանակամիջոցում, Հայաստանում թագավորել էին, ինչպես վերև տեսանք, հինգ հռոմեական թեկնածուներ՝ Տիգրան Գ-ը, Արաավազդ Գ-ը, Արիոբարզանը, Արտավազդ Դ-ը և Տիգրան Ե-ը, որոնցից երկուսը, Արտավազդ Գ-ը և Տիգրան Ե-ը, մերժվել էին և վտարվել երկրից, մեկը՝ Արտավազդ Դ-ը սպանվել էր, իսկ Արիոբարզանը մեռել էր կասկածելի պատահական մահով: Հայաստանում ծանր վերք էր ստացել և այդ վերքից կարճ ժամանակից հետո մեռել էր նաև Օգոստոսի թոռը և ժառանգը՝ Կայոս Կեսարը:

Ինչպես տեսնում ենք, հռոմայեցիների 20 թվի հույսերն ավելի քան խաբուսիկ դուրս եկան՝ Արտաշեսյան Մեծ Հայաստանը ո՛չ ընկճվել էր, ո՛չ էլ խոնարհվել, այլ հերոսաբար ու

յատիներեն և հունարեն լեզուներով Անկյուրայում (այժմ Անդորա) կառուցված տաճարի պատերի վրա և գտնված է տաճարի ավերակներում, անվանում է նաև «Հիշատակարան Անկյուրական» (Monumentum Ancyranum):

1 Res Gestae Divi Augusti, 25—32. տես Գաբրելյան, Տիգր. պատմ., Բ, 97, ծան. 9:

գրեթե անընդհատ պայքար էր մղել իր ազատութեան ու անկախութեան համար:

Արտաշեսյանների իշխանութիւնը տեւեց Հայաստանում մօտ 200 տարի: Սրանց թագավորութեան ընթացքում միացյալ Մեծ Հայաստանը, ինչպես տեսանք, մեծապես ընդարձակվել և պետականորեն աճել ու զարգացել էր և նրա մեջ գերիշխում էր ամենուրեք հայերեն լեզուն: Արտաշես Ա-ի, Տիգրան Մեծի և սրանց հաջորդների ժամանակաշրջանի նշանավոր ու ցնցող պատմական դեպքերը հայ ժողովրդի վրա, բնականաբար, թողել էին խոր ու անջնջելի տպավորութիւն: Պատմական այդ մեծ անցքերն արդեն հնագույն այս ժամանակներում նյութ էին դառել ժողովրդական վեպի ու ղրույցի և երգվում էին երգիչներից: Գիտակցութեան եկած հայ ժողովուրդը, որը ոգևորված էր իր մեծ անցյալով՝ արդեն այնքան էր կենսունակ դառել, որ նրան այլևս դժվար էր հլու ու անխոս դործիքը դարձնել հոմեոսական քաղաքականութեան նպատակներին:

Եվ միանգամայն բնական է, որ նրա ընդդիմութիւնը Հռոմի քաղաքականութեան շարունակվելու էր նաև Արտաշեսյան թագավորութեան անկումից հետո:

Մեծ Հայաստանի քաղավորները մինչև Արաւեսայան ռոմի անկումը

1. Արտաշես Ա., 189—չուրջ 160 Ն. Քր.
2. Արտավազդ Ա., Արտաշես Ա-ի որդին.
3. Տիգրան կամ Տիգրան Ա., Արտաշես Ա-ի որդին.
4. Տիգրան Բ. Մեծ, Տիգրան Ա-ի որդին, 95/4—56/5 Ն. Քր.
5. Արտավազդ Բ., Տիգրան Ա-ի որդին, 55—34 Ն. Քր.
6. Արտաշատ, Անտոնիոսի և Կլեոպատրայի որդին, 34—31.
7. Արտաշես Բ., Արտավազդ Բ-ի որդին, 30—20.
8. Տիգրան Գ., " " " 20—չուրջ 8.
9. Տիգրան Դ. և Էրատո, Տիգրան Դ-ի զավակները, շուրջ 8—5 թ.
10. Արտավազդ Դ., Արտավազդ Բ-ի որդին, շուրջ 5—2 թ.
11. Տիգրան Դ. և Էրատո, Երկրորդ անգամ, 2 Ն. Քր.—1 Ն. Քր.
12. Արիորատ, Արտաշատականի Արտավազդ թագավորի որդին, 2 Ն. Քր.—4 Ն. Քր.
13. Արտավազդ Դ., Արիորատի որդին, շուրջ 4—6 Ն. Քր.
14. Տիգրան Ն., Հրեաստանի Հերովդես Մեծի թուր, շուրջ 6 Ն. Քր.
15. Էրատո, Տիգրան Դ-ի դուստրը, կարճատև թագավ.
16. Անտիոքի թագ, կարճատև ժամանակ.

Աղգացուցակ Արաւոնայան գինասփայի թագավորների

1. Արտաշես Ա., 159—չուրջ 180 Ն. Քր.

2. Արտավազդ Ա. 3. Տիգրան Ա. (Տիրան) Զարեհ

4. Տիգրան Բ., 95/94—56/55 Ն. Քր. Դուր

5. Արտավազդ Բ., 55—34 Ն. Քր.

6. Արտաշես Բ., 30—20 Ն. Քր. 7. Տիգրան Դ., 20—չուրջ 8 Ն. Քր. 9. Արտավազդ Դ., չուրջ 5—3 Ն. Քր.

8. 10. Տիգրան Դ. Լ Էրատր, չուրջ 8—5 Ն. Քր., 2 Ն. Քր.—1 Ն. Քր.

ԳԼՈՒԽ ԿՍԱՆԵՐՈՐԴ

ՕՏՈՐԱԶԳԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԿԱՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Խռովությունները Պարսեական բազավորության մեջ.— Պարսեական Վոնոն բազավորի գահընկեցությունը.— Արապան Դ-ը՝ Պարսեական նոր հարստության ճիմնադիր։— 2. Վոնոնի կարճատև բազավորությունը Հայաստանում.— Տիրերիոսի զգուշավոր ազդեցությունը Արևելքում.— Վոնոնի ձեռքադրումը Տիրերիոսի հրամանով.— 3. Գերմանիկոսի գործունեությունը Արևելքում.— Կիլիկիայի կիսաանկախության և Կապադոկիայի ու Կոմագենիի միացումը կայսրության.— այդ միացման կարևոր նշանակությունը։— 4. Ջենոն-Արապեսի Հայոց բազավոր պսակվելը։— 5. Արապան Գ-ի գործողությունը և նրա Արապ ողորդ գահակալությունը Հայաստանում։— 6. Տիրերիոսի ձեռք առած վճռական միջոցներն Արևելքում.— Արապի սպանությունը և Փարսամանի ու Միհրդատի առաջնությունը Հայաստանում.— Արապան Գ-ի ողորդ Օրոգեսի պարսությունը։— 7. Փարսամանի եղբայր Միհրդատի Հայաստանի բազավոր.— Արապան Գ-ի փախուստը և Տրդատ Գ-ի բազավոր ընթացքը.— Արապանի վերադարձը և հաջողությունը հռոմայեցիների հեռ։— 8. Կալիգուլայի արևելյան նոր ազդեցությունը.— Միհրդատի ձեռքադրումը.— Հայաստանի ազդեցական նոր կացությունը։— Միհրդատի վերադարձը Հայաստան և վերադարձումը զանի վրա։— 10. Հայերի դիմադրությունը «Դեմոստենի»-ի Գերմանիայում նահապետի առաջնորդությամբ։— 11. Միհրդատի եղբրական մահը և Հռոմի միջոցով կարճատև բազավորությունը։— 12. Պարսեաների գործողությունը և միջամտությունը հայկական գործերին։

Առաջին տասնամյակում մեր թվականությունից հետո քաղաքական խառնակ ու խռովաբույր ժամանակներ էին դառնում ո՛չ միայն Հայաստանը, այլև Պարսեական թագավորությունը։

Հրահաա Դ-ի և խառնուհի թեա Ուրանիայի ողորդ, Հրահաա Ե. Թագավորը (2 մեր թվ. առաջ— 4 մեր թվ. հետո), պարսեական դահլիճի վրա երկար չմնաց։ Նա առեկի էր ազնվականությունը, որովհետև զտարյուն պարսե էր։ Եվ 4 թվի վերջերում (մեր թվ. առաջ) նրա դեմ ապստամբություն ծագեց, և նա փախալ հռոմեական շրջանը։

Հրահաա Ե-ին հաջորդեց աքսորից վերադարձած Օրոգես

Բ-ը (4—6 մեր թվ. հ.): Բայց իր անադորուն ու ծայրահեղ վայրագության պատճառով շուտով սա ևս պարթևներին տանի դարձավ և սպանվեց որսի ժամանակ, Այնուհետև, Օրոդես Բ-ից հետո, պարթևները մի քանի տարի մնացին առանց թագավորի և գտնվում էին, ինչպես և հայերն, էրատոսից հետո, անտերունչ վիճակում:

Անիշխանական այս գլուխը վերջ տալու համար պարթևները դիմեցին Օգոստոսին և խնդրեցին, որ նա իրենց թագավոր տա Հրահատ Դ-ի Հուսո ուղարկած որդիներից մեծին՝ Վոնոնին: Օգոստոսն այս առաջարկը հոժարությամբ ընդունեց, և Վոնոնը, որն իր եղբայրների հետ ապրում էր Հռոմում և մեծ չափով ենթարկվել էր արեմտյան քաղաքակրթության ազդեցությանը՝ ուղարկվեց Տիզբոն և ստացավ այստեղ պարթևական թափուր դահլ:

Սակայն պարթևական մեծամեծները շուտով զղջացին, որ թագավոր են խնդրել Օգոստոսից: Նրանք ամոթալի ու անհանդուրժելի համարեցին, որ պարթևական գահի վրա նստել է հռոմայեցիների հաճոյակաարը, որն իր կրթությամբ բոլորովին խորթացել է իրենց վարք ու բարքից: Նոր թագավորը ներանց ատելի էր դառել, որովհետև նա չէր գնում իրենց հետ որսի, չէր սիրում իրենց հետ քեֆ ու կերուխում անել, չըջապատել էր իրեն հույներով և զրոսանքի էր գնում ո՛չ թե տղամարդու նման ձիով, այլ պատվարակով:

Վոնոնի թագավորությունը շատ կարճ տևեց (8—11 մեր թվ. հ.): Երեք տարուց հետո նա ստիպված եղավ հեռանալ իր երկրից և պարթևական դահլ տրվեց Արտավան Գ-ին (11—40 մեր թվ. հ.): Այս նոր թագավորը, որը համառ պատերազմից հետո վախճալու էր մատնել Վոնոնին՝ Արշակունի էր միտյն մոլ կողմից և մեծացել լու դաստիարակվել էր դահլ ցեղի մեջ, որն ապրում էր Վրկանի հյուսիսակողմում դանիտղ այն տափաստաններում, որոնք Արշակունիների բուն հայրենիքն էին:

Արտավան Գ-ը ուներ ուժեղ կամք և խրոխտ բնավորություն, նա Տիզբոնում հիմնադրեց եղավ թագավորական նոր դինաստիայի, որի իշխանության ընթացքում իրանական կուլտուրան և զրադաշտական կրոնը ավելի մեծ թափով էին դարձանում, քան առաջ: Հովսեպոս փլավիոսի վկայությամբ՝ Արտավանը, պարթևական դահլ զրավելուց առաջ, թագավոր էր

եղել Ատրպատականի, որը Հայաստանից, ըստ երոևութիւն անջատվել էր Արտավազդ Գ-ի սպանութիւնէն հետո:

Հաղթված ու գահընկեց արված Վոնոն Թադավորը կարողացավ փախչել Հայաստան, որն հենց այդ միջոցին դտնվում էր անաբրունչ վիճակում: Այստեղ նա ստացավ Արտաշեսյանների Թադը և կարճ ժամանակով դառավ Հայաստանի Թադավոր, գլխավորապես, Հոռմի կողմնակից աղնականների աջակցութեամբ (11 թվից հետո): Այսպիսով Հայաստանը շնորհիվ Հոռմի արքանյակի գահակալման նորից ենթարկվեց կայսրութեան քաղաքական ազդեցութեանը:

Հենց նույն այս ժամանակ, երբ Վոնոնը դեռ նոր էր ստացել Հայկական գահը, մեռավ Օգոստոս կայսրը (14 թվին մեր թվ. հ.), և նրան հաջորդեց Տիբերիոս Կլավդիոս Ներոնը (14—37 մեր թվ. հ.), որը 34 տարի առաջ հալատակեցրել էր Հայաստանը Հոռմին և Թադավոր էր պսակել Արտաշատում Տիգրան Գ-ին: Տիբերիոսը, ինչպես հայտնի է, Օգոստոսի գլխավոր խորհրդատուներից մեկն էր Արևելյան Հարցում և, ընականաբար, ինքը ևս, հավատարիմ մնալով իր նախորդների զուսպ ու զրուշավոր արևելյան քաղաքականութեան՝ ուղեց խուսափել Արևելքում պատերազմից և աշխատեց պահպանել այստեղ կայսրութեան շահերն ու իրավունքները խաղաղ ճանապարհով:

Հոռմը ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել նվաճողական հավակնութիւններից, որովհետև Օգոստոսի իշխանութեան հենց վերջին տարիներում քաղաքական դժվարութիւններ էին ստեղծվել Հռենոսի և Դանուբի սահմաններում և Վարուսի հռոմեական լեգեոնները պարտութիւն էին կրել ու ոչնչացվել Տեյտոբուրգյան անտառում (9 թ. մեր թվ. հետո):

Ինքն ըստ ինքյան հասկանալի է, որ Արտաշան Գ-ը չէր կարող թույլ տալ, որ Պարթևական Թադավորութիւնից վրտադրած իր հակառակորդը Թադավորի հարևան Հայաստանում:

1 *Str. Jos. Flav., Ant. Jud., XVIII, 2, 4. Մարկվարտը ենթադրում է (Beiträge Zur Geschichte und Sage v. Eran, ZDMG, 49, էջ 641), որ Արտաշան Գ-ը ծագում է Ատրպատականի Թադավորական տոհմից, Մակայն այս ենթադրութեան դէմ, որն ընդունելի են համարել Յուստին (Geschichte Irans, Grundriss der Iranischen Philologie, Bd. II, 5, Lieferung, էջ 803) և Հերցֆելդը (Sakastan, Arch. Mitt. aus Iran, IV, 1932, էջ 61, 74, 86), արտահայտվել են վերինը Շուրը և ուրիշները (տես Վ. Շուր, Լեոն կայսեր արևելյան քաղաքականութիւնը, Թարգմ. Մորապ Հապովաճի, Վիեննա, 1930, էջ 115—119):*

Նա սպառնաց պատերազմ օկսել հոռմայեցիների դեմ, եթե նը-
րանք ուղենային պաշտպանել և թողնել Հայաստանի դահի վրա
իր ախոյանին: Եվ Տիբբերիոսը, որը խույս էր տալիս վտանգա-
վոր պատերազմից՝ հրաժարվեց ճանաչել Վոնոնին իբրև Հայաս-
տանի թագավոր և կարգադրեց Ասորիքի կուսակալ Կրետիկոս
Սիլանոսին (մոտավորապես 16 թ. մեր թվ. հետո) հրավիրել
Վոնոնին Ասորիք և ձերբակալել նրան Անտիոքում, պահելով
նրա թագավորական անունը և արքայական համապատասխան
շուքը:

Վոնոնի կարճատև թագավորությունը Հայաստանում (մոտա-
վորապես 11 թվից հետո մինչև 16 թ. մեր թվ. հետո) և նրա
ձերբակալումն Ասորիքում նկարագրված են Հովսեպոս Փլավիո-
սի և Տակիտոսի ներքև մեջ բերված վկայություններում, որոնք
իրար հետ համեմալի են և իրար լրացնում են:

1. Հովսեպոս Փլավիոս, Հնախոս., XVIII, 2, 4՝

«Նա [Արտավանը] թագավորեց պարթևների մոտ, իսկ Վո-
նոնը փախավ Հայաստան: Սա ուղեց անհապաղ տիրել երկ-
րին և ուղարկեց հոռմայեցիների մոտ դեսպաններ: Սակայն
Տիբբերիոսը նրա խնդիրը մերժեց իր փոքրողովքյան և
Պարթևի սպառնալիքների պատճառով (տրովհետև Արտավա-
նը դեսպանների միջոցով սպառնացել էր, որ պատերազմ
կսկսե): Իսկ Վոնոնը ոչ մի ուրիշ հնար չունեի թագավո-
րությունը սկսականելու, քանի որ Հայաստանի մեծամեծ-
ները, որոնք Նպատ լեռան շուրջն էին բնակում, հարել
էին Արտավանին: Ուստի և ինքը անձնատուր եղավ Ասորի-
քի կուսակալ Սիլանոսին:

2. Տակիտոս, Տարեգրութ., II, 4՝

«Կնոջ իշխանությունը, որի անունն էր Էրատո, փորձելուց և
որան շուտով հեռացնելուց հետո՝ նրանք [հայերը], վարա-
նած ու լքված՝ դառնալով ավելի չուտ անտերունչ, քան
ազատ վիճակում՝ ընդունում են թագավոր Վոնոնին: Սա-
կայն քանի որ Արտավանը սպառնում էր և հայերի պաշտպա-
նությունը շատ քիչ էր, և եթե մեր ուժով պաշտպանեինք,
պետք է պատերազմեինք պարթևների դեմ՝ ուստի և Ասո-
րիքի Կրետիկոս Սիլանոս կառավարիչը նրան կանչում է,
չընապատում է պահազորով, բայց պահում է նրա արքա-
յական շուքը և թագավորական անունը»:

Վոնոնի ձերբակալությունից հետո Հայաստանը դարձյալ

մնաց առանց թաղավորի անտերունչ վիճակում, իսկ պարթևական դահի վրա վերջնականապես հաստատվեց ժիր ու խոհուն Արաավան Գ-ը: Հայ-պարթևական խնդրի այս լուծումը, անշուշտ, ամոթաբեր մի պարտութիւն էր Հռոմի արևելյան քաղաքականութեան, և կայսրութիւնը պետք է աշխատեր վերականգնել իր հեղինակութիւնը Արևելքում:

Արդեն հետևյալ տարին (17 թվին մեր թվ. հետո) Տիրեոիոսն ուղարկեց մեծ լիազորութիւններով Արևելք իր եղբորորդուն ու որդեգրին, Գերմանիկոսին, կարգավորելու պնտեղի խճճված դրութիւնը: Կայսեր այս ազգականը, որ 14—16 թվերին մեր թվականութիւնից հետո մի քանի հաղթական արշավանքներ էր կատարել գերմանացիների դեմ և հայտնի էր իր քաջութեամբ և շրջահայեցութեամբ՝ համարվեց ամենահարմար մարդը պատասխանատու այդ աշխատանքի համար:

Գալով Արևելք՝ Գերմանիկոսն իր գործունեութիւնն այստեղ սկսեց ըստ առաջուց նախապատրաստված ծրագրի ու, նախ և առաջ, Տիրեոիոսի կարգադրութեամբ, Հռոմեական կայսրութեանը միացրեց Կապադովկիայի, Կոմմազենի և Հյուսիսային Ասորիքին սահմանակից Կիլիկիայի թաղավորութիւնները և այդ հովանավորյալ պետութիւնները դարձրեց հռոմեական նահանգներ: Զառամյալ Արեւդայոսը, որը 36 թվից սկսած (մեր թվակ. առաջ) թաղավորում էր Կապադովկիայում և Արտավազդ Մեդացու մահից հետո (20 թ. մեր թվ. ա.) թաղավոր էր դառել նաև Փոքր Հայքի՝ կանչվեց Հռոմ և դատի հանձնվեց «հեղափոխական գործունեութեան» համար¹: Իսկ մի փոքր առաջ մեռել էին Կոմմազենի Անտիոք Գ. թաղավորը և Կիլիկիայի Կիսանկախ մասի Փիլոպատոր թաղավորը:

Վերացնելով այս թաղավորութիւնները՝ Հռոմը դառավ Հայաստանի անմիջական հարևանը, և նրա զորքերը բանակում էին այնուհետև Խփրատ գետի վերին հոսանքի մոտ՝ դեմ առ դեմ Մեծ Հայաստանի: Ռազմական այս նոր սահմանը, ինչպես շատ ճիշտ նշում է Անդերսոնը, կազմակերպվում էր այն նսր

¹ Գլխավորի կարծիքով, Արեւդայոսի վրա մեղադրանք էին բարդել, որ նա աշխատել է օգնել իր ազգական Տիրեոս Դ-ին վերագրավելու Հայաստանի դահլիճը: Ինչպես վերև տեսանք, Արեւդայոսի երկրորդ կինը Արտաշեսյան հայ թաղավորի դուստր էր. տես Gwatkin W. E., Cappadocia as a Roman procuratorial province Univ. of Missouri Studies, V, Columbia, Miss. 1930. Համեմատե Anderson, Cambridge Ancient History, vol. X, էջ 744:

տակով, որպեսզի Հայաստանում դերակշռութիւն ունենա
Հռոմեական կայսրութեան քաղաքական ազդեցութիւնը և որ
պեսզի այս երկրում պահպին Հռոմի դերիչխանութիւնը: Գծվար
չէ նաև կռահել, որ Հռոմը, որը թե Օղոսասուսի և թե Տիրերիոսի
ժամանակ կանխամտածված ծրագրով ընդարձակում էր քայլ
առ քայլ պետական իր սահմաններն Արևելքում՝ հենարան ու
վործողութիւնների հիմք էր պատրաստում իր ապագա առաջ-
շարժման ու նոր նվաճումների համար:

Ամենացավոտ խնդիրը, որ պետք է Արևելքում լուծել, Գեր-
մանիկոսը, անշուշտ, Հայաստանի խնդիրն էր: 18 թվին մեր
թվականութիւնից հետո նա եկավ Ասորիք և կարգադրեց այս-
տեղի կուսակալին ուղարկել դեպի Հայաստան լեզևոնական ղո-
րամասեր և, չնայած որ այդ կարգադրութիւնը դեռ չէր կա-
տարվել՝ նա հենց ինքը շտապեց դնալ Արտաշատ և այստեղ,
իրենց հայերի աջակցութեամբ, Հայաստանի թաղավոր պսակեց
Պոնտոսի Պոլեմոն թաղավորի և նրա երկրորդ կնոջ, հռոմեա-
կան կայսերական տան ազգակից Պիթաղորիսի, Ձենոն որդուն,
որը փոքր հասակից մեծացել էր հայկական միջավայրում և ըն-
տելացել էր հայերի նիստուկացին ու սովորութիւններին:

Հայերը զոհութեամբ ու ուրախութեամբ ողջունեցին Ձենոնի
թաղավորութիւնը: Ըստ երևույթին, նրանք հույս ունեին, որ
իրենց առաջարկած այս թեկնածուի ընտրութեամբ հիմք կգրվի
հայկական նոր թաղավորական տոհմի: Թաղադրութեան հան-
դեսի ժամանակ նրանք տվին Ձենոնին իրենց սիրած Արտաշես
անունը, իհարկե, ո՛չ թե ըստ Արտաշատ քաղաքի անվան, ինչ-
պէս կարծում է Տակիտոսը, այլ ըստ անվան Արտաշեսյան թա-
ղավորութեան հիմնադրի՝ Արտաշես Ա-ի:

Գերմանիկոսի ձեռքով Ձենոն-Արտաշեսի թաղավոր պսակվե-
լը, որ մանրամասն նկարագրված է Տակիտոսի մոտ՝ ավելորդ
չեմ համարում թարգմանաբար մեջ բերել մանրամասն կերպով:
«Այս ժողովուրդը [հայերը] վաղուց հետեւ,— ասում է Տա-
կիտոսը,— երկղեթի էր և ըստ մարդկանց բնավորութեան և
ըստ երկրի տեղադրութեան, որովհետեւ, լայն կերպով հարելով
մեր նահանգներին՝ տարածվում էր ներս դեպի մեղացիների
երկիրը: Գտնվելով մեծամեծ պետութիւնների միջև՝ նրանք
[հայերը] շատ հաճախ անմիաբան են իրար հետ և յի են ատե-

1 Anderson, Camb. An. His., X, էջ 745:

լուծյամբ գեպի հռոմայեցիները, իսկ դեպի պարթևները լի են նախանձով: Հենց այդ ժամանակ, Վոնոնի հեռացումից հետո, նրանք թափափոր չունեին: Բայց ժողովրդի տրամադրությունը Պոնտոսի թագավոր Պոլեմոնի որդու՝ Ջենոնի կողմն էր, որովհետև սա ամենավաղ մանկությունից յուրացրել էր հայերի սովորություններն ու նիստուկացը, ընտելացել էր նրանց որսերին, կերուխումին և այլ բարքերին, որ բարբարոսների մոտ ընդունված են, և գրավել էր իր կողմը առաջնորդներին, ինչպես և հասարակ ժողովուրդը: Արդ՝ Գերմանիկոսը աղնավականության հավանության մեջ և չբնապատող ժողովրդի բազմության ներկայության մեջ նրա գլխին դրեց Արտաշատ քաղաքում թագավորական պատվանշանը: Սրանք, հարգանք հատուցանելով թագավորին՝ նրան ողջունում էին անվանելով Արտաշես, և այդ անունը նրան ավել էին ըստ քաղաքի անվանը¹:

Արտավան Գ-ը, ակնածելով Գերմանիկոսից, որ պատրաստ էր պատերազմ սկսել նրա դեմ՝ չհակառակեց ո՛չ Կապպադոկիայի ու Կոմմադենի կցմանը կայսրության, ո՛չ էլ Ջենոն-Արտաշեսի թագակալության: Արտավանը դեռևս իրեն ամուր ու ապահով չէր դրում պարթևական գահի վրա, ուստի և նա դեսպանություն ուղարկեց Գերմանիկոսի մոտ և հայտնեց, որ ինքը Հռոմի հետ պատրաստ է բարեկամություն հաստատել, բայց խնդրում է, որ Վոնոնը, որը պարթևական ավազանու հետ ապստամբություն է նյութում իր դեմ՝ հեռացվի Ասորիքից և պահվի հեռավոր մի տեղում: Արտավան Գ-ի այս խնդրքը Գերմանիկոսը հոժարությամբ կատարեց և Վոնոնին տեղափոխեց իսկույն Կիլիկիայի Պոմպեյոպոլիս քաղաքը: Ինչպես մանրամասն պատմում է Տակիտոսը, նա այնտեղ կարճ ժամանակից հետո սպանվեց, որովհետև փորձ էր արել փախչելու և ապավինելու սկյութացիների օգնության (19 թ. մեր թվ. հ.)²:

Հայկական գործերի խաղաղ լուծումը և համաձայնությունն Արտավան Գ-ի հետ առաջ բերին Հռոմում մեծ բավականություն և այնտեղ նախապատրաստում էին Գերմանիկոսի համար հանդիսավոր ընդունելություն: Սակայն կայսրության այս դա-

¹ Silius Tacitus, Annales, II, 56. Համեմատե՛ նաև Str., XII, 3, 29 (554) և Suetonius, Caligula, I, 1—2.

² Tac., Annales, II, 68. Համեմատե՛ նաև Suetonius, Tiberius, 49, 2.

հաժառանգին ևս, ինչպես և 15 տարի առաջ Կայոս Կեսարին, վիճակված չէր վերադառնալ Իտալիա: Նա հիվանդացավ և վախճանվեց Անտիոք քաղաքում 19 թվին մեր թվականությունից հետո, հոկտեմբերի 10-ին:

Ձենոնը, կամ Արտաշես Գ-ը, թագավորեց Հայաստանում մինչև իր մահը՝ մոտ 17 տարի (18—34 մեր թվ. հետո): Նրա համեմատաբար երկարատև թագավորության ժամանակ խաղաղությունն Արևելքում մնաց անխախտ: Բայց նրա մահից հետո քաղաքական դրությունը նորից բարդվեց Արևելքում, և Հայաստանը դառավ կրկին միջազգային պայքարի ու մրցությունների առարկա:

Արտավան Գ-ը արդեն իրեն ամուր, ու անասան էր զգում պարթևական զահի վրա երկարատև խաղաղության շնորհիվ: Նա սիրտ էր առել և համարձակ էր դառել նաև շնորհիվ իր հաղթական կռիվների ընդդեմ Իրանի հարևան ժողովուրդների: Իսկ նույն այս ժամանակ զառամյալ Տիբերիոս կայսրը, բարձիթողի անելով պետական գործերը՝ ապրում էր առանձնացած կապրի կղզում:

Արտավան Գ-ը, քաջալերված իր մեծ հաջողություններով և կարծելով, որ ծերունի Տիբերիոսը խուլյա կտա պատերազմից՝ ուզեց ո՛չ միայն թագավորեցնել Հայաստանում իր մեծ որդուն, Աբշակին, այլև հույս ունեւր ետ դրավել արևմտյան այն բոլոր երկիրները, որոնք պատկանել էին Աքեմենյաններին և Աելեվկյաններին:

Ըստ երևույթին, Արտավան Գ-ի քաղաքական այս մեծ ծրագիրը հույս էր ներշնչում ռազմատենչ հայ աղնվականներին, որ պարթևական դինաստիայի հաստատմամբ Հայաստանում իրենք ևս կկարողանան վերականգնել Արտաշեսյան մեծ ու հզոր նախկին պետությունը: Եվ 34 թվին (մեր թվ. հ.), պարթևական կուսակցության համաձայնությունը, Հայաստանում թագավոր դրվեց Արտավան Գ-ի որդին՝ Աբշակը:

34 թվի այս անցքերը հանգամանորեն հիշատակված են Տալիտոսի մոտ, որի համապատասխան վկայությունը մեջ եմ բերում առանց կրճատումների:

«Նա [Արտավանը], — վկայում է Տակիտոսը, — որը վախենալով Գերմանիկոսից՝ հավատարիմ էր հռոմայեցիներին և արդարամիտ էր դեպի յուրայինները՝ շուտով մեր վերաբերմամբ ամբարտաւանացավ և հայրենակիցների հանդեպ մո-

լեզնեցալ, հուշա դնելով պատերազմների վրա, որ հաջողութեամբ մղել էր շրջակա ժողովուրդների դեմ, և արհամարհելով Տիբերիոսի ծերութիւնն իրր անզոր: Աղահորեն աչք տնկելով Հայաստանին՝ նա թագավոր դրեց այնտեղ, Արտաշես թագավորի մահից հետո, իր որդիներից ամենամեծին՝ Արշակին, և անպատվութիւնը կրկնապատկեց նրանով, որ ուղարկեց մարդիկ, որոնք պահանջեցին վերադարձնել դանձերը, որ թողել էր Ասորիքում և Կիլիկայում Վոնոնը: Միաժամանակ նա պահանջում էր Պարսից և Մակեդոնացոց հին սահմանները և սպառնում էր սնապարծորեն, որ ինքը մտադիր է արշավել այն երկիրները, որ պատկանել էին Կյուրոսին և ապա Աղեքսանդրին¹:

Շուտով սակայն երևաց, որ Արտավան Գ-ի ակնկալութիւնները Տիբերիոսի ծերութեան ու անկարութեան վերաբերմամբ անհիմն էին: Արտավան Գ-ի հալածութիւններին զառամյալ կայսրը ցույց տվեց վճռական դիմադրութիւն, նա ուղարկեց Արեւելք մեծ իրավունքներով Լուկիոս Վիտելլիոսին, որը համարձակ զինվորական էր և ճարպիկ դիպլոմատ, հանձնարարելով նրան դիմել անհրաժեշտ դեպքում զենքի օգնութեան:

Միևնույն ժամանակ նա գործ դրեց հռոմեական քաղաքականութեան փորձված հին միջոցները: Հռոմեական ոսկու օգնութեամբ նա աշխատեց ներքին գոգոհութիւններ ու արատամրութիւններ առաջ բերել թե՛ Պարթևստանում և թե՛ Հայաստանում: Շուտով հանդես բերվեցին նաև պարթևական ու հայկական դահերի նոր թեկնածուներ, — սլարթևական գահի համար՝ Հրահատ Գ-ի ամենափոքր որդին, Հրահատը, իսկ հայկական գահի համար՝ Իբերիայի Փարսաման թագավորի եղբայր Միհրդատը:

Տիբերիոսի իշխանութեան ժամանակ հռոմայեցիներին հաջողվել էր խախտել անդրկովկասյան ժողովուրդների բարեկամութիւնն ու միաբանականութիւնը, և իբերների Փարսաման թագավորը, որը «բարեկամ ու դաշնակից» էր դառել Հռոմի՝ պետք է օգներ իր եղբորը գրավելու Հայաստանի դահը:

Երկու եղբայրները, ինչպես պատմում է Տակիտոսը, դիմելով դավադրական ու ստոր միջոցների՝ կաշառեցին Հայաստանում պալատական ծառայողներին և նրանց օգնութեամբ թունավորել ավին Արշակ թագավորին: Այնուհետև նրանք մեծ զորքով

¹ Tac., Annales, VI, 31.

մտան Հայաստան և տիրեցին Արտաշատ մայրաքաղաքին (85 մեր թվ. հետո)։ Արտաշատի Գ-ը, տեղեկություն ստանալով իր որդու եղբերական մահվան մասին՝ նրա փոխարեն Հայաստան ուղարկեց իր մյուս՝ Օրոդես որդուն։ Բայց սրա դեմ պատերազմի դուրս ելան ո՛չ միայն իրերները, այլև նրանց հետ միացած ղաչնակից, ազվանները և հյուսիսային կովկասից կանխած սարմատական վարձկան զորքերը, հավանորեն, այսիններև։

Տեղի ունեցած մեծ ճակատամարտում Օրոդեսը չարաչար հաղթվեց ու ծանր վիրավորվեց։ Եվ այսպիսով Հայկական թափափորությունը մնաց Միհրդատի ձեռին։

Վերահիշյալ անցքերը և Փարսամանի միացյալ ուժերի մեծ պատերազմը Արտաշատի Գ-ի որդի Օրոդեսի դեմ, որ նկոտուս վրձած են մի փոքր տարբեր կերպով Տակիտոսի և Հովսեպոս Փլավիոսի մոտ¹, մեջ եմ բերում բառացի թարգմանությամբ լատիներենից և հունարենից։

1. Տակիտոս, Տարեգրութ., VI, 33՝

«Արդ՝ Թադավորներից առաջինը Միհրդատն էր, որ ստիպեց Փարսամանին աջակցել իր փորձին զավով ու ուժով։ Սրանք դուռն անօրեն մարդիկ, որոնք Արշակի ծառաներին հրապուրեցին շատ ոսկով ոճիր գործել։ Միևնույն ժամանակ իրերները արշավեցին մեծ զորքով Հայաստան և տիրեցին Արտաշատ քաղաքին։ Երբ Արտաշատն այդ խոպտալ՝ հանձնարարեց իր Օրոդես որդուն վրեժ յուժել։ Նա տալիս է նրան պարթևական զորք և ուղարկում է մարդիկ, որպեսզի վարձով ճարեն ոգնական զորք։ Իսկ, մյուս կողմից, Փարսամանը դառն է կուպում աղվանների հետ և կանչում է սարմատներին, որոնց իշխանները վարձ էին ստանում երկուստեք և, համաձայն իրենց ցեղերին, հատուկ սովորության, հանձն էին առնում պարտականություններ երկու կողմերի հանդեպ։ Սակայն իրերները, որ այդ տեղերի տերն էին՝ Կասպյան ճանապարհով ողողեցին իսկույն Հայոց երկիրը սարմատներով։ Իսկ ուրիշ որ զալիս էին, պարթևներին օգնելու՝ հեշտությամբ սրգելվեցին, որովհետև թշնամին կարողացել էր փակել մյուս անցքերը»։

2. Հովսեպոս Փլավիոս, Հնախոս, XVIII, 4, 4՝

«Տիրաբիրոսը նամակ է ուղարկում Վիտելլիոսին և հրամա-


¹ Համեմատե նաև Cass. Dio, Hist. Rom., LVIII, 26.

յում է նրան բարեկամութիւն հաստատել պարթեւների թագավոր Արտավանի հետ: Նրան վախեցնում էր այն, թե չիքնի՝ թե Արտավանը, որն իրեն թշնամի էր և գրավել էր Հայաստանը՝ ավելի մեծ շարիքներ գործե: Եվ Տիբերիոսը հրամայում է հավատ ընծայել Արտավանի բարեկամութեանը միայն այն դեպքում, եթե կտրվեն պատանգներ և, գլխավորապես, Արտավանի որդին: Այս գրավոր կարգադրութիւնը Վիտելլիոսին անելուց դուրս՝ Տիբերիոսը տալիս է իբրև նվեր իբերների և աղվանների թագավորներին մեծ գումարներ և համոզում է նրանց, որ անհապաղ պատերազմ օկեսեն Արտավանի դեմ: Իսկ սրանք դժվարանում էին, ուստի և Արտավանի դեմ ներս թողին սկյութացիներին՝ և ճանապարհ տվին նրանց իրենց երկիրների միջով, բաց անելով Կասպյան դռները: Հայաստանն այնուհետև խսկույն ետ առնվեց և, որովհետև թշնամիները ներս էին խուժել պարթեւների երկիրը՝ սպանվեցին այնտեղ եղող մարդկանցից բավերը ու նրանց ամբողջ երկիրն ավերվեց: Այս կռիվներում սպանվեց թագավորի որդին ու նրա հետ անթիվ քանակութեամբ զինվորները:

Հովսեպոս Փլավիոսի այս վկայութեան մեջ անհավաստի է, իհարկե, նրա հաղորդած վերջին տեղեկութիւնը, որ իբր թիբերները, աղվանները և այլնները ավերել էին պարթեւների երկիրը: Իրապես, այդ պատերազմը տեղի էր ունեցել Հայաստանում և ավերվել ու կողոպտվել էր ո՛չ թե պարթեւների, այլ հայերի երկիրը:

Եւր առնելով իր որդու պարտութեան մասին՝ Հայաստան եկալ մեծ ուժերով ինքը Արտավանը: Սակայն հենց այդ միջին այնտեղ յուր տարածվեց, որ հռոմեական զորքերը մոտեցիլ են նիքրատ գետին Վիտելլիոսի առաջնորդութեամբ և սպառնում են պարթեւական Միշադետքի սահմաններին: Արտավանը ստիպված եղաւ ետ նահանջել, բայց արդեն ուշ էր: Վիտելլիոսը նախորդ կադմակերպել ու նրա դեմ ապսամբեցրել էր պարթեւական ազնվականութեան ղեգոհ մասը, որը նրա փոխարեն թագավոր էր ընտրել Հրահատ Գ-ի թոռին, Տրդատ Գ-ին (36 մեր. թվ.

¹ Գուշմիդը մասնանշում է, որ Փարսիանի դաշնակիցներն էին բոսնիականների ալանները, իսկ սկյութացիներին [Σκύθας] բառը հովնեղափոխությունը ընգծիշարկութիւն է. տես Geschichte Irans, էջ 121, ծան. 1:



Արաբների արշավանքի Կասպի ծովի շրջանայինը

4.) : Վերև հիշված հռոմեական մյուս թեկնածուն, Հրահատը մի փոքր առաջ հիվանդացել էր և վախճանվել :

Արտավան Գ-ը ստիպված եղավ հեռանալ քաղաքական ասպարեղից և փախալ Վրկանաց աշխարհը, հույս ունենալով օգնություն ստանալու իր հին բարեկամներից : Բայց արդեն հետևյալ տարին նրան ետ կանչեցին նոր թագավորին թշնամացած իշխանները, և Արտավան Գ-ը, փախցնելով իր հակառակորդ Տրդատ Գ-ին Ասորիք՝ վերադարձեց իր դահլ առանց պատերազմի (37 մեր թվ. 4.) :

Վիտելլիոսը նորից առաջնորդեց հռոմեական լեգեոնները դեպի Եփրատ դետը, սակայն պատերազմական դժոճություններ տեղի չունեցան : Տիրերիոսի կարգադրությամբ նա սկսեց խաղաղության բանակցություններ Արտավան Գ-ի հետ և նրանք, հանդիպելով իրար Եփրատ դետի մոտ՝ հաշտության դաշինք կոչեցին¹, որի համաձայն Հռոմը ճանաչեց Արտավան Գ-ին իբրև պարթևների թագավոր, իսկ վերջինս Հայաստանի թագավոր ճանաչեց Հռոմի թեկնածու Միհրդատին :

Դաշնակցությունը կնքելուց հետո Արտավան Գ-ը Հռոմ ուղարկեց իբրև պատանդ իր Դարեհ որդուն² : Նրա թագավորության վերջին տարիներում նրա դեմ, ըստ երևույթին, կազմվել էր նոր դավադրություն, և նա փախել ու պառսպարվել էր Ադիաբենի իգատես թագավորի մոտ : Իր հավատարմության համար իդատեսը, ինչպես վկայում է Հովսեպոս Փլավիոսը³, ստացավ նրանից, բացի այլ շնորհումներից, նաև Մծբին քաղաքն իր շրջակայքով, որն առնված էր արմենների թաղավորից :

37 թվին մեռավ Տիրերիոս կայսրը, և նրան հաջորդեց Կայսու Կեսար Գերմանիկոսը, որի մականունն էր Կալիգուլա (37—41 մեր թվ. հետո) : Մոտ չորս տարվա սրա իշխանության ժամանակ Հռոմի արևելյան քաղաքականությունը հիմնովին փոխվեց և ստացավ նոր ընթացք : Կալիգուլան, հայտնի չէ թե ինչ պատճառով, կանչեց Հռոմ փարսմանի եղբորը՝ Միհրդատին և Հայաստանում նրա փոխարեն նոր թագավոր չդրեց : Նա միաժամանակ կալանքի տակ պահեց Միհրդատին և ապա աքսոր ուղարկեց⁴ :

¹ S^{eu} Cass. Dio, LIX 27. Suet., Caligula, XIV, 3. Vite Illus, II, 4. Jos., Antiquit., XVIII, 4, 5.

² S^{eu} Suet., Caligula, 19, 2.

³ Jos., Antiq., XX, 3, 3.

⁴ S^{eu} Tac., Annales, XI, 8. Cass, Dio, LX, 8, 1. Seneca, De tranquill animi, II, 12.

Նախկին Կապապոլիտա և Կոմմազենի թագավորութիւնները, ինչպես վերև տեսանք, Տիրերիոսի կարգադրութեամբ վերածվել էին 17 թվին (մեր թվ. հ.) հռոմեական նահանգների: Իսկ այժմ Կալիզուլան փոխեց այդ կարգադրութիւնը և, վերականգնելով Կոմմազենի թագավորութիւնն ավելի ընդարձակ սահմաններում՝ այդ թագավորութիւնը տվեց նախկին Անտիոքոս Գ. թագավորի որդուն՝ Անտիոքոս Դ-ին (37 մեր թվ. հ.): Նա վերանորոգեց իբրև թագավորութիւն Կապապոլիտայի հյուսիս-արևելքում նաև Փոքր Հայքը և այնտեղ թագավոր դրեց Պոնտոսի Պոլեմոն Ա-ի թոռին՝ Կոստիսին, որը արա Անտոնիոս Տրիպոնա դատեր և Թրակիայի Կոստիս թագավորի որդին էր:

Պատմագիտական երկերում Կալիզուլայի այս քաղաքականութիւնը համարում են անմիտ ու նաև կարծում են, որ այդ ամենը նա արել էր նախանձից զրդված Տիրերիոսի հանդեպ: Սակայն այս խնդիրը բավարարչափ գեռ պարզված չէ և կարոտ է նոր ուշադիր քննութիւն:

Կալիզուլայի արևելյան քաղաքականութիւնը լուսաբանելիս պետք է ըստիս ի նկատի ունենալ հետևյալ հանգամանքները, որ աչքաթող են արված: Կիսաֆեոդալական Կապապոլիտայի և Կոմմազենի հռոմեական նահանգների վերածվելը, հավանորեն, մեծ դժգոհութիւն էր առաջ բերել տեղական արտոնյալ ազնվականութեան մեջ, և կարելի է ենթադրել, որ Արտավան Գ-ը, 36 թվին Կապապոլիտա արշավելուց առաջ, ոտքի էր հանել ու ապստամբեցրել այդ երկիրները, որոնց մեջ ուժեղ էր իրանական տարրը: Եվ դուցե հենց այդ խռովութիւններն էին կղել դիւավոր պատճառը Կալիզուլայի նոր քաղաքականութեան: Առանձնապես ուշադրաւ է այն, որ Կլավդիոսը ևս, Կալիզուլայի հաջորդը, որը հետևում էր Օգոստոսի և Տիրերիոսի քաղաքականութեան՝ հարկ չհամարեց միացնել Կոմմազենը և Փոքր Հայքը Հռոմեական կայսրութեան և այդ երկիրները նաև նրա իշխանութեան ժամանակ մնացին իբրև առանձին թագավորութիւններ:

Կալիզուլայի ժամանակ Հայաստանը, ինչպես ասացինք, մնացել էր առանց թագավորի: Եվրոպական գիտնականները և նրանց հետևող նաև հայ պատմաբաններն ու ըրանասերները միա-

1 *See Mommsen, Römische Geschichte, V, էջ 370. Gutschmid, Geschichte Irans, էջ 123 և ուրիշ:*

Համուռ կերպով պնդում են, որ 37 թվից հետո անտերունչ Հայաստանը դառավ պարթևական նահանգ և կառավարվեց պարթև «Դեմոնաքս» կուսակալի ձեռքով:

Այս պնդումը, որի գլխավոր հեղինակներից մեկը Մոմզենն է, ըստիս վիճելի է ու կասկածելի: Մոմզենը հենց ինքը հարկ է համարել ծանոթության մեջ մատնանշել, որ Հայաստանի դրավման մասին պարթևների կողմից սկզբնազգայունները չեն տալիս պարզ տեղեկություն: Եվ ըստիս դժվար է նաև համոզվել, որ այդ է հետևում բնավ նաև Տակիտոսի այն հաղորդագրությունից (XI, 9), որ ներքև մեջ ենք բերելու:

Ավելի հավանական է թվում, որ «Դեմոնաքսը», որի անունը, ինչպես կտեսնենք, Տակիտոսի մոտ աղճատված է՝ հայ իշխան է և Հայաստանի սպարապետն է, որն այս խառն ու անտերունչ չրջանում աշխատել է պահպանել Հայաստանի անկախությունը:

Որ Արտավան Գ-ը, որը 37 թվին դաշն էր կնքել հռոմայացիների հետ՝ Հայաստանը նորից վերադարձվել էր նույն այդ ժամանակները՝ այդ պարզապես չհիմնավորված ու անսպա-ցույց մի ենթադրություն է:

Կալիգուլայի եղբրական սպանությունից հետո (41 թ. մեր թվ. հ., հունվար ամսին) նրա հաջորդը, Կլավդիոս կայսրը (41—54 մեր թվ. հ.), Հայկական Հարցում շարունակեց Օգոստոսի և Տիբերիոսի նախկին քաղաքականությունը: Հայաստանը հռոմեական պրոտեկտորատի տակ պահելու համար նա ևս, ինչպես և Տիբերիոսը, իրեն հենարան ու դործիք դարձրեց Իբերիան ու նրա Փարսաման, Թադավորին: Նա աքսորից ետ կանչեց Միհրդատին և, տալով նրան հռոմեական օժանդակ զորաբանակ՝ ուղարկեց Հայաստան: Նա կարգադրություն արեց նաև Փարսամանին, որ սա ևս արջավե՛ Հայաստան և օգնե իր եղբորը դրավելու Հայկական դաշը (հավանորեն, 42 թ. մեր թվ. հետո):

Արտավան Գ-ի մահից հետո (40 մեր թվ. հ.), հենց նույն այս ժամանակները, պարթևների մոտ ծագել էին ներքին խռովություններ, Իսկ հատկապես 42 թվին իրար դեմ մեծ պատերազմ էին սկսել Արտավան Գ-ի որդիները՝ Վարդանը և Գոտարզը: Հայերը, հույս չունենալով օգնություն ստանալու պարթևներից՝ Հայաստանի անկախությունը փորձեցին պաշտ-

1 S. Mommsen, Römische Geschichte, V, էջ 370, ծան. 1.

պանել սեփական իրենց ուժերով և հռոմեա-իրերական միացյալ ուժերին գլխավորեցին «Դեմոնաքսի» առաջնորդությամբ: Ըստ երևույթին, նրանք ուզում էին Հայաստան թագավոր կարգել Փոքր Հայքի թագավոր Կոտիսին, որը Զենոն-Արտաշես Գ-ի թրջ ուղղին էր:

Բայց այս Կոտիսին, որը նույնպես փորձել էր Միհրդատի դահակալությունը խանդարել՝ Կլավդիոսը նախկին է գրում և հարկադրում է դադարեցնել դեմադրությունը: Այնուհետև հռոմեա-իրերական զորքերը, մատնելով հայերին պարտության՝ պաշարեցին Հայաստանի բերդերն ու ամրությունները և հաստատեցին Միհրդատին նրա նախկին դահի վրա (43 թ. մեր թվ. հետո):

Միհրդատի և Փարսպանի նոր արշավանքը Հայաստան և վերահիշյալ մյուս անցքերը հանդամանորեն նկարագրված են Տակիտոսի վկայություններում, որ մեջ և՛ բերում մանրամասն կերպով:

1. Տակիտոս, Տարեգր., XI, 8՝

«Մոտավորապես այդ ժամանակ Միհրդատը, որն իշխում էր Հայաստանում... և որին, ինչպես ես հիշեցի, շվթայել էր տվել Կայոս Կեսարը [Կալիգուլան]՝ Կլավդիոսի հորդորմամբ վերադարձալ իր թագավորությունը, հույսը դնելով Փարսպանի գործակցության վրա: Այս վերջինը, որ իրեր-ների թագավորն էր և միաժամանակ Միհրդատի եղբայրն էր՝ լուր էր ուղարկել, որ պարթևների մոտ երկպառակու-թյուն է և բարձրագույն իշխանությունը գտնվում է տա-տանվող վիճակում. ուստի և նրանց մոտ ալիքի փոքր գոր-ծերը մնում են առանց հոգատարության»:

2. Նույնը, Տարեգրութ., XI, 9՝

«Այժմ, երբ Արևելքի ուժերը բաժանվել էին և անորոշ էր, թե ո՛ր կողմը կթեքվեն նրանք՝ Միհրդատին առիթ տրվեց դրավելու Հայաստանը. հռոմեական զինվորի ուժով պետք է ոչնչացվեին սեպ ամրությունները, իսկ միաժամանակ իրեր-ների զորքը պետք է ասպատակեր դաշտային տեղերը: Սա-կայն հայերը, երբ հաղթվեց Դեմոնաքս կուսակալը (praefec- tus), որը հանդգնել էր ճակատամարտ տալ՝ այլևս չգլխա-դրեցին: Մի փոքր հապաղում առաջ բերեց Փոքր Հայքի թա-գավոր Կոտիսը, որի մոտ փախել էին մեծամեծներից ոմանք. նրան զսպեց հետո Կեսարի նամակը և ամեն ինչ

ընթացավ հօգուտ Միհրդատի, որն ալիլի դատան էր, քան պատեհ է նոր թագավորության: Իսկ պարթևների հրամանատարները, որոնք իրար դեմ ճակատամարտի էին պատրաստվում՝ երբ բացվեց ժողովրդականների դավադրությունը, որի մասին հայտնել էր իր եղբորը Գոտարզը՝ հանկարծ դաշն կնքեցին:

Նվրոպական դիտակականները հենց մեջ բերված այս վկայություններից եզրակացրել են, որ Կալիգուլայի ժամանակ Հայաստանը եղել է պարթևական նահանգ և որ նրա կառավարումը հանձնարարված է եղել Դեմոնաքս պարթև մարդպանին: Այս հետևությունը, ինչպես վերև ասացինք, միանգամայն անհիմն է, ինչ հավանական է թվում, որ Demonax praefectus-ը, որի անունը Տակիտոսի մոտ մի տեղի աղճատված է, կարող է լինել Դիմաքսյան հին տոհմի իշխաններից մեկը, որ նույն այս ժամանակաշրջանում հիշատակված է Խորենացու Պատմության մեջ:

Խորենացու երկրորդ դրքի հիմնական աղբյուրներից մեկը, ինչպես հայտնի է, եղել է «Հայոց երկն վիպասանաց», որի մեջ հիշողություններ են պահպանված պատմական դեպքերի սկսած Արտաշես Ա-ից մինչև Տրդատ Ա-ը: Հենց այդ դրքի ԽՁ դրվում հիշատակված է Դիմաքսյան Գիսակը, Արաաշեսի ծածոր որդին, որը հերոսաբար կռվել ու մեռել էր հաղթական մեծ ճակատամարտում Երվանդի և նրան օգնող Փարասման թագավորի դեմ:

Խորենացու այս վկայությունը, որ առնված է, անտարակույս, Վիպասանքից՝ ըստիս մի ապացույց է այն քաղաքական մեծ դերի, որ Դիմաքսյանները Հայաստանում կատարել են պատմական մեծ անցքերի ժամանակ, հատկապես, Փարասմանի ու Միհրդատի դեմ մղվող պատերազմում: Այս կարևոր զուգադրվումը ինձ վստահություն է տալիս կարծելու, որ Տակիտոսի մոտ հիշատակված Դեմոնաքսը, որը 42 թվին հանդգնել էր «ճակատամարտ տալ» և դիմադրել էր Փարասմանին ու Միհրդատին՝ կարող է լինել հենց «Դիմաքսան նահապետ»-ը (=Demonax praefectus), որի անունը Տակիտոսի մոտ աղճատվել և դառել է Դեմոնաքս:

43 թվին մեր Թվականությունից հետո Միհրդատը վերահաստատվեց իր թագավորությունից մեջ Հայաստանում և այս անգամ նա թագավորեց բավական երկար՝ ալիլի քան 8 տարի (43—51 մեր թվ. հ.): Նա, ինչպես տեսանք, Հայաստանին տրել էր արյունահեղ կռիվներից հետո և հակառակ երկրի ցանկության: Իր թագավորական իշխանությունը, որի դատան լինելը մասնա-

Նշված է Տակիրտոսի մոտ՝ նա կարողացել էր պահպանել, հենվելով հռոմեական բռնարկու զորարանակի վրա, որը դրավել էր Գառնիի բերդը և մնացել էր Հայաստանում: Սրա իշխանության վերահաստատումը հայերը հարկադրված էին լռելյայն տանել, որովհետև նրանք չէին կարող ապավինել պարթևների օգնությանը, որոնց մոտ ներքին երկպառակուսությունները չարունակվում էին և Վարդանի (42—45 մեր թվ. հ.) և Գոտարզի ժամանակ (45—51 մեր թվ. հ.):

Միհրդատի իշխանությունը Հայաստանում ունեցավ եղբրադրան վախճան, որ մանրամասն նկարագրված է Տակիրտոսի մոտ¹:

Առաջին դարի երկրորդ կեսի սկզբին մեր թվականությունից հետո իրերական թաղավորական բնությանը ասպարեզ դառավ նոդկալի չարադործությունների: Փարսաման թագավորն ուներ Հռադամիզդ անունով ժառանգորդ և ամբարտաւան մի որդի, որն ամեն բանի ընդունակ էր և որը մտածում էր հափշտակել իր ակերոր հոր թաղավորությունը: Այս վտանգավոր ախոյանից ծերունի թաղավորն աշխատեց ազատվել և խորհուրդ տվեց որդուն գավադրություն կաղմել Միհրդատի դեմ և նստել նրա փոխարեն թագավոր Հայաստանում:

Հռադամիզդը, որ Միհրդատի եղբորորդին էր և ամուսնացած էր նրա աղջկա հետ՝ եկավ Հայաստան և, ձևացնելով թե ինքը դժուրված է հոր հետ՝ սիրալիր ընդունելություն գտավ իր հորեղբոր մոտ, Հայաստանում նա կապեր հաստատեց հայ մեծամեծների հետ, որոնք դժգոհ էին Միհրդատից, և ապա, վերագառնալով իրերիս, ստացավ իր հորից մեծ զորք և զնաց հորեղբոր դեմ պատերազմելու:

Ահաբեկված Միհրդատը, որը հանկարծակիի էր բերվել՝ փախավ Գառնի բերդը և ապավինեց հռոմեական բերդապահ զորքի պաշտպանության: Հռադամիզդը Գառնին պաշարեց, բայց չկարողացավ առնել: Սակայն շուտով նա իր նպատակին հասավ ուրիշ ճանապարհով: Նա մեծ կաշառք տվեց հռոմեական կայսրի հրամանատար Կելիոս Պոլլիոնին, և սա Միհրդատին ստիպեց դուրս գալ բերդից և իր եղբորորդու հետ կնքել հաշտության դաշինք: Երբ Միհրդատը եկավ սրա հետ տեսնվելու՝ նրան իսկույն չլթայեցին, և Հռադամիզդը, որը խոսք էր տվել չգործադրել նրա ու զորջ դեմ սուր կամ թույն՝ հրամայեց,

1 Tacitus, Annales, XII, 44—49:

որ նրանց խեղդեն ծանր դորգերի տակ: Սպանվեցին նաև Միհրդատի որդիները, որոնք լաց էին եղել, տեսնելով ծնողների սպանութիւնը:

Հայաստանի Միհրդատ թագավորի սպանութիւնը, որը գտնվում էր Հռոմի հովանավորութեան տակ, ինչպես տեսնում ենք, կատարվել էր ոչ միայն հռոմեական պահապան կայազորի աշխարհի առաջ, այլև այդ զորքի վաճառված հրամանատարի մեղսակից գործակցութեամբ: Եվ ուշագրավ է, որ հռոմեական բարձր իշխանավորներն Արևելքում այս խայտառակութեանը վերաբերվեցին անվրդով անտարբերութեամբ: Նրանցից շատերը կարծում էին նույնիսկ, որ Հռոմի քաղաքական շահերի տեսակետից նման ոճրագործութիւնները օգտավետ են ու ցանկալի:

Տակիտոսի համապատասխան վկայութիւնը կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջութեամբ:

«Իսկ Կվադրատուսը, — պատմում է Տակիտոսը, — իմանալով, որ Միհրդատը դավաճանված է և թագավորութիւնը դրավել են մարդասպանները՝ հրավիրում է խորհրդակցութիւն, հաղորդում է եղելութիւնը և խօսհուրդ է հարցնում, թե արդյոք անհրաժեշտ չէ՞ պատժել: Սակայն հասարակաց պատվի մասին քչերն էին հոգում [ժողովում], շատերը խոսում էին ավելի անվտանգութեան մասին: Ասում էին, որ օտարների ամեն մի ոճրագործութիւն պետք է ընդունվի ուրախութեամբ, որ անհրաժեշտ է նույնիսկ նրանց մեջ առելութեան սերմեր ցանել, ինչպես այդ հաճախ արել են հռոմեական կայսրները, որոնք հենց նույն Հայաստանը տվել են իբրև առատաձեռն նվեր, որպեսզի բարբարոսների մեջ առաջ բերեն երկպառակութիւններ: Թո՛ղ Հռադամիզդն, ասում էին, ունենա իր իշխանութեան տակ հանցանքով ստացածը, միայն թե նա լինի ակտիվ և վատանուն, որովհետև այդ ավելի օգուտ կբերե, քան եթե նա վտարվելու լինի փառքով: Այս կարծիքին հավանութիւն արվեց՝¹

Ինչպես դժվար չէ հետևեցնել Տակիտոսի այս վկայութիւնից, հռոմեական դիպլոմատիան առաջ էր բերում Հայաստանում խառնակութիւններ և երկպառակութիւններ, խտրացնում էր երկրում անբարոյացումը և ներքին կաղմալուծումը և չէր

¹ Tac., Annales, XII, 48.

ցանկանում, որ Հայաստանում հաստատվեր ուժեղ և աղնվակա-
նությանը հաճելի նոր դինաստիա: Հռոմի այս քաղաքականու-
թյունն էր, անշուշտ, հիմնական պատճառը, որ հայերը, ինչ-
պես մատնանշում է Տակիտոսը, դեպի հռոմայեցիները տածում
էին խոր ատելութուն:

51 թվին մեր թվականությունից հետո հռոմեական կապա-
դովկիայի կուսակալ Յուլիուս Պելլեդուսի ներկայությամբ,
որը նույնպես կաշառված էր Հռադամիդդից՝ այս վերջինը
պսակվեց Արտաշատում Հայաստանի թագավոր: Սակայն սրա
թագավորությունը կարճատև եղավ: Արդեն 52 թվին լուր
ստացվեց, որ պարթևները ներս են մտել Հայաստան, և Հռա-
դամիդդը թողեց իր թագավորական դահլը և իրերական զորքերի
հետ փախավ իր հոր մոտ:

Հռադամիդդի գահակալության ժամանակ Պարթևական թա-
գավորության մեջ տեղի էին ունեցել խոշոր փոփոխություն-
ներ: 51 թվի կեսերին մեռել էր Գոտարզը, և նրան հաջորդել էր
Ատրպատականի թագավոր Վոնոնը, որին Փիլոստրատոսի վկա-
յություն համաձայն ենթադրաբար համարում են Արտավան Գ-ի
եղբայրը¹: Իսկ Վոնոն Բ-ից հետո, որը թագավորել էր միայն
մի քանի ամիս՝ պարթևական դահլը ստացել էր, իր Բակուր
ու Տրդատ եղբայրների համաձայնությամբ, Վոնոն Բ-ի մեծ
որդին՝ Վաղարշը, որը պարթևական ամենաընդունակ ու ամենա-
ուժեղ թագավորներից մեկն էր (51—75 մեր թվ. հետո): Սրա
ժամանակ մեծ դարկ էր ստացել իրանական կուլտուրայի զար-
դացումը, հիմնվել էին Վալաշկերա (Տիզբոնի մոտ) և Վոլո-
դեզիաս (Բաքելոնից հարավ) քաղաքները և սկիզբ էր դրվել
կրոնական գրադաշտական գրքերի հավաքման:

Պարթևական թագավորության թուլության հիմնական պատ-
ճառն էին, ինչպես տեսանք, գահակալական անվերջ կռիվները:
Սրանց առաջն առնելու համար՝ Վաղարշ Ա-ը աշխատեց դոհաց-
նել իր եղբայրներին և տվեց Բակուրին Ատրպատականի թագա-
վորությունը, իսկ փոքր եղբորը, Տրդատին, որոշեց տալ Հայոց
թագավորությունը: Հայաստանն ու Ատրպատականը պետք է լի-
նեին Արշակունյաց տոհմի երկրորդ ու երրորդ ինքնուրույն թա-
գավորությունները: Հայկական գործերին միջամտելու հարմար

¹ S. N. Javali, Geschichte Irans, Grundriss der Iran. Philol., Bd. II, 5,
էջ 505:

առիթ ծառայեցին իրերական թագավորական ընտանիքի դաժան ու վայրագ հորժողությունները Հայաստանում, որոնք հայ ժողովրդի մեջ առաջ էին բերել դայրույթ ու թշնամանք:

Արդեն 52 թվին մեր թվականությունից հետո պարթևները մտան Հայաստան, և Հռադամիդը, ինչպես ասացինք, շղիմադրեց ու ստիպված եղավ փախչել: Արտաշատ ու Տիգրանակերտ քաղաքները հոժարակամ կերպով անձնատուր եղան Վաղարշին: Սակայն ձմեռվա խստությունը, պաշարի պակասությունը և պարթևական բանակի մեջ ծաղած համաճարակը հարկադրեցին Վաղարշին իր զորքերը ժամանակավոր կերպով ետ քաշել Հայաստանից. ուստի և Հռադամիդը, օգտվելով այս հանդամանքից՝ կարողացավ վերագրավել լքված երկիրը և սկսեց անդթաբար վրեժ առնել հայերից, որոնք անցել էին պարթևների կողմը:

Շուտով սակայն, ինչպես վկայում է Տակիտոսը¹, համբլրությունից դուրս եկան իրենք հայերը և, աստամբելով նրա դեմ՝ ղինված խմբերով չրջապատեցին նրա պալատը: Եվ Հռադամիդը, չունենալով փրկության այլ միջոց՝ ասպնինեց, ինչպես հեղնորեն ասում է Տակիտոսը՝ իր ձկերի արագավազությանը և հազիվհազ կարողացավ փախչել Իերերիա (52 մեր թվ. հ.)²:

Հռադամիդի փախուստը պատմելիս՝ Տակիտոսը մանրամասն նկարագրել է նրա Ձենոբիա կնոջ եղերական արկածը, որը հետադառնում նույն էր դառել Մեասատասիոյի «Ձենոբիա» րանաստեղծական գրության: Դժբախտ թագուհին, սկսում է Տակիտոսը, հղի լինելով՝ ճանապարհին խիստ նեղվում էր ու տանջվում, ուստի և խնդրեց ամուսնուն ստանել իրեն և աղաւտել ծանր գերությունից: Հռադամիդը, չկարողանալով նրան փրկել՝ նրան հարվածում է դաշույնով և վիրավոր կնոջը քար է տալիս ու ձգում Արաքս գետը (հավանորեն, Ախուրյան գետը): Բայց Ձենոբիային, որը դեռ կենդանի էր՝ ալիքները գցում են ափը, և հովիվները բուժում են դուրդական դեղերով և տանում Արտաշատ: Այստեղից նա հասարակական ծախսով ուղարկվում է Տրդատի մոտ, որը նրան ընդունում է մարդասիրաբար և պահում է թախտորամայել պատվով:

¹ S⁸u Tac., Annales, XII, 50.

² Նույնը, XII, 51.

Հաղամիզի փախուստից հետո, նույն այս 51 թվին, պարթևական մեծ զորքով Տրդատը նորից մտավ Հայաստան և, առանց որևէ դիմադրության հանդիպելու, զրաւեց երկիրը և նորից հայտարարեց իրեն Հայաստանի թագաւոր:

Այս տիւր լուրը հայսրութեան արեւելյան քաղաքականութեան ծանր պարտութեան մասին Հռոմ հասաւ այն ժամանակ, երբ Կլաւդիոս արդեն վախճանւել էր (51 մեր թվ. հ., հոկտեմբեր ամս.) և նրան հաջորդել էր Գերմանիկոսի թոռը՝ տասնյոթ տարեկան Ներոնը (51—68 մեր թվ. հ.):

Երիտասարդ Ներոնը, ինչպես տեսնում ենք, ստանում էր Կլաւդիոսից ծանր ժառանգութիւն, և պատերազմը նրա ժամանակ դառաւ անխուսափելի:

ԳԼՈՒԽ ԲՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀՈՈՄԵԱՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՏՈՍՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵԱԳՈՒՆՅԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Հռոմեական քաղաքականության անհաջողությունները.— հայկական պատերազմի նախապատրաստությունները և Կոբուլունի ուղարկումն Արևելքի:— 2. Խոսվությունները Պարթևական թագավորության մեջ և ժամանակավոր զինադադարը.— հռոմեական զորքի մարզումը և ձմեռումը Կարնո սահմանափակումը:— 3. Ռազմական գործողությունները Տրդատի դեմ.— Բանակցությունների անհաջող վախճանը:— 4. Ներքինի արեւելյան նոր քաղաքականությունը:— 5. Կոբուլունի արեւմտեցումը դեպի Արեւածառ.— արեւմտեցի նախապարհի ուղղությունը:— 6. Արեւածառի առումը և կործանումը.— Կոբուլունի արեւմտեցումը դեպի Տիգրանակերտ.— կռիվները մարդերի հետ:— 7. Արեւմտեցի նախապարհի ուղղությունը.— հռոմայիցիների գրաված մարտությունների անհաջողությունը:— 8. Տիգրանակերտի և Լեզիսի գրավումը.— Տիգրան Զ-ը՝ Հայաստանի թագավոր.— Տիգրան Զ-ի հարձակումը Ադիաբենի վրա:— 9. Պարթևների գալույթը և պարթևական պատերազմը Հռոմի դեմ:— 10. Զինադադարը պարթևների հետ և նրա պայմանները:— 11. Հայաստանը հռոմեական նահանգ դարձնելու նոր ծրագիրը:— 12. Կեսեմիսի Պեսուսի արեւմտեցումը Հայաստան.— Վաղարշ Ա-ի հաղթությունը և Պեսուսի գործարանների անձնադուրսը:— 13. Խաղաղությունը բանակցությունները Հռոմի դեմ:— 14. Կոբուլունի ջրված արեւմտեցումը իրավունքները և Հռոմի հաղթանակը կայացած համաձայնությունը:— 15. Տրդատի ուղևորությունը Հռոմ և հանդիսավոր թագադրությունը:— 16. Արեւածառ քաղաքի վերածինությունը:— 17. Հիստորիություններ Տրդատ Ա-ի մասին Խոսեմիսի և Ագարանգեղոսի երկրում:

Ինչպես վերև տեսանք, Հայկական Հարցը դառել էր հռոմեական քաղաքականության համար մշտական մտահոգություն առարկա: Թեև Հայաստանը Հռոմի դերի չլիանությունն էին ենթարկել և Տիրերիոսը (20 մեր թվ. առ.), և Կայոս Կեսարը (2 մեր թվ. հ.), և Գերմանիկոսը (18 մեր թվ. հ.), և Վիտելլիոսը (36 մեր թվ. հ.), սակայն ժառանգորդներն իրենք Հայաստանում կատարել էին սիզիֆյան ապարդյուն աշխատանք: Հռոմեական քաղաքականությունը, ինչպես շատ ճիշտ նկատել է Մոմ-

գենը, չարունակ ջուր էր ածել մաղի մեջ¹։ Հռոմայեցիները պարբերական անհաջողութիւնները պետք է վերադրել, իհարկե, ոչ միայն Պարթևական թաղավորութեան, այլ, գլխավորապես, հայ ժողովրդի ուժեղ ու համառ ընդդիմութեանը, որը պաշտպանում էր իր երկրի ինքնուրույնութիւնն ու անկախութիւնը։

Իր նախկին քաղաքականութեան, ավանդական ուղիից Հռոմը շեղվեց, ինչպես ներքև կտեսնենք, Ներոնի ժամանակ և տասնամյա պատերազմից հետո նա հարկադրված եղավ համաձայնելու, որ Հայաստանում հաստատվի հայ Արշակունյաց թաղավորութիւնը։

Հայաստանի գրավումը պարթևների կողմից 54 թվին (մեր թվ. հ.) հավասարոր էր հարկավ պատերազմի հայտարարութեան, ուստի և երիտասարդ Ներոնը, որի խորհրդատուներն էին նրա խնամակալ Սենեքա փիլիսոփան և պրետորիականների պետ Ռուտոսը, իսկույն ձեռք առավ համապատասխան միջոցներ։

Հռոմեական լեգեոններն ուղարկվեցին սահման Եփրատ գետի մոտ, որի վրա գցվեցին կամուրջներ, Կոմմազենի Անտիոքոս և Քաղկիսի Ագրիպպա թագավորներին հրաման տրվեց նախապատրաստել պատերազմի համար իրենց զորքերը։ Փոքր Հայքի թագավորութիւնը, որ հիմնվեց Հայաստանի կողքին, տրվեց Արիստոբուղոսին, որը Հերովդեսի սերունդիցն էր, իսկ Մոփքի թագավորութիւնը՝ Սոյմեոսին, որն էմեսայի իշխանների տոհմիցն էր։ Այս թագավորութիւնները պատերազմի ժամանակ մեծ կրեորութիւն ունեին, որովհետև նրանք, իբրև դաշնակիցներ, հռոմայեցիների տրամադրութեան տակ էին դնելու իրենց տեղական ուժերը։ Պատերազմական գործողութիւնների համար Հայաստանի ղեմ ընական բազա էր Կապպադովկիան, ուստի և իբրև կուսակալ ու զորքերի հրամանատար ուղարկվեց այս նահանգը հռոմեական նշանավոր զորավար Կլեյոս Դոմիտիոս Կորբուլոնը, որին պետք է ենթարկվեին նաև դաշնակից թագավորները։ Սխառմանակ հռոմեական ղեկավարտիւն և հռոմեական Ռակին այժմ ևս Պարթևական թաղավորութեան մեջ աշխատեցին առաջ բերել ներքին խռովութիւններ և ապստամբութիւններ։ Վաղարշ Ա-ի դեմ իբրև դահի թեկնածու ոտքի հանվեց պարթև-

1 Mommsen, Römische Geschichte, Bd. V, էջ 384։

վական նախկին Վարդան թագավորի որդին¹։ Բացի այդ, դարձյալ Հռոմի դրդամամբ մեծ ապստամբությունն ընկվեց նաև Վրկանում, Այս ներքին խռովությունները Վաղարշի ձեռքերը կապեցին, և նա չկարողացավ մեծ օղնություն հասցնել Տրդատին, որը դառել էր Հայաստանի թագավոր։ Վաղարշը ստիպված եղավ նույնիսկ վերանորոգել հռոմայեցիների հետ հին բարեկամությունը և ուղարկեց նրանց պատանդներ (55 մեր թվ. հետո)։ Նա կարծում էր, որ բարեկամական հարաբերությունների շնորհիվ պատերազմը կհետաձգվի և Հռոմը առժամանակ կհանդուրժե իր եղբորը իբրև Հայաստանի թագավոր։

Ձնայած քաղաքական բարենպաստ այս սլաշմաններին՝ ինքը Կորբուլոնը ևս հարկադրվեց հետաձգել պատերազմը Տրդատի դեմ ավելի քան երկու տարով։ Նա պատերազմը ի վիճակի չէր իսկույն սկսելու, որովհետև երկարատև խաղաղության պատճառով Արևելքում եղած լեզեոնները անպետքացած և անբարոյացած էին և չէին կարող կռվել և դիմանալ պատերազմի դժվարություններին։

Միայն 57 թվին մեր թվականությունից հետո հռոմեական վերակազմված ու կարգապահության վարժված զորքերը, անցնելով սահմանը՝ մտան Հայաստան։ Այնտեղ նրանք ձմեռեցին Բարձր Հայքում, հավանորեն, Կարնո սարահարթում, ուր Կորբուլոնն ամբողջ ձմեռը (57—58 մեր թվ. հ.) մարդեց ու կովեց նրանց, ընտելացնելով Հայաստանի ծանր կլիմայական պայմաններին։

Պատերազմական լուրջ գործողություններն սկսվեցին Հայաստանում 58 թվի դարնանը (մեր թվ. հ.)։ Վաղարշը կռվում էր այդ ժամանակ Վրկանի ապստամբների դեմ, ուստի և Տրդատը հենվելու էր, գլխավորապես, հայկական ուժերի վրա։ Նա աշխատեց խույս տալ մեծ ճակատամարտից և վտրեց պաշտոնանոդական ու պարտիզանական իրքը պատերազմ և ամեն կերպ դժվարացրեց հռոմեական զորքի պարենավորումը։ Սակայն Կորբուլոնը ինքը ևս, իր գործը մաս-մաս անելով՝ մանր մարտեր սկսեց Հայաստանի սահմաններին վրա, որը արևմուտքից ու

¹ Տակիտոսի մոտ (XIII, 7) ասված է. «Այդ ժամանակ Վաղարշի դեմ ուղի ելավ իբրև ախոյան Վարդանի որդին» (Exortusque in tempore aemulus Vologaesi filius Vardanis), Բանասերներից ոմանք փոխանակ Վարդանի որդին (filius Vardanis) կարդում են որդին Վարդան (filius Vardanes) և կարծում են, որ ախոյան իբրև Վաղարշի որդին էր։

Հյուսիսից շրջապատված էր ու օղակված Հռոմի դաշնակից Թա-
լավորություններով: Նրա կարդադրությամբ՝ զանազուն կողմե-
րից Հայաստան էին ներս խուժել նաև Կոմմադենի Անտիոքոս
Թաղալորը, Փարտամանը, Հենիոքենը՝ և, հավանորեն, նաև
Փոքր Հայքի ու Ծոփքի նոր Թաղավորները:

Ընկենլով ծանր դրության մեջ և հույս չունենալով օղնու-
թյուն ստանալու Վաղարշից՝ Տրդատը բանակցություններ սկսեց
Կորբուլոնի հետ, սակայն բանակցությունները հետևանք չտվին,
և պատերազմն անողոք կերպով շարունակվեց և 58 և 59 թվե-
րին:

Հայկական պատերազմին վերաբերող վերոհիշյալ տեղեկու-
թյունները, որ մեջ են բերված Տակիտոսի մոտ՝ ավելորդ չեմ
համարում տալ Թարղմանարար ընդարձակ բովանդակությամբ:

1. Տակիտոս, Տարեգր., XIII, 34՝

«Թեև ձյծգլող պատերազմը, որը պարթևների ու հռոմա-
յեցիների միջև մղվում էր Հայաստանը զրափելու համար՝
մինչ այժմ մեղմ սկիզբ ուներ, սակայն այս տարվա ընթաց-
քում սուր ընթացք ընդունեց, որովհետև Վաղարշը թույլ չէր
տալիս, որ իր եղբայր Տրդատը զրկվի Թաղավորությունից,
որը նրան տվել էր ինքը, կամ այն ընդունե իբրև նվեր այլ
իշխանությունից: Իսկ Կորբուլոնը կարծում էր, որ հռոմեա-
կան ժողովրդի վեհությանն պրժանալայել է, որ ետ ստաց-
վի այն, ինչ որ առաջներում ձեռք էին բերել Լուկոլլոսը
և Պոմպեյոսը: Մանավանդ որ հայերը ևս, իրենց տատան-
վող հավատարմության հետևանքով, հրավիրում էին թե
մեկ և թե մյուս կողմի զորքերին: Իրենց երկրի տեղադրու-
թյամբ և բարքերի նմանությամբ նրանք ավելի մոտ էին
պարթևներին, որոնց հետ խառնված էին ամուսնություն-
ներով. և քանի որ նրանք անտեղյակ էին ազատության,
թեքվում էին ավելի մյուս կողմը՝ դեպի ծառայության
վիճակը»:

2. Տակիտոս, Տարեգր., XIII, 37՝

«Եվ Տրդատը, բացի իր սեփական կողմնակիցներից, օղնա-

1 Տակիտոսի ընդդիրն ունի Insodii (Ինսոդներ) անճարված ընթերց-
վածք, որ սովորաբար կարդում են Moschi (ժոսքեր): Սակայն M. Carey-ը
Classical Review հանդեսում (XXV, 1911, էջ 107) մատնանիշ է արել, որ
նույն ժողովրդի անունը հանդիպում է նաև Տակիտոսի այլ հատվածում
(II, 68) և վերահիշյալ Insodii ընթերցվածք պետք է, հավանորեն, կարդալ
Heniochi. աճս Cambridge Ancient History, vol. X, էջ 880.

կան ուժեր ստանալով նաև իր եղբայր Վաղարշից՝ արդեն ո՛չ թե թաքուն, այլ բացահայտ կերպով պատերազմ վարեց և սկսեց թշնամական դործողություններ Հայաստանում։ Եվ ում որ նա մեղ հավատարիմ էր համարում՝ նրանց երկիրներն ալեբում էր, իսկ եթե նրա դեմ դորքեր էին դուրս բերվում՝ նա խուլս էր տալիս և, սլանալով այս ու այն կողմ՝ ամելի սարսափեցնում էր լուրերի, քան մարտերի միջոցով։ Արդ՝ Կորբուլունը, որ երկար ժամանակ և ապարդյուն կերպով աշխատել էր նրան ճակատամարտ տալ՝ հարկադրվեց թշնամիների օրինակով կռիվը մասնատել։ Նա իր ուժերը ցրեց և կարգադրեց, որ իր օգնականներն ու հրամանատարները միաժամանակ արշավեն զանազան տեղեր։ Նա հորդորեց նույնպես Անտիոքոս թագավորին, որ սահարձակվի իրեն ամենամոտ շրջանների վրա։ Իսկ Փարսամանը, սպանելով իր որդի Հուդամիգդին իբրև դավաճանի և ցույց տալով դրանով իր հավատարմությունը դեպի մեզ՝ իր հին տեղից ղեկավար հայերը արտահայտում էր ավելի համարձակ։ Եվ այդ ժամանակ առաջին անգամ մեր կողմը գրավված ինսոքները (insocii) — այս ցեղն ուրիշներից ավելի էր դաշնակից հռոմայեցիներին — ասպատակեցին Հայաստանի հեռավոր անկոխ վայրերը։ Այսպիսով Տրդատի մտադրությունները ստացան հակառակ ընթացք։ Եվ նա դեսպաններ ուղարկեց, որոնք իր և սլաթեների անունից պետք է բացատրություն պահանջեին, թե ինչո՞ւ, երբ նոր են տրվել պատանդները և նոր է վերանորոգվել բարեկամությունը, որը ճանապարհ է բաց անում նոր ևս բարեկեցիկ ինքը դուրս է վտարվում Հայաստանի իր հին տեղից։ Ինքը Վաղարշը դեռևս տեղից չէ շարժվել այն պատճառով, որովհետև նա գերադասում է դործել անվերջ իրավադատությամբ, քան զենքի ուժով։ Իսկ եթե նրանք համառորեն պնդում են պատերազմի վրա՝ Արշակունիներին չեն պահպանի ո՛չ արիությունը, ո՛չ էլ բախտը, որ արդեն շատ անգամ փորձել են հռոմայեցիներն իրենց պարտությունների ժամանակ։ Կորբուլունը, որին լավ հայտնի էր, որ Վաղարշը հապաղում է Վրկանի ապստամբության պատճառով, պատասխանելով դրան՝ խորհուրդ է տալիս Տրդատին դիմել ինդիքքով կայսրին։ Նա կարող է ձեռք բե-

րել հաստատուն թագավորութիւն առանց արյունհեղության, եթե, թողնելով հեռավոր ու անազան հույսերը՝ հետամուտ լինի լավագույնին և առձեռնին»:

Մեջ բերված այս երկու վկայութիւնը կարևոր են համարվում հաակապես նաև այն տեսակետից, որ սրանց մեջ, ինչպես ենթադրում են եվրոպական պատմաբանները, մատնանշված է Հայկական պատերազմի նպատակը և ակնարկված է Ներոնի արևելյան քաղաքականութեան նոր ուղղութիւնը: Հենվելով, գլխավորապես, այս վկայութիւնների վրա՝ Մոմզենը ենթադրում է¹, որ Ներոնը, չեղվելով Օգոստոսյան քաղաքականութիւնից՝ Հայկական դաճը ուղեցել է տալ ո՛չ թե հռոմեական թեկնածուի, այլ հենց իրեն Տրդատին: Հայկական պատերազմի նպատակն է եղել, նրա կարծիքով, զենքի ուժով սրան ասիպել, որ ստանա իր թագը Ներոնից և ճանաչե հռոմի դերիչխանութիւնը:

Մոմզենի այս տեսութիւնն ընդարձակ կերպով քննութեան են առել և հիմնավորել են նաև Հենդերսոնը և Վերներ Շուրը: Վերջինս առանձնապես մատնանշում է, որ Կորբուլոնի վերոհիշյալ պատասխանը Տրդատին (տե՛ս վկայութ. 2) մի պարզ արձապանք է Ներոնի կառավարութեան արևելյան նոր քաղաքականութեան:

Եվրոպական պատմագիտութեան այս գիտողութիւնները, որ միանգամայն ճիշտ են, վերարբերում են ըստիս Ներոնյան քաղաքականութեան նպատակներին, Հայկական պատերազմի առաջին տարիներում: Իսկ նույն պատերազմի վերջին տարիներում նոր այդ քաղաքականութիւնը ենթարկվեց, ինչպես կը տեսնենք, կարևոր փոփոխութիւնների: Ուստի ավելի քան վիճելի է Վերներ Շուրի ընդհանուր եզրակացութիւնը, որի վրա հենվելով՝ նա առանձնապես շեշտում է «կայսերական քաղաքականութեան համառ հետևողականութիւնը և նպատակին անչեղ ձգտումը տասնամյա կռիւների հարափոխութիւնների մեջ»²:

Երբ այլևս հույս չմնաց Տրդատի հետ խաղաղ կերպով համա-

1 Mommsen, Römische Geschichte, V, 42 383—385.

2 S. Henderson B. W., The Life and Principate of the emperor Nero, London, 1903. Դր. Վերներ Շուր, Ներոն կայսեր արևելյան քաղաքականութիւնը, Թարգմ. Մ. Զապոգյանի, Վիեննա, 1930.

3 S. Շուր, նույնը, էջ 26.

4 Նույնը, էջ 16—17.

ձայնութեան զալու՝ Կորբուլոնը վճռեց խորտակել հայերի ուժը. վճռական ճակատամարտում և իր ամբողջ բանակով ուղղվեց դեպի Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքը։ Նրա այս արշավանքի ճանապարհը պարզ կերպով որոշվում է Պետինդերյան քարտեզի այն հին ուղեգծով, որով 66 թվին (մեր թվ. առաջ) եկել էր Արտաշատ Պոմպեյոսը¹։


Հռոմեական նրա ղորաբանակը, որը 57 թվին (մեր թվ. հ.) Սատաղից Գաղատուիձի վրայով եկել էր այժմյան Էրզրումի շրջանը՝ այստեղից Քյուիրեքյոյի վրայով դնացել էր Ալաշկերտի դաշտը և աֆուհեան Հայկական Պար կամ Աղրի-դաղ լեռնաշղթայի հարավային կողմով և Կուջաղի լեռնանցքով մտել էր Արարատյան դաշտը, ուր գտնվում էր Արտաշատը։ Պետինդերյան քարտեզում նշանակված այդ հին ռազմուղին մանրամասն լուսաբանված է «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխարհագրական իմ ուսումնասիրութեան մեջ (էջ 17—82)։ Հենց այս ճանապարհի վրա է գտնվում, ինչպես մանրամասն ցույց ենք տվել այդ աշխատութեան մեջ, Տակիտոսի հիշատակած Վոլանդ ամրոցը (castellum Volandum), որը նվաճելուց հետո Կորբուլոնը իջել էր Այրարատ և դրապել էր Արտաշատը։

Ի նկատի առնելով, որ պատմագիտական հայ և օտար երկերում սխալ է որոշված թե Վոլանդ ամրոցի տեղը և թե Կորբուլոնի արշավանքի ճանապարհը դեպի Արտաշատ՝ ավելորդ չեմ համարում կանգ առնել կարևոր այս խնդիրների վրա և թարգմանաբար մեջ բերել Տակիտոսի համապատասխան վկայութիւններն առանց կրճատումների։

1. Տակիտոս, Տարեգր., XIII, 39՝

«Եվ Կորբուլոնը, որպեսզի կռիվն իրուր չձգձգվի և որպեսզի հարկադրե հայերին պաշտպանելու այն, ինչ որ իրենցն էր՝ որոշում է ոչնչացնել նրանց ամրութիւնները։ Ինքը վերապահում է իրեն այս շրջանում ամրութիւններից ամենազորեղը, որն անվանվում էր Վոլանդ. իսկ ավելի իրջրերը հանձնարարում է, որ դրալին լեզատ Կորնելիուս Յլակիւսը և բանակատեղերի պրեֆեկտ Ինստելուս Կապիտոնը։ Այնուհետև նա զննում է ամրութիւնները, նախապատրաստում է ինչ որ հարկավոր էր նրանց դուռլթով վերցնելու

¹ Տես իմ աշխատութիւնը «Տիգրան Բ. և Հռոմ», Երևան, 1940, էջ 188—189.



ԿՈՐԲՈՒՂՈՆԻ ՃԱՆՈՒԿԱՐԻՐ ՂԵՍԻ ԱՐՏԱՇԱՆ Ե ՏԻԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ:

համար, և խրախուսում է զինվորներին, որ նրանք այդ տեղերը գրավեն չրջող թշնամուց, որը ո՛չ խաղաղություն է ուզում, ո՛չ էլ ճակատամարտ է ընդունում, այլ իր փախուստով բացահայտ կերպով ցույց է տալիս իր նենգությունը և փոքրագությունը. նա հորդորում է նաև, որ նրանք միևնույն ժամանակ հող տանեն ձիուք բերելու և փառք և ալար:

Ապա նա, բաժանելով զորքը չորս մասի՝ նրանցից ոմանց հաւաքում է վահաններից կաղմված ծածկի տակ և տանում է քանդելու պատնեշները. ոմանց կարգադրում է մոտեցնել պարիսպներին սանգուղքները. շատերին հրամայում է նետիչ մեքենաներով ձգել ջահեր և նիզակներ. իսկ նետաձիգներին ու պարսավորներին տեղ է հասկացվում, որպեսզի նրանք արձակեն հեռվից կապարե դնդակներ: Շարժումը պետք է ամեն կողմից հավասար թափով լիներ, որպեսզի թշնամու որևէ մասն օգնություն չհասցնե՝ նեղն ընկածներին:

Այնուհետև կովոդ զորքի ոգևորությունն այնքան մեծ եղավ, որ արդեն օրվա երրորդ մասի ընթացքում պարիսպները կովոդներից մաքրվեցին, դարպասների նիզերը խորտակվեցին, ամրություններն առնվեցին վերելքով և բոլոր հասակավորները մատնվեցին սրի. իսկ հռոմայեցիները չկորցրին և ո՛չ մի զինվոր և ունեցան միայն քիչ վիրավորներ:

Այդ չկովոդ հասարակ ժողովուրդը վաճառվեց ստորկուլթյան. մնացած ավարը բաժին ընկավ հաղթողներին: Նույնպիսի հաջողություն ունեցան նաև լեգատն ու պրեֆեկտը, և երեք ամրությունները միևնույն օրը նվաճելուց հետո՝ մյուսներն անձնատուր եղան բնակչության ահաբեկման պատճառով և ոմանք հոժարակամ:

2. Տակիտոս, Տարեգրութ., XIII, 40՝

«Այնուհետև Կորբուլոնը լիահույս էր, որ կարողանալու է հարձակվել Արտաշատի վրա, որը երկրի մայրաքաղաքն էր: Ասկայն լեգեոնները նա չէ տանում ամենամոտ ճանապարհով, որովհետև՝ եթե նրանք Արաքս գետը, որը ողողում էր քաղաքի պարիսպները, անցնելու լինեին կամուրջով՝ կընկնեին թշնամու հարվածի տակ. ուստի և անցնում են գետը հեռվում՝ լայն օւ ընդարձակ ծանծաղուտով»:

Այս վկայութիւններէց պարզ երևում է, որ Վոլանդ տմբութեան տեղը պետք է ենթադրել Արտաշատ քաղաքից ո՛չ չատհեռու և այնպիսի մի շրջանում, որտեղ իրար մոտ են գտնուել մի շարք ամբուլթիւններ: Այդ՝ ի նկատի ունենալով, որ Պետինդերյան քարտեզի Սատաղ—Արտաշատ ռազմական հին ճանապարհի ուղղութիւնը պարզ կերպով որոշվում է, ինչպես ցույց է տրված վերոհիշյալ իմ աշխատութեան մեջ¹, կարվանսարայի կամ Կուջաղի լեռնանցքով՝ դժվար չէ համոզվել, որ Կորբուլունը՝ առաջ քան Արտաշատի վրա հարձակվելը՝ պետք է նախապես նվաճեր Գայլատու լճի արևելյան կողմիւրում գտնվող այն ամբուլթիւնները, որոնք ստրատեգիական և սլաշտպանողական կարևոր դիրքեր էին Արարատյան դաշտի և Արտաշատի թիկունքում: Վ. Շուբի ենթադրութիւնը, որ Վոլանդը և մյուս «պոսլաքերդերը» դռնվել են Խզդիրի մոտ², պարզապես սխալ է: Հին այս բերդերի ավերակները մինչև այժմ պահպանվել են, ինչպես մանրամասն հաղորդում է Ս. Հայկունին, Կարվանսարայի կամ Կուջաղի լեռնային դժվարամատչելի շրջանում³:

Վոլանդը և մյուս ամբոցները նվաճելուց հետո՝ Կորբուլունի առջև բաց էր ռազմական մեծ ճանապարհը մինչև Արտաշատ: Սակայն նա, ինչպես վկայում է Տակիտոսը, վտանգավոր համարելով անցնել Արաքսը Արտաշատի մոտ գտնվող կամուրջով՝ անցել էր գետը «հեռվում լախ ու ընդարձակ ծանծաղուտով» և հարձակվել էր Արտաշատի վրա Արաքսի ձախ կողմից: Արաքսի անցանելի այս հունը, ինչպես ցույց է տրված դարձյալ վերոհիշյալ իմ աշխատութեան մեջ⁴, համարենք վարդանալերտ ամանի մոտ գտնվող այն ծանծաղուտն է, որը հիշատակված է Սեբեոսի և Ղևոնդի մոտ⁵:

Կորբուլունի 58 թվի արշավանքի ճանապարհը, ինչպես և Վոլանդ ամբոցի տեղադրութիւնը, ինչպես տեսնում ենք, ճշտով որոշվում են:

¹ Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 35 ևն.

² Տես լեռոն կայսեր արեւելյան քաղաքականութիւնը, էջ 28, նաև Anderson, Cambridge Ancient History, vol. X, էջ 762:

³ Տես Ս. Հայկունի, Բագրևանդ ջրաբաշխ գավառ, Վաղարշապատ, 1894, էջ 363—364:

⁴ Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 45—46:

⁵ Տես Սեբեոս, Ս.-Գեորգի, 1879, գլ. ԻԶ, էջ 94. Ղևոնդ, Ս.-Գե., 1887, գլ. Ը, էջ 24:

Կորբուլոնը, ինչպես և Լուկուլլոսը ՅՏ թվին (մեր թվառաջ), ռազմի էր ելել Արտաշատի դեմ, կարծելով, որ Հայաստանի մայրաքաղաքին սպառնացող վտանգը Տրդատին կըստիպե իր հետ վճռական կռիւ բռնվելու: Նա, իրավի, ինչպես որ նա մտածում էր՝ այնպես էլ եղավ: Տրդատը, որը պարտիզանական փոքր պատերազմ էր վարում՝ շտապեց դնալ դեպի Արտաշատ, հարձակվեց հռոմեական արշավող բանակի վրա, բայց հաջողութուն չունեցավ: Այնուհետև նա թողեց Արտաշատը ճակատադէրի կամքին և ստիպված եղավ Հայաստանից հեռանալ Ատրպատական:

Թաղավորի հեռանալուց հետո Հայաստանի մայրաքաղաքը բաց արեց իր դռները Կորբուլոնի առջև և անձնատուր եղավ առանց կռիւի (ՅՏ թ. մեր թվ. հետո): Ենթադրում են, որ ՅՏ/59 թվի ձմեռը Կորբուլոնը իր զորքերի հետ անցկացրել էր Արտաշատում: 59 թվի գարնանը նա դնաց գրավելու հարավում նաև Տիգրանակերտ քաղաքը: Բայց այս նոր արշավանքից առաջ նա Արտաշատ քաղաքը այրեց և հիմնահատակ կործանեց, որովհետև, ինչպես մատնացույց է անում Տակիտոսը¹, այս մեծ քրեդը չէր կարելի պահել առանց ուժեղ պահակազորի, իսկ նա այնքան ուժ չունէր, որ կարողանար զորքի մի մասը թողնել Արտաշատում:

Արտաշատ քաղաքի իսպառ կործանումը սաստկացրել էր հայ ժողովրդի դայրույթը և ատելութունը հռոմայեցիների դեմ, և Կորբուլոնի Արտաշատից Տիգրանակերտ շարժվող բանակի ճանապարհին շարունակվեց պարտիզանական լեռնային պատերազմը: Հռոմեական զորքը ենթարկվեց այս ճանապարհին, դիմաւորապես, մարդերի հարձակումներին: Երբ Կորբուլոնը, վկայում է Տակիտոսը², անցնում էր մարդերի երկրի միջով, որոնք ներսիս ժողովրդի դեմ պաշտպանված էին լեռներով՝ սրանք, որ վարժ էին ավաղակության՝ հարձակվեցին հռոմեական բանակի վրա: Այս ռազմիկ ցեղի դեմ Կորբուլոնն ուղարկեց իրերիներին և սըրանց միջոցով ավերեց նրանց երկիրը ու նրանցից այսպիսով վրեժ առավ օտարների արյունով:

Կորբուլոնի ճանապարհն Արտաշատից Տիգրանակերտ, ինչպես և մարդերի դեմ կռիւների շրջանը, որոնք դեռ մինչև այժմ

¹ Tac. Annales, XIII, 41. համեմատե՛նաև Cass. Dio, LII, 20, 1:

² Annales, XIV, 23:

քաղաքար կերպով լուսարանված չեն՝ ճշտվ ուրուշվում են աշխարհադրական իմ և Մարկվարտի ուսումնասիրությունների օգնությամբ:

Գլխականներն մեծագույն մասը ենթադրել են, որ Կորուլոնը՝ Արտաշատի կողմերից Տարոն անցնելու ժամանակ՝ ենթարկվել էր մարդերի հարձակման Մարդաստանում, որը գտնվում էր Վանա լճից դեպի արևելք¹: Այս ուղղությամբ Կորուլոնի ճանապարհն Արտաշատից Տարոն և այնուհետև Տիգրանակերտ ոմանք մատնացույց են անում Բերկերի, Ոստանի վրայով և Վանա լճի հարավային ափերով², ուրեմն՝ մոտավորապես այն դժով, որ բացատրական իր քարտեզում մատնանշել է Կոնրադ Միլլերը, որպես հավանական ուղի Պետինգերյան քարտեզի Արաաշատ—Տիգրանակերտ դժի³: Պրոֆ. Մարկվարտը Կորուլոնի ճանապարհի այդ խիստ հեռավոր ու ոլորապառլյոս ուղղությունը համարում է անհավանական ու անընդունելի և կարծում է ինքը, որ մարդերի երկիրը, որի միջով անցել էր Կորուլոնը, գտնվել է Տարոնից դեպի հյուսիս-արևելք⁴:

Մարկվարտի այս ենթադրությունը համապատասխանում է իմ կրակացություններին Արտաշատ—Տիգրանակերտ դժի ուղղության մասին և կարելի է, իրիք, հավաստի համարել, որ Կորուլոնի 59 թվի արշավանքի ճանապարհը պետք է ենթադրել Պետինգերյան քարտեզի Բաղավան—Մումր—Դոնվանք—Ռասոսավան հին հաղորդակցության դժով, որը մանրամասն լուսարանված է իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» ուսումնասիրության մեջ (եջ 85—114): Ըստ նոր լուսարանության Տակիտոսի մոտ հիշատակված մարդերի ընակության չորջանը պետք է որոնել Արածանիի հովտի լեռնային վերին չորաններում: Պետք է ասել, որ ըստ այս բացատրության մարդերի ընակության չորջանը չի կարող լինել հին Մարդադի դավաոր, ինչպես այդ ենթադրում է Լեոն⁵, որովհետև այս դավաոր, որը գտնվում էր այժմյան Բինգյուլի հյուսիսակողմում՝ հեռու էր չատ մեր ուրուշած Արտաշատ—Տիգրանակերտ դժից:

¹ Տես Հյուբսմի, «Հին հայոց տեղւոյ անունները», էջ 86, ծան. 1. Այսպիսով, Армения в эпоху Юстиниана, էջ 417:

² Տես, օրինակ, Sandaigian, Histoire documentaire de l'Arménie, t. II, էջ 522. Henderson, The life and principate of the emperor Neron, և ուրիշ:

³ Տես K. Miller, Itineraria Romana, էջ 745—746:

⁴ J. Markwart, Die Entstehung und Wiederherstellung der ztenischen Nation, էջ 23:

⁵ Լեո, Հայոց պատմություն, հատ. Ա, Թիֆլիս, 1917 էջ 461:

Հայաստանի լերկ ու ջրագուրկ լեռներում հռոմեական զորքերը, ինչպես պատմում է Տակիտոսը¹, շատ էին նեղվել ճանապարհի դժվարություններից, ամառնային տոթից և պաշարի ու ջրի պակասությունից: Բայց հետո նրանք, իջնելով մշակված դաշտային շրջանները, քաղել էին այնտեղ առատ հունձ: Մինչև Տաքոն հասնելը հռոմայեցիները գրոհով ու պաշարումով վերցրել էին երկու բերդ, որոնց մեջ ամրացել ու պաշտպանվում էին հայերը: Այդ բերդերի տեղագրությունը կարելի է ենթադրաբար որոշել, Պևտինգերյան քարտեզում Հայկական Պար կամ Ադրի-Պաղ լեռնաշղթայի հարավակողմում, Տիգրանակերտ տանող ճանապարհի վրա, Բագաւան (*Bagauna) և Ծումբ (*Tsumbo) կայարանների մոտ նշանակված ևն դույլ աշտարակներ, որոնք, ըստ երևույթին, ցույց են տալիս, որ այս կայարանները եղել են բերդապահ զորքի կայաններ: Անհատական չէ, ուրեմն, որ Կորբուլոնը կարող էր դրաված լինել հինց այս ամբողջությունները:

Երբ Կորբուլոնն արդեն հասել էր Տաքոն, որը Տակիտոսի մոտ անվանված է regio Taraunitium («երկիր տաւրանիտների»)՝ նրան այնտեղ ներկայացան Տիգրանակերտից ուղարկված պատգամավորները, որոնք հանձնեցին նրան ոսկե պսակ և հայտնեցին, որ քաղաքի դռները բաց են նրա առջև:

59 թվի վերջերին Կորբուլոնը գրավեց Հայաստանի նաև այս մեծ քաղաքը, Տիգրանակերտը, և որովհետև քաղաքացիներն առանց ընդդիմության անձնատուր էին եղել իրեն՝ նա այդ քաղաքը ինայեց և չկողոպտեց²: Բայց Տիգրանակերտի հյուսիսակողմում, ինչպես վկայում է Տակիտոսը³, Կորբուլոնին համառ դիմադրություն ցույց տվեց Լեգերդա (Legerda, այժմյան

¹ Annales, XIV, 24:

² Տես Annales, XIX, 24 և Cass. Dio, LXII, 20: Հակառակ Տակիտոսի և Դիոնիսի տված վկայություններին՝ Փրոնտինուսը հաղորդում է, որ Տիգրանակերտը գրավված էր կարճատև պաշարումից հետո, ընդր Դոմետրոս Կորբուլոնը, —ասում է Փրոնտինուսը (Strategemata, II, 9, 5), —պաշարել էր Տիգրանակերտը և թվում էր, որ հայերը համառ կերպով դիմանալու էին պաշարմանը՝ նա մեծամեծների միջից, որոնց բռնել էր՝ պատժեց Վադանդին և նրա կտրած գլուխը նետիչ մեքենայով դրեց թշնամիների ամբողջության մեջ: Այդ գլուխը, որ օտարազգիների մոտ ամենամեծ հարգանքն էր վայելում, ընկավ պատահամբ ժողովականների մեջ տեղը. տեսնելով գլուխը և սարսափահար լինելով իբր հրաշքից՝ նրանք շտապեցին անձնատուր լինել:

³ Annales, XIV, 25:

Լիճև կամ Իլիճա) ամրոցը, որը դանդաղ էր, Տիգրանակերտից Բալու տանող ճանապարհի վրա: Այդ ամրոցը, որի մեջ ամրացել էր անվեհեր երիտասարդությունը՝ վերջվեց դրոհով երկար դիմադրությունից հետո¹: Պարտիզանական համատարած պատերազմը Հայաստանում և արմուծությունների ուժեղ դիմադրությունը կապ են ունեցել, հալանորեն, Տրդատի ձեռնարկած նոր արշավանքի հետ, որը Ատրպատականից ներխուժել էր Հայաստան իր կորցրած թաղավորությունը վերադարձնելու նպատակով: Սակայն նա այս անգամ ևս հաջողություն չունեցավ, և հռոմեական զորքերը հարկադրեցին նրան վերադառնալ Ատրպատական:

Արտաշատի և Տիգրանակերտի դրավումից հետո Հայաստանը համարվեց վերջնականապես նվաճված: Այս առթիվ Հռոմում կատարվեցին մեծ տոնահանդեսներ, և Ներոնը հուլիսից «իմպերատոր» հինգերորդ (կամ թերևս վեցերորդ) անգամ: Հատկապես Արտաշատ քաղաքի նվաճման առնչությամբ ծերակույտը որոշել էր, որ տոն օրեր հայտարարվեն թե այդ հաղթության, թե այդ մասին հայտարարման և թե ծերակույտին ղեկուցելու օրերը:

Հասած լինելով իր նպատակին՝ Հռոմը այժմ պետք է կարգավորեր Հայաստանի քաղաքական դրություն խնդիրը, և Ներոնը, հետևելով այս անգամ Օգոստոսյան նախկին քաղաքականություն՝ Հայաստանի թագը տվեց Հռոմում ապրող նոր թեկնածուի, Տիգրան Զ-ին, որը Հայաստանի Տիգրան Ե. թագավորի լիզբասադը եղբոր որդին էր (60 թվ. մեր թվ. հ.): Տակիտոսի վկայությամբ՝ սա երկար ժամանակ պատանդ էր եղել Հռոմում և ստորաքարչ ու համբերող էր դառել, ինչպես ստրուկները: Տիգրան Զ-ը դա հետեց Տիգրանակերտում 60 թվին մեր թվականությունից հետո,

Հայ ժողովրդի ստվար մեծամասնությունը դեմ էր այս նոր թագավորին, որը կույր ու հնազանդ դործիք էր լինելու Հռոմի

1 Գարգաշյանը (սֆնական պատմություն Հայոց, Բ, էջ 219), Խալաթյանը («Очерк истории Армении», էջ 277) և ուրիշները սխալմամբ կարծում են, որ երիտասարդություն ամրացել էր ու պաշտպանվում էր Տիգրանակերտի միջնաբերդում: Իսկ Յուստին (Geschichte Irans, էջ 506, ծան. 5) Լեգերդայի տեղը սխալմամբ ենթադրել է Մազաքանից դեպի հյուսիս-արևելք: Լեգերդայի տեղը (= Իլիճա) որոշել է Լեման. Հաուպտը, տես Armenien einst und jetzt, I, 522.

ձեռին: Նա կողմնակից էր Տրդատ Արշակունուն, որն իր թագավորության ընթացքում շահել էր հայերի վստահությունն ու համակրանքը: Այդ իսկ պատճառով Կորբուլունը, որը նշանակված էր Ասորիքի կուսակալ, Հայաստանից հեռանալիս՝ Տիգրան Զ-ի դահլը ներքին խռովություններից ապահովելու համար՝ Տիգրանակերտում թողեց 1000 հոգուց բաղկացած հռոմեական մի զորամաս և մոտ 3—4000 հեծելազոր ու հետևազոր դաշնակիցների զորքերից: Միևնույն ժամանակ նա, Տիգրան Զ-ի լույսին համաձայնությամբ, Հայաստանի սահմանային որոշ շրջանները պտրդեց Կոմմաղենի, Փոքր Հայքի, Պոնտոսի և Իրերիայի դաշնակից թագավորներին՝ Անտիոքոս Դ-ին, Արիստորուլոսին, Պոլեմոն Բ-ին և փորասմանին, որոնք օգնել էին իրեն նվաճելու Հայաստանը:

Հայկական պատերազմից և Հայաստանին թագավոր տալուց հետո՝ իր առաքելությունը Հայաստանում կարող էր Կորբուլունը համարել ավարտված: Սակայն, իրապես, Հայկական Հորցի լուծումը, որ կատարվել էր առանց պարթևների համաձայնության՝ չէր կարող հարկավ լինել հաստատուն ու հարստե: Անհրաժեշտ էր, իհարկե, որ կատարված փաստը հարկադրված լինեին ընդունելու նաև պարթևները: Իսկ դրա համար հարկավոր էր հարված հասցնել ու պարտություն մատնել, բայց Տըրդատից, Նույնպես և Վաղարշ Ա-ին, որի դեմ Պարթևական թագավորության արևելյան կողմերում համառորեն կռվում էր Հռոմի բարեկամ Վրկանը:

Իր թագավորության առաջին իսկ տարում, 61 թվի դարձնանը մեր թվականությունից հետո, Տիգրան Զ-ը, իհարկե, հռոմեական տերերի իր դրդումով՝ հարձակվեց պարթևական ղերիշխանության տակ գտնվող Աշխարենի վրա և Հայաստանի հարևան այդ երկիրը մատնեց ավերածության և կողոպուտի: Հռոմեական կառավարության դրդով յայ ադրեսսիան, որի իսկական դրդապատճառը եվրոպական պատմալիտություն մեջ բավարար կերպով ուշադրության չէ առնվել, բոտ երևույթին, նպատակ է ունեցել հարկադրելու Վաղարշին, որն այդ ժամանակ պատերազմում էր ապստամբների դեմ Վրկանում՝ որ նա, դրվելով երկընտրանքի մեջ, Արտավան Գ-ի նման համաձայնության գա Հռոմի հետ և ընդունե Հայաստանում հաստատված կարգը:

Բայց այս անգամ հռոմեական քաղաքագետների հաշիվները

ճիշտ դուրս չեկան, Հռոմայեցիները ոտնձգությունները և Ադիաբենի ավերածությունն առաջ բերին Պարթևաստանում ընդհանուր զայրույթ ու վրդովմունք: Վաղարշ Ա-ը, աղդվելով այդ տրամադրությունից՝ դադարեցրեց ներքին խռովությունները և, հաշտություն կնքելով արևելքում ու ճանաչելով Վրկանաց աշխարհի անկախությունը՝ սլարթեակա՛ն ամբողջ զորքով շարժվեց դեպի արևմուտք և պատերազմ սկսեց Տիգրան Զ-ի և նրան հովանավորող Հռոմի դեմ:

Տիգրան Զ-ի արշավանքն Ադիաբեն, ինչպես վկայում է Տակիտոսը, համբերությունից հանել էր, մանավանդ, Ադիաբենի թագավոր Մոնոբադին և Հայաստանից վտարված Տրդատին:

«Նմանապես և զահից հալածված Տրդատը, — պատմում է Տակիտոսը, — առանձնապես ծանր տալավորություն էր թողնում իր լուսթյամբ ու զուսպ տրտունջներով: Անգործությամբ չէ, ասում էր նա, որ սլահսլանվում են մեծ պետությունները, այլ մարդկանց ու ղեկերի մղվող սլայքարով: Մարդկային ամենաբարձր վիճակում նա է առալլև արդարացի, ով ալլելի հզոր է, Պահել ինչ որ իրենն է՝ մասնավոր մարդկանց դործ է, իսկ ուրիշների ունեցածի համար կոխմղելը՝ կաղմում է թագավորների փառքը»:

Նկատելով այս մեծ դժգոհությունը՝ Վաղարշ Ա-ը հանդիսավոր ժողով գումարեց, նստեցրեց Տրդատին իր կողքին և ղենելով նրա գլխին Հայաստանի թագը՝ իր սլահնորդական հեծելազորի հրամանատար Մոնեսին և Ադիաբենի թագավոր Մոնոբադին հրամայեց ուղեկցել Տրդատին Հայաստան, դուրս քչել այնտեղից Տիգրան Զ-ին և հաստատել հայկական դոհի վրա իր եղբորը: Իսկ ինքը հալաքեց նույնպես մեծ զորք և շարժվեց դեպի Միջագետք ու սլաոնում էր այստեղից հոռմեակա՛ն Ասորիքին¹:

Այսպիսով 61 թվին մեր թվականությունից հետո սկսվեց Հռոմի համար ծանր ու վտանգավոր պատերազմը սլարթեների հետ, որին մասնակցելու էր նաև Հայաստանի մեծադույն մասը, որը ջերմ կուսակից էր Տրդատ Ա-ին: Կորբուտոնը, տեղեկություն ստանալով սլարթեական զորքերի հարձակման սնցնելու մասին՝ իսկույն դուշակեց քաղաքական այս նոր դրության վը-

¹ Annales, XV, 1.

² S^e Tacitus, Annales, XV, 2 և Cass. Dio, LXII, 20, 2.

տանգավորութիւնը և հասկացալ, որ այժմ հարկաւոր կլինի համառ ու զեղար պատերազմ մղել և՛ պարթևների և՛ հայերի դեմ: Նա, իհարկե, չէր ուղղում, որ հայկական պատերազմում ձեռք բերած իր փառքը ենթարկվի վտանգի, ուստի և դիմեց Ներոնին և հայանելով նրան, որ ինքը իբրև Ասորիքի կուսակալ՝ պիտի սրաշտպանե իր նահանգի սահմանները, խնդրեց, որ Հայաստանի համար նշանակվի մի այլ զորավար:

Պատերազմի հենց սկզբում Կորբուլոնը խուսափեց իր պատասխանատվութեան տակ առնել այս վտանգաւոր պատերազմը և բաւականացաւ միայն նրանով, որ Տիգրան Զ-ին օգնութեան ուղարկեց երկու նոր լեգեոն փութով՝ հրամանատարների առաջնորդութեամբ, իսկ ինքը ամրացաւ Շիրառ գետի ափին, որպեսզի սրաշտպանե հարձակումից Ասորիքը:

Չնայած իր ստացած օգնութեան՝ Տիգրան Զ-ը խույս տվեց կռիւից Տրդատի հետ և հոռմեական զորքերի հետ պատասպարմեց Տիգրանահերա քաղաքի ամուր պարիսպների ետևում: Պարթևները եկան պաշարեցին Տիգրանահերա, բայց, ընդունակ չլինելով ամրացրած բերդաքաղաքների դեմ պաշարողական պատերազմ վարելու՝ քաղաքը չկարողացան առնել:

Պետք է ասել, որ Տակիտոսի մոտ, որի ազբյուրը «Տարեդրութիւններ»-ի այս մասում Կորբուլոնի «Հիշատակարաններն» էին՝ մատնացույց է արված, որ իբր թե հոռմեա-պարթևական այս պատերաւմի սկզբում հաջողութիւնը հոռմայեցիների կողմն էր և որ իբր թե Վաղարշ Ա-ը հուսախաբւած էր իր զորքերի ծանր դրութեան պատճառով: Կասսիուս Դիոնը, որն օգտուել է նույն աղբյուրներից՝ նույնիսկ մատնանշում է, որ հուսալքութեմ Վաղարշը Կարբուլոնից ղինաղաղար էր խնդրել և հոռմայեցիներ էր Տիգրանահերա պաշարումը վերացնել, իր զորքերը դուրս հանել Հայաստանից և խաղաղութեան դաշն կնքելու համար ուղարկել Ներոնի մոտ ղեսպաններ²: Սակայն Կորբուլոնի ղեկուցողը այս տեղեկութիւնները, որ Գուլտիոնը իրավացի կերպով համարում է, ինչպես և բոլոր հոռմեական ինքնակենսագրութիւնները, «չափից դուրս ստախոս դիրք»³ միանգամայն անվստահելի են ու անհավաստի:

¹ Tacitus, Annales, XV, 5:

² Cass. Dio, LXII, 20, 8—4:

³ Sba Gutschmid, Geschichte Irans, էջ 131:

Ուշադրաւ է այս տեսակետից, որ հենց ինքը Տակիտոսը բննադատաբար է վերաբերւել ղեպի Կորբուլոնի այդ տեղեկությունները և պարզ կերպով մատնանշել է, որ բանակցությունները ու զինադադարի կնքման նախաձեռնողը եղել է ոչ՝ թե վաղարշ Ա-ը, այլ Կորբուլոնը, որն ուղեցել է հետաձգել պատերազմը, որպեսզի պարթևների դեմ կռիւ մղե ոչ թե ինքը, այլ նոր զորավարը, որ Հռոմից ուղարկւած էր Հայաստան¹:

Առանձնապէս հետաքրքրական է, և կնքւած զինադադարի պայմանները, որոնք բացահայտ կերպով վարկաբեկիչ էին Հռոմի պրեստիժի համար: Ըստ այդ պայմանների՝ Վաղարշ Ա-ը համաձայնեց ղեսպանություն ուղարկել Հռոմ և ինդերել, որ Հայաստանի դահլ տրվի իր եղբորը, և նա հրամայեց Մոնեսին դադարեցնել սրտերազմը, վերացնել Տիգրանակերտի պաշարումը և իր զորքերը դուրս հանել Հայաստանից: Իսկ Կորբուլոնը նույնպէս դուրս տարաւ Տիգրանակերտից ու Հայաստանից Տիգրան Զ-ին պաշտպանող հռոմեական զորաբանակը:

Այս կարգադրութեան հետևանքը եղաւ, բնականաբար, Տիգրան Զ-ի հեռացումը Հայաստանից ու նրա գահընկեցությունը: Հռոմայեցիների համար վարկաբեկիչ էր, մտնալանդ, այն, որ Հայաստանը, Տիգրան Զ-ի հեռանալուց հետո, ինչպէս Տակիտոսի չփոթ ու տատամսող վիճակություններից անուղղակի կերպով եզրակացնում է Մոմզենը, տրվեց Տրդատին, որը նորից վերադարձաւ իր թալալորությունը²:

Վաղարշ Ա-ի խաղաղութեան առաջարկը Հռոմում չընդունւեց, և նրա ղեսպաններին, ներոնը տվեց, ինչպէս վիճալում է Կասսիուս Դիոնը, խուսալիողական ու անորոշ պատասխան³: Յի թվին մեր թվականությունից հետո Արեւելք ուղարկվեց, իբրեւ Կասպալուկիայի կուսակալ և իբրեւ հրամանատար Հայաստան արշալուղ հռոմեական բանակի՝ Կեսենիուս Պետուսը: Հռոմն այս անգամ նորից հրաժարվել էր Օգոստոսյան արեւելյան քաղաքականությունից և վճռել էր Հայաստանը վերադարձնել ու վերածել հռոմեական նահանգի: Ինչպէս վիճալում է Տակիտոսը⁴, Պետուսը, դալով Կասպալուկիա՝ հայտարարեց, որ ինքը հաղթածների վրա ղնեյու է հարկ,

¹ Tacitus, Annales, XV, 6:

² S. Mommson, Römische Geschichte, V, էջ 388, ծան. 1:

³ Cass. Dio, LXII, 20, 4:

⁴ Tacitus, Annales, XV, 6:

ստորագրելու է նրանց հռոմեական օրենքներին և թագավորի փոխարեն, որը միայն ստվեր էր, ենթարկելու է նրանց հռոմեական իշխանության:

Ներոնի այս նոր քաղաքականությունը միանգամայն հետևողական էր, որովհետև երկարատև փորձը պետք է համոզած լիներ հռոմեական քաղաքագետներին, որ հայ ժողովրդի ստվար մեծամասնությունը չէ հանդուրժելու Հռոմի ընտրած թագավորներին, որոնք նրա կամադուրկ համախոհներն էին ու արքայակները, և որ սրանց պահպանումը հնարավոր էր լինելու միմիայն հռոմեական ղեկի ուժով և դրամական մեծ ծախսերի միջոցով: Եթե Հռոմը, ինչպես շատ ճիշտ նշում է Մոմզենը¹, չէր ուզում հայաստանը թողնել Տրդատին՝ նա պետք է, բնականաբար, աշխատեր այդ թագավորությունը վերածել հռոմեական նահանգի: Իսկ այս քաղաքականության շնորհիվ, բնականաբար, այժմ վտանգի էր ենթարկվելու ոչ միայն հայ պետության անկախությունն ու ինքնուրույնությունը, այլև նրա դուրսը:

61 թվի ամառը մեր թվականությունից հետո հռոմեական նոր զորավարը, որը Մելիտենի վրայով մտել էր Մոփք, ուղեց անցնել Տավրոսյան լեռները և նորից վերցնել Տիգրանակերտը, որը հռոմեական զորքերը դառարկել էին մի տարի առաջ: Մոփքից նա իջավ Մովսէ լճի մոտով: այժմյան Արղանայի կողմերը և, երկար դեգերումներից հետո, որոնց նպատակն էր Հայաստանի այս մասերի ավերումն ու կողոպտումը՝ դրոհով դրավեց այստեղ մի քանի հայկական ամրություններ: Սակայն որովհետև ձմեռն արդեն վրա էր հասնում՝ նա իր զորքերը ետ տարավ Խարբերդի դաշտը և որոշեց ձմեռել մոտակա ամրացրած տեղերում:

Կորբուլոնը, որի փոխհարաբերությունը Պետուսի հետ արդեն պատերազմի սկզբից վատ էր՝ 62 թվի մեծ կռիվներին դեմքե չմասնակցեց: Նա կառուցեց Եփրատ գետի վրա, հավանորեն, այժմյան Զեզմայի մոտ, ամրություններ և նավակամուրջ և իր երեք լեղեռներով պաշտպանում էր Ասորիքը պարթևական հարձակումից: Իր մեծ զորաբանակի հետ Վաղարշ Ա-ը դառնում էր այդ ժամանակ Կորբուլոնի զորքերի դիմաց Միջագետքում: Տեսնելով որ Ասորիքի վրա հարձակվելը հնարավոր չէ՝ նա իբ

¹ Römische Geschichte, V, էջ 389.

մեծ ուժերով մտալ Հայաստան, ուր հայապարթեական զորքերն արդեն գրավել էին Տիգրանակերպը, և կարճ ճանապարհով Տիգրիս գետի հովիտներով, գնաց դեպի Մոսիք Պետուսի գետ: Տավրոսի լեռներն անցնելիս պարթևները պարսուկյան մատնեցին և ետ չարտեցին հռոմեական բոլոր զորամասերը, որոնք պահպանում էին լեռնանցքերը:

Այնուհետև նրանք իջան խորրերդի դաշտը, ուր գտնվում էր հռոմեական հյուսիսային բանակը, Պետուսը իր հեծելազորի մի մասը անդամորել էր դաշտում, իր կնոջն ու երեխային, նաև ապաչաբայիներին, պատսպարել էր Արածանիի հարավակողմում գտնվող Արշամաշատ ամրոցում (այժմյան Նաշարանի ու Սարաբայի միջև¹), իսկ կովոդ զորքը ետ էր քաշել ու ամրացրել էր ճամբարի մեջ Արածանիի ափին Հոանդեյայի մոտ, որն Ադոնցը ենթադրաբար նույնացնում է Փավստոսի հիշատակած Եռանդ տեղանվան հետ²:

Հռոմեական զորքերը, որոնք արդեն պարսուկյան էին մասնավել Տավրոսյան լեռներում ու նաև դաշտում՝ այնքան էին սարսափել թշնամուց, որ չհամարձակվեցին, դուրս դալ իրենց ամուր դիրքերից: Զինվորական կարգապահությունը զորքի մեջ հետզհետե թուլացավ և մեծ չափեր ընդունեց նաև դասավորությունը:

Պետուսը, որ հուսահատվել ու իրեն կորցրել էր՝ օդնություն խնդրեց Ասորիքում գտնվող իր ընկերակցից, բայց միևնույն ժամանակ, չսպասելով նրա պատասխանին՝ բանակցությունների մեջ մտալ վաղարչ Ա-ի հետ, որն արդեն չընտանել ու պաշարել էր նրա զորքը: Եվ օդնության հասնելուց երեք օր առաջ, երբ Կորբուլոնն անցել էր Կոմմաղենի միջով և հասել էր Մելիտենի շրջանը և գտնվում էր Մոսիքի սահմանի մոտ՝ որդեն Հոանդեյայում կնքվում էր հռոմայեցիների համար ամրոթաբեր դինադադարի դաշինքը, որի համաձայն Պետուսը ամրոջ իր զորքով անձնատուր եղավ պարթևներին (62 մեր թվ. հ.):

Պաշարված հռոմայեցիները, որոնց հետ բանակցել էր հեծելազորի հրամանատար Վասակը (որը, ըստ երևույթին, հայ էր), համաձայնել էին հանձնել պարթևներին իրենց զրալած

¹ Տե՛ս E. Huntigton, Verhandl. des Berlin. Anthropol. Gesell. 1900, էջ 149
Համեմատե՛ J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, էջ 240—241:

² Տե՛ս «Армения в эпоху Юстиниана», էջ 36—37:

բոլոր ամբողջունները, իրենց զենքերը ու պարենի պաշարները և պարտավորվել էին զուրա գալ Հայաստանից: Վաղարշ Ա-ը համաձայնել էր դեսպանություն ուղարկել Հռոմ և խնդրել, որ Հայաստանի գահը տրվի Տրդատին: Իսկ Պետուսը երգում էր տվել ու խոստացել, որ մինչև բանակցությունների վերջանալը Հռոմում Հռոմայեցիներից ոչ ոք չպետք է ներս մտներ Հայաստան:

Հռոմեական զորքի ամոթալի փախուստը Հայաստանից մտքառմասն նկարագրված է Տակիտոսի մոտ¹: Պետուսը, ինչպես վկայում է Տակիտոսը, մի օրվա ընթացքում անցել էր քառասուն հռոմեական մղոն (մոտ 60 կիլոմետր), թողնելով ճանապարհին վիրավորներին: Հռոմայեցիների համար ստորագրուցիչ էր նաև նրանց ճամբարից զուրա գալը և մեկնումը Հայաստանից:

Քլուբ էր պտտում, — պատմում է Տակիտոսը², — որ լեդեաններն անց էին կացվել ըծի տակով³, պատմում էին և այլ գոթախոս պատահարների մասին, նաև այն, որ նման արարքներ հայերն էին գործել: Որովհետև սրանք, նախ քան հռոմեական, զորքի հեռանալը՝ մտել էին ամբարցրած ճամբարը, շրջապատել էին ճանապարհները և, նկատելով երեւիցե իրենցից խլված ծառաներին ու զրաստներին՝ վերցնում ու տանում էին, նրանք զոռով վերցնում էին հագուստեղենը ու պահած զենքերը, իսկ վախեցած ղեկավորները զիջում էին, որպեսզի կովի ո՛չ մի առիթ չծագի:

Հայկական Հարցի կարգավորման համար Հռանդեյայի մեծ աղետն ունեցավ, բնականաբար, մեծ նշանակություն: Նացույց տվեց պարթևահայկական միություն հպրուսթյունը և հարկադրեց Հռոմին չափավորել իր պահանջները Հայաստանի նկատմամբ, որը նա, ինչպես վերև տեսանք, որոշել էր դարձնել հռոմեական նահանգ:

Իր մեծ հաղթությունից հետո Վաղարշ Ա-ը բանակցության մեջ մտավ նաև Կորբուլոնի հետ և պահանջեց նրանից քանդել Եփրատ գետի վրա կառուցված ամբողջունները և կամուրջը:

¹ Tacitus, Annales, XV, 15—16:

² Նույնը, XV, 15:

³ Քետնի մեջ խլված երկու նիզակների վրա դրվում էր երրորդը, և հարթվածներն անցնում էին միջով, դեռ գցելով իրենց զենքերն ու վերնազգեստը:

Վորրուլոնը, ի նկատի առնելով Պետուսի հետ կնքված դաշինքը՝ ինքը ևս ղինադադար իրեկց և քանդեց ամբողջություններն ու կամուրջը: Եվ Հայաստանում, որի միջից Վաղարշ Ա-ը համաձայնել էր դուրս հանել պարթևական զորքերը՝ մնաց իբրև թագավոր Տրդատը¹:

63 Թվի դարնանը պարթևական ղեսպանությունը եկավ Հռոմ և հանձնեց Ներոնին, ինչպես վկայում է Տակիտոսը², հաղթող թագավորի նամակը. Այդ նամակի մեջ Վաղարշ Ա-ը մատնանշում էր պարթևների զինվորական գերակշռությունը, բայց հայտնում էր, որ ի սեր ընդհանուր խաղաղության ինքը համաձայն է, որ Տրդատը, որն իր քրմական պարականոնությունների պատճառով չէ կարող դալ Հռոմ՝ ղնա հռոմեական զրոշակների ու կայսեր արձանի մոտ և այնտեղ հռոմեական ղեկոնների ներկայությունը ստանա իր արքայական թագը:

Վաղարշ Ա-ի խաղաղության առաջադի դժվար էին, իհարկև, ընդունել, որովհետև Հռոմի համաձայնությունը, ինչպես ղատ ճիշտ մասնանշում է Մոմդենը³, կարող էր հասկացվել իրև վավերացում Հոանդեյայի խայտառակ անձնատրությունի դաշինքի: Իսկ այդ վերավորակա, էր Հռոմի ինքնասիրության և վարկաբեկիչ էր նրա հեղինակության համար:

Ներոնը խորհրդակցություն ունեցավ ականավոր պետական ղործիչների հետ և նրանց համաձայնությամբ որոշեց պատերազմը ղարունակել: Հռոմ եկած պատգամավորությանը նա առատ նվերներ տվեց և պատասխանեց նրանց, որ ինքը պատերաստ է տալու Տրդատին, Հայաստանի թաղը, եթև նա անձամբ դա Հռոմ և իրեն հղատակություն հայտնե⁴:

Պետուսի փոխարեն կասպաղովկիայում նորից կուսակալ նշանակվեց կորբուլոնը, որին, ինչպես և 67 Թվին (մեր թվաաա) Պամպևոսին, տրվեցին արտակարգ իշխանություն (ma-

¹ Տես Anderson, Cambridge Ancient History, էջ 770: Հայկական ու պարթևական պատերազմների ժամանակագրության նկատմամբ գոյություն ունեն որոշ տարաձայնություններ Հավանական կարելի է համարել ղստիս Անդերսոնի տվյալները Համեմատե նաև Henderson B. W., The Chronology of the wars in Armenia A. D. 51—63, Classical Review, XV, 1901 և Anderson G., Review of Henderson's Chronologie, Jahresber. d. philol. Vereins zu Berlin, XXVII, 1901:

² Tacitus, Annales, XV, 24:

³ Römisdie Geschichte, V, էջ 391:

⁴ Տես Cass. Dio, LXII, 22, 3. Համեմատե նաև Tacitus, Annales, XV, 25:

ius imperium) և մեծ զորաբանակ: Սէ Թվի դարնանը մեր Թվականությունից հետո, երբ Հայաստան արշավելու համար բոլոր նախապատրաստություններն ալարտված էին, իր հզոր բանակի ղեկին անցած՝ Կորբուլոնը մտավ Մոփք, որը, ինչպես և 60 Թվին (մեր Թվ. հ.) Հայաստանից անջատված սահմանային մյուս շրջանները, նորից միացվել էր Մեծ Հայաստանին: Նրա ճանապարհի ուղղությունը Տակիտոսի մոտ մատնանշված է Մեքիտեների վրայով և նույն այն ռազմուղիով, որով 69 Թվի դարնանը (մեր Թվ. առաջ) Հայաստան էր ներխուժել Լուկուլոսը¹:


Ինչպես՝ որոշակի վկայում է Կասսիուս Դիոնը, Կորբուլոնը, Թեև արտաբուստ պատերազմի էր պատրաստվում Վաղարշ Ա-ի դեմ, սակայն մտնելովր կերպով, արշավանքից առաջ, նրան նորից խորհուրդ տվեց համաձայնություն կնքել և ուղարկել Տրդատին Հռոմ²: Դժվար չէ, ուրեմն, կռահել, որ Կորբուլոնը չէր ուզում, որ պատերազմը տեղի ունենա, և աշխատում էր վերականգնել Հռոմի հեղինակությունն ու պատիվը խաղաղ ճանապարհով:

Ինչպես որ Կորբուլոնը ծրարում էր՝ այնպես էլ եղավ: Համաձայնությունը շուտով ղեկի եկավ: Պատերազմական դործողությունները դեռ չսկսված՝ Կորբուլոնի մոտ եկան և խաղաղության, բանակցություններ վարեցին Վաղարշ Ա-ի և Տրդատի դեսպանները: Այնուհետև Կորբուլոնը և Տրդատն անձամբ տեսակցություն ունեցան, և վերջինս տվեց իր համաձայնությունը հռոմեական սահանջը կատարելու և ստանալու Հայաստանի թագը Հռոմում:

Մի քանի օրից հետո հռոմեական լեգեոնների և պարթևական հեծելազորի ներկայությամբ տեղի ունեցավ նրանց հանգիստվոր նոր հանդիպումը Հռանդեյայում, ուր պարթևները պաշարել և սլարոության էին մատնել Պետուսի զորքերը: Այստեղ հրապարակի մեջ տեղում կառուցված էր բարձր բեմ և բեմում հատուկ աթոռի վրա դրված էր Ներոնի անդրի-սպտիկը: Տըրդատը համաձայն իրենց սովորության զոհեր մատուցեց և ասյա, վերջնելով իր ղլխից արքայական խույրը՝ դրից կայսեր պատկերի առջև և հանդիսավոր կերպով խոստացավ, որ իր թագը ևս կստանա Ներոնի ձեռից:

¹ Sēu Tacitus, Annales, XV, 27. Համեմատե նաև իմ աշխատությունը «Տիգրան Բ և Հռոմը», էջ 97—99:

² Cass. Dio, LXII, 23, 1:



Կորույնի արձանագրությունը Մոսկովա:

Այնուհետև նա խոնարհական մի նաժակ դրեց Ներոնին և իր աղջկանը թողնելով որպես պատանդ՝ դնաց իր եղբայրներին ու մոր հետ տեսնվելու և պատրաստվելու երկար ճանապարհորդության։ Հռոմեացիները կայացած համաձայնությունից հետո կորբուշտի ղորքերի մի մասը, ըստ երևույթին, ժամանակավորապես մնացել էր Ծոփքում (64/65 մեր թվ. հ.)։ Հենց այդ տարիներից, ինչպես հայտնի է, իտալացի շրջանում պահպանվել են երեք հռոմեական արձանագրություններ, որոնք հաղորդում են, որ այդտեղ կառուցվել է այդ ժամանակ ինչոր մի բերդ¹։

Տրդատի ճանապարհորդությունը Հռոմ մանրամասն նկարագրել է Կասսիուս Դիոնը և այդ մասին լրացուցիչ տեղեկություններ տալիս են նաև Տակիտոսը, Պլինիոսը և Սվետոնիոսը²։ Տրդատը ճանապարհ էր ընկել մեծ շուքով, հավանորեն, 65 թվին մեր թվականությունից հետո։ Երիտասարդ թագավորին ուղեկցում էին իր ընտանիքը՝ կինը և երեխաները, Վաղարշ Ա-ի և Ատրպատականի ու Ադիաբենի թագավորներ Բակուրի և Մոնոբազի որդիները, 3000 հայ ու պարթև հեծյալներից բաղկացած շքախումբը ու նաև հռոմեական հատուկ մի զորամաս։

Քաղաքներն ու ժողովուրդները, որոնց միջով նրանք անցնում էին՝ նրանց ընդունում էին հանդիսավոր կերպով և մեծ պատվով ու ցնծությամբ։ Ուղևորության ամբողջ ծախսը, որ օրեկան կազմում էր մոտ 200·000 դենար-գրաքմե կամ 800·000 սեստերց (== մոտ 200·000 ֆրանսական ոսկի ֆր.), հոգում էր կայսերական գանձարանը։ Ճանապարհորդությունը տևեց խիստ երկար՝ մոտ ինն ամիս։ Տրդատը, իբրև զրադաշտական և քուրմ հրաժարվել էր գնալ ծովով, որովհետև ըստ զրադաշտական կրոնի ջուրը սրբազան տարր էր և նրան չէր կարելի պղծել աղտեղություններով։

Հայաստանից մինչև Իտալիա Արշակունի թագավորը, որը դեռ ծաղիկ հասակումն էր, գեղեցիկ ու բարձրահասակ՝ դնաց իր կնոջ հետ ձիով, թագուհին իր գլխին դրած ուներ ոսկե սաղավարտ, որով դեմքը ծածկած էր պահում ըստ իրենց երկ-

¹ S^{en} Anderson, Cambridge Ancient History, էջ 772. Դր. Վ. Շուր, Ներոն կայսեր արևելյան քաղաքականությունը, էջ 72 և 147։

² S^{en} Cass. Dio, LXIII, 1—7. Tac., Annales, XVI, 24. Plin., Nat. Hist. XXX, 16. XXXIII, 54 և Sueton., Nero, XIII և ուրիշ։

րի սովորութեան: Երբ Իտալիա հասան՝ նրանք նստեցին կառ-
քերի մեջ, որ ուղարկել էր Ներոնը:

Այնուհետև նրանք եկան Նեապոլիս, ուր դտնվում էր Նե-
րոնը: Այստեղ նրանց ընդունեցին մեծ ոլառիվներով: Երբ Տրո-
դատը դնում էր ներկայանալու Ներոնին՝ նրան հրամայեցին,
որ սուրը վրայից հանե, ինչպես այդ ընդունված էր կայսերա-
կան ունիպերությունների ժամանակ: Սակայն նա հրաժարվեց
այդ անել և սուրը մեխերով սմրացրեց պսոթանին:

Մոտենալով կայսեր՝ նա խոնարհվեց նրա առջև և, մի ծնկի
վրա չոքած ու ձեռքերը կրծքին խաչաձև բռնած՝ նրա՞ն, անվա-
նեց տեր: Ի պատիվ իր հյուրի՝ Ներոնը Պուտեոլում սարքեց
կրկեսային խաղեր և սուսերամարտություններ, և Տրդատը այն-
տեղ, ինչպես վկայում է Դիոնը, նետեր արձակեց դայսոնների
վրա և միանգամից մի բնտով սպանեց երկու ցուլ²: Իսկ այնու-
հետև Ներոնը նրա նտարալ Հոռոմ, ուր կատարվեց թաղադրու-
թյան հանդեսը:

Հոռոմն ամբողջ զարդարված էր ծաղիկներով, իսկ երկո-
յան՝ հրավառութեան ճրագներով: Քաղաքը դուրս էր թափվել
տներից և ուզում էր թաղավորին տեսնել: Մինչև իսկ տների
կտուրները լցված էին մեծ բաղմությամբ: Հրապարակի մեջ
տեղում, ուր պիտի կատարվեր մեծ հանդեսը՝ չարք շարք կանդ-
նել էր ժողովուրդը, սպիտակ շորեր հալած և դափնե սլափները
դլուխներին, իսկ նրա շուրջը կանոնավոր շարքերով շարվել էր
ղինված զորքը:

Ներոնը եկավ հրապարակ, փայլուն հաղթական պղեսու հա-
գած և շրջապատված ծերակուտականներով և թիկնապա՝ զոր-
քով: Նա բարձրացավ բեմ և նստեց իր համար ոլատրաստված
կայսերական հատուկ դահի վրա: Այնուհետև եկան Տրդատը և
նրա ուղեկիցները, որոնք առաջվա նման ծունկ իջան և խոնարհ
գլուխ տվին: Հետո Տրդատը հանդիսավոր կերպով հայտնեց,
որ ինքն Արչակունի է, Վաղարշի և Բակուրի եղբայրն է, Ներո-
նի ծառան է և կել է կայսեր մոտ նրան ողջունելու համար,

1 Կարելի է ըստիս ենթադրել, որ Տրդատի այս խոնարհումը Ներոնի
առջև պարթևների և հավանորեն, նաև հայերի մոտ ընդունված վասսալական
հպատակութեան ու հավատարմութեան հավաստիացումն էր և որոշ ծիսադա-
րություն էր, որ համապատասխանում էր միջնադարյան Եվրոպայի homma-
gium-ին (=hommage) և Ռուսաստանի челобитье-ին:

² S^cu Cass. Dio, LXIII, 1—7.

որպես իր Միհր աստուծուն: Իսկ Ներոնը պատասխանեց, որ տալիս է Տրդատին Հայաստանի թագավորութիւնը: Ապա կայսրը նրան հրամայեց բարձրանալ իր մոտ, համբուրեց նրան, նստեցրեց յահի վրա մի աստիճան ցած և դրեց նրա գլխին հայկական թաղը: Հանդիսականները ցնծալին աղաղակներով ողջունեցին Հայոց թագավորին:

Հանդեսը վերջանալուց հետո հռոմեական ծերակույտի հրամանով տեղի ունեցավ չքեղ ներկայացում Պոմպեյոսի մեծ թաւրոնի մեջ, որն ամբողջ, բոլոր իր կահարասիքով զարդարված էր ու պատած ոսկով, թանկարժեք կերպասներով և ծիրանիով, և հենց այդ պատճառով հռոմայեցիներն այդ օրն անվանել էին «ոսկեօր»: Ներկայացումը վերջացավ ճոխ խնձույքով:

Թագադրութեան տոնակատարութիւնները վերջանալուց հետո՝ Հայոց թագավորը, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը՝ ստացավ Ներոնից զանազան նվերներ, որոնց արժեքը հասնում էր մոտ 50 միլիոն դենար-դրաքմեի կամ 200 միլիոն սեստերցի (=մոտ 50.000.000 ֆրանսական ոսկի ֆր.): Հռոմեական կայսրը թույլ տվեց, որ վերանորոգվի Արտաշատը և Տրդատն իր մայրաքաղաքի վերաշինութեան համար Իսաւրիայից տարաւ իր հետ Հայաստան բազմաթիւ արհեստավորներ, որ նրան տվել էր Ներոնը:

66 թվին մեր թվականութիւնից հետո Տրդատն իր ուղեկիցներէ հետ վերադարձավ իր թագավորութիւնը և Հայաստանում նրա առաջին դործը եղավ Արտաշատի վերաշինութիւնը, որն ի պատիւ հռոմեական կայսեր անվանվեցավ Ներոնեյա (Nero-neia), այսինքն՝ Ներոնի քաղաք¹:

Հռոմեա-պարթևական փոխզիջական համաձայնութեան չընդհանրելով, որը հետևանք էր, անշուշտ, հռոմայեցիների պարտութեան Հռանդեյայի մոտ՝ Հայաստանում վերջնականապես հաստատվեց Պարթև Արշակունիների իշխանութիւնը և Հայաստանն այնուհետև դառավ Արշակունիների երկրորդ թագավորութիւնը (Secundogenitur): Թեև Տրդատ Ա-ը Հայաստանի նրկատմութեւն ճանաչել էր Հռոմի գերիշխանութիւնը, սակայն

¹ Ի հիշատակ հռոմայեցիների հաջողութիւնների հայկական և պարթևական պատերազմների ընթացքում Ներոնի ժամանակ կտրված են եղել 58, 61, 62 և 63 թվերին (մեր թ. հ.) պղնձի, արծաթի և ոսկե դրամներ զանազան մակազրութիւններով:

Հոռմի այդ գերագույն իշխանութիւնը, ինչպես շատ ճիշտ ժատնանշել է Մոմզենը¹, գրեթե մի ձեականութիւն էր և ավելի անվանական էր, քան իրական: Տրդատի փառահեղ հանդեսները փաստորեն ոչ այլ ինչ էին, քան Հոռմի զինվորական վարկը և քաղաքական հեղինակութիւնը փրկելու պատվավոր մի միջոց: 66 թվից հետո (մեր թվ. հ.) Հայաստանը զտնվելու էր ակնհայտորեն ո՛չ թե հռոմեական, այլ պարթևական ազդեցութեան շրջանակի մեջ:

Տրդատ Ա-ի հանդիսավոր թագադրութիւնը տասնամյա պատերազմից հետո և Արշակունյաց թաղավորութեան հիմնումը Հայաստանում պատմական, իհարկե, խոշորագույն անցքեր էին, ուստի և հայ ժողովրդական ավանդութիւններում նրանց հիշողութիւնը պահպանվել էր երկար դարերի ընթացքում: Ինչպես արդեն ցույց է տվել Գարազայանը², այդ ավանդութիւնները պահված են մասամբ խորենացու Արտաշես Բ-ի պատմութեան մեջ, որի գլխավոր աղբյուրն էր «Հայոց երգն վիպասանաց»:

Վիպասանքի համապատասխան հատվածներից պարզ երևում է, որ առաջին Արշակունի թագավորը Հայաստանում, ինչպես և Պոլեմոն Ա-ի որդին՝ Զենոնը (Արտաշես Գ-ը), կոչվել էին Արտաշեսյան թագավորութեան հիմնադրի անունով Արտաշես, որ եղել է, հավանորեն, Հայաստանի թագավորների տիտղոսը, ինչպես Արշակը պարթևների և Կեսարը հռոմայեցիների մոտ:

Վիպասանքի մեջ հիշված է եղել, օրինակ, որ Հայաստան եկել էր և պատերազմում էր Արտաշեսի դեմ «Դոմետոմն», որը, իհարկե, ո՛չ թե Դոմետիանոս կայսրն է, ինչպես սխալ մամբ ենթադրում է խորենացին, այլ հռոմայեցիների զորավար Դոմետիոս Կորբուլոնն է:

«Այս բանը կամենալով երգել առասպելների մեջ,— պատմում է խորենացին,— ասում են, թե եկել էր մի ոմն Դոմետո, որ ինքը Դոմետիանոս կայսրն է: Բայց ո՛չ թե ինքն էր եկել այստեղ, այլ նրա հրամանը և զորքերը այլաբանորեն նրա անունովն են կոչվում»:

[«Ջայս կամենալով երգել յառասպելսն՝ Դոմետո զոմն ասեն եկեալ, որ ինքն կայսրն Դոմետիանոս. ոչ ինքն եկեալ այսր,

¹ Römische Geschichte, V, էջ 384:

² Տես «Քննական պատմութիւն», Բ., էջ 242—250:

այլ զհրաման նորա և զզօրս այլաբանելով յանուն նորա՝
կոչենք¹։

Տրդատ Ա-ի մասին, բացի վիպասանքի հիշատակությունից
գոյություն են ունեցել և այլ պատմական ավանդություններ,
սակայն խորհնացու և Ագաթանգեղոսի մոտ այդ տեղեկություն-
ները վերագրվել են Տրդատ Մեծին (297—330 մեր թվ. հ.)։
Տրդատ անունով նրանց հայտնի է եղել միմիայն Տրդատ Մեծն
թագավորը։

Որինակ, Ագաթանգեղոսի պատմության 126-րդ գլխում
մանրամասն նկարագրված է Տրդատ Մեծի ճանապարհորդու-
թյունը Կոստանդինոսի մոտ Հռոմ ուղեկցությամբ Գրիգոր
Լուսավորչի, Արիստակեսի և Աղբիանոսի, նաև չորս բղևչանե-
րի, նախարարների ու բազմաթիվ զորքի, որոնց թիվը, Ագա-
թանգեղոսի ասելով, հասնում էր մոտ 70.000-ի։ Գարազայանը
միանգամայն ճիշտ է մատնանշում, որ Տրդատ Մեծի և Լուսա-
վորչի այս երթը Հռոմ «լուկ կեղծիք» է² և արձագանգ է Տըր-
դատ Ա-ի ուղևորությանը Հռոմ, որ մանրամասն նկարագրված
է հունահռոմեական աղբյուրներում։

Նույն այս Տրդատ Ա-ի ճանապարհորդությանն է վերաբե-
րում, Ագոնցի կարծիքով³, անգիր հին զրույցներից վերցված
Ագաթանգեղոսի նաև մի այլ վկայությունը, որ վերագրված է
դարձյալ Տրդատ Մեծին։ Խոսելով իր Պատմության 11-րդ գլխի
համար Տրդատ Մեծի պատժական արշավանքների մասին Պարս-
կաստան և Ասորեստան՝ Ագաթանգեղոսը նրա այս անվերջ աս-
պատակությունների առթիվ տալիս է հետևյալ հետաքրքիր
վկայությունը։

«Այս առթիվ, — ասում է Ագաթանգեղոսը, — պատշաճ հա-
մարվեցին հետևյալ խոսքերը, որ գտնվում էին առակների
կարգի ասացվածներում, թե «իբրև խրոխտ Տրդատը, որը
խիզախաբար ավերեց գետերի թումբերը և իր հանդուգն-
լինելովը մինչև իսկ ցամաքեցրեց ծովերի հորձանքները»։
[«Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի
առակաց, թե «իբրև զսէզն Տրդատ, որ սիգալովն աւերեաց»

¹ Տե՛ս Մովսես Խորենացի, II, ԾԴ, էջ 185 (Տիգրիս, 1913)։

² «Դննական պատմություն», Գ., էջ 358—361։

³ «Армения в эпоху Юстиниана», էջ 483, ծան. 2։

դիտումբա գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում,
զյորձանս ծովուց»¹։

Այս խոսքի իմաստն այն է, ասում է Ադոնցը, որ Թագաւոր-
ըն ծովով ճանապարհորդել էր արնպես, ինչպես ցամաքով²։

Մեջ բերված այս պատմական աղոտ հիշողութիւնները հայ
Արշակունիների հարստութեան հիմնադրի մասին, որ համապա-
տասխանում են օտար աղբյուրների հաղորդած վերոհիշյալ տե-
ղեկութիւններին՝ պարզ ցույց են տալիս, որ Տրդատ Ա-ի ժա-
մանակի պատմական անցքերը խոր տպավորութիւն էին թողել և
նյութ էին դառել անդիր բանահյուսութեան։

61 թվին (մեր թվ. հ.), տասնամյա պատերազմից հետո,
Հայաստանում սկսվեց Արշակունիների դինատիայի իշխանու-
թիւնը և նրա մեջ այնուհետև սկսեց, բնականաբար, ավելի ևս
ուժեղանալ իրանական պետականութեան և իրանական կուլտու-
րայի ազդեցութիւնը։

Հայաստանի օտար զինաստիւնների թագավորները

1. Ադեքսանդր, Անտոնիոսի և Կլեոպատրայի որդին, 34—31 ն. Քր.
2. Արիորարզան, Ատրպատականի Արամվազդ թագավորի որդին,
2—4 հ. Քր.
3. Արտավազդ Դ., Արիորարզանի որդին, շուրջ 4—6 հ. Քր.
4. Տիգրան Ե., Հրեաստանի Հերովդես Մեծի թոռը, շուրջ 6 հ. Քր.
5. Վոնոն, պարթևների Հրահատ Դ. թագավորի որդին, մոտավորապես
11 թ. հետո մինչև 16 թ.
6. Զենոն, կամ Արտաշես Գ., Պոնտոսի Պոլեմոն թագավորի և Պիթա-
ղորիսի որդին, 18—34 հ. Քր.
7. Արշակ, պարթևների Արտավան Գ. թագավորի Մեծ որդին, 34—
35 հ. Քր.
8. Միհրդատ, վրաց Փարսաման թագավորի եղբայրը, 35—37 և 43—
51 հ. Քր.
9. Հոադամիդդ, վրաց Փարսաման թագավորի որդին, 51—52 հ. Քր.
10. Տրդատ, պարթևների Վաղարշակ Ա. թագավորի եղբայրը, 53—
60 հ. Քր.
11. Տիգրան Զ., Տիգրան Ե.-ի Ադեքսանդր եղբոր որդին, 60—61 հ. Քր.
12. Տրդատ, պարթևների Վաղարշակ Ա. թագավորի եղբայրը 62 թվից
հետո (66 թվին Հայաստանի թագը ստացավ Հռոմում ներոնից)։

¹ Ագաթանգեղոս, ԺԱ, էջ 71 (Թիֆլիս, 1914, Ղուկասյան մատենա-
շարան)։

² „Армения в эпоху Юстиниана“, էջ 433, ծան. 2։

Ազգացուցակ Տիգրան Ե. եւ Տիգրան Զ. քաղաքներին

Հերովդես Մեծ, Հրեաստանի թագավոր

Արքեդայոս, Կաղուղոփիլիայի թագավոր
(Կինը՝ հայ թագավորի աղջիկ)

Ադեքսանդր,

Կինը՝

Դլափյուրա

Ադեքսանդր

Տիգրան Ե. (շուրջ 6 հ. թր.)

Տիգրան Զ թգ. Հայոց (60—61 հ. թր.)

Թգ. Հայոց

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՂՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՑԱՆԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԳԻՏԱՆՈՒՐ

ա. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Anderson J. G. C., Cambridge Ancient History, vol. X, 1934, էջ 254—264, 273—282, 743—772.

Aslan Kévoork, Études historiques sur le peuple arménien, Paris, 1909.

Բասմաջյան Կ. Յ., Իսկական պատմութիւնն Հայոց, Կ. Պոլիս, 1914.

Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, Москва, 1918.

Գաբրելյան Հ., Տիեզերական պատմութիւնն, հատ. Ա և Բ, Վիեննա 1849—1852.

Գաբազաբյան Ա. Մ. Բնական պատմութիւնն Հայոց, Ա—Գ, Թիֆլիս, 1895.

Գեյցեր Հ.,շամառոտ պատմութիւնն Հայոց, Թարգմ. Հ. Դր. Վ. Գալմբյարյանի, Վիեննա, 1897.

Gutschmid Alf. von, Geschichte Irans und seiner Nadibarländer von Alexander dem Grossen bis zum Untergang der Arsaciden, Tübingen, 1888.

Դադբաբյան Հ., Ստույգ Հայոց պատմութիւնն, Թիֆլիս, 1914.

Durny Victor, Histoire des Romains, t. II, Paris, 1890.

Drumann, Geschichte Roms, bearbeitet von P. Groebe, Band IV, Berlin, 1899.

Էնո, Հայոց պատմութիւնն, հատ. Ա, Թիֆլիս, 1917.

Халатиниц Г., Очерк истории Армении, Москва, 1910.

Carcopino J. Histoire Générale Գլոցի, Histoire ancienne, troisième partie, Histoire Romaine, t. II, 2—César, Paris, 1937.

Cary M., Ormerod H. A., Tarn W. W., Cambridge Ancient History, vol. IX, The Roman Republic 133—44 b. c., գլուխներ՝ VIII, IX, XIV.

Костанинц К., История Армении, краткий очерк, Москва, 1911.

Помо Léon, Histoire Générale Գլոցի, Histoire ancienne, troisième partie, Histoire Romaine, t. III, Le Haut-empire, Paris, 1933.

Huart Cl., La Perse antique et la civilisation iranienne, Paris, 1925.

Моммсен Ф., Римская история, том второй, перевод В. П. Петерсбургского, Москва, 1887.

Նուլլի, Римская история, том третий, перевод А. Веселовского, Москва, 1887.

- Mommsen Th. Römische Geschichte, Bd. V, dritte Auflage, Berlin, 1886.
 Morgan J., Histoire du peuple arménien. Nancy—Paris—Strasbourg, 1919.
 Justi F., Geschichte Irans, Grundriss der Iranischen Philologie. II Band, 5. Lieferung, Strassburg, 1903.

Нусе Б., Очерк римской истории и источниковедения, издание третье, СПб. 1910.

Нич К. В., История римской республики, Москва, 1905.

Չամչյան Մ., Պատմութիւն Հայոց, Ա., Վեհերիկ, 1784.

Չալիսանյան Ս., Պատմութիւն Հայոց, Կրկրորդ տպագրութիւն, Թիֆլիս, 1895.

Rostkizseff M., Gesellschaft und Wirtschaft im römischen Kaiserreich. Bd. I, Leipzig, 1929.

Sandaljian Jos., Histoire documentaire de l'Arménie, t. II, Rome, 1917.

Tarn W. W., Cambridge Ancient History, v. X, Cambridge, 1934, էջ 81—84, 47—50, 71—82, 112—114.

Tournabise F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.

Ферреро Г., Велачие и падение Рима, т. I, перевод А. Захарова, Москва, 1915.

Բ. ԱՅԼԵՎԱՅԼ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աբխաջան Մ. Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899—1901.

Адопц Н. Армения в эпоху Юстиниана, СПб., 1908.

Հ. Յ. Ասեղյան, Գաղափարական վերաբերութիւններ ընդէջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն. Ք. Տիւնչ 428 յ. Ք., Վեհերիկ, 1912.

Джоселизов И., Государственный строй древней Грузии и древней Армении, СПб., 1905.

Эмин Н. О. Исследования и статьи, Москва. 1896.

Энгельс Ф., Происхождение семьи, частной собственности и государства, Москва, 1932.

Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, Bd. I, Berlin, 1910.

Халатяниц Г., Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1896.

Его же, Армянские Аршакиды, К „Истории Армении Моисея Хоренского“, Москва, 1903.

Christ W., Geschichte der griechischen Litteratur bis auf die Zeit Justinians, dritte Auflage, München, 1898.

Kiepert H., Lehrbuch der alten Geographie, Berlin, 1878.

Հյուբերման Հ., Էջին Հայոց տեղւոյ անունները, Թարգմ. Հ. Բ. Պիլեգիկյանի, Վեհերիկ, 1907, Աղդ. Տատին. ԾԳ.

Hübischmann H., Armenische Grammatik, Leipzig, 1895.

Hultsch Fr., Griechische und römische Metrologie, zw. Bearbeitung, Berlin, 1882.

Макарян Я. А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань, 1930.

Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934.

Նույնի, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետրոսյան քարտեզի, Երևան, 1936.

Նույնի, Տիգրան Բ. և Հոռմը. նոր լուսարանությամբ ըստ սկզբնաղբյուրների, Երևան, 1940.

Նույնի, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930.

Markwart J., Eranschiahr nach der Geographie des Ps. Moses Choren., Berlin, 1901.

Նույնի, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Potsdam, 1919.

Նույնի, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930.

Март Н. А., Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915.

Miller Konrad, Itineraria Romana, Römische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana, Stuttgart, 1916.

Скапот Victor, La province romaine proconsulaire d'Asie, Paris, 1904,

Նույնի, La frontière de l'Euphrate de Pompée à la conquête Arabe, Paris, 1907.

Wachsmuth Curt, Einleitung in das Studium der alten Geschichte, Leipzig, 1895,

Вебер Макс, Аграрная история древнего мира, перевод под редакцией А. И. Петрушевского, Москва.

Քառամյան Ն., Գարթնները Գարսխատանում և նրանց հարաբերությունները Հայոց հետ, Վաղարշապատ, 1897.

ԳԼՈՒԽՆԵՐ Ա.—Զ

Ա. Արմենցիի գաղըր և Գրանց ճնագույն հայրենիքը:—Բ. Արմենցիի Են-
զադրի ուղղությունը և Գրանց ճնագույն գաղթավայրերը:—Գ. Արմենցիի դաժնա-
կից մեղացիները:—Դ. Արմենցիի Արմենյան Պարսկաստանի թիրապետության
թակ:—Ե. Արմենյան և արևմտյան Արմենիան ըստ Քսենոփոնի:—Զ. Արմենցիի
ճեղքանակը և ճառագայտի կենցաղը ըստ Քսենոփոնի:

Հայերի ծագման մասին գոյություն ունեն երկու կարգի
աղբյուրներ: Առաջին կարգի աղբյուրներն են Հին Կտակարանը
և Մար Աբասի կամ Անանուհի ու Մովսես Խորենացու պատմա-
կան երկերը, որոնց մեջ մանրամասն պատմված է Հայերի նա-
խահայր Հայկ նահապետի առասպելը: Այս կարգի տեղեկու-
թյունները, թեև հետաքրքիր են, սակայն, իրապես, կամ քրիս-
տոնեական շրջանի հայ և օտար մատենագիրների կոահումներ
են և կամ առասպելական ավանդություններ են, որոնք չեն կա-
րող համարվել ստույգ և արժանահավատ:

Շնորհիվ պատմագիտության, լեզվագիտության և այլ գի-
տությունների անսահման զարգացմանը 19-րդ և 20-րդ դարերում
Հայերի ծագումը այժմ լուսաբանվում է լեզվաբանության, մար-
դաբանության և արևելագիտության նոր տվյալների ու նաև
արձանագրական ու մատենագրական օտարազգի հին աղբյուրնե-
րի վկայությունների օգնությամբ, որոնք մատչելի են դառնա-
լիս միայն նոր ժամանակներում:

Հին Հայաստանի պատմության հնագույն շրջանի համար
կարևորագույն աղբյուրներն են, նախ և առաջ, ուրարտյան,
ասորեստանյան և, մանավանդ, հին պարսկական բեհուզիր ար-
ձանագրությունները: Հատկապես այս վերջինների մեջ հիշա-
տակված են առաջին անգամ Հայերի նախնիքների և նրանց երկ-
րի արմինիյա (Arminiya) և Արմինա (Armina) անունները,
իսկ հռչակավոր Քեհիստունի արձանագրության մեջ մանրամասն
նկարագրված է նաև արմինների 521—520 թ. ապստամբությունը
Վշտասպյան Դարեհ Ա-ի դեմ:

Ուշադրութեան արժանի են, գլխավորապես, հին-պարսկական հետեյալ արձանագրութիւնները՝

1. Բիսիտունի ժայռի վրա (Bisutun, Βαγιστανα, τὸ Βαγιστανον ὄρος Համադանից Բաղդադ տանող ճանապարհի վրա) փորագրված Դարեհ Ա-ի (522—486 մեր թվ. առաջ) երկբլիզվան ընդարձակ արձանագրութիւնը:

2. Հին Պարսկաստանի Պերսեպոլիս մայրաքաղաքում գտնված Դարեհ Ա-ի արձանագրութիւնը:

3. Նաբէլ-Ռուստամում գտնվող (Պերսեպոլից 15 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք) Դարեհ Ա-ի գերեզմանի պատի վրա փորագրված արձանագրութիւնը:

4. 1935 թվին Պերսեպոլիսում գտնված Բսերքսեսի նոր մեծ արձանագրութիւնը¹:

5. Վանա ժայռի հարավային ճակատի վրա գտնված Բսերքսեսի արձանագրութիւնը:

Վերահիշյալ հինգ գլուխների համար հիմնական աղբյուր են նաև հունա-հռոմեական հին հեղինակների, գլխավորապես, Քսենոփոնի, Հերոդոտի և Ստրաբոնի կարևոր վկայութիւններն՝ Արմենիայի ու արմենների մասին, չոր մատնանշված են կամ թարգմանաբար մեջ են բերված իմ այս աշխատութեան բնագրում և հավելվածում:

Նշանաւոր այս հույն հեղինակներից առաջինը, Քսենոփոնը (մոտավորապես 430—355 մեր թվ. ա.), մասնակցել էր Կրտսեր Կյուրոսի արշավանքին իր եղբոր՝ Արտաքսերքսես Մենմոնի դեմ և Կունաքսայի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո հունական արշավազորի հետ վերադարձել էր Հայաստանի և Տրապիզոնի վրայով Հունաստան (401—400 մեր թվ. ա.): Իր Ἀνάβασις կամ «Արշավանք» աշխատութեան մեջ նա նկարագրում է հույների նահանջը և թանգարժեք տեղեկութիւններ է հաղորդում, ի միջի այլոց, նաև Արմենիայի այն շրջանների մասին, որոնց միջով անցել էին հույները²: Նույն այս հեղինակը գրել է նաև Κύρου παιδεία («Կյուրոսի կրթութիւնը») երկը, որը թեև քաղաքական վեպ է, սակայն իր մեջ պարունակում է

¹ Տե՛ս Ա. Е. Шнигский, Новая надпись Ксеркса. Вест. древ. ист., 1940, 1 (II), էջ 168—172.

² Տե՛ս Anabasis, գիրք III, գլ. 5, 15—18. IV, 1, 1—28. 2, 1—38. 3, 1—34. 4, 1—22. 5, 1—38. 6, 1—27. 7, 1—27. V, 5, 1 և 16—17. 6, 36. VII, 8, 25.

ուշագրաւ Հին ավանդութիւններ արմեններ յասին¹, որոնք
ըստ իրենց էութեան կտրող են որոշ չափով լինել պատմական:

Արմենիայի և հատկապես արմենների ծագման և արևմուտ-
քից արևելք դադթի մասին առանձնապես կարևոր են Հերոդոտո-
սի և Ստրաբոնի հաղորդած տեղեկութիւնները: Հերոդոտոսը
(մոտավորապես 484—425 մեր թվ. առ.), որը ծնվել էր Փոքր
Ասիայի ծովափնյա Հալիկարնաս քաղաքում՝ պատմական իր
հռչակովոր երկը հույն-պարսկական պատերազմների մասին,
որոնց մասնակցել էին նաև արմենները՝ գրել էր Նգիպտոսում
ու Առաջավոր Ասիայում կատարած իր երկար ճանապարհորդու-
թիւններից հետո: Այլևի քան հավանական է, որ նա ևս, ինչ-
պես և Քսենոփոնը, նույնպես անձամբ եղել էր Հայաստանում և
արմենների ու նրանց երկրի մասին² գրել էր, զխաւորապես,
այն, ինչ որ ինքը տեսել էր կամ լսել էր իր ճանապարհորդու-
թիւնների ընթացքում:

Իսկ հույն աշխարհագիր Ստրաբոնը (մոտավորապես 64 մեր
թվ. առաջ—19 մեր թվ. հ.), որը ծնվել էր Փոքր Հայքի
հարևան պոնտական Ամասիա քաղաքում՝ իր Աշխարհագրութեան
մեջ մանրամասն նկարագրել է Հին Հայաստանը, Իբերիան և
Աղվանքը, տեղ տալով նաև այդ երկիրների պատմութեան:
Հատկապես Արտաշեսյան Հայաստանի աշխարհագրութեան և
պատմութեան համար Ստրաբոնի աշխատութիւնը խիստ արժե-
քավոր է՝ իբրև գրեթե ժամանակակից աղբյուր:

Ա Ղ Յ Ց Ո Ւ Ր Ն Ե Ր

Հից Կսակարաց, Յճնդոց, գլ. Ժ, 2—3, Ա. Մնացորդաց, գլ. Ա, 5—6.
Մարգար. Երեմիայի, գլ. ՄԱ. 27. Մարգար. Եզեկիի, գլ. ԻԷ, 14 և գլ. ԼԸ, 6:

Diodori, Bibliotheca Historica, ex recens. L. Dindorfi, vol. I—V, Lipsiae,
1866—1868.

Eudoxos, Ստեփանոս Բյուզանդացու մոտ 'Αρμavίς=Eustathios, Comment
ad Dionysii Periegesin, V, 694. տես C. Müller, Geogr. Graeci minores,
II, էջ 341

Herodoti, Historiarum libri IX, Bibl. Teubn. տես նաև История в 9-ти
книгах, перев. Ф. Г. Мюценко, т. I—II. Москва, 1885—6, 2-е изд.—Москва, 1888.

¹ Տես Cyropaedia, II, 1, 6. 4, 9—32. III, 1, 1—43. 2, 1—31. 3, 1—5.
V, 3, 38 և VIII, 4, 24:

² Տես Herod., I, 72, 180, 194. III, 93, 94. V, 49, 52. VII, 73, 79:

Homeri, Illiās, ed. Guil. Dindorf, Leipzig.

C. Plinii Secundi, Naturalis Historiae, տե՛ս Histoire naturelle de Plinē, avec la traduction en français, par M. E. Laitré, t. I—II, Paris, 1883.

Strabonis, Geographica, recogn. A. Meineke, vol. I—III, Lipsiae, 1915—1925. տե՛ս նաև „География Страбона в семнадцати книгах“, перевод Ф. Г. Мухоморова, Москва, 1879.

*Xenophon*ti, Expeditio Cyri (Ἐκστὰς), recensuit Arnoldus Hug. Lipsiae, 1878.

Նուլյի, Cyropaedia, recen. A. Hug, Lipsiae, 1878.

✓ «Ազարունգեղայ, Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, Տփղիս, 1909.

✓ «Կորին, Պատմութիւն վարուց և մահուան Մերոպայ վարդապետի», Վենետիկ, 1894.

✓ «Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց», աշխատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարութլունյանի, Տփղիս, 1913.

✓ «Յովնանեոս կարդիկոսի Դաստիարակեցեացւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913.

✓ «Սիբէոսի եպիսկոպոսի, Պատմութիւն ի Հերակլէն», Ս. Պետերբուրգ, 1879.

✓ «Փաւստոսի Բուզանդացւոյ, Պատմութիւն Հայոց», Երկրորդ տպագր., Վենետիկ, 1889.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղոնց Ն., Տորք աստված հին Հայոց, Հոռարձան, Վիեննա, 1911, էջ 389—394.

Նուլյի, «Արուեստ Դիոնիսեայ բերականի և հայ մեկնութիւնք նորին» Պետրոգրադ, 1915.

Բասմաջյան Կ., «Իտրեհի արշաւանքն ի Հայս», Բանասեր, հատ. Ա, Պարիս, 1899, էջ 6—45.

Գաբրելյան Է. Հ., «Գննողական իրարոսի խրատող պատմութիւնք», Վիեննա, 1843.

Götte Alb. Das Hettiter Reich, Der alte Orient, 1929.

Delitsch Franz, „Wo lag das Paradies?“, Leipzig, 1881.

Նուլյի, Neuer Kommentar über die Genesis, Leipzig, 1887.

Эллис II. О., Династический список Хайкянов, Москва, 1884.

Lehmann-Haupt C. F., Reisebriefe, Sitzungsberichte der Berl. Akademie, 1900.

Kiepert H., Die geographische Stellung der nördlichen Länder in der phönikisch-hebräischen Erdkunde, Monatsberichte der Königl. Preuss. Akademie der Wissenschaften zu Berlin, 1859.

Նուլյի, Ueber älteste Landes- und Volksgeschichte von Armenien, Monatsberichte der Kön. Preuss. Akademie der Wiss. zu Berlin, 1869.

Նուլյի, Lehrbuch der alten Geographie, Berlin, 1878.

König Fr. W., Relief und Inschrift des Königs Daireos I, Leiden, 1938.

Константинов И. и Захаров А., Хетты и хеттская культура, Москва—Ленинград, 1924.

Kretschmer Paul, Einleitung in die Geschichte der griechischen Sprache, Göttingen, 1896.

Նույնի, Der nationale Name der Armenier Haikh, Anzeiger der Akademie der Wissenschaften in Wien, philos.-histor. Klasse, I—VII, 1932, էջ 1—9. տես նաև «Հանդէս Ամսօրեայ», 1933, հուլիս—օգոստոս, էջ 429—432.

Капанцян Гр., Chetto-armeniaca, Ереван, 1932.

Նույնի, К происхождению национального имени грузин Kharthveli, Երևանի Գեղարվեստական Նամակապարանի «Գիտական աշխատություններ», հատ. XI, Երևան, 1939, էջ 5—21.

Hrozyu B., Die Sprache der Hethiter, Leipzig, 1916—1917.

Նույնի, Хеттские народы и языки, Вест.др. ист., № 2, 1938, էջ 18—33. Մանգղյան Հ., Հոհնարան զարոգը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928.

Март, П. Я., Бог Sabazios у армян, СПб., 1911, Известия Имп. Академии Наук, 1911.

Նույնի, Ави, Ленинград—Москва, 1934.

Markhart J., Untersuchungen zur Geschichte von Eran, I, Göttingen, 1896, տես նաև Philologus, Bd. 54 և 55.

Նույնի, Untersuchungen zur Geschichte von Eran, II, Leipzig, 1905, տես նաև Philologus, Supplementband, X, Heft 1.

Նույնի, Le berceau des Arméniens, Revue des Études arméniennes. Paris, 1928, t. VIII, fasc. 2, p. 210—245.

Նույնի, «Էջ մը Հայ Արշակունեաց հնագոյն պատմութենէն», «Հանդէս Ամսօրեայ», 1906, Թ. 2, փետրվար.

Meyer Ed., Geschichte des Altertums, Bd. II, 1 Abt., 1928.

Murad Fr., Ararat und Masis, Studien zur armenischen Altertumskunde und Litteratur, Heidelberg, 1901.

Никольский М. В., Клинообразные надписи ванских царей, открытые в пределах России, Москва, 1893, տես Древн. Восточные, т. I вып. 3.

Շարի՛ Մ., «Հայաստան, Գրգաստան և արևմտեան Պարկաստան բարեկան-ասորեստանյան սեպագրերու համաձայն», Թարգմ. Հ. Բ. Պիլեգիկյանի, Վիեննա, 1904.

Partsch Jos., Geologie und Mythologie in Kleinasien, Berlin, 1888.

Патканов К., Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб., 1881.

Пуотровский Б. Б., Урарту древнейшее государство Закавказья, Ленинград, 1939.

Roth Karl, Die Bedeutung des Armenischen, «Հանդէս Ամսօրեայ», 1927, 11—12, նոյմբեր—դեկտեմբեր, էջ 741—750.

Sayce A. H., The cuneiform inscriptions of Van, deciphered and translated, Journal of the Royal Asiatic Society, 1882—1930.

Weissbach F. H., Die altpersischen Inschriften, Grundriss der Iranischen Philologie, Bd. II, Lieferung 5, Strassburg, 1903, էջ 54—74.

Weissbach F. und Bang W., Die altpersischen Keilinschriften, Leipzig, 1893.

Տառլյան Հ., «Ուտուճն դասական հայերէն լեզուի», Վիեննա, 1920.

ԳԼՈՒԽՆԵՐ Է—Թ

Է. Արմենական երկիրներ Ադեմանդի Մակեդոնացու և Շա հաջորդների ժամանակաօրջանում:—Ը. Մեծ Հայք, Մոփք և փոք Հայք Սելևկյանցների զիւնաւորայան օրջանում:—Թ. Արսաեսայան և Զարեհյան քաղաքաւորայունցների հաստատումը Հայաստանում:

Ադեմանդի Մակեդոնացու ժամանակաշրջանի պատմության համար ամենակարեւոր վստահելի աշխատութիւնն է փոքրասիական հուշն պատմագիր Փլաւիոս Արրիանոսի «Ադեմանդի արշավանք» (Ἀλεξάνδρου ἀνάβασις) երկը, որը թեւ զրաւած է երկրորդ դարում մեր թվականութիւնից հետո, սակայն հիմնված է, գլխավորապես, Ադեմանդի արեւելյան արշավանքին մասնակցողների՝ Նեփոտոսի թագաւոր Պտղեմեոս Ա-ի (323—285 մեր թվ. առաջ) և Արիստոքուսի հիշատակարանների վրա:

Բացի Արրիանոսից Ադեմանդի Մեծի և նրա արշավանքների ընդարձակ պատմութիւնը գրել է (հավանորեն, առաջին դարում մեր թվ. հ.) նաեւ հռոմեական պատմագիր Կլիստոս Կուրտիոս Ռուփոսը, որն օգտվել էր, մեծ մասամբ, հունական մեզ անհայտ աղբյուրներից: Սրա «Ադեմանդի Մեծի Մակեդոնացու պատմութիւնը» (Historiae Alexandri Magni Macedonis) շարադրված է ճարտասանական արվեստի կանոնների համաձայն և, թեւ, մեծ մասամբ, կասկածելի է ու անարժանահաւատ, բայց, այնուամենայնիւ, հետաքրքիր է ու կարեւոր այն տեսակետից, որ Ադեմանդի Մակեդոնացու մասին տեղ տեղ նրա մեջ սրճադանդ են, գտել թշնամական կարծիքները հակառակորդ կուսակցութեան:

Ադեմանդի Մակեդոնացու հաջորդների և, մասնավորապես, Հայաստանի մեջ այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած պատմական անցքերի մասին թռուցիկ ու հարեանցի տեղեկութիւններ հաղորդում են մեջընդմեջ, գլխավորապես, Դիոդորոս Սիկիւիացին և Պոլեբիոսը:

Դիոդորոսը, որը ծնվել էր Սիկիւիայի Անգլուրիոն քաղաքում առաջին դարի սկիզբներում մեր թվականութիւնից առաջ՝ գրել է ընդհանուր կամ տիեզերական ընդարձակ պատմութիւն, որը կրում է «Պատմական գրադարան» (Βιβλιοθήκη ἱστορικὴ) անունը: Նրա այս երկը բաղկացած է 40 գրքից և գրեթե ամ-

բողոքութեամբ բանաքաղված է կարևոր հին աղբյուրներէց: Նրա քաղվածքները, որ վերաբերում են Աղեքսանդրի հաջորդներին, առանձնապէս կարևոր են, որովհետեւ իր դրօքի այդ մասում Դիոդորոսն, ոգտվել է պատմական աշխատութիւնից Հիերոնիմոս Կարդիացու, որը Աղեքսանդր Մեծի նվաճեա զորավարի մտերիմ բարեկամն էր և հետաղեքսանդրյան շրջանի ամենանշանավոր ու լուրջ պատմագիրներէց մեկն էր: Հավանորեն, հենց այս Հիերոնիմոսի Երկէց կարող էր մասամբ օգտված լինել Նույն պես և Պլուտարքոսը նվաճեաի կենսագրութիւնը գրելիս¹, որն, ինչպէս տեսանք, Աղեքսանդր Մակեդոնացու մահից հետո նշանակվել էր Կապպադովկիայի կուսակալ:

Հայոց պատմութեան ավելի ուշ ժամանակների՝ Արտաշեսյան ու Ջարհյան Թագավորութիւնների սկզբնական շրջանի համար՝ ուշագրաւ աղբյուրներ են, բացի Ստրաբոնի աշխարհագրութիւնից, Պոմպեյուս Տրոգուսի և Պոլիբիոսի պատմական երկերը:

Այս հեղինակներէց առաջինը Օգոստոս կայսեր իշխանութեան ժամանակ, առաջին դարի վերջերում մեր թվականութիւնից առաջ, գրել է լատիներեն լեզվով պատմական ընդարձակ մի աշխատութիւն, որի վերնագիրն է «Փիլիպպոսյան պատմութիւնք»: Իր այդ 44 գրքից բաղկացած աշխատութեան մեջ Պոմպեյուս Տրոգուսը չարադրել էր ըստ հունական հին աղբյուրների այն բոլոր ժողովուրդներին ու թագավորութիւններին պատմութիւնը, որոնք առաջացել էին Աղեքսանդր Մակեդոնացու աշխարհակալ պետութեան քայքայումից հետո: Տրոգուսի այս խիստ կարևոր աշխատութիւնից, դժբախտաբար, պահպանվել են միայն դրօքերի նախաբանները ու նաև համառոտ հատվածներ, որ անշնորհք ու անիմաստ կերպով քաղել ու համառոտել է II կամ III դարի (մեր թվ. հ.) հեղինակ Յուստինոսը:

Նույն այս ժամանակաշրջանի մյուս կարևոր աղբյուրն է խոշոր ու նշանավոր հույն պատմագիր Պոլիբիոսը, որը II դարում մեր թվականութիւնից առաջ գրել է Նույնպէս ընդհանուր պատմութիւն ('Ιστορίαι) և նկարագրել է 220—146 թվերի (մեր թվ. առաջ) պատմական անցքերը, այսինքն՝ այն ժամանակաշրջանը, երբ Հռոմը սկսել էր նվաճել և քաղաքա-

¹ S. W. Wachsmuth, Einleitung in das Studium der Alten Geschichte, Leipzig, 1895, էջ 583:

կանապես իր ազդեցությանը ենթարկել Միջերկրական ծովի շուրջը գտնվող հունական և արևելյան երկիրները: Միջանկյալ կերպով Պոլիբիոսը թանգարտեք տեղեկություններ է հաղորդում նաև իրեն ժամանակակից Մեծ Հայաստանի, փոքր Հայքի, Մոսիքի և Ատրպատականի թագավորությունների մասին:

ԱՂԹՈՒՐՆԵՐ

Appiani Alexandrini, Historia Romana, lib. XI, De rebus syriacis, 1850 ed. L. Mendelssohn, 2 vol., Bibl. Teubn. (Lipsiae, 1879).

Arriani, De expeditione Alexandri, recogn. *Robertus Geier*, Lipsiae, 1873.

Diodori, Bibliotheca Historica, ex recens. L. Dindorfii, vol. I—V, Lipsiae, 1866—1868.

Herodoti, Historiarum libri IX, Bibl. Teubn.

Curtius Rufus, Historiae Alexandri Magni, edidit E. Hedicke, Lipsiae, 1816.

Memnonis, Historiarum Heracleae Ponti, ed. C. Orellius, Lipsiae, 1816.

Justini M. Juniani, Epitoma historiarum Philippicarum Pompei Trogi, ex recens. Fr. Rühl, Lipsiae, 1915.

C. *Plinii Secundi*, Naturalis Historiae, 1816 Histoire naturelle de Pline, avec la traduction en français, par M. É. Littré, t. I—II, Paris, 1883.

Plutarchi vitae, graece et latine, հրաբ. Th. Döhner-ի և F. Dübner-ի, vol. II, Eumenes, Parisiis, 1877.

Polyaeni, Strategematon libri octo, rec. Ed. Woelfflin, ed. Teubn.

Polybi historiae, rec. L. Dindorf, Bibl. Teubn., 1816 նաև „Всеобщая история в 40 книгах“, перевод Ф. Г. Мушкетера, 3 тома, Москва, 1890—1899.

Strabonis, Geographica, recogn. A. Meineke, vol. I—III, Lipsiae, 1915—1925.

Xenophontis, Expeditio Cyri, rec. A. Hug, Lipsiae, 1878.

Fragmenta historicorum graecorum, ed. K. Müller, II և IV.

«Մովսիսի Խոռենացույ, Պատմութիւն Հայոց», աշխատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տիֆլիս, 1913.

«Համառոտ պատմութիւն Վրաց, ընծայեալ Զուսմեքի պատմչի», Չենտիկ, 1884.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Babelon Ernest, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890.

Beloch Julius, Griechische Geschichte, dritter Band, I und II Abteil., Strassburg, 1904.

Droysen J.-G., Histoire de l'Hellénisme, II և III, Paris, 1884—1887.

Kiepert H., Monatsschrift der K. Akademie der Wissenschaften zu Berlin, 1873.

Манандян Я. А., Маршруты понтийского похода Помпея и путь

отступления Митридата в Колхиду. Вест. древн. истории. 3—4 (12—13), Москва, 1940.

Markwart J., Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des, Mar Abas und Ps. Moses Choren., Caucasica, Fasc. 6, 2 Teil, Leipzig, 1930.

Նույնի, Untersuchungen zur Geschichte von Eran, I, Göttingen, 1896.

Մելիսեթ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Կաս. Ա., Երևան, 1934.

Meyer Ed., Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin, 1925.

Նյութեր Հին Հայաստանի պատմության, Երևան, 1935.

Reinach Th., Mithridate Eupator roi de Pont, Paris, 1890.

Тер-Аветисян С. В., Археологическое обследование городища и крепости „Древний Армавир“, Научный Сборник Армфана, Ереван, 1941.

Տեր-Հակոբյան Ս., Արմավիրի երկրորդ նորագույն արձանագրությունը, Նյութեր Հին Հայաստանի պատմության, Երևան, 1935, էջ 145—150.

Տոմաշևի Վ., Սասուն և Տիգրիսի աղբյուրաց սահմանները, Թարգմ. Հ. Բ. Պիլեգիկեյանի, Վրեսնա, 1896.

Орбели II. А., Расшифровка древних надписей, „Известия“, 31 января 1941 г.

Fabricius, Theophanes von Mitylene und Q. Dellius als Quellen der Geographie des Strabons, Strassburg, 1888.

ԳԼՈՒԽՆԵՐ Ժ—ԺԶ

Ժ. Տիգրան Բ-ի և հայ-պոնոսական դառնությունը.—ԺԱ. Հայաստանն աշխարհակալ մեծ պետություն։—ԺԲ. Հելլենիզմի զորեղացումը Հայաստանում և Տիգրանակեսի բազմաթիվ հիմնումը։—ԺԳ. Միհրդատի պատերազմները և փախուստը Հայաստանում ու նոր պատերազմի պատճառությունը հայերի դեմ։—ԺԴ. Լուկուլլոսի արշավանքը Հայաստան և Տիգրանակեսի առումը։—ԺԵ. 68—67 թվերի կոիվները և Լուկուլլոսի նահանջը։—ԺԶ. Պոմպեյոսի արշավանքը և Տիգրանի հաղթությունը նրա հեռ։

Տիգրան Երկրորդի դարաշրջանը քաղաքական ու սոցիալական ցնցումների արեկոծ մի ժամանակաշրջան էր, երբ Վճռական ու արմատական փոփոխություններ էին իրագործվում ո՛չ միայն Հայաստանի, այլև Արևմտյան Ասիայի ճակատագրի, Սահայն այդ մեծ հեղաշրջումը և, մասնավորապես, այն պատմական անցքերը, որ անդի էին ռևոլյուցիոն Հայաստանում՝ խեղաթյուրված են մեծ չափով պատմագիտական բոլոր երկերում և մինչև իսկ դասական համարված ուսումնասիրություններում։

Մեղաթյուրումների գլխավոր պատճառներից մեկը պետք է համարել, անտարակույս, սելեուսյան թագավորների կողմնապահ ու

աջառու տեղեկությունները, որ անվերապահ կերպով հյսւրընկալվել են պատմական նորագույն երկերում:

Միհրգատ-Տիգրանյան դարաշրջանի հիմնական սկզբնաղբյուրներն են ականատեսների և ժամանակակից հեղինակների գրությունները՝

1. Սուլլայի, Լուկուլլոսի, Պոմպեյոսի պաշտոնական տեղեկագրերը.

2. Սուլլայի հիշատակարանը.

3. Թեոփանես Միտիլենացու գրած Պոմպեյոսի կռիվների պատմությունը.

4. Արքիաս Անտիոքացու վիպերգը.

5. Սալլուստիոսի պատմությունը և

6. Կիկերոնի ճառերը:

Գլխավորապես հենց այս սկզբնաղբյուրներից օգտված պիտի լինեն, անշուշտ, մեծազույն մասը հետագա պատմիչների: Բայց հիշյալ գեկուցադրերը, ինչպես և նման կարգի գրությունները, համաձայն քննական նորագույն հետադոտությունների՝ միանգամայն անփստահելի են:

«Ջեկուցադրերի հեղինակները,— տեսում է Ռեյնաբը,¹— վստահ լինելով, որ իրենց ստերը չեն մերկացվի՝ ուռցնում էին իրենց հաջողությունները, թաքցնում իրենց անհաջողությունները, իսկ երբեմն իրենց պարտությունները հայտարարում էին իբրև հաղթություններ,— Մուրենան, օրինակ, որը պարտություն էր կրել՝ արժանացել էր հաղթանակի, նրանք ծայր աստիճան չափադանցրել են թշնամիների զորաթիւներն ու կորուստները, իսկ իրենցը համապատասխան չափերով պակասեցրել: Օրինակ, իր գեկուցադրում Տիգրանակերտի կռիվ մասին Տիգրանի զորքերի թիվը Լուկուլլոսը ցույց է տվել մոտ 250·000 մարդ, մինչդեռ ուրիշ աղբյուրներ նույն զորքի թիվը հաշվում են միայն 80·000 մարդ²: Նույն այս կռիվում իր կորուստը նա համարում է 5 սպանված և 100 վիրավոր, մինչդեռ թշնամու կորուստը ենթադրում է առնվազն 30·000 մարդ: Եվ Լուկուլլոսն այդ արել է, հետևելով Սուլլայի օրինակին, ու կարելի է վստահ լինել, որ Պոմպեյոսը՝ միևնույն ուսուցչի աշակերտը, առավել ևս զերադանցել է իր նախորդներին»:

¹ S⁸u Mithridate Eupator, 418—419.

² S⁸u Մեմֆոն, գլ. 57:

Նման չափազանցված ու սուտ տեղեկություններ հաղորդում են իրենց հովանավորներին՝ Լուկուլլոսի և Պոմպեյոսի մասին՝ նաև Արքիաս Անտիոքացին ու Թետիանես Միտիլենացին:

Համեմատաբար ավելի արժանահավատ են համարվում Սալլուստիոսը և Կիկերոնը: Սակայն հռոմեական այս հեղինակները ևս, որոնք օգտվել էին, հավանորեն, վերոհիշյալ զեկուցագրերից կամ նման աղբյուրներից՝ զերծ չեն ըստիս որոշ չափազանցություններից:

Հռոմեական և հունական ավելի ուշ շրջանի աղբյուրները պետք է բաժանել երկու խմբի:

Առաջին խմբին են պատկանում հռոմեական սկզբնաղբյուրների վրա հիմնված երկերը, իսկ երկրորդ խմբին՝ այն հունական աշխատությունները, որոնց աղբյուր են ծառայել փոքրասիական բանավոր ավանդությունները և կամ գրավոր կորած երկերը:

Առաջին խմբի պատմական աղբյուրներից առանձնապես կարևոր է համարվում հալոենասիրական ոգով գրված, աչառու ու կողմնապահ Տիտուս Լիվիոսի պատմությունը, որը համառոտել են կամ մեծ չափով օղտադործել Ֆլորուսը, Եվտրոպիոսը, Օրոզիոսը, Փրոնտինոսը և ուրիշները: Նույն այս խմբի աղբյուրներ են համարվում նաև Պլուտարքոսը և Ապպիանոսը, որոնց մոտ Տիգրան Բ-ի ու Հայաստանի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները պահպանված են ամբողջությամբ:

Առաջինն այս հեղինակներից, Պլուտարքոսը, գրել է, ինչպես հայտնի է, Սուլլայի, Լուկուլլոսի և Պոմպեյոսի կենսագրությունները: Սակայն Պլուտարքոսի այս գրվածքները պարզապես ներբողներ են ու խրատական պատմվածքներ, որոնց մեջ պատմական փաստերը հաճախ քողարկված են կամ գունավորված են, մեծ մասամբ, հօգուտ մեծարված ու հերոսացված հռոմեական զորավարների: Եվ ուշագրավ է, որ հենց Պլուտարքոսի չափազանցություններն ու ակներև հերյուրանքները մեջ են բերվում շարունակ պատմագիտական նորադույն երկերում:

Մյուս հեղինակը, Ապպիանոսը, բացի Լիվիոսից օգտվել է նաև փոքրասիական կորած աղբյուրներից, հավանորեն, Նիկոլայոս Դամասկացուց և Պոսիդոնիոսից: Հատուկ ուշադրության արժանի են Ապպիանոսի պատմության այն մասերը, որոնք քաղված են փոքրասիական չեղոք այս հեղինակներից:

Երկրորդ խմբի՝ հելլենիստական Արևելքի հունական երկե-

րը՝ դժբախտաբար, շատ քիչ են և չեն պահպանված իրենց ամբողջական բովանդակութամբ։ Այս աղբյուրներից կարևորագույնն է Մեմֆոնի «Հերակլեյայի պատմությունը», որի մեջ միջանկյալ կերպով տեղեկություններ են հաղորդված Լուկուլլոսի արշավանքի մասին Հայաստանում։ Մեմֆոնի այն վկայությունները, որոնք քաղված են Հերակլեյայի հին ժամանակագրություններից՝ ավելի ճիշտ են ու արժանահավատ, քան հռոմեական ինքնասլարծ ու միտումնավոր հաղորդադրությունները։

Միանգամայն վստահելի է ու արժանահավատ բացի Մեմֆոնից նաև Սարաբոնը, որը ծնվել էր պոնտական Ամասիա քաղաքում ՅՅ թվին (նախ քան մեր թվ.)։ Սրա նախնիքները բարձր պաշտոններ են վարել Պոնտական թաղավորության մեջ և եղել են ականավար գինվորականներ։ Իր աղբյուրներից ու հայրենակիցներից նա լսած կլիներ, անշուշտ, և հավաքած տեղեկություններ Միհրդատյան մեծ դարաշրջանի մասին, որը նա նկարագրել էր իր «Պատմական հիշողություններ» (Ἱστορικὰ βιβλία) աշխատության մեջ։ Նու օղտվել էր միաժամանակ բազմաթիվ պոնտական հին պատմագիրների երկերից, որոնց նա իր աշխարհագրության մեջ անվանում է «Միհրդատյան մատենադիրներ» (τὰ Μιθριδάτειά συγγραφέας)¹։ Նրա պատմական մեծ աշխատության կորուստը պետք է համարել, անշուշտ, պատմական գրականության ամենամեծ կորուստներից մեկը։

Ստրաբոնի երկերից պահպանվել է միմիայն նրա աշխարհագրությունը, որի մեջ կան, բարեբախտաբար, միջանկյալ ու համառոտ տեղեկություններ թե Միհրդատյան կռիվների և թե Արտաշեսյան Հայաստանի ու Տիգրան Բ-ի մասին։

Մի քանի կարևոր վկայություններ, որ քաղված են, ըստ երևույթին, փոքրասիական չեզոք աղբյուրներից, ունի նաև Փլեդոն Տրալլեսցին իր «Օլիմպիականք»-ում։

Ինչպես տեսնում ենք, երկրորդ խմբի երկերից մնացել են միմիայն հատուկորր և ընդամիջով վկայություններ, որոնք չեն կարող հիմք ծառայել պատմական անցքերի մանրամասն վերականգնման։ Սակայն պահպանված այս վկայությունները, որոնք դիմակադերծ են անում հռոմեական աղբյուրների ստերն ու աղավաղումները՝ պարզ ցույց են տալիս, որ այս վերջինների մինչև իսկ ընդունելի համարված վկայություններից պետք է օգտվել ամենամեծ զգուշությամբ։

¹ Str., XI, 2, 14.

Այդ անհրաժեշտ զգուշացվորութիւնը բնավ չէ պահւած, դժբախտաբար, ո՛չ եվրոպական և ո՛չ էլ հայկական գիտական երկերում:

Մեր աշխատութեան մեջ ճշտված են ըստ հնարավորութեան, աղբյուրների համեմատական ուսումնասիրութեամբ, հոմմեական հեղինակների հերյուրանքներն ու չափազանցութիւնները և Տիղբան Բ-ի ու նրա զարարչանի պատմութիւնը տրված է նոր լուսաբանութեամբ:

Ա. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Սուլլայի, Լուկուլիոսի, Պոմպեյոսի պաշտոնական տեղեկագրերը՝ ուղարկված հոմմեական սենատին Դարգանոսի զանազորից, Տիգրանակերտի առումից և Միհրդատի մահից հետո:

Այս գրութիւններից, որոնք չեն հասել մեր ձեռքը, օգտվել են Կիկերոնը, Ապպիանոսը, Պլուտարքոսը և ուրիշները:

2. Սուլլայի հիշատակարանից (Commentarium rerum gestarum), որը նույնպես կորած է՝ օգտվել են Պլուտարքոսը, Լիվիուսը և ուրիշները: Որոշ հատվածներ, որ պահպանվել են այդ հիշատակարանից՝ հրատարակել է Պետերը. տես Peter, Historiarum Romanorum fragmenta, երկրորդ հրատարակութիւն, էջ 127 են:

3. Սալլուստիուս (87—34 մեր թվ. առաջ), տես Historiarum fragm., ed. Fr. Kritzius, Leipzig, 1853 և Historiarum reliquiae, ed. B. Maurenbrecher, fasc. I—II, 1891, 1894: Սալլուստիուսի երկը, որից պահպանվել են կարևոր հատվածներ՝ լավագույն աղբյուրն է համարվում Լուկուլիոսի արշավանքների մասին:

4. Կիկերոն (106—43 մեր թվ. առաջ)—Ճառեր, նամակներ են, տես Pro lege Manilia կամ De imperio Cn. Pompeii, Pro Murena, Pro Sestio. Pro Archia poeta, Pro Flacco և Academicorum libri duo: Համեմատե ճառերի ուղեբերն թարգմանութիւնը՝ „М. Туллий Цицерон. Полное собрание речей в русском переводе“, под ред. Ф. Зезинского, т. I, СПб. 1901:

Բ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՌԻՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Պոսիդոնիոս Ապամեացին (մոտավ. 135—51 մեր թվ. առաջ), որը գրել է Պոլիբիոսի պատմութեան շարունակութիւնը, նաև, հավանորեն, ինչպես ենթադրում է Ռեյնաքը, Պոմպեյոսի արշավանքների պատմութիւնը (տես Str., XI, 1, 6): Պահպանված են և հրատարակված են հատվածներ. տես C. Müller, Fragmenta historicorum graecorum, III:

2. Թեոփոնես Միալիենացին, որն անձամբ մասնակցել էր Պոմպեյոսի արշավանքներին, ավել է սրանց պատմութիւնը՝ գունավորված ի նպաստ Պոմպեյոսի: Պահպանված հատվածները հրատարակված են՝ Մյուլլերի ժողովածուի երրորդ հատորում. տես Fragm. hist. graec., III:

1 Mithridate Eupator, էջ 426:

3. Արքիաս Անտիոքացին, որն ուղեկցել էր Լուկոլլոսին և մասնակցել նրա արշավանքներին՝ զրել է հատուկ մի վիպերդ ի մեծարումն Լուկոլլոսի: Ուշագրավ է, որ նաև այս կորած բանաստեղծական ներբողն աղբյուր է ծառայել Լիվիոսին և Պլուտարքոսին (տես Reinach, Mithridate Eupator, էջ 427):

Գ. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՂԲՈՒՐՆԵՐ ՕԳՈՍՏՈՍԾԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՒՇ ՇՐՋԱՆՆԵՐԻ

1. Տիտուս Լիվիոսի (59 թ. մեր թվ. առաջ—17 մեր թվ. հետո) ընդարձակ պատմությունից, որ վերաբերում է Տիրբերի Բ-ի շրջանին՝ պահպանվել են համապատասխան զրբերի համառոտ բովանդակությունները (periodicae) և թարգմանիչներ Ֆլորուսի, Եվարոպիոսի, Օրոգիոսի և ուրիշ եղինակների երկերում:

2. Պոմպեյոս Տրոգլոսը, որը ժամանակակից էր Լիվիոսին՝ զրել է ընդհանուր պատմություն (Historiae Philippicae), որի նախաբանները և համառոտ բովանդակությունը պահպանվել են Յուստինոսի երկում. տես M. Juniani Justinus, Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, ex rec. Fr. Ruehl, Lipsiae, 1915:

3. Վելլեյոս Պատերիկոսը, որը ժամանակակից էր Տիրբերիոս կայսեր (14—37 մեր թվ. հ.), զրել է համառոտ հոմեակական պատմություն, տես Vellei Patereuli, Ex historiae Romanae libris duobus quae supersunt, ed. C. Halm, Bibl. Teubn.:

4. Ֆրոնտինոսը, որը ժամանակակից էր Դոմիտիանոսի (81—96 մեր թվ. հ.)՝ զրել է Strategematon libri 4, Bibl. Teubn.:

5. Ֆլորուսը զրել է երկրորդ դարի առաջին կեսում (մեր թվ. հ.) հոմեակական պատերազմների պատմությունը մինչև Օգոստոս: Նա օգտվել է, գլխավորապես, Լիվիոսի ընդարձակ պատմությունից. տես Flori Julii, Epitomae de T. Livio bellorum annorum DCC libri II, ex rec. C. Halm, Bibl., Teubn.:

6. Եվարոպիոսը կազմել է շորրորդ դարում համառոտ մի ձեռնարկ հոմեակական պատմության մինչև 364 թ. (մեր թվ. հ.), աես Eutropii Breviarum histor. Roman., rec. Fr. Ruehl, Bibl. Teubn.:

7. Օրոգիոս քահանայի Սպանիայում զրված հեթանոսական աշխարհի համառոտ պատմությունը պարունակում է իր մեջ թարգմանիչներ հնագույն երկերից և ունի կարևոր մանրամասնություններ Լուկոլլոսի և Պոմպեյոսի արշավանքների մասին. տես Orosii Pauli, Historiarum adversus paganos libri VII, recen. C. Zangemeister, Bibl. Teubn.:

Դ. ՀՈՒՆԱԿԱՆ ԱՂԲՈՒՐՆԵՐ ՕԳՈՍՏՈՍԾԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՒՇ ՇՐՋԱՆՆԵՐԻ

1. Ստրաբոն (63 մեր թվ. ա.—19 մեր թվ. հ.). տես Strabonis, Geographica, recogn. A. Meineke, vol. I—III, Lipsiae, 1915—1925:

2. Նիկոլայոս Դամասկացին, Հերովդես Մեծի (37—4 մեր թվ. ա.) թարգմանիչը, զրել է ընդհանուր պատմություն, որից մնացել են միայն հատվածներ. տես C. Müller, Fragm. hist. graec., III: Այս պատմությունն աղբյուր է ծառայել Ապոլիանոսին:

3. Պուլուարընը (մոտ. 16—120 մեր թվ. հ.) գրել է Սուլլայի, Լուկուլուսի, Պոպլեյոսի, Սերտորիուսի, Կրասսոսի և այլ կենսագրություններ. տես *Plutarchi vitae, graece et latine*, Փարիզի հրատ. Th. Döhner-ի և F. Dübner-ի, համ. I—V, 1846—1855:

4. Հովսեպոս Փլավիոսը (ծնվ. է 37/38 թվ. մեր թվ. հ.) գրել է «Հրեական պատերազմ» և «Հրեական հնախոսություն» երկերը. տես *Josephi Flavii, opera omnia, recogn. Emst. Behke, Bibl. Teubn.*

5. Փիեգոն Տրալիսցին, Հադրիանոս կայսեր (117—138 մեր թվ. հ.) ժամանակից հեղինակը՝ գրել է ժամանակագրական մի երկ «Օլիմպիադներ»՝ լիբրնագրով ('Օլոμπιադե), որից մնացել են հատվածներ. տես C. Müller, *Fragm. hist. graec.*, III:

6. Ապարիանոս Աղեքսանդրիացին, որը ժամանակակից էր Հադրիանոս (117—138 թ. մեր թվ. հ.) և Անտոնինոս (138—161 մեր թվ. հ.) կայսրերին՝ գրել է հռոմեական պատմություն, որի մեջ Տիգրան-Միհրդատյան պատերազմների անցքերը նկարագրված են 11-րդ և 12-րդ գրքերում (XI—Συριζακη, XII—Μεθριόστειος). տես Appiani Alexandrini, *Historia Romana*, ed. L. Mendelssohn, 2 vol., Bibl. Teubn.

7. Մեմնոնը (ժամանակն անհայտ) գրել է Հերակլեյայի պատմությունը. տես Memnonis, *Historiarum Heracleae Ponti*, ed. C. Orellius, Lipsiae, 1816:

8. Կասսիուս Դիոնը (մոտավ. 155—235 մեր թվ. հ.) գրել է հռոմեական պատմություն. տես Cassii Dionis Cocceiani, *Historiarum Romanorum quae supersunt*, ed. Boissacain, vol. I, Berolini, 1895:

Բ. ՕՃԱՆԴԱԿ ԱՅԼ ԱՂԲՑՈՒՐՆԵՐ

1. *Diodorus*, Biblioth. histor., ex recensione L. Dindorfii.

2. *Isidori Characeni*, Stathmoi Parthicoli, տես C. Müller, *Geogr. graeci Min.*, I.

3. *Lucianus*, Makrobloi, Bibl. Teubn.

4. *Herodoti*, *Historiarum libri IX*, Bibl. Teubn., տես նաև ռուսերեն թարգմանությունը՝ Փ. Գ. Мухоморо-յի, Москва, 1885.

5. *C. Plinii Secundi*, *Naturalis Historiae*. տես *Histoire naturelle de Pline*, avec la traduction en français, par M. É. Littré, t. I—II, Paris, 1883.

6. *Polybii historiae*, Bibl. Teubn. տես նաև «Всесообщая история в 40 книгах», перевод Ф. Г. Мухоморо, т. I—III, Москва, 1890—1899:

7. *Ptolemaei* *Geographia*, ed. C. Müller, Parisiis, 1901.

8. *Valeri Maximi factorum et dictorum memorabilium libri IX*, rec. C. Kempi, Bibl. Teubn.

9. *C. Cornelii Taciti opera*, ad. Weise, t. I, *Annalium libri XVI*, Lipsiae, 1829.

10. «Մոզսիսի հաղեմացւոյ, Պատմութիւն Հայոց», աշխատութ. Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տիգրիս, 1913:

12. «Փաւստոսի Բուզանդացւոյ, Պատմութիւն Հայոց», երկրորդ տպագր., Վենետիկ, 1889:

- Belck W., Majafarkin und Tigranakerta, Zeitschrift für Ethnologie, 1889.
- Նույնի, Der Weg Xenophons auf seinem Rückzuge bis in die Ebene von Alasdigert, Verhandl. der Berl. anthropol. Gesellschaft, 1899.
- Gutschmid Alf. von, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne, Mém. de l'Acad. Imper. des sciences de St.-Pét., 1887.
- Eckhardt Kurt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. IX, Heft 4 & Bd. X, Heft 1—2. տես նաև Վ. Գաբրիելյանի հայերեն թարգմանությունը, «Տիգրան Բ. և Հայ-լուկուլյան պատերազմները», Վիեննա, 1926. Ազգ. մատ. ՃԺԳ:
- Karbe Hans, Der Marsch der Zelintausend vom Zapates zum Phasis-Araxes. Wissenschaftliche Beilage zum Jahresbericht des Königstädtischen Gymnasiums zu Berlin, 1898.
- Կարրիեր Ա., «Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի և Խորենացու համեմատ», Թարգմ. Հ. Հ. Վ. Տառյանի, Վիեննա, 1899. Ազգ. մատ. ԼԵ:
- Kiepert H., Ueber die Lage der armenischen Hauptstadt Tigranokerta. Monatsberichte der Akademie der Wissenschaften zu Berlin, 1873.
- Kiepert R., Atlas von Kleinasien in 24 Blättern, 1902—1906.
- Манандян Я. А. Круговой путь Помпея в Закавказье, Вестник древней истории. Москва, 1939, № 4.
- Markwart J., Untersuchungen zur Geschichte von Eran, I, Göttingen, 1896, Philologus, Bd. 54—55.
- Նույնի, Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien, Handes Amsorya, 1927, № 11.
- Նույնի, Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des Mar, Abas und Ps. Moses Choren., Caucasia, Fasc. 6,2 Teil, Leipzig, 1930.
- Meyer Ed., Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin, 1925.
- Moltke H. von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei (1835—1839), Berlin.
- Mommsen Th., Die Lage von Tigranokerta, Hermes, IX, 1887.
- Reinach Th., Mithridate Eupator roi de Pont, Paris, 1890.
- Sachau E., Ueber die Lage von Tigranocerta, Abhandl. der kgl. Akademie der Wissensch. zu Berlin, 1880.
- Taylor E. G., Journal of a tour in Armenia, Kurdistan and upper Mesopotamia, տես ուսերեն թարգմանությունը Н. Асютинского-ի, Материалы для географии Азиат. Турции, прилож. к тому II Изв. Кавк. Отд. Рус. Геогр. Общ., Тифлис. 1874.
- Fabricius, Theophanes von Mitylene und Q. Dellius, als Quellen der Geographie des Strabons, Strassburg, 1888.

ԺԵ. Կրասսոսի առաջածքը և Արաւիայի Բ-ի դառնակցութիւնը պարբեր-
ներէ հետ:—ԺԸ. Անտոնինոսի պարբերական առաւելանքը և Արաւիայի Բ-ի ողբե-
գական մահը:—ԺԹ. Արաւիայի Բ-ի և նրա հաջորդներէ համառ. պայմարը Հայաս-
տանի անկախութեան համար:—Ի. Օտարագրի քաղաքներէ անկախութեան իրա-
ւունքը Հայաստանում:—ԻԱ. Հռոմեա-պարբերական աստմայա պատերազմը
և Արաւիայի քաղաքներէ հաստատումը Հայաստանում:

Կրասսոսի արշավանքը և Արաւիայի Բ-ի մասին մեր ձեռքը
հասել են երկու իրարից անկախ կարեւոր աղբյուրներ՝ Կասսի-
ուս Դիոնը և Պլուտարքոսը, որոնք, ինչպէս շատ ճիշտ նկատել
է Գուտշմիդը¹, իրար ճշտում են և լրացնում: Կասսիուս Դիոնը
(մոտավ. 155—235 մեր թվ. հ.), որը ականավոր պաշտոնյայի
զավակ էր և ծնվել էր Բիթանիայի Նիկիա քաղաքում՝ կայսերա-
կան շրջանի ամենանշանավոր պատմադիրն է և զբաղւել է «Հռո-
մեական պատմութիւն» (Ῥωμαϊκῆ ἱστορίᾳ) էնկասից սկսած
մինչև 229 թվ. (մեր թվ. հ.): Կրասսոսի ժամանակաշրջանի
համար (գիրք XL, 12—30) նրա գլխավոր աղբյուրը և զբաղւել է
Հռոմեական հայտնի պատմադիր Տիտուս Լիւիուսը (59 մեր թվ.
առ.— 17 մեր թվ. հ.), որը գրեթէ ժամանակակից էր այդ
շրջանի անցքերին:

Իսկ Պլուտարքոսը², որը գրել է Կրասսոսի կենսագրութիւնը,
թեւ մասամբ նույնպէս օգտվել էր Լիւիուսից, սակայն նա
հատկապէս այս կենսագրութեան համար ունեցել է իր ձեռքի
տակ ինչ-որ փոքրասիական իրադեպ հուշն պատմադրի մեծար-
ժեք մի աշխատութիւն: Գուտշմիդը ենթադրում է, որ այդ
կարեւոր երկը կարող էր լինել Հերովդես Մեծի (37—1 մեր թվ.
առ.) խորհրդատու Նիկոլայոս Դամասկացու պատմութիւնը:

Անտոնինոսի պարթևական և հայկական արշավանքների մա-
սին թեւ մենք ունենք տարբեր հեղինակների վկայութիւններ,
սակայն, ինչպէս ենթադրում են, նրանք հիմնված են, մեծ մա-
սամբ, Անտոնինոսի մոտ բարեկամ Դելիուսի հաղորդագրու-
թիւնների վրա, որոնք համարվում են կասկածելի: Մանրամասն
կերպով այդ արշավանքները նկարագրել է Պլուտարքոսն Անտո-
նինոսի կենսագրականում³, որի մեջ նա դեպի Անտոնինոսն ունի,
ընդհանրապէս, բարեկամական վերաբերմունք:

¹ S^{tes} Geschichte Irans, էջ 88, ծան. 3:

² S^{tes} Plut., Crassus, XVI—XXXIII.

³ Plut., Ant., XXXVII—LIV.

Ալեկլի թշնամական են Անտոնինոսի հանդեպ Կասսիուս Դիո-
նի¹ և հռոմեական մանր պատմագրերի՝ Ֆլորուսի, Եվտրոպիու-
սի և ուրիշների՝ հաղորդադրությունները, որոնք բոլորն էլ
օգտվել են, զլխավորապես, Տիտուս Լիվիուսի պատմությունից,
որի բաւն ընտելի մեծադույն մասը մեր ձեռքը չէ հասել:

Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների ժամանակ տեղի ունե-
ցած պատմական խոշոր անցքերը հիշատակված են նաև հրեա-
կան պատմագիր Հովսեպոսի «Հնախոսություն» ('Ιουδαϊκὴ ἀρχαῖολο-
γία) և «Հրեական պատերազմ» (Περὶ τοῦ 'Ιουδαϊκῆς πολέμου) երկերում:
Այս նշանավոր հեղինակը, որը ծնվել է Երուսաղիմում 37 թվին՝
մեր թվականությունից հետո և իր աշխատությունները ղրել է
սուաջին դարում՝ կարեւոր է այն տեսակետից, որ օգտվել է ոչ
թե հռոմեական, այլ, զլխավորապես, հրեական և փոքրասիա-
կան հեղինակական ուրույն ու անկախ աղբյուրներից:

Բացի Կասսիուս Դիոնից և Փլավիոս Հովսեպոսից Օդոստոս-
սյան չրջանի Հայաստանի պատմության համար հիմնական աղ-
բյուր է «Գործք հանդուցյալ Օդոստոսի» (Res gestae Divi Aur-
gusti) կամ «Հիշատակարան Անկյուրական» (Monumentum An-
cyrantum) կոչվող հայտնի արձանադրությունը, որը փորագրված
է լատիներեն և հունարեն լեզուներով ի պատիւ Օդոստոս կայ-
սեր կառուցված և նրա անունը կրող Անկյուրայի (Անդորայի)
տաճարի պատերի վրա: Այս արձանադրությունը պատճենն է
իր դործունեության մասին Օդոստոսի կազմած հաշվետու-
թյան, որ նա հրամայել էր ղետեղել իր դամբարանի մուտքի
մոտ: Հիշատակարանի մեջ կարեւոր տեղեկություններ են հա-
ղորդված, ի միջի այլոց, Օդոստոս կայսեր արտաքին քաղա-
քականության և, մասնավորապես, նաև Հայաստանի մասին²:

Հետօդոստոսյան չրջանի պատմության, ինչպես և հռոմեա-
հայկական և հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի հա-
մար մեր զլխավոր աղբյուրն է Կորնելիոս Տակիտոսը, որ
հռոմեական ամենախոշոր պատմագիրն է կայսերական ժամանա-
կաշրջանի: Տակիտոսը (մոտավ. 55—120 մեր թվ. հ.), որը
բարձր պաշտոնյա էր և անդամ էր հռոմեական ծերակույտի՝
գրել է ընդհանուր պատմական երկու աշխատություն՝ «Տարե-
գրություններ» (Annales), որի մեջ տրված է հռոմեական կայ-

¹ S^{ku} Cass. Dio, XLIX, 23—31:

² S^{ku} Res gestae, Anc. V, 25—32. 39—43. VI, 1—6. 10—13:

սրության պատմութիւնը Օգոստոսի մահից (14 մեր թվ. հ.) մինչև 69 թիվը, և «Պատմութիւն» (Historia), որը շարունակութիւնն է Տարեգրութիւնների և ընդգրկում է 69—96 թվերի ժամանակաշրջանը:

Օտարազգի թագավորների իշխանութիւնը Հայաստանում և, գլխավորապես, Կորրուլոնի ու Պետոսի արշավանքները՝ ընդարձակ կերպով պատմված են Տակիտոսի վերոհիշյալ «Տարեգրութիւններում», իսկ Տրդատի ճանապարհորդութիւնը և նրա հանդիսավոր թագադրութիւնը Հռոմում մանրամասն նկարագրված են Կասսիուս Դիոնի Հռոմեական պատմութիւն մեջ:

ԱՂԲՅՈՒՆՆԵՐ

Appiani Alexandrini, Historia Romana, lib. II, De bellis civilibus, ed. L. Mendelssohn, Lipsiae, 1879.

Dionis Cassii Cocceiani, Historia Romana, ed. L. Dindorf, vol. I—V, Lipsiae, 1868—1865.

Eutropii, Breviarium histor. Rom., rec. Fr. Rühl, Lipsiae, Bibl. Teubn.
Ciceronis M. Tullii, Epistola ad familiares (XV) և Epistola ad Atticum (V), տես հրատարակ. Müller-ի, Lipsiae.

Horatii Flacci, Q., opera, recens. O. Keller et A. Holder. 2 vol., Lipsiae, 1869—70.

Josephi Flavii, opera omnia, recogn. Imman. Bekker, Bibl. Teubn.

C. Plinii Secundi, Naturalis Historiae, տես Histoire naturelle de Pline, avec la traduction en français, par M. É. Littré, t. I—II, Paris, 1883.

Plutarchi, Crassus et Antonius. տես Plutarchi vitae, graece et latine, Փարիզի հրատարակ. Th. Dübner-ի և F. Dübner-ի, vol. I—V, 1846—1855. „Res gestae divi Augusti“ (Monumentum Ancyranum), ed. Th. Mommsen, Berlin, 1883.

Seneca, De tranquill. animi, rec. Fr. Haase, Lipsiae, Bibl. Teubn.

Strabonis, Geographica, rec. A. Meineke, vol. I—III, Lipsiae, 1915—1925.

Suetonii Tranquilli, De vita caesarum libri VIII, ed. M. Ihm (editio minor), Lipsiae, 1923.

Vellei Paterculi, Ex historiae Romanae libris duobus quae supesunt, ed. C. Halm, Lipsiae, Bibl. Teubn.

Vergili Maronis, Aeneis, rec. O. Ribbeck, Lipsiae, Bibl. Teubn.

Taciti, Cornelli, libri qui supersunt, ed. C. Halm, 2 tomi, Lipsiae, Bibl. Teubn. տես նաև Կ. Տակիտոս, քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոսիկյան, Երևան, 1941.

Rufi Festi (Sexti), Breviarium rerum gestarum populi Romani, ed. Förster, 1874.

Flori L. Arnaei, Epitomae de T. Livio bellorum annorum DCC libri II, ex recens. C. Halm, Lipsiae, 1879.

Xiphilini, Epitome, ed. Dindorf, Teubner, vol. V.
Oridius Naso, P., ex recens. R. Merkl, t. III, Tristia etc., Lipsiae, Bibl. Teubn.

Ագաթանգեղոյ, Պատմութիւն Հայոց, աշխատ. Գ. Տեր-Մկրտչանի և Ս. Կանայանցի, Տփղիս, 1909:

«Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Երկ. տպ., Ս. Պետերբ., 1887:

«Ռովմիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց», աշխատ. Ս. Արեղյանցի և Ս. Հարությունյանցի, Տփղիս, 1913:

«Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի և Հերակլէն», Ի լոյս ած Գ. Պ., Ս.-Պետ., 1879:

Փաւստոսի Բուզանդացւոյ, Պատմութիւն Հայոց, Երկ. տպ., Վենետիկ, 1889:

ԳՐԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ

Andersen G., Review of Henderson's Chronology, Jahresbericht des philol. Vereins zu Berlin, XXVII, 1901, էջ 318.

Babelon M. Ernest, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890.

Gutschmid Alf. von, Ueber die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren, Berichte über die Verhandlungen d. Königl. Sächs. Gesellschaft der Wissenschaften, 1876.

Guentkin W. E., Cappadocia as a Roman procuratorial province. Univ. of Missouri Studies, Columbia, Miss., 1930.

Cary M., Classical Review, XXV, 1911, էջ 107.

Հայկունի Ա., Բագրեանդ ջրաբաշխ դավառ, էջմիածին, 1894:

Henderson B. W., The Life and Principate of the emperor Nero, London, 1903.

Նույնի, The Chronology of the wars in Armenia A. D. 51—63, Classical Review, XV, 1901:

Hersfeld E., Sakastan, Archaeolog. Mitteilungen aus Iran, IV, 1932, էջ 1 և ն.

Huntigton Ellsworth, Verhandl. der Berlin. Anthropol. Gesell., 1900, էջ 149:


Markicart J., Beiträge z. Geschichte und Sage von Eran, Zeitsch. d. Morgenl. Gesell. XLIX, 1895, էջ 628—673:

Meyer Ed., Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin, 1895.

Շուր Վերներ, «Ներոն կայսեր արևելյան քաղաքականութիւնը», Թարգմ. Պ. Հարպոյանցի, Վիեննա, 1930.

Spiegel F., Eranische Alterthumskunde, Bd. I—III, Leipzig, 1871—1878.

Rauckinson H., Journ. Geogr. Society, Bd. X.



ՀԱՎԵԼՎԱԾ

ՔՍԵՆՈՓՈՆ—„ԱՆԱԲԱՍԻՍ“

ՀԱՏՎԱԾ 1

Գիրք III, գլ. 5, 16—17:—(16) Ասում էին, որ սրանք [կարգադրողները] բնակում են լեռներում և ռազմիկ են ու թաղավորին չեն հպատակվում. նույնիսկ նրանց վրա հարձակվել էր երբեմն արքայական զորքը թվով 120.000 հոգի, սակայն և ո՛չ մեկը նրանցից չէր վերադարձել երկրի դժվարանցանելիության պատճառով: Բայց նրանք մի ժամանակ համաձայնության էին եկել զաշտային շրջանի սատրապի հետ, որ հաղորդակցություն ունենան թե իրենք նրանց հետ և թե նրանք իրենց հետ: (17) Ձուրավարները որոշեցին, որ պետք է լեռների միջով ներխուժել կարգադրողների երկիրը, որովհետև, ինչպես ասում էին, անցնելով նրանց միջով՝ իրենք կլան Արմենիա, որը մեծ է ու բարեկեցիկ և գտնվում է Օրոնտոսի իշխանության տակ: Այստեղից, ասում էին, որ ամեն մեկը կարող է հեշտության մոտ զենք, ուր որ կամենա: Այնուհետև նրանք զոհ բերին, որպեսզի՝ ինչպես որ որոշել էին՝ ճանապարհն անցնեին հարմար ժամանակ: Նրանք երկյուղ էին կրում, որ լեռնանցքը կարող էր դրավել առաջուց թշնամին: Եվ հրամայեցին, որ ընթրիքից հետո բոլորը պատրաստվեն ճանապարհ զնալու ու հանդստանան, և երթի ելնեն, հենց որ նոր հրաման կտրվի:

ՀԱՏՎԱԾ 2

Գիրք IV, գլուխ 1, 5—13:—(5) Երբ արդեն ղեկերվա երրորդ սլահն էր և ղեկերվանից այնքան էր մնացել, որքան ռավական էր դաշտը մթնով անցնելու համար՝ նրանք վեր կեցան ըստ հրամանի և, ճանապարհ ընկնելով՝ հասան լուսաբացին լեռան մոտ:

(6) Այժմ գործին առաջնորդում էր խեղճ Խոսրոսը, վերցնելով իր հետ եղածներին ու բոլոր թեթևազեններին, իսկ ետևից վերջապահ ծանրազենների հետ գնում էր Գսենոփոնը, որը չուներ ոչ մի թեթևազեն: Թվում էր, որ ոչ մի վտանգ չկար, եթե սարը բարձրացողների վրա որևէ մեկը չհարձակվեր հետևից: (7) Եվ խեղճ Խոսրոսը բարձրացավ լեռան դադաթը առանց նկատելու թշնամիներից որևէ մեկին, իսկ հետո առաջ դնաց, և դադաթն անցնող գործի մասերը ևս շարունակ հետևից գնում էին գյուղերը, որոնք գտնվում էին լեռների կիրճերում ու ձորերում: (8) Արդ՝ Կարդուխները, թողնելով տները՝ կանանց ու երեխաների հետ փախչում էին դեպի լեռները: Պաշարեղեն այստեղ չատ կար վերցնելու և տները կահավորված էին բազմաքանակ պղնձե մասներով, որոնցից ոչինչ չտարան Հելլենները, ոչ էլ մարդկանց հետապնդեցին, այլ նրանց խնայում էին հուսալով, թե դուցե Կարդուխները, որոնք թշնամի էին թագավորին՝ կհոտարեին, որ իրենք այդ տեղերով անցնեին, որպես բարեկամական հերկրի միջով: (9) Իսկ պաշարեղեն, ուր որ մեկին պատահում էր՝ վերցնում էին, որովհետև անհրաժեշտ էր: Բայց Կարդուխները ո'չ նրանց դիմումներն ուշադրության առան, ո'չ էլ այլ կերպ բարեկամություն հաստատեցին: (10) Երբ լեռան դադաթից իջնում էին գյուղերը Հելլենների վերջին խմբերը՝ արդեն մուծն էր՝ ճանապարհը նեղ լինելու պատճառով նրանց լեռը բարձրանալը և ցած իջնելը տևել էր ամբողջ մի օր— և այժմ Կարդուխներից ոմանք, հավաքվելով միասին՝ հարձակվեցին սրանց վրա և քարերով ու նետերով ոմանց սպանեցին ու վիրավորեցին: Կարդուխները թվով քիչ էին, որովհետև Հելլենները նրանց վրա հարձակվել էին անսպասելի կերպով: (11) Եթե այդ ժամանակ միասին հավաքվածները թվով ավելի չատ լինեին՝ գործի մեծ մասը կարող էր մատնվել կորուստի: Եվ այդ գիշերը Հելլենները րանակեցին այդպես գյուղերում, իսկ Կարդուխները լեռների վրա չորս կողմը կրակ էին վառում շատ տեղերում և իրար ագրանշան էին տալիս: (12) Երբ լուսացավ՝ Հելլենների զորավարները և վաշտապետները ժողով արին և որոշեցին առաջ դնալ, վերցնելով իրենց հետ Նուսաբարձ զբաստներից միայն այն մասը, որն անհրաժեշտ էր և դիմացկուն, իսկ մյուսներին թողին, և արձակեցին նաև բոլոր վերջին ժամանակներում գերի ընկած ու գործի մեջ եղած ստրուկներին: (13) Եթե զբաստները և գերվածները շատ լինեին՝ ճանապարհը դժվար էր դառնալու, և շատե-

բը, որոնք դրանցով էին զբաղված՝ անմարտունակ էին լինելու բացի այդ, մարդկանց շատ լինելու պատճառով՝ հարկավոր էր ճարել ու տանել կրկնապատիկ կենսամթերք։ Այս որոշելուց հետո՝ ավարարեցին կոշնակի միջոցով, որ այդպես անեն։

ՀԱՏՎԱԾ 3

Գիրք IV, գլուխ 2, 22:—(22) Այնուհետև հելլենական ամսորով զորքը միացավ և բանակ դրեց այստեղ [Կարգուխների երկրում] բազմաթիվ ու զեղեցիկ տներում, որոնք հարուստ էին պաշարեղենով և գինի ևս շատ կար, որ պահում էին ծեփված հորերում։

ՀԱՏՎԱԾ 4

Գիրք IV, գլուխ 2, 27—28:—(27) Բարբարոսները [Կարգուխները] շատ նեղություններ էին պատճառում երբեմն նրանց, որոնք բարձրանում էին, ու նորից, երբ ցած էին իջնում։ Նրանք շատ արադաշարժ էին, այնպես որ մոտիկից փախչում էին և խույս էին տալիս։ Նրանք ուրիշ ոչինչ չունեին, այլ միայն աղեղներ և պարսաաիկներ։ (28) Ամենալավ նետածիղչերն էին. աղեղներ ունեին, մոտավորապես երեք կանդուն երկարությամբ, իսկ նետեր՝ ավելի քան երկու կանդուն։ Նետ արձակելիս լարերը քարշում էին աղեղից դեպի ցած և ձախ ոտքն առաջ դնում։ Նետերն անցնում էին վահանների և զրահների միջով։

ՀԱՏՎԱԾ 5

Գիրք IV, գլուխ 3, 1—5:—(1) Այդ օրը Հելլենները գիշերեցին գյուղերում հարթավայրից վերև կենտրոխտես գետի¹ մոտ, որի լայնությունն էր մոտավորապես երկու պլեթրոն² և որը բաժանում էր իրարից Արմենիան ու Կարգուխների երկիրը։ Հելլեններն այնտեղ հանգստացան և ուրախացան, տեսնելով դաշտը։ Գետը Կարգուխների լեռներից հեռու էր 6 կամ 7 ստադիոն³։ (2) Արդ՝ այժմ նրանք մեծ հաճույքով գիշերեցին՝

¹ Արևելյան Տիգրիսը, որ այժմ կոչվում է Բոհտան-սուս։

² Հունական պլեթրոնի երկարությունը հավասար էր այժմյան չափով 30, 83 մետրի, տես Fr. Hultsch, Griechische und römische Metrologie, Berlin, 1882, էջ 697։

³ Հավասար է 184,98 մետր։

ունեին պաշարեղեն և հիշում էին հաճախակի բաղմաթիւ ան-
ցյալ նեղութիւնները: Այն յոթը օրը, որ նրանք կարդուխների
միջով էին անցել՝ բոլոր ժամանակ մարտ էին վարել և ենթարկ-
վել էին ավելի աղետների, քան այն բոլորը միասին, որ կրել
էին թագավորի և Տիսսափերնեսի կողմից: Արդ՝ իբր ազատված
այդ բոլորից՝ նրանք հանգիստ քնեցին:

(3) Հետևյալ առավոտ գետի մյուս կողմը նրանք տեսան
դիմված ձիավորներ, որոնք արդելելու էին դառն անցնել, և
ձիավորներից վերև բլուրների վրա շարքերով կանգնած էին
հետևակ զորքեր, որոնք արդելելու էին դուրս դալ Արմենիա:

(4) Սրանք Օրոնտասի և Արտուխասի Արմեններն էին և Մարդե-
բը և իմալդաները վարձկան: Ասում էին, որ իմալդաներն ազատ
են ու ռադասեր. իբրև զենք նրանք գործ էին անում երկար
վահաններ ու նիղակներ: (5) Բլուրները, որոնց վրա սրանք
դասավորված էին, գետից հեռու էին երեք կամ չորս պլեթրոն:
Միակ տեսանելի ճանապարհը, որ դեպի վեր էր տանում, կար-
ծես թե ձեռակերտ լիներ: Այստեղ Հելլենները փորձեցին գետն
անցնել:

ՀԱՏՎԱԾ 6

Գիրք IV, գլուխ 4, 1—22:—(1) Գետն անցնելուց հետո
Հելլենները դասավորված շարքերով ճանապարհ ընկան Արմենի-
այի միջով մոտավորապես կես օրին և անցան դաշտավայրով
ու լերի բլուրներով ոչ ավելի, քան 5 փարսախ: Կռիվների պատ-
ճառով կարդուխների դեմ գետի մոտ գլուղեր չկային: (2) Այն
դյուղը, ուր նրանք ձկան՝ մեծ էր, ուներ սատրապի համար
ապարանք-ամրոց և տների մեծագույն մասի վրա կային աշտա-
րակներ: Պաշարեղենն էլ շատ առատ էր: (3) Այստեղից դնացին
երկու օրվա ճանապարհ, տասը փարսախ, մինչև որ անցան
Տիգրիս գետի սկիւնքները: Այնուհետև գնացին երեք օրվա ճա-
նապարհ, 15 փարսախ, մինչև Տելեբոս գետը¹: Այս գետը գե-
ղեցիկ էր, բայց ոչ մեծ. գետի շուրջը կային բաղմաթիւ գյու-
ղեր: (4) Իսկ այս երկիրը կոչվում էր արևմտյան Արմենիա և

¹ Ըստ Մարկվարտի՝ Մեղ, ալժմյան Կարա-սու, *88a Untersuchungen zur Geschichte von Eran, Philologus* X, erstes Heft. էջ 237, համեմատե նաև շահնդէս Ամսորեայ, 1906, փետր., էջ 43:

նրա հյուպարքոսն էր Տիրիբազը, որը, թաղավորին բարեկամ լինելով՝ երբ ներկա էր լինում, նրան ձիու վրա ինքն էր նստեցնում և ոչ ուրիշը: (5) Սա ձիավորների ուղեկցությամբ մոտեցավ և, ուղարկելով մի թարգման՝ ասաց, որ ցանկանում է բանակցել հրամանատարների հետ: Զորավարները սրտեցին լսել և, մոտենալով այնքան որ կարողանան լսել՝ հարցրին թե ի՞նչ է կամենում: (6) Իսկ նա ասաց, որ ցանկանում է պայման կապել, որի համաձայն ո՛չ ինքը պիտի վնաս հասցնե Հելլեններին, ո՛չ էլ նրանք պիտի այրեն տները, իսկ պաշարեղեն կարող են վերցնել, որքան հարկավար է: Զորավարները հավանություն տվին դրան և կապեցին այդպիսի պայման: (7) Այստեղից նրանք վնացին երեք օրվա ճանապարհ դաշտի միջով 13 փարսախ: Իսկ Տիրիբազը նրանց հետևում էր իր զորքի հետ մոտ 10 ստադիոն հեռավորության վրա: Եվ նրանք եկան մի ապարանք-ամրոցի մոտ, որի շուրջը կային բազմաթիվ գյուղեր, լի բազում պաշարեղենով: (8) Երբ նրանք արդեն բանակել էին՝ վիշերը շատ ձյուն եկավ, և լուսաբացին նրանք վճռեցին զորաշարքերը և զորավարներին անդավորել գյուղերում, որովհետև ոչ մի թշնամի չէին տեսնում և կարծում էին, որ վտանդից ազատ են ձյան շատության սլաոճառով: (9) Այստեղ նրանք ունեին սովեն տեսակ պաշար, որ լավապույնն էր՝ մսացու անասունների, հաց, հին անուշահոտ դինիններ, չամիչ, ամեն տեսակ ընդեղեն: Բայց ոմանք, որոնք բանակից դուրս էին ցրվել՝ ասում էին, որ իբր դիշերը տեսել են շատ լուսավորվող կրակներ: (10) Արդ՝ զորավարները կարծում էին, որ վտանդավոր կլինի զորքը տեղավորել բնակարաններում, այլ պետք է զորքը նորից հավաքել: Ուստի և նրանք միասին հավաքվեցին, մանավանդ որ թվում էր՝ թե եղանակը պարզվում է: (11) Նրանց գիշերելու մասնակ անչափ շատ ձյուն եկավ, որ ծածկեց և զենքերը և պառկած մարդկանց. ձյունը կաշկանդեց նաև գրաստների ոտքերը: Մարդիկ մեծ դանդաղությամբ էին վեր կենում, որովհետև եկած ձյունը մինչև իր հալչելը տաքացնում էր պառկածներին: (12) Բայց երբ Գսենոփոնը սիրտ արեց, մերկ վեր կեցավ և սկսեց փայտ կոտրել՝ մի ուրիշն էլ շուտով վեր կեցավ և, ձեռքից առնելով՝ սկսեց ինքը կոտրել: Այնուհետև վեր կեցան և մյուսները, կրակ վառեցին և յուզ քափեցին: (13) Յուղեր այստեղ շատ կային, որ գործ էին անում ձիթայուղի տեղ՝ խոզի ճարպ, կնճիթ, դառն նշի

և բւեկնի յուղ: Կար նաև սրանցից պատրաստված անուշահոտ
 յուղ: (14) Ապա այնուհետև նորից որոշվեց, որ պետք է տեղա-
 վորվել գլուղներում և բնակարաններում: Արդ՝ զինվորները մեծ
 աղմուկով ու ցնծությամբ եկան դեպի բնակարաններն ու պա-
 չարեղենը: Եվ նրանք, որոնք առաջ հեռանալիս ամբարտավանա-
 բար այրել էին տները՝ տուժեցին և վատ տեղավորվեցին: (15)
 Հետո մի խումբ մարդկանց հետ ուղարկեցին գիշերը դեպի լեռ-
 ները Դեմոկրատես Տեմենիտեսին, ուր, ինչպես բանակից հեռ-
 ցողներն էին ասել՝ կրակներ էին հեռվից տեսել: Թվում էր, որ
 սա առաջ ևս շատ այդպիսի լուրեր ճշտել էր, եղածը՝ որպես
 եղած, և չեղածը՝ որպես չեղած: (16) Սա գնաց, բայց ասաց
 որ կրակներ չէ տեսել, և վերադարձավ, բռնելով ու բերելով իր
 հետ մի մարդ, որն ուներ պարսկական աղեղ, կապարձ և երկ-
 սալրի տապար, որ ունեն ամազոնուհիները: (17) Սրան հարց-
 րին, թե ո՞րտեղացի է. ասաց, որ Պարսիկ է, դնում է Տիրի-
 բաղի բանակի կողմից, որպեսզի պաշար վերցնե: Իսկ նրանք
 սրան դարձյալ հարցրին, թե որքան է դորքը և ինչու համար է
 հավաքված: (18) Սա ասաց, որ Տիրիբազն է, որն ունի
 թե իր ուժերը և թե վարձկան իսլամներ ու Տաու-
 ներ, Եվ Տիրիբազը պատրաստվում է, ասաց նա, որ, սարն
 անցնելու ժամանակ՝ հարձակվի Հելլենների վրա այնտեղ կիր-
 ճերում, ուր գտնվում է միակ ճանապարհը: (19) Այս լսելուց
 հետո՝ զորավարները վճռեցին դորքը հավաքել: Եվ նրանք
 դնացին իսկույն այնտեղ գերված մարդու առաջնորդությամբ,
 թողնելով մնացողների մոտ պահապաններ և Սոֆայնետու Սոյում-
 ֆալացուն՝ իբրև զորապետ: (20) Երբ նրանք լեռներ, անցնում
 էին՝ թեթև վահանակիրները առաջ ընկան և, տեսնելով բանա-
 կը, չսպասեցին ծանրազեններին, այլ աղաղակելով վազեցին դե-
 պի բանակը: (21) Իսկ բարբառոսները, երբ լսեցին աղմուկը՝
 չդիմացան, այլ փախան: Բայց նրանցից ոմանք, այնուամենայ-
 նիվ, սպանվեցին ու դրավվեցին մոտ 20 ձի, զբաղվեցին նաև
 Տիրիբազի վրանը և նրա մեջ արծաթե ոտքերով գահույժները և
 ըմպանակները, բռնվեցին նույնպես հացարարներն ու մատույն-
 ները, ինչպես իրենք էին ասում: (22) Իսկ երբ ծանրազենների
 զորապետներն այդ իմացան՝ նրանք վճռեցին վերադառնալ, որ-
 քան կարելի է շուտ, բանակ, որպեսզի այնտեղ մնացողների վրա
 որևէ հարձակում չլինի: Եվ իսկույն, իողը հնչեցնելով՝ նահան-

ջի նշան տվին ու ետ դնացին և նույն օրն ևեթ հասան րա-
նակ:

ՀԱՏՁԱՄ 7

ԳԻՐԲ IV, գլուխ 5, 1—36:— (1) Հետևյալ օրը նրանք
[Հելլենները] մուտքին, որ պետք է առաջ դնալ, որքան կարելի
է արագ, նախ քան նորից կհավաքվի թշնամի զորքը և կրոնի
կիրճերը: Նրանք պատրաստվեցին և խսկուհի ճանապարհվեցին
խոր ձյան միջով, ունենալով բաղձաթիվ առաջնորդներ: Եվ
նույն օրն ևեթ նրանք անցան լեռան կողմարը, ուր Տիրիբագյու-
մտադիր էր հարձակում դործել, և այնտեղ բանակ դրին: (2)
Այստեղից դնացին երեք օրվա ճանապարհ անմարդաքնակ երկ-
րով, 15 փարսախ, մինչև Եփրատ գետը և անցան նրան, խրջվե-
լով մինչև պորտ: Ասում էին, որ նրա ակունքները հետու չէին:
(3) Այստեղից նրանք խոր ձյան ու զաշտի միջով դնացին
երեք օրվա ճանապարհ՝ 10 փարսախ ^(*)¹: Երբորդ օրվա ճանա-
պարհը խիստ ծանր էր. հյուսիսային քամին միշտ էր դեմից և
ամեն ինչ միջով սառցնում էր ու ցրտահար էր անում մարդ-
կանց: (4) Այդ ժամանակ զուշակներից մեկն ասաց, որ պետք
է ղոհ բերեն քամուն. և նրանք զոհ բերին ու բոլորը պարզորեն
զղացին, որ քամու սաստկությունը դադարում է: Ձյան խորու-
թյունն էր մեկ դրիաչափ, ուստի և դրաստներից ու դերիններից
չատերը կորստի մատնվեցին և զինվորներից ևս մոտ 30 հոգի:
(5) Նրանք խարուկներ վառեցին ու դիչերն սնցկացրին դրանց
չուրջը: Փայտ կայանատեղում չատ կար, սակայն ուշ եկողները
փայտ չունեին: Արդ՝ նրանք, որոնք ավելի շուտ էին եկել ու
կրակ վառել, ուշ եկողներին չէին թողնում կրակի մոտ, քթի
սրանք իրենց չէին տալիս ցորեն կամ ուրիշ ուտելիք, եթե ունե-
ին: (6) Այդտեղ միմյանց նրանք տվին, ինչ որ ամեն մեկն
ունեիր: Որտեղ որ խարուկներ էին վառել՝ կաղմվել էին ձյան
հավելելու պատճառով մեծ՝ փոսեր մինչև դետինը և այդ տեղե-
րում կարելի էր ձյան խորությունը չափել: (7) Հետևյալ ամ-
բողջ օրը այդտեղից նրանք դնում էին ձյան միջով և

¹ Հունարեն ձեռագիրներն ունեն տարբեր թվեր, որոնք հնարավորու-
թյուն չեն տալիս վերականգնել բուն բնագիրը:

չատերը մարդկանցից հիվանդացան արջառաքաղցով: Քսենոփոնը, որ վերջապահների առաջնորդն էր՝ հանդիպում էր վայր ընկած մարդկանց և չգիտեր, թե ինչ հիվանդութուն էր այդ: (8) Բայց երբ փորձառուներին մեկը ասաց նրան, որ ղրժրանք ակներևաբար արջառաքաղցով են հիվանդ և, եթե մի բան ուտեն, վեր կկենան՝ Քսենոփոնը, շրջազայելով զրաստների մեջ՝ եթե որևէ մի տեղ տեսնում էր ուտելիղեն՝ տալիս էր ինքը կամ ուղարկում էր ղանաղան կողմեր այնպիսի մարդկանց միջոցով, որոնք կարող էին շտապ գնալ և տալ արջառաքաղցով հիվանդներին: Երբ հիվանդները մի բան ուտում էին՝ վեր էին կենում և գնում: (9) Առաջ գնացողներից Ուելլիսոֆոսը հասնում է երեկոյան դեմ մի դյուղ և հանդիպում է աղբյուրի մոտ ամբուլթյան առջև ջուր տանող գյուղի կանանց ու աղջիկներին: (10) Սրանք հարցրին Հելլեններին, թե ո՛ւրքեր են: Իսկ թարգմանն ասաց պարսկերեն, որ թագավորի կողմից գնում են սատրապի մոտ: Եվ նրանք պատասխանեցին, որ այդտեղ չէ, այլ հեռու է այդտեղից մոտ մեկ փարսախ: Իսկ Հելլենները, որովհետև ուշ էր՝ ջուր տանողների հետ մտան ամբուլթյուն գյուղապետի մոտ: (11) Արդ՝ Ուելլիսոֆոսը և ղորքի միջից նրանք, որոնք կարողացել էին առաջ դնալ՝ բանակեցին այնտեղ, իսկ մյուս ղինվորները, որոնք չէին կարողացել ճանապարհը շարունակել՝ դիչերեցին առանց կերակրի ու կրակի. և այդ ժամանակ ևս ղինվորներից ոմանք մահացան: (12) Բայց թշնամիներից ոմանք, համաքվելով միասին՝ հետապնդում ու հափշտակում էին ուժասպառ զրառոները ու կռվում էին իրար հետ սրանց պատճառով: Զինվորներից ետ էին մնում նրանք, որոնք փախցրել էին աչքերը ձյան պատճառով կամ սառցրել էին ոտների մատները ցրտի պատճառով: (13) Աչքերի համար ձյունից պաշտպանվելու մի միջոց էր, եթե մեկը աչքերի առջև ունենում էր գնալիս որևէ սև բան, իսկ ոտքերի համար բուժամիջոց էր, եթե մեկն անդադար չարժման մեջ էր գտնվում և դիչերը ոտնամանները հանում էր: (14) Իսկ որ ոտնամաններով էին պառկում, խրացները խրվում էին ոտքերի մեջ և ոտնամանները սառչում էին. որովհետև հները մաշվելուց հետո նրանց ոտնա-

1 Այսինքն՝ սաստիկ քաղցածությամբ կամ, ինչպես ասում են, գալիլ քաղցածությամբ:

մանները գեղջկական էին եղան նոր կաշուց պատրաստված: (15) Ահա այս հանդամանքներն էին ստիպում, որ ղինվորներից ոմանք ետ էին մտնում: Եվ սրանք, տեսնելով ինչ-որ մի սև տեղ, որ կտրվել էր ձյունն այսուկ շինելու պատճառով՝ կարծում էին թե հալվել է. և իսկապես հալվել էր ինչ-որ աղբյուրի պատճառով, որը մոտ էր գտնվում և գոլորշիանում էր անտառածորում, Հեռանալով՝ այստեղ՝ նրանք նստել էին և ասում էին, որ այլևս առաջ չեն գնա: (16) Իսկ Քսենոփոնը վերջապահների հետ, երբ նկատեց այդ՝ ամեն միջոցներով ու հնարներով թախանձում էր, որ ետ չմնան, ասելով որ հետապնդում են մեծ թվով թշնամիներ, որ միտսին են հալաքվել. վերջ ի վերջո նա սկսեց բարկանալ: Բայց նրանք պահանջում էին, որ իրենց սպանեն, որովհետև չեն կարող այլևս դնալ: (17) Արդ՝ որոշվեց, որ ամենից լավն է, եթե հնար լինի՝ վախեցնել հետապնդող թշնամիներին, որ չհարձակվեն հողնածների վրա: Եվ արդեն մութն էր և թշնամիները մոտենում էին մեծ աղմուկով, միմեկնով ավարի առթիվ, որ ձեռք էին բերել: (18) Այդ ժամանակ վերջապահները, որոնք առույջ էին՝ վեր կեցան ու արշավեցին թշնամիներին դեմ, իսկ ուժասպառները աղաղակ բարձրացրին, որքան կարող էին բարձր, և սկսեցին նիզակները խփել վահաններին: Իսկ թշնամիները վախեցան ու փախան ձյան միջով անտառածորը, և այլևս ոչոք ոչ մի տեղ աղմուկ չէր հանում: (19) Քսենոփոնը և նրա հետ եղողներն ասացին հիմանդեմբին, որ հետևյալ օրը մի քանիսը կգան նրանց տանելու, և առաջ շարժվելով, հաղիվ չորս ստադիոն անցած, պատահեցին ճանապարհին ղինվորներին, որոնք ծածկված հանդստանում էին ձյան վրա. և ոչ մի պահապան չէր դրված. այս ղինվորներին նրանք վեր կացրին: Բայց սրանք ասում էին, որ ասվեում եղողները առաջ չեն գնում: (20) Քսենոփոնը մստեցավ և, ուղարկելով թեթև վահանակիրներից ամենաուժեղներին՝ հրամայեց լմանալ՝ թե ինչն է արդելում: Նրանք հայտնեցին, որ ամբողջ զորքը հանդստանում է այգսես: (21) Այնուհետև Քսենոփոնի հետ եղողները տեղավորվեցին նույն տեղում բացօթյա առանց կրակի ու ընթրիքի, դնելով պահակներ, որքան կարող էին: Երբ լուսանալու մոտ էր՝ Քսենոփոնը ուժասպառների մոտ ուղարկեց ամենաերիտասարդներին և հրամայեց վեր կացնել նրանց ու ստիպել, որ դան: (22) Հենց այդ ժամանակ Խեյրիսոֆոսն

ուղարկում է դյուղում եղած մարդկանցից ոմանց, որ տեսնեն թե
 ի՛նչ դրուժյան մեջ են գտնվում ետեխները: Իսկ սրանք, տեսնե-
 լով նրանց՝ ուրախացան և հանձնեցին ուժասպառներին նրանց,
 որ տանեն բանակ: Իրենք ևս գնացին և, քսան ստադիոն չանցած,
 հասան այն դյուղը, ուր իջեանել էր Խեյրիսոֆոսը: (23) Իրար
 հանդիպելուց հետո՝ որոշեցին, որ ապահով կլինի զորաշարքե-
 րը տեղավորել դյուղերում: Արդ՝ Խեյրիսոֆոսը մնաց նույն
 տեղում, իսկ մյուսները վիճակարկությամբ իրար մեջ բաժանե-
 ցին այն դյուղերը, ուր տեսնում էին՝ և ամեն մեկը գնաց իր
 զորամասի հետ իր դյուղը: (24) Այդ ժամանակ աթենացի Պո-
 դյուկորաաս և Վաչտապետը խնդրեց, որ թողնեն իրեն առաջ
 անցնել, և, վերցնելով իր հետ քաջագոտիներին՝ նա վաղելով
 դնաց այն դյուղը, որ վիճակարկությամբ ստացել էր Քսենոփո-
 նը: Այնտեղ նա ձերբակալեց ներսում գտնվող բոլոր դյուղա-
 ցիներին ու դյուղապետին և 17 ձիու քուռակ, որ սնուցանվում
 էին իբրև տուրք Թադավորին, նույնպես և դյուղապետի աղ-
 ջկանը, որը խնեբորդ օրն էր, որ ամուսնացած էր: Իսկ նրա
 մարդը դնացել էր նապաստակ որսալու և դյուղերում չգերվեց:
 (25) Տներն այստեղ դետնափոր էին, մուտքը ջրհորի բերնի նը-
 ման, իսկ ներքեն ընդարձակ: Կենդանիների համար հատուկ
 մուտք կար փորված, իսկ մարդիկ իջնում էին ցած սանդուղք-
 ներով: Տների մեջ կային այծեր, ոչխարներ, եղներ, հավեր և
 սրանց ճուտերը: Բոլոր կենդանիները կերակրվում էին ներսում
 խոտով: (26) Բայց կար նաև ցորեն, դարձի, ընդեղեններ և կա-
 րասներում՝ դարուց պատրաստված դինի, որի երեսին լողում
 էին իրենք դարու հատիկները: Կարասների մեջ դրված էին մեծ
 ու փոքր եղեղներ, որոնք ծունկեր չունեին: (27) Երբ մեկն
 ուղենար խմել՝ պետք է այդ եղեղները ընդնին դներ ու ծծեր:
 Եվ շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին. բայց սովոր մարդու
 համար խիստ ախորժելի խմիչք էր: (28) Քսենոփոնն այս դյու-
 ղի պետին սեղանակից արեց, խրախուսեց, որ չվհասովի, և
 ասաց, որ նա զավակներից չի դրկվի և որ նրա տունը հեռա-
 նալիս կլցնեն սրաշարեղենով, եթե նա օգնություն ցույց տա և
 առաջնորդ լինի զորքին, մինչև որ կլինեն ուրիշ ժողովրդի
 մեջ: (29) Եվ դյուղապետը խոստացավ այդ և, բարեկամանա-
 լով, ցույց տվեց, թե որտեղ էր Թադաված դինին: Արդ՝ այդ դի-
 չերը բոլոր զինվորները տեղավորվեցին բնակարաններում և դի-

շերեցին այդպես լիառատ գլուխով մեջ, կալանավորված ու
 անդուլ հսկողութեան տակ պահելով դյուղապետին ու նրա զա-
 վակներին: (30) Հետեւալ օրը Քսենոփոնը, վերցնելով իր հետ
 դյուղապետին՝ գնաց Խեյրիսոփոսի մոտ: Ուր որ դյուղ էր մըտ-
 նում՝ գնում էր դյուղերում եղողների մոտ և ամեն տեղ դառնում
 էր նրանց կերուխում անելիս և ուրախ: Եվ ոչ մի տեղից բաց
 չէին թողնում՝ մինչև չմատուցանեին նրանց ամենաընտիր կերա-
 կուրները: (31) Զկար մի տեղ, ուր չէնեին սեղանի վրա ոչխա-
 քի, ալձի, խոզի, հորթի ու հավի միս և մեծ քանակութեամբ
 զարու և ցորենի հաց: (32) Երբ մեկը մտերմաբար կամենում
 էր մի ուրիշի կենացը խմել, քարչ էր տալիս նրան կարասի
 մոտ, և այնտեղ պետք էր խմել, կռանալով ու ծծելով եզան
 նման: Գյուղապետին ևս թույլ տվին վերցնել՝ ինչ որ կամե-
 նում էր: Իսկ նա ոչինչ չէր վերցնում, այլ երբ որեւէ տեղ տեա-
 նում էր աղգակիցներից մեկին՝ տանում էր միշտ իր մոտ: (33)
 Երբ նրանք եկան Խեյրիսոփոսի մոտ, սրանց ևս գտան կերու-
 խում անելիս՝ պսակված չոր խոտե պսակներով: Սպասավորում
 էին արմենների երեսաները բարբարոսական դրեստներով և նը-
 րանք երեսաներին ցույց էին տալիս, իբրև մունջերի, թե ինչ
 պիտի անել: (34) Երբ Խեյրիսոփոսը և Քսենոփոնը իրար ողջու-
 նեցին՝ սկսեցին միասին հարցուփորձ անել դյուղապետին պարս-
 կերեն խոսող թարգմանի միջոցով, թե ինչ երկիր է այս: Եվ նա
 ասաց, որ Արմենիան է: Եվ դարձյալ հարցրին, թե ո՛ւմ հա-
 մար են սնվում ձիերը: Եվ նա ասաց, որ Թաղավորի համար
 իբրև տուրք: Հարեա՞ն երկիրը, ասաց, Խալուքներն են և ցույց
 տվեց, թե ո՛րն է ճանապարհը: (35) Ապա Քսենոփոնը մեկնեց
 տանելով դյուղապետին նրա ընտանիքի քով, և իր պառավ ձին,
 որ ստացել էր՝ տվեց դյուղապետին, որ կերակրե ու զո՞ւ բերե,
 որովհետեւ լսել էր՝ թե նվիրատրված է Արեւին: Նա վախենում
 էր, որ կսատակի, որովհետեւ ճանապարհին հալից ընկել էր:
 Ինքը վերցրեց քուռակ ձիերից մեկը և մեկ մեկ քուռակ ևս
 տվեց իր մյուս զորավարներից ու վաշտապետներից յուրաքան-
 չյուրին: (36) Այստեղի ձիերը պարսկական ձիերից փոքր էին,
 բայց շատ ավելի կայտառ էին: Հենց այդ ժամանակ դյուղապե-
 տը սովորեցրեց, որ ձիերի ու զորաստների ոտներին, ձյան
 վրայով գնալիս, պետք է պարկեր փաթաթեն, որովհետեւ առանց
 պարկերի կխրվեն, ձյան մեջ մինչև իրանները:

Գիրք IV, գլուխ 6, 1—4: —(1) Երբ արդեն ութերորդ օրն էր, Քսենոփոնը տվեց ինչպիսիք փոխարին՝ իրրե ուղեցույց դուռը պետին, իսկ սրա ազդականներին բաց թողեց, բացի որդուց, որը մոտ էր չափահասության: Սրան Քսենոփոնը հանձնեց Ամֆիպոլսեցի Եպիսթենեսին, որ հսկողության տակ պահե, որպես ղի հետո, եթե դուռը պետը լավ առաջնորդե՝ վերադառնան միասին: Գյուղապետի տունը ներս տարան, որքան կարելի էր, շատ պաշարեղեն, և պատրաստվեցին ու ճանապարհ ընկան: (2) Գյուղապետը նրանց ցույց էր տալիս ճանապարհը ձյան միջով և կապված չէր: Եվ արդեն երրորդ օրվա ճանապարհն էր, երբ ինչպիսիք փոխարին բարկացավ նրա վրա, որ չէ առաջնորդել դեպի գյուղերը: Իսկ նա ասում էր, որ այս տեղերում դուռեր չկան: Եվ ինչպիսիք փոխարին նրան թակեց, բայց չկապեց: Դրանից հետո դուռը պետը գիշերը փախավ, թողնելով իր որդուն: (3) Այս գեպը, ուղեցույցի հետ անդուլթ ու արհամարհական վարմունքը, միակ դժտուրությունն էր ինչպիսիք փոխարին և Քսենոփոնի միջև ամբողջ ճանապարհի ընթացքում: Իսկ Եպիսթենեսը սիրեց դուռը պետի երեխային, տարավ իր հետ տուն և վերաբերվում էր նրան իրրե ամենամտերիմի: (4) Այնուհետև նրանք դնացին Եթրժ օրվա ճանապարհ, օրական 5 փարսախ, փախիս գետի երկարությունը, որի լայնությունն էր մոտ մեկ պլեթրոն: Այստեղից նրանք դնացին երկու օրվա ճանապարհ, 10 փարսախ, և լեռնանցքից դեպի դաշտ անցնելու ժամանակ նրանց դեմ եկան իսպուրները, Տառնները և Փառնանները: 1

ՀԱՏՎԱԾ 9

Գիրք IV, գլուխ 7, 1—2: —(1) Այնուհետև նրանք դնացին դեպի Տառնները հինգ օրվա ճանապարհ, երեսուն փարսախ, և նրանց ուտելիքի պաշարը սպառվեց: Տառնները բնակում էին ամրացրած տեղերում, որոնց մեջ բերել ու պահում էին նաև ամբողջ պաշարեղենը: (2) Երբ Հելլենները եկան այդ տեղը, որը չունեի միջնաբերդ ու տներ և որի մեջ հավաքվել էին տղամարդիկ և կանայք, նաև շատ կենդանիներ՝ ինչպիսիք փոխարին, որքանով չուտ էր այստեղ հասել՝ հարձակվեց դրանց վրա:

Գիրք IV, գլուխ 7, 15—20: —(15) Այստեղից նրանք զնացին Խալլութների միջով յոթը օրվա ճանապարհ՝ 50 փարսախ: Սրանք բոլոր Ժողովաւորներից, որոնց միջով անցել էին Հելլենները, ամենաքաջն էին և մարտի էին բռնվում: Նրանք ունեին վուշից պատրաստված զրահներ մինչև փորը, իսկ զրահածայրերի փոխարեն՝ հաստ հյուսված լուլեր: (16) Ունեին նաև սոնապաններ և սաղավարտներ ու դոտիների մոտ դաշույն՝ նման լակեդեմոնական կեռ փոքր դանակի, որով սպանում էին, ու՛ր որ կարողանում էին հաղթել, և կոտրելով ու վերցնելով զլուխները՝ մեկնում էին: Նրանք երդում ու սլարում էին, երբ թշնամիները կարողանում էին իրենց տեսնել: Ունեին նաև նիզակ, որը ուներ մեկ ծայր մոտ տասնհինգ կանդուն երկարությամբ: (17) Նրանք պաշտպանվում էին քաղաքավայրերում, և երբ Հելլենները մոտով անցնում էին՝ հետապնդում էին և պատրաստ էին միշտ կռվելու: Ապրում էին ամուր տեղերում, որոնց մեջ հավաքված էր նաև սրաշարեղենը. այնպես որ Հելլենները ոչինչ չկարողացան վերցնել այստեղից, այլ սնվում էին այն կենսամթերքներով, որ վերցրել էին Տառններէց: (18) Այնտեղից Հելլենները եկան դեսլի Հարբադոս դետը, որի լայնությունն էր չորս ոլլեթրոն: Այնուհետև նրանք զնացին Սկյութների միջով չորս օրվա ճանապարհ, քսան փարսախ՝ դաշտի միջով դեսլի ղյուղերը, որոնց մեջ մնացին երեք օր և մթերեցին իրենց համար կենսամթերքներ: (19) Հետո անցան չորս օրվա ճանապարհ, քսան փարսախ, դեսլի մեծ հարուստ և բազմամարդ մի քաղաք, որն անվանվում էր Գյումնիա: Այս քաղաքից երկրի իշխանավորն ուղարկեց հելլեններին մի ուղեցույց, որսեսդի նրանց ուղեկցե հարևան երկրի միջով, որն իրենց թշնամի էր: (20) Երբ ուղեցույցը եկավ՝ առաջ, որ նրանց կուռաջնորդե հինգ օրվա ընթացքում մի տեղ, որտեղից նրանք կտեսնեն ծովը. և հայտնեց, որ եթե չտեսնեն՝ թող իրեն մահ՝ այն դատապարտեն: Սա առաջնորդեց նրանց և երբ ներս մտավ թշնամիների երկիրը, հաղորդեց նրանց, որ այրեն և ոչնչացնեն երկիրը: Ահապիսով հայտնի եղավ, որ նա միասին եկել է ո՛ր էթե Հելլեններին բարեկամություն անելու, այլ հենց դրա համար: (21) Եվ նրանք հասան լեռը հինդերորդ օրը, իսկ լեռան

անունն էր Թեխես։ Երբ առջևինները լեռան վրա էին՝ մեծ աղմուկ բարձրացավ։

ՀԱՏՎԱԾ 11

Գիրք IV, գլուխ 8, 1—3:— (1) Այնտեղից Հելլենները գնացին Մակրոնների միջով երեք օրվա ճանապարհ՝ տասը փարսախ։ Հենց առաջին օրը նրանք հասան այն դետի մոտ, որն իրարից բաժանում էր Մակրոնների և Սկյութենների երկիրները։ (2) Հելլենների աջ կողմից վերև գտնվում էր ամրացրած մի վայր, որը խիստ դժվարամատչելի էր, իսկ ձախ կողմում՝ ուրիշ մի դետ, որի մեջ թափվում էր բաժանող դետը և որը հարկավոր էր անցնել։ Այս վերջինը բոլորովին ծածկված էր ծառերով, բայց ոչ հաստ, այլ խիտ։ Հելլենները, երբ մոտեցան՝ ծառերը կտրեցին, շտապելով, որպեսզի ամենաարագ կերպով դուրս գան այդ տեղից, (3) իսկ Մակրոնները, որոնք ունեին ծառերի ճյուղքերից հյուսված կաշվեպատ վահաններ և տեղեր ու այծի մազից պատրաստված զգեստներ՝ չարքերով կանգնած էին գետանցքի մյուս կողմում և իրար քաջալերում էին ու քարեր էին նետում դեպի դետը, բայց վրիպում էին և ոչ ոք չէր վնասվում։

ՀԱՏՎԱԾ 12

Գիրք V, գլուխ 5, 1:— (1) Այս երկրի միջով, մերթ թեք՝ նամական և մերթ բարեկամական, Հելլենները գնացին ութ օրվա ճանապարհ և հասան իտալոսների երկիրը։ Սրանք սակավաթիվ էին, գտնվում էին Մոսսյունոյկների իշխանության տակ և նրանցից մեծագույն մասի համար ապրուստի աղբյուր էր երկաթադործությունը։ Այնտեղից նրանք եկան Տիրարենների երկիրը։

ՀԱՏՎԱԾ 13

Գիրք V, գլուխ 5, 17—18:— (17) Արդ՝ Կարդուխներին, Տաոխներին և իտալեայներին, թեև նրանք չէին գտնվում թագավորի իշխանության տակ, սակայն, այնուամենայնիվ, նրանց խիստ վտանգավոր լինելու պատճառով՝ համարեցինք մեզ թշնամիներ պաշարեղեն վերցնելու անհրաժեշտությունից դրդված, որովհետև նրանք մեզ կենսամթերքներ չէին հայթայթում։ (2)

Իսկ Մակրոններին, թեև բարբարոսներ էին, բայց որովհետև նրանք մեղ մատակարարում էին պարեն, որքան որ կարող էին՝ համարեցինք բարեկամ և նրանցից լոնի կերպով ոչինչ չվերցրինք:

ՀԱՏՎԱԾ 14

Գիրք VII, գլխի 8, 25:— (25) Փասիանների և Հեսպերիտների [իշխանավորն էր, ἄρχων] Տիրիբազը, իսկ Կարդուխները, խալյուքները, խալդայները, Մակրոնները, Կոլխերը, Մոսսյունոյկները, Կոյտերը և Տիրարենները անկախ էին:

ՔՍԵՆՈՓՈՆ—„ԿԻՐՈՊԵԴԻԱ“

ՀԱՏՎԱԾ 1

Գիրք II, գլխի 1, 6:— (6) «Դու, ուրեմն, ասաց Կյուրոսը, ասում ես, որ թշնամիների հեծելազորը մոտ 60.000 է, իսկ թեթև վահանակիրները և նետաձիգները ավելի քան 200.000 են: Ապա ասա՝ նաև, թե ի՞նչ թիվ են կազմում քո ուժերը»: «Մեզացիները, ասաց [Կիաքսարը], ունեն ավելի քան 10.000 հեծելազոր, իսկ թեթև վահանակիրները և նետաձիգները կլինեն մեր հենց երկրում դռնե 60.000: Արմենների կողմից ես, ասաց, որ մեզ սահմանակից են, կլան 4.000 հեծելազոր և 20.000 հետևաոր»:

ՀԱՏՎԱԾ 2

Գիրք II, գլխի 4, 9—25:—(9) Երբ Հնդիկները գուրս գնացին՝ Կյուրոսը ասաց Կիաքսարին հետևյալը..... (12) Ես հիշում եմ, որ մի փոքր առաջ քեզանից լսել էի, որ Արմենների թողա՜վորը քեզ այժմ արհամարհում է՝ որովհետև նա իմացել է, որ թշնամիները հարձակվելու են մեղ վրա. և նա ոչ զորք է ուղարկում, ոչ էլ տուրք է վճարում, որ պարտավորվել էր տալ»: «Նա այդպես է վարվում իրոք, ո՛վ Կյուրոս, — ասաց Կիաքսարը, — ուստի և ես տատանվում եմ և չգիտեմ, թե ինչն է լավ՝ պատերազմել ու փորձ անել հարկադրելու նրան, թե ավելի ձեռնաուռ է՝ հանդուրժել ներկա դրուժյունը, որպեսզի մյուս

Թշնամիների վրա չափեւացնենք և այս Թշնամուն: (13) Եւ
 Կյուրոսը նորից հարցրեց. «Իսկ նրա բնակավայրերը արդո՞ւք ա-
 մո՞ւր տեղերում են, թե դուցե նաև մատչելի տեղերում»: «Բնակավայրերը,— ասաց Կիաքսարը,— շատ ամուր տեղերում
 չեն և ինձ այդ չէ անհանգստացնում. կան սակայն լեռներ, ուր
 նա իսկույն կարող է գնալ ու վտանգից ապաստել, եթե մեկը
 մոտ նստած չպաշարե նրանց, ինչպես այդ արեւ էր իմ հայրը:
 (14) Այնուհետև Կյուրոսն ասաց հետևյալը. «Եթե կամենաս ինձ
 ուղարկել, տալով այնքան հեծելազոր, որքան բավական կլի-
 նեն՝ կարծում եմ, որ աստվածների օգնութեամբ կհարկադրեմ
 նրան, որ քեզ գործ ուղարկե ու տուրք վճարե. ես հույս ունեմ
 նաև, որ նա ավելի բարեկամ կդառնա մեզ, քան այժմ: (15)
 Եւ Կիաքսարն ասաց. «Ես հուսով եմ, որ նրանք ավելի շուտ
 քեզ մոտ կդան, քան ինձ: Որովհետև լսել եմ, որ նրա որդիներ
 րից ոմանք քեզ որսակից են եղել. այնպես որ, հալածորեն,
 դարձյալ կգան քեզ մոտ: Իսկ եթե նրանք ենթարկվեն մեր իշ-
 խանության՝ ամեն ինչ կլինի այնպես, ինչպես մենք կամենում
 ենք»: «Արդ՝ ի՞նչպես ես կարծում,— ասաց Կյուրոսը,— լավ չի՞
 լինի, որ այդ մենք որոշենք թաքուն կերպով»: «Իհարկե,— աս-
 աց Կիաքսարը,— չէ՞ որ նրանցից որևէ մեկը կարող է ավելի
 հեշտ կերպով մեր ձեռքն ընկնել, և եթե որևէ մեկն ուզենա նը-
 րանց վրա հարձակվել՝ կարելի կլինի նրանց բռնել հանդատ-
 րաստից»: (16) «Լսի՛ր այժմ,— ասաց Կյուրոսը,— թե ինչ պի-
 տի ասեմ քեզ: Ես բոլոր իմ մարդկանց հետ հաճախ որսի եմ
 դնացել քո և Արմենների երկրի սահմանների մոտ և, այն ժա-
 մանակ ես վերցնելով այստեղի իմ ընկերներից որոշ քանակու-
 թեամբ ձիավորներ՝ դնացել եմ այնտեղ»: «Ուրեմն նաև այժմ
 նույնն անելիս,— ասաց Կիաքսարը,— կարող ես կասկածի տակ
 չընկնել: Բայց եթե դուքը շատ ավելի թվա, քան այն, որով
 սովորաբար որսի ես դնում՝ այդ արդեն կարող է կասկածելի
 լինել»: (17) «Այլ կարելի է,— ասաց Կյուրոսը,— որևէ պատճառ
 հնարել և ոչ այս դեպքում անհավատալի, և եթե որևէ մեկն
 այնտեղ լուր տարածե, որ ես ցանկանում եմ մեծ որս անել
 այդ դեպքում՝ ես կարող եմ քեզանից բացահայտ կերպով խրո-
 ղել հեծյալներ: «Շատ լավ ես ասում,— ասաց Կիաքսարը,—
 իսկ ես չեմ համաձայնի քեզ տալ հեծյալներ բացի չափավոր
 քանակութեամբ մի քանիսից, որովհետև իբրեւ թե ինքս եմ ցան-

կանում զնալ դեպի Ասորիքի մոտ դանվող ամբողջունները: Եվ իրաք ու ուղում եմ գնալ, որպեսզի նրանց, որքան կարելի է լավ ամրացնեմ: Իսկ երբ դու քո զորքի հետ առաջ զնաս և արդեն կրկու օր որս անես՝ կուղարկեմ քեզ բալականաչափ հեծյալ ու հետևակ զորք լավ մոտ հավաքված զորքերից, որոնց դու կվերցնես և խնդուն առաջ կշարժես: Բայց ինքս մյուս զւրքերի հետ կաշխատեմ ձեզանից հետո չլինել, որպեսզի, եթե որևէ տեղ կարևոր լինի՝ խնդուն կրեան դամ»: (18) Այսպես ուրեմն, Կիսարարը խնդուն ամբողջունների մոտ հաշիսքեց հեծելազոր, ու հետևազորը, և սլարենամթերքի սայլերը նախօրոք ուղարկեց այն ճանապարհով, որը տանում էր Կեսիի ամբողջունները: Իսկ Կյուրոսը զոհ բերեց արշավանքի առթիվ և, մարդ ուղարկելով միաժամանակ Կիսարարի մոտ՝ խնդրեց տալ իրեն ավելի երեսասարդ հեծյալներին: Բայց սա, թեև խիստ շատերն էին ուղում զնալ՝ նրան շատ զորք չտվեց: Արդ՝ կիր Կիսարսարն իր հեծյալ ու հետևակ ուժերով արդեն առաջ էր շարժվել այն ճանապարհով, որը տանում էր դեպի ամբողջունները՝ Կյուրոսի զոհերն արմենական արշավանքի առթիվ բարենպաստ էին եղել: Ուստի և նա երթի ելավ, իբր թե պատրաստվում էր որսի: (19) Երթի ժամանակ առաջին իսկ վայրում դուրս ելավ խնդուն մի նապաստակ, սակայն բարենշան մի արծիվ մոտ թռավ և, տեսնելով որ նապաստակը վախճում է, վրա հասնելով խոհեց նրան, բռնեց ու վեր բարձրացրեց և, յերեւոյ մոտակա մի բլրի վրա՝ աշնպես վարվեց որսի հետ, ինչպես ինքը ցանկանում էր: Արդ՝ Կյուրոսը, տեսնելով այս նախազուգակութունը՝ ուրախացավ և երկրպագեց Արամաղդ աստծուն և ասաց ներկա եղողներին. «Մեր որսը, իհարկե, լավ իլինի, ո՞վ արք, քանի որ այդ կամենում է աստված»: (20) Իսկ երբ նա սահմանամերձ շրջաններումն էր դտնվում՝ ըստ իր սովորության խնդուն որսի գնաց, և հետևակ ու ձիավոր զորքի բաղմութունը դնում էր շարքով նրա առջև, որպեսզի հալածեն դուրս հանե դադաններին: Իսկ ավելի ականավորները՝ ինչպես հետևակները, նույնպես և ձիավորները, կանդնած էին որոշ տարածության վրա և դուրս ելածներին որսում էին և հետապնդում, Եվ սրանք որսացին բաղմաթիվ վարաղներ, եղջերուներ, վայրի այծեր և վայրի էջեր. այդ տեղերում վայրի էջեր շատ կան նույնպես և այժմ: (21) Որոք վերջացնելուց հետո Կյուրոսը, մոտենալով Արմենների սահմաններին՝ ճաշեց:

Հետևյալ օրը նորից որսի գնաց, մոտ գալով լեռներին, ուր նա ձգտում էր գնալ: Երբ այս որսը ևս վերջացրեց՝ նորից ճաչեց: Իսկ երբ նա իմացավ, որ Կիաքսարի ուղարկած զորքը մոտենում է՝ Թաքուն կերպով նրանց մոտ մարդ ուղարկեց և հրամայեց, որ նրանք ճաչեն, գտնվելով իրանից մոտ երկու փարսախ տարածուխյան վրա: Նա այդ հեռատեսաբար արեց, որպեսզի դրանով օժանդակած լինի, որ Թշնամին ղլխի չընկնի: Երբ սրանք ճաչում էին՝ հրամայեց, որ նրանց պետն իր մոտ դա, իսկ ճաչից հետո իր մոտ հրալիրեց հարյուրապետներին: Եվ երբ նրանք եկան՝ խոսեց այսպես.

(22) «Սիրելի՛ արք, Արմենների Թագավորն առաջ դաշնակից էր ու հնազանդ էր Կիաքսարին, իսկ այժմ, նկատելով, որ նրա վրա հարձակվում են Թշնամիները՝ արհամարհում է մեղ և ոչ զորք է ուղարկում մեղ, ոչ էլ տուրք է վճարում: Արդ՝ այժմ մենք, եթե կարողանանք, պետք է որսանք նրան: Եվ թվում է, որ պետք է անենք հետևյալ կերպով: Դու, ո՛ր Որդուսանտաս, երբ, ինչպես հարկն է, կհանդատանաս՝ վերցրո՛ւ պարսիկների կեսը, որոնք մեղ հետ են, ղնա՛ լեռնային չորջանը և զբաղի՛ր լեռները, ուր նա, ինչպես ասում են, փախչում է, երբ որևէ բանից վախենում է: Ուղեցույցներ ես քեզ կտամ: (23) Ասում են, որ այդ լեռներն անտառապատ են, այնպես որ հույս կա, որ ձեզ չեն տեսնի, Համենայն դեպս, լավ կլինի, եթե մինչև քո զորքի գնալը նախապես ուղարկես արադաշարժ մարդիկ, որոնք թվով ու հազուստով ավազակների են նման: Արանք, եթե հանդիպեն Արմեններից ոմանց՝ նրանց մի մասը պետք է բռնեն և արգելք լինեն, որ չկարողանան լուր տանել, իսկ մյուս մասը, որոնց հնարավոր չլինի բռնել՝ պետք է ցրեն ու խանգարեն, որ նրանք չտեսնեն քո ամբողջ զորքը, այլ կարծեն, որ դողերի հետ դործ ունեն: (24) Դու, ասաց, այդպես արա՛, իսկ ես կվերցնեմ ինձ հետ լուսաբացին հետևադորի մյուս կեսը և ամբողջ հեծելազորը և կգնամ դաշտի միջով ուղիղ Թագավորի ապարանք-ամրոցը: Եթե նա դիմադրուեթյուն ցույց տա՝ պարզ է որ հարկավոր կըլինի կռվել, իսկ եթե ճակատամարտի դաշտից հեռանա՝ պարզ է որ հարկավոր կլինի հետամտել: Բայց եթե լեռները փախչի՝ այնտեղ արդեն քո պարտքը կլինի, որ քեզ մոտ եկողներից ոչ ոքին բաց չթողնես: (25) Իմացիր, որ՝ ինչպես և որսի ժամանակ՝ մենք կլինենք որս որոնողները, իսկ դու ցանցերի մոտ

հսկողը: Հիշի՛ր նաև այն, որ նախ քան որսի զաղանների շարժ-
վելը պետք է շտապ կերպով փակել փախուստի ելքերը: Եվ
պետք է նաև աննկատելի մնան նրանք, որոնք դռնփում են ել-
քերի մոտ, եթե նրանք ուղղում են, որ մոտ եկող զաղանները
հա չդառնան:

ՀԱՏՎԱԾ 3

Գիրք II, գլուխ, 4, 30—32:— (30) Խյուռսանտասը, լսելով
այդ ամենը և հալարտ լինելով, որ Կյուրոսն իրեն հանձնալարու-
թյուն է տալիս՝ վերցրեց առաջնորդներին, հեռացավ և, հրա-
ման տալով նրանց, որ իր հետ դնալու էին, ինչ որ պետք էր՝
վնաց հանգստանալու: Երբ սրանք քնեցին այնքան, որքան որ
բավական էր թվում՝ նա շարժվեց դեպի բռնները: (31) Իսկ
Կյուրոսը, երբ լուսացավ՝ ուղարկեց դեսպան Արմենների թա-
ղավորի մոտ ու կանխապես կարգադրեց, որ նրան ասեն հետե-
վյալը. «Կյուրոսը, ով Արմեն թաղավոր, հրամայում է, որ դու
այնպես անես, որ, որքան կարելի է շուտ, բերես և տուրքը և
զօրքը: Եթե նա հարցնե, թե որտեղ եմ ես՝ ասա՝ ճիշտը, որ
սահմանների մոտ եմ: Եթե կհարցնե, թե արդյոք ես ինքս եմ
գալիս ևս, ասա՝ դարձյալ ճիշտը, որ չգիտես, Եվ եթե ուղենա
տեղեկանալ, թե մինք որքան ենք՝ խորհուրդ տուր նրան, որ
ուղարկե մեկին ու իմանա», (32) Արդ՝ այդ ամենը հանձնա-
րարելով դեսպանին՝ ուղարկեց նրան, կարծելով որ այդպես
ավելի բարեկամորեն կլինի, քան թե գնար առանց նախադրու-
յացնելու: Եվ ինքը, իր զորքը կարգավորելով լավագույն կեր-
պով, թե ճանապարհն անցնելու և թե հարկավոր դեպքում նաև
կռվելու համար՝ ճանապարհ ընկավ: Զինվորներին նա հրամա-
յեց, որ ոչ ոքի հետ անարդար չվարվեն. և եթե Արմեններից
որևէ մեկը հանդիպի՝ հայտնեն, որ անհանդիստ չլինեն, և ասեն,
որ ցանկացողները ծախու ապրանքները բերեն ուր որ իրենք
են գտնվելու, եթե նրանք կամենում են ծախել կամ ուտելիք և
կամ խմիչք:

ՀԱՏՎԱԾ 4

Գիրք III, գլուխ 1, 1—43:— (1) Կյուրոսն այդ գործերով
էր զբաղված: Իսկ Արմենների թաղավորը, երբ լսեց դեսպանից
Կյուրոսի հանձնարարությունները՝ խիստ վախեցավ, նա գի-

տակցում էր, որ ինքն անարդար է վարվել, քանի որ ոչ տուրք է վճարել, ոչ էլ զորք է ուղարկել: Իսկ ամենից չափ նա վախենում էր, որ նկատվելու է, որ ինքն սկսել էր ամրոցներ կառուցել, որպեսզի կարողանար ցույց տալ դիմադրություն: (2) Հենց այդ պատճառով, նա ամբողջապես ահով լցված՝ ո՛չ մի այն ուղարկեց ոմանց զանազան կողմեր հավաքելու իր ուժերը, այլև լեռներն ուղարկեց իր կրտսեր որդուն՝ Սաբարխսին ու կանանց՝ իր և որդու, նաև աղջիկներին: Նրանց հետ միասին ուղարկեց նույնպես և զարդերն ու ամենաարժեքավոր կահկարասիքը, և տվեց նրանց ուղեկիցներ:

